ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Սույն ձեռնարկը՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ, մշակվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի համար:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ստոյանկա Միրցևա և Անահիտ Աբրահամյան
Եվրոպայի խորհրդի փորձագետներ

Կազմվել է նոյեմբեր 2021
Խմբագրվել է հունվար 2024

Եվրոպայի Խորհուրդ

Սույն աշխատությունում ներկայացված կարծիքները հեղինակների պատասխանատվությամբ են և պարտադիր չէ, որ դրանք արտահայտեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Սույն փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր այլ նամակները պետք է հասցեագրվեն Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Գենդերային հավասարության բաժնին (F-67075 Strasbourg Cedex կամ gender.equality@coe.int).

Կազմը և էջադրումը.
Computer service LLC, Task LLC

Լուսանկարները.
Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր 2021 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 7

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 8

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 8

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10

1.1 ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ 11

1.1.2. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ 11

1.2 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 12

1.3 ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 14

2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 15

2.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ 15

2.2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ 35

2.3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ 49

3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 52

3.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 52

3.1.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱԾՏ. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ 53

3.1.2 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱԾՏ. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ 59

3.1.3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԽՎԿ-Ի ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ 61

3.1.4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 66

3.2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ՝ ՕՐԵՆՔՆԵՐ, ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 84

3.2.1. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ 89

3.2.2. ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ 102

3.2.3 ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ 104

3.2.4. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ 104

4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 112

4.1. ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐՋԱՆԱԿԸ 112

4.2. ԶՈՀԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄ 113

4.2.1. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 116

4.2.2. ՊԱՏՇԱՃ ԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ 121

4.3. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՅԻՑ ԵՎ ՏՈՒԺՈՂԻՆ ՄԵՂԱԴՐԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ 128

5.ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՌԻՍԿ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ 136

5.1. ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ՝ ԻՆՉՊԵՍ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 137

5.1.1. ՌԻՍԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ 138

5.1.2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 139

5.2. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 147

5.2.1. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ 152

5.2.2 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 155

5.2.3 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 159

5.2.4 ՖԵՄԻՑԻԴ/ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 159

5.2.5 ՖԵՄԻՑԻԴԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 161

5.3. ԱՐԳԵԼՈՂ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 162

5.3.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 162

5.3.2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 172

5.4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ 182

5.5 ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՈՒՄ 187

6. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ. ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 193

6.1. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 193

6.2. ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 195

6.2.1. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՁԱՆԳԸ 196

6.2.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՅՐՈՒՄ 201

6.2.3 ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ 203

6.2.4 ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ, ՎԿԱՆԵՐԻՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԼՍԵԼԸ 211

7. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 227

7.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ 227

7.2 ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ 231

7.3 ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 237

7.4 ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱԶՄԱՈԼՈՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ 239

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 244

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 253

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ 255

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 257

ԲԱՌԱՐԱՆ 262

ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ 269

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԿԽՎԿ	Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե
ԵԻԿ	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ԸԲ	Ընտանեկան բռնություն
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԷԿՈՍՈՍ	Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ
ՍԻԵԿ	Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե
ԵՍԽ	Եվրոպական սոցիալական խարտիա
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀԻԳ	Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն
ԳՀԲ	Գենդերային հիմքով բռնություն
ԳՀՀ	Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության հանձնաժողով
ԳՐԵՏԱ	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ՝ հա մաձայն Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիայի
ԳՐԵՎԻՈ	Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության փորձագետների խումբ՝ համաձայն Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիայի
ՄԻԽ	Մարդու իրավունքների խորհուրդ
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՏՍՄԻՄԴ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ԿՆԲ	Կանանց նկատմամբ բռնություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Սույն ձեռնարկը Հայաստանի պետական հաստատությունների, քաղաքացիական հասարակության և անկախ փորձագետների անձնվիրության և հսկայական ջանքերի արդյունք է: Ձեռնարկի բովանդակությունը կազմվել է ինտենսիվ քննարկումների արդյունքում: Այս ձեռնարկը անհնար կլիներ առանց ՀՀ Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) կրթահամալիրի և հասարակության անվտանգության ապահովման գլխավոր վարչության ղեկավարության աջակցության և ներգրավման: Մոդուլի բովանդակությանը նվիրված հանդիպումների ընթացքում ուղղություններն ու առաջարկությունները մեծ նշանակություն ունեցան Հայաստանում ոստիկանության ծառայողների ակնկալիքներին համապատասխան բովանդակություն ձևավորելու համար:

Հատուկ երախտագիտություն ենք հայտնում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրին՝ ձեռնարկի մշակման գործընթացի բոլոր փուլերում շարունակական համագործակցության համար: Սա հատկապես վերաբերում է Քրեահրավական վարչության պետ Հռիփսիմե Խաչատրյանին, ով իր առաջարկություններով և դիտողություններով նպաստեց ձեռնարկի կիրառական արժեքի բարձրացմանը:

Մենք բարձր ենք գնահատում Կանանց աջակցության կենտրոն ՀԿ-ի ներկայացուցիչների՝ Մարո Մաթոսյանի և Հասմիկ Գևորգյանի աջակցությունը՝ ընտանեկան բռնությունից տուժած կանանց սատարելու գծով իրենց փորձի փոխանակման հարցում:

Հեղինակները ցանկանում են հատուկ շնորհակալություն հայտնել Կանայք ընդդեմ բռնության եվրոպական ցանցի (այսուհետ՝ ԿԸԲԵՑ) ներկայացուցիչ Ռոզա Լոգարին՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հատուկ վերապատրաստման սեմինարները տեղայնացնելու և օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար:

Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել Եվրոպայի խորհրդին այս գործընթացին աջակցելու համար, մասնավորապես՝ քաղաքականության հարցերով խորհրդական Սառա Հապալայնենին և Ծրագրի ավագ պատասխանատու Լիանա Ամիրբեկյանին՝ շարունակական աջակցության և հետադարձ կապի համար:

Հեղինակներ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Եվրոպայի խորհուրդը խորհրդատուներին հանձնարարել է մշակել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ վերապատրաստման ծրագիր և աջակցել Հայաստանի ՆԳՆ կրթահամալիրի (ՆԳՆԿՀ) առկա վերապատրաստման ծրագրերի բարելավմանը: Նպատակն է ՆԳՆԿՀ-ի հետ համատեղ բարելավել Հայաստանի ոստիկանության կարողությունները՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարելու համար: Եվրոպայի խորհուրդը տրամադրում է եվրոպական և Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան հատուկ գիտելիքներ: Դասընթացը և ձեռնարկը մշակվել են «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի վավերացման ուղին Հայաստանում» ծրագրի շրջանակում:

Ձեռնարկի շրջանակներում «տուժող» եզրույթն օգտագործվում է ինչպես տուժողի կարգավիճակ ստացած, այնպես էլ նման կարգավիճակ չունեցող, սակայն ոտնձգության ենթարկված, ոտնձգությունից տուժած անձին բնութագրելիս:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Անվանումը	Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանում ոստիկանության ծառայողների վերապատրաստման ձեռնարկ
Շահառուները	Նյութերը մշակված են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի օգտագործման համար՝ ոստիկանության ծառայողների վերապատրաստման նպատակով:
Դասընթացի նպատակը	Այս ձեռնարկի նպատակն է մասնակիցներին հիմնարար գիտելիքներ տրամադրել կանանց նկատմամբ գենդերային բռնության դեմ պայքարի վերաբերյալ ոստիկանության ամենօրյա աշխատանքի ընթացքում: Մասնավորապես, մասնակիցները՝ • ավելի խորը պատկերացում կկազմեն բռնությունից և ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանելուն ուղղված միջազգային և ներպետական իրավակարգավորումների, ոստիկանության դերի և գործառույթների մասին. • կճանաչեն գենդերային վնասակար կարծրատիպերը և թե ինչպես են դրանք կապված գենդերային բռնության, տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանության հարաբերությունների հետ. • գիտելիքներ ձեռք կբերեն գենդերային հիմքով բռնության բնույթի և դրա հատկորոշող տարրերի մասին. • ավելի խորը պատկերացում կկազմեն տուժողների պաշտպանության և անվտանգության ապահովման ընթացակարգերի և պարտավորությունների, ինչպես նաև ռիսկերի գնահատման և կառավարման մասին՝ ընտանեկան բռնության գենդերային ընկալման տեսանկյունից. • կծանոթանան ընտանեկան բռնությունից տուժած կանանց և երեխաների իրավունքների և ազատությունների, ինչպես նաև անձի անձեռնմխելիության և գաղտնիության պահպանման հիմնական սկզբունքներին՝ կիրառելով զոհակենտրոն մոտեցում: • ավելի խորը պատկերացում կկազմեն այն մասին, թե ինչպես կանխել ընտանեկան բռնությունը և պատասխանատվության ենթարկել ընտանեկան բռնության համար մեղավորներին:

Դասընթացի բովանդակությունը	Ձեռնարկը բարելավում է մասնակիցների ընդհանուր ընկալումը գենդերային հասկացությունների, գենդերային կարծրատիպերի և կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության մասին: Դիտարկվում են բռնության ձևերը և շրջապտույտը: Ձեռնարկն անդրադառնում է Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիայում և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայում (ԿԽՎԿ) ներառված միջազգային չափանիշներին: Այն տրամադրում է խորացված գիտելիքներ՝ գործի քննության և քրեական հետապնդման ոլորտում պատշաճ զգուշավորության չափանիշի, ինչպես նաև ընտանեկան և սեռական բռնության ոլորտում ԿԽՎԿ-ի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 14-րդ հոդվածների գործնական կիրառման ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի վերաբերյալ: Ձեռնարկը համապարփակ ձևով ներկայացնում է դիտարկվող հարցերին առնչվող ներպետական օրենսդրությունը, այդ թվում՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» (այսուհետ՝ «Ընտանեկան բռնության մասին») ՀՀ օրենքը, ՀՀ քրեական օրենսգիրքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, հարակից վարչական և քաղաքացիական դատավարությունը և ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ակտերը: Ներկայացված են ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների միջև առկա անհամապատասխանությունները: Ձեռնարկում ուսումնասիրվում են ընտանեկան բռնության դեպքերի առնչությամբ ոստիկանության գործառույթների կատարման ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության կիրառելի մեխանիզմները և ներկայացվում է ընտանեկան բռնության դեպքերի վարման, այդ թվում՝ գործով համապատասխան շահագրգիռ կողմերի հետ աշխատանք տանելու վերաբերյալ գործնական ուղեցույց:
Դասընթացավարի դերն ու խնդիրները	Դասընթացավարը ուղղորդում է մասնակիցներին և ձեռնարկում ուսուցման գործընթացի հաջող իրականացմանն ուղղված անհրաժեշտ քայլերը, այդ թվում՝ • բացատրում և ներկայացնում է թեմաները, • վարում է քննարկումները, • կազմակերպում է պրակտիկ դեպքերի ուսումնասիրությունը, • մասնակցում է շնորհանդեսներին, • առաջադրում և պատասխանում է հարցերին, • տալիս է առաջադրանքներ և գնահատում դրանց կատարումը, • հետևում է ուսուցման գործընթացին և համակարգում այն: Դասընթացավարն իր աշխատանքով ապահովում է դասընթացի նպատակների իրագործումը:
Գնահատումը	Մասնակիցների աշխատանքը գնահատվում է քննարկումներին և խմբային աշխատանքներին մասնակցության (գնահատականի 40%), ինչպես նաև վարժությունների և թեստերի կատարման արդյունքների հիման վրա (գնահատականի 60%): **Ընդհանուր գնահատումը կատարվում է** քննարկումներին մասնակցության, հարցեր տալու, խմբային աշխատանքներին մասնակցության և ներդրման, դերախաղերի և խմբային նմանատիպ առաջադրանքների կատարման հիման վրա: **Անհատական գնահատումը կատարվում է** վարժությունների և թեստերի գնահատականների հիման վրա:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) զեկույցի համաձայն ամբողջ աշխարհում կանանց 35 տոկոսը ենթարկվում է ֆիզիկական կամ սեռական բռնության՝ հիմնականում սեռական զուգընկերոջ կողմից[1]: Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների համընդհանուր խախտում է, որի հիմնապատճառն են տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանության հարաբերությունները և կանանց նկատմամբ խտրականությունը: «Գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնություն» նշանակում է բռնություն, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն[2]: Ուստի, կանանց նկատմամբ բռնությանը կանխարգելումը, քրեական հետապնդումը և տուժողների պաշտպանությունը պետք է իրականացվի գենդերազգայուն մոտեցման հիման վրա: Գենդերային հիմքով բռնությանը արդյունավետ համակարգային արձագանք տալու համար անհրաժեշտ է գենդերազգայուն իրավական համակարգի կառուցում:

Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում ոստիկանության արդյունավետ և որակյալ աշխատանքի գրավականը տղամարդկանց և կանանց վրա հանցագործությունների և բռնության ազդեցության տարբերության ընկալումն է:

Ընտանեկան բռնությանը բնորոշ են գենդերային հիմքով բռնության հստակ հատկանիշներ՝ այն անհամաչափորեն է դրսևորվում կանանց նկատմամբ (թեև տղամարդիկ նույնպես կարող են ենթարկվել ընտանեկան բռնության), նաև այն, որ բռնարարի դերում հիմնականում տղամարդիկ են:

Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր և կոնվենցիաներ պարտավորություն են դնում պետության առջև՝ ակտիվ միջոցներ ձեռնարկել ընտանեկան բռնությունը կանխելու և տուժողներին պաշտպանելու, նրանց օգնություն և աջակցություն ցուցաբերելու և բռնարարներին արդյունավետ պատասխանատվության ենթարկելու համար: Հանցագործությունից, այդ թվում՝ ընտանեկան բռնությունից տուժողների համար արդարադատության հասանելիության ապահովումը պետք է դիտվի որպես գերակա խնդիր: Պետությունը պարտավոր է ապահովել, որ ընտանեկան բռնությունից տուժած անձինք ստանան առավելագույն պաշտպանություն, ընտանեկան բռնության դեպքերով բոլոր մեղադրանքները մանրակրկիտ և արագ քննվեն և բռնարարները կանգնեն դատարանի առջև:

Ոտնձգության ենթարկված անձանց, ինչպես նաև ենթադրյալ ոտնձգության ենթարկված անձանց ֆորմալ ճանաչումն ինքնին չի նշանակում ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանում և կարիքների իրականացում: Տուժողների դիրքն ու դերը և նրանց մասնակցությունը դատավարությանը ենթակա են իրավաբանական կարգավորման: Տուժողների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը համապատասխան և լավ մշակված իրավական դաշտից բացի պահանջում է հմուտ և պատրաստված մասնագետների և բավարար ֆինանսական միջոցների առկայություն: Մասնագետների շրջանում գենդերային զգայունության զարգացումը պայմանավորված է կանանց նկատմամբ բռնարարքների ճանաչմամբ և դրանց

1 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2013թ.), Կանանց նկատմամբ բռնության գլոբալ և տարածաշրջանային գնահատականներ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.who.int/publications/i/item/9789241564625.

2 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, 2011 թ., Հոդված 3, հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168008482e

դեմ ձեռնարկվող քայլերի արդյունավետությամբ: Այն պահանջում է գենդերային հիմքով բռնության նկատմամբ անհանդուրժողականության մշակույթի ձևավորում և գենդերային նախապաշարմունքների դեմ պայքար:

1.1 ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Պատկերացում կազմել կանանց՝ բռնությունից և ընտանեկան բռնությունից պաշտպանելու ոլորտում միջազգային իրավակարգավորումների և ներպետական օրենսդրության, ոստիկանության գործառույթների և խնդիրների մասին.
2. Ճանաչել գենդերային վնասակար կարծրատիպերը և դրանց կապը գենդերային հիմքով բռնության և տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանական հարաբերությունների հետ.
3. Ձեռք բերել գիտելիքներ գենդերային հիմքով բռնության բնույթի և դրա հատկորոշող տարրերի մասին.
4. Պատկերացում կազմել տուժողների պաշտպանության և անվտանգության ապահովման ընթացակարգերի և ոստիկանության պարտականությունների, ինչպես նաև ռիսկերի գնահատման և կառավարման մասին՝ ընտանեկան բռնության գենդերազգայուն ընկալման տեսանկյունից.
5. Ծանոթանալ ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների և ազատությունների, ինչպես նաև անձի անձեռնմխելիության և կոնֆիդենցիալության պաշտպանության հիմնական սկզբունքներին՝ զոհակենտրոն մոտեցման կիրառմամբ.
6. Պատկերացում կազմել ընտանեկան բռնությունը կանխելու և ընտանեկան բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցների մասին:

1.1.2. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Դասընթացի ավարտին ոստիկանության աշխատակիցները.

- գիտելիք ձեռք կբերեն ընտանեկան բռնության դեպքերում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ոստիկանության համար կիրառելի օրենքների, չափանիշների և կառուցակարգերի մասին.
- ընտանեկան բռնության դեպքերի հետ առնչվելիս կկիրառեն համապատասխան օրենսդրությունը և ուղեցույցերը.
- կճանաչեն ընտանեկան բռնության դրսևորում հանդիսացող հանցանքի հատկանիշները և ոստիկանության արդյունավետ արձագանքը նման հանցագործություններին.
- կհարգեն և կպաշտպանեն տուժողներին և վկաներին.
- կբացահայտեն գենդերային անհավասարությունը և իշխանության անհավասար հարաբերությունները և կիմանան, թե որ միջոցները կիրառել ընտանեկան բռնության դեպքերում.
- արդյունավետորեն կբացահայտեն ռիսկերը, կիրականացնեն ռիսկերի գնահատումը և կկարողանան կազմել անվտանգության ծրագիրը.
- կկիրառեն բավարար միջոցներ ընտանեկան բռնություն գործադրած անձանց նկատմամբ՝ նրանց պատասխանատվության կանչելու ու տուժողների անվտանգությունն ապահովելու համար.
- արդյունավետ կհամագործակցեն համապատասխան շահագրգիռ կողմերի հետ (Քննչական կոմիտեի, օժանդակ ծառայությունների և այլն):

1.2 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս ձեռնարկը սկզբունքորեն համապատասխանում է և համահունչ է գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության, տուժողների իրավունքների և ընտանեկան բռնության հարցերում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և ներպետական օրենսդրության պահանջներին: Ձեռնարկի հիմքում հետևյալ մոտեցումներն են.

- Քայլ առ քայլ մոտեցում. յուրաքանչյուր դասընթացի հիմքում նախորդ դասընթացի ուսուցման արդյունքներն են և դրանցից հետևող մասնակիցների հետագա գործողությունները
- Գործնական մոտեցում. յուրաքանչյուր դասընթաց կապված է Հայաստանի ոստիկանության խնդիրների և պարտականությունների հետ՝ անդրադառնալով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարի և տուժողներին պաշտպանության մեխանիզմներին և գործիքներին:
- Մասնակցային մոտեցում. նախատեսվում է, որ տեխնիկական նյութերը և շնորհանդեսները լինեն կարճ և խրախուսեն ակտիվ մասնակցությունը: Ձեռնարկն ապահովում է մասնակիցների ամենօրյա աշխատանքում գործնական կիրառելիության նպատակը՝ նրանց գործառույթներին և պարտականություններին առնչվող վարժությունների միջոցով: Մասնակիցների փորձի փոխանակումը ամբողջ դասընթացի ընթացքում ուսուցման մեթոդաբանության կարևոր բաղադրիչն է:

Ձեռնարկում կիրառվում է **համեմատական իրավական մոտեցման «օրենքի համատեքստում» մեթոդը**: «Օրենքի համատեքստում»մեթոդի միջոցով ներկայացվում են գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ենթաօրենսդրական ակտերը: Ձեռնարկում ներկայացվում է դրանց գործնական կիրառումը, ինչպես նաև իրականացվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ[3]) օրենսդրական դաշտի համեմատական վերլուծություն ըստ միջազգային պարտավորությունների, միջազգային չափանիշների և հեռանկարային գործելակերպի: Ձեռնարկի հիմնական նպատակը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության (դրա ձևերի, հետևանքների) ընկալումն է, ըստ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության նկատմամբ իրավապահ մարմինների արձագանքման բոլոր փուլերի՝ մարդու իրավունքների և զոհակենտրոն մոտեցման ապահովմամբ:

Ձեռնարկում նաև կիրառվում է **դեպքի ուսումնասիրման վրա հիմնված դասավանդման մեթոդը**[4], որը նախատեսում է դեպքի կարճ նկարագրությունը և դասընթացի մասնակիցներին իրավիճակի, դեպքում ներգրավված անձանց մասին տեղեկությունների և խնդրի կամ դրա լուծման հիմքում ընկած իրադարձությունների մասին տեղեկությունների տրամադրումը: Դեպքերը վերցված են հարցազրույցներից, հանրության համար հասանելի աղբյուրներից և իրական կյանքում տեղի ունեցած դեպքերից: Դեպքերն ուսումնասիրելիս մասնակիցներին կտրամադրվի համապատասխան գործիքակազմ և ուղենիշեր[5]: Դեպքերի ուսումնասիրությունները փորձնական են: Ոստիկանության աշխատակիցներին/ուսանողներին առաջարկվում է իրենց պատկերացնել դեպքում ներգրավված անձանց դերում: Ոստիկանության աշխատակիցներին/ուսանողներին հանձնարարություն կտրվի որոշում կայացնել կամ կազմել ծրագիր՝ ելնելով ստանձնած դերից:

Դեպքերի ուսումնասիրության ընթացքում կարելի է գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

---

3 https://www.mfa.am/en/overview

4 Դեպքի ուսումնասիրման վրա հիմնված դասավանդման մեթոդ, Հարվարդի իրավաբանական դպրոց:

5 Կազմված է Ջոն Պալֆրիի և Լիզա Բրեմի «Ինչպես մոտենալ դեպքի ուսումնասիրությանը խնդիրների լուծման սեմինարին» աշխատության հիման վրա: Թույլտվությունը տրվել է Հարվարդի իրավաբանական դպրոցի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 10-ին:

- Որո՞նք են ձեր նպատակները որպես ոստիկանության աշխատակից:
- Որպես ոստիկանության աշխատակից, ո՞վ է ձեր հաճախորդը (տուժող, վկա, իրավախախտ): Որո՞նք են ձեր հաճախորդի նպատակները:
- Ի՞նչ սահմանափակումների և հնարավորությունների եք բախվում:
- Ի՞նչ տարբերակներ կան ձեզ համար:

Ոստիկանության աշխատակիցները/ուսանողները կարող են և պետք է օգտագործեն իրենց փորձը և իրենց դերի և իրավիճակի մասին դատողությունները: Նրանք կարող են դերը հարմարեցնել սեփական պատկերացումներին, բայց պետք է տեղյակ լինեն, թե ինչպես է կծավալվեին դեպքերը և ինչպիսի իրավիճակ կարող էր ստեղծվել իրական աշխարհում: Ոստիկանության աշխատակիցների/ուսանողների կողմից դեպքի ուսումնասիրությունից ձեռք բերված հատուկ գիտելիքներնն ու փորձը կարող են օգտակար լինել իրական կյանքում խնդիրները լուծելիս:

Դեպքի և իրական կյանքի ուսումնասիրությունների կարևոր մասն է գնահատել, թե ինչ փաստեր մենք չգիտենք: Դեպքի ուսումնասիրման սկզբնական փուլում ոստիկանության աշխատակիցները/ուսանողները պետք է մտածեն, թե ինչ տեղեկատվություն դեռ պետք է հավաքեն՝ գործը բացահայտելու համար: Դեպքերի օրինակները նախատեսում են ձեռնարկվելիք միջոցառումների որոշման նպատակով փաստեր հավաքելու համար ժամանակի տրամադրում:

Նախքան որոշում կայացնելը ոչ ոք չի կարող տիրապետել բոլոր կարևոր փաստերին: Մտքերը ներկայացնելու կամ առաջարկություններն անելու պահին ենթադրություններ անելու և լավագույն գաղափարն առաջակելու համար հաշվի են առնվում գործով փաստերը, լրացուցիչ ընթերցանության արդյունքում ստացված տվյալները և մասնակիցների սեփական փորձը: Ենթադրությունները պետք է լինեն հիմնավորված և հիմնված լինեն առկա ապացույցների վրա:

Այս ձեռնարկում ընդգրկված դեպքերի մի մասը ոստիկանության աշխատակիցներին/ուսանողներին ծանոթացնում է միայն գլխավոր խնդրին՝ նվազագույն նախապատմությամբ, մի մասն էլ հարուստ տեղեկատվություն է պարունակում՝ թե՛ տեքստում, թե՛ ցուցանմուշներում կամ հավելվածներում: Այս տեղեկատվությունը հարուստ համատեքստ է ձևավորում աշխատանքի համար: Այն թաքնված իմաստ չի կրում, ոչ էլ թույլ է տալիս դեպքի խնդրին վերջնական պատասխաններ տալ: Ի՞նչ է այն հուշում խնդրի, իրավիճակի, հաճախորդի (տուժողի, վկայի, իրավախախտի) և նրա նպատակների ու դրդապատճառների մասին: Ոստիկանության աշխատակիցները/ուսանողները կարող են ինքնուրույն որոշել, թե որ տեղեկությունն օգտագործեն և որն անտեսեն, եթե այն իրենց նպատակին չի ծառայում:

Չկա միանշանակ «ճիշտ» պատասխան, բայց կան ավելի լավ և դրան զիջող պատասխաններ: Նաև որոշ պատասխաններ կարող են սխալ լինել, եթե դրանք հանգեցնում են, օրինակ, տուժողի համար վտանգի կամ երկրորդային վիկտիմիզացիայի: Դեպքերի ուսումնասիրությունը նախատեսված է ակտիվ քննարկմանը և թիմային աշխատանքին նպաստելուն: Դեպքերն ընտրվել են այն սկզբունքով, որ դրանք նախատեսեն մի շարք հնարավոր լուծումներ: Մոտեցումները կամ լուծումները պետք է լինեն համոզիչ՝ հիմնված փաստերի և համատեքստային վերլուծության վրա և հաճախորդների (տուժողի, վկայի, իրավախախտի) նպատակներին հասնելու համար հավաստի երևան: Առաջարկվող լուծումները մասնակիցները ներկայացնում են իրենց դասընկերներին և դասընթացավարին:

Դասընթացը նախատեսված է մասնակիցներին գործնական հմտություններ և գործիքներ տալու համար և օգնելու նրանց զարգացնել խնդիրների լուծման և թիմային աշխատանքի հմտությունները: Ուսուցման մեթոդաբանությունը կօգնի ոստիկանության աշխատակիցներին/ուսանողներին իրենց պատկերացնել տուժողի (վկայի, իրավախախտի) դերում և որոշումները կայացնել նրա տեսանկյունից: Ուսուցման մեթոդի կարևոր մասն է նաև պարզելը, թե ինչպես կարելի է խնդիրները լուծել որպես միասնական թիմ, հենվելով թիմում ընդգրկված անհատների տարբեր ուժեղ կողմերի վրա:

1.3 ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Այս ձեռնարկի ստեղծման հիմնական նպատակն է մշակել ռեսուրսային գործիք, որը պարունակում է մի շարք թեմաների վերաբերյալ նյութեր, ինտերակտիվ ուսուցման վարժություններ և դեպքերի ուսումնասիրություններ: Միևնույն ժամանակ անհատ մասնագետները նույնպես կարող են օգտագործել ձեռնարկը որպես ուսուցման ռեսուրս՝ տեսական և գործնական տեղեկատվություն ստանալու համար, ինչպես նաև որպես հեռանկարային գործնական մոդելների աղբյուր: Ձեռնարկը, որը հիմնված է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի չափանիշների վրա, բաժանված է յոթ գլխի:

- Գլուխ 1. Ներածություն և ձեռնարկի մեթոդաբանություն
- Գլուխ 2. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ընկալում
- Գլուխ 3. Ոստիկանության վարքագիծը կարգավորող իրավական դաշտի, ներառյալ միջազգային և ազգային իրավական չափանիշների ընկալումը
- Գլուխ 4. Ոստիկանության արձագանքը. ռիսկերի բացահայտումը, ինչպես գնահատել ռիսկերը և ոստիկանության պարտականությունները ռիսկերի կառավարման գործում
- Գլուխ 5. Ոստիկանության արձագանքը. տուժողների անվտանգությունը և պաշտպանությունը, երկրորդային վիկտիմիզացիայի, տուժողներին մեղադրելու և կեղծ ընկալումների բացառումը
- Գլուխ 6. Ոստիկանության արձագանքը. ոստիկանության աշխատակիցների աշխատանքը տուժողների, իրավախախտների և վկաների հետ
- Գլուխ 7. Միջգերատեսչական համագործակցություն և համակարգում

Յուրաքանչյուր գլուխ սկսվում է դիտարկվող թեմայի տեսական համատեքստի ներկայացմամբ, որին հաջորդում են գործնական վարժությունները և հիմնական ուղերձները: Դասընթացավարները կարող են օգտագործել ձեռնարկը՝ դասընթացները մասնակիցների կարիքներին և հետաքրքրություններին համապատասխանեցնելու համար: Ձեռնարկը ներառում է մասնակիցներին բաժանվող նյութեր, դեպքի օժանդակ նյութեր, ռեսուրսներ և լրացուցիչ ընթերցման նյութեր նրանց համար, ովքեր հետաքրքրված են սեփական գիտելիքների բազայի հետագա հարստացմամբ:

2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Նպատակը.

Ոստիկանության աշխատակիցները ձեռք կբերեն խորը գիտելիքներ կանանց նկատմամբ բռնության բնույթի, դրա պատճառների, հետևանքների և անհամաչափ ազդեցության, ինչպես նաև ոստիկանության՝ միջազգային և ազգային չափանիշներին համապատասխան արձագանքի վերաբերյալ՝ առաջնահերթությունը տալով տուժող կանանց բարօրությանը և պատասխանատվության ենթարկելով ոտնձգողներին:

Ուսուցման հիմնական կետերը.

- Պատկերացում կազմել կանանց նկատմամբ բռնության բնույթի, դրա պատճառների և հետևանքների, ինչպես նաև այն մասին, թե ինչպես է բռնությունը տարբեր ձևերով և անհամաչափորեն ազդում կանանց և աղջիկների վրա.
- Պատկերացում կազմել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ձևերի և դինամիկայի մասին.
- Բացահայտել գենդերային հիմքով բռնության փաստերն ու հիմնական տարրերը.
- Բացահայտել ընտանեկան բռնության հետևանքները տուժողների համար:

2.1. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ (ԳՀԲ) գենդերային անհավասարության մեջ արմատավորված երևույթ է, որը շարունակում է հանդիսանալ մարդու իրավունքների կոպիտ խախտում բոլոր հասարակություններում: Գենդերային հիմքով բռնությունն ուղղված է անձի դեմ՝ ելնելով նրա սեռից: Գենդերային հիմքով բռնության ենթարկվում են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ, սակայն տուժողների ճնշող մեծամասնությունը կանայք և աղջիկներ են:

Գենդերային հիմքով բռնությունը անհամաչափորեն է ազդում կանանց նկատմամբ: Այն տարբերվում է բռնության այլ տեսակներից այն առումով, որ տուժողի սեռն է դիտարկվում որպես բռնության հիմնական շարժառիթ: Այլ կերպ ասած, գենդերային հիմքով բռնությունը վերաբերում է ցանկացած վնասի, որը հասցվել է կնոջը զուտ այն պատճառով որ նա կին է, և որը անհավասար իշխանության հարաբերությունների և՛ պատճառն է, և՛ արդյունքը՝ պայմանավորված կանանց և տղամարդկանց ընկալվման տարբերություններով, ինչն էլ հանգեցնում է կանանց ստորադաս կարգավիճակի ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտներում[6]: Բռնության այս տեսակը խորապես արմատավորված է հասարակությունը կառավարող սոցիալական և մշակութային կառույցներում, նորմերում և արժեքներում և հաճախ արմատավորվում է ժխտողականության և լռության մշակույթով:

ԿԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականը ընդգծում է գենդերային հիմքով բռնության և ավանդական գենդերային կարծրատիպերի և բռնության միջև կապը:

Հանձնարարականում ասվում է.

6 Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, 2011թ., հոդված 3:

«Ավանդական վերաբերմունքը, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա, արմատավորում են բռնության կամ հարկադրանքի լայնածավալ գործելակերպը, օրինակ՝ ընտանեկան բռնությունը և դաժան վերաբերմունքը . . . Նման նախապաշարմունքներն ու գործելակերպը կարող են արդարացնել գենդերային հիմքով բռնությունը՝ որպես կանանց պաշտպանության կամ վերահսկողության ձև»[7]:

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ (ԿՆԲ) մարդու իրավունքների կոպիտ խախտում է և սոցիալական, առողջապահական, սոցիալ-տնտեսական, զարգացման և նույնիսկ քաղաքական լուրջ խնդիր, քանի որ դրա հետևանքները տարածվում են ոչ միայն բռնության ենթարկված և բռնություն գործադրած անձանց, այլև նրանց ընտանիքների, համայնքների և երկրների վրա: Կանանց նկատմամբ բռնություն հասկացվում է որպես «գենդերային հիմքով բռնության այն բոլոր դրսևորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման արարքներ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում»[8]:

Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը (ԿՆԲՎՀ) «կանանց նկատմամբ բռնությունը» սահմանում է որպես «գենդերային հիմքով բռնության ցանկացած դրսևորում, որը հանգեցնում կամ կարող է հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, այդ թվում՝ նման արարքների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը՝ լինի դա հասարակական կամ մասնավոր կյանքում»[9]:

Կանանց նկատմամբ բռնության տարածվածությունը

ԱՀԿ-ի հրապարակած գլոբալ հաշվարկները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում կանանց 3-ից 1-ը (35%) իրենց կյանքի ընթացքում սեռական զուգընկերոջ կամ այդպիսին չհանդիսացող անձի կողմից ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական բռնության[10]: ԱՀԿ-ի ուսումնասիրության համաձայն, կանանց նկատմամբ ԳՀԲ-ն մարդու իրավունքների ամենատարածված խախտումներից մեկն է, ընդ որում Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում կանանց 25.4%-ը ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական բռնության սեռական զուգընկերոջ կամ այդպիսին չհանդիսացող անձի կողմից[11]: Աշխարհի բնակչության զգալի մասը տառապում է և ապրում է ԳՀԲ-ի պայմաններում:

Հայաստանում ՄԱԲՀ-ն ուսումնասիրել է սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնության ձևերը[12]: Հարցման արդյունքում ստացված տվյալները հստակ մատնանշել են, որ բռնության տարբեր ձևերից ամենատարածվածը հոգեբանական բռնությունն է, որին հաջորդում են տնտեսական բռնությունը և ֆիզիկական բռնությունը: Ինչ վերաբերում է հոգեբանական բռնությանը, ապա տղամարդկանց հաղորդմամբ՝ դրա հետ կապված ամենատարածված արարքներն են կին զուգընկերոջը վիրավորելը կամ դիտավորությամբ ստիպելը, որ նա իրեն վատ զգա (49.4%), ինչպես նաև դիտավորությամբ ահաբեկելը կամ վախեցնելը (10.1%): Ըստ կանանց կարծիքի՝ ամենատարածված արարքների թվին են դասվում վերոնշյալները (համապատասխանաբար՝ 43.6% և 9.2%), ինչ-

7 ԿՆԽՎԿ-ի ընդհանուր հանձնարարական թիվ 19. Կանանց նկատմամբ բռնություն, 1992թ., 11-րդ պարբերություն:

8 Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, 2011թ., հոդված 3:

9 Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիր, Գլխավոր ասամբլեայի բանաձև 48/104, 1993թ. դեկտեմբերի 20:

10 https://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women

11 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Լոնդոնի հիգիենայի և արևադարձային բժշկության դպրոց, Հարավային Աֆրիկայի բժշկական հետազոտությունների խորհուրդ, 2013թ.: Կանանց նկատմամբ բռնության գլոբալ և տարածաշրջանային գնահատականներ. սեռական զուգընկերոջ և այդպիսին չհանդիսացող անձի կողմից սեռական բռնության տարածվածությունն ու առողջական հետևանքները:

12 ԱՀԿ-ն սեռական զուգընկերոջ կողմից բռնությունը սահմանում է որպես «սեռական հարաբերությունների ընթացքում վարք, որը առաջացնում է ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս, ներառյալ ֆիզիկական ագրեսիայի, սեռական հարկադրանքի, հոգեբանական բռնության և վերահսկող վարքագծի դրսևորումներ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://apps.who.int/violence-info/intimate-partner-violence/ (կայքի վերջին այցելությունը 2021թ. հուլիսի 23-ին):

պես նաև զուգընկերոջ կողմից ստորացումն այլ անձանց ներկայությամբ (9.8%):[13]

Ինչ վերաբերում է տնտեսական բռնությանը, ապա դրա տեսակներից միայն մեկն է առավել տարածված, ինչը պարզ էր դառնում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց պատասխաններից (համապատասխանաբար՝ 19.3% և 19.5%), այն է՝ զուգընկերն արգելում է կնոջն աշխատել, աշխատանքի գնալ, առևտուր անել կամ գումար վաստակել: Առավել տարածված է ֆիզիկական բռնության երկու տեսակ, որոնք, սակայն, զիջում են մյուս տեսակներին իրենց հաճախականությամբ: Դրանք են՝ տղամարդու կողմից իր կին զուգընկեոջն ապտակելը կամ նրան վնասելու նպատակով նրա ուղղությամբ որևէ բան նետելը (12.9% տղամարդիկ և 10.3% կանայք են սա խոստովանում), նաև՝ հրելը կամ քաշքշելը (համապատասխանաբար՝ 11.4% և 7.5%):[14]

Աղյուսակ 1. Սեռական զուգընկերոջ կողմից բռնության ձևերը Հայաստանում			
Տղամարդկանց տոկոսը, ովքեր **հոգեբանական բռնություն** են գործադրել սեռական զուգընկերոջ նկատմամբ	20.8%	Կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են **հոգեբանական բռնության** սեռական զուգընկերոջ կողմից	21.3%
Տղամարդկանց տոկոսը, ովքեր **տնտեսական բռնություն** են գործադրել սեռական զուգընկերոջ նկատմամբ	53.3%	Կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են **տնտեսական բռնության** սեռական զուգընկերոջ կողմից	45.9%
Տղամարդկանց տոկոսը, ովքեր **ֆիզիկական բռնություն** են գործադրել սեռական զուգընկերոջ նկատմամբ	17.4%	Կանանց տոկոսը, ովքեր ենթարկվել են **ֆիզիկական բռնության** սեռական զուգընկերոջ կողմից	12.5%
Սեռական բռնության տոկոսը (գործադրվել և հաղորդվել է տղամարդկանց կողմից)			14.6%
Ենթարկվել է առնվազն մեկ տեսակի բռնության (կանանց տոկոսը, որոնք ինքնուրույն լրացրած հարցաթերթիկի միջոցով հաղորդել են վերջին 3 ամսվա ընթացքում տնից դուրս լուրջ կամ խիստ արտահայտված դրոևորում ունեցող ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին)			3.7%
Տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք հայտնել են, որ ցուցաբերել են վերահսկող վարք			95.5%

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) միջոցները հաստատուն կերպով հիմնված են այն գաղափարի վրա, որ կանանց նկատմամբ բռնությունը հնարավոր չէ արմատախիլ անել առանց կանանց և տղամարդկանց ավելի մեծ հավասարության ապահովման և, որ միայն կանանց և տղամարդկանց իրական հավասարությունը և իշխանության դինամիկայի և վերաբերմունքի փոփոխությունը կարող են վերջ դնել կանանց նկատմամբ բռնությանը: Կանանց նկատմամբ բռնությունը արմատախիլ անելու բանալին չպետք է նույնացնել հանցագործության վերահսկման հետ, քանի որ այն պետք է կանգնեցվի մինչև տեղի ունենալը: Հավասարություն նշանակում է, որ կանայք և տղամարդիկ հավասար զուգընկերներ են, ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, նույն հնարավորությունները, և որ նրանց ներդրումը հասարակության կողմից հավասարապես գնահատվում և հարգվում է: Հետևաբար, կոնվենցիան պարունակում է մի շարք դրույթներ, որոնք միտված են դե յուրե և դե ֆակտո կանանց կարգավիճակի բարձրացմանը: Կանանց ստորադասության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա հիմնված նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և այլ գործելակերպը բազմաթիվ են: Բնականաբար, դրանք ազդում են գենդերային հարաբերությունների և միջանձնային հարաբերությունների վրա: Դրանք նաև ազդում են պետական և հասարակական կառույցների, օրինակ՝ իրավական համակարգի կողմից կանանց նկատմամբ վերաբերմունքի և կանանց ընկալման վրա: Այդ իսկ պատճառով, Եվրոպայի խորհրդի կոնվենցիան նպատակ ունի

13 ՄԱԲՀ, Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում, 2016 թ., Մանն Լոռի և Սարգսյան Լուսինե, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ձեռնարկում, 2018 թ., 47-52 էջեր, հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/eur-justice-eng/168093c14a

14 Նույն տեղում:

փոխել վերաբերմունքը և վերացնել կարծրատիպերը ոչ միայն անհատների, այլև կառույցների մակարդակով[15]:

ԳՀԲ-ի բնույթը, պատճառներն ու հետևանքները հասկանալու համար օգտակար է անդրադառնալ սեռի և գենդերի միջև տարբերություններին և գենդերային դերերին, կարծրատիպերին և խտրականությանը:

Կյանքի գրեթե յուրաքանչյուր ոլորտ տարբեր է տղամարդկանց և կանանց համար: Անհերքելի է, որ սեռերի միջև կենսաբանական տարբերություններն ազդեցություն ունեն կանանց և տղամարդկանց կյանքում առկա տարբերությունների վրա: Տղամարդկանց և կանանց միջև սեռական տարբերությունները վերաբերում են մարմնի տարբեր չափերին և կառուցվածքին, հորմոնների տարբեր մակարդակին և վերարտադրման հարցում տարբեր դերերին: Մինչդեռ գենդերը ենթադրում է այնպիսի գործողություններ, դերեր և վարքագծեր, որոնք հասանելի են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց և կարգավորում է հասարակությունում նրանց հարաբերությունները: Գենդերային դերերը ոչ թե վերապահված են, այլ սահմանվում են հասարակության կողմից:

Գործողություն 1. «Սեռ կամ գենդեր»

Նպատակը. Այս վարժությունը նպատակ ունի բացահայտել սեռի և գենդերի միջև տարբերությունները:

Տևողությունը. 15 րոպե

Անցկացման ձևը. Անհատական աշխատանք (5 րոպե), խմբային քննարկում (10 րոպե):

Օժանդակ նյութեր. մասնակիցներին բաժանվող նյութ «Սեռ կամ գենդեր», Ֆլիպչարտ գրատախտակ, մարկերներ

Նշումներ դասընթացավարների համար. Մասնակիցները բաժանվում են երկու խմբի, և յուրաքանչյուր մասնակցի տրվում է «Սեռ կամ գենդեր» նյութը: 1-ին խմբին խնդրում են նշել սեռին վերաբերող, իսկ 2-րդ խմբին՝ գենդերին վերաբերող պնդումները: Դասընթացավարը պետք է ստեղծի դրական մթնոլորտ: Դասընթացավարը գրի է առնում մասնակիցների պատասխանները գրատախտակի վրա և նախաձեռնում ուղղորդված քննարկում սեռի և գենդերի տարբերությունների վերաբերյալ: Մասնավորապես, դասընթացավարը բացատրում է, որ սեռերի տարբերությունները կապված են կենսաբանական բնութագրերի հետ, մինչդեռ գենդերային տարբերությունները ստեղծվում են սոցիալական կամ մշակութային ճանապարհով: Քննարկմանը զուգընթաց տրվում են բացատրություններ այն մասին, որ ժամանակի ընթացքում և տարբեր մշակույթներում գենդերային դերերը փոփոխություններ են կրում: Դասընթացավարը քննարկման ընթացքում մասնակիցներին տրամադրում է Ներդիր 1-ը՝ «Տարբերությունը սեռի և գենդերի միջև»:

Ներդիր 1. «Տարբերությունը սեռի և գենդերի միջև»

Գենդեր	Սեռ
Տղամարդու և կնոջ տարբեր դերերը և սոցիալական կողմերը: Ժամանակի ընթացքում փոփոխվող:	Տղամարդու և կնոջ տարբեր կենսաբանական և ֆիզիկական կողմերը. Հաճախ մշտական:
Հասարակության, մշակույթի, ավանդույթի արդյունք՝ ձևավորված ուսուցման և ուսման միջոցով:	Բնածին:
Տարբերվում է տարածաշրջանների, պատմական ժամանակաշրջանների միջև:	Ունիվերսալ. նույնն է ամբողջ աշխարհում:

15 Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, 2011թ., տե՛ս 1, 3, 4, 6, 12 և 14 հոդվածները:

«Սեռ կամ գենդեր» մասնակիցներին բաժանվող նյութ

1-ին խմբից պահանջվում է նշել սեռին, իսկ 2-րդ խմբին՝ գենդերին վերաբերող պնդումները:

ՍԵՌ կամ ԳԵՆԴԵՐ

1. Կանայք կարող են ծննդաբերել և կրծքով կերակրել, իսկ տղամարդիկ՝ ոչ:
2. Ոստիկանության տղամարդ աշխատակիցներն իրենց երեխաներին խնամելու համար զգալիորեն ավելի քիչ են օգտագործում ծնողական արձակուրդը քան ոստիկանության կին աշխատակիցները:
3. Տղամարդիկ ավելի շատ տեստոստերոն են արտադրում, քան կանայք:
4. Ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում կանանց տոկոսային ներկայացվածությունը փոքր է:
5. Ընդհանուր առմամբ ոստիկանության տղամարդ աշխատակիցներն ավելի շատ մկանային զանգված ունեն, քան ոստիկանության կին աշխատակիցները:
6. Ոստիկանության տղամարդ աշխատակիցների համար ավելի բնական է աշխատել տղամարդ բռնարարների, իսկ ոստիկանության կին աշխատակիցների՝ երեխաների, անչափահասների և ոչ մեծ ծանրության հանցագործությունների հետ:
7. Կանայք սեռական բռնության ավելի մեծ ռիսկի են ենթարկվում, քան տղամարդիկ:
8. Միջին հաշվով ոստիկանության տղամարդ աշխատակիցներն ավելի շատ են վաստակում, քան ոստիկանության կին աշխատակիցները:
9. Ոստիկանության տղամարդ աշխատակիցներն ավելի բարձր արդյունքներ են դրսևորում թիմային մարզաձևերում քան ոստիկանության կին աշխատակիցները:
10. Ոստիկանական համազգեստը տղամարդկանց վրա ավելի գեղեցիկ է:

Ո՞րն է տարբերությունը սեռի և գենդերի միջև:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) առաջարկում է հետևյալ օգտակար ամփոփագիրը.

ՍԵՌԸ վերաբերում է տղամարդկանց և կանանց բնորոշ կենսաբանական և ֆիզիոլոգիական հատկանիշներին:

ԳԵՆԴԵՐԸ վերաբերում է սոցիալապես կառուցված դերերին, վարքագծերին, գործունեությանը և հատկանիշներին, որոնք հասարակությունը տեղին է համարում տղամարդկանց և կանանց համար:

Այլ կերպ ասած, «տղամարդը» և «կինը» սեռի կատեգորիաներ են, մինչդեռ «առնականությունը» և «կանացիությունը»՝ գենդերի: Միջազգային կոնվենցիաները պարունակում են նմանատիպ սահմանումներ: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիայի) համատեքստում գենդեր եզրույթը, որը հիմնված է երկու սեռերի վրա՝ արական և իգական, ներկայացնում է, որ կան նաև սոցիալապես կառուցված դերեր, վարքագծեր, գործունեություն և հատկանիշներ, որոնք տվյալ հասարակությունը տեղին է համարում կանանց և տղամարդկանց համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ հատուկ դերերը կամ կարծրատիպերը վերարտադրում են անցանկալի և վնասակար գործելակերպը և նպաստում կանանց նկատմամբ բռնության ընդունելի լինելուն: Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասում նախապաշարմունքների, սովորույթների, ավանդույթների և կանանց թերարժեքության գաղափարի կամ գենդերային կարծրատիպային դերերի վրա հիմնված այլ գործելակերպի վերացումը դիտվում է որպես բռնությունը կանխելու ընդհանուր պարտավորություն: Այլ բաժիններում կոնվենցիան կոչ է անում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալման՝ որպես տուժողների պաշտպանության և աջակցության բոլոր միջոցների հիմքը: Դա նշանակում է, որ երևույթի բարդությանը համարժեք արձագանքելու համար բռնության այս ձևերի դեմ պետք է պայքարել կանանց և տղամարդկանց միջև տիրող անհավա-

սարության, առկա կարծրատիպերի, գենդերային դերերի և կանանց նկատմամբ խտրականության համատեքստում: Այս սահմանման համաձայն «գենդեր» եզրույթը նախատեսված չէ որպես կոնվենցիայում օգտագործված «կանայք» և «տղամարդիկ» եզրույթների փոխարինում[16]:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐԸ կախված են համատեքստից/ժամանակաշրջանից և փոփոխելի են: Գենդերային դերերի վրա ազդում են տնտեսական և քաղաքական իրավիճակները, ինչպես նաև աշխարհագրական միջավայրը: Տարիքը, սոցիալական դասը, ռասան, ազգությունը, կրոնը, բարոյականության նորմերը նույնպես ազդեցություն ունեն գենդերային դերերի վրա: Գենդերային դերերը փոխանցվում և պարտադրվում են վաղ տարիքից՝ սոցիալականացման գործընթացներով, որոնք սկսվում են անմիջական ընտանիքում և համայնքում և շարունակվում կրթական գործընթացում և հետագա սոցիալական կյանքի բոլոր հատվածներում՝ կրոնի, գիտության, լրատվամիջոցների, մշակութային և իրավական նորմերի, սպորտի, աշխատանքային հարաբերությունների և այլն: Գենդերային դերերի սահմանումը կախված է կոնկրետ մշակույթից և պատմական համատեքստից: Գենդերային դերերը տարբեր են տարներ մշակույթներում, հաճախ նաև մեկ մշակույթի շրջանակներում, և փոփոխական են տարբեր ժամանակաշրջաններում:

Համայնքը որոշում է տղամարդկանց և կանանց համար ընդունելի հատկանիշներն ու վարքագծերը: Կանանց և տղամարդկանց բնորոշ վարքագծի և բնութագրերի վերաբերյալ պատկերացումները հաճախ ընդունվում և յուրացվում են ինքնաբերաբար, առանց որևէ տարակուսանքի: Օրինակ, երեխայի դաստիարակությունը հաճախ դիտվում է որպես կնոջը բնորոշ դեր: Սակայն դա կնոջ գենդերին, այլ ոչ թե կնոջ սեռին բնորոշ դեր է, քանի որ այն կարող են անել ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Դերերը յուրացվում են դիտարկման և ուսման միջոցով: Հասարակությունն ապահովում է համապատասխանությունը օրինակով, պատժելու կամ համոզելու միջոցով: Նրանք, ովքեր չեն համապատասխանում հասարակության պատկերացումներին, կարող են պատժվել, անտեսվել կամ վտարվել: Գենդերը հիմք է, որով մարդկանց պիտակավորում են և նրանց մասին դատում են, ճիշտ այնպես, ինչպես սոցիալական դասը, ռասան և կրոնը[17]:

Ներդիր 2. Գենդերային դերեր

Գենդեր	Սեռ
Երեխաների խնամք	Հղիություն և ծննդաբերություն
Տղամարդիկ ռացիոնալ են, իսկ կանայք՝ զգացմունքային	Մկանային զանգված / ֆիզիկական ուժ
Տղամարդիկ ընտանիքի կերակրողն են	Մորուք պահելը

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի[18] 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում գենդեր եզրույթը սահմանվում է որպես «տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավուն-

16 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց:

17 Ընտանեկան բռնության կանխարգելում և արձագանքում: ՄԱԹՀՊԳ: Հանոյ 2011թ.:

18 Այս օրենքը առավելագույն չափով ներառել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի և ԿՆԽՎԿ կոմիտեի հանձնարարականների պահանջները՝ այն օրենսդրության մեջ ներմուծում է «գենդերային խտրականության» հասկացությունը. արգելում է սեռի հիման վրա խտրականությունը, ուղղակի և անուղղակի խտրականության հասկացությունները ներմուծում է օրենսդրություն, հնարավորություն է ընձեռում և սահմանում է ընթացակարգ՝ քաղաքացիներին սեռի հիման վրա խտրականությունից պաշտպանելու համար, սահմանում է պաշտոնատար անձանց և գործատուների իրավական պատասխանատվությունը խտրականության համար, նպաստում է գենդերային հավասարության մշակույթի զարգացմանը և խտրական գործելակերպի հիմքում ընկած գենդերային կարծրատիպերի վերացմանը, նախանշում է գենդերային անհավասարակշռությունը շտկելու նպատակով ժամանակավոր հատուկ միջոցառումների կիրառման ոլորտները, շրջանակը և ժամկետները, օրինակարգում է գենդերային հավասարության ազգային մեխանիզմ ստեղծելու անհրաժեշտությունը, նախատեսում է գենդերային քաղաքականության իրականացման մոնիթորինգի և հաշվետվության մեխանիզմի դրույթները:

քը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը»[19]:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ կապված են նշանակված գենդերային դերերի հետ: Այս կարծրատիպերը բոլոր կանանց և տղամարդկանց բնութագրող հրապարակային ներկայացումներ, պատկերներ և տեսակետներ են, ամփոփելով վերջիններիս վերագրվող վարքագծի, արժեքների, կարողությունների միջև մի շարք բնորոշ տարբերություններ: Գենդերային կարծրատիպերը կանանց կամ տղամարդկանց վերաբերյալ ընդհանրացումներ են և սովորաբար հիմնված են այն ենթադրության վրա, որ տղամարդիկ կամ կանայք ունեն բնորոշ կամ տիպիկ վարք, որը հատուկ է միայն նրանց (միայն տղամարդկանց կամ միայն կանանց): Գենդերային կարծրատիպերը ստեղծում են կնոջ կամ տղամարդու կեղծ պատկեր, որովհետև նրանք մարդկանց խմբավորում են՝ ելնելով այն բանից, թե ինչպես են ուրիշներն իրենց տեսնում, այլ ոչ թե նրանից, թե նրանք ինչպիսին են կամ ինչպիսին կցանկանային ընկալվել: Մասնավորապես, «տղամարդկանց խմբի» բնորոշ հատկանիշները վերագրվում են յուրաքանչյուր տղամարդու, իսկ «կանանց խմբի» բնորոշ հատկանիշները վերագրվում են յուրաքանչյուր կնոջ: Ընդհանուր առմամբ, «կանանց խմբին» վերագրվող բնութագրերը հակառակ են «տղամարդկանց խմբին» վերագրվող հատկանիշներին: Գենդերային կարծրատիպերը «կանխորոշված սոցիալական և մշակութային օրինաչափություններ կամ գաղափարներ են, որոնց համաձայն կանանց և տղամարդկանց տրվում են հատկություններ և դերեր, որոնք որոշվում և սահմանափակվում են իրենց սեռով: Գենդերային կարծրատիպերը և՛ բխում են, և՛ պատճառ են խորապես արմատավորված վերաբերմունքների, արժեքների, նորմերի և նախապաշարմունքների: Դրանք օգտագործվում են արդարացնելու և պահպանելու կանանց նկատմամբ տղամարդկանց պատմական իշխանական հարաբերությունները, ինչպես նաև սեքսիստական պատկերացումները, որոնք կանխում են գենդերային հավասարության առաջխաղացումը: Գենդերային կարծրատիպերն ու հայրիշխանությունը բացասաբար են անդրադառնում նաև տղամարդկանց և տղաների վրա: Տղամարդկանց և տղաների վերաբերյալ կարծրատիպերը նույնպես բխում և հանդիսանում են խորապես արմատավորված վերաբերմունքների, արժեքների, նորմերի և նախապաշարմունքների պատճառ: Հեգեմոնիկ (գերիշխող) առնականությունը գենդերային կարծրատիպերի պահպանման և ամրապնդման նպաստող գործոն է»[20]:

«Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ որոշակի դերերի կամ կարծրատիպերի հետևանքով ի հայտ են գալիս անցանկալի և վնասակար գործելակերպեր, ինչպես նաև դա նպաստում է նրան, որ կանանց նկատմամբ բռնությունը դիտարկվի որպես ընդունելի երևույթ: Այդպիսի գենդերային դերերը բացառելու համար ԵԽ կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ կանանց ստորադասության կամ կարծրատիպային գենդերային դերաբաժանման գաղափարի վրա հիմնված նախապաշարմունքների, սովորույթների, ավանդույթների և այլ երևույթների վերացումը ձևակերպվում է որպես բռնության կանխարգելման ընդհանուր պարտավորություն:»[21]:

Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի ՄԻԵԴ գործով սահմանվեց, որ [22]. «... գենդերային հավասարության առաջխաղացումն այսօր Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների հիմնական նպատակն է և, նախքան վերաբերմունքի նման տարբերությունը Կոնվենցիային համատեղելի համարելը, շատ ծանրակշիռ պատճառներ պետք է բերվեն: [...] Մասնավորապես, տվյալ երկրի ավանդույթներին, ընդհանուր ենթադրություններին կամ գերակշռող սոցիալական պատկերացումներին հղումները բավարար հիմք չեն հանդիսանում սեռի հիման վրա վերաբերմունքի տարբերության համար: Մասնավորապես՝ պետություններին արգելվում է պարտադրել ավանդույթներ, որոնք բխում են ընտանիքում տղամարդու առաջնային դերից և կնոջ երկրորդական դերից»: Դատարանը նաև նշեց. «[...] գենդերային կարծրատիպերը, օրինակ, կանանց՝ որպես երեխայի առաջ-

19 Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-57-Ն, 2013թ., 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

20 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե: (2018 թ. մարտ): Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության ռազմավարություն 2018-2023թթ., 39-րդ և 41-րդ պարբերություններ:

21 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, (CETS No. 210), 43 պարբերություն:

22 ՄԻԵԴ, Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 30078/06, 22 մարտի 2012թ., 127, 143 պարբերություններ:

նային խնամող, և տղամարդկանց՝ որպես հիմնական կերակրող ընկալումն, ինչպես և ռասայի, ծագման, մաշկի գույնի կամ սեռական կողմնորոշման վրա հիմնված նման կարծրատիպերը, ինքնին չեն կարող համարվել վերաբերմունքի տարբերության համար բավարար հիմնավորում»:

Ներդիր 3. Գենդերային դիխոտոմիաներ[23]

Կանանց վերաբերյալ ընդհանուր ընկալումներ (կանացիություն)	Տղամարդկանց վերաբերյալ ընդհանուր ընկալումներ (առնականություն)
• համեստություն, • ընտանիք, • տուն, երեխաների և մեծերի մասին հոգ տանելը, • հուզական, • թույլ և նուրբ, • համագործակցող, • զգայուն, • սեքսի առարկա, • գրավիչ արտաքին տեսք, • զիջող, • ինտուիտիվ, • ներում	• իշխող, • բիզնեսով զբաղվող, • ընտանիքի կերակրող, • ռացիոնալ, • հզոր և ուժեղ, • մրցունակ, • ոչ զգայուն, • սեքսուալ ագրեսիվ, • գրավիչ ձեռքբերումների պատճառով, • հաստատակամ, • ռացիոնալ, • հավակնոտ

Աղբյուրը՝ Պ. Դևիսի աշխատության նյութերից, էջ 11[24]:

Հայերի մեծ մասը հավատարիմ է ավանդական գենդերային նորմերին, որոնց համաձայն տղամարդիկ համարվում են կերակրող և նրանցից չի ակնկալվում տնային պարտականությունների կատարում, այդ թվում՝ երեխաների խնամք: Նույնիսկ եթե ամուսնացած կինը աշխատում է տնից դուրս և եկամուտ է ստանում, միևնույն է, ակնկալվում է, որ նա կշարունակի կատարել բոլոր չվճարվող տնային պարտականությունները, ներառյալ երեխաների խնամքը: Ակնկալվում է նաև, որ կանայք ծնողական արձակուրդ վերցնեն իրենց նորածին երեխաներին խնամելու համար, իսկ տղամարդիկ՝ ոչ: Ավելին, դեռևս առկա է այն ակնկալիքը, որ ամուսինը պետք է կնոջից շատ վաստակի[25]:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ գենդերային կարծրատիպերը՝ «կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներ են»[26]:

Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի «Հայաստանյան ամփոփագիր» զեկույցում ընդգծվում է հավասարության և խտրականության դեմ պայքարի կարևորությունը և ներկայացվում են ԿԽՎԿ-ի մտահոգությունները՝ ընտանիքում և հասարակությունում կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների վերաբերյալ խտրական կարծրատիպերի պահպանման

23 Դիխոտոմիա բառը նշանակում է երկու բաների վերաբերվել որպես հակադիր կամ լրիվ տարբեր: Ինչպես և սեռը, գենդերը դիտվում է որպես երկու տարբեր կատեգորիաների համակցություն՝ արիության (կամ առնականություն) և իգականության (կամ կանացիություն), որոնք փոխադարձաբար բացառում են միմյանց:

24 Դևիս, Պ., (2011թ.) «Գենդեր, հանցագործություն և վիկտիմիզացիա», SAGE, Լոնդոն:

25 ԱՄՆ ՄԶԳ / Հայաստան. գենդերային վերլուծության հաշվետվություն 2019թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.researchgate.net/publication/335858505_USAID-Armenia-Gender-Analysis-Report

26 «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-57-Ն, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետեր:

կապակցությամբ[27]: ԿԽՎԿ-ն[28] նաև պետությանը կոչ է անում տարրական և միջնակարգ դպրոցական ծրագրերի, ինչպես նաև իրավաբանական ուսուցման ոլորտում նախատեսել գենդերային հավասարության, կանանց իրավունքների և գենդերային հիմքով բռնության վերաբերյալ պարտադիր թեմաներ: Առաջարկվում է նաև, որ պետությունը շարունակի վերանայել բոլոր դպրոցական դասագրքերը՝ գենդերային խտրական կարծրատիպերը վերացնելու համար[29]:

Հասարակությունների մեծ մասը հիմնված է այնպիսի համակարգերի վրա, որտեղ տղամարդիկ ավելի շատ ֆինանսական և քաղաքական ուժ ունեն, քան կանայք: Դրանք կոչվում են «հայրիշխանական հասարակություններ»: Հայաստանում համատարած բացասական գենդերային կարծրատիպերը խոչընդոտում են կանանց առաջխաղացմանը, առաջընթացին և գենդերային հավասարության ձեռքբերմանը, ընդ որում հասարակության մեջ դեռևս տարածված է կանանց նկատմամբ որոշ վնասակար ավանդական գործելակերպը (առաջին հերթին գենդերային բռնությունը, որդու նախընտրությունը և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները)[30]:

Երկու սեռերի մոտ առկա է սեռական զուգընկերոջ կողմից բռնության հանդուրժման բարձր մակարդակ: Հայ հասարակության մեջ շարունակում են գերակշռել առնականության, կանացիության, գենդերային հավասարության, սեքսուալության, տնային պարտականությունների բաշխման և գենդերային բռնության (սեռական զուգընկերոջ և հասակակիցների կողմից) վերաբերյալ հայրիշխանական և ավանդական կոշտ սոցիալական նորմերն ու ընկալումները[31]: Մասնավորապես, ՄԱԲՀ-ի 2016 թվականի ուսումնասիրությունը պարզեց, որ տղամարդկանց 66 տոկոսը և կանանց 63 տոկոսը նշել են, որ «եթե կինը դավաճանի իր ամուսնուն, ապա վերջինս կարող է հարվածել նրան»[32]:

Տղամարդիկ համարվում են ընտանիքում և տնային տնտեսությունում որոշումներ կայացնողներ: Այդպիսի իշխանությունը սնվում է այն համոզմունքով, որ տղամարդիկ ավելի ուժեղ են, ավելի ունակ և բնականաբար ավելի պիտանի ղեկավարելու: Կրթության, հմտությունների, աշխատանքի հնարավորությունների և ֆինանսական ռեսուրսների անհավասար հասանելիությունը նույնպես նպաստում է իշխանության անհավասար հարաբերությունների պահպանմանը: Բռնությունը կիրառվում է իշխանությունը և վերահսկողությունը պահպանելու համար:

Ներկայումս կանայք բոլոր մակարդակներում ավելի անբարենպաստ վիճակում են, քան տղամարդիկ: Հետևաբար, գենդերային անհավասարակշռությունը վերացնելու նպատակով իրականացվող գենդերային հավասարության ծրագրերում կանայք որպես կանոն ավելի մեծ ուշադրության են արժանանում, քան տղամարդիկ: Գենդերային հավասարության խթանումը նշանակում է երաշխավորել, որ և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար առկա են հավասար հնարավորություններ և, որ հասարակությունը հավասարապես է արժևորում տղամարդկանց և կանանց նմանություններն ու տարբերությունները և նրանցից յուրաքանչյուրի տարբեր գործառույթները: Կանանց և տղամարդկանց նկատմամբ արդար վերաբերմունքի ապահովման համար կարող են անհրաժեշտ լինել տարբեր միջոցներ[33]:

---

27 Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի զեկույց «Հայաստանյան ամփոփագիր», կետ 19, հասանելի է հետևյալ հղումով՝ https://undocs.org/A/HRC/WG.6/35/ARM/2

28 CEDAW/C/ARM/CO/5-6, 15 պարբերություն (դ) և (զ)

29 Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի զեկույց «Հայաստանյան ամփոփագիր», կետ 77, հասանելի է հետևյալ հղումով՝ https://undocs.org/A/HRC/WG.6/35/ARM/2

30 Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում, ՄԱԲՀ, 2016, էջ 30:

31 Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում, ՄԱԲՀ, 2016թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://menengage.unfpa.org/sites/default/files/resource-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_Final.pdf

32 Նույն տեղում:

33 Ընտանեկան բռնության կանխարգելում և արձագանքում: ՄԱԹՀՊԳ: Հանոյ 2011թ.:

Գործողություն 2. «Ավանդական կանացիության և առնականության բնութագրիչ հատկանիշներ»

Նպատակը. Այս վարժության նպատակն է ճանաչել «հակադիր բնութագրիչ հատկանիշների» առկայությունը:

Տևողությունը. 15 րոպե

Անցկացման ձևը. Անհատական աշխատանք (5 րոպե), խմբային քննարկում (10 րոպե):

Օժանդակ նյութեր. մասնակիցներին բաժանվող նյութ «Ավանդական կանացիության և առնականության բնութագրիչ հատկանիշներ», ֆլիպչարտ գրատախտակ, մարկերներ

Նշումներ դասընթացավարների համար. Մասնակիցները բաժանվում են երկու խմբի, և յուրաքանչյուր մասնակցի տրվում է «Ավանդական կանացիության և առնականության բնութագրիչ հատկանիշներ» նյութը: 1-ին խմբին խնդրում են նշել կանացիությանը վերաբերող հատկությունները, իսկ 2-րդ խմբին՝ առնականությանը վերաբերող հատկությունները: Դասընթացավարը յուրաքանչյուր խմբից մեկ անձի խնդրում է ներկայացնել իրենց կողմից նշված բնորոշ հատկանիշները: Դասընթացավարն այնուհետև առաջարկվող հատկանիշները գրի է առնում գրատախտակի վրա:

Դասընթացավարն ամփոփելով մատնանշում է հակադիր հատկանիշները և փաստարկներ է բերում՝ հօգուտ սոցիալական հիմքեր ունեցող տարբերությունների վերացմանը: Դասընթացավարը հարցնում է մասնակիցներին՝ արդյո՞ք առնականության և կանացիության բնութագրիչ հատկանիշները կապված են սեռի թե գենդերի հետ, և մանրամասնում է, որ առնականության և կանացիության բնութագրիչ հատկանիշների տարբերությունը սոցիալական հիմքեր ունի: Դասընթացավարը քննարկման ընթացքում մասնակիցներին տրամադրում է Ներդիր 3-ը՝ «Գենդերային դիխոտոմիաներ» (տե՛ս վերևում):

Մասնակիցներին բաժանվող նյութ «Ավանդական կանացիության և առնականության բնութագրիչ հատկանիշներ»

1-ին խմբին խնդրում են թվարկել կանացիության բնութագրիչ հինգ հատկանիշ, իսկ 2-րդ խմբին՝ առնականության բնութագրիչ հինգ հատկանիշ:

Կանացիության հատկանիշներ	Առնականության հատկանիշներ
1.	1.
2.	2.
3.	3.
4.	4.
5.	5.

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ հաճախ բացասական դատողություններ են, որոնք ներկայացնում են մեկ կամ մի խումբ կանանց կամ մեկ կամ մի խումբ տղամարդկանց մասին դատողություն, գնահատում և զգացմունքային արձագանք՝ մինչ որևէ տեղեկատվություն ունենալը: Գենդերային նախապաշարմունքները հիմնված են գենդերային կարծրատիպերի և սեքսիզմի վրա:

ՍԵՔՍԻԶՄԸ նախապաշարմունքների յուրահատուկ ձև է, որը հիմնված է այն համոզմունքի վրա, որ մարդիկ սեռի պատճառով ավելի բարձր կամ ստորադաս են: Սեքսիզմը և սեքսիստական վարքագիծը արմատավորված են և ամրապնդում են գենդերային կարծրատիպերը: Առավել հաճախ սեքսիզմն արտացոլում է տղամարդկանց համեմատ կանանց թերարժեքության վերաբերյալ նախապաշարմունքները: Կանանց վերաբերյալ բացասական կարծրատիպերը և սեռի և գենդերային դերերի հետ կապված իշխանության անհամաչափությունը սեքսիզմի համար պարարտ հող են: «Սեքսիզմը ցանկացած գործողություն, ժեստ, ցուցադրում, բանավոր կամ գրավոր խոսք, գործելակերպ կամ վարք է՝ հիմնված այն մտքի վրա, որ անձը կամ անձանց խումբը ստորադաս է իր սեռի պատճառով, որը տեղի է ունենում հանրային կամ մասնավոր ոլորտում՝ առցանց կամ անցանց՝ անձի կամ մի խումբ անձանց անկապտելի արժանապատվությունը կամ իրավունքները ոտնահարելու նպատակով կամ հետևանքով, կամ հանգեցնում անձի կամ անձանց խմբի ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական վնասի կամ տառապանքի, կամ ստեղծում վախեցնող, թշնամական, ստորացնող, նվաստացուցիչ կամ վիրավորական միջավայր, կամ խո-

չընդոտ է հանդիսանում անձի կամ անձանց խմբի կողմից մարդու իրավունքների ազատ և լիարժեք իրացման համար, կամ պահպանում և ամրապնդում է գենդերային կարծրատիպերը»[34]:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ վերաբերում է գենդերային դերերի և նորմերի վրա հիմնված որևէ տարբերությանը, բացառմանը կամ սահմանափակմանը, որը թույլ չի տալիս անձին օգտվել մարդու իրավունքներից: Համաձայն կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի,[35] Կանանց նկատմամբ գենդերային խտրականությունը սահմանվում է որպես «սեռի հատկանիշով ցանկացած տարբերություն, բացառություն կամ սահմանափակում, որն ուղղված է տղամարդկանց և կանանց իրավահավասարության հիման վրա քաղաքական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից կանանց օգտվելու սահմանափակմանը կամ խափանմանը, կամ ի չիք է դարձնում դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը՝ անկախ նրանց ընտանեկան կարգավիճակից»: Նման խտրականությունը կարող է լինել ուղղակի՝ երբ օրենքը, քաղաքականությունը կամ պրակտիկան բացահայտ խտրականություն են դնում կանանց նկատմամբ, կամ անուղղակի՝ երբ օրենքները, քաղաքականությունը կամ գործելակերպը, չնայած գենդերային չեզոք թվացող լինելուն, վնասակար ազդեցություն են ունենում կանանց վրա: Կանանց նկատմամբ անուղղակի խտրականությունը կարող է առաջանալ, երբ օրենքները, քաղաքականությունները և ծրագրերը հիմնված են գենդերային չեզոք թվացող չափանիշների վրա, որոնք իրենց իրական ազդեցությամբ վնասակար հետևանքներ են ունենում կանանց համար: Գենդերային չեզոք օրենքները, քաղաքականություններն ու ծրագրերը ակամայից կարող են արմատավորել խտրականության դրսևորումները: Դրանք կարող են ոչ միտումնավոր մոդելավորվել տղամարդու ապրելակերպի հիման վրա և, հետևաբար, հաշվի չառնել կանանց կյանքի փորձի այն կողմերը, որոնք տարբերվում են տղամարդկանց փորձից: Այս տարբերությունները գոյություն ունեն կարծրատիպային ակնկալիքների, կանանց նկատմամբ վերաբերմունքի և վարքի և տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանության հարաբերությունների պատճառով[36]: Պետությունները պարտավոր են վերացնել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը՝ անկախ այն բանից, թե դրանք դրսևորվել են պետական իշխանությունների, մասնավոր ընկերությունների, կազմակերպությունների, կամ անհատների կողմից[37]:

Գենդերային հիմքով խտրականությունն ավելի լավ հասկանալու համար նպատակահարմար է անդրադառնալ գենդերային հավասարություն հասկացությանը: **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ** ընդհանուր առմամբ վերաբերում է կանանց և տղամարդկանց և աղջիկների և տղաների հավասար իրավունքներին, պարտականություններին և հնարավորություններին: Հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ կդառնան նույնը, այլ որ կանանց և տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները կախված չեն լինի տղամարդ կամ կին ծնվելուց: Գենդերային հավասարությունը ենթադրում է, որ հաշվի են առնվում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շահերը, կարիքներն ու առաջնահերթությունները՝ ճանաչելով կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի բազմազանությունը: Գենդերային հավասարությունը ոչ միայն կանանց խնդիրն է, այլ պետք է վերաբերվի և լիովին ներառի ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց[38]:

---

34 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե: Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ CM/Rec (2019) 1 հանձնարարականը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168093b26a

35 ՄԱԿ-ի Կոնվոնցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին (ԿՆԽՎԿ), 1979թ. հոդված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/ԿՆԽՎԿ.aspx

36 ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (ԿՆԽՎԿ Committee) (2004). Ժամանակավոր հատուկ միջոցառումների վերաբերյալ թիվ 25 ընդհանուր հանձնարարական: (CEDAW/C/GC/25), հասանելի է հետևյալ հղումով՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/ԿՆԽՎԿ/Shared%20Documents/1_Global/INT_ԿՆԽՎԿ_GEC_3733_E.pdf

37 ԿՆԽՎԿ Ընդհանուր հանձնարարական թիվ 28:

38 ՄԱԿ-ի Կանայք: 2001թ. «Գենդերային ինտեգրում. Գենդերային հավասարության խթանման ռազմավարություն», հասանելի է հետևյալ հղումով՝ www.un.org/womenwatch/osagi/pdf/factsheet1.pdf

Գործողություն 3. «Առաքելությունը՝ երկիր մոլորակ»[39]

Նպատակը. այս վարժությունը նպատակն է տպագիր մամուլում ներկայացնել գենդերային դերերը՝ ձևավորելով նպաստող մթնոլորտ հետագա աշխատանքի համար:

Տևողությունը. 60 րոպե

Անցկացման ձևը. փոքր խմբերի համար վարժություն (15-20 րոպե), ամբողջ խմբի քննարկում (25 րոպե), դասընթացավարի կողմից ամփոփում և մեկնաբանություններ (15 րոպե):

Օժանդակ նյութեր. մասնակիցներին բաժանվող նյութ, տարբեր օրաթերթերի չորս օրինակ, ֆլիպչարտ գրատախտակ, մարկերներ

Ցուցումներ.

Քայլ 1. Դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է ստեղծել չորս-հինգ մասնակիցներից բաղկացած փոքր խմբեր: Դասընթացավարը լրագրողներին իրենց հաղորդումներ համար քննադատելու փոխարեն նպաստում է խնդիրների բացահայտման և լուծման համար դրական մթնոլորտի ձևավորմանը: Յուրաքանչյուր խումբ ստանում է օրաթերթի կամ շաբաթաթերթի մեկական օրինակ: Մասնակիցներին ծանոթացնում են մտացածին իրավիճակին.

«Դուք Xox մոլորակից եք: Ձեզ ուղարկում են կենսական նշանակության առաքելության՝ Երկիր մոլորակ: Xox-ի նախորդ առաքելությունը պարզել է, որ Երկրի վրա ապրում են խելացի էակներ, ովքեր իրենց անվանում են «Մարդ», և նրանք բավականին տարբերվում են միմյանցից՝ հիմնականում արտաքին տեսքով և մաշկի գույնով, լեզվով և խառնվածքով, տեխնոլոգիական զարգացմամբ, պահվածքով և ապրելակերպով: Բացի այդ, մարդիկ տարբերվում են իրենց սեռով, սակայն Xox մոլորակի բնակիչներին չի հաջողվում բացատրել այդ տարբերությունը: Ձեզ ուղարկում եք նոր առաքելության՝ սեռերի միջև այդ տարբերությունները նկարագրելու և բացատրելու նպատակով: Երբ դուք ժամանում եք Երկիր, տեղի է ունենում մեծ վթար: Սկզբում մարդիկ սարսափում և փախչում են: Հետո հայտնվում են գորշ զրահապատ և զայրացած արարածներ, որոնք սպառնում են ոչնչացնել ձեզ: Այն ամենը, ինչ պահպանվել է ձեր առաքելությունից, դա մի թերթ է որը ձեզ հաջողվել է վերջին պահին վերցնել ինչ-որ խանութից: Դուք ունեք թարգմանչական ծրագիր, բայց ժամանակ չունեք, քանի որ ընդամենը 20 րոպե ժամանակ է մնում մինչև Xox-ից առաջին հեռախոսազանգը: Անմիջապես սկսեք ուսումնասիրել թերթը և կազմեք կարճ ակնարկ մարդկանց և սեռի մասին: Հիշեք, որ ձեր ունեցած թերթը ձեր տեղեկատվության միակ աղբյուրն է»:

Քայլ 2. Յուրաքանչյուր խմբին հանձնարարված է պատրաստել զեկույց Xox մոլորակի համար, որը նկարագրում և բացատրում է մարդկանց միջև սեռական տարբերությունները: Զեկույցը պետք է արտացոլի այն, ինչ նրանք սովորել են թերթերից մարդկանց և նրանց սեռերի մասին: Թույլ տվեք մասնակիցներին մտորել և ինքնուրույն աշխատել խմբերով՝ քննարկելով հետևյալ հարցերը.

«Հաղորդում Xox մոլորակ».

- Որքա՞ն ներկայացուցիչ ունի մեկ սեռը և որքա՞ն մյուսը:
- Ինչպիսի՞ արտաքին ունեն նրանք և ինչպե՞ս են հագնված:
- Որո՞նք են նրանց դերերը հասարակությունում և ինչո՞վ են նրանք զբաղվում:
- Ի՞նչ տարբերություններ կարելի է նկատել թերթերում ներկայացվող նյութերում:

Քայլ 3. Դասընթացավարը նորից հավաքում է խումբը և խնդրում յուրաքանչյուր ենթախմբի լրագրողին կիսվել իրենց «զեկույցով Xox մոլորակի» և վարժության մասին իրենց պատկերացումներով: Դասընթացավարը դուրս է գրում մասնակիցների դիտարկումներն այն հերթականությամբ, ինչպես դրանք ներկայացված են գրատախտակի վրա: Դասընթացավարն ամփոփում է վարժությունը՝ ներկայացնելով մասնակիցների կողմից դիտարկված կարևոր երևույթները՝ հիմնական ուշադրությունը դարձնելով հետևյալ հարցերի վրա.

- Արդյո՞ք լրատվամիջոցներում ներկայացվածն ճշմարիտ է պատկերում իրականությունը:
- Ինչո՞ւ ենք մենք սովոր իրականության նման պատկերացմանը:

39 Աղբյուրը՝ Ignjatovic, T., Bogdanovic, M. (2004). O rodnoj ravnopravnosti u obrazovanju, I modul,[About Gender equality in the education, Module I] Priručnik za edukatore/ke, u okviru projekta: čkola za ravnopravnost: prvi korak ka uključivanju tematike rodne ravnopravnosti u redovne programe za učenike/ce i nastavnike/ce u Srbiji. Beograd: Centar za čenske studije, Fakultet političkih nauka (չհրապարակված նյութ):

Ուղղորդված քննարկման ընթացքում դասընթացավարը պետք է նաև մասնակիցների ուշադրությունը հրավիրի հետևյալի վրա.

- Թվերը. քանի՞ տղամարդ և կին է նշված թերթերում
- Էջերը. ո՞վքեր են նշված առաջին էջում և «լուրջ էջերում»
- Դերերը/ոլորտները. ի՞նչ դերերում են հիմնականում ներկայացվում տղամարդիկ և կանայք, կա՞ն արդյոք որևէ բացառություններ և ինչպիսի՞
- Բնութագրերը՝ խորը, համարձակ, զվարճալի, հաջողակ, գեղեցիկ և այլն,
- Սեռերի միջև հարաբերությունները, արտաքինը, հագուստը:

Լրատվամիջոցները մեզ ասում են. «Աշխարհն այսպիսին է»: Դրանք արտացոլում են մեր սոցիալական իրականությունը, բայց նաև իրականություն են կերտում՝ նախընտրելով կոնկրետ թեմաներ, իրադարձություններ, սեռերից որևէ մեկը, անհատական վերաբերմունքը, արժեքները: Լրատվամիջոցները ձևավորում և սնուցում են գենդերային ինքնությունների և դերերի ցանկալի պատկերացումները. կանանց փորձառությունները և նրանց մասնավոր կյանքի մասին թեմաները, ի տարբերություն հանրային թեմաների, որոնք տղամարդկանց մենաշնորհն են: «Այն բանից հետո, երբ գենդերային կարծրատիպերի մասին խոսակցությունները ծավալվում և ընդունվում են, բոլոր մնացած սոցիալական տարբերություններն ավելի հեշտությամբ են արտահայտվում և ընդունվում»[40]:

Մասնակիցներին բաժանվող նյութ «Առաքելությունը՝ երկիր մոլորակ»

Այս վարժությունը կատարելու համար պետք է պատկերացնել, որ դուք այլմոլորակային եք, ով ժամանել է Երկիր մոլորակ՝ մարդկանց միջև սեռային տարբերությունները նկարագրելու և բացատրելու առաջադրանքով: Դուք պետք է զեկուցեք Xox մոլորակին 15 րոպեների ընթացքում: Ձեր զեկույցի միակ աղբյուրը ձեր առջև դրված թերթն է:

40 Milivojeviž Snježana. (2004). “Women and the Media: Strategies of Exclusion”. *GENERO: Journal of Feminist Theory and Cultural Studies, Special Issue on Media,* հասանելի է հետևյալ հղումով՝ https://zenskestudie.edu.rs/en/publishing/genero-journal/124-genero-special-issue-on-media-2004

«Դուք Xox մոլորակից եք: Ձեզ ուղարկում են կենսական նշանակության առաքելության՝ Երկիր մոլորակ: Xox-ի նախորդ առաքելությունը պարզել է, որ Երկրի վրա ապրում են խելացի էակներ, ովքեր իրենց անվանում են «Մարդ», և նրանք բավականին տարբերվում են միմյանցից՝ հիմնականում արտաքին տեսքով և մաշկի գույնով, լեզվով և խառնվածքով, տեխնոլոգիական զարգացմամբ, պահվածքով և ապրելակերպով: Բացի այդ, մարդիկ տարբերվում են իրենց սեռով, սակայն Xox մոլորակի բնակիչներին չի հաջողվում բացատրել այդ տարբերությունը: Ձեզ ուղարկում են նոր առաքելության՝ սեռերի միջև այդ տարբերությունները նկարագրելու և բացատրելու նպատակով: Երբ դուք ժամանում եք Երկիր, տեղի է ունենում մեծ վթար: Սկզբում մարդիկ սարսափում և փախչում են: Հետո հայտնվում են գորշ զրահապատ և զայրացած արարածներ, որոնք սպառնում են ոչնչացնել ձեզ: Այն ամենը, ինչ պահպանվել է ձեր առաքելությունից, դա մի թերթ է որը ձեզ հաջողվել է վերջին պահին վերցնել ինչ-որ խանութից: Դուք ունեք թարգմանչական ծրագիր, բայց ժամանակ չունեք, քանի որ ընդամենը 20 րոպե ժամանակ է մնում մինչև Xox-ից առաջին հեռախոսազանգը: Անմիջապես սկսեք ուսումնասիրել թերթը և կազմեք կարճ ակնարկ մարդկանց և սեռի մասին: Հիշեք, որ ձեր ունեցած թերթը ձեր տեղեկատվության միակ աղբյուրն է»:

<u>Հաղորդում Xox մոլորակ.</u>

- Որքա՞ն ներկայացուցիչ ունի մեկ սեռը և որքա՞ն մյուսը:

1.

2.

3.

- Ինչպիսի՞ արտաքին ունեն նրանք և ինչպե՞ս են հագնված:

1.

2.

3.

- Որո՞նք են նրանց դերերը հասարակությունում և ինչո՞վ են նրանք զբաղվում:

1.

2.

3.

- Ի՞նչ տարբերություններ կարելի է նկատել թերթերում ներկայացվող նյութերում:

1.

2.

3.

Ներդիր 4. Կանանց նկատմամբ բռնության գենդերային հարաչափերը [41]

- Գենդերային հիմքով բռնությունը հիմնականում վերաբերում է կանանց և աղջիկներին: Կանայք և տղամարդիկ ենթարկվում են բռնության տարբեր համատեքստերում. մինչդեռ տղամարդիկ ավելի մեծ հավանականությամբ մահանում են զինված բախումների, անծանոթների կողմից բռնության և ինքնասպանության հետևանքով, կանայք ավելի մեծ հավանականությամբ մահանում են իրենց ծանոթ մարդկանց, այդ թվում՝ սեռական զուգընկերների ձեռքերով:

- Շատ հասարակություններում գերակշռող հայացքների համաձայն կանայք ստորադասվում են տղամարդկանց և վերջիններիս թույլ է տրվում բռնություն գործադրել կանանց վերահսկելու համար: Նման վերաբերմունքը ծառայում է կանանց նկատմամբ բռնությունը արդարացնելու, հանդուրժելու կամ ներելու համար:

- Բռնության ենթարկված կանայք աջակցման ծառայություններից օգտվելիս բախվում են որոշակի խոչընդոտների: Դա պայմանավորված է նրանով, որ խտրականության և հասարակության մեջ իրենց ցածր դիրքի պատճառով կանայք ավելի քիչ հնարավորություններ և տարբերակներ ունեն արդարադատության, խնամքի և աջակցության համար:

- Հաճախ իրավական համակարգերը և օրենքների ի կատար ածումն ապահովող իշխանությունները անտեսում են կանանց նկատմամբ բռնությունը կամ համարժեք չեն արձագանքում դրան:

Աղբյուրը՝ Մեջբերված ՄԱՀԲ-ից և ԿԸԲԵՑ-ից, 2014թ.

41 74 ՄԱՀԲ և ԿԸԲԵՑ (2014թ.). Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում գենդերային բռնության նկատմամբ առողջապահական համակարգի արձագանքների ամրապնդում: Ռեսուրսների փաթեթ, 19-րդ պարբերություն:

Կանանց սոցիալապես վերապահված դերի և կանանց և տղամարդկանց միջև սոցիալապես սահմանված հարաբերությունների պատճառով, կանայք գլոբալ առումով ունեն շատ ավելի քիչ սոցիալական ազդեցություն, ռեսուրսների հասանելիություն և կառավարում և մասնակցություն հասարակական կյանքին: Կանանց և տղամարդկանց միջև հենց այս անհավասար իշխանության համատեքստում է տեղի ունենում ԳՀԲ-ն: Ոչ պակաս կարևոր է ԳԲԸ անտեսանելիությունը՝ հասարակական կյանքում և հանրային քաղաքականության մշակման հարցում կանանց անհավասար ազդեցության պատճառով:

Ներդիր 5. Գենդերային հիմքով բռնություն եզրույթը

«Գենդերային հիմքով բռնություն» եզրույթն օգտագործվում է երեք հիմնական կետերը ներկայացնելու համար.

- Բռնության բնույթը
  - Արձագանքը բռնությանը
  - Պարտադիր կերպով ներառում է բռնության պատճառը և բռնությանը նպաստելը

Քանի որ ԳՀԲ-ի բնույթը բխում է գենդերային անհավասարությունից և հասարակությունում և ընտանիքում իշխանության հարաբերություններից, բռնությանը միակ արձագանքը հասարակության մեջ տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանության հարաբերությունների հաղթահարումն է և գենդերային հավասարության հասնելու համար քայլեր ձեռնարկելը: ԳՀԲ-ի պատճառներն են գենդերային խտրականությունն ու գենդերային անհավասարությունը, որոնք միևնույն ժամանակ նաև նպաստում են ԳՀԲ-ին:

Ովքե՞ր են ԳՀԲ-ի տուժողները

Գենդերային հիմքով բռնությունը տարածված է ամբողջ աշխարհում և տեղի է ունենում բոլոր պայմաններում: Այսինքն՝ ԳԲՀ-ն տեղի է ունենում խաղաղության և պատերազմի ժամանակ, նախապատերազմյան և հետպատերազմյան իրավիճակներում, բնական աղետների և հումանիտար ճգնաժամերի պայմաններում: Ուշագրավ է նաև միջավայրը՝ ԳԲՀ-ն տեղի է ունենում ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր տիրույթներում: Բռնության ենթարկված և բռնությունից տուժած, ինչպես նաև բռնություն գործադրող անձինք կարող են լինել աղքատ, հարուստ, լավ կրթված, մարգինալացված, քաղաքական գործիչներ, դատավորներ, ոստիկաններ և այլն:

Թեև գենդերային հիմքով բռնության կարող են ենթարկվել թե՛ կանայք, և թե՛ տղամարդիկ, ինչպես նաև աղջիկները և տղաները, **ԳՀԲ-ի տուժողների ճնշող մեծամասնությունը կանայք են: Կանայք և աղջիկները անհամաչափորեն ավելի շատ են ենթարկվում գենդերային հիմքով բռնության, քան տղամարդիկ և տղաները:** Կան նաև էական տարբերություններ կանանց և տղամարդկանց դեպքում ԳՀԲ-ի տեսակների, հաճախականության, փորձի և հետևանքների առումով:

Ո՞վ կարող է ԳՀԲ գործադրել

ԳՀԲ հիմնականում գործադրում են տղամարդիկ կանանց նկատմամբ՝ իրենց ենթարկելու, վերահսկելու կամ պատժելու նպատակով: Սակայն, կանայք նույնպես կարող են հանդես գալ որպես ԳՀԲ գործադրող:

Բռնություն գործադրող անձի սեռը կարևոր է երկու տեսանկյունից. 1. բռնության դրդապատճառի և 2. բռնության նկատմամբ հասարակության արձագանքման ձևի: ԳՀԲ-ն չճանաչելը, և դրա հետևանքով այն ընդունելն ու հանդուրժելը, հաճախ հանգեցնում է կրկնվող բռնության, որն ուղեկցվում է կին տուժողների երկրորդային վիկտիվիզացիայով՝ բռնության մասին ոստիկանությանը հաղորդելուց հետո: Երբ ԳՀԲ-ի տուժողը արական սեռի է, առավել հաճախ ոտնձգողը ծանոթ է կամ օտար անձ, սակայն երբ սեռական բռնության տուժողը իգական սեռի է, բռնարարը շատ հաճախ, այն անձն է, ում հետ կինը սերտ անձնական հարաբերություններ ունի, օրինակ՝ ներկա կամ նախկին սեռական զուգընկերը կամ ընտանիքի անդամը: Սովորաբար կնոջ նկատմամբ ԳՀԲ գործադրողը տղամարդ է: Նմանապես, շատ դեպքերում, երբ ԳՀԲ-ն գործադրվում է տղամարդու նկատմամբ, այն գործադրող անձը նույնպես տղամարդ է: Հազվադեպ դեպքերում դա կարող է կին լինել:

Գործողություն 4. Ի՞նչ է գենդերային հիմքով բռնությունը:

Նպատակը. Այս վարժության նպատակն է օգնել մասնակիցներին ավելի լավ ընկալել գենդերային բռնությունը:

Տևողությունը. 25 րոպե

Անհատական աշխատանք (5 րոպե), խմբային քննարկում (10 րոպե):

Օժանդակ նյութեր. մասնակիցներին բաժանվող նյութ «Ի՞նչ է գենդերային հիմքով բռնությունը», Ֆլիպչարտ գրատախտակ, մարկերներ

Նշումներ դասընթացավարների համար.

Դասընթացավարը բաժանում է «Ի՞նչ է է գենդերային հիմքով բռնությունը» նյութը մասնակիցներին և խնդրում նրանց ընտրել յուրաքանչյուր հարցին մեկ պատասխան:

Խմբային քննարկման ցուցումներ.

Այն բանից հետո, երբ մասնակիցները լրացնում են ավարտում են «Ի՞նչ է գենդերային հիմքով բռնությունը» բաժանված նյութը, դասընթացավարը խնդրում է մասնակիցներին ներկայացնել պատասխանները խմբին և գրել դրանք գրատախտակի վրա: Դասընթացավարը մեկնաբանում է բոլոր պատասխանները՝ տալով յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանի բացատրությունը հետևյալ ձևով.

Հարց 1, կետ Գ. Կանանց նկատմամբ բռնությունը կանանց և տղամարդկանց միջև անհավասար իշխանության հարաբերությունների և պատճառ և հետևանք է:

Հարց 2, կետ Գ. Կանայք անհամաչափորեն ավելի շատ են գենդերային բռնության ենթարկվում, թեև տղամարդիկ նույնպես կարող են ենթարկվել գենդերային բռնության:

Հարց 3, կետ Բ. Տուժողի՝ սեքսուալ բնույթի գործողությանը համաձայնության առկայությունը կամ բացակայությունը պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:

Հարց 4, կետ Բ. Հանցագործությանն արձագանքելիս մշակույթի, կրոնի, ավանդույթի կամ այսպես կոչված «պատվի» վրա հիմնված հանցագործության ցանկացած արդարացում անընդունելի է և չպետք է օգտագործվի որպես տուժողի լիարժեք պաշտպանությունը մերժելու հիմք:

Հարց 5, կետ Բ. Ուտեստի շուրջ վեճի պատճառով բարում ծեծկռտուքին մասնակցելը:

Մասնակիցներին բաժանվող նյութ «Ի՞նչ է գենդերային հիմքով բռնությունը»

1. Կանանց նկատմամբ բռնությունը ժամանակակից կյանքում ունի լայն տարածում, քանի որ.

Ա. Կանայք ավելի հաճախ են բողոքում բռնությունից, ուստի նրանք ավելի հաճախ են ենթարկվում բռնության:

Բ. Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում նկատվում է թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման, ինչպես նաև հոգեկան խանգարումներ ունեցող մարդկանց աճ:

Գ. Կանանց նկատմամբ բռնությունը կանանց և տղամարդկանց միջև անհավասար իշխանության հարաբերությունների և պատճառ և հետևանք է:

2. Առավել հաճախ գենդերային բռնության ենթարկվում են.

Ա. Կանայք և տղամարդիկ հավասարապես են ենթարկվում գենդերային բռնության:

Բ. Տղամարդիկ չեն ենթարկվում գենդերային բռնության:

Գ. Կանայք անհամաչափ ավելի շատ են գենդերային բռնության ենթարկվում, թեև տղամարդիկ նույնպես կարող են գենդերային բռնության ենթարկվել:

3. Որպեսզի կինը համարվի սեռական բռնության, այդ թվում՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների տուժող.

Ա. Պետք է լինեն ապացույցներ, որ տուժողին ստիպել են, և որ նա ֆիզիկապես դեմ է եղել սեքսուալ բնույթի գործողությանը:

Բ. Տուժողի՝ սեքսուալ բնույթի գործողությանը համաձայնության առկայությունը կամ բացակայությունը պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:

Գ. Պետք է ապացուցվի, որ տուժողը նախկինում կամավոր սեքսուալ բնույթի գործողություններ չի ունեցել հանցավոր(ներ)ի հետ:

4. Եթե բռնություն գործադրած անձը հայտարարում է, որ բռնությունը գործադրել է տուժողին պատժելու համար՝ մշակութային, կրոնական, սոցիալական կամ պատշաճ վարքի ավանդական նորմերն ու սովորույթները խախտելու համար, ապա.

Ա. Դեպքին ոստիկանության արձագանքման ժամանակ պետք է հաշվի առնել բռնություն գործադրած անձի (անձանց) մշակութային, կրոնական և ավանդական ինքնությունը:

Բ. Հանցագործությանն արձագանքելիս մշակույթի, կրոնի, ավանդույթի կամ այսպես կոչված «պատվի» վրա հիմնված հանցագործության ցանկացած արդարացում անընդունելի է և չպետք է օգտագործվի որպես տուժողի լիարժեք պաշտպանությունը մերժելու հիմք:

Գ. Հանցագործությանն արձագանքելիս մշակույթի, կրոնի, ավանդույթի կամ այսպես կոչված «պատվի» վրա հիմնված հանցագործության սկզբունքորեն անընդունելի է, սակայն որոշակի իրավիճակներում կարող է օգտագործվել բռնություն գործադրան անձի պատասխանատվությունը մեղմացնելու համար (օրինակ՝ գործի առնչությամբ անհրաժեշտ ոստիկանական ոչ բոլոր լծակների կիրառում):

5. Հետևյալներից ո՞րը գենդերային հիմքով բռնություն չէ.

Ա. Պարբերաբար SMS հաղորդագրություններ ուղարկել անցանկալի սեռական բովանդակությամբ:

Բ. Ուտեստի շուրջ վեճի պատճառով բարում ծեծկռտուքին մասնակցելը:

Գ. Սեքսուալ բնույթի բռնի գործողության տուժողից ցուցմունքներ հավաքելը յուրաքանչյուր իրավասու մարմնի առջև առանձին:

ԳՀԲ-ի սահմանման տարրերը[42]

ԳՀԲ-ի սահմանումը վերլուծելիս կարող ենք առանձնացնել հետևյալ չորս բաղադրիչները, որոնք էական նշանակություն ունեն ԳՀԲ-ի առկայության հարցում. 1. ցանկացած գործողություն (կամ անգործություն), 2. հակառակ տուժողի կամքին, 3. վնաս պատճառելը, և 4. հիմնված տղամարդկանց և կանանց սոցիալապես վերագրվող (գենդերային) տարբերությունների վրա:

1. Ցանկացած արարք նշանակում է գործողություն կամ անգործություն: Այն ամենը, ինչ կարելի է հորինել՝ վնաս և տառապանք պատճառելու մեկ այլ մարդու: Գործիքները անընդհատ զարգանում են: Առանձնահատուկ ուշադրության է արժանի ավանդական վնասակար գործելակերպը՝ հասարակության համար «անտեսանելիության» պատճառով:

2. Հակառակ տուժողի կամքին, ենթադրում է **համաձայնության հասկացության** ընկալում: Գնահատելիս, թե արդյոք արարքը հակառակ է անձի կամքին, պետք է օգտագործել համաձայնության հասկացությունը: Արդյոք անձն ազատ կամքով համաձայնություն է տվել, թե ոչ, և արդյո՞ք նա գիտակցել է, թե դա ինչ է նշանակում: Մասնավորապես, համաձայնությունը որոշումների կայացման գործընթաց է, որը կատարվում է առանց ուժի գործադրման, ուժի սպառնալիքի կամ հարկադրանք բացառող միջավայրում: Անհրաժեշտ է տարբերակել, թե ինչ է նշանակում իրական, ազատ կամքով համաձայնություն: Տեղեկացված համաձայնությունը համարվում է կամովին, երբ այն ձևավորվում է փաստերի, դրանց նշանակության և գործողության հետևանքների մասին լիարժեք իրազեկվածության և ըմբռնման հիման վրա: Ուստի, համաձայնող անձը պետք է մի կողմից տիրապետի որոշումներ կայացնելու համար կարևոր բոլոր փաստերին և կարողանա հասկանալ և գնահատել այն գործողության/գործունեության հետևանքները, որոնց նա համաձայն է: Ավելին, ազատ համարվելու համար վճռորոշ նշանակություն ունի այն, որ համաձայնություն հայտնող անձը կարողանա ցանկացած ժամանակ հրաժարվել որոշակի արարքին մասնակցելուց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական պրակտիկայի համաձայն, Մ.Ց.-ն ընդդեմ Բուլղարիայի[43] գործի առնչությամբ դատարանը եզրակացրեց, որ բռնաբարությունը անձի սեռական անձեռնմխելիության և ինքնորոշման խախտում է, և օրենսդրությունը բռնաբարության հանցագործության առանցքային տարրի հարցում պետք է կենտրոնանա ոչ թե ուժի կիրառման,

42 Ադապտացված Ս. Միրցևա (2020թ.) «Սեռը և հանցագործությունը» աշխատությունից: Անվտանգության ֆակուլտետ-Սկոպյե:

43 Մ.Ց.-ն ընդդեմ Բուլղարիայի թիվ 39272/98:

այլ համաձայնության բացակայության վրա. «Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որպիսին պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:»[44]:

Ընդհանուր առմամբ, համարվում է, որ երեխաները (մինչև 18 տարեկան) չեն կարող որոշակի վարքագծի համար տեղեկացված համաձայնություն տալ՝ արարքի հետևանքները հասկանալու անկարողության պատճառով, կամ նրանք չեն կարող հասկանալ, որ նրանք իրավունք ունեն և կարող են հրաժարվել որևէ կոնկրետ վարքագծից: Բացի այդ, ճանաչողական, զգայական կամ զարգացման խանգարումներ ունեցող անձինք կարող են ի վիճակի չլինել ազատ և կամավոր համաձայնություն տալ: Տեղեկացված համաձայնությունը բացակայում է, երբ որոշակի արարքի համար համաձայնությունը ձեռք է բերվում ուժի, ուժի սպառնալիքի, հարկադրանքի այլ ձևերի, խարդախության, շահարկման միջոցով:

3. Վնաս կամ տառապանք պատճառելը, մասնավորապես՝ սեռական բռնություն (անցանկալի սեռական բնույթի գործողություններ), ֆիզիկական բռնություն և մարմնական վնաս (ապտակ, հարված, խեղում, մահ), հոգեբանական/մտավոր/հուզական բռնություն (հետապնդում, հետամտում, գազլայթինգ, շահարկում, բանավոր վիրավորանք, հարկադրանք), տնտեսական բռնություն (ֆինանսական աղբյուրների, աշխատանքի շուկաների, կրթության հասանելիության սահմանափակում, օրինական ալիմենտ չվճարելը): Կարող են լինել կամ չլինել տեսանելի հետքեր, բայց միշտ առկա են տևական հետևանքներ և խորը ազդեցություն:

4. Տղամարդկանց և կանանց սոցիալապես վերագրվող (գենդերային) տարբերությունները ԳՀԲ-ի սահմանման հատկորոշող տարրն է, ըստ որի՝ սեռական հարաչափեր չունեցող բռնության դրսևորումը տարբերվում է ԳՀԲ-ի դեպքից: Բռնության ակտը որակվում է որպես ԳՀԲ, երբ այն արտացոլում կամ ամրապնդում է տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանության հարաբերությունները (օրինակ՝ երեխաների նկատմամբ սեռական բռնության ոչ բոլոր դեպքերը կարող են դիտվել որպես ԳՀԲ, քանի որ ինը տարեկան տղայի նկատմամբ սեռական բռնությունը ԳՀԲ-ի փոխարեն կարող է որակվել որպես մանկապղծություն):

Հետևյալը չի սահմանվում որպես ԳՀԲ և կապված չէ գենդերային հիմքով բռնության առկայության հետ.

1. ԳՀԲ-ի առաջացման վայրը և ժամանակը

ԳՀԲ-ի բազմաթիվ դրսևորումներ կարող են տեղի ունենալ մասնավոր կամ հասարակական տարածքներում, ցերեկը կամ գիշերը, խաղաղության և պատերազմի ընթացքում, նախապատերազմման և հետ պատերազմյան իրավիճակներում, բնական աղետների և հումանիտար ճգնաժամերի պայմաններում:

2. Բռնություն գործադրած անձի և տուժողի միջև հարաբերությունների տեսակը

Ծանոթի կամ օտար անձի կողմից դրսևորվող ԳՀԲ բնույթը կարող է տարբեր լինել: Օրինակ, բռնաբարությունը և սեռական ոտնձգությունները հաճախ կատարվում են տուժողին ծանոթ անձի կողմից: Սեռական զուգընկերոջ կողմից գործադրված բռնության դեպքերի պարագայում մ բռնություն գործադրած անձի և տուժողի հարաբերությունները հիմնարար նշանակություն ունեն, սակայն կարևոր չէ՝ արդյոք տուժողը իրավախախտի հետ ապրում է կամ ապրել է նույն բնակարանում, արդյոք նրանք երեխա ունեն, թե ոչ, և արդյոք նրանք նախկին կամ ներկա ամուսիններ կամ զուգընկերներ են:

3. Ի՞նչ է արել կամ չի արել ԳՀԲ-ից տուժողը

Բռնության պատասխանատվությունը միշտ պետք է դրվի իրվախախտի վրա: Բռնության համար ոչ մի արդարացում կամ հիմնավորում չկա:

44 Նույն տեղում:

4. Արդյո՞ք և ինչպես է արարքը քրեականացվում

Աշխարհի բազմաթիվ երկրների իրավահամակարգերում ԳՀԲ-ի տարբեր դրսևորումները տարբեր կերպ են քրեականացվում: Որոշ արարքներ ինքնին արդեն դիտվում են որպես առանձին հանցանքներ, մյուսները՝ քրեորեն պատժելի են առանձին հանցագործությունների օբյեկտիվ կողմի մաս հանդիսանալու պարագայում, մի մասն էլ դեռ քրեականացված չեն: Օրինակ, Մակեդոնիայի քրեական օրենսդրության մեջ հարկադիր ամլացումը չի դիտվում որպես ինքնուրույն հանցանք, սակայն հարկադիր ամլրացման համար պատասխանատվություն սահմանվում է երբ այն հանդիսանում է միջազգային հանցագործության դրսևորում, կամ հարկադիր ամուսնությունը ճանաչվում է միայն մինչև 16 տարեկան երեխաների միջև[45]: Ոստիկանության արձագանքի համար կոնկրետ վարքագծի քրեականացումը շատ կարևոր է, սակայն այն, թե ինչպես է քրեականացվում այդ վարքագիծը, չի ազդում ԳՀԲ-ի կոնկրետ ձևի առկայության և շրջանակի վրա: ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի համաձայն՝ «Այսօրվա դրությամբ աշխարհում ապրող 700 միլիոն կին ամուսնացել են մինչև իրենց 18 տարին լրանալը: Նրանցից 250 միլիոնը ամուսնացել են մինչև 15 տարեկան դառնալը: 2019 թվականին 20-24 տարեկան 5 կանանցից 1-ն ամուսնացել է մինչև 18 տարին լրանալը»[46]: Անկախ այն բանից, թե անչափահասի ամուսնությունը քրեականացված է, թե ոչ, ԳՀԲ-ի այս ձևը գոյություն ունի, և պետությունները պետք է քրեականացնեն ԳՀԲ-ի բոլոր ձևերը:

ԳՀԲ-ի պատճառները և նպաստող գործոնները

Համաշխարհային մակարդակով կանանց և աղջիկների նկատմամբ ԳՀԲ-ի պատճառները գենդերային անհավասարությունն ու գենդերային խտրականությունն են:

Այդուհանդերձ, կան գործոններ, որոնք կարող են նպաստել կանանց նկատմամբ ԳՀԲ-ին կամ բարձրացնել բռնության ենթարկվելու ռիսկը և ազդել ԳՀԲ-ի տեսակի և ծավալի վրա: Ստորև թվարկված գործոնները ԳՀԲ չեն առաջացնում, փոխարենը դրանք նպաստում են կամ կապված են ԳՀԲ-ի որոշ տեսակների հետ: Այս գործոնները Հեյզեի[47] կողմից բաժանվում են չորս խմբի, որը մշակել է «կանանց նկատմամբ բռնությունը հասկանալու էկոլոգիական շրջանակ»: Հայզեի էկոլոգիական մոդելը ծառայում է որպես համապարփակ շրջանակ՝ ՀԳԲ-ի ռիսկի գործոնների և դրանց փոխազդեցության ընկալման համար: Ռիսկի գործոնները բաժանված են չորս մակարդակի՝ անհատի, հարաբերությունների, համայնքի և կառուցվածքային: Այս գործոնները մեծացնում են որոշ անձանց կողմից ԳՀԲ-ի տուժող կամ այն գործադրող դառնալու հավանականությունը, ընդ որում տարբերվում են ըստ ԳՀԲ-ի տեսակի, բնակչության բնութագրերի և համատեքստի:

45 Միրցևա Ս. (2014թ.), «Երեխաների ամուսնությունը նախկին Հարավսլավիայի Հանրապետության Մակեդոնիայում», ՄԱԲՀ, հասանելի է հետևյալ հղումով՝ http://eeca.unfpa.org/publications/child-marriage-former-yugoslav-republic-macedonia-overview (կայքի վերջին այցելությունը 2020թ. ապրիլի 5-ին):

46 Միավորված ազգերի կազմակերպություն, Տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն, վիճակագրության բաժին (2020թ.): «Գենդերային հավասարության ձեռքբերում և բոլոր կանանց և աղջիկների իրավազորում», հասանելի է հետևյալ հղումով՝ https://unstats.un.org/sdgs/report/2020/goal-05/

47 Heise (1998), մեջբերումը ԱՀԿ-ի (2005թ.):

Աղյուսակ 2. Կանանց նկատմամբ ԳՀԲ-ին նպաստող գործոնները[48]

Էկոլոգիական շրջանակ	Նկարագրություն	Գործադրումը տղամարդկանց կողմից (ցանկը սպառիչ չէ)	Կանանց վիկտիմիզացիա (ցանկը սպառիչ չէ)
Անհատի մակարդակ	Անձնական պատմությունը և կենսաբանական գործոնները, որոնք մեծացնում են բռնության վտանգը	-Բռնություն նախկին ինտիմ հարաբերություններում -Ցածր տնտեսական կարգավիճակ և եկամուտ -Թմրամիջոցներ և ալկոհոլի չարաշահում -Վաղ տարիքում ենթարկվել է սեռական բռնության -Հոգեկան խանգարումներ -Վաղ տարիքում ականատես է եղել ծնողների միջև բռնության դեպքերի -Բռնության՝ որպես ընդունելի վարքի ընկալում	-Բռնություն նախկին ինտիմ հարաբերություններում -Ցածր եկամուտ և վատ տնտեսական վիճակ -Կրթության ցածր մակարդակ - Երեխա և վաղ ամուսնություն -Հոգեկան խանգարումներ -Վաղ տարիքում ականատես է եղել ծնողների միջև բռնության դեպքերի -Բռնության՝ որպես ընդունելի վարքի ընկալում
Հարաբերությունների մակարդակ	Հարաբերություններ սեռական զուգընկերների, ընտանիքի անդամների, ընկերների հետ, որոնք նպաստում են ԳՀԲ-ի առաջացմանը	-Բազմաթիվ զուգընկերներ -Վրեժխնդրություն (ընտանեկան պատիվ)	-Տուժողին մեղադրում
Համայնքի մակարդակ	ԳՀԲ-ի նկատմամբ հանդուրժողականություն	-Աղքատություն -ԳՀԲ-ի մասնակի ընդունում	- Աղքատություն -Ապաստարանների և աջակցման ծառայությունների բացակայություն -Կրթության անհասանելիություն -Ոստիկանական պաշտպանության բացակայություն -Տնտեսական կայունության բացակայություն
Հասարակական մակարդակ	Մշակութային նորմեր, որոնք ձևավորում են իշխանության անհավասար բաշխումը կանանց և տղամարդկանց միջև	-Ավանդական գենդերային նորմեր և բռնությանն աջակցող սոցիալական նորմեր -Տղամարդկանց բռնի նորմերի խթանում -Անպատժելիություն, ներառյալ իրավական դաշտի բացակայությունը	-Ավանդական գենդերային նորմեր և բռնությանն աջակցող սոցիալական նորմեր -Անպատժելիություն, ներառյալ իրավական դաշտի բացակայությունը -Արդարադատության անհասանելիություն -Կանանց բացակայություն քաղաքական և տնտեսական կյանքում

48 ՄԱՀԲ-ի և ԿԲԲԵՑ-ի նյութերից (2014թ.). Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում գենդերային բռնության նկատմամբ առողջապահական համակարգի արձագանքների ամրապնդում. Ռեսուրսների փաթեթ, էջ 30:

2.2. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Կանանց նկատմամբ բռնությունը և հատկապես կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը սկսվում է հարկադրական և վերահսկող պահվածքից և վերաբերմունքից, որը շատ դեպքերում հանգեցնում է ֆիզիկական բռնության: Բռնությամբ բնութագրվող ներկայիս կամ նախկին ինտիմ հարաբերություններում բռնարարները գործադրում են կամ սպառնում են բռնություն գործադրել՝ զուգընկերոջն իր ցանկությունները կատարել պարտադրելու համար[49]: Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը կարող է ներառել հոգեբանական, ֆիզիկական, սեռական և տնտեսական տարբեր տեսակի բռնություն: Ամենալայն սահմանումը տրված է Կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագրի (ԿՆԲՎՀ) 2-րդ հոդվածում՝ կանանց նկատմամբ բռնությունը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

- Ընտանիքում տեղի ունեցող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, այդ թվում՝ ծեծ, տնային պայմաններում իգական սեռի երեխաների նկատմամբ սեռական բռնություն, օժիտի հետ կապված բռնություն, ամուսնական բռնաբարություն, կանանց սեռական օրգանների խեղում և կանանց համար վնասակար այլ ավանդական գործելակերպ, ոչ ամուսնական բռնություն և շահագործման հետ կապված բռնություն:
- Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, *որը տեղի է ունենում ընդհանուր հասարակության ներքո*, ներառյալ բռնաբարությունը, սեռական բռնությունը, սեռական հետապնդումը և ահաբեկումը աշխատավայրում, կրթական հաստատություններում և այլուր, կանանց թրաֆիքինգը և մարմնավաճառության հարկադրանքը:
- *Պետության կողմից կիրառվող կամ ներվող Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն*, որտեղ էլ որ այն տեղի ունենա»[50]:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. Անմիջական և անօրինական ֆիզիկական ուժի կիրառում, որը հանգեցնում է մարմնական վնասվածքների, ցավի կամ առողջական վիճակի վատթարացման: Այն ներառում է նաև բռնություն, որը հանգեցնում է տուժողի մահվան: Բռնության դրսևորումներից են ապտակը, հարվածը, հրելը, բռունցքով հարվածելը, ծեծը, քերծվածքներ հասցնելը, խեղդելը, կծելը, թափահարելը, թքելը, այրելը, մարմնի որևէ մասի ոլորելը, անցանկալի նյութ ընդունել պարտադրելը51: Ֆիզիկական բռնություն է նաև կնոջը ամենօրյա օգտագործման առարկաներով հարվածելը կամ դանակահարելը, զենքի, օրինակ՝ դանակի կամ ատրճանակի օգտագործումը, ինչպես նաև կանանց՝ օգնության դիմելու թույլ չտալը՝ ուժի կիրառմամբ:

ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ սեռական գործողությունների բոլոր այն ձևերն են, որոնք կատարվում են մեկ այլ անձի նկատմամբ՝ առանց վերջինիս կամավոր տրված համաձայնության, և որոնք դիտավորությամբ են կատարվում[52] որևէ անձի կողմից՝ անկախ տուժողի հետ վերջինիս փոխհարաբերություններից և ցանկացած միջավայրում: Սեռական բռնության դրսևորումները ներառում են մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով վագինալ, անալ կամ օրալ թափանցում սեռական բնույթի չհամաձայնեցված գործողություններ կատարելու համար, սեռական բնույթի այլ չհամաձայնեցված գործողություններ, ներառյալ սեռական հետապնդում, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգ, հղիության հարկադրում, ամլացման հարկադրում, հղիության արհեստական դադարեցման հարկադրում, ամուսնության հարկադրում, կանանց սեռական օրգանների խեղում:

---

49 Վալկեր, Լ. (1979թ.) «Կանանց փառքի սրահ», խմբ. Դ. Կոլորադո:

50 ՄԻԵԴ |Կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագիր, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/ViolenceAgainstWomen.aspx

51 https://www.coursehero.com/file/p3jiurh/Individual-level-factors-are-biologicalpersonal-factors-which-influence-the/

52 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, Հոդված 36:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ/հուզական բռնություն. դիտավորյալ ցանկացած վարքագիծ, որը լրջորեն խաթարում է մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով[53]: Հոգեբանական բռնության դրսևորումները ներառում են կնոջ կամ մերձավորի նկատմամբ բռնության և վնասի սպառնալիք, ահաբեկում, նվաստացում, պարտադրված մեկուսացում, հաղորդակցության սահմանափակում, հետապնդում, հետամտում, անցանկալի ուշադրություն, մեկնաբանություններ, սեռական և սպառնալից բնույթի ժեստեր կամ նամակներ, զգացմունքային արժեք ներկայացնող իրերի ոչնչացում, բռնություն գործադրող սեռական զուգընկերոջ կողմից երեխաների օգտագործում՝ երեխայի վրա հարձակվելով կնոջը վերահսկելու կամ վիրավորելու համար, երեխային մղվող սպառնալիքներ կամ երեխային ստիպել դիտել իրենց մոր նկատմամբ բռնությունը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ/ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ. ֆինանսների և ռեսուրսների նկատմամբ կանանց հասանելիության մերժում կամ/և վերահսկողություն: Տնտեսական բռնության դրսևորումները ներառում են կնոջն աշխատել արգելելը, եկամուտների վերահսկողությունը, կնոջը ընտանիքում ֆինանսական որոշումներ կայացնել թույլ չտալը, գումարից, սննդից, հագուստից զրկելը:

Ավանդական վնասակար գործելակերպը վերաբերում է այսպես կոչված «պատվի» վրա հիմնված արարքներին, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների խեղումը, սպանությունները հանուն պատվի, ամուսնության հարկադրումը: Ուշադրության է արժանի այն, որ թեև կանանց նկատմամբ ԳՀԲ-ն կարող է ունենալ ցանկացած միջավայրում, սակայն առավել հաճախ կանայք բռնության են ենթարկվում ընտանեկան/ինտիմ հարաբերություններում:

53 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, Հոդված 33:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ԿՆԲ-Ի ՁԵՎԵՐԸ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 33-ից 39-րդ հոդվածները սահմանում են բռնության այն ձևերը, որոնք պետք է համարվեն հանցանք:

- Հոգեբանական բռնություն՝ ցանկացած դիտավորյալ վարքագիծ, որը հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խախտում է մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը (Հոդված 33): «Դիտավորյալ» բառի մեկնաբանությունը վերապահվել է ներպետական իրավունքին, սակայն դիտավորյալ վարքագծին ներկայացվող պահանջը վերաբերում է իրավախախտման բոլոր տարրերին: [54]:
- **Հետամտումը** տուժողի անմիջական և անուղղակի վերահսկման և վերահսկողության ցանկացած ձև է՝ ֆիզիկական շփմամբ կամ առանց դրա: Այն սովորաբար տեղի է ունենում հարաբերությունների ավարտից հետո, բայց նաև կարող է առաջանալ, քանի դեռ հարաբերությունները շարունակվում են: Այն ներառում է սպառնալիքներ և ոտնձգություններ ինչպես առցանց, այնպես էլ անցանց, անձին հետևելը, լրտեսելը, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար (Հոդված 34):
- **Ֆիզիկական բռնությունը** վերաբերում է մարմնական վնասներին, որոնք առաջացել են անմիջական և անօրինական ֆիզիկական ուժի կիրառման պատճառով: Այն ներառում է նաև բռնություն, որը հանգեցնում է տուժողի մահվան (Հոդված 35):
- **Սեռական բռնությունը**, ներառյալ բռնաբարությունը, ներառում է բոլոր այն ձևերը, որոնք կատարվում են մեկ այլ անձի նկատմամբ՝ առանց նրա ազատորեն տրված համաձայնության և որոնք կատարվում են դիտավորությամբ: Այն ներառում է մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով վագինալ, անալ կամ օրալ ճանապարհով ներթափանցելու միջոցով սեռական բնույթի չհամաձայնեցված գործողություններ կատարելը, սեռական բնույթի չհամաձայնեցված այլ գործողություններ կատարելը, անձին, առանց նրա համաձայնության, երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելուն կամ ենթարկվելուն ստիպելը: Կոնվեցիայի դրույթները տարածվում են նաև ամուսիններից մեկի հանդեպ սեռական բնույթի անցանկալի արարքների նկատմամբ (Հոդված 36):
- **Հարկադիր ամուսնություն՝** ամուսնանալուն հարկադրելու համար տուժողի նկատմամբ կիրառվող ֆիզիկական և հոգեբանական ներազդեցություն: Ամուսնանալ հարկադրելու նպատակով անձին քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք հործելուն դիտավորությամբ գայթակղելը նույնպես կարգավորվում է Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի ներքո (Հոդված 37):
- **Կանանց սեռական օրգանների խեղում՝** ոչ բուժական նպատակներով կանանց արտաքին սեռական օրգանների մասնակի կամ ամբողջական անդամահատում, կարում կամ հեռացում կատարելը, օժանդակելը, հարկադրելը, կամ դրդելը (Հոդված 38).
- **Հղիության արհեստական դադարեցում կամ ամլացում կատարելուն հարկադրելը՝** կնոջ հղիության արհեստական դադարեցում՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության (Հոդված 39).
- **Սեռական հետապնդում՝** սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելով: Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 40-րդ հոդվածը մասնակից պետություններին հնարավորություն է ընձեռում կիրառել քրեաիրավական կամ այլ սանկցիաներ (օրինակ՝ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ):

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով Կողմերից պահանջվում է ապահովել, որ բռնության վերը նշված ձևերի դրսևորում հանդիսացող դիտավորյալ արարքները քրեականացվեն:[55] Ավելին, կանանց նկատմամբ բռնություն կազմող հանցանքների առնչությամբ կոնվենցիան պահանջում է նաև նախատեսել հատուկ կանոնակարգումներ՝ քրեական իրավունքի մի շարք ինստիտուտների կիրառելիությունը նաև դրանց նկատմամբ ապահովելու համար : Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն. «Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն սույն Կոնվենցիայի 33, 34, 35, 36, 37, 38(ա) և 39-րդ հոդվածներին համապատասխան նախատեսվող հանցանքների կատարմանը դիտավորությամբ օժանդակելը կամ դրդելը»:

54 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, 179 պարբերություն:

55 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, 155-րդ պարբերություն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Միջազգային չափանիշների համաձայն՝ ընտանեկան բռնությունը ներառում է **ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության** դրսևորումները ընտանիքի կամ ընտանեկան միավորի անդամների միջև՝ անկախ կենսաբանական կամ օրինական ընտանեկան կապերից: Տնտեսական բռնությունը կարող է կապված լինել հոգեբանական բռնության հետ: Ընտանեկան բռնությունը ներառում է հիմնականում **երկու տեսակի** բռնություն. ներկա կամ **նախկին ամուսինների կամ զուգընկերների միջև սեռական զուգընկերոջ բռնություն** և **միջսերնդային բռնություն, որը սովորաբար տեղի է ունենում ծնողների և երեխաների միջև**: Ընտանեկան բռնությունն ունի գենդերային առումով չեզոք սահմանում և ընդգրկում է երկու սեռերի տուժողներին ու կատարողներին: [56]:

Ընտանեկան բռնությունը որպես սեռական զուգընկերոջ բռնություն ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնություն ներկա կամ նախկին ամուսինների, ինչպես նաև ներկա կամ նախկին զուգընկերների միջև: Այն բռնության մի ձև է, որից կանայք անհամաչափորեն ավելի շատ են տուժում և, հետևաբար, ունի հստակ գենդերային ուղղվածություն: Թեև կարող է թվալ, որ բռնության գործադրման վայրի համատեքստը սահմանափակվում է «ընտանեկան» եզրույթով, նախագիծը մշակողներն ընդունել են, որ բռնությունը հաճախ շարունակվում է հարաբերություններն ավարտվելուց հետո, հետևաբար եկել են համաձայնության, որ տուժողի և կատարողի համակեցությունը պարտադիր չէ [57]:

Միջսերնդային ընտանեկան բռնությունը ներառում է անձի կողմից իր երեխայի կամ ծնողի (տարեցների նկատմամբ բռնություն) նկատմամբ, կամ ընտանիքի՝ տարբեր սերունդների պատկանող ցանկացած այլ երկու կամ ավելի անդամների միջև ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բնույթի բռնությունը, : Տուժողի և կատարողի համակեցությունը կրկին պարտադիր չէ[58]:

Գործողություն 5. Առասպելներն ու փաստերը

Նպատակը. Ընդհանուր նպատակն է ԿՆԲ-ի վերաբերյալ մտածածին պատկերացումների բացահայտումն ու հերքունը:

Տևողությունը. 40 րոպե

Անցկացման ձևը. Անհատական աշխատանք (10 րոպե), խմբային քննարկում (15 րոպե), դասընթացավարի կողմից ամփոփում և մեկնաբանություններ (15 րոպե):

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ «Ճի՞շտ է թե սխալ», ֆլիպչարթ գրատախտակ, մարկերներ:

Ցուցումներ Դասընթացավարը բաժանում է «Ճի՞շտ է թե սխալ» 1-ին նյութը մասնակիցներին և խնդրում է նրանց նշել, արդյոք պնդումները ճիշտ են, թե սխալ: Մասնակիցներին արագ քննարկում են մտածածին պատկերացումները (նշելով, թե արդյոք պնդումն իրենց կարծիքով հիմնված է փաստերի վրա, արդյո՞ք նման բան տեղ է գտում Հայաստանի իրական կյանքում կամ որևէ այլ բան, որը նրանք կցանկանային նշել այդ կապակցությամբ): Դասընթացավարը ներկայացնում է յուրաքանչյուր պնդման համար մանրամասն բացատրություն: Ավելի շատ ժամանակ տրամադրեք ճիշտ պատասխանների քան մտացածին պատկերացումների քննարկմանը, հակառակ դեպքում դրանք կարող են խորանալ:

Այս վարժության նպատակն է մասնակիցներին ցույց տալ, թե ինչպես ավանդական գործելակերպի և համոզմունքների միջավայրում ընտանեկան բռնության մեջ իրականում մեղադրվում է տուժողը, բռնությունն արդարացվում է, իսկ այն գործադրող անձը՝ պաշտպանվում, թեև պետք է տեղի ունենար հակառակը. Բռնարարը պետք է պատասխանատվության ենթարկվեր: Բռնության համար արդարացում չկա, և տուժողը պետք է պաշտպանված լինի:

Խմբային քնարկումից հետո բոլոր մասնակիցներին բաժանվում է 2-րդ նյութը:

Մասնակիցներին բաժանվող նյութ «Ճի՞շտ է թե սխալ»-1

56 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, 41-րդ և 42-րդ պարբերություններ:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում:

1. Տղամարդիկ ընտանեկան բռնության են ենթարկվում նույնքան հաճախ, որքան՝ կանայք:

Ճիշտ է **Սխալ է**

2. Ընտանեկան բռնության գլխավոր պատճառներից մեկն ալկոհոլից և թմրամիջոցներից կախվածությունն է:

Ճիշտ է **Սխալ է**

3. Միայն որոշակի կենսագրություն ունեցող կանայք են ընտանեկան բռնության ենթարկվում:

Ճիշտ է **Սխալ է**

4. Կանանց վիրավորելը, անվանարկելը և նվաստացնելը բռնություն չէ:

Ճիշտ է **Սխալ է**

5. Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարած անձինք սովորաբար հոգեկան խանգարումներ ունեն:

Ճիշտ է **Սխալ է**

6. Ամուսնական բռնաբարություն չի կարող լինել:

Ճիշտ է **Սխալ է**

7. Գենդերային հիմքով բռնությունը դեռևս մեծամասամբ չի հաղորդվում:

Ճիշտ է **Սխալ է**

8. Ամուսնական զույգերին խորհրդատվությունը, ընտանեկան թերապիան կամ մեդիացիան ընտանեկան բռնության խնդրի լուծում են:

Ճիշտ է **Սխալ է**

9. Գենդերային հիմքով բռնությունից անհամաչափ շատ տուժում են կանայք և աղջիկները:

Ճիշտ է **Սխալ է**

10. Բռնություն գործադրող տղամարդիկ բռնություն են գործադրում, որովհետև նրանք չեն կարողանում կառավարել իրենց զայրույթը և հիասթափությունը:

Ճիշտ է **Սխալ է**

11. Սեփական բռնի պահվածքի համար պատասխանատու է ոչ միայն տղամարդը:

Ճիշտ է **Սխալ է**

12. Հավատացյալ մարդիկ ընտանեկան բռնություն չեն գործադրում և բռնության չեն ենթարկվում:

Ճիշտ է **Սխալ է**

13. Լավագույն լուծումը ընտանիքը պահպանելն է:

Ճիշտ է **Սխալ է**

14. Բռնության ենթարկված կանանց օգնելու իմաստ չկա. նրանք միևնույն է կվերադառնան իրենց զուգընկերների մոտ:

Ճիշտ է **Սխալ է**

15. Ընտանեկան բռնությունն ազդեցություն չի ունենում ընտանիքում ապրող երեխաների վրա, այդ խնդիրը վերաբերում է միայն մեծերին:

Ճիշտ է **Սխալ է**

16. Բռնություն գործադրած տղամարդիկ հաճախ լավ հայրեր են և ամուսնալուծության դեպքում պետք է իրականացնեն իրենց երեխաների համատեղ խնամքը:

Ճիշտ է **Սխալ է**

Մասնակիցներին բաժանվող նյութ

«Ճի՞շտ է թե սխալ»-1

1. Տղամարդիկ ընտանեկան բռնության են ենթարկվում նույնքան հաճախ, որքան՝ կանայք::

Սխալ է. Հետազոտությունները փաստում են, որ ընտանեկան բռնության դեպքերի տուժողների 95%-ը կանայք են: Տղամարդկանց նկատմամբ բռնության մասին հաղորդագրությունները հաճախ չափազանցված են, քանի որ նման դեպքերում իրական բռնարարը մեղադրում է իր զուգընկերոջը բռնություն գործադրելու մեջ՝ պատասխանատվությունից խուսափելու կամ այն նվազեցնելու համար: Բացի այդ, տղամարդիկ, որոնք իսկապես ենթարկվում են ընտանեկան բռնության, հաճախ ավելի շատ հնարավորություն ունեն բռնությունից խուսափելու համար, քան կանայք:

2. Ընտանեկան բռնության գլխավոր պատճառներից մեկն ալկոհոլից և թմրամիջոցներից կախվածությունն է:

Սխալ է: Չնայած ալկոհոլից և թմրամիջոցներից կախվածությունը հաճախ կապում են ընտանեկան բռնության հետ՝ բռնության պատճառները դրանք չեն: Բռնություն գործադրող շատ անձինք ալկոհոլ կամ թմրամիջոցներ չեն օգտագործում, իսկ նրանք, ովքեր օգտագործում են, սովորաբար անծանոթ մարդկանց, գործընկերների կամ ղեկավարների նկատմամբ ագրեսիա չեն դրսևորում, և բռնության են ենթարկում իրենց զուգընկերներին: Բռնություն գործադրող անձինք հաճախ հարբած վիճակում գտնվելը ներկայացնում են որպես արդարացում կամ հիմնավորում՝ իրենց վարքագծի համար պատասխանատվությունից խուսափելու համար: Կարևոր է գիտակցել, որ ընտանեկան բռնությունն ու ալկոհոլից (թմրանյութերից) կախվածությունը տարբեր խնդիրներ են, և դրանցից յուրաքանչյուրին պետք է առանձին անդրադառնալ:

3. Միայն որոշակի կենսագրություն ունեցող կանայք են ընտանեկան բռնության ենթարկվում:

Սխալ է: Չնայած նրան, որ կանանց որոշակի խմբեր հատկապես խոցելի են բռնության որոշակի դրսևորումների առումով կամ որոշակի խոչընդոտների են բախվում արդարադատության մատչելիությունից օգտվելիս՝ ընտանեկան բռնության դեպքում որևէ հիմքով խտրականություն չի դրվում: Դրան կարող են ենթարկվել կանայք՝ հասարակության բոլոր մակարդակներից՝ հարուստ, թե աղքատ, կրթություն ունեցող (չունեցող)՝ անկախ ներգաղթյալի կարգավիճակից, կրոնից, սեռական կողմնորոշումից և էթնիկ պատկանելությունից:

4. Կանանց վիրավորելը, անվանարկելը և նվաստացնելը բռնություն չէ:

Սխալ է: Ոտնձգության ենթարկված անձանց նկատմամբ ամենատարածված, սակայն վերջիններիս և մի շարք մասնագետների կողմից ամենաքիչ ճանաչելի ձևերը տուժող կանանց նկատմամբ վիրավորանքներն ու նվաստացումներն են: Այն հանդիսանում է հոգեբանական բռնություն և հաճախ ենթադրում է կնոջ վարքի նկատմամբ վերահսկողություն, անմիջական միջավայրից մեկուսացում (ընտանիքի անդամների, ընկերների, գործընկերների, հարևանների, սիրելիների հետ, ովքեր կարող են օգնել տուժողին) և միջոցներից զրկում: Բռնության նման դրսևորումները հաճախ ուղեկցվում են ֆիզիկական և սեռական բռնությամբ: Նման բռնարարքները շատ դժվար է հայտնաբերել, քանի որ տուժողն ի սկզբանե դրանք չի համարում բռնության դրսևորում հանդիսացող արարք կամ թեթև է վերաբերվում դրանց:

5. Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարած անձինք սովորաբար հոգեկան խանգարումներ ունեն:

Սխալ է: Սեքսուալ բնույթի բռնի գործողությունը բռնարարի այն ընկալման արտացոլումն է, որ նա կարող և անպատիժ կմնա կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրելու համար: Ինչպես վկայում են տարբեր հետազոտություններ, նրանցից ոմանք կարող են ծանր հոգեկան խանգարումներ ունենալ, սակայն սեռական բռնությունը հոգեկան հիվանդություն չի կարելի համարել: Յուրաքանչյուր բռնարարի որպես հիվանդ որակավորելը չափազանց հեշտ լուծում է, որը բռնարարին արդարանալու գերազանց հնարավորություն է ընձեռում, պնդելու, որ ինքը չի կարող կառավարել իր ցանկությունները (կամ) գիտակցել, թե ինչ է անում:

6. Ամուսնական բռնաբարություն չի կարող լինել:

Սխալ է: Սեռական կյանքի ազատությունը տարածվում է ամբողջ կյանքի վրա: Յուրաքանչյուր կին իրավունք ունի որոշելու, թե երբ է զբաղվելու սեռական հարաբերությամբ: Ամուսնական զույգի կարգավիճակը ենթադրում է երկու զուգընկերների սեռական ցանկությունների և կարիքների նկատմամբ հավասար հարգանք: Դա նշանակում է, որ ամուսնական զույգում սեռական հարաբերություն ունենալը պետք է ցանկալի լինի երկու զուգընկերներին: Այլապես դա բռնաբարություն է: Սեռական նվաստացումը նույնպես կարող է կանանց ահաբեկման և տղամարդուն ենթարկման ձև հանդիսանալ: Որոշ բռնարար տղամարդիկ ֆիզիկական բռնությունը համատեղում են կանանց նկատմամբ սեռական նվաստացման և ահաբեկման հետ:

7. Գենդերային հիմքով բռնությունը դեռևս մեծամասամբ չի հաղորդվում:

Ճիշտ է. բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ գենդերային հիմքով բռնությունը մեծամասամբ չի հաղորդվում մի շարք պատճառներով: Նման պատճառներ են, օրինակ՝ տուժողի կողմից իր հանդեպ կատարվածը որպես իրավախախտում չդիտելը (եթե, օրինակ, որևէ կոնկրետ տարածքի, ժամանակաշրջանի մշակութային նորմերը տղամարդկանց և կանանց նկատմամբ տարբեր վերաբերմունք են ենթադրում և տուժողը ենթարկվում է կանանց նկատմամբ բռնությունը, տղամարդուն կնոջ ենթակա լինելը արդարացնող մշակութային նորմերին), կամ ամոթը, շրջապատի կողմից դատապարտման վախը, կատարվածի համար ինքն իրեն մեղադրելը, հասարակական կառույցներին չվստահելը: Ավելին, այդ կառույցների գործելակերպը կարող է արդարացնել իրավախախտին՝ մեղադրելով տուժողին կամ մեղմ պատժելով իրավախախտին: Բռնության մասին չհաղորդելու հարցում մեծ դեր է խաղում սոցիալական միջավայրը, քանի որ այն հանդուրժում է ԿՆԲ-ն որպես ընդունելի վարք:

8. Ամուսնական զույգերի խորհրդատվությունը, ընտանեկան թերապիան կամ մեդիացիան ընտանեկան բռնության խնդրի լուծում են:

Սխալ է: Ամուսնական զույգերի խորհրդատվությունը կամ ընտանեկան թերապիան իրենց հարաբերություններում բռնությունը դադարեցնել ձգտող զույգերին խորհուրդ չի տրվում՝բռնության հիմքում ընկած իշխանության և վերահսկողության հատուկ դինամիկայի պատճառով: Լավագույն փորձը ցույց է տալիս, որ բռնություն գործադրելու հակված անձինք պետք է մասնակցեն մասնագիտացված ծրագրերի, որտեղ նրանք կսովորեն միջանձնային հարաբերություններում ոչ բռնի վարքագիծ դրսևորել, իսկ տուժողներին պետք է աջակցեն մասնագիտացված կենտրոնները և ընտանեկան բռնության հարցերով փաստաբանները: Բաժանման դեպքերում միջնորդություն կամ ընտանեկան թերապիա խորհուրդ չի տրվում՝ զույգին միմյանց հետ շփվել «սովորեցնելու» և (կամ) երեխաների խնամակալության կամ ամուսնալուծության վերաբերյալ փոխհանձայնության գալու համար:

9. Գենդերային հիմքով բռնությունից անհամաչափ շատ տուժում են կանայք և աղջիկները: Ճիշտ է.

Ամբողջ աշխարհում բազմաթիվ հետազոտություններ հաստատում են, որ գենդերային հիմքով բռնության տուժողների գերակշիռ մասը կանայք են, իսկ բռնություն գործադրողները հիմնականում տղամարդիկ են: Այն դերերը, որոնք հայրիշխանական հասարակությունները տալիս են տղամարդկանց և կանանց, հաստատում և խրախուսում են կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը՝ որպես հայրիշխանական հարաբերությունների պահպանման միջոց: Հետազոտությունները նաև ցույց են տալիս, որ կանանց՝ գենդերային բռնության տուժողների գերակշռող մասը կազմելու հիմնական պատճառը տղամարդկանց նկատմամբ նրանց ստորադասությունն և ենթակաությունն է:

10. Բռնություն գործադրող տղամարդիկ բռնություն են գործադրում, որովհետև նրանք չեն կարողանում կառավարել իրենց զայրույթը և հիասթափությունը:

Ընտանեկան բռնությունը գործադրվում է դիտավորությամբ, և բռնություն գործադրողները «անկառավարելի վիճակում» չեն գտնվում: Նրանց կողմից գործադրվող բռնությունը հատուկ ուղղված է որոշ մարդկանց, կատարվում է որոշակի պահերի, որոշակի վայրերում: Բռնություն գործադրող անձինք հիմնականում իրենց ղեկավարների կամ պատահական անցորդների վրա չեն հարձակվում՝ անկախ իրենց զայրույթի աստիճանից: Բռնություն գործադրող անձինք նաև հետևում են իրենց՝ բռնություն պարունակող վարքագծի ներքին կանոններին: Նրանք հաճախ բռնություն են գործադրում իրենց զուգընկերների նկատմամբ, երբ միայնակ են, կամ քայլեր են ձեռնարկում բռնության ակնհայտ ապացույցներ չթողնելու ուղղությամբ: Բռնություն գործադրող անձինք նաև զգուշությամբ ընտրում են իրենց մարտավարությունը. ոմանք ոչնչացնում են գույքը կամ բռնություն գործադրելու սպառնալիքներ հնչեցնում, մյուսները սպառնում են երեխաներին: Ուսումնասիրությունները, փաստորեն, ցույց են տալիս, որ բռնություն գործադրող որոշ անձինք իրենց ագրեսիվության աճին զուգահեռ ավելի վերահսկելի ու հանգիստ են դառնում:

11. Սեփական բռնի պահվածքի համար պատասխանատու է ոչ միայն տղամարդը:

Սխալ է: Տղամարդիկ ամբողջովին պատասխանատու են իրենց բռնի պահվածքի համար: Սակայն նրանք փորձում են մեղադրել իրենց զուգընկերներին, որպեսզի վերջիններս չլքեն իրենց կամ չհայտնեն իրենց բռնարարքների մասին:

12. Հավատացյալ մարդիկ ընտանեկան բռնություն չեն գործադրում և բռնության չեն ենթարկվում:

Սխալ է: Բռնություն գործադրող անձինք կարող են հավատացյալ լինել, այդ թվում՝ հոգևորականներ և քահանաներ: Տուժողներից շատերը խորը կրոնական համոզմունքներ ունեն, որոնք կարող են նրանց դրդել ընտանիքը ցանկացած գնով պահպանելուն:

13. Լավագույն լուծումը ընտանիքը պահպանելն է:

Սխալ է: Տուժողի անվտանգությունն ու կարիքներն առաջնային են և պետք է նախորդեն բոլոր այլ նկատառումների: Տուժողին ստիպելը, որ վերադառնա բռնություն պարունակող հարաբերություններին, կամ այդ նպատակով նրա վրա ազդեցություն գործելը կարող է լուրջ հետևանքներ ունենալ, այդ թվում՝ մահ: Եթե բռնություն գործադրած անձն իր գործողությունների համար պատասխանատվության չի ենթարկվել, կամ եթե բռնության հիմքում ընկած պատճառներին անդրադարձ չի կատարվել, ապա բռնությունը, ամենայն հավանականությամբ, շարունակվելու է:

14. Բռնության ենթարկված կանանց օգնելու իմաստ չկա. նրանք միևնույն է կվերադառնան իրենց զուգընկերների մոտ:

Սխալ է: Կանայք, ովքեր շարունակակբար ենթարկվում են բռնության, հաճախ կանգնում են երկընտրանքի առջև՝ ի վիճակի չլինելով որոշել՝ մնալ թե հեռանալ: Նրանք կարող են հեռանալ՝ փորձելով ինքնուրույն գոյատևել, կամ վերադառնալ՝ ակնկալելով, որ ամեն ինչ կարող է փոխվել: Այս աստիճանական գործընթացը տուժողներից ոմանց թույլ է տալիս ի վերջո լուծել իրենց երկընտրանքները և կոտրել բռնության շրջանը, մինչդեռ մյուսների համար դա կարող է ավելի դժվար լինել:

15. Ընտանեկան բռնությունն ազդեցություն չի ունենում ընտանիքում ապրող երեխաների վրա, այդ խնդիրը վերաբերում է միայն մեծերին:

Սխալ է: Ընտանեկան բռնությունը զգալի ազդեցություն է ունենում տանը բնակվող երեխաների վրա: Բռնություն պարունակող ընտանիքներում մեծացած երեխաներն ընտանեկան բռնության հետևանքով լուրջ հուզական և հոգեբանական խնդիրներ են ունենում: Որպես հաղթահարման ռազմավարություն՝ որոշ երեխաներ կարող են հակված լինել բռնություն գործադրած անձի հետ համամիտ լինելուն և տուժողի նկատմամբ հարգանքը կորցնելուն, ինչը կարող է հանգեցնել բռնության միջսերնդային (տրանսգեներացիոն) ցիկլի:

16. Բռնություն գործադրած տղամարդիկ հաճախ լավ հայրեր են և ամուսնալուծության դեպքում պետք է իրականացնեն իրենց երեխաների համատեղ խնամքը:

Սխալ է: Ուսումնասիրությունները պարզել են, որ իրենց կանանց նկատմամբ բռնություն գործադրող տղամարդիկ 70% դեպքերում բռնություն են գործադրում նաև իրենց երեխաների նկատմամբ: Նույնիսկ այն դեպքում, երբ երեխաներն ուղղակի բռնության չեն ենթարկվում, նրանք խորը ապրումներ են ունենում ականատես լինելով, թե ինչպես է ծնողներից մեկը բռնություն գործադրում մյուսի նկատմամբ: Բռնություն գործադրած անձինք ամուսնալուծվելիս հաճախ իրենց երեխաների նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում՝ զուգընկերների հետ կապը պահպանելու և այդ ճանապարհով նրանց վերահսկելու համար:

Ադապտացված է հետևյալ աղբյուրներից՝ Լոգառ, Ռ. և Մարգանովա-Վարգովա (2015թ.), էջ 42, Բալդրի, Ա.Ց. (2016թ.), Եվրոպայի խորհուրդ (2016) [59]

59 Լոգառ, Ռ. և Մարգանովա-Վարգովա (2015թ.). «Բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմագործակալական համագործակցություն», վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ, Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ: Բալդրի. Ա. Ց. (2016թ.) «Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ», Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ: «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար», Ուսումնական ռեսուրս իրավապահ և արդարադատության ծառայողների վերապատրաստման համար, Ռումինիայի ոստիկանության գլխավոր տեսչություն», Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ:

Ընտանեկան բռնության ընկալում որպես կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն

Ընտանեկան բռնության հիմքում հայրիշխանական մշակութային նորմերն են, որոնք բացահայտ կամ անուղղակի սահմանված են բավականին հետևողական համոզմունքների համակարգում: Այն տարածված է ամենուր՝ տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ բռնության բացահայտ օրինականացնող հասարակություններից մինչև ընտանեկան բռնության տարբեր ձևերի մանրամասն քրեականացում և պատժամիջոցների ու միջամտությունների լայն շրջանակի առկայություն նախատեսող համակարգերում: Ընտանեկան բռնությունը գոյատևում է այնտեղ, որտեղ կա կանանց՝ տղամարդկանց բացարձակ ենթակայության ակնկալիք, բայց նաև այն միջավայրում, որտեղ գերակշռում է այն գաղափարը, որ սեռերը հավասար են կամ պետք է հավասար լինեն[60]:

Ցանկացած հասարակության պատմական զարգացման ընթացքում ընտանիքում կանանց դիրքը տղամարդու նկատմամբ կախված է նրանից, թե արդյոք կանանց նկատմամբ բռնությունը դիտվում է որպես սոցիալապես ընդունելի և թույլատրված վարքագիծ, թե համարվում է արգելված և պատժելի արարք[61]:

Ընտանեկան բռնության երևույթի վերլուծությունը հանգեցնում է ընդհանուր եզրակացության, որ իրավախախտման այս տեսակը մեկուսացված կամ ավարտված արարք չի հանդիսանում՝ ոչ իր դրսևորումներով, ոչ էլ ինտենսիվությամբ և դինամիկայով: Ընդհակառակը, կրկնությունը ընտանեկան բռնության էական տարր է, որն ուղեկցվում է բռնության ինտենսիվության, դինամիկայի և դրսևորումների աճով:

Ընտանեկան բռնության մասին այն կարծրատիպը, որ դա յուրաքանչյուր ընտանիքում առկա ոչ էական, փոքր դրվակ է, ուղղակիորեն հակասում է բազմաթիվ վիկտիմոլոգիական հետազոտությունների արդյունքներին, որոնք վկայում են այն մասին, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանց նկատմամբ բռնության դրսևորումը շատ ավելի խիստ է, քան որևէ այլ տեսակի բռնության ենթարկված անձանց[62]: Ընտանեկան բռնության պատճառները պարզելու նպատակով տեղի են ունենում են բազմաթիվ քննարկումներ և իրականացվում բազմաթիվ ուսումնասիրություններ: Դրանց հեղինակները հիմնականում ընդունում են, որ չի կարելի առանձնացվել ընտանեկան բռնության զուտ մեկ պատճառը: Նրանք նաև մատնանշում են, որ ընտանեկան բռնությունը կարելի է պատշաճ ձևով ընկալել միայն այն դեպքում, եթե այն դիտվում է մարդու շահագործման ավելի լայն համատեքստում: Ընտանեկան բռնությունը տղամարդկանց կողմից կանանց վերահսկման միայն մեկ դրսևորումն է:

Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ ընտանեկան բռնության պատճառը ոչ թեստղամարդիկ են, այլ տղամարդկանց սոցիալապես կառուցակարգված վարքագիծը: Անհրաժեշտ է հասկանալ, որ ընտանեկան բռնությունը հաճախ տեղի է ունենում այն պատճառով որ բռնարարը կարծում է, որ իրեն թույլ է տրված բռնություն գործադրել կանանց նկատմամբ: Այս մոտեցումը կապված է կանանց կարգավիճակի վերաբերյալ կարծրատիպերի հետ:

Տղամարդիկ նույնպես կարող են ենթարկվել ընտանեկան բռնության: Սակայն, ըստ Ջոնսոնի[63], կարևոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- կանանց նկատմամբ բռնությունն իր դրսևորման եղանակներով և դաժանությամբ շատ ավելի բազմատեսակ և խորն է քան տղամարդկանց նկատմամբ բռնությունը,
- այն դեպքերը, երբ կանայք բռնություն են գործադրում տղամարդկանց նկատմամբ, հիմնականում պայմանավորված են ինքնապաշտպանությամբ կամ զուգընկերներից երկուսի մոտ էլ բռնության դրսևորման հակումների պարագայում կնոջ՝ ընդհարումից խուսափելու մարտավարության դրսևորում են, և

60 Միրցևա, Գրաչևա, Քյոնիգ: (2014թ.):

61 Միրցևա, 2010թ.:

62 Համմեր և Ստանկո, 1985թ:.

63 Ջոնսոն (2006թ.):

- Երկու սեռերի միջև սոցիալական և ֆիզիկական ուժի տարբերությունները հիմնականում այնպիսին են, որ կանանց համար բռնությունը շատ ավելի սարսափելի է, քան տղամարդկանց:

Փորձառական ուսումնասիրության արդյունքները[64] ցույց են տվել, որ երբ կանայք բռնություն են գործադրում զուգընկերոջ նկատմամբ, այն իր բնույթով, հաճախականությամբ, սաստկությամբ, նպատակով, ֆիզիկական և հոգեբանական հետևանքներով տարբերվում է տղամարդկանց կողմից կին զուգընկերների նկատմամբ գործադրվող բռնությունից: Այդ ուսումնասիրությունների արդյունքները հաստատում են, որ սովորաբար տղամարդկանց նկատմամբ բռնություն գործադրող կանայք երկարատև բռնության են ենթարկվել տղամարդկանց կողմից, ուստի նրանց կողմից ագրեսիայի դիմելն ինքնապաշտպանության ձև է: Բացի այդ, կանանց կողմից տղամարդկանց նկատմամբ ընտանեկան բռնությունում ամբողջությամբ բացակայում են սեռական բռնության տարրերը, իսկ ֆիզիկական ծանր հետևանքները հազվադեպ են: Ավելին, որպես բռնության տարր, կանայք չեն ձգտում տղամարդու վարքագծի վերահսկողության, ահաբեկման և ուժային այլ եղանակների կիրառման:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության տեղեկատվական կենտրոնը իրականացնում է հանցագործությունների և վարչական իրավախախտումների մասին վիճակագրական տվյալների հաշվառում: ՀՀ ՆԳՆ **ոստիկանության տեղեկատվական կենտրոնում չկան սեռական և տարիքային հիմքերով ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տարանջատված տվյալներ: Ստորև ներկայացված են ընտանեկան բռնության դեպքերի մասին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից տրամադրած վիճակագրական տվյալները:**



2017 թվականին ոստիկանության կողմից ընդհանուր առմամբ արձանագրվել է ընտանեկան բռնության 793 դեպք: 740 դեպք կապված է ֆիզիկական բռնության, իսկ 53 դեպք՝ այլ տեսակի բռնության հետ: Սեռական բռնության հետ կապված դեպքեր չեն արձանագրվել: Առկա ապացույցների հիման վրա 597 դեպքերում քրեական գործ չի հարուցվել, ինչը նշանակում է, որ քրեական գործ հարուցվել է միայն 196 դեպքերում:

2018 թվականին ոստիկանության կողմից ընդհանուր առմամբ արձանագրվել է ընտանեկան բռնության 707 դեպք: 707 դեպքից 673-ը կապված է ֆիզիկական, 33-ը՝ հոգեբանական և մեկը՝ տնտեսական բռնության կապված է: Առկա ապացույցների հիման վրա 548 դեպքում քրեական գործ

64 Դոբաշ և Դոբաշ, 2004թ., էջ 343:

չի հարուցվել:

2019 թվականին ոստիկանությունում ընդհանուր առմամբ արձանագրվել է ընտանեկան բռնության 485 դեպք: 485 դեպքից 469-ը կապված է ֆիզիկական, 14-ը՝ հոգեբանական, 2-ը՝ տնտեսական բռնության հետ: Առկա ապացույցների հիման վրա 359 դեպքում քրեական գործ չի հարուցվել:

2020 թվականին ոստիկանությունում ընդհանուր առմամբ արձանագրվել է ընտանեկան բռնության 540 դեպք: 550 դեպքից 514-ը կապված է ֆիզիկական, 26-ը՝ հոգեբանական, բռնության հետ: Առկա ապացույցների հիման վրա 390 դեպքում քրեական գործ չի հարուցվել: Քրեական գործ հարուցվել է միայն 150 դեպքում: Դա կազմում է ոստիկանության կողմից արձանագրված դեպքերի մոտ 28%-ը:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության վիճակագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի ճնշող մեծամասնությունը կապված են ամուսնու կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնության հետ: Ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տարանջատված տվյալների բացակայությունը բնավ թույլ չի տալիս կազմել դրանց սոցիալ-հոգեբանական պատկերը կամ բացահայտել օրինաչափությունները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ

Ստորև ներկայացված է բռնության շրջապտույտը, որը կարող է օգնել ոստիկանության աշխատակիցներին հասկանալ ընտանեկան բռնության դինամիկան տուժողին օգնելիս:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ շրջապտույտը ներկայացնում է ընտանեկան բռնության դինամիկայի զարգացման ընդամենը մեկ օրինակ, որը միակ ճանապարհը չէ: Ընտանեկան բռնության ոչ յուրաքանչյուր դեպքն է անցնում այդ շրջապտույտով կամ դրա որևէ փուլով:

«Բռնության շրջապտույտի» մոդելը մշակվել է ամերիկացի հոգեբան Լենոր Է-ի կողմից 1979 թվականին: Այն նկարագրում է բռնի հարաբերությունների ընթացքը երեք փուլով կամ շրջապտույտներով՝ լարվածության առաջացման փուլ, պայթյունի փուլ և մեղրամսի փուլ:

Բռնության շրջապտույտի յուրաքանչյուր փուլի տևողությունը և զարգացումը յուրաքանչյուր տուժողի համար տարբեր է՝ կախված, օրինակ.

- հարաբերությունների բնույթից և տևողությունից,
- տուժողի և բռնարարի սոցիալական ծագումից և տնտեսական պայմաններից,
- բռնության ձևը, որին ենթարկվել է տուժողը,
- արդյոք ներգրավված են երեխաներ կամ այլ մարդիկ,
- առկա՞ է արդյոք թմրանյութերի և ալկոհոլի չարաշահում,
- տուժողին ցուցաբերվող օգնություն և աջակցություն,
- տուժողի մեկուսացված լինելու աստիճանը:

Գծապատկեր 1. Բռնության շրջապտույտ՝ բռնություն պարունակող և կրկնվող մեխանիզմ

Ընտանեկան բռնության շրջապտույտի փուլերը հետևյալն են. բռնարարի տրամադրության կտրուկ փոփոխություններից և քննադատություններից սկսած (լարվածության ձևավորման փուլ) մինչև ազատությունից զրկումը (պայթյունի փուլ՝ բռնության գործադրման որևէ ձև, ներառյալ ծեծ, բռնաբարություն, հայհոյանք, զենքի օգտագործում և այլն) և ներողություն խնդրելն ու քնքշություն դրսևորելը (մեղրամսի կամ զղջման փուլ՝ խոստումներ, որ նման բան այլևս չի կրկնվի, նվերներ, սերի խոստովանում):

Բռնության շրջապտույտի փուլերն կարող են պարբերաբար հաջորդել միմյանց այնքան ժամանկ, քանի դեռ կինը դուրս չի եկել շրջապտույտից կամ տուժողին արտաքին օգնություն կամ աջակցություն չի ցուցաբերվել[65]: Որոշ փուլեր կարող են համընկնել, իսկ որոշները կարող են կրկնվել օրեր, ամիսներ կամ տարիներ անց: Բռնություն պարունակող հարաբերությունները կարող են նաև ընդհանրապես չընթանալ այդ շրջապտույտով: Հարկ է հիշել, որ ոչ բոլոր տուժողներն են բռնության ենթարկվում նույն կերպ: Նրանց մի մասը չի անցնում ֆիզիկական բռնության փուլով և օգնության համար չի դիմում ոստիկանություն կամ դատական համակարգ: Այնուամենայնիվ, տնտեսական և հուզական բռնությունները նույնպես լուրջ և անթուլատրելի են և համարվում են հանցագործություն, որը պետք է քննվի:

Կարևոր է հասկանալ այն, որ տուժողները սովորաբար դիմում են ոստիկանության կամ սոցիալական ծառայություններ շրջապտույտի գագաթնակետին՝ ֆիզիկական կամ սեռական հարձակման ենթարկվելուց հետո: Նրանք օգնության են դիմում, երբ զգում են և իրականում վտանգի մեջ են, և անհապաղ օգնության կարիք ունեն: Բռնության շրջանի ընթացքում բռնարար զուգընկերը կարող է սիրալիր, ներողամիտ և հանգիստ վարքագծից կտրուկ անցնել լարվածության դրսևորումների, որոնք վերածվում են ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության: Բռնարարը իր արարքների համար մեղքը բարդում է կնոջ վրա, որն իր խոսքով ստիպել է նրան դիմել այդ քայլերին: Նա կարող է սպառնալ, որ երեխաներին կտանի իր հետ, ֆիզիկական ուժ կգործադրի կամ նույնիսկ կսպանի կնոջը, եթե վերջինս այդ մասին պատմի ինչ-որ մեկին կամ իր կամքին հակառակ որևէ բան անի: Նման դեպքերում հավանական է, որ տուժողը վերադառնա բռնարարի մոտ կամ հետ վերցնի ոստիկանությանը տված հաղորդումը, որի արդյունքում տուժողն ավելի խոցելի վիճակում է հայտնվում: Տուժողը նաև կարող է ընդհանրապես հերքել բռնարարքի տեղի ունենալը կամ նվազեցնել այն: Այդ փուլում ռիսկերի գնահատումը և հետագա ռիսկերի կառավարումն ու տուժողների անվտանգության ծրագրումը ծայրահեղ կարևոր են տուժողի կարիքները հասկանալու համար: Տուժողները կարող են ընտրություն կատարել՝ իրենց նկատմամբ գործադրված բռնությանը

65 Վալկեր, Լ. (1979թ.) «Կանանց փառքի սրահ», խմբ. Դ. Կոլորադո:

վերջ տալու իրատեսական և կոնկրետ տարբերակների միջոցով: Եթե այդ տարբերակները բացակայում են կամ չեն աջակցվում, ապա շրջապտույտը կոտրելը բարդ խնդիր է[66]:

Բռնության դինամիկան սեռական զուգընկերների հարաբերություններում

Ընտանեկան բռնության հիմքում կանանց նկատմամբ տղամարդկանց «իշխանության» և «վերահսկողության» վարքագիծն է: Դա ենթադրում է, որ որոշ տղամարդիկ դեռևս հավատարիմ են խիստ կնատյաց հայացքների և իրենց զուգընկերոջը չեն համարում անկախ անձնավորություն, ով կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել և մասնավոր կյանք ունենալ: Նման տղամարդիկ լինում են ցանկացած տարիքի, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և ազգության, չեն ընդունում, որ իրենց զուգընկերները կարող են լքել իրենց, ունենալ ընկերներ կամ արձագանքել քննադատությանը, ինքնուրույն ընտրություն կատարել և դուրս գալ սոցիալական նորմերով նախանշված կնոջ դերից: Բռնությունը ուժի և վերահսկողության մեխանիզմ է՝ կանանց իրենց տեղում և «դերում» պահելու և սեքսիստական վերաբերմունքը կարգավորող սոցիալական նորմերին համապատասխանելու համար: Սպառնալիքի և բռնության ենթարկվելիս կանայք սարսափում են բռնության թեժացման կամ նույնիսկ հնարավոր սպանության պատկերացումից, բայց սովորաբար խուսափում և ամաչում են այդ մասին խոսել: Նրանք կարող են նաև նվազեցնել և արդարացնել բռնությունը, չցանկանալով ներքուստ խոստովանել, որ իրենց զուգընկերը բռնի է, քանի որ դա կազդի նաև իրենց ինքնագնահատականի վրա[67]: Այս տեսությունը պատկերված է Գծապատկեր 2-ում ներկայացված հայտնի «Իշխանության և վերահսկողության անիվում»[68]:

ԱՄՆ-ի Մինեսոտա նահանգի Ընտանեկան բռնության միջամտության ծրագրերի[69] ներքո մշակվել է շրջանակ՝ իրավախախտների կողմից իրենց հարաբերություններում հսկողություն ձեռք բերելու կամ այն պահպանելու նպատակով իշխանության դրսևորումներն ու մեխանիզմները ընկալելու համար: Անիվը բաղկացած է ութ դաշտերից, որոնք ամփոփում են անհատի կողմից՝ սեռական զուգընկերոջը վերահսկելու կամ նրա նկատմամբ գերիշխող դիրք ունենալու համար դրսևորվող վարքագծի օրինաչափությունները. դիտավորությամբ վախեցնելը, հոգեբանական բռնություն, մեկուսացում, բռնությանը թեթև վերաբերվելը, բռնության փաստի մերժումը և մեղքը տուժողի վրա բարդելը, երեխաներին օգտագործելը, տղամարդու գերիշխող դիրքից օգտվելը, տնտեսական բռնություն գործադրելը, հարկադրելը և սպառնալիքները: Մոդելը օգնում է բացատրել զուգընկերների միջև բռնության դինամիկան:

Այս գործողությունները ծառայում են «իշխանություն և վերահսկողություն» ձեռք բերելուն, ուստի անիվի կենտրոնում այդ բառերն են:

66 Բալդրի. Ա. Ց.: Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ, 2016թ.:

67 Նույն տեղում:

68 Ընտանեկան բռնության միջամտության ծրագրեր, Դուլութ, Մինեսոտա, հասանելի է հետևյալ հղումով՝ www.theduluthmodel.org:

69 Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս www.theduluthmodel.org/training/wheels.html

Գծապատկեր 2. «Իշխանության և վերահսկողության անիվ»[70]



70 https://www.theduluthmodel.org/wp-content/uploads/2017/03/PowerandControl.pdf

2.3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ

Ընտանեկան բռնությունը կարող է կործանարար հետևանքներ ունենալ տուժողների համար: Կանայք, որպես բռնության տուժողներ, ոչ միշտ են հանդես գալիս բռնարարքին պասիվ ենթարկվողի դերում, այլ նաև գործընթացի ակտիվ մասնակից են՝ մանևրելով խնդրահարույց իրավիճակում՝ փորձելով կանխել, դիմակայել և հաղթահարել իրենց նկատմամբ կիրառվող բռնությունը:

Ընտանեկան բռնության ենթարկվելու արդյունքում տուժողները և նրանց երեխաները կարող են բախվել կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքների: Ընտանեկան բռնությունը հանգեցնում է ֆիզիկական և հոգեբանական խնիրների, ինչպես նաև գույքի կորստի և կյանքի որակի վատթարացման: Ընտանեկան բռնության ազդեցության ծանրությունը կախված է անձնական (ներքին, օրինակ՝ բռնության նախկին պատմություն, դիմադրողունակության պակաս, ցածր ինքնագնահատական, հաղթահարման ռազմավարություններ) և սոցիալական (արտաքին, օրինակ՝ երեխաների առկայություն, օգնություն, սոցիալական մեկուսացում, բռնարարի վտանգավորության աստիճան, ծառայությունների հասանելիություն) հանգամանքներից: Այդ գործոններից կախված՝ տուժողի կողմից բռնության շրջանը կոտրելը դժվարանում կամ ավելի հեշտ է դառնում:

Անկախ արձագանքման և աջակցության գործընթացում ընտանեկան բռնության դեպքերով զբաղվող մասնագետների գործառույթներից, նրանք բոլորը պետք է լավատեղյակ լինեն գենդերային հիմքով բռնության, այդ թվում՝ կանանց և նրանց երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության տարբեր ձևերի հեևանքների մասին, որպեսզի խուսափեն ոչ արհեստավարժ և տուժողի համար վնասակար գործելակերպից[71]:

Ոստիկանության աշխատակիցների, քրեական արդարադատության մասնագետների, բժշկական և հոգեբանական անձնակազմի մոտ գենդերային նրբանկատության բացակայությունը և ընտանեկան բռնության մասին անբավարար գիտելիքները կարող են հանգեցնել բռնության ենթարկված անձանց երկրորդային վիկտիմիզացիայի: Որոշ դեպքերում տուժողների կրկնակի վիկտիմիզացիան կարող է լինել ոչ դիտավորյալ և տեղի ունենալ տուժողի՝ իրավապահ մարմինների կամ այլ պաշտոնատար անձանց հետ շփման ընթացքում:

Ֆիզիկական ազդեցությունը և հետևանքները. Բռնության հետևանքով առաջացած ֆիզիկական վնասի տեսակներն են, մասնավորապես՝ կապտուկները և քերծվածքները, կտրվածքները և պլոկվածքները. որովայնի կամ կրծքավանդակի վնասվածքները, կոտրվածքները, ջարդված ոսկորները կամ ատամները, տեսողությանը և լսողությանը հասցված վնասը; գլխի վնասվածքները, խեղդամահ անելու փորձը, մեջքի և պարանոցի վնասվածքները[72]: Հետևանքները կապված չեն միայն հասցված հարվածների կամ հարձակումների հետ: Շատ ավելի տարածված են «ֆունկցիոնալ խանգարումների» կամ «սթրեսային պայմանների» հետ կապված հիվանդությունները: Դրանց թվին են պատկանում գրգռված աղիքի/ստամոքսաղիքային համախտանիշները, ֆիբրոմիալգիան, քրոնիկ տարբեր ցավային համախտանիշները և ասթմայի սրացումը: Բռնությունը կարող է հանգեցնել նաև լուրջ և մշտական ֆիզիկական արատների: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից մի շարք երկրներում իրականացված ուսումնասիրության արդյունքում[73] պարզվել է, որ բռնության ենթարկված կանայք բռնության չենթարկված կա-

71 Ա.Ց. Բալցրի, 2016թ. Բուլղարայի ոստիկանության մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ:

72 Հայզե Լ, Գարսիա Մորենո Ց. Բռնություն սեռական զուգընկերների կողմից (2002թ.): Համաշխարհային զեկույց բռնության և առողջության վերաբերյալ, ԺՆև, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն:

73 Գարսիա Մորենո Ց. և այլք (2005թ.) ԱՀԿ-ի մի շարք երկրներում իրականացված ուսումնասիրություն կանանց առողջության և կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ. Տարածվածության, առողջական արդյունքների և կանանց արձագանքների վերաբերյալ նախնական արդյունքներ), ԺՆև, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն:

նանց համեմատ կրկնակի հաճախ են հայտնում իրենց վատառողջ լինելու մասին և տառապում ֆիզիկական և հոգեկան խնդիրներով՝ անկախ նրանից, թե երբ է տեղի ունեցել բռնությունը:

Ընտանեկան բռնությունը կարող է ունենալ նաև այնպիսի անշրջելի հետևանքներ, որոնք կարճաժամկետում կամ երկարաժամկետում հանգեցնում են տուժողի մահվան:

Հոգեբանական ազդեցությունը և հետևանքները. Հոգեբանական վնասը կարող է կործանարար հետևանքներ ունենալ կնոջ հոգեվիճակի վրա: Հոգեբանորեն, տուժողների վրա հետևանքները նման են առևանգման տուժողների վրա հետևանքներին: Շատ տարածված են նաև Հետտրավմատիկ սթրեսի համախտանիշի[74] և Ստոկհոլմի համախտանիշի[75] ախտանիշները, որոնց հոգեբանական հետևանքները իրենց լրջությամբ կարող են չգիջել ֆիզիկական հետևանքներին: Ընտանեկան բռնությունը կարող է հանգեցնել մասնավորապես՝ դեպրեսիայի, տագնապի, ուտելու խանգարումների, ցածր ինքնագնահատականի, խուճապահարության, ալկոհոլիզմի և թմրամոլության: Բռնությունը կարող է հանգեցնել ինքնասպանության փորձերի, փսիխոտիկ վարքի դրվագների և հոգեկան հիվանդությունից դանդաղ վերականգնման[76]: Սեռական բռնության տուժողները կարող են կրել երկարաժամկետ հոգեբանական հետևանքները, այդ թվում՝ անբացատրելի անհանգստություն, ինքնավստահության կորուստ և անպաշտպանության զգացում: Բռնության հոգեբանական հետևանքների վերացումը հոգեբանական մասնագետների պարտականությունն է: Սակայն իրավապահ մարմինների և դատական համակարգի աշխատակիցները նույնպես պետք է պատկերացնեն բռնության հոգեբանական և հուզական հետևանքները, որպեսզի ավելի արդյունավետ զբաղվեն նման գործերով:

Տնտեսական ազդեցությունը և հետևանքները. Բռնարարից ֆինանսական կախյալություն ունեցող տուժողները, են հայտնվել անապահով կամ անօթևան իրավիճակում: Երբեմն բռնության ենթարկված կանայք կորցնում են իրենց աշխատանքը, քանի որ բռնարարը նրանց հետապնդում է աշխատավայրում, կամ գործատուն ձգտում է խուսափել խնդիրներից: Ընտանեկան բռնությունը կարող է նվազեցնել կանանց աշխատունակությունը, ավելացնել հիվանդությամբ պայմանավորված աշխատանքից բացակայության դեպքերը կամ բերել գործազրկության՝ վատթարացնելով տուժողի կենսամակարդակը: Ընտանեկան բռնությունը կարող է հանգեցնել նաև գույքի ոչնչացման կամ կորստի[77]:

Սոցիալական ազդեցությունը և հետևանքները. Ընտանեկան բռնությունը զգալի հետևանքներ է թողնում նաև տուժողի անմիջական սոցիալական շրջապատի վրա: Միջամտելու կամ տուժողին բռնարարի հետ հարաբերությունները խզել օգնելու դեպքում տուժողի ընտանիքը, ընկերները և ծառայակիցները ռիսկի են դիմում, քանի որ իրավախախտը կարող է վրեժխնդիր լինել և ահաբեկել նրանց: Ընտանեկան բռնության մեկ այլ հետևանքը տուժողի կենսամակարդակի վատթարացումն է, ինչը հանգեցնում է վերջինիս ընդհանուր բավարարվածության և երջանկության մակարդակի անկման: Ընտանեկան բռնության դեպքում վախն ու անհանգստությունը տիրում են առօրյա կյանքի բոլոր ոլորտներում և չափազանց դժվար է լինում լուծել աշխատանքային խնդիրները, կարգավորել հարաբերությունները, շփվել մարդկանց հետ, խնամել երեխաներին և այլն:

Եվ վերջապես խնդիրներ են առաջանում նաև համայնքի համար՝ հանրային կայնքում տուժողի ներդրման նվազման և հասարակության կրած ծախսերի պատճառով (քննարկվում է ստորև), ինչպես նաև բռնության ընդունելի լինելու պատճառով: Եթե իրավախախը պատասխանատվության

---

74 Հետտրավմատիկ սթրեսի համախտանիշը (ՀՏՍՀ) հոգեկան խանգարում է, որը կարող է առաջանալ այն մարդկանց մոտ, ովքեր ենթարկվել կամ ականատես են եղել այնպիսի ծանր հետևանքներ ունեցող իրադարձության՝ բնական աղետի, լուրջ վթարի, ահաբեկչական ակտի, պատերազմի/մարտական գործողությունների կամ բռնաբարության, կամ որոնց սպառնացել են կյանքից զրկել, սեռական բռնության ենթարկել կամ ծանր վնասվածք հասցնել, հասանելի է հետևյալ հղումով. https://www.psychiatry.org/patients-families/ptsd/what-is-ptsd

75 Ստոկհոլմի համախտանիշը վերաբերում է մի խումբ հոգեբանական համախտանիշների, որոնք առաջանում են գերության կամ պատանդի կարգավիճակում գտնվող որոշ մարդկանց մոտ: Ստոկհոլմի համախտանիշով մարդիկ ունեն ՀՏՍՀ-ին նման համախտանիշներ, հասանելի է հետևյալ հղումով՝ http://medical-dictionary.thefreedictionary.com/

76 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և պայքար. Ուսումնական ռեսուրս իրավապահ և արդարադատության աշխատակիցների վերապատրաստման համար, 2016թ., էջ 17:

77 Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և պայքար, 2016թ. հունվար, էջ 18:

չի ենթարկվում համայնքի կողմից, դա նշանակում է, որ նրա վարքագիծը հանդուրժվում է, ինչը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի ավելի լուրջ բռնության[78]: Հասարակության կողմից բռնության հանդուրժումը կարող է նաև ստիպել ընտանեկան բռնության տուժողին խուսափել բռնության մասին հաղորդելուց և օգնություն խնդրելուց:

Ընտանեկան բռնության ազդեցությունը երեխաների վրա

Երեխաների վրա ընտանեկան բռնության ազդեցությունը վերաբերում է նրանց վրա ազդող բռնության տարբեր ձևերին: Բռնության առավել տարածված ձևը տղամարդու (սովորաբար երեխայի/երեխաների հոր) կողմից զուգընկերոջ (սովորաբար երեխայի/երեխաների մոր) նկատմամբ բռնությունն է: Երեխաները կարող են ականատես լինել բռնության իրենց եղբայրների և քույրերի, տատիկի կամ պապիկի կամ իրենց տանը բնակվող որևէ այլ անձի նկատմամբ: Բռնության բազմաթիվ դրսևորումները, ի լրումն երեխայի վրա ուղղակի բռնության, կոչվում են «պոլի-վիկտիմիզացիա»[79]: Երբ բռնությունը կատարվում է ինչ-որ մեկի կողմից, ում երեխան սիրում և վստահում է, ազդեցությունը ոչ միայն կարճաժամկետ է (վախ, անհանգստություն, քնի և ուտելու խանգարումներ և այլն), այլև ավելի խորը, քանի որ ազդում է երեխայի՝ ապահով և պաշտպանված միջավայրում աճելու և դրական և ապահով միջանձյա կապեր կառուցելու կարողության վրա: Ընտանեկան բռնությունից տուժած ընտանիքներում ապրող երեխաների վրա բացասական ազդեցությունը ապացուցվել է բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում: Երեխաները կարող են ենթարկվել բռնության ուղղակիորեն (որպես առաջնային տուժողներ) կամ անուղղակիորեն (որպես ընտանեկան բռնության ականատես երկրորդական տուժողներ): Նույնիսկ երբ երեխաները բռնության բոլոր դրվագների անմիջական վկաները չեն, նրանք միևնույն է գիտակցում են, որ անպաշտպան են դրա առջև, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց վրա[80]:

Այս համատեքստում, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան մասնակից պետություններից պահանջում է բռնության ենթարկված երեխաներին և վկաներին հատուկ պաշտպանություն տրամադրել քննության և դատական գործընթացների բոլոր փուլերում (հոդված 56): Երբ երեխաները ընտանեկան բռնության հետևանքով առնչվում են ոստիկանության կամ արդարադատության համակարգի հետ ուղենիշային սկզբունքը պետք է լինի երեխայի առաջնային շահը, անվտանգությունը և պաշտպանությունը[81]:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածն ամրագրում է երեխայի իրավունքները և սահմանում, որ երեխային վերաբերող հարցերում առաջնային ուշադրություն պետք է դարձնել երեխայի շահերին[82]: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի»:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը, ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը, 2017-2021թթ. Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատելու մասին № 30 արձանագրությունը և միջոցառումների ծրագիրը ընդգծում են երեխաների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

---

78 Նույն տեղում:

79 Աննա Կոստանզա Բալդրի և Էլիզաբեթ Դուբան, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում իրավապահ մարմինների և արդարադատության աշխատակիցների արդյունավետության բարձրացում, 2016թ., էջ 16:

80 Նույն տեղում:

81 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, 11.05.2011

82 ՀՀ Սահմանադրություն՝ 05.07.1995 թ.՝ 2015 թ.-ի փոփոխություններով:

3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Նպատակը.

Ոստիկանության աշխատակիցները լավ գիտեն կանանց նկատմամբ բռնության մասին միջազգային և ազգային օրենսդրությունը, տուժողների իրավունքները, մարդու իրավունքների սկզբունքները, խտրականության և գենդերային հավասարության մասին, ինչը նրանց հնարավորություն է տալիս ԿՆԲ գործերին առնչվելիս հաշվի առնել գենդերային գործոնները:

Ուսուցման հիմնական կետերը.

- Տուժողների անվտանգությունն ու բարեկեցությունը ոստիկանության արձագանքի առանցքն են.

- Պատկերացում կազմել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի հիմնական միջազգային և ազգային հասկացությունների և սկզբունքների մասին.

- Ճանաչել և կիրառել միջազգային և ազգային իրավական փաստաթղթերում ընտանեկան բռնությանը ոստիկանության արդյունավետ արձագանքման համապատասխան չափանիշները:

3.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Գոյություն ունեն ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության բազմաթիվ չափանիշներ, հռչակագրեր, հանձնարարականներ և քաղաքական փաստաթղթեր, որոնք պարտականությունների տարբեր մակարդակով անդրադառնում են կանանց նկտմամբ բռնության խնդրին: Միջազգային փաստաթղթերը կարող են լինել իրավաբանորեն և բարոյապես պարտավորեցնող, ինչպես նաև ունենալ պետություններին և իշխանություններին, ներառյալ ոստիկանությանը, քաղաքականապես պարտավորեցնող ուժ:

Հռչակագրերը բարոյական և քաղաքական, բայց ոչ իրավական պարտավորություններ սահմանող միջազգային փաստաթղթեր են: Հռչակագրերը սովորաբար համապատասխան չափանիշները ներկայացնող փաստաթղթեր են: Հաճախ նրանք իրավաբանական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերի ընդունման առաջին փուլն են հանդիսանում: Հռչակագրերը սովորաբար դիտարկում են որոշ տեսակետներ և սկզբունքներ, ինչպես նաև առաջարկվող ձևակերպումներին հանրության արձագանքներ, և ներկայացնում են այն հիմնարար սկզբունքները, որոնք հետագա մշակման կարիք ունեն: Պետությունները նաև բարոյական և քաղաքական պարտավորություն ունեն՝ հետևելու և իրականացնելու այն մարմինների առաջարկությունները, որոնց նրանք անդամակցում են:

Իրավաբանական պարտադիր ուժ ունեցող միջազգային փաստաթղթերը կոչվում են կոնվենցիաներ: Կոնվենցիա եզրույթն օգտագործվում է որպես պայմանագրի և համաձայնագրի եզրույթների հոմանիշ և վերաբերում են պետությունների միջև պարտավորեցնող պայմանագրին: Համաձայն 1969թ. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի[83]: ««պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն, անկախ նրանից, այդ համաձայնությունը պարունակվում է մեկ կամ երկու, կամ միմյանց հետ կապված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ անվանումից»:

83 1969թ. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա, հասանելի է հետևյալ հղումով՝ https://legal.un.org/ilc/texts/instruments/english/conventions/1_1_1969.pdf

Կոնվենցիաներն ավելի մեծ ուժ ունեն, քան հռչակագրերը, քանի որ դրանք իրավաբանական պարտադիր ուժ ունեն վավերացնող պետությունների համար: Երբ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունը ընդունում է կոնվենցիայի տեքստը, այն ստեղծում է միջազգային նորմեր և չափանիշներ: Այն բանից հետո, երբ կազմակերպություններն կոնվենցիա են ընդունում (Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպայի խորհուրդը), անդամ պետությունները կարող են վավերացնել կոնվենցիան՝ պարտավորվելով պահպանել դրա պահանջները: Եթե անդամ պետությունները խախտում են կոնվենցիայով սահմանված չափանիշները, ապա կազմակերպությունն իրավունք քայլեր ձեռնարկել: Պետության կողմից ստորագրված յուրաքանչյուր պայմանագիր ներկայացնում է մարդու իրավունքների և ազատությունների իրականացման հետ կապված կոնկրետ պարտավորությունների գծով որոշակի երաշխիքների տրամադրում: Դրան հասնելու համար ստեղծվել են ճշգրիտ և բազմաշերտ ընթացակարգեր: Մասնավորապես, միջազգային իրավունքի ոլորտում բանակցություններն ընթանում են որոշակի ընթացակարգով, որն իրականացվում է մի քանի փուլով: Կոնվենցիայի «վավերացում», «ընդունում», «հաստատում» և «միացում» նշանակում է, որ պետությունը հաստատում է իր համար պայմանագրի պարտադիրության համաձայնությունը[84]: Իրավաբանական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերը անդամ պետություններին պարտադրում են հարգել և կատարել ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մակարդակով վավերացված միջազգային փաստաթղթերից բխող պարտավորությունները:

Պայմանագիրը վավերացնելուց հետո պետությունը իրավականորեն պարտավորվում է իրականացնել այդ փաստաթղթի դրույթները և գործել կոմիտեի փորձագետների առաջարկություններին համապատասխան: Պայմանագրի մարմինները կամ կոմիտեները գործում են իրավիճակի պարբերական ստուգումների, ընդհանուր մեկնաբանությունների և հաղորդակցության անհատական մեխանիզմների միջոցով:

ՄԱԿ-ի համակարգում մարդու իրավունքների մոնիթորինգի տարբեր կառուցակարգեր (ՄԱԿ-ի կանոնադրության վրա հիմնված մարմինները, ներառյալ Մարդու իրավունքների խորհուրդը և մարմինները) ստեղծվում են մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով և կազմված են անկախ փորձագետներից, որոնք պարտավորվում են վերահսկել մասնակից պետությունների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների պահպանումը:

3.1.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժինը ամփոփ ներկայացնում է կանանց մարդու իրավունքներին և կանանց նկատմամբ բռնության վերացման գծով ՄԱԿ-ի առանցքային փաստաթղթերը, ներառյալ.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիա (ԿԽՎԿ), 1979թ., և ԿԽՎԿ կոմիտեի ընդունած որոշումները և առաջարկությունները (մասնավորապես՝ Ընդհանուր հանձնարարականներ թիվ 19 [1992թ.], թիվ 28 [2004թ.] ժամանակավոր հատուկ միջոցառումներ, թիվ 33 [2015թ.], կանանց նկատմամբ բռնության և կանանց համար արդարադատության մատչելիության և կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 [2017թ.], թիվ 19 ընդհանուր առաջարկությունը վերջին խմբագրությամբ, համապատասխանաբար).
- ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագիրը, 1993թ.
- Պեկինի հռչակագիրը և գործողությունների հարթակը, 1995թ.:

84 տե՛ս նույն տեղում

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիան, որն ընդունվել է 1979 թվականի դեկտեմբերի 18-ին, համապարփակ փաստաթուղթ է, որը ներկայացնում է ՄԱԿ-ի՝ կանանց իրավունքների պաշտպանության միջազգային իրավական չափանիշների համակարգման երկարամյա ջանքերը:

Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան (այսուհետ `ԿԽՎԿ) 1993 թվականին: Արդյունքում երկիրը ստանձնել է պարտավորությունների զգալի շարք, որոնք ենթադրում էին խտրականության վերացմանն ուղղված համապարփակ միջոցառումների իրականացում, կանանց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքում կանանց լիարժեք զարգացում և առաջընթաց ապահովում: ԿԽՎԿ-ն առանձնահատուկ է նրանով, որ պարտավորեցնում է Մասնակից պետությանը ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ փոխելու արմատավորված մտածելակերպի կառուցվածքները և տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոտեցումները: ԿԽՎԿ-ին միանալը նաև նշանակում է, որ Մասնակից պետությունը ոչ միայն հայտարարում է տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների հարգման մասին, այլև պարտավորություն է ստանձնում ապահովել դրանցից օգտվելու հավասար հնարավորություններ: Բացի այդ, ԿԽՎԿ-ն հանդիսանում է «դրական գործողությունների» ծրագիր, հետևաբար, Մասնակից պետությունը համաձայնել է առանձնաշնորհային (պրեֆերենցիալ) իրավունքներ տրամադրելու սկզբունքին, որը նախանշված է ԿԽՎԿ-ում: ԿԽՎԿ-ի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն պահանջում է վերահսկել Մասնակից պետությունների համապատասխանությունը իր դրույթներին[85]:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (ԿԽՎԿ կոմիտե) ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն`Կոնվենցիայի ներդրման վերահսկման համար: Մասնակից պետությունները պարտավոր են կանոնավոր հաշվետվություններ ներկայացնել Կոմիտեին այն մասին, թե ինչպես են իրականացվում Կոնվենցիայի իրավունքները: Կոմիտեն իր նիստերի ընթացքում դիտարկում է յուրաքանչյուր մասնակից պետության զեկույցը և իր մտահոգություններն ու առաջարկությունները ուղղում է մասնակից պետությանը՝ ամփոփիչ դիտարկումների տեսքով: Բացի այդ, Կոմիտեն իրավասու է[86] երկու այլ ընթացակարգերի համար.

1. Կոնվենցիայով պաշտպանված իրավունքների խախտումների վերաբերյալ ստանալ և քննարկել անհատների կամ անհատների խմբերի հաղորդումները, որոնք բողոք են ներկայացնում Կոմիտե, և
2. քննություն սկսել կանանց իրավունքների լուրջ կամ համակարգված խախտումների վերաբերյալ:

Կոմիտեն նաև ներկայացնում է ընդհանուր առաջարկություններ և հանձնարարականներ: Ընդհանուր առաջարկություններն ուղղված են պետություններին և վերաբերում են Կոնվենցիաների հոդվածներին կամ թեմաներին:

– Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (այսուհետ՝ ԿԽՎԿ կոմիտե) ԿԽՎԿ-ի թիվ 19 (1992) ընդհանուր հանձնարարականը կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը սահմանում է որպես կանանց նկատմամբ խտրականության ձև. «Գենդերային հիմքով բռնությունը խտրականության այն ձևն է, որը լրջորեն խոչընդոտում է տղամարդկանց հետ հավասարության հիման վրա իրավունքներից և ազատություններ-

85 Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա և ԵՊՀ-ի Գենդերային հետազոտությունների կենտրոն, Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կիրառումը 2002-2007թթ., Այլընտրանքային զեկույց:

86 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, 1999 թ.: Կամընտիր արձանագրությամբ սահմանված ընթացակարգերը պարտադիր չեն և կիրառվում են միայն այն դեպքում, երբ շահագրգիռ պետությունը դրանք ընդունել է:

ից օգտվելու կանանց կարողությանը»[87]: «Կանայք» եզրույթն օգտագործվում է բոլոր տարիքի կանանց, այդ թվում՝ մինչև 18 տարեկան աղջիկների համար:

ԿԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականը ընդգծում է գենդերային բռնության և ավանդական գենդերային կարծրատիպերի ու բռնության միջև կապերը: Այն ունի հետևյալ բովանդակությունը. «Ավանդական մոտեցումները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա, արմատավորում են բռնության կամ հարկադրանքի լայն տարածված գործելակերպը, այդ թվում ընտանեկան բռնությունը կամ դաժան վերաբերմունքը, հարկադիր ամուսնությունը, օժիտի պատճառով մահերը, թթվով հարձակումները և կանանց թլպատումը: Նման նախապաշարմունքներն ու գործելակերպերն արդարացնում են գենդերային հիմքով բռնությունը՝ որպես կանանց պաշտպանելու կամ վերահսկելու միջոց»[88]:

ԿԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր հանձնարարականի համաձայն «Կանանց նկատմամբ ուղղակի խտրականությունը ենթադրում է ակնհայտորեն սեռային և գենդերային տարբերությունների հիմքով տարբերակված մոտեցում: Կանանց նկատմամբ անուղղակի խտրականությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ օրենքը, քաղաքականությունը, ծրագիրը կամ գործելակերպը թվում են չեզոք՝ այնքանով, որքանով վերաբերումեն տղամարդկանց և կանանց, սակայն գործնականում խտրական ազդեցություն են ունենում կանանց վրա, որովհետև առերևույթ չեզոք միջոցը չի լուծում մինչ այդ գոյություն ունեցող անհավասարության խնդիրը: Բացի դրանից, անուղղակի խտրականության արդյունքում կարող է սրվել գոյություն ունեցող անհավասարությունը՝ խտրականության համակարգային ու պատմականորեն ձևավորված օրինակները, ինչպես նաև կանանց և տղամարդկանց անհավասար ազդեցությունը չճանաչելու հետևանքով»[89]:

ԿՆԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր հանձնարարականով սահմանվում է, որ կանանց նկատմամբ խտրականությունը, որը պայմանավորված է սեռով և գենդերով, անքակտելիորեն կապված է այլ գործոնների հետ,որոնք ազդեցություն են գործում կանանց վրա, ինչպիսիք են ռասան,

էթնիկ պատկանելությունը, կրոնը կամ հավատքը, առողջական վիճակը, կարգավիճակը, տարիքը, խավը, կաստան, սեռական կողմնորոշումը,ն ինչպես նաև գենդերային ինքնությունը: Սեռի կամ գենդերային հիմքով խտրականությունը կարող է, տղամարդկանց հետ համեմատած, տարբեր աստիճանի կամ տարբեր եղանակով ազդեցություն գործել այդպիսի խմբերի ներկայացուցիչ համարվող կանանց վրա: Կողմ պետությունները պետք է իրավաբանորեն ճանաչեն խտրականության այդպիսի հատվող ձևերը և դրանց՝ վերոնշյալ կանանց վրա ունեցած բարդ ու բացասական ազդեցությունը, ինչպես նաև արգելեն դրանք:

Կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության մասին **ԿԽՎԿ-ի թիվ 35 ընդհանուր հանձնարարականը**[90] թարմացնում է թիվ 19 ընդհանուր հանձնարարականում մասնակից պետություններին տրվող ուղեցույցը և այն պետք է կարդալ դրա հետ միասին:

«Կանանց նկատմամբ բռնություն» հասկացությունը, որը սահմանված է թիվ 19 ընդհանուր հանձնարարականում և այլ միջազգային գործիքներում և փաստաթղթերում, շեշտը դնում է այն փաստի վրա, որ նման բռնությունը գենդերային հիմքով է: Համապատասխանաբար, թիվ 35 հանձնարարականում, «կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն» եզրույթն օգտագործվում է որպես ավելի ճշգրիտ եզրույթ, որը հստակեցնում է բռնության գենդերային պատճառներն ու ազդեցությունները: «Այդ եզրույթն էլ ավելի է ամրապնդում բռնության ընկալումը որպես սոցիալական, այլ ոչ թե անհատական խնդիր, որը կոնկրետ իրադարձությունների, առանձին իրավախախտների և տուժողների/բռնության ենթաթրկված անձանց նկատմամբ ձեռնարկվող միջոցնե-

87 ԿՆԽՎԿ, թիվ 19 ընդհանուր հանձնարարականի 1-ին կետ:

88 ԿՆԽՎԿ, թիվ 19 ընդհանուր հանձնարարականի 11-րդ կետ:

89 ԿՆԽՎԿ, թիվ 28 ընդհանուր հանձնարարականի 16-րդ կետ:

90 ԿՆԽՎԿ, թիվ 19 ընդհանուր հանձնարարականի 35-րդ կետ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/EN/HRBodies/CEDAW/Pages/Recommendations.aspx

ից բացի պահանջում է համապարփակ միջոցներ»[91]:

Կոմիտեն գտնում է, որ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը հիմնարար սոցիալական, քաղաքական և տնտեսական միջոցներից մեկն է, որի միջոցով կանանց ստորադասությունը տղամարդկանց նկատմամբ և նրանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարները արմատավորվում են: Իր գործունեության ողջ ընթացքում Կոմիտեն հստակեցրել է, որ նման բռնությունը լուրջ խոչընդոտ է կանանց և տղամարդկանց միջև էական հավասարության հասնելու և կանանց կողմից մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելու համար, ինչպես ամրագրված է Կոնվենցիայում»[92]:

Կոմիտեն կանանց նկատմամբ գենդերային բռնությունը համարում է արմատավորված գենդերային բնույթի գործոններում, ինչպիսիք են՝ կանանց նկատմամբ տղամարդկանց իրավունքների և արտոնությունների գաղափարախոսությունը, առնականության վերաբերյալ սոցիալական նորմերը, ինչպես նաև տղամարդու վերահսկողություն կամ իշխանություն հաստատելը, գենդերային դերերի կատարումն ապահովելը կամ դրանք կանխարգելելը, կանանց համար անընդունելի համարվող վարքագիծը թույլ չտալը կամ պատժելը: Այդ գործոնները նաև նպաստում են կանանց նկատմամբ գենդերային բռնության բացահայտ կամ անուղղակի սոցիալական ընդունմանը, որը հաճախ դեռ համարվում է մասնավոր հարց, և այդ առնչությամբ համատարած անպատժելիությանը»[93]:

Անկախ իր իրավաբանորեն ոչ պարտադիր բնույթից՝ **ՄԱԿ-ի 1993 թվականի[94] Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը** (ԿՆԲՎՀ) մարդու իրավունքների միջազգային գործիք է, որը բացառապես առնչվում է կանանց նկատմամբ բռնության խնդրին: Այն միջազգային գործիք է, որը բացահայտորեն անդրադառնում է կանանց նկատմամբ բռնությանը և հստակեցնում կանանց նկատմամբ բռնության ձևերը: Այն հաստատում է, որ կանանց նկատմամբ բռնությունը կանանց իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում է և խաթարում կամ ի չիք է դարձնում այդ իրավունքներից և ազատություններից օգտվելը: Այն ընդունում է կանանց նկատմամբ բռնության դեպքում այդ իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու և խթանելու շարունակական ձախողումը[95]: Հռչակագրում կանանց նկատմամբ բռնությունը սահմանվում է որպես «գենդերային հիմքով բռնության ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, ներառյալ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկումը, անկախ նրանից՝ տեղի է ունենում այն հասարակական կամ մասնավոր կյանքում»:

Հռչակագիրը պետություններին կոչ է անում կատարել կանանց իրավունքների պաշտպանության իրենց պարտավորությունը և իրականացնել կանանց նկատմամբ բռնության վերացմանն ուղղված քաղաքականություն: Կանանց նկատմամբ բռնությունը տեղի է ունենում ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր կյանքում:

Միավորված ազգերի կազմակերպության կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագրի 2-րդ հոդվածի «ա» կետը վերաբերում է ընտանիքում տեղի ունեցող բռնությանը և ներառում է բռնության երեք տեսակ՝ ֆիզիկական, սեռական և հոգեբանական: Այն ներկայացնում է բռնության տեսակների օրինակներ, մասնավորապես՝ ծեծը, ընտանիքում կանանց նկատմամբ սեռական բռնությունը, օժիտի հետ կապված բռնությունը, ամուսնական բռնաբարությունը, կանանց սեռական օրգանների խեղումն և կանանց համար վնասակար այլ ավանդական գործելակերպերը, ոչ ամուսնական բռնությունը և շահագործման հետ կապված բռնությունը:

---

91 ԿՆԽՎԿ, թիվ 35 ընդհանուր հանձնարարականի 9-րդ կետ:

92 ԿՆԽՎԿ, թիվ 35 ընդհանուր հանձնարարականի 10-րդ կետ:

93 ԿՆԽՎԿ, թիվ 35 ընդհանուր հանձնարարականի 19-րդ կետ:

94 1993թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան թիվ 48/104 բանաձևով հաստատեց Կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագիր:

95 Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիր, Գլխավոր ասամբլեայի թիվ 48/104 բանաձև, 1993 թ. դեկտեմբերի 20:

ԿՆԲՎՀ-ի 2-րդ հոդվածի համաձայն կանանց նկատմամբ բռնությունը մասնավորապես ներառում է.

- ընտանիքում տեղի ունեցող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, այդ թվում՝ ծեծը, ընտանիքում կանանց նկատմամբ սեռական բռնությունը, օժիտի հետ կապված բռնությունը, ամուսնական բռնաբարությունը, կանանց սեռական օրգանների խեղումն և կանանց համար վնասակար այլ ավանդական գործելակերպերը, ոչ ամուսնական բռնությունը և շահագործման հետ կապված բռնությունը.
- ընդհանուր համայնքում տեղի ունեցող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը, այդ թվում՝ բռնաբարությունը, սեռական բռնությունը, սեռական հետապնդումը և ահաբեկումը աշխատավայրում, կրթական հաստատություններում կամ այլ վայրերում, կանանց թրաֆիքինգը և մարմնավաճառության հարկադրումը.
- պետության կողմից կամ պետության թողտվությամբ կատարվող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը, որտեղ էլ որ այն տեղի ունենա:

Հռչակագրում հասարակական կյանքում տեղի ունեցող բռնությունը դասվում է նույն մակարդակին, ինչ բռնությունը մասնավոր կյանքում: Այն սահմանում է «անտեսանելի խնդիրը» և բացահայտում այն, ինչ տեղի է ունենում տան դռան հետևում: Այսպիսով, ընտանեկան բռնությունը սահմանվում է որպես կանանց հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում: Հռչակագրում հստակ ամրագրված է, որ «կանայք իրավունք ունեն հավասարապես օգտվելու և պաշտպանելու մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները», որոնք ներառում են. կյանքի իրավունք, հավասարության իրավունք, ազատության և անվտանգության իրավունք, օրենքով հավասար պաշտպանության իրավունք, խտրականության բոլոր ձևերից զերծ լինելու իրավունք, ֆիզիկական և հոգեկան առողջության հասնելու ամենաբարձր չափանիշի իրավունք, աշխատանքի արդար և բարենպաստ պայմանների իրավունք, խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք (հոդված 3):

Հռչակագրի դրույթների իրավաբանական ոչ պարտադիր բնույթից անկախ, այն անհերքելի ազդեցություն և առանձնահատուկ դեր ունի կանանց նկատմամբ ընտանեկան բռնության երևույթի նկատմամբ միջազգային քաղաքականության ձևավորման գործում:

1995 թվականին ՄԱԿ-ի Կանանց չորրորդ համաշխարհային կոնֆերանսում ընդունված **Պեկինի հռչակագիրը և Գործողության հարթակը,** կանանց նկատմամբ բռնության վերացումը դասում են ռազմավարական նպատակ գենդերային հավասարության այլ պահանջների շարքում[96]: Հռչակագրում սահմանված են կանանց նկատմամբ սեռական ոտնձգության տարբեր ձևեր, որոնք ԿՆԲՎՀ- ում հստակ նշված չէին: Դրանք են զինված հակամարտությունների ժամանակ համակարգված բռնաբարությունը և հղիության հարկադրելը, սեռական ստրկությունը, ամլացման և հղիության ընդհատման հարկադրելը, կանանց մանկասպանությունը և նախածննդյան փուլում սեռի ընտրությունը[97]: Պեկին +5-ի հատուկ նիստի արդյունքներով ամփոփիչ փաստաթուղթը ևս մեկ քայլ առաջ գնաց՝ կոչ անելով քրեականացնել օրենքով պատժվող բռնությունը կանանց նկատմամբ[98]: 69-րդ կետի «գ» ենթակետում նշվում է, որ կառավարությունները «պետք է վերաբերվեն բոլոր տարիքի կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերին, ներառյալ խտրականության վրա հիմնված բռնության բոլոր ձևերն՝ որպես օրենքով պատժելի հանցագործության»: Փաստաթուղթը նաև կոչ է անում միջոցներ ձեռնարկել՝ կանխելու նախապաշարմունքների, ռասիզմի և ռասայական խտրականության, այլատյացության, պոռնոգրաֆիայի, էթնիկ զտումների,

96 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց:

97 Պեկինի հռչակագիր և Գործողության հարթակ, A/CONF.177/20 (1995), պարբերություններ 114-115, և A/CONF.177/20/Add.1 (1995):

98 ՄԱԿ -ի կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի աշխատանքի 15 տարի, պարբերություն 4, (2009թ.):

զինված հակամարտությունների, օտարերկրյա բռնազավթման, կրոնական և հակակրոնական ծայրահեղականության և ահաբեկչության հետևանքով առաջացող ԿՆԲ-ն»[99]:

Պետությունները պարտավոր են և պատասխանատու են պահպանել ճանաչված միջազգային չափանիշները և իրականացնել կանանց նկատմամբ ցանկացած բռնություն գործադրած անձանց գործողությունների կանխարգելման, կատարված ոտնձգության քննության և քրեական հետապնդման քաղաքականություն՝ անկախ նրանից՝ բռնությունը գործադրվել է պետական սուբյեկտի թե անհատի կողմից:

Այնուամենայնիվ, ըստ ՄԱԿ-ի՝ կանանց նկատմամբ բռնության հարցերով նախկին հատուկ զեկուցող Յակին Էրթուրքի. «...կան բազմաթիվ օրինակներ այն մասին, որ պետությունները չեն կատարում իրենց պարտականությունը՝ պատշաճ կերպով քննել և պատժել կանանց նկատմամբ բռնությունները»[100]: Տարբեր երկրներում և հատկապես Եվրոպայում կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի բազմաթիվ միջոցառումներ են ձեռնարկվել, սակայն, ազգային մակարդակով միջազգային չափանիշների արդյունավետ իրականացման հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել դրանց տեղայնացում, տեղավորելով չափանիշները իշխանության և իմաստի տեղական սոցիալական համատեքստում»:

Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Ռաշիդա Մանջուի (2013 թ.) զեկույցում, կապված պետական պարտականությունների հետ նշվում է, որ «Չնայած բազմաթիվ զարգացումներին, կանանց նկատմամբ բռնությունը տարածված է ամբողջ աշխարհում, ընդ որում վերջինիս անպատժելիությունը շատ երկրներում ավելի շատ կանոն է, քան բացառություն: Պետության պատասխանատվության հետ կապված մարտահրավերների թվում են. կանանց նկատմամբ բռնության՝ որպես մարդու իրավունքների խնդրի ժխտումը, պետության անբավարար արձագանքը՝ խնդրին համակարգված, համապարփակ և կայուն ձևով անդրադառնալու նվազագույն ջանքերը, արձանագրված դեպքերի առնչությամբ անբավարար ուշադրություն է հատկացվում բռնության ձևերի, պատճառների և հետևանքների ուսումնասիրմանը, բռնություն գործադրած անձանցից քչերն են ենթարկվում քրեական պատասխանատվության և նույնիսկ ավելի քչերը դատապարտվում, իսկ պատժամիջոցները հաճախ չեն արտացոլում կատարված հանցանքի լրջությունը: Բացի այդ դեռևս բացակայում է արձագանքը՝ անհավասարության ինչպես անհատական, այնպես էլ կառուցվածքային կողմերին և խտրականության բազմաթիվ և հատվող ձևերին, որոնք կանանց դեմ բռնության պատճառն ու հետևանքն են»[101]:

ՄԱԿ-ի չափանիշներից բացի, ընդունվել են մի քանի տարածաշրջանային պայմանագրեր և արձանագրություններ: 1994 թվականին Ամերիկյան պետությունների կազմակերպության կողմից ընդունված Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման միջամերիկյան կոնվենցիան (Բելեմ դո Բարայի կոնվենցիա) և 2003 թվականին Աֆրիկյան միության կողմից ընդունված Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի՝ Աֆրիկայում կանանց իրավունքների մասին արձանագրությանը (Մապուտոյի արձանագրություն) նույնպես անդրադառնում են կանանց նկատմամբ բռնության խնդրին[102]:

99 Պեկինի հռչակագրի և գործողությունների հարթակի իրականացման հետագա գործողություններ և նախաձեռնություններ, A/RES/S-23/3 (2000):

100 Յակին Երթուրք, 2006թ. (E/CN.4/2006/61), պարբերություն 53:

101 Ռաշիդա Մանջո, 2013թ. (A/HRC/23/49), պարբերություն. 69:

102 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց:

3.1.2 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Եվրոպայի խորհուրդը առաջին միջազգային տարածաշրջանային կազմակերպությունն է, որը ստեղծվել է 1949 թվականին անդամ պետությունների կողմից՝ մարդու իրավունքներն ու ազատությունները խթանելու և պաշտպանելու հստակ մանդատով: Այս կազմակերպությունը ներկայացնում է մարդու իրավունքների խթանման և պաշտպանության լայն ինստիտուցիոնալ հենք: Եվրոպայի խորհուրդը ներառում է 47 անդամ պետություններ, որոնք անդամ դառնալու համար պետք է ընդունեն օրենքի գերակայությունը և պարտավորվում են երաշխավորել իրենց տարածքում մարդու իրավունքներն ու ազատությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրները, ներառյալ Հայաստանը, վավերացրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Ստորև բերված բաժինը անդրադառնում է կանանց մարդու իրավունքներին և կանանց նկատմամբ բռնության վերացման մասին Եվրոպայի խորհրդի հետևյալ իրավական փաստաթղթերին.

- Բռնությունից կանանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2002)5 հանձնարարականը մասնակից պետություններին,
- Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիա:

Բռնությունից կանանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2002)5 հանձնարարականը մասնակից պետություններին սահմանում է. «կանանց նկատմամբ բռնություն» եզրույթը պետք է հասկանալ որպես գենդերային հիմքով բռնարարք, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, ներառյալ նման գործողությունների սպառնալիքը, հարկադրանքը, կամ ազատությունից կամայական զրկումը, լինի դա հասարակական կամ մասնավոր կյանքում: Այն ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

- ընտանիքում կամ ընտանեկան միավորում տեղի ունեցող բռնություն, ներառյալ, ի թիվս այլնի, ֆիզիկական և մտավոր ագրեսիա, հուզական և հոգեբանական բռնություն, բռնաբարություն և սեռական բռնություն, ինցեստ (արյունապղծություն, բռնաբարություն ամուսինների, կանոնավոր կամ պատահական զուգընկերների և համակեցողների միջև, հանցագործություններ, որոնք կատարվել են հանուն պատվի, կանանց սեռական օրգանների և սեռական խեղում և կանանց համար վնասակար այլ ավանդական գործելակերպեր, ինչպիսիք են հարկադիր ամուսնությունները.
- ընդհանուր համայնքում տեղի ունեցող բռնություն, ներառյալ, ի թիվս այլնի, բռնաբարություն, սեռական բռնություն, սեռական հարկադրում և աշխատավայրում, հաստատություններում կամ այլ վայրերում ահաբեկում, կանանց թրաֆիքինգ՝ սեռական շահագործման, տնտեսական շահագործման և «սեքս տուրիզմի» նպատակով.
- պետության կամ պաշտոնատար անձանց կողմից կամ թողտվությամբ կատարվող բռնություն,
- կանանց իրավունքների խախտում զինված հակամարտության իրավիճակներում, մասնավորապես՝ պատանդներ վերցնելը, բռնի տեղահանությունը, համակարգված բռնաբարությունը, սեռական ստրկությունը, հղիության հարկադրելը և թրաֆիքինգը սեռական շահագործման և տնտեսական շահագործման նպատակով:

Կանանց՝ որևէ տեսակի կամ որևէ անձի կողմից բռնության չենթարկվելու իրավունքի պաշտպանությունը Պետությունների պատասխանատվությունն է ու նրանց շահերից է բխում, ինչպես նաև ազգային քաղաքականության գերակայությունն է: Այդ առումով, որպես այս պարտականությունից խուսափելու միջոց պետությունները չեն կարող վկայակոչել սովորույթը, կրոնը կամ ավան-

դույթը[103]: Իրականությունն այն է, որ ընտանեկան բռնության տուժողներն առավելապես իգական սեռի ներկայացուցիչներ են: Տարբեր ապացույցներ ցույց են տալիս, որ կանայք կարող են ընտանեկան բռնության ենթարկվել շատ դեպքերում: Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը հաճախ հանդիսանում է «գենդերային հիմքով բռնություն», քանի որ այն տեղի է ունենում հասարակության մեջ կանանց ստորադաս դերի պատճառով: Կանանց նկատմամբ բռնության հիմնապատճառը կանանց և տղամարդկանց միջև անհավասար իշխանության հարաբերություններն են, որոնք կառուցված և հաստատված են գենդերային կարծրատիպերով:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Եվրոպայի խորհրդի կոնվենցիա) հանդիսանում է մարդու իրավունքների այդ լուրջ ոտնահարման դեմ պայքարի ամենահեռահար միջազգային պայմանագիրը: Կոնվենցիայի հիմնարար առանձնահատկությունները հետևյալն են.

- Կանանց նկատմամբ բռնությունը ճանաչվում է որպես մարդու իրավունքների խախտում և խտրականության տեսակ: Դա նշանակում է, որ բռնություններին համարժեք պատասխան չտալու դեպքում պետությունները պատասխանատվություն են կրում:
- Այն առաջին միջազգային պայմանագիրն է, որը պարունակում է գենդերի սահմանումը: Դա նշանակում է, որ այսուհետ ճանաչվում է, որ կանայք և տղամարդիկ ոչ միայն կենսաբանորեն իգական կամ արական սեռի են, այլև կա սոցիալապես կառուցված գենդերի կատեգորիա, որը կանանց և տղամարդկանց վերագրում է նրանց հատուկ դերերն ու վարքագիծը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշակի դերեր և վարքագիծ կարող են նպաստել կանանց նկատմամբ բռնության ընդունելի լինելուն:
- Այն քրեականացնում է այնպիսի հանցագործությունները, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների խեղումը, հարկադիր ամուսնությունը, հետամտումը, հղիության ընդհատման հարկադրելը և ամլացման հարկադրումը: Դա նշանակում է, որ պետություններն առաջին անգամ պարտավոր կլինեն այդ լուրջ հանցագործությունները ներառել իրենց իրավական համակարգերում:
- Այն կոչ է անում ներգրավել բոլոր համապատասխան պետական գերատեսչություններն ու ծառայությունները, որպեսզի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարը համակարգված լինի: Դա նշանակում է, որ գործակալությունները և ՀԿ-ները չպետք է գործեն միայնակ, այլ մշակեն համագործակցության արձանագրություններ:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 3-րդ հոդվածի (ա) կետը կանանց նկատմամբ բռնությունը սահմանում է հետևյալ կերպ. «կանանց նկատմամբ բռնություն՝ հասկացվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր դրսևորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում»[104]:

Կոնվենցիայի նախաբանում ճանաչվում է, որ կանանց նկատմամբ բռնությունը իրենից ներկայացնում է կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար իշխանական հարաբերությունների դրսևորում, որոնք հանգեցրել են տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ գերիշխող դիրքի հաստատմանն ու խտրականության և կանանց լիարժեք առաջխաղացման արգելակմանը: Այն նաև ճանաչում է կանանց նկատմամբ բռնության կառուցվածքային բնույթը որպես գենդերային հիմքով բռնություն և այն, որ կանանց նկատմամբ բռնությունը հանդիսանում է այն

103 Բռնությունից կանանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2002)5 հանձնարարական:

104 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011թ.:

կարևորագույն սոցիալական մեխանիզմներից մեկը, որոնց միջոցով կանայք ստիպված են լինում ենթակա դիրք զբաղեցնել տղամարդկանց նկատմամբ[105]:

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան պետություններից պահանջում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային վարվելակերպերում փոփոխություններ մտցնելու նպատակով՝ որպեսզի արմատախիլ արվեն այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և մյուս բոլոր այն երևույթները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա:[106].

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի «բ» կետը ընտանեկան բռնությունը սահմանում է հետևյալ կերպ. «ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության դրսևորումները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում»: Ընտանեկան բռնությունը հիմնականում վերաբերում է բռնության երկու տեսակներին՝ սեռական զուգընկերոջ կողմից բռնություն ներկայիս կամ նախկին ամուսինների կամ զուգընկերների միջև և միջսերնդային բռնություն, որը սովորաբար տեղի է ունենում ծնողների և երեխաների միջև: Ընտանեկան բռնութան հիմնականում ենթարկվում են կանայք, բայց նաև տղամարդիկ, երեխաները և տարեցները[107]:

Ընտանեկան բռնությունը համարվում է բռնության ձև, որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն և հետևաբար ակնհայտորեն գենդերացված է: Չնայած կարող է թվալ, որ «ընտանեկան» եզրույթով սահմանափակվում է այդպիսի բռնության գործադրման վայրի համատեքստը, Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ընդունել է, որ բռնությունը հաճախ շարունակվում է հարաբերություններն ավարտվելուց հետո, հետևաբար տուժողի և կատարողի համակեցությունը պարտադիր չէ: Միջսերնդային ընտանեկան բռնությունը ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բնույթի բռնությունը, որը կատարվել է մեկ անձի կողմից իր երեխայի կամ ծնողի (տարեցների նկատմամբ բռնություն) նկատմամբ, կամ ընտանիքի՝ տարբեր սերունդների պատկանող ցանկացած այլ երկու կամ ավելի անդամների միջև այդպիսի բռնությունը: Տուժողի և կատարողի համակեցությունը կրկին պարտադիր չէ[108]:

3.1.3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԽՎԿ-Ի ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԿԽՎԿ կամընտիր արձանագրությունը անդրադարձել է նաև կանանց նկատմամբ գենդերային բռնության և ընտանեկան բռնության դեպքերին: Դրանք ներառում են, ի թիվս այլնի.

Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի [Yildirim v. Austria][109]

Ֆաթիմա Յիլդիրիմը և նրա ամուսինը՝ Իրֆան Յիլդիրիմն ամուսնացել են 2001 թվականին: Նախկին ամուսնությունից Ֆաթիման ուներ երեք չափահաս երեխա. Մելիսան ծնվել էր այս ամուսնությունից և հինգ տարեկան է եղել, երբ տեղի են ունեցել դեպքերը: 2003 թվականի հուլիսին Թուրքիա

105 Նույն տեղում:

106 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, հոդված 12:

107 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 41:

108 Նույն տեղում, պարբերություն 42:

109 Հաղորդակցության թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005., հասանելի է հետևյալ հղումով՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N07/495/37/PDF/N0749537.pdf?OpenElement

կատարած այցից վերադառնալով՝ զույգը վիճել է, և Իրֆանը սպառնացել է սպանել Ֆաթիմային: Մեկ ամիս անց՝ օգոստոսին, նա կրկին սպառնացել է սպանել Ֆաթիմային: Ֆաթիման և Մելիսան տեղափոխվել են ապրելու իր դստեր մոտ: Մտածելով, որ ամուսինը գտնվում է աշխատավայրում, Ֆաթիման վերադարձել է իր բնակարան՝ իրերը վերցնելու նպատակով: Այդ ընթացքում ներս է մտել Իրֆանը, բռնի գործողություններ է կատարել նրա նկատմամբ և սպառնացել սպանել նրան: Նա այդ մասին դաշնային ոստիկանություն հաղորդում է ներկայացրել: Ոստիկանությունն արձակել է կարգադրություն, որով արգելվել է նրան վերադառնալ տուն, և դիմել է դատախազին՝ նրան կալանավորելու միջնորդությամբ: Դատախազը մերժել է այդ միջնորդությունը: Ոստիկանությունը Ֆաթիմային ուղեգրել է ընտանեկան բռնության դեպքերի միջամտության կենտրոն: Երկու օր անց միջամտության կենտրոնի աջակցությամբ Ֆաթիման իր և դստեր անունից ձեռք է բերել դատական արգելք սահմանող կարգադրություն: Այդ նույն օրը՝աշխատանքից հետո, Իրֆանը հետապնդել է նրան, երբ նա դուրս է եկել աշխատավայրից, և [Ֆաթիման] զանգել է ոստիկանություն: Ավելի ուշ Իրֆանը սպառնացել է Ֆաթիմայի չափահաս որդուն: Հաջորդ օրը Ֆաթիմայի աշխատավայրում Իրֆանը սպառնացել է սպանել նրան: Մինչ կժամաներ ոստիկանությունը, նա հեռացել է: Ոստիկանությունը դիմել է նրան՝ վերադառնալու պահանջով, և նրա հետ անձամբ խոսել են: Այդ երեկո ոստիկանությունը խոսել է նրա հետ՝ զանգահարելով նրա բջջային հեռախոսին այն բանից հետո, երբ նա կրկին սպառնացել է Ֆաթիմային և նրա որդուն: Երկու օր անց Իրֆանը եկել է Ֆաթիմայի աշխատավայր և սպառնացել է սպանել նրան:

Երկու օր անց Ֆաթիման սպառնալիքների վերաբերյալ պաշտոնական հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, և ոստիկանությունը դիմել է դատախազին՝ Իրֆանին կալանավորելու պահանջով: Դատախազը մերժել է այդ դիմումը: Երկու շաբաթ անց Ֆաթիման ամուսնալուծության հայց է ներկայացրել: Մեկ շաբաթ անց Իրֆանի նկատմամբ արձակվել է ամուսնալուծության վարույթի ընթացքում շփումն արգելելու մասին կարգադրություն, որով նրան երեք ամսով արգելվել է կապ հաստատել իր զավակի՝ Մելիսայի հետ: Տասն օր անց Իրֆանը հետևել է Ֆաթիմային աշխատավայրից մինչև տուն և մահացու դանակահարել է նրան: Նա ձերբակալվել է մեկ շաբաթ անց, երբ փորձում էր մուտք գործել Բուլղարիա և այժմ ցմահ ազատազրկված է:

ԿԽՎԿ կոմիտեն ընդգծել է պետությունների՝ պատշաճ բարեխղճություն ցուցաբերելու պարտականությունները, որոնցով նրանք «պատասխանատվություն են կրում մասնավոր արարքների համար, եթե նրանք չեն գործել պատշաճ բարեխղճությամբ՝իրավունքների խախտումները կանխելու համար կամ չեն քննում և պատժում բռնարարքները, ինչպես նաև փոխհատուցում տրամադրելու համար»[110]: Այս առումով այն ընդգծել է, որ թեև պետությունը ստեղծել է ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու համապարփակ համակարգ, սակայն առանձին կանանց իրավունքների՝ գործնականում իրականացման համար «քաղաքական կամքը, որն արտահայտված է Ավստրիայի վերոնշյալ համապարփակ համակարգում, պետք է դրսևորվի պետական դերակատարների կողմից»[111]: Մասնավորապես այն գտել է, որ փաստերով նկարագրվում է մի իրավիճակ, որը չափազանց վտանգավոր է եղել Ֆաթիմա Յիլդիրիմի համար և որի մասին գիտեին կամ պետք է իմանային Ավստրիայի իշխանությունները. հաշվի առնելով սա՝ դատախազը չպետք է մերժեր ոստիկանության՝ Իրֆան Յիլդիրիմին ձերբակալելու և նրան կալանքի տակ պահելու վերաբերյալ միջնորդությունները[112]: Ի պատասխան պետության կողմից բերված այն փաստարկին, որ այդ ժամանակ ձերբակալման մասին որոշումը թվում էր «չափազանց կտրուկ քայլ», Կոմիտեն կրկին

նշել է «Ա.Թ.-ն ընդդեմ Հունգարիայի» գործով արած իր ձևակերպումը, ըստ որի՝«բռնություն գործադրած անձի իրավունքները չեն կարող գերակայել կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան

110 Նույն տեղում, պարբերություն 12.1.1

111 Հաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, պարբերություն 12.1.2., հասանելի է հետևյալ հղումով՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N07/495/37/PDF/N0749537.pdf?OpenElement

112 Հաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, պարբերություն 12.1.4., հասանելի է հետևյալ հղումով՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N07/495/37/PDF/N0749537.pdf?OpenElement

անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ»[113]: Կոմիտեն գտել է, որ տեղի է ունեցել ԿԽՎԿ-ի 2-րդ հոդվածի «ա», «գ»-«զ» կետերի և 3-րդ հոդվածի խախտում:

X և Y-ն ընդդեմ Վրաստանի [X and Y v. Georgia][114]

Այս գործը հարուցել են մայրը (X) և դուստրը (Y), ովքեր բողոքել են, որ Վրաստանը չի կանխել, չի քննել և չի պատժել երկարատև ֆիզիկական բռնությունը և սեռական և հոգեբանական բռնություն, որը գործադրվել է համապատասխանաբար իրենց նախկին ամուսնու և հոր կողմից:

X-ի կրած բռնությունը սկսվել է 1987 թվականին, երբ նրան խնջույքի ժամանակ բռնաբարել էր ապագա ամուսինը: Կարճ ժամանակ անց X-ն ամուսնանում է նրա հետ: Վրաստանում սոցիալական վերաբերմունքի պատճառով, որը բարձր էր գնահատում կանանց կուսության սրբությունը մինչ ամուսնությունը, նա կարծում էր, որ ոչ ոք չի ցանկանա ամուսնանալ իր հետ, քանի որ նա այլևս կույս չէր: Ամուսնության ընթացքում X-ը ծնել է հինգ երեխա և թողել աշխատանքը առաջին երեխայի ծնվելուց հետո: X-ի ամուսինը մշտապես դաժան էր երեխաների նկատմամբ, հաճախ բղավում էր նրանց վրա կամ ֆիզիկական բռնություն գործադրում նրանց նկատմամբ՝ վատ վարքի կամ միմյանց հետ վիճելու համար: Ամուսինը բռնություն էր գործադրում X-ի նկատմամբ, երբ նա միջամտում էր երեխաներին պաշտպանելու համար և կենցաղային աննշան հարցերի շուրջ ծագած վեճերի ընթացքում: Վերջինս նաև սեռական բռնություն էր գործադրում իրենց երկու երեխաների՝ Y-ի և նրա եղբոր նկատմամբ:

Չնայած ավելի քան հինգ անգամ իշխանություններին ֆիզիկական և սեռական բռնության դեպքերի մասին հաղորդելուն (որի ապացույցն են մասնավորապես՝ X- ի և Y-ի անմիջական վկայությունները և բժշկական զեկույցները, որոնք հաստատում են X-ին ամուսնու կողմից հասցված մարմնական վնասվածքները), բողոքները երբեք քննության չեն ենթարկվել, և X-ի ամուսնու նկատմամբ որևէ քրեական գործ չի հարուցվել: Ստիկանության պահանջով նա միայն ստորագրել էր իավական ուժ չկրող գրավոր հայտարարություններ առ այն, որ այլևս բռնություն չի գործադրի իր ընտանիքի անդամների նկատմամբ:

Չբավարարվելով ներպետական դատարանների որոշմամբ, X-ը և Y-ն իրենց գործը ներկայացրել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան (որը նախատեսված է INTERIGHTS-ով և Սահմանադրության 42-րդ հոդվածով), սակայն նրանց դիմումն անընդունելի է համարվել: X-ը և Y-ը (և նրանց պաշտպանները) ետ չեն կանգնել և բողոք են ներկայացրել Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հանձնաժողովին («Կոմիտե»): 2013 թվականին նրանց գործը **ընդունելի** է ճանաչել, թեև նախկինում այն մերժվել էր մեկ այլ միջազգային մարմնի կողմից: Մինչդեռ Եվրոպական դատարան դիմումի առարկան դիմումատուների նկատմամբ դաժան վերաբերմունքի ազդեցությունն էր, որևէ խոսք չէր գնում տեղական իշխանությունների կողմից դիմումատուների կրած բռնությունը կանխելու ձախողման պատճառը հանդիսացող սեռական հիմքով խտրականության մասին: Վերոնշյալ փաստարկը Կոմիտեի առջև ներկայացված դիմումի էությունն էր: Քննելով գործը Կոմիտեն ընդունել է, որ X-ի և Y-ի դիմումը փաստացի և իրավական առումով տարբերվում էր նախկինում Եվրոպական դատարան ներկայացված դիմումից: Վրաստանի դեմ իր առաջին որոշման մեջ ԿԽՎԿ կոմիտեն ճանաչել է հեղինակի իրավունքների խախտումը պետության կողմից՝ հիմնված այն հոդվածների վրա, որոնք նա վկայակոչել է.

- Հոդված 2(բ)-(զ). 1-ին հոդվածից (կանանց նկատմամբ խտրականության սահմանում) և 5 (ա)-ից (գենդերային կարծրատիպավորում և նախապաշարմունք) (կետ 9.2) բխող քաղաքականության միջոցներ և պարտավորություններ
- թիվ 19 ընդհանուր հանձնարարական կանանց նկատմամբ բռնության մասին (կետ 9.3):

113 Հաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, պարբերություն 12.1.5., հասանելի է հետևյալ հղումով՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N07/495/37/PDF/N0749537.pdf?OpenElement

114 Հաղորդագրություն թիվ 24/2009, CEDAW/C/61/D/24/2009 (2015)

ԿԽՎԿ կոմիտեն գտել է, որ Վրաստանի պետությունը չի ապահովել քրեական օրենսդրական դրույթների կատարումը՝ արդյունավետ պաշտպանել կանանց և աղջիկներին ընտանիքի ներսում ֆիզիկական և սեռական բռնությունից, օրենքով սահմանված կարգով հավասար պաշտպանություն տրամադրել ընտանեկան բռնությունից և սեռական բռնությունից տուժած անձանց և պաշտպանել նրանց ընտանեկան բռնությունից (ԿԽՎԿ կոնվենցիայի 1, 2(բ)-(զ) և 5(ա) հոդվածների խախտում): Կոմիտեն նաև վկայակոչել է պետության պատշաճ զգուշավորության պարտականությունները (Կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Կոմիտեի թիվ 19 գլխավոր հանձնարարականի հետ համատեղ դիտարկմամբ)՝ կանխելու, քննելու և պատժելու ոչ պետական դերակատարների կողմից ընտանեկան բռնության դրսևորում հանդիսացող արարքները (պարբ. 9.3):

Գյոկչեն ընդդեմ Ավստրիայի [Goekce v. Austria][115]

Շահիդե Գյոկչեն թուրքական ծագումով Ավստրիայի քաղաքացի էր: 1999-2002 թվականներին նա պարբերաբար ենթարկվել է ֆիզիկական բռնության և մահվան սպառնալիքների իր ամուսնու՝ Մուստաֆա Գյոկչեի կողմից: Ոստիկանության աշխատակիցները տեղյակ են եղել այդ շարունակական սպառնալիքների մասին: Երկու անգամ նրանք կիրառել են պաշտպանական որոշումներ, որոնց համաձայն Մուստաֆա Գյոկչեն պետք հեռանար ընդհանուր բնակարանից՝ առաջին անգամ 10 օր ժամկետով, իսկ այնուհետև երեք ամիս ժամկետով: Մեկ անգամ Մուստաֆա Գյոկչեին մեղադրանք է առաջադրվել հարձակման համար, սակայն նա արդարացվել է, քանի որ Շահիդե Գյոկչեի վնասվածքները գնահատվել են ոչ այդքան ծանր: Ոստիկանությունը երկու անգամ դիմել է դատախազությանը խնդրելով, որպեսզի Մուստաֆա Գյոկչեն ձերբակալվի՝ իր կողմից մահվան սպառնալիքների և գործադրվող բռնությունների պատճառով: Սակայն դատախազությունը մերժել է այդ խնդրագրերը՝ անբավարար ապացույցների պատճառով: Նաև Շահիդե Գյոկչեի հայրը և եղբայրը տեղեկություններ են տրամադրել ոստիկանությանը՝ հաստատելով, որ Մուստաֆա Գյոկչեն Շահիդե Գյոկչեին սպանելու բազմաթիվ սպառնալիքներ է հնչեցրել, և որ նա զենքի հասանելիություն ունի: Այս հաղորդումները լուրջ չեն ընդունվել և չեն արձանագրվել: Մարմնական վնաս պատճառելու և վտանգավոր հանցավոր սպառնալիքի համար քրեական հետապնդումը դադարեցվելուց երկու օր անց Մուստաֆա Գյոկչեն ատրճանակով գնդակահարել էր Շահիդե Գյոկչեին իրենց երկու դուստրերի աչքի առաջ:

Վիեննայի միջամտության կենտրոնը և Արդարադատության կանանց հասանելիության ասոցիացիան, հանդես գալով Շահիդե Գյոկչեի երեք երեխաների անունից, ներկայացրեցին, որ.

«կանայք շատ ավելի շատ են տուժում, քան տղամարդիկ՝ դատախազության կողմից ընտանեկան բռնությունը որպես կյանքի իրական սպառնալիք չընդունելուց և ենթադրյալ բռնարարների կալանավորումը չպահանջելուց: Կանայք նաև անհամաչափ ավելի շատ են տուժում ընտանեկան բռնության գործերով ոտնձգողներին չդատապարտելու և չպատժելու պրակտիկայից: Ավելին, կանանց վրա անհամաչափ մեծ ազդեցություն է ունենում իրավապահ և դատական անձնակազմի միջև համակարգման բացակայությունը, ընտանեկան բռնության վերաբերյալ իրավապահ և դատական անձնակազմին կրթություն չտրամադրելը և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և վիճակագրության չկատարումը: (պարբերություն 3.3):

ԿԽՎԿ կոմիտեին ուղղված դիմումում ընդգծվում է, որ ընտանիքը ձգտում է ոչ թե նյութական փոխհատուցման, այլ պետությանը պատասխանատվության ենթարկելու իր բացթողումների և անփութության համար:

Ավստրիայի կառավարությանն իր պատասխանում ներկայացրել է, որ Շահիդե Գյոկչեն մի քանի անգամ հրաժարվել է ցուցմունքներ տալ ամուսնու դեմ կամ քրեական հետապնդում թույլատրել, որ զույգը երեխաների պաշտպանության և գործընկերային թերապիայի ընթացքում պնդել է իրենց ընտանիքը պահպանելու ցանկության մասին, որ չնայած նա հաճախ է ոստիկանություն տուն կանչել, սակայն հստակ հայտարարել է, որ ցանկանում է ապրել ամուսնու հետ: Այդ հիմքով դա-

115 Հաղորդագրություն թիվ 5/ 2005, CEDAW/C/39/D/5/2005

տախազների գնահատականն այն էր, որ սպառնալիքները Շահիդե Գյոկչեի և Մուստաֆա Գյոկչեի փոխհարաբերությունների հաճախակի մասն էին, սակայն այդ սպառնալիքները գործի չեն դրվի: Կառավարությունն իր պատասխանում խոստովանել է, որ Մուստաֆա Գյոկչեն ատրճանակ էր գնել Շահիդե Գյոկչեին սպանելուց երեք շաբաթ առաջ, չնայած որ նրա դեմ զենքի գնման վավերական արգելք կար:

Ի պատասխան՝ դիմումատուներն ասել են, որ «մասնակից պետությունը սխալ կերպով բռնություն գործադրող ամուսնու դեմ քայլեր ձեռնարկելու բեռը և պատասխանատվությունը դրել է տուժողի վրա և չի հասկացել տուժողի առջև ծառացած վտանգը և տուժողի նկատմամբ բռնարարի իշխանությունը:[..] [Բեռը պետք է] դրվի պետության վրա – որը և պատասխանատու է – [դա] կհաստատի այն փաստը, որ հանցավոր սպառնալիք ներկայացնելը հանցագործություն է համայնքի դեմ, ինչպես նաև հանցագործություն առանձին տուժողի դեմ:» (պարբերություն 5.3):

Ավստրիայի կառավարությունը մանրամասն տեղեկություններ է ներկայացրել ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքի և գործելակերպի և պաշտոնատար անձանց վերապատրաստման վերաբերյալ: Նրանք նաև նշել են, որ, մասնավորապես, այն պատճառով, որ Մուստաֆա Գյոկչեն հանցագործությունը կատարել է խանդի փսիխոզի ազդեցության տակ, որը նրան ազատել է քրեական պատասխանատվությունից, որ «դժվար է հուսալի կանխատեսում անել, թե որքանով է վտանգավոր հանցագործը, և որ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք կալանքը կհամարվի անհամաչափ միջամտություն մարդու հիմնական իրավունքներին և հիմնարար ազատություններին:» (պարբերություն 8.10):

Ի պատասխան՝ դիմումատուները նշել են, որ Շահիդե Գյոկչեն կվախենար կորցնել իր երեխաներին, երեխաներից զրկված, ծագումով թուրք մի կնոջ նկատմամբ սոցիալական և մշակութային արհամարհանքը բացատրում է, թե ինչու նա կարող էր անտեսել իր նկատմամբ սպառնալիքները (պարբերություն 9.6): Նրանք նաև նշել են, որ Շահիդե Գյոկչեն իր կյանքի վերջին տարում օգնության հասնելու բազմաթիվ փորձեր է կատարել, իսկ մյուսները նշել են, թե ինչ ռիսկի էր ենթարկվում նա, սակայն որ այդ համապատասխան մանրամասները պատշաճ ձևով չեն փաստաթղթավորվել:

ԿԽՎԿ կոմիտեն հանդես է եկել սկզբունքային հայտարարությամբ պատշաճ զգուշավորության հարցի վերաբերյալ, որն ընդունվել է ի գիտություն բազմաթիվ հետագա դեպքերում:

«Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը ստեղծել է ընտանեկան բռնության դեմ պայքարի համապարփակ մոդել, որը ներառում է օրենսդրություն, քրեական և քաղաքացիական իրավունքներ, իրազեկության բարձրացում, կրթություն և ուսուցում, ապաստարաններ, բռնության տուժողների խորհրդատվություն և կատարողների հետ աշխատանք: Սակայն, որպեսզի ընտանեկան բռնության ենթարկված յուրաքանչյուր կինն օգտվի տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքի և իր իրավունքների և հիմնարար ազատությունների գործնական իրագործումից, քաղաքական կամքը, որն արտահայտվում է Ավստրիայի վերը նշված համապարփակ համակարգում, պետք է աջակցվի պետական դերակատարների կողմից, ովքեր հավատարիմ են մասնակից պետության պատշաճ զգուշավորության պարտավորություններին:» (պարբերություն 12.1.2):

ԿԽՎԿ կոմիտեն հաշվի է առել մի շարք գործոններ. ոստիկանությունը մի քանի անգամ դիմել էր դատախազությանը Մուստաֆա Գյոկչեին կալանավորելու համար. ուժի մեջ մտած պաշտպանական որոշումը խախտվել էր, Մուստաֆա Գյոկչեն ձեռք էր բերել ատրճանակ, չնայած իր դեմ զենքի գնման գործող արգելքին, իսկ վկան ոստիկանությանը հայտնել էր, որ նա զենք ունի: Հաշվի առնելով այդ գործոնների համադրությունը՝ ԿԽՎԿ կոմիտեն ասել է, որ ոստիկանությունը գիտեր կամ պետք է իմանար, որ Շահիդե Գյոկչեին լուրջ վտանգ է սպառնում, և նրա վերջին կանչին վերաբերվեր որպես անհապաղ միջամտություն պահանջող դեպքի:

ԿԽՎԿ կոմիտեն հստակ նշել է, որ «ընտանեկան բռնություն գործադրողի հիմնական իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպիսիք են տեղաշարժի և արդար դատաքննության իրավունքը, [...] չեն կարող գերակայել կանանց կյանքի և ֆիզիկական և մտավոր ամբողջականու-

թյան մարդու իրավունքներին:» (պարբերություն 12.1.5):

Անխելա Գոնսալես Կարենյոն ընդդեմ Իսպանիայի [Angela González Carreño v. Spain][116]

Իսպանիայի Գերագույն դատարանը 2018 թվականին վերահաստատեց, որ իսպանական օրենսդրությունը պետք է ներառի այն իրավունքներն ու ազատությունները, որոնք ամրագրված են մարդու իրավունքների պայմանագրերում: Տասը տարի առաջ, երբ նրա դուստրը երեք տարեկան էր, տիկին Կարենոն թողեց ամուսնուն այն բանից հետո, երբ վերջինս դանակով սպառնաց նրան: Տարիներ շարունակ նա բողոքներ էր ներկայացրել Իսպանիայի իրավական համակարգ՝ ձգտելով պաշտպանել դստերը՝ դատարանի որոշման համաձայն իր հոր հետ տեսակցություններ ունենալուց: Այս հարցի վերաբերյալ դատական նիստից հետո, տիկին Գոնսալես Կարենյոյի ամուսինը ենթադրաբար մոտեցել է նրան և ասել, որ պատրաստվում է «խլել այն, ինչը ամենակարևորն է իր համար»: Ավելի ուշ այդ օրը, նա կրակել և սպանել է իր դստերը, ապա ինքնասպան եղել:

2012թ.-ին տիկին Գոնսալես Կարենյոն իր գործը ներկայացրեց ԿԽՎԿ՝ գենդերային հիմքով խտրականության և ոստիկանության, վարչական և դատական իշխանությունների կողմից իրեն չպաշտպանելու մեղադրանքով: 2014թ.-ին ԿԽՎԿ-ն գտավ, որ Իսպանիան խախտել է Կոնվենցիայով սահմանված իր մարդու իրավունքները և հանձնարարեց պետությանը վճարել տիկին Գոնսալես Կարենյոյին փոխհատուցում և միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ ընտանեկան բռնության նախկին դեպքերը հաշվի առնվեն երեխաների նկատմամբ խնամակալության և տեսակցության իրավունքները որոշելիս:

2018թ.-ին Իսպանիայի Գերագույն դատարանը կարգադրեց Կոմիտեի հանձնարարականների կատարումը և ճանաչեց Գոնսալես Կարենյոյի իրավունքների խախտումը՝ կառավարությանը պարտավորեցնելով վճարել 600 000 եվրո՝ որպես փոխհատուցում կրած բարոյական վնասի համար: Գերագույն դատարանը ընդունեց, որ միջազգային պայմանագրերի այն դրույթները, որոնք վավերացրել է Իսպանիան, կազմում են իր օրենքի մի մասը, և որ ԿԽՎԿ-ի հանձնարարականները ունեն պարտադիր ուժ:

3.1.4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) մշտական դատական մարմին է[117], որի խնդիրն է երաշխավորել, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները հարգեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանված իրավունքներն ու երաշխիքները: Անհատներն ու պետությունները կարող են բողոքներ (դիմումներ) ներկայացնել Կոնվենցիայի անդամ պետության դեմ՝ Կոնվենցիայով կամ նրա Արձանագրություններով սահմանված իրավունքների և երաշխիքների ենթադրյալ խախտման համար: ՄԻԵԴ-ը քննում է դիմումը և որոշում է կայացնում: Եթե ՄԻԵԴ-ը եզրակացնում է, որ անդամ պետությունը խախտել է այդ իրավունքներից և երաշխիքներից մեկը կամ մի քանիսը, ՄԻԵԴ-ն այդ խախտումների վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում:

ՄԻԵԴ-ի դատական պրակտիկան էական դեր է խաղացել կանանց նկատմամբ բռնությանը վերջ դնելու միջազգային և ազգային շրջանակների ձևավորման և ամրապնդման գործում՝ անդրադառնալով կանանց՝ գենդերային բռնությունից ապահով և պաշտպանված լինելու իրավունքին:

116 Communication No 47/2012, CEDAW/C/58/D/47/2012 (2014)

117 Կոնվենցիայի թիվ 11 Արձանագրության ուժի մեջ մտնելը, որով հիմնվում է Դատարանը:

Գործերը կարող են հասնել ՄԻԵԴ միայն այն դեպքում, երբ ազգային դատարաններն ու դատական պաշտպանության միջոցները դրանց լուծում չեն տվել: Հետևաբար, գործերը ցայտուն կերպով պատկերում են պետության՝ մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և կատարելու պատասխանատվությունը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը նաև ազդեցիկ է եղել համակարգված և համապարփակ արձագանքների անհրաժեշտության բացահայտման, գենդերային հիմքով բռնության արդյունավետ կանխման և դրա դեմ պայքարի պատասխանատվությունը պետության վրա դնելու հարցերում[118]:

Ընտանեկան բռնության վերաբերյալ ՄԻԵԴ-ի առանցքային գործը 2009 թ. ***Օփուզն ընդդեմ Թուրքիայի*** գործն է: Օփուզն ընդդեմ Թուրքիայի նախադեպային գործում Դատարանը համապատասխանաբար կիրառել է 2-րդ, 3-րդ և 14-րդ հոդվածները՝ պաշտպանելով կյանքի իրավունքը, խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելումը, ինչպես նաև ընտանեկան բռնության գործով խտրականության արգելումը[119]. Գործը առնչվել է էր երկու տուժողներին՝ դիմումատուին և նրա մորը, որոնք մի քանի անգամ ոստիկանությանը հաղորդում են ներկայացրել մարմնական ծանր վնասվածքների և մահվան սպառնալիքների մասին: Կանայք հետ են վերցրել իրենց բողոքները, քանի որ հանցավորը (ՀՕ) սպառնացել է սպանել նրանց: Հետագայում նա յոթ անգամ դանակով հարվածել է կնոջը, որի համար նրան տուգանել են մոտ 385 եվրոյին համարժեք գումարով: Երկու կանայք բազմաթիվ բողոքներ են ներկայացրել՝ պնդելով, որ իրենց կյանքին վտանգ է սպառնում: Ամուսինը հարցաքննվել է և ազատ է արձակվել: Հանցանք կատարողը դատապարտվել է ցմահ ազատազրկման, սակայն ազգային դատարանը մեղմացրել է պատիժը՝ պայմանավորված մեղմացնող հանգամանքով, այն է՝ իր կնոջ մոր կողմից հրահրվելը, ինչպես նաև դատարանում դրսևորած պատշաճ վարքագծով: Դատարանը նրան ազատ արձակելու որոշում է կայացրել՝ հաշվի առնելով, որ վճռի դեմ պետք է վերաքննիչ բողոք ներկայացվի: Ազատ արձակվելուց հետո կատարողը փնտրել և գտել է դիմումատուին ու սպառնացել է սպանել դիմումատուին և վերջինիս նոր ընկերոջը: Չնայած տուժողի ներկայացրած պահանջին՝ որևէ պաշտպանության միջոց չի ձեռնարկվել: Դատարանը գտել է, որ «ֆիզիկական վնասվածքների և հոգեբանական ճնշման տեսքով բռնությունը, որին ենթարկվել է դիմումատուն, բավականին լուրջ են եղել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով վատ վերաբերմունք համարվելու համար»[120]:

Դատարանն ուսումնասիրել է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ընդունված պրակտիկան՝ ընտանեկան բռնության գործերին առնչվող՝ ex officio (ի պաշտոնե) քրեական հետապնդման մասով՝ նշելով, որ՝ «տվյալ դեպքում կարևոր հարցն այն է, թե արդյոք ներպետական մարմինները ցուցաբերե՞լ են պատշաճ զգուշավորություն՝ դիմումատուի և նրա մոր նկատմամբ բռնությունը կանխելու նպատակով, մասնավորապես՝ Հ.Օ.-ի նկատմամբ հանցանքը կանխող կամ այլ համապատասխան խափանման միջոց ընտրելու միջոցով՝ չնայած տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու փաստին:»[121]: Այլ պետությունների փորձից դատարանը եզրակացրել է, որ «որքան ծանր է հանցանքը և որքան մեծ է հետագա հանցանքների վտանգը, այնքան ավելի նպատակահարմար է, որ քրեական հետապնդումը շարունակվի՝ հանրության շահերից ելնելով, նույնիսկ եթե տուժողները հետ են վերցնում իրենց բողոքները»[122]: Այս առումով դատարանը նշել է գործի մի քանի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ընտանեկան բռնությանն առնչվող գործերին: Դատարանն ընդգծել է, որ՝ «դիմումատուի և նրա մոր նկատմամբ նկատվում էր Հ.Օ.-ի կողմից բռնության սրացում: Հ.Օ.-ի կողմից կատարված հանցանքները բավականաչափ լուրջ էին՝ խափանման միջոցների նշանակումը հիմնավորելու համար, և տուժողների առողջությանն ու անվտանգությանը շարունակաբար վտանգ էր սպառնում: Հարաբերությունների պատմության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կատարողը բազմիցս ընտանեկան բռնություն է գործադրել, և

118 Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար, 2016 թ. հունվար, էջ 29:

119 Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02 2009թ.:

120 Նույն տեղում, պարբերություններ 159, 160, 161:

121 Նույն տեղում, պարբերություն 131:

122 Նույն տեղում, պարբերություն 139:

հետևաբար եղել է հետագա բռնության զգալի վտանգ»[123]:

Դատարանը գտել է, որ տեղական իշխանությունները կարող էին կանխատեսել մահացու հարձակումը ՀՕ-ի կողմից: Դատարանը կրկին նշել է, որ ողջամիտ միջոցներ չձեռնարկելը, որոնք կարող էին արդյունքը փոխելու կամ վնասը մեղմելու իրական հեռանկար ունենալ, բավարար է, որպեսզի առաջանա պետության պատասխանատվության հարցը (տե՛ս Ե-ն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, (E. and Others v. the United Kingdom), թիվ 33218/96, § 99, նոյեմբերի 26, 2002թ.)[124]. Դատարանը եզրակացրել է, որ այս գործով շարունակական բռնությունը ոչ միայն հնարավոր էր, այլև՝ կանխատեսելի: Այն նաև ընդունելի չի համարել իշխանությունների կողմից միջամտություն կատարելուց հրաժարվելու հիմքերը: Դատարանը նշել է. «Թերևս տեղական իշխանությունները բավարար կերպով հաշվի չեն առել վերոնշյալ գործոնները՝ Հ.Օ.-ի նկատմամբ քրեական վարույթը դադարեցնելու մասին բազմիցս որոշում կայացնելիս: Փոխարենը, նրանք թերևս առանձնակի կարևորել են այն իրավիճակին միջամտելուց ձեռնպահ մնալը, որն իրենք համարել են «ընտանեկան հարց»: Ավելին, ոչինչ չի վկայում այն մասին, որ իշխանությունները հաշվի են առել բողոքները հետ վերցնելու հիմքում ընկած դրդապատճառները: Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ դիմումատուի մայրը հանրային դատախազի մոտ նշել է, որ ինքը և իր դուստրը հետ են վերցրել իրենց բողոքները՝ Հ.Օ.-ի կողմից հնչեցված մահվան սպառնալիքների և իրենց վրա գործադրված ճնշման պատճառով:

Դատարանը եզրակացրել է, որ ներպետական իշխանությունները չեն կատարել պատշաճ բարեխղճություն ցուցաբերելու իրենց պարտականությունները, և, հետևաբար, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, դիմումատուի մոր, ով սպանվել է հանցանք կատարողի կողմից, կյանքի իրավունքը պաշտպանելու իրենց պոզիտիվ պարտականությունը: «Դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ բռնի հարձակումների կրկնությունը կանխելու համար ներպետական իշխանությունների կողմից բոլոր ողջամիտ միջոցները ձեռնարկված լինելու կամ չլինելու» հանգամանքը գնահատելիս Դատարանը հաշվի է առել եվրոպական պետությունների գործելակերպի արդյունքում ձևավորվող ընդհանուր չափանիշները և այնպիսի մասնագիտացված փաստաթղթեր, ինչպիսին ԿԽՎԿ-ն[125]: Չնայած նշվում է, որ իշխանությունները բացարձականգործություն չեն դրսևորել, սակայն «այս միջոցներից և ոչ մեկը բավարար չի եղել» կատարողի կողմից հետագա բռնության գործադրումը կանխելու համար [126]. Այս առումով, դատարանը գտել է, որ՝ «օրենսդրական դաշտը պետք է հնարավորություն տար քրեական հետապնդում իրականացնող մարմիններին շարունակելու Հ.Օ.-ի նկատմամբ հարուցված քրեական գործերի քննությունը՝ անկախ տուժողի կողմից բողոքները հետ վերցնելու հանգամանքից, քանի որ Հ.Օ.-ի կողմից գործադրված բռնությունը բավականաչափ լուրջ էր՝ քրեական հետապնդումը հիմնավորելու համար, և առկա էր դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող շարունակական վտանգ»[127]: Դատարանը նշել է, որ «բռնի հարձակումների կրկնվելը կանխելու համար» իշխանությունները չեն դրսևորել պահանջվող պատշաճ բարեխղճությունը, քանի որ նա [դիմումատուի ամուսինը] գործել է «առանց խոչընդոտների» և «առանց պատժի ենթարկվելու», և որ նրանց արձագանքը եղել է «ակնհայտորեն անհամաչափ»[128]:

Ինչ վերաբերում է տուժողի՝ խտրականության վերաբերյալ պնդումներին, ապա Դատարանը հղում է կատարել ԿԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր առաջարկությանը, որով գենդերային հիմքով բռնությունը սահմանվում է որպես խտրականության ձև: Դատարանը նաև ուսումնասիրել է ՀԿ-ների կողմից կազմված՝ Թուրքիայում ընտանեկան բռնության վերաբերյալ մի քանի զեկույց, որոնցում առկա է վիճակագրություն: Զեկույցներում նշվել է, որ «ընտանեկան բռնության՝ տուժողների ամենաբարձր

123 Նույն տեղում, պարբերություն 134:

124 Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02 2009թ., պարբերություն 136:

125 Նույն տեղում, պարբերությունs 162-164:

126 Նույն տեղում, պարբերություն 167:

127 Նույն տեղում, պարբերություն 168:

128 Նույն տեղում, պարբերությունs 168-170:

ցուցանիշը Դիարբեքիրում է, որտեղ ապրում էր [տուժողը] քննարկվող ժամանակահատվածում, և որ բոլոր տուժողները կանայք են, ովքեր հիմնականում ենթարկվել են ֆիզիկական բռնության»[129]: Զեկույցներում նաև նշվել է՝ «երբ տուժողները ոստիկանության բաժիններ հաղորդում են տալիս ընտանեկան բռնության դեպքերի մասին, ոստիկանության աշխատակիցները ոչ թե քննում են նրանց բողոքները, այլ ձգտում են ստանձնել հաշտարարի դերը՝ փորձելով տուժողներին համոզել տուն վերադառնալ և հետ վերցնել իրենց բողոքները: Այսպիսով, ոստիկանության աշխատակիցները խնդիրը համարում են «ընտանեկան հարց, որին իրենք չեն կարող միջամտել»[130]: ՀԿ-ների զեկույցը նաև նշել է պաշտպանիչ կարգադրություններ ձեռք բերելիս բազմաթիվ ձգձգումների մասին, քանի որ ոստիկանությունը դրանք դիտարկել է որպես ամուսնալուծության գործընթացներ, ինչպես նաև ոստիկանության «բացասական վերաբերմունքի» պատճառով հանցանք կատարողի նկատմամբ կարգադրությունների [պահանջների] կիրառման հարցում ձգձգումները[131]: Ավելին, «ընտանեկան բռնություն գործադրողների նկատմամբ թերևս չեն կիրառվում զսպող պատիժներ, քանի որ դատարանները մեղմացնում են պատիժները՝ հիմք ընդունելով սովորույթները, ավանդույթները կամ բարոյականությունը»[132]:

Դատարանը գտել է, որ իշխանությունները նույնիսկ չեն կիրառել առկա պաշտպանող միջոցները և դադարեցրել են վարույթը՝ որպես «ընտանեկան գործ»՝ անտեսելով, թե ինչու են բողոքները հետ վերցվել: Դատարանը գտել է, որ «ընտանեկան բռնությունը հիմնականում գործադրվում է կանանց նկատմամբ», և որ դատական համակարգի ընդհանուր և խտրական անգործությունը Թուրքիայում ստեղծել էր այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր էր ընտանեկան բռնության համար»[133]: Դատարանը եզրակացրել է, որ տուժողի և նրա մոր նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվել այն պատճառով, որ «ընտանեկան բռնության խնդիրը լուծելու համար համապատասխան գործողություններ ձեռնարկելու պարտականությունը ոչ պատշաճ կատարելու հետևանքով» իշխանությունները չեն ապահովել օրենքի առջև հավասար պաշտպանությունը»:

Օփուզն ընդդեմ Թուրքիայի նշանակալի գործ է ընտանեկան բռնության հարցերի վերաբերյալ, քանի որ Դատարանն առաջին անգամ որոշել է, որ գենդերային հիմքով բռնությունը նման է խտրականության, քանի որ այն հիմնականում վերաբերում է կանանց, և կանայք օրենքով հավասար պաշտպանված չեն, ինչպես տղամարդիկ:

ՄԻԵԴ-ի մեկ այլ նշանավոր գործ, որը ճանաչում և առաջ է մղում պատշաճ զգուշավորության չափանիշը ընտանեկան բռնության համատեքստում, դա ***Բևակուան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի*** գործն է (Bevacqua and S. v. Bulgaria)[134]. Այս գործում առաջին դիմումատուն ամուսնացել է պարոն Ն.-ի հետ 1995թ.-ին, և 1997թ. հունվարին ծնվել է նրանց որդին՝ Ս.-ն (երկրորդ դիմումատու): Հետագայում պարոն Ն.-ն սկսել է ագրեսիվ վարք դրսևորել, և 2000 թվականի մարտի 1-ին առաջին դիմումատուն որդու հետ հեռացել է ընտանեկան տնից, տեղափոխվելով ծնողների բնակարան: Նույն օրը, առաջին դիմումատուն ամուսնալուծության դիմում է ներկայացրել և խնդրել միջանկյալ պաշտպանական միջոց կիրառել՝ նշելով, մասնավորապես, որ պարոն Ն.-ն հաճախ օգտագործում էր վիրավորական արտահայտություններ և ծեծում նրան: 2000 թվականի մարտի 7-ին Սոֆիայի շրջանային դատարանի դատավորը ուսումնասիրել է գործի նյութերը և նշանակել առաջին նիստի օրը 2000 թվականի ապրիլի 11-ը՝ առանց քննելու միջանկյալ միջոցի կիրառման խնդրագիրը: Բաժանումից հետո առաջին երկու ամիսների ընթացքում պարոն Ն.-ն ամեն օր այցելում էր որդուն և հանգստյան օրերին նրան տանում իր բնակարան՝ առաջին դիմումատուի համաձայնությամբ: 2000թ. մայիսի 6-ին պարոն Ն. զբոսնելուց հետո Ս.-ին տուն չի բերել: Նա զանգահարել է

129 Նույն տեղում, պարբերություն 194:

130 Նույն տեղում, պարբերություն 195:

131 Նույն տեղում, պարբերություն 196:

132 Նույն տեղում:

133 Նույն տեղում, պարբերություն 198:

134 Բևակուան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 71127/01, 12 հունիսի 2008թ.:

առաջին դիմումատուին և ասել, որ որդին ապրելու է նրա հետ: Հաջորդ վեց օրվա ընթացքում նա մերժել է որդու հետ հանդիպումների կամ հեռախոսային խոսակցությունների առաջին դիմումատուի խնդրանքները: Մի քանի օր հետո առաջին դիմումատուն գնացել է մանկապարտեզ՝ տեսնելու իր որդուն և տարել նրան իր տուն: Երեկոյան պարոն Ն.-ն զանգահարել է, իսկ հետո հայտնվել առաջին դիմումատուի տան մոտ: Նա բղավում էր և ծեծում էր դուռը՝ վախեցնելով երեխային և առաջին դիմումատուին: Պարոն Ն.-ին ի վերջո հաջողվել է մուտք գործել բնակարան, երբ առաջին դիմումատուի հայրը եկել է տուն: Նա ենթադրաբար հարվածել կամ հրել է առաջին դիմումատուին՝ նրա ծնողների և երեխայի ներկայությամբ: Ինչ-որ պահի պարոն Ն.-ն բռնել է իր որդուն, սակայն առաջին դիմումատուն փորձել է թույլ չտալ դա: Երեխան գոռում էր: Ի վերջո, պարոն Ն.-ն հեռացել է երեխայի հետ: Առաջին դիմումատուն այցելել է դատաբժշկի, որը փոքր կապտուկներ է նկատել նրա դեմքի դեմքի և ազդրի վրա: Երկրորդ անգամ պարոն Ն.-ն բռնություն է գործադրել 2000 թվականի հունիսի 28-ին, երբ նա Ս.-ին բերել է մոր բնակարան այցելության: Պարոն Ն-ն զայրույթով է արձագանքել առաջին դիմումատուի խոսքերին և հարվածել նրան որդու ներկայությամբ: Հաջորդ օրը առաջին դիմումատուն այցելել է բժշկի, ով նրա մոտ նկատել է ձախ կոպի կապտուկ և ուռած այտ: Նա նաև հայտնել է, որ ցավում է աջ դաստակը: Պարոն Ն-ի երկու բռնի առարքներից հետո ոստիկանության աշխատակիցների արձագանքը բավարար չի եղել.

- Տեսուչը ըստ երևույթի չի հավատացել իրադարձությունների առաջին դիմումատուի վարկածին և ենթադրաբար պնդել է, որ նա կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել իր որդուն առևանգելու[135];
- առաջին դիմումատուն բողոքել է տեղի ոստիկանական բաժանմունքի անչափահասների տեսուչին, սակայն նրան ասել են, որ ոչինչ անել հնարավոր չէ, և որ վեճը պետք է որոշվի դատարանում[136]:

2000 թ. հուլիսին և օգոստոսին առաջին դիմումատուն բողոքել է ներքին գործերի նախարարություն՝ նշելով, որ նրանք պետք է օգնեն իրեն երեխայի խնամակալությունը ստանալու համար և միջոցներ ձեռնարկվեն՝ պաշտպանելու որդուն, որը վտանգված էր, քանի որ պարոն Ն.-ն պատշաճ ձևով չէր հոգում նրա մասին և ագրեսիվ էր իր նկատմամբ: Առաջին դիմումատուն բողոքել է, որ ոստիկանությունն այս առումով ոչինչ չի արել: 2000 թվականի օգոստոսին նա պատասխան էլ ստացել, որտեղ նշված էր, որ հարցը քննվել է, և որ ոստիկանության աշխատակցի կողմից անօրինական գործողություններ չեն նկատվել: Ոստիկաններն արել էին այն, ինչ կարող էին, իսկ մնացած հարցերը վերաբերում էին մասնավոր վեճին: Դատավարության ընթացքում երկու վկաները հաստատել են պարոն Ն.-ի ագրեսիվ պահվածքը: Բողոքարկման դիտարկումից հետո Սոֆիայի քաղաքային դատարանն անփոփոխ էր թողել ստորին դատարանի վճիռը, բայց համարել էր, որ կան բազմաթիվ ապացույցներ առ այն, որ պարոն Ն.-ն ագրեսիվ է եղել և ծեծի է ենթարկել առաջին դիմումատուին իրենց ամուսնության ընթացքում: Ուստի, առաջին դիմումատուն ավեի լավ կարող էր խնամել երեխային: Առաջին դիմումատուն երկու ընկերների ուղեկցությամբ այցելել է պարոն Ն.-ի բնակարան՝ հավաքելու իր իրերը: Նրա նախկին ամուսինը ագրեսիվ պահվածք է դրսևորել և ծեծել նրան: Հաջորդ օրը առաջին դիմումատուն այցելելել է դատաբժշկի, որը նկատել է նրա դեմքի, աջ թևի, թևատակի և ձախ ազդրի տակ կապտուկներ: Նա բողոքել է դատախազության մարմիններին, որոնք 2002թ. հոկտեմբերի և դեկտեմբերի և 2003թ. հունվարի որոշումներով մերժել են քրեական գործ հարուցել պարոն Ն.-ի նկատմամբ, նշելով, որ առաջին դիմումատուն կարող է մասնավոր վարույթ հարուցել, քանի որ ենթադրյալ վնասվածքները պատկանում են թեթև մարմնական վնասվածքների կատեգորիային[137]:

Վկայակոչելով 3-րդ, 8-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածները՝ դիմումատուները բողոքել են, որ իշխանությունները չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ իրենց ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանք ապահովելու համար և չեն պաշտպանել առաջին դիմումատուին իր նախկին ամուսնու բռնի

135 Բևակուան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 71127/01, 12 հունիսի 2008թ., պարբերություն 16:

136 Նույն տեղում, պարբերություն 23:

137 Նույն տեղում, պարբերություններ 36-38:

վարքից[138]: Դիմումի քննության ընթացքում Դատարանը դիտարկել է կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ միջազգային հիմնական իրավական փաստաթղթերը[139]:

ՄԻԵԴ-ը արձանագրել է «չանտեսելով տուժողների խոցելիությունը ընտանեկան բռնության շատ դեպքերում, այս կոնկրետ դեպքում Դատարանը չի կարող ընդունել դիմումատուների այն փաստարկը, որ իր Կոնվենցիայի իրավունքները կարող են ապահովվել միայն այն դեպքում, եթե պետությունը քրեական կարգով հետապնդեր պարոն Ն.-ին, և որ Կոնվենցիան պահանջում է պետական աջակցությամբ քրեական հետապնդում, այլ ոչ թե տուժողի կողմից նախաձեռնվող քրեական հետապնդում, ընտանեկան բռնության բոլոր դեպքերում: Թեև Դատարանը չի կարող բացառել, որ Բուլղարիայի համապատասխան օրենքը, ըստ որի՝ ընտանիքի անդամների միջև լուրջ բռնարքաներից շատերը չեն կարող հետապնդվել առանց տուժողի ակտիվ մասնակցության (տե՛ս վերը՝ 44-46-րդ պարբերությունները), որոշ հանգամանքներում կարող է բարձրացվել Կոնվենցիայի հետ համատեղելիության հարցը, և նրա խնդիրը սահմանափակվում է դրան նախորդող կոնկրետ փաստերի քննությամբ: Դատարանը իրավասու չէ փոխարինել ազգային իշխանություններին և նրանց փոխարեն ընտրել հնարավոր միջոցների լայն շրջանակը, որոնք կարող են բավարար լինել դիմումատուների անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանք ապահովելու համար: Կոնվենցիայի սահմաններում, 8-րդ հոդվածին համապատասխանության ապահովման միջոցների ընտրությունը միմյանց միջև անհատների հարաբերությունների ոլորտում, մի հարց է, որը սկզբունքորեն ընկնում է ներքին իշխանությունների հայեցողության սահմաններում:[140]

Դատարանը հայտարարել է, որ պետք է կիրառվեին վարչական և վերահսկողական հատուկ միջոցառումներ, այդ թվում, օրինակ՝ **Կանանց բռնությունից պաշտպանության նախարարների կոմիտեի Rec (2002) 5 հանձնարարականում** նախատեսվածները կամ 2005թ. «Ընտանեկան բռնության մասին» Բուլղարայի օրենքով սահմանվածները: Սակայն, համապատասխան ժամանակահատվածում բուլղարական օրենսդրությունը չէր նախատեսում վարչական և վերահսկողական հատուկ միջոցառումներ, և ոստիկանության և քրեական հետապնդման մարմինների կողմից իրենց ընդհանուր լիազորությունների հիման վրա ձեռնարկված միջոցները արդյունավետ չէին: Դատարանը նաև համարեց, որ առաջին դիմումատուի՝ դատախազությունում մասնավոր վարույթ հարուցելու և վնասի հատուցման հնարավորությունը բավարար չէր, քանի որ նման վարույթները ժամանակ են պահանջում և չեն կարող կանխել բողոքարկված դեպքերի կրկնության հնարավորությունը: Դատարանի կարծիքով, իշխանությունների՝ պատժամիջոցներ չկիրառելը կամ պարոն Ն.-ին անօրինական գործողություններից զերծ մնալ այլ կերպ չստիպելը վճռորոշ դեր է խաղացել այս գործի հանգամանքներում, քանի որ դա հավասարազոր է եղել դիմումատուներին անհրաժեշտ անհապաղ օգնություն ցուցաբերելուց հրաժարվելուն: Իշխանությունների այն տեսակետը, որ նման օգնություն չէր պահանջվում, քանի որ վեճը վերաբերում էր «մասնավոր հարցին», անհամատեղելի է դիմողներին՝ 8-րդ հոդվածի իրավունքներից օգտվելն ապահովելու նրանց պոզիտիվ պարտավորությունների հետ[141]:

ՄԻԵԴ-ի կարծիքով՝ շրջանային դատարանի միջանկյալ պաշտպանական միջոցներ չձեռնարկելու կուտակային հետևանքներն այնպիսի իրավիճակում, որը բացասաբար է անդրադարձել դիմումատուների և, առաջին հերթին, երկրորդ դիմումատուի բարեկեցության վրա, ինչպես նաև իշխանությունների կողմից պարոն Ն.-ի նկատմամբ բավարար միջոցներ չձեռնարկելը հավասարազոր էր դիմումատուներին օգնություն չցուցաբերելուն, ինչն անհամատեղելի է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված պետական պոզիտիվ պարտավորությունների հետ, այն է՝ ապահովել մար-

138 Նույն տեղում, պարբերություն 54:

139 Նույն տեղում, Բաժին III:

140 Նույն տեղում, պարբերություն 82:

141 Նույն տեղում, պարբերություն 83:

դու անձնական և ընտանեկան կյանքի հարգանքը[142]:

Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia] գործով տուժողը բռնության դեպքի մասին հաղորդում է տվել ոստիկանություն՝ ներկայացնելով բժշկական տեղեկանք, որը փաստում է, որ ստացված վնասվածքների հետևանքով ինքը 6 օր շարունակ չի կարողացել գնալ աշխատանքի: Ավելի ուշ նա ամուսնու հետ վերադարձել է ոստիկանության բաժին՝ բողոքը հետ վերցնելու նպատակով: Ոստիկանությունը մեղմացրել է քրեական մեղադրանքը՝ որակելով այն որպես ոչ մեծ ծանրության հանցանք: Հաջորդ ամիս տուժողի հարազատներից մեկը զանգահարել է ոստիկանություն և հայտնել, որ ամուսինը ատրճանակով փակվել է բնակարանում և սպառնում է, որ կսպանի իրեն և երկու երեխաներին: Տուժողը նույնպես զանգահարել է ոստիկանություն: Երբ ոստիկանությունը ժամանել է, հանցանք կատարողն արդեն լքած է եղել դեպքի վայրը: Հաջորդ օրը դիմումատուն բողոք է ներկայացրել: Մի քանի օր անց ամուսինը գնդակահարել է իրեն և իրենց երկու երեխաներին: Դրանից կարճ ժամանակ անց ոստիկանության տեսչական ծառայությունը հանցանք կատարողի նկատմամբ անմիջապես քրեական գործ չհարուցելու, արտակարգ իրավիճակին պատշաճորեն չարձագանքելու և դեպքի քննություն չիրականացնելու համար երկրորդ դեպքը քննող ոստիկանության երկու աշխատակիցների նկատմամբ բողոք է ներկայացրել՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ: Ոստիկանության տեսչական ծառայությունն առաջին բողոքին արձագանքած ոստիկանի նկատմամբ ևս պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ բողոք է ներկայացրել՝ այն հիմքով, որ նա փոփոխել է փաստերը և դեպքը ներկայացրել է որպես ոչ մեծ ծանրության հանցանք: Այս գործերին կամ ընթացք չի տրվել, կամ դրանք կարճվել են: Դատախազը բողոքարկել է Գերագույն դատարան, որը բեկանել է ստորին ատյանների որոշումները՝ գտնելով, որ ոստիկանները թերացել են իրենց պարտականությունների կատարման հարցում: Վարչական շրջանի դատարանը գործով մեղադրյալ ոստիկանության աշխատակիցներին ճանաչել է մեղավոր և պայմանական պատիժներ է նշանակել: Վերաքննության փուլում շրջանային դատարանն այն թողել է անփոփոխ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական վարույթի ընթացքում չէր կարող պահանջել նյութական վնասների փոխհատուցում, տուժողը երկու պահանջ է ներկայացրել Սահմանադրական դատարան, որոնք ճանաչվել են անընդունելի:

Հաշվի առնելով տուժողի՝ 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի հետ կապված պահանջների մասով պետության պատասխանատվությունը, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «[իրավունքի] խախտման հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցումը, որպես կանոն, պետք է ներկայացվի իրավունքի պաշտպանության հնարավոր միջոցների շարքում»՝ համաձայն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի: Այսպիսով, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում, քանի որ տուժողը պետք է հնարավորություն ունենար պահանջելու իր և իր երեխաների՝ վերջիններիս մահվան հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցում»:[143]

Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի [Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի] գործով՝ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածով (կյանքի իրավունք)նախատեսված՝ պետության պոզիտիվ պարտականության խախտում: Այս գործով դիմումատուի փեսան (Մ.Մ.) բազմիցս սպառնացել է, որ կսպանի նրանց դստերը (Մ.Տ.) և իրենց երեխային (Վ.Թ.), ընդ որում՝ վերջինիս կպայթեցնի նրա առաջին ծննդյան օրը: Հանցանք կատարողն (Մ.Մ.) այս սպառնալիքները հնչեցրել է թե՛ ոստիկանության և թե՛ սոցիալական ապաստանի աշխատակիցների ներկայությամբ: Մ.Տ.-ն նրա վերաբերյալ հանցագործության հաղորդում է ներկայացրել, և Մ.Տ.-ի նկատմամբ հնչեցված բազմաթիվ սպառնալիքների համար Մ.Մ.-ն դատապարտվել և պատժվել է ազատազրկմամբ՝ հինգ ամիս ժամկետով: Հոգեբուժական քննության արդյունքները ցույց են տվել, որ նա պետք է հոգեբույժի կողմից ստանա ստացիոնար բուժում՝ թե՛ բանտում գտնվելու ընթացքում, թե՛ դրանից հետո: Ազատ արձակվելուն պես Մ.Մ.-ն կրակել և սպանել է Մ.Տ.-ին, Վ.Տ.-ին և իրեն: Որևէ տվյալ չի եղել այն մասին, որ Մ.Մ.-ն բանտում գտնվելու ընթացքում հոգեբույժի կող-

142 Նույն տեղում, պարբերություն 84:

143 Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի, Գանգատ թիվ 7510/04, 2005թ.:

մից բուժում է ստացել: Դիմումատուները 2-րդ հոդվածի առնչությամբ ներկայացրել են երկու մասից բաղկացած բողոք առ այն, որ. պետությունը չի կատարել իր պոզիտիվ պարտականությունները՝ Մ.Տ.-ի և Վ.Տ.-ի մահվան դեպքերը կանխելու համար, և երկրորդ՝ պետությունը ամբողջությամբ չի քննել Մ.Տ-ի ու Վ.Տ.-ի մահվան համար իր գործակալների (ծառայողների) հնարավոր պատասխանատվության հարցը: [144]

Դատարանը վերահաստատել է, որ 2-րդ հոդվածով. պետությունը պարտավոր է ձեռնարկել համապատասխան քայլեր՝ իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար: Սա առաջին հերթին ներառում է պետության՝ քրեաիրավական արդյունավետ դրույթներ մշակելու միջոցով կյանքի իրավունքը պաշտպանելու պարտականությունը՝ զսպելու համար անձի նկատմամբ հանցանքի կատարումը՝ այդ դրույթների գործողությունն ամրապնդելով դրանց խախտումների կանխարգելման, զսպման և պատժման համար նախատեսված իրավակիրառ համակարգով»[145]:

Ինչ վերաբերում է վերոնշյալ մոդելին, այն է՝ արդյոք իշխանությունները այդ ժամանակ գիտեի՞ն կամ պարտավոր էին իմանալ երրորդ կողմի հանցավոր արարքների հետևանքով կոնկրետ անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի մասին և որ իրենց լիազորությունների շրջանակում չեն ձեռնարկել միջոցներ, որոնք, կարող էին նախատեսվել այդ վտանգից խուսափելու համար, ապա Դատարանը գտել է, որ «<u>ներպետական իշխանությունները տեղյակ են եղել, որ Մ.Տ.-ի և Վ.Տ.-ի կյանքը խլելու վերաբերյալ հնչեցված սպառնալիքները լուրջ էին, և պետք է ձեռնարկվեին բոլոր ողջամիտ միջոցները՝ նրանց այդ սպառնալիքներից պաշտպանելու համար</u>»: Այսպիսով, Դատարանն ուսումնասիրել է այն հանգամանքը, թե «<u>արդյոք համապատասխան իշխանությունները ձեռնարկե՞լ են սույն գործի հանգամանքներով պայմանավորված՝ բոլոր ողջամիտ միջոցները՝ Մ.Տ.-ի և Վ.Տ.-ի կյանքը պաշտպանելու համար</u>»[146]: Գտնելով, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտում՝ Դատարանը նախևառաջ նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ Մ.Մ.-ն բազմիցս սպառնալիքներ է հնչեցրել ռումբի վերաբերյալ՝ իշխանությունները երբեք չեն խուզարկել նրա տունը կամ տրանսպորտային միջոցը՝ ռումբ կամ որևէ այլ զենք հայտնաբերելու համար: Դատարանը նաև նշել է, որ Կառավարությունը չի կարողացել ապացուցել այն, որ «բանտում գտնվելու ընթացքում Մ.Մ.-ի նկատմամբ նշանակված հոգեբույժի կողմից հարկադիր բուժումը փաստացի և պատշաճորեն իրականացվել է»[147]: Այս առումով, Դատարանը նաև նշել է, որ կատարողին ազատ արձակելիս չի իրականացվել ռիսկի որևէ պատշաճ գնահատում: Այս վրիպումը Դատարանը համարել է «հատկապես զարմանալի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա սպառնալիքները դատարանների կողմից համարվել են լուրջ և նախկինում հոգեբույժից ձեռք բերված տեղեկանքում հստակ նշված է եղել, որ մեծ է հավանականությունը, որ նա կարող է կրկնել միևնույն հանցանքները կամ կատարել համանման հանցանքներ»: [148] Այս բոլոր գործոնների հիման վրա՝ Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտում, քանի որ ներպետական իշխանությունները «չեն ձեռնարկել գործի հանգամանքներով պայմանավորված բոլոր ողջամիտ միջոցները»՝ պաշտպանելու համար Մ.Տ.-ի և Վ.Տ.-ի կյանքը:

<u>Այդինն ընդդեմ Թուրքիայի</u> [Այդինն ընդդեմ Թուրքիայի] գործով՝ դիմումատուն 17-ամյա քրդուհի էր, ում աչքերը կապել էին և իր ընտանիքի մյուս անդամների հետ տեղափոխել Ժանդարմերիա, որտեղ նրան մերկացրել և խոշտանգել են, հարցաքննել, բռնաբարել, ապա՝ ծեծել: Նրանք ազատ են արձակվել միևնույն օրը՝ առանձին-առանձին: Ազատ արձակվելու օրվան հաջորդող օրը տուժողը, նրա հայրը և հարսը գնացել են դատախազություն, որտեղ ներկայացրել են բողոք: Դատաբժշկական փորձաքննության ենթարկելու նպատակով նրանց ուղարկել են պետական հիվանդանոց, և տուժողը ենթարկվել է կուսության ստուգման: Բժիշկը հաստատել է, որ կուսաթաղանթը պատռ-

144 Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի, Գանգատ թիվ 46598/06, 2009թ., պարբերություն 29:

145 Նույն տեղում, պարբերություն 49:

146 Նույն տեղում, պարբերությունs 51, 53:

147 Նույն տեղում, պարբերությունs 55, 56:

148 Նույն տեղում, պարբերություն 58:

ված է, և տուժողի ազդրի ներքին մակերևույթին առկա են կապտուկներ: Նրա ընտանիքի անդամների մարմինների վրա նույնպես առկա են եղել վնասվածքներ: Հաջորդ օրը դատախազը տուժողին ուղարկել է երկրորդ հիվանդանոց՝ որոշելու համար, թե երբ է նա կորցրել կուսությունը. բժշկի գնահատմամբ դա տեղի է ունեցել զննությունից մեկ շաբաթ առաջ: Քսուք չի վերցվել: Բժիշկներից և ոչ մեկը բավականաչափ որակավորված փորձագետ չի եղել: Մեկ ամիս անց դատախազը տուժողից վերցրել է երկրորդ ցուցմունքը և ուղարկել նրան երրորդ զննության՝ կուսությունը ստուգելու համար: Կուսաթաղանթի պատռման օրը հնարավոր չի եղել որոշել: Տուժողը ստացել է գրություն այն մասին, որ քննությամբ բռնաբարության փաստ չի հայտնաբերվել: Տուժողը և նրա ամուսինը ոստիկանության ու պետական մարմինների կողմից ենթարկվել են ոտնձգությունների այն բանից հետո, երբ նա բողոք է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով: Նրա ամուսինն արգելանքի տակ է վերցվել և ենթարկվել դաժան ծեծի:

Համարելով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ Դատարանն արձանագրել է, որ՝ «Գտնվելով անազատության մեջ՝ դիմումատուն բռնաբարվել է մի անձի կողմից, որի ինքնությունը դեռևս պետք է պարզվի: Պետական պաշտոնատար անձի կողմից անազատության մեջ գտնվող անձի բռնաբարությունը պետք է դիտարկվի որպես վատ վերաբերմունքի առանձնապես ծանր և նողկալի ձև՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որքան հեշտ կարող է լինել հանցանք կատարող անձի համար իր տուժողի խոցելիությունից և թույլ դիմակայությունից օգտվելը: Ավելին, բռնաբարությունը խորը հոգեբանական հետքեր է թողնում տուժողի վրա, որոնք ժամանակի ընթացքում չեն անհետանում այնքան շուտ, որքան ֆիզիկական և հոգեկան բռնության մյուս ձևերի թողած հետքերը: Դիմումատուն նաև բռնի ներթափանցման հետևանքով զգացել է ուժեղ ֆիզիկական ցավ, որի հետևանքով նա պետք է իրեն զգացած լիներ ստորացված և ֆիզիկական ու հոգեբանական բռնության ենթարկված»[149]: Վճռելով, որ 3-րդ հոդվածով խոշտանգման ենթարկվելու վերաբերյալ պնդումներ ներառող դեպքերում 13-րդ հոդվածով պետություններից պահանջվում է արդյունավետ քննություն իրականացնել, Դատարանը գտել է, որ դատախազը չի իրականացրել տուժողի և նրա ընտանիքի անդամների պնդումների անհապաղ, ամբողջական և արդյունավետ քննություն: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ՝ «ըստ ամենայնի՝ մեկը մյուսի հետևից երեք բժշկական զննություն նշանակելով՝ [դատախազի] հիմնական մտահոգությունը կարծես եղել է դիմումատուի կուսությունը կորցնելու հանգամանքը պարզելը: Իրականում զննությունների նպատակը պետք է լիներ պարզելը, թե արդյո՞ք դիմումատուն եղել է բռնաբարությունից տուժած անձ, թե՝ ոչ, որն էլ կազմում էր նրա բողոքի էությունը»[150]:

Դատարանը նաև անդրադարձել է նշանակված դատաբժշկական ընթացակարգերի թերություններին: Այն եզրակացրել է, որ՝ «կալանքի տակ գտնվելու ընթացքում պետական պաշտոնատար անձի կողմից բռնաբարության ենթարկվելու մասին հայտարարության մասով ամբողջական և արդյունավետ քննություն իրականացնելու պահանջը նաև ենթադրում է, որ տուժողը, հաշվի առնելով համապատասխան բոլոր նրբությունները, պետք է զննության ենթարկվի այս ոլորտում հատուկ փորձ ունեցող որակավորված բուժաշխատողների կողմից, ում անկախությունը սահմանափակված չէ քրեական հետապնդում իրականացնող մարմնի՝ զննության անցկացման շրջանակի վերաբերյալ տված ցուցումներով: Չի կարելի եզրակացնել, որ դատախազի կողմից նշանակված բժշկական զննություններով կատարվել է այս պահանջը»[151]:

Բալսանն ընդդեմ Ռումինիայի [Balsan v. Romania][152] գործով՝ 58 տարեկան դիմումատուն ապրում էր Պետրոշանի քաղաքում, ամուսնացած էր Ն.Ս.-ի հետ, և նրանք ունեին չորս երեխա: 2007-2009 թվականների ընթացքում Ն.Ս.-ն մի քանի անգամ բռնի գործողություններ է կատարել դիմումատուի նկատմամբ, որից հետո դիմումատուն ձեռք է բերել այն վնասվածքների մասին փաստող դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որոնց համար պահանջվել է երկուսից տաս-

149 Այդինն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 57/1996/676/866, 1997թ., պարբերություն 83:

150 Նույն տեղում, պարբերություն 107:

151 Նույն տեղում, պարբերություն 107:

152 Բալսանն ընդդեմ Ռումինիայի, Գանագատ թիվ 49645/09, 2017թ.:

նօրյա բուժօգնություն: Արձագանքող ոստիկանության ծառայողները դեպքի մասին իրենց զեկուցագրերում նշել են, որ Ն.Ս.-ն չի թողնում, որպեսզի դիմումատուն մուտք գործի իրենց համատեղ կացարան, որ վնասվածքները ընտանեկան վեճի հետևանք են, և որ նրանք կնոջը տեղեկացրել են պաշտոնական բողոք ներկայացնելու իր իրավունքի մասին:

Դիմումատուն երկու առանձին բողոք է ներկայացրել դատախազություն՝ պնդելով, որ ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել իր երեխաների ներկայությամբ, կցելով բժշկական եզրակացությունների պատճենները: Քննիչները դիմումատուից, նրա երեխաներից ցուցմունք վերցրել են առաջին դեպքերից ամիսներ անց, և նրանք բոլորը հաստատել են ամբողջ տարվա ընթացքում շարունակաբար բռնության ենթարկվելու փաստը, այդ թվում՝ նրա կյանքին ուղղված սպառնալիքները: Քննիչները բռնություն գործադրած անձին՝ Ն.Ս.-ին, հարցաքննել են բռնի գործողությունների մասին առաջին հաղորդումն ստանալուց 5 ամիս հետո: Ն.Ս.-ն հերքել է կնոջ նկատմամբ բռնի գործողություններ կատարելու փաստը և նշել, որ նա խմելու խնդիր է ունեցել և պատշաճորեն չի մաքրել տունը: Ն.Ս.-ն պնդել է, որ դիմումատուի կողմից ներկայացված բժշկական եզրակացությունները կեղծված են եղել: Նրանց դուստրերը ոստիկանությունում նշել են, որ իրենց հայրը չի հարվածել իրենց մորը, այլ վերջինս խմում էր և հարբելուց հետո ագրեսիվ վարք դրսևորում:

Դիմումատուն երկու լրացուցիչ դեպքի առթիվ բողոք է ներկայացրել դատախազին՝ նշելով, որ Ն.Ս.-ն սպառնացել է սպանել իրեն, և ինքը վախենում է իր կյանքի համար: Նա նաև խնդրել է դատական քննությունն արագացված կարգով անցկացնել և պաշտպանել իրեն: Երկրորդ դիմումը ներկայացնելու օրը դատախազությունը որոշել է մեղադրանք չառաջադրել և Ն.Ս.-ի նկատմամբ սահմանել 50 եվրոյին համարժեք գումարի չափով տուգանք՝ հաշվի առնելով այն, որ ալկոհոլ խմելուց հետո դիմումատուն վեճ է սադրել: Դատախազն իր որոշման մեջ հղում է կատարել Ն.Ս.-ի և դիմումատուի երկու չափահաս դուստրերի ցուցմունքներին:

Ինչ վերաբերում է ենթադրյալ սպառնալիքներին, ապա համարվում է, որ դիմումատուին չի հաջողվել ապացուցել իր կողմից ներկայացվող մեղադրանքները: Դատախազը եզրակացրել է, որ չնայած Ն.Ս.-ն կատարել է հանցանք՝ պատճառելով մարմնական վնասվածք, նրա գործողությունները հասարակության համար վտանգ չեն ներկայացրել, քանի որ նրան սադրել է տուժողը, ինչպես նաև նախկինում ինքը չի ունեցել դատվածություն և թոշակառու է եղել: Այդ որոշման դեմ դիմումատուի բողոքն անհիմն լինելու հիմքով մերժվել է: Դիմումատուն Պետրոշանի քաղաքի շրջանային դատարան բողոք է ներկայացրել դատախազի կողմից կայացված երկու որոշման դեմ՝ պահանջելով, որ Ն.Ս.-ին մեղադրանք առաջադրվի մարմնական վնասվածք պատճառելու հիմքով, և որ նա դատապարտվի ու փոխհատուցում վճարի ոչ նյութական վնասների և կրած տառապանքների համար: Նա պնդել է, որ վարչական տուգանքը, որը Ն.Ս.-ն հրաժարվել է վճարել, նրա նկատմամբ կանխարգելիչ ազդեցություն չի ունեցել, քանի որ դատախազի՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումից հետո նա շարունակել է բռնի գործողությունների ենթարկել կնոջը: Բռնության ենթարկված կինը դատարանին նաև խնդրել է քրեական պատժամիջոցներ կիրառել Ն.Ս.-ի նկատմամբ և թույլտվություն է խնդրել ներկայացնելու Ն.Ս.-ի հետ երկխոսության ձայնագրությունը, որպեսզի ապացուցի, որ ինքը բռնի գործողությունների է ենթարկվել, ինչպես նաև Ն.Ս.-ի կողմից հնչեցվել են սպառնալիքներ: Դիմումատուն իր ցուցմունքի վերջին պարբերության մեջ նշել է, որ վախենում է իր կյանքի համար և դատարանին խնդրել է «օրենքով նախատեսված կարգով պատժել Ն.Ս.-ին ... արգելել նրան մտնել բնակարան ... և մոտենալ իրեն»:

Պետրոշանի քաղաքի շրջանային դատարանում երկրորդ լսման ժամանակ դիմումատուն պահանջել է դատարանի կողմից նշանակված փաստաբան, քանի որ փաստաբան վարձելու համար ֆինանսական միջոցներ չի ունեցել: Դատարանը մերժել է դիմումը՝ գտնելով, որ գործի էությունն այնպիսին է, որ փաստաբանի կողմից ներկայացվել չի պահանջվում: Պետրոշանի քաղաքի շրջանային դատարանն իր միջանկյալ վճռով մասամբ վերացրել է դատախազի՝ 2007 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը մարմնական վնասվածք պատճառելու հանցագործության, ինչպես նաև դրա համար սահմանված տուգանքի մասով և այդ մասով պահանջել է գործի՝ ըստ էության քննություն: Դատախազի՝ սպառնալիքների մասով եզրահանգումները հաստատվել են: Ձայնագրու-

թյունը չի ընդունվել որպես ապացույց, քանի որ դատարանը համարել է, որ այն գործին չի վերաբերում: Դիմումատուն և Ն.Ս.-ն ցուցմունք են տվել դատարանում՝ նշելով, որ դիմումատուն հարբած է եղել և իրեն դանակով սպառնացել է: Ն.Ս-ի պնդմամբ՝ իրեն պաշտպանելու համար նա հրել է կնոջը, սակայն ժխտել է, որ երբևէ հարվածել է նրան: Դատարանը լսել է նրանց դստեր՝ Ս.Բ.-ի հետևյալ ցուցմունքը՝«Իմ հայրը սովորություն ուներ հարվածել մորս [դիմումատուին] և մեզ՝ երեխաներիս: Նա այդպես վարվելու սովորություն ուներ, երբ գիշերը տուն չէր գալիս և մայրս հարցնում էր, թե որտեղ է եղել: Հետո հայրս բարկանում էր և հարվածում մորս: Նրա բարկանալու միակ պատճառը գումար չունենալն էր ... երբ ես տեղափոխվեցի ծնողներիս բնակարանից, մայրս շարունակում էր հարվածներ ստանալ հորս կողմից. ես անձամբ ականատես եմ եղել նման դեպքերից մի քանիսին ... Մայրս ալկոհոլ խմելու սովորություն ուներ, սակայն չափավոր, իսկ 2007 թվականին նա դադարեց խմել: Ես հետ եմ վերցնում քրեական վարույթի ընթացքում տված իմ ցուցմունքը, քանի որ այն տվել եմ հորս սպառնալիքներից հետո»:

Պետրոշանի քաղաքի շրջանային դատարանը Ն.Ս.-ին անմեղ է ճանաչել մարմնական վնասվածք պատճառելու մասով: Դատարանը համարել է, որ Ս.Բ.-ի ցուցմունքը չի կարելի հաշվի առնել առանց այդ որոշման համար որևէ հիմնավորում նշելու: Դատարանը եզրակացրել է. Դիմումատուն չի ապացուցել իր այն պնդումները, որ ... ինքը ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել մեղադրյալի կողմից: Դատարանը, հաշվի առնելով նաև քրեական գործով քննության ընթացքում հավաքված ապացույցները, համարում է, որ մեղադրյալը հիմնականում այդպիսի բռնություն է գործադրել տուժող կողմի ալկոհոլ օգտագործելու, ինչպես նաև այն պատճառով, որ նա պատշաճ կերպով հոգ չէր տանում իր չորս երեխաների մասին: Մեղադրյալի արարքներն այնքան վտանգավոր չեն հասարակության համար, որպեսզի համարվեն հանցանք, և, հետևաբար, նա կազատվի մարմնական վնասվածքի մասով երեք դրվագներով առաջադրված մեղադրանքից և կվճարի 120 եվրոյին համարժեք գումարի չափով վարչական տուգանք: Դատարանը այնուհետև առանց հիմնավորումներ ներկայացնելու, անհիմն լինելու հիմքով մերժել է դիմումատուի՝ վնասի փոխհատուցման պահանջը: Վճռում որևէ հիշատակություն չի եղել դիմումատուի՝ իրեն պաշտպանության միջոցներ տրամադրելու պահանջի վերաբերյալ: Դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել այդ վճռի դեմ: Նա պնդել է, որ Ն.Ս.-ն բռնության հակված անձ է, որը շարունակել է բռնության ենթարկել իրեն՝ նույնիսկ վարչական տուգանք նշանակելուց հետո: 2009 թվականի փետրվարի 19-ին և ապրիլի 21-ին դիմումատուն Ն.Ս.-ի կողմից բռնության և սպառնալիքների նոր դեպքերի հետ կապված հինգ բողոք է ներկայացրել Պետրոշանի քաղաքի ոստիկանություն, որոնց նա կցել է բժշկական եզրակացություններ: Սեպտեմբերի 29-ին Պետրոշանի քաղաքի շրջանային դատարանին կից դատախազությունը որոշել է դիմումատուի կողմից նկարագրված հինգ դեպքերի կապակցությամբ մեղադրանք չառաջադրել Ն.Ս.-ի դեմ: Այն Ն.Ս.-ի նկատմամբ սահմանել է մեկ այլ վարչական տուգանք՝ 25 եվրոյի չափով: Դիմումատուն վերը նշված որոշման դեմ հետագայում որևէ բողոք չի ներկայացրել:

ՄԻԵԴ-ն իր գնահատման մեջ նշել է, որ ֆիզիկական բռնության փաստը արձանագրվել է բազմաթիվ ոստիկանական զեկուցագրերում և դատաբժշկական փորձաքննության եզրակացություններում: Վերջինիս մեջ նշված է, որ դիմումատուին անհրաժեշտ էր երկուսից տասն օր տևողությամբ բուժօգնության տրամադրում[153]: Այն մերժել է Կառավարության առարկությունն առ այն, որ բռնությունը, որին ենթարկվել է դիմումատուն, չի հասել 3-րդ հոդվածը վկայակոչելու համար անհրաժեշտ նվազագույն շեմին: Այն նշել է. դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը, որը երեք դեպքերով դարձել է նրա ֆիզիկական վնասվածքների պատճառ, վախի և անօգնական լինելու նրա զգացումների զուգակցմամբ, բավականաչափ լուրջ են եղել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ծանրության պահանջվող մակարդակին հասնելու, հետևաբար՝ սույն դրույթի համաձայն Կառավարության նկատմամբ պոզիտիվ պարտավորություն սահմանելու համար[154]: Դատարանը այսպիսով ուսումնասիրել է այն, թե «արդյոք ներպետական իշխանությունները ձեռնարկե՞լ են բո-

153 Բալսանն ընդդեմ Ռումինիայի, Գանգատ թիվ 49645/09, 2017թ, պարբերություն 59:

154 Նույն տեղում, պարբերություն 60:

լոր ողջամիտ միջոցները՝ դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ բռնի գործողությունների կրկին կատարումը կանխելու համար»[155]: Այս կապակցությամբ դատարանը նշել է, որ նրանք բոլորը քաջատեղյակ են եղել գրեթե մեկ տարի դիմումատուի նկատմամբ գործադրվող բռնությանը, քանի որ նա ահազանգել է ոստիկանություն, քրեական գործով բողոքներ է ներկայացրել և խնդրագիր է ներկայացրել ոստիկանության պետին: Նրա բողոքները մշտապես ուղեկցվել են դատաբժշկական փորձաքննության եզրակացություններով, որոնք երբևէ չեն վիճարկվել: Դատարանն այսպիսով եզրակացրել է, որ Ռումինիայի իշխանությունները պարտավոր էին արձագանքել նրա բողոքներին: Դատարանը նաև նշել է, որ դիմումատուի դեպքում «գործել է իրավական համակարգ, որը նրան հնարավորություն է տվել ընտանեկան բռնության վերաբերյալ բողոք ներկայացնել և դիմել իշխանություններին՝ պաշտպանություն տրամադրելու պահանջով»[156]:

Ինչ վերաբերում է իրավական համակարգի կիրառությանը, ապա Դատարանը հիշեցրել է, որ բռնության առաջին դեպքի քննությունը սկսվել է մեկ ամիս անց և բռնության այլ դեպքեր տեղի ունենալուց հետո: Չնայած այն հանգամանքին, որ դիմումատուն նշել է, որ իր ամուսինը սպառնացել է սպանել իրեն, ոստիկանությունն առաջին դեպքից հետո գրեթե հինգ ամիս չի հարցաքննել նրան: Ազգային դատարանը եզրակացրել է, որ կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու հետ կապված հանցագործություն, այն եղել է սադրանք և վարչական պատասխանատվության միջոցից ավելի խիստ ներգործության միջոց սահմանելու համար բավականաչափ լուրջ չի եղել[157]. Դատարանը նշել է, որ սույն որոշման դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքը մերժվել է և շրջանային դատարանը մարմնական վնասվածք պատճառելու մասով անմեղ է ճանաչել կատարողին, քանի որ նրան սադրել են, և նա հասարակության համար վտանգ չի ներկայացրել: Դատարանն այնուհետև նշել է, որ ազգային դատարանն ուշադրություն չի դարձրել կողմերի դստեր կողմից ցուցմունքը հետ վերցնելու հանգամանքի վրա, իսկ իշխանություններն ուշադրություն չեն դարձրել դիմումատուի՝ պաշտպանության միջոց տրամադրելու պահանջին: Ազգային դատարանը մի փոքր ավելացրել է վարչական տուգանքի չափը՝ չնայած այն հանգամանքին, որ առաջին տուգանքը չի ունեցել կանխարգելիչ ազդեցություն, քանի որ բռնությունը շարունակվում էր[158]: Ընդհանուր առմամբ քրեական վարույթը գնահատելով՝ Դատարանը մտահոգությամբ եզրակացրել է, «որ թե՛ քննության ժամանակ, թե՛ դատարանում ներպետական իշխանությունները ընտանեկան բռնության դեպքերը դիտարկել են որպես սադրանք և համարել են, որ քրեական իրավունքի շրջանակներում քննելու համար դրանք այնքան էլ լուրջ չեն»[159]: Այն գտել է, որ ներպետական իշխանությունների դիրքորոշման հետևանքով «ներպետական օրենսդրական դաշտը չի ծառայել իր նպատակին, և այն չի համապատասխանել կանանց նկատմամբ բռնության և մասնավորապես՝ ընտանեկան բռնության մասով սահմանված միջազգային չափանիշներին»[160]: Ինչ վերաբերում է անվճար հիմունքներով փաստաբան տրամադրելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ որոշմանը, քանի որ նմանատիպ գործերի դեպքում բացակայում է դրա անհրաժեշտությունը, ապա ՄԻԵԴ-ը վերհիշել է նախկինում կայացված վճիռներն առ այն, որ «որոշ հանգամանքներում վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քննության գործընթացին տուժողի արդյունավետ մասնակցությունն ապահովելու հետ կապված պետության ընթացակարգային պարտավորությունը կարող է դրսևորվել փաստաբանի՝ անվճար հիմունքներով իրավական ներկայացուցչության արդյունավետ հասանելիություն տրամադրելով»[161]: Ի վերջո, Դատարանը նշել է, որ 2008 թվականի առաջին կեսին ներկայացվել են վեց լրացուցիչ բողոքներ, որոնք ներպետական իշխանությունները մերժել

155 Նույն տեղում, պարբերություն 61:

156 Նույն տեղում, պարբերություններ 62, 63:

157 Բալսանն ընդդեմ Ռումինիայի, Գանգատ թիվ 49645/09, 2017, պարբերություն 65:

158 Նույն տեղում, պարբերություն 66:

159 Նույն տեղում, պարբերություն 67:

160 Նույն տեղում:

161 Նույն տեղում:

են՝ապացույցների բացակայության կամ բավականաչափ ծանր չլինելու հիմքով:[162] ՄԻԵԴ-ն այսպիսով գտել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ը սեփական նախաձեռնությամբ քննել է 14-րդ հոդվածի կիրառության հարցը[163]. Այն կրկին նշել է իր վճիռն առ այն, որ «պետության կողմից կանանց ընտանեկան բռնությունից չպաշտպանելու հետևանքով խախտվում է նրանց՝ օրենքով սահմանված հավասար պաշտպանության իրավունքը, և պարտադիր չէ, որ այս պարտավորությունը դիտավորությամբ չկատարվի»[164]: Այն ընդգծել է, որ Ստամբուլի կոնվենցիայով կանանց նկատմամբ բռնությունը սահմանվել է որպես խտրականության ձև[165]:

Դատարանն այնուհետև կրկին նշել է գործի փաստական հանգամանքները. որ դիմումատուն իր ամուսնու կողմից ենթարկվել է բռնության, հնչեցվել են մահվան սպառնալիքներ, որոնց մասին իշխանությունները տեղյակ են եղել, և իր վճիռը, որ իշխանությունները ներպետական իրավական համակարգը չեն ծառայեցվել իր նպատակին՝հիմք ընդունելով այն եզրահանգումը, որ դիմումատուն է սադրել իր նկատմամբ ընտանեկան բռնություն, որ բռնությունը հասարակության համար վտանգ չի ներկայացրել, հետևաբար այնքան էլ ծանր դեպք չի եղել քրեական պատժամիջոցներ նշանակելու համար, ինչպես նաև դիմումատուի՝ դատարանի կողմից նշանակված փաստաբանի տրամադրման պահանջը մերժելը[166]: Դատարանը գտել է, որ սույն գործով իշխանությունների անգործության մասին է նաև վկայում որևէ պաշտպանության միջոցի տրամադրման հնարավորություն չդիտարկելու հանգամանքը՝ չնայած ոստիկանությանը, դատախազներին և դատարաններին նրա կողմից շարունակաբար ուղղված խնդրանքներին: Այն համարել է, որ հաշվի առնելով ընտանեկան բռնությունից տուժած անձանց խոցելիությունը՝ իշխանությունները պետք է ավելի աչալրջորեն քննեին նրա գործը[167]:

Շարունակելով՝ ՄԻԵԴ-ն ուսումնասիրել է Ռումինիայում ընտանեկան բռնության նկատմամբ սոցիալական հանդուրժողականության մակարդակն արտացոլող միջին վիճակագրական տվյալները և նշել, որ հաղորդված դեպքերից միայն մի քանիսն են քննվել ոստիկանության կողմից: Այն նշել է, որ հաղորդվող դեպքերի թիվը շարունակում է աճել, որտեղ տուժողների մեծ մասը կանայք են, և որ տուժողների համար առկա են քիչ թվով կացարաններ, այդ թվում՝ ութ երկրներում նման կացարաններ ընդհանրապես չկան: Այն հղում է կատարել ԿՆԽՎԿ կոմիտեի հետևյալ ամփոփիչ դիտարկումներին. հասարակության շրջանում իրազեկվածության բացակայությունը՝ հիմնականում գենդերային խտրականության հետ կապված, իրենց իրավունքների մասին կանանց իրազեկվածության բացակայությունը, տուժողների համար պաշտպանության և աջակցության ծառայությունների բացակայությունը՝ մասնավորապես գյուղական շրջաններում, ընտանեկան բռնության տարածվածության մակարդակի վերաբերյալ վիճակագրության բացակայությունը և գործող օրենսդրության անարդյունավետ կիրարկումը[168].

Դատարանն ընդգծել է, որ Կառավարությունը չի իրականացրել այս ոլորտում իր կողմից ձեռնարկված միջոցառումների ազդեցության որևէ մոնիթորինգ, ինչպես նաև օրենքի և ազգային ռազմավարության կիրարկման մոնիթորինգ: Դատարանը համարել է, որ՝ վերոնշյալ գործոնների համակցությունը վկայում է այն մասին, որ իշխանությունները լիովին չեն գնահատել Ռումինիայում ընտանեկան բռնության խնդրի լրջությունը և ծավալը, ինչպես նաև նրանց գործողություններում արտացոլվել է կին դիմումատուի նկատմամբ խտրական մոտեցում[169]: Հաշվի առնելով առերևույթ ապացույցն առ այն, որ ընտանեկան բռնությունը մեծապես ազդում է կանանց վրա՝ Դատարանը համարել է, որ «իշխանությունների կողմից դրսևորված ընդհանուր և խտրական անգործության

162 Բալսանն ընդդեմ Ռումինիայի, Գանգատ թիվ 49645/09, 2017թ, պարբերություն 69:

163 Նույն տեղում, պարբերություն 72:

164 Նույն տեղում, պարբերություն 78:

165 Նույն տեղում, պարբերություն 79:

166 Նույն տեղում, պարբերությունs 80, 81:

167 Նույն տեղում, պարբերություն 82:

168 Բալսանն ընդդեմ Ռումինիայի, Գանգատ թիվ 49645/09, 2017թ, պարբերություն 83:

169 Նույն տեղում, պարբերություն 85:

հետևանքով ստեղծվել է մի միջավայր, որը նպաստել է ընտանեկան բռնությանը»[170]: Այն գտել է, որ քրեական իրավունքի համակարգը չունի «համարժեք կանխարգելիչ ազդեցություն, որով հնարավոր է ապահովել սույն գործով կատարողի կողմից ապօրինի գործողությունների կանխարգելումը», այսպիսով խախտվել են դիմումատուի իրավունքները[171]. Այն եզրակացրել է, որ չնայած ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ օրենքի և ազգային ռազմավարության ընդունմանը՝ «դատական համակարգի կողմից ընդհանուր առմամբ չարձագանքելը և ագրեսորների անպատժելիությունը ...» վկայում են այն մասին, որ ջանքեր չեն գործադրվում ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ: Այն այսպիսով գտել է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում (խտրականության արգելում)՝ 3-րդ հոդվածի զուգակցմամբ (Անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում):

Տալպիսն ընդդեմ Իտալիայի[172] [Talpis v. Italy] գործը վերաբերում էր դիմումատուի կրած ամուսնական բռնությանը, որը հանգեցրեց նրա որդու սպանության և իր նկատմամբ սպանության փորձի: Դիմումատուի որդու սպանության և իր նկատմամբ սպանության փորձի առնչությամբ Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում (կյանքի իրավունք): Այն, մասնավորապես, գտել է, որ դիմումատուի ներկայացրած բողոքի վերաբերյալ անհապաղ գործողություններ չձեռնարկելով, իտալական իշխանություններն անտեսել էին՝ ստեղծելով անպատժելիության իրավիճակ, որը նպաստել է բռնի գործողությունների կրկնությանը, հանգեցրել դիմումատուի սպանության փորձին և նրա որդու մահվան: Ուստի, իշխանությունները չէին կատարել գործով ներգրավված անձանց կյանքը պաշտպանելու իրենց պարտավորությունը: Դատարանը նաև որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) խախտում՝ կապված դիմումատուին ընտանեկան բռնությունից պաշտպանելու իրենց պարտավորությունների չկատարման հետ: Այս առումով, այն մասնավորապես նշել է, որ դիմումատուն իր երեխաների հետ ապրել է բռնության պայմաններում, այնքան լուրջ, որ այն կարելի է որակել դաժան վերաբերմունք, և որ իշխանությունների կողմից քրեական վարույթի իրականացման եղանակը վկայում էր դատական անգործության մասին, որն անհամատեղելի էր 3-րդ հոդվածի հետ: Ի վերջո Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի (Խտրականության արգելք) 2-րդ (Կյանքի իրավունք) և 3-րդ (Անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի արգելք) հոդվածների խախտում՝ գտնելով, որ դիմումատուն՝ որպես կին, խտրականության տուժող է՝ իշխանությունների անգործության պատճառով, որոնք թերագնահատել էին տվյալ բռնությունը և դրանով իսկ, ըստ էության, հանդուրժել էին այն:

Լևչուկն ընդդեմ Ուկրաինայի[173] [Levchuk v. Ukraine] գործը վերաբերում էր դիմումատուի բողոքին՝ առ այն, որ նախկին ամուսնու դեմ վտարման հայցի մերժումը նրան և իր երեխաներին ենթարկել է ընտանեկան բռնության և դաժան վերաբերմունքի վտանգի: Նա պնդել է, որ ներպետական դատարանները չափազանց ձևականորեն են եղել իրենց որոշումների մեջ, որի պատճառով իր նախկին ամուսնու մոտ առաջացել է անպատժելիության զգացում, ինչը նրան և իր երեխաներին կանգնեցրել է հոգեբանական բռնության և հարձակման ավելի մեծ ռիսկի առաջ: Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) խախտում՝ գտնելով, որ քաղաքացիական դատարանների պատասխանը դիմումատուի՝ նախկին ամուսնու դեմ վտարման հայցին չի համապատասխանում պետության պոզիտիվ պարտավորությանը՝ապահովել դիմումատուի արդյունավետ պաշտպանությունը ընտանեկան բռնությունից: Դատարանը, մասնավորապես, համարել է, որ ներպետական դատական իշխանությունները չեն իրականացրել իրավիճակի և դիմումատուին ու նրա երեխաներին սպառնացող հոգեբանական և ֆիզիկական բռնության ռիսկի համապարփակ վերլուծություն: Ավելին, դատավարությունը տևել է ավելի քան երկու տարի՝ դատաիրավական համակարգի երեք մակար-

170 Նույն տեղում, պարբերություն 86:

171 Նույն տեղում, պարբերություն 87:

172 Տալպիսն ընդդեմ Իտալիայի, Գանգատ թիվ 41237/14, 2017թ:

173 Լևչուկն ընդդեմ Ուկրաինայի, Գանգատ թիվ 17496/19, 2020թ:

դակներում, որի ընթացքում դիմումատուն և նրա երեխաները շարունակել են մնալ հետագա բռնության վտանգի տակ: Հետևաբար, բոլոր վտանգված մրցակցող մասնավոր շահերի միջև արդար հավասարակշռությունը չի հաստատվել:

Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի[174] [Volodina v. Russia] գործը վերաբերում էր դիմումատուի բողոքին առ այն, որ Ռուսաստանի իշխանությունները չեն կարողացել պաշտպանել նրան ընտանեկան բռնությունից, ներառյալ հարձակումներից, առևանգումից, հետամտումից և սպառնալիքներից: Նա նաև պնդել է, որ Ռուսաստանում գործող իրավական ռեժիմն թույլ չի տալիս պայքարել նման բռնությունների և կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքի նկատմամբ: Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) խախտում՝ գտնելով, որ դիմումատուն ֆիզիկական և հոգեբանական բռնության է ենթարկվել իր նախկին զուգընկերոջ կողմից, և որ ռուսական իշխանությունները չեն կատարել Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները՝պաշտպանել նրան դաժան վերաբերմունքից: Այն նաև գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի (Խտրականության արգելք) խախտում, որը կատարվել է 3-րդ հոդվածի հետ զուգակցմամբ: Այդ առնչությամբ, Դատարանը մասնավորապես նշել է, որ ընտանեկան բռնությունը ճանաչված չէ Ռուսաստանի օրենսդրության մեջ, և որ չկա այնպիսի բան, ինչպիսին է սահմանափակման կամ պաշտպանական որոշումը: Նման ձախողումները հստակ ցույց տվեցին, որ իշխանությունները դժկամությամբ են ընդունում Ռուսաստանում ընտանեկան բռնության խնդրի լրջությունը և կանանց վրա դրա խտրական ազդեցությունը:

Լուկան ընդեմ Մոլդովայի [Luca v. Republic of Moldova] [175]

Լուկան ընդդեմ Մոլդովայի հանրապետության գործով անդրադարձ է կատարվել Մոլդովայի իշխանության անկարողությանը՝ ընտանեկան բռնությունից դիմումատուին պաշտպանելու և երեխաների հետ շփման իրավունքը երաշխավորելու առումով: Ըստ դիմումատուի՝ իր ամուսինը իրեն բազմիցս ենթարկել է ֆիզիկական և հոգեկան բռնության, երեխաներին տրամադրել իր դեմ, անջատել է իր տան կոմունիկացիաները՝ դրանով իսկ անհնարին դարձնելով այդ տանն իր կեցությունը: Ֆիզիկական բռնության հերթական դեպքից հետո նա դիմել է ոստիկանությունը, սակայն ոստիկանությունը հրաժարվել է քրեական վարույթ նախաձեռնել: Ոստիկանությունը բռնարարի նկատմամբ վարչական տուգանք է կիրառել, սակայն այդ որոշումն էլ ի կատար չի ածվել՝ բռնարարի բողոքի հիման վրա դատարանի կողմից այն, դատավարական ընթացակարգի խախտումների և ոստիկանության կողմից իրավախախտման կատարման մասին վկայող ապացույցների չներկայացնելու հիմքով վերացնելու պատճառով: Դիմումատուն դիմել է դատարան՝ պաշտպանական որոշում հայցելով իր և երեխաների համար, որն էլ տրամադրվել է 90 օր ժամկետով: Սակայն ոստիկանությունը չի կարողացել ապահովել այդ որոշման պահանջների կատարումը. դիմումատուի ամուսինը բազմիցս խախտել է դրա պահանջները, սակայն ոստիկանությունը դրան ուշադրություն չի դարձրել: Հոր ազդեցության ներքո երեխաները տեղափոխվել են հոր մոտ բնակության՝ հրաժարվելով որևէ կերպ կապ պահպանել մոր հետ: Դիմումատուն խնդրել է ոստիկանությանն աջակցել իրեն երեխաների հետ կապ հաստատելու առումով, սակայն վերջիններս նշել են, որ ոչինչ անել չեն կարող, քանի որ երեխաները ցանկություն չունեն հանդիպել մոր հետ:

Պաշտպանական որոշման ժամկետը լրանալուց հետո դիմումատուն դիմել է դատարան՝ այդ որոշումը երկարաձգելու խնդրանքով, սակայն դատարանի կողմից մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ ինքը չի ներկայացրել իր ամուսու կողմից պաշտպանական որոշման պահանջները խախտելու մասին վկայող ապացույցներ: Դատարանը որպես մերժման պատճառ նշել է նաև ոստիկանության կողմից քրեական վարույթ նախաձեռնելու մերժումը, նշելով որ դա վկայում է, որ առկա է ընտանեկան վեճ և ամուսինների միջև առկա խնդիրները բռնության տարրեր չեն պարունակում:

---

174 Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի, Գանգատ թիվ 41261/17, 2019թ.:

175 Լուկան ընդեմ Մոլդովայի, Գանգատ թիվ 55351/17, 2023

Պաշտպանական որոշման ժամկետը լրանալուց անմիջապես հետո դիմումատուի ամուսինը կնոջ նկատմամբ, հենց իր իսկ տանը, կիրառել է ֆիզիկական բռնություն, ինչը հետևանքով վերջինս 8 օր ստիպված է եղել գտնվել հիվանդանոցային բուժման մեջ՝ գլխուղեղի ցնցում ախտորոշմամբ:

Դիմումատուն կրկին դիմել է պաշտպանական որոշման խնդրանքով՝ հղում կատարելով նաև ֆիզիկական բռնության նոր դեպքին, սակայն կրկին մերժում է ստացել: Դատարանը նշել է, որ ներկայացված փաստաթղթերը բավարար չեն հիմնավորելու, որ ամուսինը չի հետևել նախկինում տրված պաշտպանական որոշման պահանջներին կամ դրսևորել է ագրեսիվ վարքագիծ: Ավելին, դիմումատուի երեխաներն իրենք են հրաժարվել հանդիպել մորը, իսկ դիմումատուի կողմից ակնկալվող սահմանափակման միջոցները չափազանց ագրեսիվ և խիստ են, համաչափ չեն նման, ամուսնալուծության կամ երեխաների բնակության վայրի ընտրության վեճերի դեպքերում կիրառվող սահմանափակումներին. վերջիններս կիրառելի կլինեին ընտանիքի անդամի նկատմամբ երկար ժամանակահատվածի ընթացքում վատ վերաբերմունք, բռնություն դրսևորելու դեպքում:

ՄԻԵԴ-ը, սակայն, արձանագրեց, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի 3,8,14-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտում: Դատարանը նշեց, որ թեև հենց իր դատական նախադեպերը պահանջում են, որ որոշումներ կայացնելիս պատշաճ կերպով հաշվի առնվի երեխաների կարծիքը, սակայն դա չի նշանակում, որ դրանց չի կարելի հակադրվել և առավել ևս՝ դրանք բավարար չեն կարող լինել ծնողի շահերը, վերջինիս կողմից երեխաների հետ շփվելու իրավունքը անտեսելու համար: Երեխայի կողմից իր կարծիքն արտահայտելու իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես երեխաների կողմից, առանց այլ գործոնները հաշվի առնելու, վետո կիրառելու հնարավորություն, այլ պետք է ուսումնասիրվեն բոլոր հանգամանքները՝ երեխայի լավագույն շահն արտացոլող որոշում կայացնելու համար (տես Կ.Բ.-ն և այլոք ընդդեմ Խորվաթիայի, գանգատ համար 36216/16, 2017; Սուուրտ ընդդեմ Էստոնիայի, գանգատ համար 41736/18, 2020): ՄԻԵԴ-ը նշեց, որ Մոլդովայի իշխանությունները ձախողել են դիմումատուի նկատմամբ բռնության կրկնման ռիսկի անհապաղ, պրոակտիվ և բովանդակալից գնահատման պարտականությունը, միջոցներ չեն ձեռնարկել այդ բռնությունը կանխելու, դիմումատուին պաշտպանելու և բռնարարին պատասխանատվության ենթարկելու առումով: Չնայած սկզբում դրսևորած ժամանակին, պատշաճ արձագանքին՝ չեն կարողացել հետագայում ապահովել տարբեր կառույցների կողմից համակարգված, կանխարգելիչ վարքագիծը, վատ վերաբերմունքի լուրջ սպառնալիքի պարագայում դրսևորել են պասիվ վարքագիծ և իրենց անտարբերության ու թողտվության արդյունքում թույլ են տվել, որ բռնարարը առանց որևէ խոչընդոտի, շարունակի ոտնձգել դիմումատուի նկատմամբ:

<u>Յ.-ն և այլոք ընդդեմ Բուլղարիայի</u> [Y. and Others v. Bulgaria] [176],

Յ-ն և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործը վերաբերում է իշխանությունների անկարողությանը կանխել նախկին ամուսնու կողմից կնոջ սպանությունը: Դիմումատուները նախկին ամուսնու կողմից կիրառված հրազենային վնասվածքից մահացած, երկարատև ամիսների ընթացքում ընտանեկան բռնության ենթարկված կնոջ հարազատներ են: Սպանությանը նախորդած 2 տարիների ընթացքում տուժողը իրավասու մարմիններին տեղեկացրել է ամուսնու կողմից իրեն բազմիցս ահաբեկելու մասին, հաղորդելով նաև ամուսնու մոտ օրինական հիմքերով գտնվող հրազենի մասին: Բռնության 1-ին դեպքը առնչվում էր տուժողի մեքենայի անիվները վնասելուն, որի վերաբերյալ տուժողը հաղորդում էր ներկայացրել ոստիկանությանը՝ նշելով, որ արվածի մեջ կասկածում է նախկին ամուսնուն, քանի որ վերջինս դեպքից մի քանի օր առաջ հանդիպել է իրեն, սպառնացել զրկել կյանքից: Ոստիկանությունը դեպքի քննությունը հանձնարարել էր իր աշխատակցին՝ վերջինիս տալով 20 օր եզրակացություն կայացնելու համար: Այդ աշխատակիցն, իր հերթին, գործը մակագրել էր ոստիկանությանն այլ աշխատակցի, ով էլ մոտ մեկ ամիս անց, պարզելով որ ենթադրյալ ոտնձգողը բնակվում և աշխատում է Յամբոլում, հանձնարարեց այլ աշխատակցի կապ հաստատել Յամբոլում աշխատող ոստիկանի հետ և վերջինիս միջոցով հարցաքննել տուժողի նախկին ամուսնուն: 10 օր անց Յամբոլի ոստիկանությունից ստացվեց պատասխան, որով պար-

176 Յ-ն և այլոք ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ համար 9077/18, 2022

զաբանվում էր, որ ենթադրյալ ոտնձգողը հարցաքննության ժամանակ նշել է, որ դեպքի օրը Սոֆիայում չի եղել և տեղյալ չէ կատարվածից: Հիմնվելով այդ տեղեկատվության, ականատեսների և դեպքի վայրում տեսախցիկների բացակայության վրա, գործի համար պատասխանատու ոստիկանը որոշեց քրեական վարույթ չնախաձեռնել՝ նշելով, որ թեև կատարվածում առկա են հանցակազմի հատկանիշներ, սակայն կատարվածը իրենից էական իրավախախտում չի ներկայացնում և հանցանք չի կարող դիտվել:

Առաջին էպիզոդից ամիսներ անց տուժողը Սոֆիայի ոստիկանություն դիմեց, նշելով, որ նախկին ամուսինը հետապնդել է իրեն, հետևել՝ սկզբում մեքենայով, ապա հետևից քայլելով՝ այդ ընթացքում վիրավորելով և սպառնալով իրեն:

Տուժողը նշել է, որ վախենում է իր կյանքի համար և վախենում է մենակ կամ երեխաների հետ տանից դուրս գալ: Ոստիկանությունից 9 օր պահանջվեց տուժողի նախկին ամուսնուն գտնելու և հարցաքննելու համար: Ոստիկանությունը նախազգուշացրեց վերջինիս առկա բողոքների և դրանց հնարավոր հետևանքների մասին: Ոստիկանությունը որևէ փաստաթուղթ չկազմեց, որը կվկայեր իրենց կողմից ռիսկի գնահատում իրականացնելու մասին:

Տուժողը դիմեց դատարան՝ պաշտպանական որոշում կիրառելու հայցով և դատարանը նման որոշում կայացրեց, սակայն Ոստիկանությունը անտարբերություն դրսևորեց դրա պահանջների կիրառումն ապահովելու առումով: Մոտ 10 օր պահանջվեց, մինչ այդ որոշման օրինակները հասան ոստիկանություն, իսկ Սոֆիայի տարածքային ոստիկանություն դրանք այդպես էլ չհասան:

Պաշտպանական որոշում կայացնելուց ամիսներ անց տուժողը ոստիկանությանը տեղեկացրեց կիրառված որոշման պահանջները իր նախկին ամուսնու կողմից խախտելու մասին: Տուժողի պնդմամբ վերջինս իրենց հետապնդել էր մեքենայով, վախեցրել: Ոստիկանությունը տուժողին առաջարկեց գրավոր բողոք ներկայացնել, ինչն էլ տուժողը հաջորդ օրն արեց, սակայն ժամեր անց մահացավ նախկին ամուսնու կողմից հրազենից արձակված կրակոցի հետևանքով ստացված վնասվածքից:

ՄԻԵԴ-ը արձանագրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում: Այն նշեց, որ ռիսկի գնահատում չի իրականացվել, որը ցույց կտար տուժողի կյանքի համար առկա իրական սպառնալիքը և վեր կհաներ անհետաձգելի միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը: Գործի քննության ընթացքում Բուլղարիայի ոստիկանությունը չի ստուգել, թե արդյոք բռնարարը հրազեն ունի, թե ոչ, քայլեր չի ձեռնարկել այն առգրավելու կամ հնարավոր բռնությունը այլ կերպ կանխելու ուղղությամբ: Դատարանը նշեց, որ սպանությունը չկանխելը պայմանավորված է իրավասու մարմինների ծատռայողների հատուկ վերապատրաստման թերացումներով և կանխարգելման միջոցառումներ իրականացնելու առումով համակարգված մոտեցման բացակայությամբ: Գործի հանգամանքներիկց երևում է, որ ոստիկանության աշխատակիցները հատուկ պատրաստվածություն չեն ունեցել ընտանեկան բռնության դինամիկ բնույթը ընկալելու և դրան արձագանքելու առումով, ինչի կարիքը բազմիցս նշվել է ՄԻԵԴ դատական պրակտիկայում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Միջազգային չափանիշները և ուղեցուցային սկզբունքները

Միջազգային իրավունքի համաձայն՝ ընտանեկան բռնությունը համարվում է.

- կանանց նկատմամբ խտրականություն և կանանց իրավունքների խախտում.
- խոշտանգում մասնավոր կյանքում.
- կյանքի/կյանքի որակի և ընտանեկան կյանքի իրավունքի խախտում *:

Ընտանեկան բռնության վերահսկողության ուղենիշային սկզբունքները

- խտրականությունից զերծ մնալը.
- կանանց նկատմամբ բռնության դրսևորում հանդիսացող արարքների նկատմամբ բացարձակ անհանդուրժողականություն.
- բռնություն գործադրած անձի վրա կենտրոնացած մոտեցում, որի պարագայում նա պատասխանատվություն է կրում բռնության համար.
- տուժողների և նրանց երեխաների պաշտպանություն և անվտանգություն.
- «մի՛ վնասիր» տուժողներին (կանխել բռնարարի, պետական և հանրային կառույցների, ընտանիքի և համայնքների կողմից տուժողներին հետագա վնաս հասցնելուց, երկրորդային վիկտիմիզացիայից, հասարակական պարսավանքից).
- զոհակենտրոն մոտեցում և տուժողների իրավազորում (տուժողներին լսում են և հավատում, տեղեկացնում իրենց իրավունքների մասին, հարգվում են նրանց որոշումները, և արժևորվում նրանց փորձառությունները, ակտիվ աջակցություն է ցուցաբերվում նրանց կարիքների և իրավունքների իրականացմանը)
- գենդերազգայուն վերահսկում

Անհատական իրավունքներ, որոնց պահպանումը հատկապես կարևոր է ընտանեկան բռնության տուժողների համար.

- Առանց բռնության կյանքի իրավունք.
- Կյանքի և անձնական անձեռնմխելիության իրավունք.
- Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք.
- Գաղտնիության և տվյալների պաշտպանության իրավունք.
- Միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների ժամանակ մարդասիրական նորմերի համաձայն հավասար պաշտպանության իրավունք.
- Անձի ազատության և անվտանգության իրավունք.
- Օրենքով հավասար պաշտպանված լինելու իրավունք.
- Արդարադատության մատչելիության իրավունք.
- Ընտանիքում հավասարության իրավունք.
- Ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր չափանիշի իրավունք:

** Մեջբերված է՝ Բալդրի Ա.Ն. և Դուբան Է.էջ 25:*[177]

177 Բալդրի Ա.Ն. ևԴուբան Է. (2016թ.) «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում իրավապահ մարմինների և արդարադատության ծառայողների արդյունավետության բարձրացում. դասընթացավարների վերապատրաստման ձեռնարկ»: Եվրոպայի խորհուրդ:

3.2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ՝ ՕՐԵՆՔՆԵՐ, ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետությունների կողմից փոխհամաձայնեցված միջազգային իրավական փաստաթղթերը նրանց պարտավորեցնում են ամրագրել կանանց իրավունքները, պաշտպանել դրանք և վերացնել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը: Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է տարբեր միջազգային փաստաթղթեր և, հետևաբար, ունի միջազգային պարտավորություններ կանանց պաշտպանության և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ.

1. **1993 թվականի հունիսի 23-ին Հայաստանը վավերացրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը:** Համաձայն Դաշնագրի 3-րդ հոդվածի. «Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել սույն դաշնագրով սահմանված բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու տղամարդկանց և կանանց հավասար իրավունքը»[178]:
2. **1993 թ. սեպտեմբերի 13-ին Հայաստանը վավերացրել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը,** որը պարտավորեցնում է մասնակից պետություններին ապահովել տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները՝ օգտվելու դաշնագրով սահմանված բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից (հոդված 3)[179]:
3. **1993 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանը վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան[180].** Համաձայն Կոնվենցիայի թ-րդ հոդվածի. «Մասնակից պետությունները դատապարտում են կանանց նկատմամբ խտրականությունն իր բոլոր ձևերով, համաձայնում են բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու վարել կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն և այդ նպատակով պարտավորվում են.

   ա) տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքն ամրագրել իրենց ազգային սահմանադրություններում կամ համապատասխան օրենսդրության մեջ, եթե այն դեռևս ամրագրված չէ, և օրենսդրության ու այլ համապատասխան միջոցների օգնությամբ ապահովել այդ սկզբունքի գործնական իրականացումը,

   բ) ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են,

   գ) սահմանել տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքների իրավական պաշտպանություն և իրավասու ներպետական ատյանների ու պետական այլ հաստատությունների օգնությամբ ապահովել կանանց պաշտպանությունն ընդդեմ խտրականության ցանկացած դրսևորման,

   դ) ձեռնպահ մնալ կանանց նկատմամբ խտրականության որևէ արարքի կամ պրակտիկայի մեջ ներգրավվելուց և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները կգործեն այդ պարտավորությանը համապատասխան,

178 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 3, 1966թ. https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx

179 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 3, 1966թ. https://www.ohchr.org/EN/professionalinterest/pages/cescr.aspx

180 Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1979թ. https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/ԿՆԽՎԿ.aspx

ե) ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու ցանկացած անձի, կազմակերպության կամ կառույցի կողմից կանանց նկատմամբ դրսևորվող խտրականությունը,

զ) ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական, միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ,

է) վերացնել ներպետական քրեական օրենսդրության բոլոր այն դրույթները, որոնք խտրականություն են ներկայացնում կանանց նկատմամբ:

1. **2008 թ. Հունվարի 24-ին Հայաստանը վավերացրեց ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան,** որը սահմանում է կանանց՝ բոլոր ընտրություններում քվեարկելու, հանրային ընտրված բոլոր մարմիններում ընտրվելու իրավունք ունենալու և պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքները, որոնք սահմանված են ազգային օրենսդրությամբ՝ տղամարդկանց հետ հավասար պայմաններով, առանց որևէ խտրականության[181]:

2. **2010 թ. սեպտեմբերի 22-ին Հայաստանը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան**[182]: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պարտավորեցնում է մասնակից պետություններին. 1) գիտակցել, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի, և այս նպատակով միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար նրանց՝ մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից լիակատար և հավասար օգտվելը: 2) ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները ապահովելու համար կանանց լիակատար զարգացումը, առաջխաղացումը և հնարավորությունների մեծացումը, նպատակ ունենալով երաշխավորել նրանց՝ սույն Կոնվենցիայում ամրագրված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգտվելը:

3. **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ) Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ին:** Այն մարդու իրավունքների եվրոպական հիմնական պայմանագիրն է. Կոնվենցիայի 1-ին հոդվածը երաշխավորում է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների իրավասության ներքո բոլորի իրավունքներն ու ազատությունները: Սեռի հիման վրա խտրականության արգելման սկզբունքը երաշխավորված է ինչպես Կոնվենցիայի 14-րդ հոդվածով, այնպես էլ թիվ 12 արձանագրությամբ: Համաձայն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի. «Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, աղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից կամ այլ դրությունից»[183]:

4. **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 12 արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել Հայաստանի համար 2005թ. ապրիլի 1-ին,** նախատեսում է խտրականության ընդհանուր արգելք: **Համաձայն** արձանագրության 1-ին հոդվածի. «օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգտվելը պետք է ապահովվի առանց որևէ հիմքով խտրականության, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամաս-

181 Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա, 1953թ., Նյու Յորք: https://treaties.un.org/doc/Treaties/1954/07/19540707%2000-40%20AM/Ch_XVI_1p.pdf

182 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, 2006թ., Նյու Յորք: https://treaties.un.org/doc/Publication/CTC/Ch_IV_15.pdf

183 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա, Եվրոպայի խորհուրդ. https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/0900001680063765

նություն լինելը, ունեցվածքը, ծնունդը կամ այլ հանգամանքները»[184]:

5. **Հայաստանի կողմից 2004 թ. հունվարի 21-ին վավերացված Եվրոպական սոցիալական խարտիայի** վերանայված տարբերակի 20-րդ հոդվածում ամրագրվում է հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը՝ աշխատանքի և զբաղվածության հարցերում՝ առանց սեռի հիման վրա խտրականության: Խարտիայի 5-րդ մասի «Ե» հոդվածը սահմանում է, որ Կանոնադրությամբ սահմանված իրավունքներից օգտվելն ապահովված է առանց խտրականության[185]:

6. **Եվրոպայի խորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարի մասին» կոնվենցիան Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:** Կոնվենցիայի 3-րդ հոդվածը ամրագրում է Կոնվենցիայի դրույթների իրականացման գործընթացում խտրականության չկիրառման սկզբունքը[186]: Կոնվենցիան նպատակ ունի կանխել և պայքարել սեռական, աշխատանքային և այլ տեսակի շահագործման նպատակով կանանց, տղամարդկանց և երեխաների թրաֆիքինգի դեմ:

7. 2020 թվականի մայիսի 11-ին Հայաստանը վավերացրեց **Եվրոպայի խորհրդի՝ սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիան** (այսուհետ՝ Լանզարոտեի կոնվենցիա)[187]: Այն ամբողջովին կենտրոնանում է երեխաների իրավունքների հարգման, բարեկեցության ապահովման, նրանց տեսակետներին, կարիքներին և մտահոգություններին արձագանքելու վրա՝ ելնելով բացառապես նրանց շահերից: Լանզարոտեի կոնվենցիայի նպատակներն են՝ կանխել երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և սեռական բռնությունը, պայքարել դրանցդեմ, պաշտպանել սեռական շահագործման և սեռական բռնության ենթարկված երեխաների իրավունքները, խթանել ազգային և միջազգային համագործակցությունը երեխաների դեմ սեռական շահագործման և սեռական բռնության դեմ պայքարում[188]: Լանզարոտեի կոնվենցիան պետություններից պահանջում է ձեռնարկել կրթական, պաշտպանական, քրեաիրավական միջոցառումներ, երեխաների կարիքներին միտված քննչական և դատական ընթացակարգեր և մոնիթորինգ:

Հայաստանը նաև ստորագրել է Պեկինի գործողությունների հարթակը (1995թ.), որը նախատեսում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և անկապտելի մարդկային արժանապատվությունը, վերահաստատում է կանանց և աղջիկ երեխաների իրավունքների լիարժեք իրականացումը՝որպես մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների անքակտելի, անբաժանելի և լիակատար մաս[189]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականները քննարկվում են Հայաստանի կողմից և առաջնորդում բոլոր մասնակից պետություններին. ՀԼՄ-ներում տղամարդու և կնոջ հավասարության վերաբերյալ թիվ R(84)17 հանձնարարականը[190], Սեռական խտրականությունից իրավական պաշտպանության վերաբերյալ թիվ R(85)2 հանձնարարականը[191], Ընտանիքում բռնության վերաբերյալ թիվ R (85) 4 հանձնարարականը[192], Աշխատանքը և ընտանեկան

---

184 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 12 արձանագրություն. https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/0900001680080622

185 Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված). https://rm.coe.int/168007cf93

186 Մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա.https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/090000168008371d

187 CETS 201 – Երեխաների պաշտպանությունը սեռական շահագործումից և սեռական չարաշահումից, 25.X.2007: https://rm.coe.int/1680084822

188 Նույն տեղում:

189 Պեկինի գործողությունների հարթակ (1995): http://www.un.am/up/file/Beijing%20Declaration%20and%20Plan%20of%20Action_eng.pdf

190 https://rm.coe.int/16804ec678

191 https://rm.coe.int/168058ff43

192 https://rm.coe.int/16804f120d

կյանքը համատեղելու վերաբերյալ թիվ R(96)5 հանձնարարականը[193], Գենդերային ինտեգրման վերաբերյալ թիվ R(98)14 հանձնարարականը[194], Կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ թիվ R(2002)5 հանձնարարականը[195], Քաղաքական և հասարակական որոշումների կայացման գործում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության վերաբերյալ թիվ R(2003)3 հանձնարարականը[196], գենդերային հավասարության չափանիշների և մեխանիզմների վերաբերյալ թիվ Rec(2007)17 հանձնարարականը[197] անդրադառնում են բռնության հետ կապված խնդիրներին և վճռական դեր ունեն ազգային մակարդակում:

Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի «Հայաստանյան ամփոփագիր զեկույցում [198] ընդգծվեց հավասարության և խտրականության դեմ պայքարի կարևորությունը և ԿԽՎԿ-ի մտահոգությունը ընտանիքում և հասարակությունում կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների հարցում խտրական կարծրատիպերի պահպանման վերաբերյալ[199]:

Այն նաև շեշտեց Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի մտահոգությունը, որ ընտանեկան բռնությունը դեռևս տարածված է: Այն առաջարկեց Հայաստանին ուժեղացնել ջանքերը՝ կանխելու և պայքարելու ընտանեկան բռնության դեմ, այդ թվում՝ առանց անհարկի ձգձգման ընդունելով ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենք և ապահովելով դրա արդյունավետ իրականացումը: Այն նաև խորհուրդ տվեց, որ ընտանեկան բռնության բոլոր դեպքերը անհապաղ և մանրակրկիտ քննվեն, կատարողները ենթարկվեն քրեական պատասխանատվության և, դատապարտվելու դեպքում, պատժվեն արդյունավետ և համաչափ պատժամիջոցներով, ինչպես նաև որ տուժողներին հասանելի լինեն պաշտպանության և փոխհատուցման միջոցները, ներառյալ բավարար, անվտանգ և պատշաճորեն ֆինանսավորվող կացարանները, ինչպես նաև բժշկական, սոցիալական, իրավական և այլ աջակցության ծառայությունները[200]:

2018 թվականի հունվարի 18-ին Հայաստանը ստորագրեց Եվրոպայի խորհրդի՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիան[201] **՝ այն վավերացնելու մտադրությամբ: Կ**ոնվենցիան լայնորեն ճանաչված է որպես կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ամենաընդգրկուն միջազգային գործիքը դրա բազմաթիվ ձևերով: Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի

193 https://rm.coe.int/16804d4ea1

194 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804ec94a

195 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612

196 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805e0848

197 https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805d4aa3

198 Համընդհանուր պարբերական դիտարկումը (ՀՊԴ) եզակի գործընթաց է, որը ներառում է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների մարդու իրավունքների վերաբերյալ տվյալների ուսումնասիրություն: ՀՊԴ-ն պետության նախաձեռնությամբ, Մարդու իրավունքների խորհրդի հովանու ներքո իրականացվող գործընթաց է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր պետության հայտարարելու, թե ինչ քայլեր են ձեռնարկել իրենց երկրներում մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու և մարդու իրավունքների վերաբերյալ իրենց պարտավորությունները կատարելու համար: Հանդիսանալով խորհրդի հիմնական գործառույթներից մեկը, ՀՊԴ-ն կոչված է մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը գնահատելիս ապահովել հավասար վերաբերմունք: Այս մեխանիզմի վերջնական նպատակն է բարելավել մարդու իրավունքների վիճակը բոլոր երկրներում և անդրադառնալ մարդու իրավունքների ոտնահարումներին, որտեղ էլ դրանք տեղի ունենան: Ներկայումս նման այլ ունիվերսալ մեխանիզմ գոյություն չունի:

199 Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի զեկույց «Հայաստանյան ամփոփագիր», պարբերություն 19. https://undocs.org/A/HRC/WG.6/35/ARM/2

200 Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի զեկույց «Հայաստանյան ամփոփագիր», պարբերություն 78: https://undocs.org/A/HRC/WG.6/35/ARM/2

201 Կոնվենցիայի 78 հոդվածի 2-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը իրեն իրավունք է վերապահում չկիրառել Կոնվենցիայի դրույթները՝ 30 -րդ հոդվածի 2 -րդ կետի, 35 -րդ հոդվածի՝ փոքր իրավախախտումների առնչությամբ 55-րդ հոդվածի 1-ին կետի, 37 -րդ հոդվածի առնչությամբ 58-րդ հոդվածի և 59-րդ հոդվածի մասով: Ազդակիր հոդվածներ՝ 78, 59, 58, 55, 35, 30: https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210/declarations?p_auth=4ebx9lxL

անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ զգուշավորություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված այն բռնարարքները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու ուղղությամբ, որոնք մտնում են սույն Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ: Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 7-րդ հոդվածը նախատեսում է, որ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի 1-ին մասում նշված քաղաքականությունները տուժողի իրավունքները դիտարկեն որպես բոլոր միջոցների կենտրոնում գտնվող և իրականացվեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով: Այդ հոդվածի ներքո ձեռնարկված բոլոր միջոցառումները պետք է ընդգրկեն բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական գերատեսչությունները, համապետական, տարածքային և տեղական խորհրդարանները և կառավարման մարմինները, մարդու իրավունքների ազգային կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները Կոնվենցիայի 19-րդ հոդվածը նախատեսում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուժողները, իրենց համար հասկանալի լեզվով, համարժեք և ժամանակին տեղեկատվություն ստանան գոյություն ունեցող աջակցության և իրավաբանական ծառայությունների մասին:

Կանանց իրավազորումը և կանանց նկատմամբ բռնության վերացումը **ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների մի մասն են**: **5-րդ նպատակը գենդերային հավասարության հասնելն է:** Հայաստանի կառավարությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացումը դիտարկում է որպես Հայաստանում մեկնարկած համապարփակ ներքին բարեփոխումների իրականացման կարևորագույն գործիքներից մեկը:

Օրենքի առջև հավասարությունը և խտրականությունից զերծ մնալը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներն են: ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն բոլորը հավասար են օրենքի առջև: 29-րդ հոդվածը սահմանում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը լրացուցիչ սահմանվում է ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 2015 թվականի փոփոխություններով[202]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:** Նաև **միջազգային պայմանագրերի մասին օրենքի** 5-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է վավերացված պայմանագրերի ուղղակի իրավակիրառում: Այն սահմանում է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նորմերը Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են անմիջականորեն»: Դատավարության օրենսգրքերը նույնպես ընդգծում են, որ վավերացված միջազգային պայմանագրերը հանդիսանում են դատավարական օրենսդրության մաս:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածը կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը սահմանում է որպես պետական քաղաքականության «հիմնական նպատակ»: Կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման երաշխիքները սահմանված են նաև 2013թ. **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում:**

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսա-

202 Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ. http://www.concourt.am/armenian/constitutions/index2015.htm

կան, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները: Այն նաև սահմանում է հասարակական կյանքի ոլորտներում գենդերային ուղղակի և անուղղակի խտրականության արգելքը, ինչպես նաև ուղղակի և անուղղակի խտրականության ձևերը, հասարակական կյանքի ոլորտներում գենդերային ուղղակի և անուղղակի խտրականության արգելքը և գենդերային ուղղակի և անուղղակի խտրականության ձևերը, սահմանում է օրենքի կատարման իրավական երաշխիքները և կարգավորում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրականացման ֆինանսավորման հետ կապված իրավական հարաբերությունները:

Ընդհանրապես, չնայած ազգային օրենսդրությունում գենդերային հավասարություն ապահովելու ՀՀ ջանքերին, օրենսդրության և իրականացման միջև բացը դեռևս պահպանվում է, և գենդերային անհավասարությունը դեռ սոցիալապես ընդունված կամ հանդուրժելի է: Դա հատկապես վերաբերում է գյուղական վայրերին, որտեղ գենդերային անհավասարությունը պատմականորեն ավելի արմատավորված է, ինչը դժվարացնում է հավասարության հասնելուն ուղղված բարեփոխումների իրականացումը:

3.2.1. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2017 թվականին ՀՀ-ն ընդունեց «**Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին**» օրենքը (այսուհետ՝ Ընտանեկան բռնության մասին օրենք): Օրենքի կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպահիրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում բռնության հասկացությունը, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները: Ընտանեկան բռնության մասին օրենքը ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի, ընտանեկան բռնության տուժողներին պաշտպանելու և ոտնձգողներին պատժելու հենանիշային գործիք է: Սակայն, այն նույնպես թերություններ ունի, օրինակ՝ գենդերազգայուն մոտեցման բացակայություն:

Ընտանեկան բռնության մասին օրենքը ոստիկանության համար պարտավորություններ է սահմանում՝ կանխելու ընտանեկան բռնությունը և պաշտպանելու տուժողներին: Օրենքը նաև պահանջում է, որ պետությունը բռնության ենթարկված անձանց համար ստեղծի ապաստարաններ, նրանց տրամադրի անվճար բուժօգնություն և կանոնավոր դասընթացներ անցկացնի ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ աշխատող բոլոր մասնագետների, այդ թվում՝ ոստիկանության աշխատակիցների համար: Օրենքը կարգավորում է ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը և, ի թիվս այլ բաների, պահանջում է բարձրացնել իրազեկվածությունը ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ: Ընտանեկան բռնության մասին օրենքը ոստիկանության համար զգալի միջոցներ է նախատեսում ընտանեկան բռնության դեմ պայքարի համար, մասնավորապես այն նախատեսում է ինչպես անհետաձգելի միջամտության որոշումներ (հոդված 7), այնպես էլ ավելի երկար ժամկետով պաշտպանության որոշումներ (հոդված 8), ինչպես նախատեսված է Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով:

Ընտանեկան բռնության սահմանումը հայաստանյան օրենքներում

Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև: Ընտանիքում բռնության տեսակներն են՝

1. **Ֆիզիկական բռնություն**՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ֆիզիկական ներգործությունը, առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, անձի կամքին հակառակ կամ դրանք անտեսելով այլ բռնի արարքները: . **Նշում.** Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը պարունակել են մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի՝ ծեծի հատկանիշներ[203]: Քրեական նախկին օրենսգիրքը ծեծը սահմանում էր որպես բռնի գործողությունների կատարում, որոնք չեն առաջացրել 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, այն է՝ անձի առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելը: Հիմնվելով այդ իրավակարգավորման վրա՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «ծեծը տուժողին հասցված բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ են, որոնք հանգեցրել են ֆիզիկական ցավի»[204]:

Հանցավոր արարքի (actus reus) նման սահմանումը հնարավորություն չէր տալիս արձագանքել ընտանեկան բռնության առավել հաճախ հանդիպող դրսևորումներին, մասնավորապես երբ տեղի են ունենում մեկ բռնության դրսևորում հանդիսացող եզակի արարքներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցված հանցակազմ կարող է և չպարունակել (օրինակ՝ մեկ ապտակը):[205]

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված և 2022 թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրքը քրեորեն պատժելի է համարում ոչ միայն ֆիզիկական ներգործությունը, ինչը ենթադրում է հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել անձի առողջությանը վնաս պատճառելու համար նախատեսված հետևանքները, այնպես էլ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառել: Նման մոտեցումը թույլ է տալիս արձագանքել նաև բռնության եզակի դրսևորում հանդիսացող, սակայն անձին ֆիզիկական ուժեղ ցավ պատճառող դեպքերին:

2. **Սեռական բռնություն՝** սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Ծանոթագրություն. Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության քրեական նախկին օրենսգրքի, որը սեռական բռնությունը սահմանելիս կիրառում էր ոչ թե ՄԻԵԴ-ի իրավակիրառ պրակտիկայում առավել ընդունելի դիտարկվող «համաձայնության բացակայության», այլ «վնասի վրա հիմնված մոտեցումը», ՀՀ գործող քրեական օրենսգիրքը առանձին կարևորություն է տալիս սեռական ոտնձգություն կատարելիս տուժողի կամքին հակառակ գործելուն կամ նրա կամքը անտեսելուն[206]: Բռնաբարությունը Հայաստանում քրեորեն պատժելի արարք է, որի համար պատասխանատվություն է սահմանվում ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածով՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ: Թեև ոչ բացահայտորեն, այն ներառում էամուսնական հարաբերություններում ամուսնու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով կատարված սեքսուալ գործողությունները:

---

203 Եվրոպայի խորհուրդ, Հայաստանի քրեական իրավունքի բացթողումների վերլուծություն `ԵԽ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի և ընտանեկան բռնության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի սահմանած չափանիշների հիման վրա, էջ 21. https://rm.coe.int/gap-analysis-armenian-law-eng/168075bac2.

204 Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշում, Արևիկ և Ծովինար Սահակյանների գործը, 1 նոյեմբերի 2012թ., պարբերություն 18.

205 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն, պատրաստել է Խավիեր Տրուչերոն՝ Ա.Ուրրուտիայի և Լ.Սարգսյանի հետ համատեղ, էջ.21:

206 Նույն տեղում, էջ 7.

Այս հանցակազմը ներառում է ինչպես սեռական հարաբերությունը՝ ենթադրելով տղամարդու և կնոջ միջև սեքսուալ ներթափանցման ապացույց, այնպես էլ սեքսուալ բնույթի այլ գործողությունների կատարումը: Երկրորդ, այն ենթադրում է, որ արարքը կատարվել է տուժողի կամքին հակառակ՝ առանց նրա համաձայնության կամ կամքն անտեսելով: Ընդ որում, այս հանցակազմը պատասխանատվություն է սահմանում ինչպես տարբեր սեռերի, այնպես էլ նույն սեռի անձանց միջև սեքսուալ ոտնձգությունների համար:

Հանցանքը պարունակում է նաև երրորդ հատկորոշող տարրը. բռնարարը պետք է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրի կամ օգտվի տուժողի անօգնական վիճակից:

Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [M.C. v. Bulgaria] գործում Դատարանը գտել է, որ **համապատասխան մարմինները բավարար կերպով չեն քննել բռնաբարության հարակից և համատեքստային հանգամանքները՝ «շեշտն անհարկի դնելով բռնաբարության «ուղղակի» ապացույցի», այն է՝ ուժի և սպառնալիքի տարրերի վրա, ինչպես պահանջվում էր ազգային օրենսդրությամբ**՝ և «ըստ էության [տուժողի] «դիմադրությունը» վերածելով հանցանքը հատկորոշող տարրի»[207]: Դատարանն ամենամեծ շեշտը դրել է **համաձայնության բացակայության վրա՝ որպես բռնաբարության դեպքերում հանցանքը հատկորոշող տարր**՝ մեջբերելով բազմաթիվ եվրոպական պետությունների քրեական օրենսդրությունը, ինչպես նաև Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (ՆՀՄՔՏ) դատական պրակտիկան: Դատարանը նշել է. «չնայած բռնաբարության այնպիսի «ուղղակի» ապացույցների բացակայության պայմաններում, ինչպիսիք են բռնության հետքերը կամ ականատես վկաները, համաձայնության բացակայությունն ապացուցելը երբեմն կարող է գործնականում բարդ լինել, այնուամենայնիվ, համապատասխան մարմինները պետք է վեր հանեն բոլոր փաստերը և որոշում կայացնեն հարակից բոլոր հանգամանքների գնահատման հիման վրա: Քննությունը և դրա եզրակացությունները պետք է կենտրոնանան համաձայնության բացակայության խնդրի վրա»[208]:

3. **Հոգեբանական բռնություն՝** Ընտանեկան բռնության մասին օրենքում սահմանված է որպես դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի արարքներ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

Ծանոթագրություն. 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվութուն է սահմանել հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումների համար: Նախ՝ օրենսգրքի 196-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար, եթե անձի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս չի պատճառվել և խոշտանգման հատկանիշներ չունի:

Այս դրույթի արդյունավետ կիրառմանը խոչընդոտում է քրեական օրենսգրքում հոգեկան տառապանք հասկացության չբացահայտումը, իսկ 196-րդ հոդվածում բացակայում է որևէ անդրադարձ այն միջոցներին կամ գործողություններին, որոնք հանցավորը կարող է կիրառել՝ տուժողի տառապանքին հասնելու համար: Նման անորոշությունը խոչընդոտում է այս դրույթի արդյունավետ կիրառմանը, հատկապես դրանց հանցափորձերի դեմ պայքարի առումով[209]: 196-րդ հոդվածը ընդգրկում է նաև ծանրացուցիչ հանգամանքները, մասնավորապես՝ խտրական շարժառիթները, ինչպիսիք են, ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայ-

207 Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 39272/98, 2004, պարբերություն 182:

208 Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 39272/98, 2004, պարբերություն 181:

209 Քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածը ներառում է հանցափորձը:

մանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթը: Գենդերային հիմքով խտրականությունը որպես ծանրացուցիչ հանգամանք այստեղ արդեն իսկ արտացոլված է: Հարկ է նաև նշել, որ Քրեական օրենսգիրքը նախատեսում է հարկադրանքի քրեականացում. մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելու համար, այն է՝ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, շանտաժի, արժանապատվությունը նվաստացնելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ հարկադրանքի այլ եղանակով անձին ամուսնությանը կամ ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելը:

199-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու համար, այն է՝ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի կամ նույն եղանակներով նրան սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, եթե բացակայում են մարդու, այդ թվում՝ երեխայի թրաֆիքինգի հանցանքների հատկանիշները:

245-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում որդեգրման համաձայնություն տալուն հակելու կամ հարկադրելու 250-րդ հոդվածը՝ ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելու կամ հարկադրելու համար, այն է՝ հորդորելու, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ այլ եղանակով անձին ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը:

260-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու համար, այն է՝ անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել, եթե բացակայում են շորթման կամ հափշտակության հատկանիշները, և որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով:

176-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելու համար՝ բռնություն գործադրելով, դա գործադրելու սպառնալիքով, շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով:

194-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում հոգեկան ներգործության համար, այն է՝ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացման կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու համար:

162-րդ հոդվածով քրեականացվում է նաև ինքնասպանության հասցնելը:

4. **Տնտեսական բռնություն՝** Ընտանեկան բռնության մասին օրենքում սահմանված է որպես անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

Ծանոթագրություն. Հայաստանի քրեական օրենսգրքում չկան դրույթներ, որոնք քրեականացնում են ընտանեկան բռնության համատեքստում տեղի ունեցող տնտեսական բռնության ձևերը: Բացի այդ պատասխանատվություն նախատեսված չէ պաշտպանական այն որոշումների խախտման համար, որոնք տնից հեռացված իրավախախտների վրա դրել են ալիմենտի վճարման պահանջ : Հայաստանում տնտեսական բռնությունը կարող է իրականացվել հարաբերական անպատժելիությամբ[210]:

5. **Անտեսում՝** Ընտանեկան բռնության մասին օրենքում սահմանված է որպես ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Հայաստանի օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանված չէ աշխատավայրում, հասարակական վայրերում կամ կրթության ոլորտում սեքսուալ հետամտման կամ հետապնդման համար: ՀՀ քրեական օրենսգրքում կանանց նկատմամբ բռնությունը կամ ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցանքներ ներառված չեն:

Այնուհանդերձ, 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքում, հանցանքների, այդ թվում՝ ընտանեկան բռնության դրսևորում հանդիսացող հանցավոր ոտնձգությունների պարագայում, որպես ծանրացնող հանգամանք է դիտարկվում հանցանքի կատարումը մերձավոր ազգականի կողմից: ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 18-րդ կետը սահմանում է մերձավոր ազգականի հասկացությունը, այն է՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան բռնության մասին օրենքի 13-րդ հոդվածում սահմանված են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցները, որոնց թվում է ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը: 13-րդ հոդված 2-րդ մասով նախատեսվում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանիքում բռնության

210 Լորի Ման ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքում և ոստիկանության համապատասխան հրամանների վերլուծություն և առաջարկություններ»), 19 փետրվարի 2019թ., Եվրոպայի խորհուրդ, էջ 7:

դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են Լիազոր մարմնի հետ[211]:

Ընտանեկան բռնության մասին օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում: Այս լիազորությունները ներառում են նաև իրենց իրավունքների, ինչպես նաև՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար հասանելի ծառայությունների մասին տուժողներին տեղեկացնելը (Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ինչպես նաև օրենքով նախատեսված երկու պաշտպանական որոշումների կիրառումը: Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունն իրավունք ունի կիրառել ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության երեք միջոցներից երկուսը՝ նախազգուշացումները և անհետաձգելի միջամտության որոշումները: Պաշտպանական որոշումները կիրառվում են դատարանի որոշման հիման վրա: 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ պաշտպանության միջոցների կիրառման մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Պաշտպանության միջոցները կիրառվում են՝ առաջնորդվելով Ընտանեկան բռնության մասին օրենքով սահմանված սկզբունքներով և ապահովելով միջամտության համաչափությունը: Դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելուն և քրեական հետապնդում իրականացնելուն: Այս դրույթը նշանակում է, որ պաշտպանություն տրամադրելը կապված չէ քրեական հետապնդման հետ: Տուժողի անվտանգությունն ու պաշտպանությունը միշտ պետք է ապահովվի:

Ընտանեկան բռնության մասին օրենքը նախատեսում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց հասանելի պաշտպանության հետևյալ միջոցները (հոդված 5).

- **Նախազգուշացումը** կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում (հոդված 6):
- **Անհետաձգելի միջամտության որոշումը (այսուհետ՝ ԱՄՈ)** կայացվում է իրավասու ոստիկանության ծառայողի կողմից: Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ**:** . Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Եթե անհետաձգելի որոշման գործողության ընթացքում դատարանը քննում է պաշտպանական որոշման դիմում, ապա այն ուժի մեջ է մնում մինչև դատարանի կողմից որոշում կայացվելը (հոդված 7):
- **Պաշտպանական որոշում.** Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու

211 Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Լիազոր մարմինը սոցիալական հարցերի համար պատասխանատու ազգային գործադիր մարմինն է, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

հոգաբարձության մարմինը: Անհետաձգելի միջամտության որոշման ուժի մեջ լինելը չի բացառում պաշտպանական որոշման համար դիմելու հնարավորությունը: Պաշտպանական որոշումը կայացվում է ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ եղող անձանց պաշտպանելու և ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով: Պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով: (հոդված 8):

Կրկին, հարկ էփաստել, որ այդ միջոցների կիրառումը կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելուն և քրեական հետապնդում իրականացնելուն:

Այսպիսով, Ընտանեկան բռնության մասին օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է՝ նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Այս ձևակերպումն որոշակիորեն հակասության մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի և ընտանեկան բռնության մասին կոնվենցիայի պահանջի հետ, այն է՝ պաշտպանական որոշում կայացնելի՝ առանց հղում կատարելու իրավախախտման կատարմանը: Ի հակադրություն դրա՝ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կայացումը չի պահանջում, որ հանցանք կատարված լինի::

Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի գործով [V.K. v. Bulgaria] պետական մարմինները մերժել են տուժողի՝ պաշտպանական որոշման պահանջը, քանի որ տվյալ բռնությունը՝ «հարվածելը», չէր բավարարում ազգային օրենսդրությամբ պահանջվող շեմը: Ազգային դատարանը նշել էր. «հարվածելը, ինչպես նկարագրված է, կապված չէ հայցվորի ֆիզիկական [անձեռնմխելիության] խախտման հետ: ...Որևէ մեկին հարվածելով՝ կարող ես բռնություն գործադրել, սակայն միայն այն բանից հետո, երբ խախտվել են ոտնձգություն կատարելու որոշակի սահմաններ:»: ԿՆԽՎ կոմիտեն հիշեցրել է, որ գենդերային հիմքով բռնությունը «չի սահմանափակվում այնպիսի արարքներով, որոնցով պատճառվում է ֆիզիկական վնաս, այլև ներառում է այնպիսի արարքներ, որոնցով պատճառվում է մտավոր կամ սեռական վնաս կամ տառապանք, այդպիսի արարքներ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից այլ կերպ զրկելը», և գտել է, որ ազգային «դատարաններն ուշադրությունը կենտրոնացրել են բացառապես դիմումատուի կյանքին կամ առողջությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն սպառնացող վտանգի և նրա ֆիզիկական անձեռնմխելիության հարցի վրա՝ անտեսելով նրա հուզական և հոգեբանական տառապանքները»[212]:

Ընտանեկան բռնության մասին օրենքը նաև նախատեսում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության այլ միջոցներ. 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ընտանեկան բռնությունից տուժածներին պաշտպանություն և աջակցություն տրամադրում են աջակցության կենտրոններն ու ապաստարանները: 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն Լիազորված մարմինը հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների, որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն:

Օրենքը պարունակում է նաև այլ հստակ դրույթներ աջակցման ծառայությունների վերաբերյալ: 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ իրենց նկատմամբ ընտանիքում բռնություն կիրառված լինելու մասին հաղորդմամբ ոստիկանություն դիմած անձանց պարզաբանվում է նրանց

212 Հաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, պարբերություններ 9.8, 9.9:

իրավունքները և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում նրանք ուղղորդվում են աջակցության կենտրոններ, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացվում ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ եղող անձանց ապաստարանում տեղավորելու մասին: 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտանեկան բռնության ենթարկվածները կարող են տեղավորվել ապաստարանում `ըստ իրենց դիմումի, եթե առկա է բռնության կրկնության կամ շարունակման վտանգ՝ հիմնվելով ռիսկի գնահատման վրա, որին հաջորդում են ռիսկերի կառավարման միջոցները՝ հետագա բռնությունները կանխելու համար:

«Ընտանեկան բռնության մասին» օրենքի դրույթները պաշտպանված են պետական հարկադրանքի ուժով/իրավազորությամբ, ներառյալ քրեական, քաղաքացիական և վարչական: Մասնավորապես, **ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգիրքը** (այսուհետ՝ Վարչական օրենսգիրք) նախատեսում է պատասխանատվություն՝ ապաստարանում տեղավորված ընտանիքում բռնության ենթարկվածի գտնվելու վայրի բացահայտման համար նախատեսելով տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով (հոդված 47.14): Վարչական օրենսգիրքը անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումները չկատարելու, երեխաների այցելությունների արգելքը խախտելու և վերականգնողական ծրագրերին չմասնակցելու համար նախատեսում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով (հոդված 206.16):

«Ընտանեկան բռնության մասին» օրենքը, համապատասխան օրենսդրական դաշտը և իրավակիրառ պրակտիկան տուժողների պաշտպանության տեսանկյունից պարունակում են մի շարք բացեր: Միջազգային չափանիշներին հակասող հիմնական խնդիրներից են հետևյալը՝

- պաշտպանական որոշումների տրամադրման դեպքում ընթացակարգային պաշտպանության միջոցները կենտրոնացված են բռնություն գործադրած անձի իրավունքների վրա՝ ի վնաս տուժողի իրավունքների, ինչպես նաև նույն ընթացակարգային պաշտպանության միջոցները նախատեսված չեն տուժողների համար.
- ընտանեկան բռնության դրսևորում հանդիսացող արարքների մի մասը, նախատեսված չեն Քրեական օրենսգրքով՝ ներառյալ տնտեսական բռնությունը, հետամտելը, ֆիզիկական ուժեղ ցավ չպատճառող և եզակի բնույթ կրող ֆիզիկական բռնությունը: Հետևաբար, բռնության այս ձևերը պաշտպանիչ կարգադրությունների հիմք չեն համարվում՝ խոչընդոտելով տուժողների կողմից պաշտպանության և փոխհատուցման նպատակով իրագործելի հայց հարուցելը.
- կանանց նկատմամբ բռնության առանձին դրսևորումներ ևս քրեականացված չեն՝ վաղ ամուսնությունը, սեռական հետապնդումը:

Ընտանեկան բռնության մասին օրենքի բացերից մեկն այն է, որ հոդված 12-ը նախատեսում է, որ պաշտպանության միջոցները՝ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կարող կիրառվել անչափահասների կամ անգործունակ անձանց նկատմամբ: Ընտանեկան բռնության դեպքերից մեկով, բողոքատուն հայտնել է հաշմանդամություն ունեցող անձի կողմից իր նկատմամբ կատարված բռնության մասին, սակայն ոստիկանության աշխատակիցները օրենսդրական սահմանափակումների պատճառով գործուն քայլեր չեն ձեռնարկել խնդիրը լուծելու կամ կանխելու համար, քանի որ այդ անձը հաշմանդամություն ուներ: Այս խնդիրը հանդիպում է գործնականում. քննարկվող օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը միայն սահմանում է, որ անգործունակ անձի կողմից ընտանիքում բռնություն գործադրվելու դեպքում գործում են «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները:

Այս համատեքստում, ՄԱԿ-ի Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը վերահաստատում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուր ունեն իրավահավասար

պաշտպանության իրավունք: ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 1(2014) ընդհանուր մեկնաբանությունում Կոմիտեն կրկնել է, որ հաշմանդամությունը երբեք չպետք է հիմք հանդիսանա իրավունակության կամ 12-րդ հոդվածով նախատեսված որևէ իրավունքների մերժման համար: Ցանկացած գործելակերպ, որը նպատակաուղղված կերպով կամ ըստ էության խախտում է 12-րդ հոդվածը, պետք է վերացվի, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք գործունակությունը վերականգնվի մյուսների հետ հավասար հիմունքներով: Օրենքի առջև հավասար ճանաչման համար գործունակությունը չպետք է խտրականորեն մերժվի: Գործունակության մերժումը չպետք է հիմնված լինի այնպիսի հատկանիշի վրա, ինչպիսին է սեռը, ռասան կամ հաշմանդամությունը կամ կրի անձի նկատմամբ այլ կերպ վարվելու նպատակ կամ ազդեցություն[213]:

Համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի թիվ 15-Լ հրամանի 5-րդ կետի (17.08.2019 փոփ. 09.03.2020)[214] կանխարգելիչ հաշվառման չեն վերցվում քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով իր գործողությունների վտանգավորությունը չգիտակցող անձը (չափահաս և անչափահաս), ով հաշվառված է բժշկական հաստատությունում: Բացի այդ, հրամանի հավելվածի 45 (1) կետը նախատեսում է, որ եթե անչափահասը հաշվառման մեջ գտնվելու ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել համապատասխան բժշկական հաստատությունում հաշվառման մեջ գտնվող անչափահասի վերաբերյալ կազմված քարտի վարումը դադարեցվում է: Հրամանի 5-րդ կետը հակասում է Օրենքի 12-րդ հոդվածին, քանի որ դրա բովանդակությունը հակասում է «անգործունակ» եզրույթին: Ընտանեկան բռնություն կատարողների հաշվառումն ունի կանխարգելիչ նպատակ և ընտանեկան բռնությունը կանխարգելման նպատակով մշտադիտարկվում է[215]: Հոգեկան խանգարումներով անձանց հաշվառման բացակայությունը, ինչպես նշված է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի 15-Լ հրամանում, ուղղակիորեն խոչընդոտում է ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելմանը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ և ՀԱՇՏԵՑՈՒՄԸ

«Ընտանեկան բռնության մասին» օրենքը նախատեսում է ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցում[216]: Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն՝ հաշտեցումն իրականացվում է աջակցության կենտրոնի կողմից անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ընթացքում՝ Լիազոր մարմնի, մասնավորապես՝Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սահմանած կարգով: Հետևաբար՝ օրենքի համաձայն՝ հաշտեցումն ընտանեկան բռնության կողմերին հասանելի է սահմանափակ ժամկետով՝ հաշտեցման որոշման քսան օրվա ընթացքում, և մինչև մեկ տարի ժամկետով՝ պաշտպանական որոշման ընթացքում: 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հաշտեցում չի իրականացվում, եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ անձ է: Նշանակալի է, որ հաշտեցումը կարող է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները չեղյալ համարելու հիմք հանդիսանալ: Տուժողը կամ բռնություն գործադրած անձը կարող են ոստիկանությունից կամ դատարանից պահանջել չեղյալ համարել անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումը, եթե իրականացվել է հաշտեցում:

Հատկանշական է, որ հաշտեցման նման հնարավորությունը առավելապես վերաբերում է ընտա-

---

213 ՄԱԿ -ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանություն, 9-րդ և 32-րդ պարբերությունները տե՛ս. https://documents-dds- ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement.

214 ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի թիվ 15-Լ հրամանը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը:

215 «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 1-ին մաս:

216 Նույն տեղում, հոդված 10:

նեկան բռնության այն դրսևորումներին, որոնք հանցակազմ չեն պարունակում:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ ևս նախատեսված է հաշտատարարության հնարավորություն, մի կողմից դա վերաբերում է տուժողի հայցի հիման վրա պատասխանատվություն նախատեսելուն, մյուս կողմից՝ արդեն իսկ նախաձեռնված վարույթներով քրեական պատասխանատվությունից ազատելուն՝ հանցավորի և տուժողի հաշտության հիմքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են այն հոդվածները, որոնցում ամրագրում ստացած հանցավոր արարքների կատարման պարագայում քրեական վարույթը նախաձեռնվում է տուժողի հայցի հիման վրա: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին մասով, 169-րդ հոդվածի 1-ին մասով, 170-րդ հոդվածի 1-ին մասով, 171-րդ հոդվածի 1-ին մասով, 172-րդ հոդվածով, 173-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 180-րդ հոդվածի 1-ին մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 194-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 1-ին մասով, 227-րդ հոդվածի 1-ին մասով, 228-րդ հոդվածի 1-ին մասով, 253-րդ հոդվածի 1-ին մասով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով, 256-րդ հոդվածի 1-ին մասով, 257-րդ հոդվածի 1-ին մասով, 259-րդ հոդվածի 1-ին մասով, 262-րդ հոդվածի 1-ին մասով, 263-րդ հոդվածի 1-ին մասով, 264-րդ հոդվածի 1-ին մասով, 265-րդ հոդվածով կամ 266-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժածի քրեական հայցի հիման վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ներկայացված ցանկում տեղ են գտել նաև ընտանեկան բռնության հնարավոր դրսևորում հանդիսացող արարքները, օրինակ՝ 168-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար, ինչը հնարավոր է տեղ գտնի նաև ընտանեկան բռնության կտրվածքով: Ստեղծվում է տպավորություն, որ նման պարագայում տուժողի հայցի բացակայությունը կհանգեցնի բռնարարի քրեական պատասխանատվության բացառման: Սակայն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնելու հանրային կարգով՝

> 1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.
>
> 2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Ինչ վերաբերում է նախաձեռնված վարույթներով քրեական պատասխանատվությունից ազատելուն՝ հանցավորի և տուժողի հաշտության հիմքով, ապա ընտանեկան բռնության հատկանիշների առկայության պարագայում դա արգելվում է: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է՝ եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ:

Հետևաբար, ընտանեկան բռնության դեպքերով հաշտարարությունն առավելապես տեղ է գտնում այն պարագայում, երբ կատարվածում հանցակազմի հատկանիշներ առկա չեն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հաստատել է «Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման

կարգը» հրամանը[217]: Այն սահմանում է, որ հաշտեցումն իրականացվում է բռնություն գործադրած կամ բռնության ենթարկված անձի դիմումով, որը ներկայացվում է օրենքով սահմանված աջակցության կենտրոն: Բռնություն գործադրած կամ բռնության ենթարկված անձի կողմից հաշտեցման վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումների գործողության ընթացքում: Բռնություն գործադրած կամ բռնության ենթարկված անձի կողմից հաշտեցման վերաբերյալ դիմումը ստանալուց հետո աջակցության կենտրոնը ողջամիտ ժամկետում պետք է այդ մասին գրավոր ծանուցի մյուս կողմին: Ծանուցումն ուղարկվում է կողմի փաստացի բնակվելու վայրի հասցեով: Հաշտեցմանը մասնակցելու համաձայնության վերաբերյալ մյուս կողմի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո աջակցության կենտրոնը մեկօրյա ժամկետում սկսում է հաշտեցման գործընթացը: Հաշտեցման դիմումի առկայության մասին մյուս կողմին պատշաճ ծանուցելու օրվանից տասնօրյա ժամկետում գրավոր համաձայնություն չստանալու դեպքում հաշտեցման վերաբերյալ առաջարկը համարվում է մերժված: Հաշտեցման գործընթացին բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձինք պետք է մասնակցեն անձամբ: Բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց միջև հաշտեցման վերաբերյալ պայմանները քննարկվում են համատեղ: Հաշտեցման գործընթացի իրականացման համար հատկացված վայրում բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց միջև համատեղ հանդիպումները կարող են իրականացվել առավելագույնը երեք անգամ: Կենտրոնի կողմից հաշտեցման գործընթացը դադարեցվում է երեք ամսվա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում և եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը հաշտեցման գործընթացին մասնակցում է հարկադրանքի ազդեցության ներքո:

Հաշտեցման պայմանների շուրջ փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու դեպքում բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց միջև կնքվում է գրավոր հաշտության համաձայնություն՝ երկու օրինակից: Հաշտության համաձայնության մեկ օրինակը ներկայացվում է աջակցության կենտրոն, իսկ երկրորդ օրինակը՝ ոստիկանության իրավասու ծառայողին կամ դատարան՝ համապատասխանաբար անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները վերացնելու նպատակով: Ընտանիքում բռնության միևնույն դեպքով բռնություն գործադրած կամ բռնության ենթարկված անձանցից յուրաքանչյուրը հաշտեցման վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել միայն մեկ անգամ:

Միջազգային չափորոշիչները արգելում են ընտանեկան բռնության դեպքերում հաշտեցման ընթացակարգերը, ինչին էլ, ըստ էության, ուղղված են ՀՀ գործող քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի կարգավորումները: **Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի** 48-րդ հոդվածը **կանանց նկատմամբ բռնության դեպքում արգելում է վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերը կամ պատժամիջոցները:**. Այն պետություններից պահանջում է «արգելել Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի հետ կապված վեճերի լուծման պարտադիր այլնտրանքային ընթացակարգերը, ներառյալ՝ հաշտարար և միջնորդ գործունեությունը»: Կանանց համար արդարադատության հասանելիության վերաբերյալ ԿԽՎԿ-ի թիվ 33 ընդհանուր հանձնարարականը ավելի հեռուն է գնում և առաջարկում է պետություններին «**ապահովել, որ կանանց նկատմամբ բռնության դեպքերը, ներառյալ ընտանեկան բռնությունը, ոչ մի դեպքում չփոխանցվեն այլընտրանքային ընթացակարգերով վեճերի լուծման**»: Ինչպես ներկայացված է բացատրական զեկույցում ընտանեկան բռնության ենթարկված անձինք «երբեք չեն կարող վեճերի լուծման այլընտրանքային գործընթացներին մասնակցել կատարողի հետ հավասար մակարդակի վրա»[218]:

Միջնորդության և հաշտարարության պրակտիկան ենթադրում է, որ կողմերը գործընթացին մասնակցեն հավասար ռեսուրսներով և իրավունքներով: Կանանց նկատմամբ բռնության, հատկապես՝ ընտանեկան բռնության դեպքերը ներառում են ոտնձգությունների, ահաբեկումների և

217 ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի նոյեմբերի 13-ի N 120-Ն հրաման:

218 Բացատրական զեկույց, պարբերություն 252:

(կամ) վերահսկողության, վիրավորական կամ նվաստացուցիչ վարքագծի վրա հիմնված ուժային հարաբերությունների անհավասարություն: Այդ մտահոգությունների արդյունքում աշխարհի շատ մասերում միջնորդության պրակտիկան արգելվել է զուգընկերների կողմից կատարվող բռնության դեպքում: Արդարադատության ոչ պաշտոնական մեխանիզմները նաև կարող են լուրջ վտանգ ներկայացնել այն տուժողների համար, որոնք կարող են համաձայնել վերադառնալ բռնություն գործադրած անձի մոտ՝ արդյունքում ենթարկվելով բռնության ավելի սրված ձևերի: Դրանից բացի, ավանդական գենդերային նորմերը կարող են բացասաբար ազդել միջնորդության ընթացքում կնոջ հնարավորությունների վրա: Այդ գործընթացների ժամանակ կանայք սոցիալական խմբի ներդաշնակությունը չխաթարելու համար հաճախ իրենց անձնական իրավունքներից հրաժարվելու վտանգի տակ են հայտնվում»[219]:

ԿՆԽՎԿ կոմիտեն նշում է, որ միջնորդության կիրառումը կարող է հանգեցնել տուժողի իրավունքների հետագա խախտումների «և բռնություն գործադրած անձանց անպատժելիության այն պատճառով, որ [հաշտարարությունը] հաճախ տեղի է ունենում նահապետական արժեքների հիման վրա՝ դրանով իսկ բացասաբար ազդելով կանանց համար դատական վերանայման և իրավական պաշտպանության միջոցների մատչելիության վրա» [220]. Այլ գործոնները, ինչպիսիք են կոռուպցիան, կառավարության քաղաքականությունը և առաջնահերթությունները, ինչպես նաև միջնորդների հմտությունները կարող են ազդել հաշտարարների կամ միջնորդների կողմից իրականացվող միջնորդության արդյունավետության վրա: Միջնորդների շրջանում գենդերային զգայունության բացակայության հարցը մեծ մտահոգությունների տեղիք է տալիս: ԿՆԽՎԿ կոմիտեն մասնավորապես առաջարկում է, որ «վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերով չսահմանափակվեն կանանց համար դատական կամ այլ իրավական պաշտպանության միջոցների մատչելիությունն իրավունքի բոլոր բնագավառներում, ինչպես նաև այդ ընթացակարգերը չհանգեցնեն նրանց իրավունքների հետագա խախտումների» [221].

Հաշտարարության ընթացակարգերում, որպես որակի ցուցանիշ բարձրացված ամենակարևոր կետն այն է, թե արդյո՞ք տուժողն իրականում այդ գործելակերպերի կենտրոնում է: Այսպիսով, առանցքային հարցը հետևյալն է. արդյո՞ք տուժողի կարիքները միջնորդության գործելակերպի կենտրոնում են: Լավ գործելակերպերով նախատեսվում է, որ միջնորդության ոչ պաշտոնական համակարգերը բարելավելու նպատակով գործող մասնագետները պետք է հիմնվեն գործող համակարգի ուժեղ կողմերի վրա և ներառեն հետևյալը.

- մեխանիզմներում կանանց մասնակցության մակարդակի բարձրացում.
- մեխանիզմներում ընդգրկված բոլոր մասնակիցներին համապարփակ վերապատրաստման տրամադրում.
- իշխանության անարդար բաշխումը փոխելու նպատակով քաղաքացիական հասարակության ոլորտի կազմակերպությունների ներգրավվածության մակարդակի բարձրացում.
- արդարադատության պաշտոնական համակարգի հետ կապերի ամրապնդում[222]:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստանում Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդը ստեղծվել է 2018 թվականին:[223] Խորհուրդը կազմված է առավելագույնը 25 անդամից, ովքեր խորհրդի աշխատանքներին

219 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 115:

220 ԿՆԽՎԿ, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ ընդհանուր հանձնարարական, CEDAW/C/GC/33, 57-րդ կետ:

221 ԿՆԽՎԿ, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ ընդհանուր հանձնարարական, CEDAW/C/GC/33, 58-րդ կետի «բ» ենթակետ:

222 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 115:

223 Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 1685-Ա

մասնակցում են հասարակական հիմունքներով: Խորհրդի նախագահը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի ոլորտը համակարգող տեղակալն է[224]:

Խորհրդի կազմում ընդգրկվում են՝

1) մեկական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ լիազոր մարմին), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանությունից, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից.

2) ութ ներկայացուցիչ (համաձայնությամբ)՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններից (այսուհետ՝ կազմակերպություններ) յուրաքանչյուրից մեկական ներկայացուցիչ՝ ընդգրկելով առնվազն վերջին երեք տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող առնվազն մեկ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ.

3) ութ ներկայացուցիչ՝ աջակցության կենտրոններից և ապաստարաններից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ներկայացմամբ:

Խորհուրդը քննարկում և ներկայացնում է առաջարկներ ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում պետական միասնական քաղաքականության վերաբերյալ: Այն քննարկում է ընտանեկան բռնության կանխարգելմանն առնչվող առանձին հարցերը, հրատապ խնդիրները և ներկայացնում դրանց լուծմանն ուղղված համապատասխան առաջարկություններ. Խորհուրդը ներկայացնում է ընտանիքում բռնության վերաբերյալ հանրությանն իրազեկելու միջոցառումներ իրականացնելու առաջարկություններ: Խորհուրդը քննարկում է տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա ներկայացնում է առաջարկություններ: Խորհուրդը ներկայացնում է ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ: Խորհուրդը ուսումնասիրում և քննարկում է հանրապետական գործադիր մարմինների կողմից ընտանիքում բռնության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին ուղղված ծրագրերի մասին հրապարակված հաշվետվությունները. Խրոհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել լիազոր մարմնին ընտանիքում բռնության ենթարկվածների՝ ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման և ժամանակավոր ֆինանսական աջակցության տրամադրման վերաբերյալ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության, քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության դատախազության, դատական դեպարտամենտի, ինչպես նաև վերջիններիս կողմից չգրանցված՝ օրենքով սահմանված աջակցության կենտրոնների (այսուհետ՝ աջակցության կենտրոն), խնամակալության և հոգաբարձության մարմինների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

որոշմամբ (2018 թ. դեկտեմբերի 28):

224 «Ընտանեկան բռնության կանխարգելման խորհուրդ ստեղծելու և խորհրդի ձևավորման կարգը և գործառույթների հաստատելու մասին» ՀՀ կառավարության N-786-Ն որոշում՝ 10.07.2018 թ.:

կողմից տրամադրված տվյալների հիման վրա[225]: Տվյալների գաղտնիությունն ապահովելու նպատակով տեղեկատվություն տրամադրող մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական փաթեթը ներկայացնում է թղթային՝ «հրապարակման ոչ ենթակա» դրոշմագրով, որը նշվում է փակ ծրարի և ընթաքցակարգով նախատեսված Թերթիկների վրա՝ վերևի աջ անկյունում: Գործերի վերաբերյալ տեղեկատվությունը նախարարությանը առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը: Նախարարությունը տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ամփոփում է այն և հրապարակում:

3.2.2. ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

ՀՀ քրեական օրենսգիրքը (ՀՀ քրեական նոր օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին) քրեականացնում է ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը և հոգեբանական բռնությունը:

Այդուհանդերձ Քրեական օրենսգիրքը չի քրեականացնում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներով սահմանվող մի շարք արարքներ, օրինակ՝ տնտեսական բռնությունը, հետամտումը: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան **հետամտումը** սահմանում է հետևյալ կերպ. «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից վարքագիծ, որը այդ անձի մոտ վախ է հարուցում սեփական անվտանգության համար, այն է՝ տուժողին հետևելը, նրա աշխատավայր, կրթական կամ սպորտային հաստատություն այցելելը, վիրտուալ աշխարհում հետևելը, նրա գույքը վնասելը կամնրա իրերի վրա հետքեր թողնելը կամնրա անձնական տվյալներով կեղծ առցանց օգտահաշիվներ բացելը կամ կեղծ տեղեկություններ տարածելը»[226]:

Միևնույն ժամանակ, ՀՀ գործող քրեական օրենսգրքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնք առավելապես համահունչ են միջազգային պաշտպանության չափորոշիչներին: Մասնավորապես, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա

225 «Ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված գրանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N-1381-Ն որոշում՝ 10.10.2019թ. «Ընտանեկան բռնության մասին» օրենքի հիման վրա ընդունվել են այլ ենթաօրենսդրական ակտեր.
1. ՀՀ կառավարության N-364-N որոշում՝ 29.03.2019թ. «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ և 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»,
2. ՀՀ կառավարության N-333-N որոշում՝ 29.03.2019թ. «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր ֆինանսական աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը հաստատելու մասին»
3. ՀՀ կառավարության N-860-N որոշում՝ 14.08.2014թ. «Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած ընդհանուր աշխատունակության կայուն կորստի տոկոսները հաստատելու մասին»:
4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N-119-Ն որոշում՝ 13.11.2018թ. «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին»:
5.ՀՀ առողջապահության նախարարի N-3177-Ա հրաման՝ 29.11.2019թ. «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնության կազմակերպման, բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման և հաղորդման կարգը, ընտանեկան բռնության դեպքում բժշկական պատմագիրը և ընտանեկան բռնության ենթարկված և դրա արդյունքում մարմնական, հոգեկան ու վերարտադրողական խանգարումներ/վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ գրանցամատյանը հաստատելու մասին»:

226 CETS 210 – Եվրոպայի խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, 11.V.2011, Article 34.

դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն[227] բռնության որևէ դրսևորման առթիվ հարուցված վարույթի ընթացքում՝ մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չպետք է դիտվեն որպես բռնության արդարացում: Եթե ՀՀ նախկին քրեական օրենսգրքում տուժողի վարքագծի հակաօրինականությամբ կամ հակաբարոյականությամբ պայմանավորված հանցագործությունը դիտվում էր որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, ապա 2022 թ.-ի հուլիսի 1-ից գործող քրեական օրենսգիրքը դա այլևս մեղմացուցիչ հանգամանք չի դիտում:

ՀՀ քրեական օրենսգիրքը 508-րդ հոդվածով նախատեսվում է քրեական պատասխանատվություն անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների խախտման համար, մասնավորապես եթե խախտվել են բռնության ենթարկվածի բնակության տարածքից բռնարարին անհապաղ հեռանալուն հարկադրելու, բռնության ենթարկվածի աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր, սահմանված հեռավորությունից ավելի բռնարարի մոտենալու արգելք սահմանող, բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը ի պահ վերցնելու վերաբերյալ որոշումների պահանջները[228]: Նախատեսված պատժամիջոցները նախատեսում են տուգանք՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով[229]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի[230] 11-րդ հոդվածի 4-րդ մասով տարբերակվում են մասնավոր կարգով և հանրային կարգով իրականացվող քրեական հետապնդման ենթակա հանցագործությունները: Մասնավոր հետապնդման, այն է՝ տուժողի քրեական հայցի հիման վրա քրեական պատասխանատվություն ենթադրող հանցանքների շրջանակը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքում, հոդված 15-ում, իսկ մյուս բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

Եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, ապա քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնելու հանրային կարգով՝

1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Նման դեպքում քրեական վարույթը նախաձեռնվում և քննվում է օրենսգրքով նախատեսված ընդհանուր ընթացակարգով [231]:

Անօգնական վիճակում գտնվող անձի հասկացությունը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, որի համաձայն՝ **անօգնական վիճակում գտնվող** է դիտարկվում այն անձը, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը:

---

227 Նույն տեղում, Article 42.

228 Այս սահմանափակումները նախատեսված են ինչպես անհետաձգելի միջամտության, այնպես էլ պաշտպանական որոշումների դեպքում՝ համապատասխանաբար «Ընտանեկան բռնության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 1-4 ենթակետերի և 8-րդ հոդվածի 5-րդ կետի 1-4 ենթակետերի համաձայն:

229 ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածի 1-ին մաս:

230 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 11-րդ հոդվածի 4-րդ մաս:

231 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ.Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 81:

Այնոիհանդերձ, օրենսդիրը չի հստակեցնում, թե որոնք են այն չափանիշները, որոնցով որոշվում է հանցավորից կախվածության մեջ գտնվելը: Ենթադրվում է, որ այն կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական[232]:

3.2.3 ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման ընթացակարգ: 222.11 հոդվածի համաձայն. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի պարագայում դատարանը սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում նշված որոշումներից մեկը կայացնում է հայցադիմումն ստանալուց հետո՝ 36 ժամվա ընթացքում:»

Վարչական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- հայցադիմումը վարույթ ընդունելու մասին.
- հայցադիմումը վերադարձնելու մասին.
- հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.
- հայցադիմումը վերահասցեագրելու մասին[233]:

Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերով ծանուցագիրը հայցվորին, պատասխանողին և ընտանիքում բռնության ենթարկված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին ուղարկվում է դատական նիստը նշանակվելուց հետո՝ անհապաղ: Հրապարակային ծանուցումը չի կարող օգտագործվել որպես ծանուցման եղանակ: «Ընտանեկան բռնության մասին» օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումը դատարանը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում:

3.2.4. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Ի տարբերություն նախազգուշացումների և անհետաձգելի միջամտության արգելման հրամանների, պաշտպանական որոշումները կարգավորվում են քաղաքացիական և դատավարական օրենքներով և դատարանի կողմից քննվում են հատուկ հայցային վարույթի կարգով[234]: «Ընտանեկան բռնության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն տուժողը կամ տուժողի համաձայնությամբ գործող աջակցության կենտրոնը կարող է պաշտպանական որոշման դիմում ներկայացնել առաջին ատյանի քաղաքացիական դատարան: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1-րդ գլուխը նախատեսում է պաշտպանական որոշումների տրամադրման հատուկ ընթացակարգեր: 234.1 հոդվածի համաձայն պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ հայցադիմում ներկայացնող աջակցու-

232 Տե՛ս նույն տեղում

233 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77 -րդ հոդված:

234 ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 202 -րդ հոդված:

թյան կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Քաղաքացիական դատավարության ընթացքում պահանջվող ընդհանուր տեղեկատվությունից բացի, դիմումը պետք է ներառի նաև.

- «Ընտանեկան բռնության մասին» օրենքի վերաբերելի դրույթները.
- տեղեկություններ պատասխանողի և ենթադրաբար ընտանիքում բռնության ենթարկված անձի միջև ընտանիքում և (կամ) արյունակցական կապերի մասին.
- ընտանիքում բռնության անմիջականորեն սպառնացող վտանգի առկայությունը հիմնավորող տեղեկություններ.
- «Ընտանեկան բռնության մասին մասին» օրենքով նախատեսված կոնկրետ սահմանափակումների կիրառման մասին նշում.
- պատասխանողի՝ «Ընտանեկան բռնության մասին մասին» օրենքին համապատասխան՝ կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու հանգամանքը:

Առկայության դեպքում հայցադիմումին կցվում են նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումները: Հայցադիմումն աջակցության կենտրոնի կողմից ներկայացվելու դեպքում հայցադիմումին կցվում տուժողի գրավոր համաձայնությունը դատարան դիմելու համար:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումն ստանալու օրվանից՝ եռօրյա ժամկետում: Դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին հայցադիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ տասնօրյա ժամկետում: Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Պաշտպանական որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատարանի որոշումն ուղարկվում է ընտանիքում բռնություն գործադրած և ընտանիքում բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև հայցադիմումի մյուս կողմերին: «Անհրաժեշտության դեպքում» դատական ակտի պատճենները տրամադրվում են ոստիկանությանը, «Ընտանեկան բռնության մասին» օրենքով նախատեսված լիազոր մարմնին (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը[235]: **Խնդրահարույց է պաշտպանական որոշման մասին ոստիկանությանը մշտապես տեղեկացնելու վերաբերյալ կարգավորման բացակայությունը: Պաշտպանական որոշման կատարման համար անհրաժեշտ է հետևյալը՝ վերահսկողություն, տուժողի հետ պարբերական կապի հաստատում, էլեկտրոնային վերահսկողություն և ռիսկի գնահատման թարմացում:** Ոլորտի բոլոր դերակատարները պետք է ունենան պաշտպանական հրամանների կայացման և իրականացման վերաբերյալ թարմացված տեղեկատվություն: Ուստի դեռևս հստակ չէ, թե արդյոք Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը հնարավորություն կունենա՝ ապահովել պաշտպանական որոշումների արդյունավետ կատարումը և մշտադիտարկումը: Հատկանշական է, որ 7-րդ հոդվածի 11-րդ և 8-րդ հոդվածի 9-րդ մասերի համաձայն պաշտպանական որոշումների կատարվելու նկատմամբ հսկողությունը հանձնարարվում է ոստիկանությանը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

235 Եթե դատական ակտն առնչվում է անչափահաս կամ անգործունակ անձի շահերին, ապա այն ուղարկվում է նաև խնամակալության և հոգաբարձության մարմին:

պաշտպանական որոշումը կարող է հաշտության դեպքում դրանում նշված ժամկետից շուտ վերացվել դատարանի կողմից՝ համաձայն Ընտանեկան բռնության մասին օրենքի: Դա կարող է արվել նաև առանց դատական նիստ հրավիրելու, որը խնդրահարույց է պաշտպանության ապահովման տեսանկյունից: Պաշտպանական որոշումը կարող է նաև վերացվել, եթե ապացուցվում է, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է կատարում, որոնց պատճառով բռնություն գործադրած անձը չի կատարում պաշտպանական որոշումը[236]: Նշված կարգավորումը նույնպես միջազգային չափանիշների խախտում է[237]: Տուժողները չպետք է պատասխանատվության ենթարկվեն պաշտպանական որոշումների խախտումների համար, այդ թվում՝ պաշտպանական որոշումների կասեցման միջոցով: Բացի դրանից, 234.4-րդ հոդվածի 6-րդ մասն այնպես է ձևակերպված, որ մեղադրում է տուժողին պաշտպանական որոշման խախտման համար, ինչը տուժողին մեղադրելու բացահայտ իրավական ձևակերպում է:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտպանի գրասենյակը անվճար խորհրդատվություններ է տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ կառավարությունը 2019թ. մայիսի 16-ին ընդունել է **Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին** 650-Լ որոշումը: 11.1 միջոցառմամբ նախատեսվում է «ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործում և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայով ստանձնած հանձնառություններին համապատասխանեցում»[238]:

ՀՀ կառավարությունը 2019թ. սեպտեմբերի 19-ին ընդունել է **Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին** 1334-Լ որոշումը: Գենդերային քաղաքականության մեջ սահմանված են հինգ գերակայություններ. կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցություն և հավասար հնարավորությունների ընդլայնում, գենդերային խտրականության հաղթահարում: Հինգերորդ գերակայությունը որպես վերջնարդյունքներ ներառում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը, բռնության ենթարկվածների պաշտպանությունը և բռնություն գործադրողների քրեական հետապնդումը, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի և ընտանեկան բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացումը և Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի հաստատումը:

ՀՀ կառավարությունը 2019թ. դեկտեմբերի 26-ին ընդունել է **Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին** 1978-Լ որոշումը: Ռազմավարության հիմնական նպատակներից մեկը ընտանեկան բռնության դեմ պայքարն է. ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հատուկ անդրադառնում են կյանքին սպառնացող իրավիճակներում գտնվող անձանց, այդ թվում՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ հիմնականում կանանց կյանքի իրավունքի պաշտպանությանը: Գենդերային հիմքով կանանց մահվան՝ սպանությունների և ինքնասպանություններ-

236 ՀՀ աղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդված:

237 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ. Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 74:

238 https://www.arlis.am/Annexes/5/Lokal-2019N650.1k.v..pdf

րի դեպքերը լրջագույն մարտահրավեր են պետության համար:[239]

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային գործողությունների ծրագիրը երկրի իշխանություններից պահանջում է քրեականացնել ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան (Կյանքի իրավունք, Գործողություն 5), օրենսդրորեն ամրագրել ընտանեկան բռնությունից և կանանց նկատմամբ բռնությունից տուժած անձանց արդյունավետ պաշտպանության դատավարական երաշխիքները՝ միջազգային չափանիշներին համապատասխան (Կյանքի իրավունք, Գործողություն 6), վերապատրաստումներ իրականացնել ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների ու բուժաշխատողների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների համար, ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների աշխատակիցների համար (Կյանքի իրավունք, Գործողություն 7), ստեղծել աջակցության կենտրոններ և ապաստարաններ ընտանեկան բռնությունից տուժած անձանց համար (Կյանքի իրավունք, Գործողություն 8)[240]:

239 2020-2022 թվականների մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր, Հավելված 1. http://justice.am/storage/uploads/01Appendix_1.pdf

240 2020-2022 թվականների մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր, Հավելված 2. http://justice.am/storage/uploads/02Appendix_2.pdf

Գործողություն 6. Կանանց պաշտպանության միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ պետության համար սահմանված պարտավորությունները

Նպատակը. Այս վարժության նպատակն է մասնակիցներին ներկայացնել միջազգային մարմինները, մասնավորապես այն մարմինները, որոնք իրավասու են մասնակից պետություններում վերահսկել պարտադիր ուժ ունեցող միջազգային պայմանագրերի կատարումը (օրինակ՝ ԿՆԽՎԿ կոմիտեն): Այս գործողությունը նաև մասնակիցներին հնարավորություն է տալիս գնահատել և քննարկել ԿՆԽՎԿ կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետությանը հասցեագրված հանձնարարականները:

Տևողությունը. 45 րոպե

Անցկացման ձևը. Վարժություններ փոքր խմբերում (10 րոպե), ամբողջ խմբի քննարկում (20 րոպե), դասընթացավարի կողմից ամփոփում և մեկնաբանություններ (15 րոպե):

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ՝ «Կանանց պաշտպանության միջազգային պայմանագրերով՝ պետության համար սահմանված պարտավորությունները», ֆլիպչարթ գրատախտակ, մարկերներ.

Ցուցումներ.

Քայլ 1.

Դասընթացավարը մասնակիցների հետ քննարկում է խտրականությունից և մարդու իրավունքների խախտումներից կանանց պաշտպանությանը ուղղված հիմնական միջազգային պայմանագրերը (մասնավորապես՝ ԿՆԽՎԿ-ի և նրա թիվ 35 հանձնարարականի և Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի), դիտարկելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատանքը միջազգային պայմանագրերին համապատասխանության տեսանկյունից՝ հետևյալ հարցերի միջոցով.

> **- Ի՞նչ միջազգային իրավական ակտեր գիտեք, որոնք կարգավորում են կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ ընտանեկան բռնությունը:**
>
> **- Այդ պայմանագրերի համաձայն՝ որո՞նք են պետական մարմինների, այդ թվում՝ ոստիկանության, հիմնական գործառույթները:**

Նշումներ դասընթացավարների համար.

Դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է ներկայացնել իրենց մոտեցումները խմբին և գրել դրանք դրանք գրատախտակի վրա: Դասընթացավարը ընդգծում է, որ մարդու իրավունքների խթանումը և պաշտպանությունը և խախտումների կանխարգելումը պետության պարտականությունն է: Պետություն ունի նեգատիվ և պոզիտիվ պարտականություն: Նեգատիվ պարտականությունը պետական պաշտոնյաների՝ օրենքը հարգելու և սխալ վարքագծից զերծ մնալու պարտականությունն է: Պոզիտիվ պարտականությունը այն է, որ պետական պաշտոնյաները պետք է պաշտպանեն անհատներին պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված սխալ արարքներից: Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան կանանց նկատմամբ բռնության դրսևորումներից և ապահովեն, որպեսզի պետական մարմինները, պաշտոնատար անձինք, ներկայացուցիչները, ինստիտուտները և պետության անունից հանդես եկող այլ դերակատարներ գործեն այդ պարտավորությանը համապատասխան: Երկրորդ մասով սահմանվում է պետության պարտավորությունը «ձեռնարկել օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ զգուշավորություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված այն արարքները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու ուղղությամբ, որոնք մտնում են Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ (կանանց նկատմամբ բռնության ձևերը): Ակնհայտ է, որ պետությունը պարտավոր է կանխել, քննել, պատժել կատարողներին և փոխհատուցում տրամադրել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի, այդ թվում՝ ընտանեկան բռնության տուժողներին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ այս դրական պարտավորությունը ծագում է այն դեպքում, երբ «իշխանությունները գիտեին կամ պետք է իմացած լինեին նույնականացված անհատի կյանքին երրորդ կողմի քրեական բնույթի գործողությունների հետևանքով այդ պահին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին, և որ նրանք այնպիսի միջոցներ չեն ձեռնարկել, որոնք, եթե խելամիտ դատենք, կարող էր ակնկալվել, որ կօգնեին խուսափել այդ ռիսկից»[241].

241 Մարդու իրավունքների եվրոպական դատարան (2009 թ.), Թոմաշիչը և մյուսներն ընդդեմ Խորվաթիայի գործով դատարանի որոշում:

Քայլ 2.

Դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է բաժանվել չորս-հինգ մասնակիցներից բաղկացած փոքր խմբերի: Յուրաքանչյուր խումբ ստանում է ԿՆԽՎԿ-ի վաթսունհինգերորդ նստաշրջանում Հայաստանի վերաբերյալ հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցներից մեկ ամփոփիչ դիտարկում (տե՛ս ստորև մասնակիցներին բաժանվող նյութը): Դասընթացավարը մասնակիցներին խնդրում է հիշել իրենց մասնագիտական պրակտիկայից մի իրավիճակ յուրաքանչյուր եզրափակիչ դիտարկման վերաբերյալ և ներկայացնել.

- երկու օրինակ իրենց մասնագիտական պրակտիկայից, որոնք նկարագրում են դիտարկումը:

- երկու օրինակ իրենց մասնագիտական պրակտիկայից, որոնք չեն համընկնում եզրակացության հետ:

Քայլ 3.

Փոքր խմբի աշխատանքից հետո դասընթացավարը կրկին հավաքում է ամբողջական խումբը և խնդրում մասնակիցներին ներկայացնել իրենց օրինակները: Խմբի մասնակիցներին առաջարկվում է անցկացնել ընդհանուր քննարկում՝ հետևյալ ձևաչափով.

- Եթե ձեզ առաջարկեն աշխատել նմանատիպ հանգամանքներում, ի՞նչ կանեք:

- Ի՞նչ է ակնկալվում ոստիկանությունից նման իրավիճակներում:

- Ո՞րն է տուժողների համար հնարավոր վնասը տվյալ կոնկրետ իրավիճակում:

- Ի՞նչպիսի ինստիտուցիոնալ արձագանքը կարող է լրացուցիչ վնաս հասցնել տուժողին:

Վերջում, դասընթացավարը պատասխանում է հարցերին, ամփոփում օրինակները և ներկայացնում իր մեկնաբանությունները դրանց վերաբերյալ:

Նշումներ դասընթացավարների համար.

Քննարկման ընթացքում դասընթացավարը բացատրում է, որ անվտանգությունը յուրաքանչյուր մարդու իրավունքն է: Ընտանեկան բռնության ենթարկված կանայք օգնության դիմելու ժամանակ հաճախ ապահով զգալու կարիք ունեն: Նրանց անհրաժեշտ է ապահով կացարան, իսկ անմիջական վտանգի դեպքում անհետաձգելի միջամտության որոշման արձակում: Անվտանգության ապահովումը կարևոր է բռնության ենթարկված բոլոր կանանց և նրանց երեխաների համար՝ առանց որևէ հիմքով խտրականության: Դասընթացավարները կարող են հղում կատարել ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻՆ՝ այս գլխում ներկայացված միջազգային չափանիշներին և ուղենիշային սկզբունքներին:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Կանանց պաշտպանության միջազգային պայմանագրերով մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունները

Ստորև ներկայացված պարբերությունները Հայաստանի հինգերորդ և վեցերորդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներից են, որոնք ընդունվել են ԿՆԽՎԿ կոմիտեի կողմից՝ վաթսունհինգերորդ նստաշրջանում:[242]

Խումբ 1

Էթնիկ փոքրամասնությունների կանայք

40. Կոմիտեին, սակայն, մտահոգում է եզդի և մոլոկան համայնքներում վաղ ամուսնությունները, այդ համայնքներից ելնելով աղջիկների դպրոցը լքելը և առողջապահության և պետական այլ ծառայությունների հասանելիության դժվարությունները:

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք նկարագրում են դիտարկումը

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք չեն համընկնում եզրակացության հետ

Խումբ 2

Կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն

16. Կոմիտեն ի գիտություն է առնում 2012թ.-ին ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի մշակումը, ինչպես նաև 2016թ.-ին միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծումը՝ ընտանեկան կյանքում կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության տարբեր ձևերի վերաբերյալ նոր նախագծի մշակման համար: Կոմիտեն նաև ի գիտություն է առնում կին ոստիկանների աշխատանքի ընդունումը, քաղաքացիական ծառայողների, սոցիալական աշխատողների և ոստիկանության նոր ընդունված աշխատակիցների համար գենդերային բռնության վերաբերյալ վերապատրաստման ապահովումը և ոստիկանության մասնագիտացված բաժնի ստեղծումը՝ գենդերային հիմքով բռնության դեպքերը կանխելու և քննելու համար: Այդուհանդերձ, Կոմիտեին շարունակում է մտահոգել.

242 https://digitallibrary.un.org/record/861851

բ) տուժողների կողմից կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեպքերի թերզեկուցումը և դրանից բխող տվյալների բացակայությունը.

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք նկարագրում են դիտարկումը

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք չեն համընկնում եզրակացության հետ

Խումբ 3

Կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն

16. Կոմիտեն ի գիտություն է առնում 2012թ.-ին ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի մշակումը, ինչպես նաև 2016թ.-ին միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծումը՝ ընտանեկան կյանքում կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության տարբեր ձևերի վերաբերյալ նոր նախագծի մշակման համար: Կոմիտեն նաև ի գիտություն է առնում կին ոստիկանների աշխատանքի ընդունումը, քաղաքացիական ծառայողների, սոցիալական աշխատողների և ոստիկանության նոր ընդունված աշխատակիցների համար գենդերային բռնության վերաբերյալ վերապատրաստման ապահովումը և ոստիկանության մասնագիտացված բաժնի ստեղծումը՝ գենդերային հիմքով բռնության դեպքերը կանխելու և քննելու համար: Այդուհանդերձ, Կոմիտեին շարունակում է մտահոգել.

գ) կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունն ընդունելու և արդարացնելու վերաբերյալ ոստիկանության աշխատակիցների անփոփոխ վերաբերմունքը և ընկալումները, որ բռնության այս տեսակը, հատկապես ընտանեկան ոլորտում, մասնավոր հարց է.

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք նկարագրում են դիտարկումը

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք չեն համընկնում եզրակացության հետ

Խումբ 4

Կարծրատիպեր

14. Կոմիտեն մտահոգված է «գենդեր» հասկացության բացասական ընկալմամբ, ինչպես նաև ընտանիքում և հասարակությունում կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների վերաբերյալ խտրական կարծրատիպերի պահպանմամբ, որոնք խաթարում են կանանց սոցիալական կարգավիճակը և խոչընդոտում նրանց կրթական և մասնագիտական կարիերան: Կոմիտեին տեղեկացվել է, որ կանանց մասին նման կարծրատիպերն ու նվաստացուցիչ կերպարները փոխանցվում են դպրոցական դասագրքերով և լրատվամիջոցներով՝ առանց բավարար հսկողության: Բացի այդ, հանձնաժողովը մտահոգված է, որ գենդերային հավասարության ապահովման միջազգային և ազգային շրջանակային դրույթները լայն ճանաչում չունեն հայ հասարակության մեջ:

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք նկարագրում են դիտարկումը

- Երկու օրինակ սեփական մասնագիտական փորձից, որոնք չեն համընկնում եզրակացության հետ

4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Նպատակը.

Ոստիկաններն ավելի արդյունավետ են կատարում տուժողներին պաշտպանելու և նրանց անվտանգությունն ապահովելու իրենց պարտականությունները, երբ նրանք ունեն տուժողների իրավունքների և կարիքների մասին խորը գիտելիքներ և քաջատեղյակ են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության տուժողների անվտանգության ապահովման գործում իրենց դերի մասին:

Ուսուցման հիմնական կետերը.

Հարգել, պաշտպանել, առաջ մղել և կյանքի կոչել կանանց՝ խտրականությունից զերծ մնալու իրավունքը՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերը վերահսկելու ժամանակ.

Տուժողների անվտանգությունն ու պաշտպանվածությունը որոշումների կայացման առանցքում է.

Տուժողների արդյունավետ պաշտպանություն՝ պատշաճ զգուշավորության միջազգային չափանիշներին համապատասխան.

«Մի վնասիր» սկզբունքի իրավասու իրականացումը՝ հարգելով տուժողի իրավունքները, նրա անձի անձեռնմխելիությունն ու մասնավոր կյանքը.

Ակտիվ ունկնդրելու հմտություններ և տուժողի նկատմամբ օբյեկտիվություն՝ հարգելով նրա արժանապատվությունը:

Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[243] հստակ պահանջներ է սահմանում, որոնք պետական կառույցները, այդ թվում՝ ոստիկանությունը **պետք է հաշվի առնեն տուժողների պաշտպանության գործընթացում**: Կոնվենցիայի 18-րդ հոդվածով սահմանվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝

- բռնության հետագա դրսևորումներից բոլոր տուժողներին պաշտպանելու նպատակով,
- ստեղծեն համապատասխան այնպիսի մեխանիզմներ, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր պետական մարմինների և կազմակերպությունների միջև՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության ձևերի տուժողներին, ինչպես նաև երեխա վկաներին պաշտպանություն և աջակցություն ապահովելու գործում.
- ապահովեն, որպեսզի տուժողներին պաշտպանելու և աջակցելու համար ձեռնարկված բոլոր միջոցները՝
    - հիմնված լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալման վրա և ուշադրության կենտրոնում պահեն ոտնձգության ենթարկված անձի իրավունքներն ու անվտանգությունը.
    - հիմնված լինեն տուժողների, կատարողների, երեխաների և սոցիալական ավելի լայն միջավայրի միջև առկա փոխհարաբերություններն հաշվի առնող միասնական մոտեցման վրա.

243 Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, 2011. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/168008482e

- ուղղված լինեն երկրորդային վիկտիմիզացիայից խուսափելուն.
- նպատակաուղղված լինեն բռնության կին զոհերի իրավազորմանն ու տնտեսական անկախության ապահովմանը.
- թույլ տան, որ հնարավորության դեպքում, պաշտպանության և աջակցության մի շարք ծառայություններ տեղակայված լինեն միևնույն շենքում.
- արտահայտեն խոցելի անձանց, այդ թվում՝ երեխաների հատուկ կարիքները և հասանելի լինեն նրանց համար [244]:

4.2. ԶՈՀԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Զոհակենտրոն մոտեցման **բոլոր միջոցառումների կենտրոնում տուժող կանանց և նրանց երեխաների կարիքներն ու իրավունքներն են**: Տուժողի իրավունքների և կարիքների նկատմամբ հարգանքի վրա հիմնված բոլոր գործողությունները ներառում են գենդերայզգայուն մոտեցում և բխում են այն գիտակցումից, որ ընտանեկան բռնությունը կանանց իրավունքների խախտում է և խտրականության ձև: Հետևաբար, տուժողների աջակցության և պաշտպանությանն ուղղված միջոցառումները և գործողությունները նպատակային են:

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[245] սահմանում է պետական կառույցների, ներառյալ ոստիկանության կողմից տուժողին պաշտպանելու հստակ պահանջներ, որ, պետք է պաշտպանեն տուժողին: Համաձայն դրանց ոստիկանությունը պետք է .

1. Գործի բռնության գենդերային ընկալման հիման վրա և բոլոր միջամտությունների կենտրոնում դնի տուժողների իրավունքներն ու անվտանգությունը,
2. Դրսևորի ոչ խտրական վերաբերմունք և հասկանա, որ տուժողներից ոմանք կարող են լինել հատկապես խոցելի,
3. Շեշտադրումը դնի տուժողների կարիքների և իրավունքների վրա, խուսափելով տուժողների կրկնավնասումից, ինչպես նաև տուժողների իրավազորման վրա:

Այս մոտեցումն ապահովում է, որ ընտանեկան բռնության ենթարկված անձը ստանա հնարավորինս մեծ աջակցություն և պաշտպանություն բռնությունից[246]:

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Մասնակից պետությունները **պարտավոր են ապահովել տուժողների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները**, առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամության առկայությունից, ամուսնական դրությունից, միգրանտի կամ փախստականի կամ այլ կարգավիճակից: Բացի տուժողների նկատմամբ ոչ խտրական մոտեցումից, Կոնվենցիան ձգտում է **հաշվի առնել հանգամանքները, որոնք կարող են որոշակի տուժողներին դարձնել առավել խոցելի**: Ընտանեկան բռնության դեպքերին առնչվելիս կարևոր է հասկանալ, որ բռնությունը հանդուրժելու տուժողի որոշման վրա անհատական և համայնքային մակարդակում ազդում են մի շարք գործոններ: Դրանք թվում են ոտնձգություն կատարած անձից տնտեսական կախվածությունը, կացարան ապահովելու անկարողությունը, գործազրկությունը, ընտանիքի կողմից չընդունվելը և ընտանիքը քանդելու համար

244 Նույն տեղում, հոդված 18:

245 Նույն տեղում:

246 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Տ. 2016թ.:

շրջապատի հնարավոր դատապարտումը: Շատ կանայք երկար ժամանակ բախվում են բռնության, քանի որ անկախ ապրելու հնարավորություն չունեն: Բռնություն գործադրողի հանդեպ կախվածությունը, աղքատության հետ մեկտեղ, տուժողին հատկապես խոցելի է դարձնում բռնության նկատմամբ:

Շատ կանայք, որևէ բնութագրի կամ վիճակի պատճառով, բազմակի խտրականության են ենթարկվում: Բազմակի խտրականության ենթարկելը, որին հատկապես խոցելի են, օրինակ՝ էթնիկ փոքրամասնությունների, գյուղական վայրերում բնակվող, հատուկ հիվանդություններ կամ հաշմանդամություն ունեցող կանայք, նվազեցնում է տուժողի՝ բռնարարից հեռանալու հավանականությունը: Մի քանի գործոնների հահադրությունը մեծացնում է անհավասարության վիճակը, որն ըստ էության բռնության հիմքն է: Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող կինը էթնիկ փոքրամասնությանը պատկանող գյուղական վայրում կարող է բազմաթիվ խոչընդոտների հանդիպել հետագա բռնությունից խուսափել փորձելիս: Ընտանեկան բռնության ենթարկված կանանց կարիքներն ու իրավունքները չեն տարբերվում իրենց որևէ բնութագրիչներով և պայմաններով: Հետևաբար, միշտ պետք է նկատի ունենալ, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցությունն ու պաշտպանությունն իրականացվում է առանց խտրականության որևէ հիմքի և հարգելով տարբերությունները:

Ներդիր 6. Զոհակենտրոն մոտեցում

Ոստիկանության կողմից զոհակենտրոն մոտեցման կիրառումը հնարավորություն է տալիս.

- Գենդերազգակուն վերաբերմունք դրսևորել տուժողների նկատմամբ.
- Պատկերացում կազմել տուժողների՝ իրենց իրավունքները հարգելու կարիքի մասին.
- Պաշտպանել տուժողների իրավունքները.
- Արդյունավետ գործել իրավախախտի նկատմամբ.
- Գնահատել ռիսկերը և տուժողի հետ միասին կազմել և իրականացնել ընտանեկան բռնության ենթարկված անձի պաշտպանության ծրագիր:

Հարկ է ընդգծել, որ ոստիկանության միջամտության սովորական եղանակը կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերում բավարար չէ: Փոխարենը, անհրաժեշտ է այլ մոտեցում, որը բխում է ընտանեկան բռնության՝ որպես գենդերային բռնության խորը ընկալումից և ենթադրում է **ընտանեկան բռնության տուժողների նկատմամբ գենդերազգայուն վերաբերմունք**: Դա բխում է այն ընկալումից, որ տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ, իրավունքների հավասար պաշտպանության իրավունք, հավասար հնարավորություններ և հավասարապես հարգված և գնահատված են:

Ոստիկանական մոտեցումը պետք է ուղղված լինի տուժողի կարիքներն ու իրավունքները հոգալուն՝ խուսափելով տուժողի կրկնակի վիկտիմիզացիայից, ինչպես նաև վերջինիս իրավազորման ապահովմանը: Անվտանգության և բռնությունից պաշտպանվելու անհրաժեշտության հետ մեկտեղ, ընտանեկան բռնության տուժողների հիմնական կարիքները պետք է լինել լսելիտուժողներին պետք է վստահեն: Մարդու հիմնական կարիքները ներառում են անվտանգ, տաք և մաքուր բնակարան, սննդի և քնի կարիք: Հաշվի առնելով, որ ընտանեկան բռնության տուժողներից շատերն ունեն երեխաներ և հաճախ չեն կարողանում բավարարել իրենց հիմնական կարիքները, նրանք այդ հարցում օգնության կարիք ունեն: Ընտանեկան բռնության ենթարկված կանայք կարեկցանքի և քաջալերանքի, այլ ոչ թե պարսավանքի են արժանի: Անհրաժեշտ է նաև հարգել տուժողի իրավունքները, որպեսզի նա կարողանա ազատորեն որոշում կայացնի իր հետագա կյանքի մասին: Այդ որոշումը կարող է լինել բռնարարի դեմ ցուցմունք տալուց հրաժարվելը կամ նրան քրեական պատասխանատվության ենթարկելը կամ նրա մոտ վերադառնալը: Տուժողին՝ ստիպելը, որ նա փոխի իր ազատ ձևավորված և արտահայտված որոշումը, հակասում է նրա իրավունքներին և կարող է հանգեցնել ինստիտուցիոնալ բռնության և երկրորդային վիկտիմիզացիայի: Դա նշանակում է բռնարարի կողմից դրսևորվող բռնությունը և վերահսկողությունը փոխել ինստիտու-

ցիոնալ բռնությամբ և վերահսկողությամբ[247]: Հիմնական նպատակն է համակարգի առաջին իսկ արձագանքի միջոցով հնարավորություն տալ և խրախուսել կին տուժողի իրավազորումը, նաև խուսափելով կարծրատիպերից, տուժողի նկատմամբ անվստահություն հայտնելուց և նրան մեղադրելուց՝ տուժողի կրկնակի վիկտիմիզացիայի հավանականությունը նվազեցնելու համար: Այդ ամենը խրախուսում է տուժողին օգնություն և պաշտպանություն փնտրել հաստատություններից և մեծացնում է նրա վստահությունը համակարգի նկատմամբ:

Բացի այդ, տուժողների հիմնական կարիքները հասկանալու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն բանին, որ նրանք ունեն տարբեր անհատական կարիքներ՝ կախված յուրաքանչյուր տուժողի կոնկրետ իրավիճակից: Յուրաքանչյուր տուժողի անհատական կարիքները պետք է բացահայտվեն նրա հետ համատեղ, մինչդեռ պաշտպանությունն ու աջակցությունը՝անհատականացվեն:

Տուժողներին պետք է իրավազորել և նրանց առաջարկել ամբողջական աջակցություն: Ընտանեկան բռնության ենթարկված անձինք խոցելի են և զգայուն իրենց կրած բռնության նկատմամբ, բայց դա չի նշանակում, որ նրանց պետք է վերաբերվել որպես պասիվ կամ վախի զգացողություն չունեցող մարդկանց: Ընդհակառակը, տուժողներին պետք է մոտենալ այն տեսանկյունից, որ նրանք ունեն իրենց կյանքի մասին որոշումներ կայացնելու, անկախ լինելու և սեփական կյանքը վերահսկելու կարողություն և ունակություն: Հնարավոր է, որ տուժողները չկարողանան վերահսկել բռնությունը որին ենթարկվում են, բայց նրանք կարող են որոշել, թե ինչպիսի ծառայության կարիք ունեն և ինչ գործողություններ կարող են ձեռնարկել բռնությունից ազատվելու և իրենց կյանքը կայունացնելու համար: Ընտանեկան բռնության տուժողներին իրավազորելու գործընթացը նշանակում է նրանց համար մատչելի դարձնել տեղեկատվությունը, կրթությունը, ֆինանսական աջակցությունը և ցանկացած այլ անհրաժեշտ ծառայություն, որը նրանց թույլ է տալիս ազատորեն որոշումներ կայացնել[248]:

Ընտանեկան բռնության ենթարկված կանայք վերահսկողություն չունեն բռնարարի վարքագծի վրա և **չպետք է մեղադրվեն իրենց նկատմամբ գործադրված բռնության համար**: Բռնության ենթարկված կանանց չպետք է մեղադրել երեխաներին չպաշտպանելու համար: Բռնության համար պատասխանատու է բռնություն գործադրած անձը, և նրան պետք է մեղադրել: Ուստի, խորհուրդ չի տրվում ստիպել մորը լքել բռնարարին՝ վերցնելով երեխաներին իր հետ: Հաճախ մասնագետները, զգալով, որ ի վիճակի չեն օգնել, հորդորում են տուժողին հեռանալ բռնարարից: Նման գործողությունները կարող են տուժողի մոտ հաստատությունների նկատմամբ անվստահություն առաջացնել և հանգեցնել իր համար ավելի բարդ իրավիճակի[249]:

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[250] պահանջում է աջակցություն և պաշտպանություն տրամադրելիս ձեռնարկել բոլոր միջոցներն ու գործողությունները՝ կապված տուժողի, բռնություն գործադրած անձի, երեխայի և նրանց սոցիալական միջավայրի միջև հարաբերությունների հետ: Նպատակն է խուսափել իրավիճակներից, երբ տուժողի աջակցության միջոցառումները ծրագրվում և տրամադրվում են նրա սոցիալական իրականությունից դուրս:

Տուժողին տրամադրվող աջակցությունը իշխանությունների, այդ թվում՝ ոստիկանության կողմից պետք է համակարգվի: Հաշվի առնելով ընտանեկան բռնության բարդ բնույթը՝ անհիրատեսական է ակնկալել, որ համակարգի միայն մեկ հաստատության մեկուսացված գործողությունը կարող է արդյունավետ լուծում տալ այնպիսի լուրջ և բարդ երևույթի, ինչպիսին է ընտանեկան բռնությունը: Տուժողների հիմնական, ինչպես նաև անհատական կարիքների բավարարումը, այդ թվում՝ պաշտպանությունը, հարմար և երկարաժամկետ կացարանը, բուժօգնության, աշխատա-

247 Լոգար Ռ. և այլք, 2015թ.:

248 Լոգար Ռ. և այլք, 2015թ.:

249 Լոգար Ռ. և այլք, 2015թ.:

250 Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, 2011թ. https://rm.coe.int/168008482e

շուկայի մատչելիությունը, կրթությունը, արդարադատության արդյունավետ հասանելիությունը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և քաղաքացիական իրավունքներից ազատ օգտվելը, պահանջում են բազմաթիվ հաստատությունների և կազմակերպությունների համակարգված գործողություններ: Դա ներառում է ոստիկանության, դատախազության, դատական իշխանության, սոցիալական ծառայությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, առողջապահական համակարգի և այլ համապատասխան գործընկերների համատեղ նախանշված գործողությունները՝ տուժողին բռնությունից ազատ միջավայրում ապրելու հնարավորություն տալու համար[251]:

Երեխա տուժողների և ընտանեկան բռնության վկաների պաշտպանությունն ու աջակցությունը առաջնահերթ կարևորություն ունեն: Հաճախ, երբ տեղի է ունենում ընտանեկան բռնության դեպք, կնոջից բացի տուժում են նաև երեխաները: Ընտանեկան բռնության ենթարկված երեխաները կարող են լինել և՛ ուղղակի, և/կամ անուղղակի տուժողներ: Ընտանեկան բռնության դեպքերում երեխաները տուժող են՝ անկախ այն բանից, թե բռնությունն իրենց ուղղված է, թե նրանք վկա են և ապրում են կրելով բռնության հետևանքները: Այլ կերպ ասած, ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները պաշտպանության և աջակցության առաջնահերթ կարիք ունեն:

Երեխաների բարեկեցությունը ընտանեկան բռնության դեպքերին առնչվող բոլոր մասնագետների առաջնահերթությունն է: Հատկապես ծանր դեպքերում կարող է անհրաժեշտ լինել երեխաներին առանձնացնել ընտանիքից: Սակայն, առանձնացումը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց: Երեխաների արդյունավետ պաշտպանությունը կարող է ապահովվել անհետաձգելի միջամտության որոշմամբ, որի դեպքում բռնություն գործադրած անձին հեռացնում են տնից և արգելում են մոտենալ ընտանիքին: Այդ դեպքում երեխաները ընտանեկան բռնության լրացուցիչ հետևանքներ չեն կրում, այսինքն՝ նրանք չեն հեռանում տնից, չեն ընդհատում դպրոցական ուսումը, չեն լքում իրենց ընկերներին, իսկ բռնարարը կրում է իր գործողությունների պատասխանատվությունը[252]:

4.2.1. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Բռնությունը սերտորեն կապված է իրավունքներից օգտվելու և դրանց պաշտպանության հետ: Մարդու հիմնարար իրավունքն է **առանց բռնության ապրելու իրավունքը**[253]: Այս իրավունքը ներառում է կյանքի իրավունք, ազատության իրավունք, առողջության իրավունք, խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք: Այս իրավունքը տարածվում է ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր ոլորտի և անհատի կյանքի վրա: Կարևոր է հասկանալ, որ առանց բռնության կյանքի իրավունքի պաշտպանությունն ընդգրկում է մարդու կյանքի և՛ հասարակական, և՛ մասնավոր ոլորտները[254]: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր անհատ օգտվում է մասնավոր կյանքի և ընտանեկան կյանքի իրավունքից: Ընտանեկան կյանքի իրավունքը ներառում է խաղաղ և ապահով կյանքով ապրելը: Առանց բռնության կյանքի իրավունքը պաշտպանելու և երաշխավորելու պետության պարտավորության պատշաճ ընկալումը, միևնույն ժամանակ հարգելով նրա անձի անձեռնմխելիության իրավունքը, պահանջում է ընկալում, որ բռնությունը սպառնում է մարդու մարմնի անձեռնմխելիությանը և մաս-

251 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Տ. 2016թ.:

252 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Տ. 2016թ.:

253 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 4, 2011թ, CETS:210:

254 Լոգար Ռ. և այլք, 2015թ.:

նավոր կյանքի իրավունքին: Բեվակուան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մասնավորապես շեշտեց, որ վեճը «մասնավոր գործ» համարելը անհամատեղելի է դիմումատուների ընտանեկան կյանքը պաշտպանելու իշխանությունների պարտավորությունների հետ:

Ինքնուրույնության սկզբունքը նախատեսում է հարգանք անհատի ազատ, կամավոր և հստակ արտահայտված կամքի նկատմամբ: Ընտանեկան բռնության ենթարկված անձը չի կարող ազատ, կամովին արտահայտել իր կամքը՝ բռնարարի կողմից վրեժխնդրության և ապագա հետևանքների վախի պատճառով[255]: Եթե չկա պատշաճ և համակարգված միջամտություն, որը տուժողին ժամանակ կտա և բռնարարից ֆիզիկական հեռավորություն կապահովի՝ իր կյանքի մասին իսկապես ազատ որոշում կայացնելու համար, չկա նաև անձի ինքնուրույնություն: Հետևաբար, տուժողի ինքնուրույնությունը հարգելու համար պետք է հնարավորություն ստեղծել այդ ինքնուրույնության պաշտպանության համար: Մասնավորապես, պետք է հաշվի առնել այն փաստը, որ ընտանեկան բռնության էությունը բռնություն գործադրող անձի կողմից տուժողի նկատմամբ իշխանություն և վերահսկողություն սահմանելու ուղիներ գտնելն է: Պետությունը պարտավոր է ապահովել, որ որոշումը անհատի կամքի ճիշտ և ազատ արտահայտումը հանդիսանա: Հատկապես ընտանեկան բռնության դեպքերում պետք է հաշվի առնել բռնության ցիկլի հետևանքով տուժողի կոնկրետ իրավիճակը, բռնարարից կախվածությունը, անօգնականության զգացումը, վախը և բռնությունը նվազագույնի հասցնելու միտումը: Ըստ Դոբաշի և Դոբաշի[256]՝ միայն, երբ տուժողն ազատվում է նման վիճակից, վերջինիս որոշումը նրա կամքի ճիշտ և ազատ արտահայտումն է:
Կին տուժողի՝ բռնարարի հետ հարաբերությունները պահպանելու ազատորեն ձևավորված և արտահայտված կամքը նրա օրինական իրավունքն է: Հետևաբար, տուժողը օգտվում է և՛ ընտանեկան բռնությունից պաշտպանվելու իրավունքից, և՛ անվերապահ աջակցությունից՝ պատշաճ հարգելով սեփական կյանքի վերաբերյալ իր որոշումը: Վարքագծի փոփոխություն պահանջվում է բռնարարից, այլ ոչ թե տուժողից: Շատ կարևոր է, որ տուժողին չուղարկվի այնպիսի ուղերձ, որից հետևի, որ նա ինքնուրույն է պատասխանատու իր անվտանգության և պաշտպանության համար (օրինակ՝ «եթե բաժանվեք, ձեզ կպաշտպանեն բռնությունից .... դուք պետք է ավելի վաղ բաժանվեիք նրանից, երբ հասկացաք, որ նա բռնարար է»):

Անձնական տվյալների պաշտպանություն. Ընտանեկան բռնության ենթարկված կանանց աջակցության և պաշտպանության ծառայություններ մատուցելիս անհրաժեշտ է հասկանալ և հետևողականորեն կիրառել գաղտնիության երաշխիքը: Սա նշանակում է, որ ընտանեկան բռնության ենթարկվածները, բացի իրենց լսելու և վստահելու անհրաժեշտությունից, ունեն նաև իրենց անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանության իրավունք: Գաղտնիությունը ենթադրում է, որ տուժողների տվյալների փոխանակումը հաստատությունների հետ թույլատրվում է միայն այն դեպքում, եթե տուժողը նախկինում համաձայնություն է տվել դրան: Գաղտնիության սկզբունքից հնարավոր բացառություններ կան: Գաղտնիության սկզբունքից բացառություն կարող է լինել երեխայի նկատմամբ բռնության կասկածը կամ կյանքին սպառնացող իրավիճակների անտեսումը, ինքնասպանության հակումների մասին կասկածը կամ ուրիշներին վնաս պատճառելու լուրջ սպառնալիքը[257]: Գաղտնիության սկզբունքը նաև նշանակում է, որ անհրաժեշտ է մշակել հատուկ ընթացակարգեր, որոնք կկարգավորեն հաստատությունների միջև տվյալների փոխանակման հարցը: Այդ նպատակով տուժողը պետք է տեղեկացված լինի գաղտնիության իրավունքի և գաղտնիության հնարավոր սպահպանումը էական քայլ է նրա իրավազորման հարցում:

---

255 Էլիսոն, 2002թ.:

256 Դոբաշ և Դոբաշ, 2001թ.:

257 ՄԱԿ-ի ոստիկանության գենդերային գործիքակազմ (ՄԱԿ. Խաղաղության գործողությունների վարչություն - DPO / DPET / Վերապատրաստման համալիր ծառայություն, 2015թ.): Ըստ UNPOL-ի, նման դեպքերում ոստիկանությունը կարող է գործել, եթե առկա են այս իրավիճակները ապացուցելու և բուժաշխատողներից և խորհրդատուներից խորհրդատվություն ստանալու ողջամիտ հիմքեր:

Ներդիր 7. Գաղտնիությունն ամբողջ գործընթացի ընթացքում

- Զերծ մնալ տուժողի մասնավոր կյանքի հանգամանքների քննությունից, բացառությամբ դրանք՝ կոնկրետ դեպքի կամ ենթադրյալ հանցագործության հետ կապված լինելու դեպքերում, և քննել միայն այն, ինչ խիստ անհրաժեշտ է:
- Միայն այնպիսի ապացույցների և տեղեկությունների հավաքում, որոնք ուղղակիորեն առնչվում են քննությանը:
- Ապահովել, որ տուժողների և այլ վկաների անունները, հասցեները և նույնականացման այլ տեղեկությունները չտրամադրվեն լրատվամիջոցներին՝ առանց տուժողի տեղեկացված համաձայնության:
- Ապահովել, որ հիվանդանոցը կազմակերպի այցելությունները և հետազոտությունները անվտանգ և մեկուսացված վայրում և, որ հետազոտությունները անցկացվեն իգական սեռին բժշկական անձնակազմի կողմից:
- Ստուգել, որ բժշկական զննումներից ստացած ցանկացած ապացույց հավաքվում է զուտ դատաբժշկական ապացույցների համար:
- Ապահովել, որ ցանկացած փաստաթուղթ կամ ոստիկանության զեկույց հասանելի լինի միայն արդարադատության ոլորտի ծառայողներին/գործին անմիջականորեն առնչվող իրավապահ մարմիններին:

Անձնական տվյալների անձեռնմխելիությունն ու գաղտնիությունը երաշխավորվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքների մասին» ՀՀ օրենքներով: Անձնական տվյալների անձեռնմխելիության և գաղտնիության դրույթները ամրագրված են նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում:

հիմնական հասկացությունները

- Անձի անձեռնմխելիության և մասնավոր կյանքի իրավունքը հարգել, նշանակում է չբացահայտել տուժողի անձնական տվյալները և հարգել նրա կամքը:
- Ոստիկանության աշխատակիցները պետք է մեծ ուշադրություն դարձնեն գաղտնիությանը՝ մարդկանց կյանքը չվտանգելու համար:
- Օրենքը խախտող ոստիկանության աշխատակիցները պատասխանատվության պետք է ենթարկվեն և նրանց պատասխանատվության ենթարկելու համար պետք է ձեռնարկվեն վարչական կամ քրեական ընթացակարգեր: Դա առավել կարևոր է ընտանեկան բռնության դեպքերում, երբ կասկածյալը/իրավախախտը ոստիկան է:

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք ունեն նույն դատավարական երաշխիքները, ինչ հանցագործության ցանկացած այլ տուժող: Սակայն, հաշվի առնելով ընտանեկան բռնության հանցանքի բարդ առանձնահատկությունները, նրանք կարող են նաև օգտվել լրացուցիչ օժանդակ ծառայություններից: Ոստիկանության աշխատակիցները պետք է հիշեն, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը կարող է տեղյակ չլինել մասնագիտական իրավաբանական օգնության կամ այլ աջակցության հնարավորության մասին: Ուստի, տուժողները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների և արդարադատության, իրավաբանական օգնության և այլ աջակցության հասանելիության մասին: Կարևոր է նաև, որ տուժողին տեղյակ պահեն քրեական դատավարության քայլերի, իր պարտավորությունների և իրավունքների մասին, ինչպես նաև թույլ տալ նրան հարցեր տալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ տուժողը կարող է.

1) ծանոթանալու մեղադրյալին ներկայացված մեղադրանքին.

2) տալու ցուցմունք.

3) հրաժարվելու ցուցմունք տալուց կամ նյութեր տրամադրելուց, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ դրանք հետագայում կարող են օգտագործվել իր կամ իր ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ.

4) վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ներկայացնելու ապացույցներ.

5) հարուցելու միջնորդություններ.

6) հայտնելու բացարկներ.

7) ունենալու լիազոր ներկայացուցիչ և դադարեցնելու նրա լիազորությունները.

8) անվճար ստանալու իր կարգավիճակին վերաբերող դատավարական ակտերի պատճենները.

9) առարկելու վարույթի հանրային մասնակիցների գործողությունների դեմ.

10) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրությանը, դիտողություններ ներկայացնելու այդ արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, ծանոթանալու դատական նիստի արձանագրությանը և ներկայացնելու դրա վերաբերյալ իր դիտողությունները, ապացուցողական և վարութային այլ գործողությանը մասնակցելու, դատական նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջելու համապատասխան արձանագրության մեջ կատարել իր մատնանշած հանգամանքների մասին գրառումներ.

11) անվճար ստանալու քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու, այն դադարեցնելու կամ կասեցնելու, ինչպես նաև քրեական վարույթը կարճելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության, եզրափակիչ ակտի կամ եզրափակիչ դատական ակտի պատճենը.

12) իր խնդրանքով անվճար ստանալու իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրության, այդ թվում՝ դրա հավելվածի, ինչպես նաև փորձաքննություն նշանակելու մասին որոշման և փորձագետի եզրակացության պատճենները.

13) նախաքննության ավարտման մասին ծանուցում ստանալու պահից ծանոթանալու վարույթի բոլոր նյութերին, իր խնդրանքով դրանցից անվճար ստանալու պատճեններ կամ դուրս գրելու ցանկացած տեղեկություն.

14) դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ստանալու պատշաճ ծանուցում.

15) ներկա լինելու առաջին ատյանի, վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների նիստերին, մասնակցելու ապացույցների հետազոտմանը, հանդես գալու եզրափակիչ ելույթով.

16) բողոքարկելու վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վարութային ակտերը, այդ թվում՝ եզրափակիչ դատավարական ակտերը.

17) հետ վերցնելու իր կամ իր լիազոր ներկայացուցչի ներկայացրած բողոքը.

18) տեղեկացվելու վարույթի այլ մասնակցի կողմից բերված և իր շահերին առնչվող վերանայման բողոքի մասին, դրա վերաբերյալ ներկայացնելու պատասխան.

19) դատական նիստում կարծիք հայտնելու վարույթի այլ մասնակիցների միջնորդությունների և հայտարարությունների վերաբերյալ.

20) առարկելու վարույթի այլ մասնակիցների կամ դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ.

21) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում հաշտվելու մեղադրյալի հետ.

22) իրեն ենթադրաբար պատճառված վնասը հատուցելու նպատակով գույքային հայց ներկայացնելու դատարան, մինչև ապացույցների հետազոտման ավարտը փոփոխելու գույքային հայցը, ինչպես նաև մինչև դատարանի առանձին սենյակ հեռանալը հրաժարվելու գույքային հայցից.

23) ստանալու հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում.

24) յուրաքանչյուր անգամ ստանալու ապացուցողական կամ վարութային այլ գործողությանը մասնակցելու համար կատարած ծախսերի հատուցում.

25) հետ ստանալու վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցված և իրեն պատկանող գույքը և փաստաթղթերի բնօրինակները.

26) օրենքով նախատեսված դեպքերում ազատվելու իր ներկայացուցչի ծառայությունների դիմաց վճարելու պարտականությունից.

27) իր, ինչպես նաև իր ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի կյանքին, առողջությանը և իրավաչափ շահերին սպառնացող վտանգի դեպքում վարույթն իրականացնող մարմնից հայցելու և ստանալու հատուկ պաշտպանություն.

28) իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը սահմանում է, որ

1. Քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի (սույն գլխում այսուհետ՝ պաշտպանվող անձ) նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ:

2. Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմինը համապատասխան անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կայացնում է հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշում, որի կատարումն անհապաղ հանձնարարում է իրավասու պետական մարմնին:[258]:

Ավելին, իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է կիրառեն տուժողների և վկաների նման պաշտպանության միջոցներ ի պաշտոնե (ex officio), ինչպես նաև համապատասխան անձանց խնդրանքով:

11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն

«Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝

1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը»[259]:

Որպես ընտանեկան բռնության դեմ պայքարի հիմնական դերակատարներից մեկը՝ ոստիկանությունը էական դերակատարություն ունի զոհերի իրավունքների պաշտպանության գործում: Երբ բռնության ենթարկված անձինք դիմում են օգնության կամ հաղորդում են ներկայացնում դեպքի մասին, ոստիկանության ծառայություններն առավել հաճախ քրեական արդարադատության համակարգի հետ առաջին շփման կետն են: Ոստիկանությունը պետք է հնարավորություն ունենա ապահովել տուժողների պաշտպանությունը:

Բացի այդ, կանայք պետք է **վստահեն ոստիկանությանը** և համոզված լինեն, որ իրենց բողոքներին լուրջ են վերաբերվում[260]: Նախկինում արձանագրված դեպքերի նկատմամբ ոստիկանության կողմից անվստահությունը և գործողությունների բացակայությունը պատճառ են դառնում, որ շատ կանայք իրենց խնդիրներով ոստիկանություն չեն դիմում: Հետևաբար, կարևոր է, որ ոստիկանությունը կանանց շրջանում իր նկատմամբ վստահության մթնոլորտ ձևավորի, որպեսզի կանայք

258 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 73:

259 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 11 (4):

260 Միավորված ազգերի կազմակերպության, Կանանց զարգացման տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ, «Կանանց նկատմամբ բռնության օրենսդրության ձեռնարկ», Նյու Յորք, 2009թ., էջ 39:

ներկայացնեն իրենց բողոքները:

Ավելին, բռնության ենթարկված կանայք կարող են ամաչել կամ վախենալ, որ բռնության դեպքի մասին կիմանա հանրությունը: Նրանք կարող են վախենալ, որ իրենց հարազատներին դա դուր չի գա: Տուժողը կարող է զրկվել ընտանիքի կամ ընկերների աջակցությունից: Ընտանիքը, ընկերները կամ նույնիսկ նրա երեխաները, կարող են ճնշում գործադրել նրա վրա՝ ամուսնական բռնության, գործը կարճելու համար: Երբեմն տուժողը կարող է վախենալ, որ կկորցնի իր նկատմամբ հարգանքը համայնքում, կամ, որ ամուսինը կարող է լքել նրան, եթե նա բողոքի: Նա կարող է կրոնական համոզմունքներ ունենալ, որոնք խանգարեն նրան դիմել ամուսնալուծության: Եթե տուժողն երեխա է, նա կարող է վախենալ, որ նրան կուղարկեն մանկատուն: Հետևաբար, տուժողների հետ գործ ունենալիս ոստիկանությունը պետք է ապահովի նրանց անձեռնմխելիությունն ու գաղտնիությունը:

4.2.2. ՊԱՏՇԱՃ ԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Մարդու իրավունքների միջազգային օրենսդրության համաձայն՝ պետությունն ունի և՛ նեգատիվ, և՛ պոզիտիվ պարտականություններ՝ պետական պաշտոնյաները պետք է հարգեն օրենքը և զերծ մնան սխալ գործողություններ կատարելուց և պաշտպանեն անհատներին՝ ոչ պետական այլ դերակատարների կողմից կատարվող նման վարքագծից:

Միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունները պատասխանատվություն են կրում մարդու իրավունքների խախտումների համար՝ անկախ նրանից, թե այդ խախտումները պատճառված են պետության, թե պետության ներսում մասնավոր անհատների կողմից: Պատշաճ զգուշավորության սկզբունքի էությունն այն է, որ պետությունները պատասխանատվություն են կրում իրավունքների խախտման համար: Անձի մարդու իրավունքների խախտման հարցում պետության պարտավորությունները հետևյալ ոլորտներում են.

I. Կանխարգելում և պաշտպանություն (անհատների և պետության կողմից կանանց նկատմամբ կիրառվող բռնությունը պետք է կանխվի, իսկ տուժողները՝ պաշտպանվեն).
II. Բռնություն գործադրած անձանց նկատմամբ պատժամիջոցների կիրառում (այն դեպքում, երբ բռնարարքն արդեն կատարվել է, պետական մարմինները պետք է ձեռնարկեն քննություն, բռնություն գործադրած անձի քրեական հետապնդում և պատասխանատվության ենթարկեն նրան).
III. Տուժողին փոխհատուցում (պետական մարմինները պետք է տուժողներին տրամադրեն աջակցություն և փոխհատուցում՝ անհատների կողմից գործադրված բռնության համար):

Ինչ վերաբերում է պետական մարմինների կողմից կատարված բռնություններին, ապա պատշաճ զգուշավորության սկզբունքը ենթադրում է, որ համապատասխան դատական հիմնարկները պետք է մանրամասն վերլուծեն այն հանգամանքները, որոնցում տեղի է ունեցել անհատի իրավունքի խախտումը, ստուգեն ապացույցները և որոշեն, թե արդյոք իրավունքը խախտվել է, և մանրամասն ուսումնասիրեն պետական կառույցների արածը կամ չարածը: Որպեսզի միջազգային դատարանները եզրակացնեն, որ պետությունը չի գործել պատշաճ զգուշավորության չափանիշներին համապատասխան, անհրաժեշտ է ապացուցել, որ պետությունը համապատասխան միջոցներ չի ձեռնարկել, քանի որ պետական կառույցի ներկայացուցիչները կարող էին որոշակի միջոցներ ձեռնարկել (որը չեն արել) նման դեպքն ընդհանրապես կանխելու համար, ներառյալ օրենքների, կանոնների, ինստիտուցիոնալ ընթացակարգերի ընդունումը և այլն, կամ պետական մարմինները կարող են համարժեք և պատշաճ քննություն սկսել (որը չեն արել) կամ չեն ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ իրավախախտին հայտնաբերելու և պատշաճ պատժելու և տու-

ժողին համարժեք աջակցություն ցուցաբերելու համար[261]: Պատշաճ զգուշավորության սկզբունքը հատկապես կարևոր է կանանց գենդերային հիմքով ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար, քանի որ նրանց իրավունքները ոտնահարվում են բռնարարների կողմից մասնավոր կյանքում կամ սեռական զուգընկերության շրջանակներում:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության հարցերով նախկին հատուկ զեկուցող Ռադիկա Կումարասվամիի 1999թ. Ընտանեկան բռնության վերաբերյալ զեկույցում[262] մշակվել է պետության կողմից պատշաճ զգուշավորության պարտավորությունների կատարումը որոշելու համար հետևյալ ստուգացանկը «մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի վավերացում, կանանց հավասարության սահմանադրական երաշխիքներ, բռնության ենթարկված կանանց համար համապատասխան փոխհատուցում նախատեսող ներպետական օրենսդրության և/կամ վարչական ներգործության միջոցների առկայություն, կանանց նկատմամբ բռնության խնդրին վերաբերող քաղաքականություն կամ գործողությունների ծրագրեր, քրեաիրավական համակարգի և ոստիկանության գենդերային զգայունություն, օժանդակ ծառայությունների մատչելիություն և հասանելիություն, կրթության ոլորտում և լրատվամիջոցներում խտրական քաղաքականության մասին իրազեկման և փոփոխմանն ուղղված միջոցառումների առկայություն, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների և վիճակագրության հավաքագրում»:

Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Յակին Էրթյուրքը[263] նույնպես սահմանել է այն հիմնական սկզբունքները, որոնց վրա հիմնված է կանանց նկատմամբ բռնության ոլորտում պատշաճ զգուշավորության հայեցակարգը.

1. Պատշաճ զգուշավորության պարտավորությունների կատարման ապահովման համար **վերջնական պատասխանատվությունը կրում է պետությունը**: Պետությունը չի կարող փոխանցել պատշաճ զգուշավորություն դրսևորելու իր պարտականությունը, նույնիսկ այն իրավիճակներում, երբ որոշակի գործառույթներ իրականացնում է մեկ այլ պետություն կամ ոչ պետական մարմին:
2. **Խտրականության արգելքի սկզբունքը**, որը ենթադրում է, որ պետություններից պահանջվում է կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, ոտնձգության քննության, պատժի և միջոցների տրամադրման հարցում դրսևորել նույնքան հանձնառություն, ինչպես որ բռնության այլ ձևերի դեպքում:
3. **Պատշաճ զգուշավորության պարտականությունը պետք է իրականացվի բարեխղճորեն՝** կանանց նկատմամբ բռնությունը կանխելու և դրան արձագանքելու նպատակով: Այն պարտադիր նախատեսում է պետությունների կողմից պոզիտիվ քայլեր և միջոցներ ձեռնարկել՝ապահովելու համար, որ կանանց մարդու իրավունքները պաշտպանված, հարգված, խթանված և իրականացված լինեն:
4. Կանանց նկատմամբ բռնությունը կանխելու և դրան արձագանքելու համար նախատեսված միջամտությունների ապահովման պարտականությունը հիմնված է **ճշգրիտ փորձառական տվյալների վրա:**

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի կամընտիր արձանագրության պատշաճ զգուշավորության սկզբունքը (ԿՆԽՎԿ, 2000թ.) վերահաստատում է պետությունների պարտավորությունը՝ պահպանելու պատշաճ զգուշավորության չափանիշները՝ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կամ կանանց/աղջիկների նկատմամբ սեռական բռնության գործերում: ԿՆԽՎԿ կոմիտեի՝ Կամընտիր արձանագրությանը համապատասխան ընդունված հետևյալ որոշումները կապված են կանանց նկատմամբ բռնության գործերում պատ-

261 Բրանկովիչ, 2013թ.:

262 Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հատուկ զեկուցողի տարեկան զեկույց, 1999թ., E/CN.4/1999/68, կետ 25:

263 Նույն տեղում, 34-37 կետեր:

շաճ զգուշավորության չափանիշի չկիրառման հետ՝ Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի, Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի, Ս.Վ.Պ.-ն ընդդեմ Բուլղարիայի, Իսատու Յալլոուն ընդդեմ Բուլղարիայի, Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների, Սեսիլիա Կելն ընդդեմ Կանադայի, Ֆաթմա Յըլդըրըմն (մահացած) ընդդեմ Ավստրիայի, Շահիդե Գյոկչեն ընդդեմ Ավստրիայի, Ինգա Աբրամովան ընդդեմ Բելառուսի, Վ.Պ.Պ.-ն ընդդեմ Բուլղարիայի: Այդ որոշումները հաստատում և վերահաստատում են մասնակից պետության պարտավորությունը.

- պատշաճ զգուշավորությամբ կանխել մասնավոր անհատների կողմից կանանց նկատմամբ իրականացվող բռնությունները,
- պաշտպանել տուժողին և նրան համաչափ փոխհատուցում տալ կրած ֆիզիկական և մտավոր վնասների համար, և
- քննություն անցկացնել և պատժել բռնություն գործադրած անձին:

ԿՆԽՎԿ կոմիտեն ընդգծում է նաև կանանց կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պարտավորությունը, որի խախտման մասին են վկայում տուժողի մահվան հանգեցրած բռնության գործերով որոշումները՝ Ֆաթմա Յըլդըրըմն (մահացած) ընդդեմ Ավստրիայի, Շահիդե Գյոկչեն (մահացած) ընդդեմ Ավստրիայի[264]:

ՄԻԵԴ-ի՝ պատշաճ զգուշավորության չափանիշի վերաբերյալ դատական պրակտիկայով սահմանվում է պետության պատասխանատվությունը, «եթե պետության իշխանությունները չեն գործում պատշաճ զգուշավորությամբ»[265]

I. պաշտպանության,
II. քննության,
III. քրեական հետապնդման և
IV. երրորդ անձանց կողմից կատարված խախտումները պատժելու, ինչպես նաև
V. տուժողներին փոխհատուցում տրամադրելու ժամանակ հետևյալ հարցերում[266]:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան հստակ պահանջում է (հոդված 5, պարբերություն 2), որ մասնակից պետությունները հավատարիմ մնան պատշաճ զգուշավորության չափանիշին՝ Կոնվենցիայի գործողության շրջանակներով սահմանված բռնություն գործադրած անձանց կանխարգելման, ոտնձգության քննության, պատժման և բռնության ենթարկված անձանց փոխհատուցում տրամադրելու գործում: 5-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ ներկայացվում է պետության պարտավորությունը՝ ապահովելու, որ դրա պետական մարմինները, պաշտոնատար անձինք, ներկայացուցիչները, կառույցները և պետության անունից հանդես եկող մյուս դերակատարները զերծ մնան կանանց նկատմամբ բռնարարքներ կատարելուց, իսկ 2-րդ պարբերությամբ սահմանվում է Կողմերի՝ ոչ պետական դերակատարների կողմից կատարված՝ Կոնվենցիայով կարգավորվող արարքների առնչությամբ պատշաճ զգուշավորություն ցուցաբերելու պարտավորությունը: Երկու դեպքում էլ այդպես չվարվելն առաջացնելու է պետության պատասխանատվությունը[267]:

Գենդերային բռնության ենթարկված անձանց պաշտպանելու պետության պարտականությունը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 1-ին հոդվածով սահմանված պատշաճ զգուշավորության պարտավորություններից[268]:

Կանխում/պաշտպանություն. Պատշաճ զգուշավորության չափանիշին համապատասխանու-

264 Բրանկովիչ, 2013թ.:

265 Տե՛ս գլուխ II, ենթագլուխ 2.1.2:

266 Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի, Գանգատ թիվ 55164/08, 2010թ., Բեվակուան ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 71127/01, 2008թ., Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի, Գանգատ թիվ 7510/04, 2007թ.:

267 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, պարբերություն 57:

268 Տե՛ս նաև, ԿՆԽՎԿ Ընդհանուր հանձնարարական 28:

թյան հարցում պետության առաջին պարտականությունը բռնության կանխարգելումն է՝ տուժողների համար համապատասխան պաշտպանություն ապահովելու միջոցով: ՄԻԵԴ-ը գտել է, որ պետություններն այդպես վարվելու պոզիտիվ պարտականություն ունեն՝ ՄԻԵԿ-ի 2-րդ, 3-րդ և 8-րդ հոդվածների համաձայն, որոնք են, համապատասխանաբար, կյանքի իրավունքը պաշտպանելը, խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքը և անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը:

Օրինակ՝ Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով Դատարանը գտել է, որ 2-րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտականությունը՝ **ներառում է պետության՝ կյանքի իրավունքը պաշտպանելու առաջնային պարտականությունը՝ անձի նկատմամբ հանցանքի կատարումը զսպելու համար մշակելով քրեաիրավական արդյունավետ դրույթներ, որոնց գործողությունն ամրապնդվում է այդ դրույթների խախտումների կանխարգելման, զսպման և պատժման համար նախատեսված իրավակիրառ մեխանիզմներով:** Դա համապատասխան հանգամանքներում նաև տարածվում է իշխանությունների՝ կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականության վրա, որի նպատակն է պաշտպանել այն անհատին, որի կյանքը վտանգված է մեկ այլ անհատի հանցավոր արարքների հետևանքով[269]:

Պետության՝ ՄԻԵԿ 2-րդ հոդվածի համաձայն կյանքի իրավունքը պաշտպանելու համար «կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու» պոզիտիվ պարտականությունն ուսումնասիրելիս Դատարանը կիրառել է հետևյալ չափանիշը. իշխանությունները գիտեին կամ պետք է իմացած լինեին նույնականացված անհատի կյանքին երրորդ կողմի քրեական բնույթի գործողությունների հետևանքով այդ պահին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին, և որ նրանք այնպիսի. . . միջոցներ չեն ձեռնարկել, որոնք, եթե խելամիտ դատենք, կարող էր ակնկալվել, որ կօգնեին խուսափել այդ ռիսկից [270].

Քննությունը. Պատշաճ զգուշավորության չափանիշով նաև պահանջվում է, որ պետությունները պատշաճ ձևով և արդյունավետորեն քննեն հանցագործությունները, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնություն ներառող հանցագործությունները: Թեև Դատարանը Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի գործում 2-րդ հոդվածով սահմանված նյութաիրավական ասպեկտի համաձայն հրապարակել է իր եզրահանգումը, այն այնուհետև նշել է, որ 2-րդ հոդվածի դատավարական ասպեկտներով պահանջվում է, որ «առկա լինեն պաշտոնական քննության որոշ արդյունավետ ձևեր այն դեպքում, երբ անհատներ են սպանվել ուժի գործադրման հետևանքով կա՛մ պետության պաշտոնատար անձանց, կա՛մ մասնավոր անձանց կողմից»[271] Դատարանը շարունակել է. այդպիսի քննության հիմնական նպատակը ներպետական այնպիսի օրենսդրության արդյունավետ իրականացման ապահովումն է, որով պաշտպանվում է կյանքի իրավունքը: Իշխանությունները պետք է ձեռնարկեն իրենց համար հասանելի ողջամիտ քայլեր՝ դեպքի վերաբերյալ ապացույցներն ապահովագրելու համար: Քննության ցանկացած թերություն, որը կարող է խոչընդոտել մահվան պատճառի կամ պատասխանատու անձի կամ անձանց ինքնության հաստատումը, այս չափանիշին չհամապատասխանելու ռիսկ կառաջացնի: Անկախ նրանից, թե ինչ մեթոդ է կիրառվում, «իշխանությունները պետք է գործեն իրենց սեփական նախաձեռնությամբ» անմիջապես, երբ հարցն իրենց ուշադրության կենտրոնում է հայտնվում [272].

Այսպիսով, պետության՝ ՄԻԵԿ 2-րդ հոդվածի համաձայն պոզիտիվ պարտականությամբ պահանջվում է ի պաշտոնե քննություններ: Մ.Ց.-ն ընդդեմ Բուլղարիայի գործում, որը ներառում էր 14 տարեկան աղջկա խմբակային բռնաբարության դեպք, Դատարանը վճռել է, որ պետություններն ունեն նաև Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելք) և 8-րդ հոդվածի (մասնավոր կյանքը հարգելու իրավունք) համաձայն քննելու պոզիտիվ պարտականու-

269 Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02, 2009, պարբերություն 128; տե՛ս նաև Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի, Գանգատ թիվ 46598/06, 2009, պարբերություն 49:

270 Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02, 2009, պարբերություն 130:

271 Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի , Գանգատ թիվ 46598/06, 2009, պարբերություն 62:

272 Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի , Գանգատ թիվ 46598/06, 2009, պարբերություն 62:

թյուն[273]: Պետության՝ ՄԻԵԿ 3-րդ հոդվածի համաձայն քննելու պոզիտիվ պարտականության առնչությամբ Դատարանը նշել է. «Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ծագում է պաշտոնական քննություն իրականացնելու պոզիտիվ պարտականություն: Չի կարող համարվել, որ այդ պոզիտիվ պարտականությունն ընդհանուր առմամբ սահմանափակվում է միայն պետության գործակալների կողմից վատ վերաբերմունքի դեպքերով»[274]: 8-րդ հոդվածի համաձայն պոզիտիվ պարտականության հետ կապված՝ Դատարանը բացատրել է. Չնայած անհատների կողմից կատարված արարքներից պաշտպանության ոլորտում 8-րդ հոդվածի հետ համապատասխանության ապահովմանն ուղղված միջոցների ընտրությունն ընդհանուր առմամբ գտնվում է պետության հայեցողության շրջանակում՝ այնպիսի ծանր արարքները, ինչպես օրինակ՝ բռնաբարությունն է, արդյունավետորեն զսպելու համար, որոնց դեպքում մասնավոր կյանքի հիմնարար արժեքներն ու կարևոր ասպեկտները վտանգված են, պահանջվում են քրեաիրավական արդյունավետ դրույթներ: Երեխաները և այլ խոցելի անհատներ, մասնավորապես, արդյունավետ պաշտպանության իրավունք ունեն[275]:

ՄԻԵԴ-ն Այդինն ընդդեմ Թուրքիայի գործով գտել է, որ պետությունը պատշաճ քննություն չի իրականացրել, քանի որ չի փորձել գտնել տուժողի բռնաբարության և խոշտանգման դեպքերի ականատեսներին[276]. Դատարանը համաձայնել է տուժողի հետ այն մասով, որ եղել է «անկախ և խիստ քննության ու կատարվածի քննության քաղաքականության բացակայություն», ինչպես նաև «բողոքողների ահաբեկման տարածվածություն ... և բժշկական ապացույցներ ձեռք բերելու մասնագիտական չափանիշների բացակայություն»[277]:

Հետապնդումը. պետության երրորդ պարտականությունը, **պատշաճ զգուշավորության չափանիշի համաձայն, համարվում է այս հանցանքները կատարած անձանց արդար և արդյունավետ քրեական հետապնդումը**[278]**:** Այս հարցը հատուկ նշանակություն է ունենում ընտանեկան բռնության գործերով, որտեղ բռնության շրջանակը շատ հաճախ հանգեցնում է, որ տուժող ները հետ վերցնեն իրենց բողոքները: Ինչպես նկարագրված է վերը, Դատարանը գտել է, որ Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործում «կարևոր» հարցն այն է եղել, թե արդյոք իշխանությունները ցուցաբերե՞լ են պատշաճ զգուշավորություն՝ «անկախ տուժողների կողմից բողոքները հետ վերցնելու հանգամանքից»[279]:

Դատարանը եզրակացրել է, որ **«որքան ծանր է հանցանքը, և որքան մեծ է հետագա հանցանքների վտանգը, այնքան ավելի նպատակահարմար է, որ քրեական հետապնդումը շարունակվի՝ հանրության շահերից ելնելով, նույնիսկ եթե տուժողները հետ են վերցնում իրենց բողոքները»**[280]**:** Այս առումով այն նշել է գործի մի քանի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ընտանեկան բռնությանն առնչվող գործերին: Դատարանն ընդգծել է, որ՝ «դիմումատուի և նրա մոր նկատմամբ նկատվում էր [ոտնձգողի] կողմից բռնության սրացում: [Ոտնձգողի] կողմից կատարված հանցանքները բավականաչափ ծանր էին՝ կանխարգելիչ միջոցների նշանակումը հիմնավորելու համար, և տուժողների առողջությանն ու անվտանգությանը շարունակաբար վտանգ էր սպառնում: Հարաբերությունների պատմության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոտնձգողը բազմիցս ընտանեկան բռնություն է գործադրել, և հետևաբար եղել է հետագա բռնության լուրջ վտանգ»[281]:

Թիվ 28 ընդհանուր հանձնարարականում ԿՆԽՎԿ կոմիտեն հաստատել է, որ՝ «եթե կանանց նկատմամբ բռնության հետևանքով խախտվում են նաև մարդու այլ իրավունքներ, ինչպես օրի-

---

273 Մ.Ց.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 39272/98, 2004, պարբերությունs 150-153:

274 Մ.Ց.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 39272/98, 2004, պարբերությունs 151:

275 Մ.Ց.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 39272/98, 2004, պարբերություն 150:

276 Այդինն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 23178/94, 1997թ.:

277 Այդինն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 23178/94, 1997թ.:

278 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան:

279 Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02, 2009:

280 Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02, 2009, պարբերություն 139:

281 Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի , Գանգատ թիվ 46598/06, 2009, պարբերություն 50.

նակ՝ կյանքի իրավունքը կամ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, օրինակ՝ ընտանեկան բռնության և բռնության այլ ձևերի դեպքում, ապա Կողմ պետությունները պարտավոր են հարուցել քրեական վարույթ՝ բռնություն գործադրած անձին (անձանց) դատական պատասխանատվության ենթարկելու և համապատասխան քրեական պատիժներ նշանակելու համար[282]:

Պատիժը. ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականով նախատեսվում է. «Պետությունները կարող են նաև պատասխանատվություն կրել մասնավոր արարքների համար, եթե նրանք չեն գործել պատշաճ զգուշավորությամբ՝ իրավունքների խախտումները կանխելու համար կամ քննելու և բռնարարքները պատժելու համար, ինչպես նաև փոխհատուցում տրամադրելու համար» [283]. Ավելին, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնությունը կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 45-րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունները ձեռնարկեն օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ, սույն Կոնվենցիային համապատասխան, նախատեսվող հանցագործությունները պատժվեն **արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ ներգործության միջոցներով**՝ հաշվի առնելով դրանց ծանրությունը: Այս պատժամիջոցները ներառում են, ըստ անհրաժեշտության, ազատազրկման հետ կապված պատիժներ, ինչը հանձնման հարց բարձրացնելու հնարավորություն է տալիս: Մասնակից պետությունները կատարողների նկատմամբ կարող են կիրառել այլ միջոցներ ևս, մասնավորապես՝ դատապարտված անձանց վարքագծի դիտարկում կամ վերահսկողություն, ծնողական իրավունքներից զրկելը, եթե երեխայի լավագույն շահերը, որոնց թվում կարող է լինել տուժողի անվտանգությունը, չեն կարող երաշխավորվել այլ կերպ:

ՄԻԵԴ-ն Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի գործով գտել է 8-րդ հոդվածի խախտում՝ ընտանեկան բռնության գործով բազմաթիվ վարույթներ (երեք քրեական վարույթ, մանր իրավախտումների համար չորս վարույթ) ներառող գործում: Այդ վարույթների արդյունքը եղել է մի շարք պաշտպանական որոշումներ կայացնելը, մինչդատական կալանքի վերցնելը, հոգեբուժական և հոգեսոցիալական բուժումը և ազատազրկման դատապարտելը: Թեև որոշ պատժամիջոցներ ի կատար են ածվել, բռնություն գործադրած անձը իր կատարած երկու իրավախախտումների համար (որոնցից մեկը ներառում էր տուժողին մահվան սպառնալիքներ հղելը) ազատազրկման չի դատապարտվել: ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը պատշաճ կերպով չի պաշտպանել դիմումատուի իրավունքներն այն դեպքում, երբ իշխանությունները հաշվի չեն առել բազմաթիվ քրեական և մանր իրավախախտումների գծով վարույթները, որոնք վերաբերել են նույն անձի կողմից նույն տուժողի նկատմամբ կատարված մի շարք բռնարարքների՝ այդպիսով չդիտարկելով գործի նախապատմությունը որպես մեկ ամբողջություն: Այս գործում ընդգծվում է դատական համակարգում համագործակցության կարևորությունը, ինչպես նաև համապատասխան պատիժը և (կամ) պաշտպանության միջոցը որոշելիս վարույթների ամբողջ շրջանակն ուսումնասիրելու անհրաժեշտությունը: Դրանով նաև ուշադրություն է հրավիրվում դատավճիռների կատարման և պատժի կրելն ապահովելու նկատմամբ դատական վերահսկողության դերին[284]:

Փոխհատուցումը. Ունենալով նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք՝ Ստամբուլի կոնվենցիայի 30-րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունները «**ձեռնարկեն օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողներն ունենան սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցանքներից ցանկացածը կատարած անձից փոխհատուցում պահանջելու իրավունք:** ՄԻԵԴ-ը Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի գործով վճռել է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք) խախտում, քանի որ դիմումատուն հնարավորություն չի ունեցել պահանջելու ոչ նյութական վնասի

282 ԿՆԽՎԿ, Ընդհանուր հանձնարարական թիվ 28 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն `Մասնակից պետությունների հիմնական պարտավորությունների մասին, CEDAW/C/GC/28, 2010, պարբերություն 34:

283 ԿՆԽՎԿ Ընդհանուր հանձնարարական թիվ 19, պարբերություն 9:

284 Եվրոպայի խորհուրդ, Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների և դատախազների վերապատրաստման ձեռնարկ , 2016 թվական, էջ 85,հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/training-manual-final-english/16807626a4.

հատուցում՝ ոստիկանության այն աշխատակիցների կողմից իրենց պարտականությունները թերի կատարելու համար, որոնք չեն պաշտպանել իր երեխաներին ամուսնու կողմից ատրճանակով կրակելուց[285]:

Պետություններն ունեն տուժողներին փոխհատուցում տրամադրելու պարտականություն, նույնիսկ եթե պետության գործակալները ուղղակիորեն պատասխանատու չեն բռնության համար: Միավորված ազգերի կազմակերպության՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով հատուկ զեկուցողն արձանագրել է, որ «միջազգային հանրության կողմից վերջերս հաստատված նորմերի համատեքստում այն պետությունը, որը չի պայքարում կանանց նկատմամբ բռնության հետ կապված հանցագործությունների դեմ, համարվում է այնքան մեղավոր, որքան կատարողները»[286]:

Քրեական արդարադատության համակարգերին և մասնագետներին՝ իրենց պատշաճ զգուշավորության պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով, 2010թ. դեկտեմբերին Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց Հանցագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում կանանց նկատմամբ բռնության վերացման մոդելային ռազմավարությունները և գործնական միջոցները: Նորացված մոդելային ռազմավարությունները և գործնական միջոցառումները ապահովում են քրեական արդարադատության ռազմավարությունների և միջոցառումների համապարփակ փաթեթ, որը կօգնի քրեական արդարադատության ոլորտի մասնագետներին ավելի լավ լուծել կանանց խնդիրները և ապահովել նրանց նկատմամբ արդար վերաբերմունքը արդարադատության համակարգում: Մասնավորապես, դրանք նախատեսում են, որ կանանց նկատմամբ բռնության դեպքերի հետապնդման պատասխանատվությունը կրում է դատախազությունը և ոչ թե բռնության ենթարկված անձը՝ անկախ վնասվածքի աստիճանից կամ տեսակից:

Ներդիր 8. Քրեական արդարադատության համակարգ համակարգի կողմից կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը արդյունավետ արձագանքման տարրերը

Նորացված Մոդելային ռազմավարությունները և գործնական միջոցառումները սահմանում են քրեական արդարադատության համակարգի կողմից կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը արդյունավետ արձագանքման հետևյալ տարրերը[287].

- Զոհակենտրոն. Տուժողի անվտանգությունն ու բարեկեցությունը քրեական արդարադատության համակարգի արձագանքման գերակա նպատակներն են: Քրեական արդարադատության համակարգի զոհակենտրոն արձագանքը տուժողներին ճանաչում է, որպես քրեական արդարադատության գործընթացի հիմնական մասնակիցների, որոնք արժանի են պատեաժամ, կարեկցական, հարգալից և պատշաճ վերաբերմունքի: Տուժողներն ունեն լավ տեղեկացված լինելու իրավունք՝ ոտնձգության քննության և քրեական արդարադատության գործընթացի բոլոր փուլերին մասնակցելու վերաբերյալ իրենց որոշումները կայացնելու համար: Տուժողները շատ ավելի լավ գիտեն, թե ինչի կարիք ունեն և ինչ ռիսկերի են բախվում: Քրեական արդարադատության համակարգի արձագանքը նրանց օգնում է ռիսկերի կառավարման և տուժողների անվտանգության ապահովման գործում: Իրավապահ մարմիններն ու արդարադատության համակարգը՝ իր ընթացակարգային բոլոր կանոններով և քաղաքականությամբ, պետք է գործեն այնպես, որ իրավազորեն բռնության ենթարկված բոլոր կանանց: Ընտանեկան բռնությունը, բռնաբարությունը և սեռական բռնությունը, սեռական ոտնձգությունը և բռնության այլ ձևերը հաճախ զրկում են կանանց վերահսկողության, ինքնուրույնության, ինքնահարգանքի և անձնական անձեռնմխելիության զգացումից: Իրավապահ մարմինները և արդարադատության համակարգը պետք է ձգտեն վերականգնել և ամրապնդել այդ հատկանիշները՝ միաժամանակ խուսափելով տուժողի կրկնակի վիկտիմիզացիայի հանգեցնող միջոցներից:

285 Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի, Գանգատ թիվ 7510/04, 2007թ.:

286 Միավորված ազգերի կազմակերպության՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով հատուկ զեկուցող, Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ իրականացումը բարելավելու համար այլընտրանքային մոտեցումներ, եղանակներ ու միջոցներ, 72-րդ պարբերություն, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ E/CN.4/1995/42 (1994 թվականի նոյեմբերի 22) (պատրաստվել է Ռադիկա Կումարասվամիի կողմից), որտեղ նույնպես նշվում է, որ «անհրաժեշտ է, որ փոխհատուցման միջոցներով կապ հաստատվի առանձին հատուցման և կառուցվածքային փոխակերպման միջև», որոնք ... նախապես առկա մոդելները, գենդերային աստիճանակարգությունը, սիստեմատիկ մարգինալացումը և կառուցվածքային անհավասարություններն ամրապնդելու փոխարեն միտված են դրանք վերացնելուն . . . .»:

287 Գլխավոր ասամբլեայի բանաձև 65/228, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.unodc.org/documents/justice-and-

-Իրավախախտի պատասխանատվությունը. Կանանց նկատմամբ բռնության դեպքերը քննելիս քրեական արդարադատության համակարգը՝ տուժողի վստահելիությունը կասկածի դնելու փոխարեն շեշտադրումը պետք է դնի ապացույցների հավաքագրման և գործի կառուցման բարելավման, ինչպես նաև դեպքի քննության, հետապնդման և պատժի հետևողականության ապահովման վրա: Այդ ամենը նախատեսում է ոստիկանության և դատախազի միջև գործի քննարկումը վաղ փուլում՝ հնարավոր ապացուցողական թուլություններն ուսումնասիրելու և որոշելու, թե արդյոք դրանք կարող են վերածվել լրացուցիչ ապացույցների, փորձագետների ցուցմունքների, հետազոտության արդյունքների կամ դատարանում տուժողի շահերի պաշտպանության միջոցի:

-Համապարփակ, համակարգված և բազմակողմանի մոտեցում: Կանանց նկատմամբ բռնությանը արձագանքելու համար քրեական արդարադատության համակարգի տարբեր կառույցները պետք է համակարգված աշխատեն: Քրեական արդարադատության ոլորտը պետք է նաև նպաստի կառավարության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության բոլոր համապատասխան հատվածների ներգրավվածությանը՝բռնության ենթարկված անձանց համապարփակ աջակցությունն ապահովելու համար: Այդպես՝ աջակցության գործակալությունները ցուցմունքներ վերցնելու և գործի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ընթացքում աշխատում են ոստիկանության և դատախազների հետ՝ տուժողներին աջակցություն ցուցաբերելու համար:

-Մասնագիտացված փորձաքննություն. Կանանց նկատմամբ բռնության մասնագիտացված մոտեցումներից են ոստիկանության և դատախազության հատուկ ստորաբաժանումների և հատուկ դատարանների կամ արդարադատության համակարգի հատուկ անձնակազմի կազմավորումը, դատական հատուկ ժամանակի հատկացումը և համապատասխան մասնագիտացված ուսուցման ֆինանսավորումը, ինչպես նաև բազմաոլորտ մոտեցումները, օրինակ՝ մեկ պատուհանի սկզբունքով կենտրոնները (որոնք մեկ վայրում իրականացնում են տուժողների գործերի բազմաոլորտ կառավարում, ներառյալ առողջապահական, սոցիալական, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների մատուցում):

-Բավարար միջոցներ. Արդյունավետ արձագանք ապահովելու համար պետությունը բավարար միջոցներ պետք է ներգրավի:

-Մոնիթորինգի մեխանիզմ. Պետության արձագանքի արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև վերահսկողություն ապահովելու համար անհրաժեշտ է մոնիթորինգ իրականացնել իրավապահ մարմինների և արդարադատության իրականացման նկատմամբ:

4.3. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՅԻՑ ԵՎ ՏՈՒԺՈՂԻՆ ՄԵՂԱԴՐԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ

Ընտանեկան բռնության հետ առնչվելիս համակարգի յուրաքանչյուր մասնագետի առաջնային խնդիրը՝ առաջին միջամտությունից սկսած և հետագա գործողություններում տուժողի և երեխաների անվտանգության ապահովումն է և նրանց իրավունքների ու կարիքների ապահովումը: Ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին պաշտպանություն և աջակցություն ցուցաբերելիս տուժողին չպետք է մեղադրել, դրսևորել անհարգալից վերաբերմունք, ցուցադրական խղճահարություն կամ հովանավորություն (պատրոնաժ): Թեև առաջին հայացքից թվում է, որ դա պարզ և հեշտ կիրառելի խնդիր է, սակայն մասնագետները երբեմն գործում են (հաճախ ակամա) արմատացած գենդերային կարծրատիպերի ազդեցության տակ:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՅԻ գաղափարը առաջին անգամ մշակվել է 1980-ականներին կանանց ոչ կառավարական կազմակերպությունների կողմից, որոնք աշխատում էին բռնության ենթարկված անձանց հետ՝ նկարագրելու արդարադատության համակարգում կանանց փորձը և բացատրելու, թե ինչու են կանայք դժկամությամբ հաղորդում բռնության դեպքերի մասին ոստիկանությանը: Երկրորդային վիկտիմիզացիան կարող է սահմանվել որպես կրկնավնասում, որն առաջանում է կարծրատիպերի և տուժողներին մեղադրող վերաբերմունքի, վարքագծի, գործելակերպի և գործընթացների պատճառով, որոնք առնչվում են ընտանեկան բռնության զոհերի կամ կանանց նկատմամբ բռնության այլ ձևերի իշխանությունների, հաստատությունների, ծառայու-

prison-reform/crimeprevention/Model_Strategies_and_Practical_Measures_on_the_Elimination_of_Violence_against_Women_in_the_Field_of_Crime_Prevention_and_Criminal_Justice.pdf

թյուններ մատուցողների, լրատվամիջոցների, համայնքի կողմից: «Երկրորդային վնասում» եզրույթը նշանակում է կրկնավնասում, որը պատճառվել է տուժողին իշխանությունների, հաստատությունների, ծառայություն մատուցողների, լրատվամիջոցների, համայնքի կամ ընտանիքի կողմից՝ կարծրատիպային և մեղադրող մոտեցումների, դրսևորած վարքագծի կամ գործելակերպերի կամ կանանց նկատմամբ բռնության այլ ձևերի հետևանքով[288]:

Երկրորդային վիկտիմիզացիան, հետևաբար, տեղի է ունենում տուժողների կողմից բռնության ենթարկվելուց հետո՝ անձանց և հաստատությունների դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ արձագանքի հետևանքբով: Տուժողին մեղադրելուց բացի, երկրորդային վիկտիմիզացիայի օրինակներն են՝ տուժողին չհավատալը կամ նրա գործի նկատմամբ անհետաքրքրվածությունը, քննադատողականությունը, կարեկցանքի և զգայունության բացակայությունը, իրավախախտի կողմն անցնելը, միջամտող վարքագիծը, պայմանական օգնություն առաջարկելը, անպատշաճ հարցեր տալը և տեղեկատվությունն անտեսելը: **Երկրորդային վիտիմիզացիայի հետևանքներն ու ազդեցությունը ընտանեկան բռնության նկատմամբ զոհակենտրոն մոտեցմանը չեն համապատասխանում և, ամենայն հավանականությամբ, հանգեցնում են անարդյունավետ և վնասակար միջամտությունների:** Եթե հաստատությունների կամ ծառայությունների հետ շփվելիս բռնության ենթարկված անձը ենթարկվում է կրկնակի վիկտիմիզացիայի, դա նվազագույնի է հասցնում համակարգի նկատմամբ նրա վստահությունը, ինչպես նաև հավատը, որ կա ինչ-որ մեկը, ով կարող է օգնել իրեն և իր երեխաներին, նաև կրճատում հետագայում նրա կողմից օգնություն հայցելու հավանականությունը[289]: Երկրորդային վիկտիմիզացիան հանգեցնում է տուժողի անվստահության համակարգի նկատմամբ, թերահավատության, որ ինչ-որ մեկը կարող է օգնել նրան, առաջացնում մեղքի զգացում, որի հետևանքով հետագայում տուժողը խուսափում է հաղորել բռնության մասին:

Քրեական արդարադատության գործընթացում՝ սկզբնական արձագանքից մինչև վերջնական դատական որոշման կայացումը որոշակի հանգամանքներ կարող են հանգեցնել տուժողի կրկնավնասմանը: Դրանք են.

- բազմաթիվ հարցազրույցների մասնակցելու անհրաժեշտությունը,
- դատաբժշկական փորձաքննությունը,
- ցուցմունք տալն ու կրկին ցուցմունք տալու անհրաժեշտությունը,
- դատարանում պաշտպանություն չտրամադրելը, մեղադրյալի հետ առերեսումը,
- հետաձգումներն ու ձգձգումները,

դատական ոլորտում առկա կարծրատիպերի վրա հիմնված որոշումները[290]:

Երկրորդական վիկտիմիզացիա տեղի է ունենում, երբ համակարգի մասնագետները չեն աջակցում տուժողին, այլ մեղադրում են նրան վերապրած բռնության համար: Այսինքն՝ տուժողը կրկնակի վիկտիմիզացիայի է ենթարկվում հաստատությունների մասնագետների կողմից, որոնք պարտավոր են պաշտպանել և աջակցել նրան: Բացի տուժողին մեղադրելուց, երկրորդական վիկտիմիզացիան արտահայտվում է հետևյալ ձևերով. տուժողի պնդումների նկատմամբ անվստահություն ենթադրող վարքագիծ, անտարբերություն, անզգայություն, բռնության թերագնահատում կամ անտեսում, տուժողին դատապարտում, բռնություն գործադրողին արդարացում, անհանդուրժողականություն, պայմանական օգնության՝ իրավախախտի հետ առերեսման և/կամ դատական վարույթին մասնակցելու տեսքով, տուժողին և իրավախախտին «հաշտեցնելու» փորձ, տուժողին «համբերատար» լինելու կոչ, անպատշաճ հարցեր և թերի տեղեկատվություն:

Տուժողի կրկնավնասումը նվազեցնելու հնարավորություն պարունակող գործոններից է տուժողին՝ իր գործով զբաղվելու համար կին ոստիկան ընտրելու հնարավորության ընձեռնումը: Այդ ոստի-

288 Լոգար Ռ. և այլք, 2015թ.:

289 Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար, 2016 թ. հունվար, էջ 19:

290 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան:

կանության աշխատակիցները պետք է անցնեն կանանց նկատմամբ բռնության և տուժողների/բռնության ենթարկվածների հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ մասնագիտացված ուսուցում: Ոստիկանությունում կանանց ներկայությունը կրճատում է վերջինիս կադրային միատարրությունը, ինչը նպաստում է աշխատանքի արդյունավետությունը[291]: Խորհուրդ է տրվում (հնարավորության դեպքում) կին ոստիկաններին տեղում մասնակցել ոստիկանության միջամտությանը և ընտանեկան բռնության հետ կապված այլ գործողություններին[292]:

Գործողություն 7. Ինչպես պետք է և ինչպես պետք չէ վարվել տուժողի/բռնության ենթարկված անձի հետ

Նպատակը. Բարձրացնել մասնագետների ըմբռնումը այն ընթացակարգերի և պնդումների վերաբերյալ, որոնք կարող են վնասել տուժողին

Տևողությունը. Ընդհանուր՝ 35 րոպե, անհատական աշխատանք՝ 5 րոպե, խմբային աշխատանք՝ 10 րոպե, խմբային քննարկում՝ 20 րոպե:

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ «Ինչպես է պետք և ինչպես պետք չէ»:

Անցկացման ձևը. Անհատական աշխատանք, խմբային աշխատանք, խմբային քննարկում (որին մասնակցում է ամբողջ խումբը)

Ցուցումներ. Դասընթացավարը խնդրում է մասնակիցներին լրացնել բաժանված նյութը՝ «Ինչպես է պետք և ինչպես պետք չէ»: Բաժանված նյութը յուրաքանչյուր մասնակցի կողմից լրացնելուց հետո դասընթացավարը մասնակիցներին բաժանում է երեք խմբի և խնդրում նրանց երկրորդ անգամ լրացնել բաժանված նյութի մեկ օրինակն, այս անգամ այն սկզբունքով, որ.

1-ին խումբը հաշվի է առնում, որ տուժողը ազգությամբ գնչու (ռոմա) է, 2-րդ խումբը՝ որ տուժողը մարմնավաճառությամբ է զբաղվում, իսկ 3-րդ խումբը՝ որ տուժողը հաշմանդամ է:

Դասընթացավարը խնդրում է յուրաքանչյուր խմբի մեկական անդամի ներկայացնել իրենց խմբի պատասխանները, այնուհետև դրանք գրել գրատախտակի վրա: Դասընթացավարը նախաձեռնում է քննարկումը հատուկ ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, թե տուժողի վրա որքան մեծ ազդեցություն են թողնում ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ արվող մեղադրական ձևակերպումները, նշելով մասնավորապես, թե որ հարցերը չպետք է տրվեն և ինչու: Դասընթացավարը բացատրում է, որ տուժողին թվում է, որ իրեն մեղադրում են իր հանդեպ գործադրված կրած բռնության համար: Շատ կարևոր է, որ տուժողն իմանա, որ կատարողը պատասխանատվություն է կրում բռնության համար և, որ ոստիկանության աշխատակիցները դա հաստատեն:

Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ինչպես է պետք և ինչպես պետք չէ»

Խնդրում ենք լրացնել «Ինչպես է պետք» սյունակը.

Ինչպես պետք չէ	Ինչպես է պետք
1. «Դա պարզապես սովորական վեճ է. դուք կհաշտվեք»:	
2. «Դա այդքան վատ չէ. եթե այդքան վատ լիներ, մինչ այժմ նրան լքած կլինեիք»:	
3. «Ի՞նչ եք արել որ ձեզ հարվածել են»:	
4. «Չէ որ նա երբեք չի հարվածել ձեզ և այն, ինչ դուք հայտնում եք, բռնություն չէ»:	
5. «Ինչո՞ւ ուղղակի չեք հեռանում նրանից»:	
6. «Ես չեմ հավատում, որ XX-ն կարող էր նման բան անել. նա միշտ շատ քաղաքավարի է և հոգ է տանում ձեր և երեխաների մասին»:	
7. «Ակնհայտ է, որ նա շատ մեծ լարվածության տակ է աշխատավայրում»:	

291 «Բռնության ենթարկվող կանանց և աղջիկների նկատմամբ ոստիկանական ծառայությունների գենդերազգայուն արձագանքման ձեռնարկ. բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար»: ՄԱԿ-ի Կանայք, ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (ՄԱԹՀՊԳ) և Կին ոստիկանների միջազգային ասոցիացիա (IAWP):

292 Բրանկովիչ Բ., Միրցևա, Ս., 2016թ.:

8. «Եթե նա դադարի խմել/թմրանյութեր ընդունել, կդադարի բռնություն գործադրել»:	

Աղբյուրը՝ Բրանկովիչ Բ., Միրցևա, Ս., 2016թ.:

«Պատմիր ինչպես որ կա» վավերագրական ֆիլմը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=ChwocBsef5E

Քննարկեք վավերագրական ֆիլմը: Դասընթացավարը նախաձեռնում է հետևյալ հարցերի քննարկումը.

Ի՞նչ տեղի ունեցավ:

Ինչպե՞ս դուք կվարվեիք:

Ինչո՞ւ:

Արդյո՞ք տուժողին մեղադրում են:

Ո՞րն է տուժողին հղվող ուղերձը:

Ընտանեկան բռնության դեպքերում ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության և աջակցության ընդհանուր համակարգի հիմնական գործառույթն է ապահովել բավարար աջակցություն և համարժեք պաշտպանություն, որը նրանց հնարավորություն կտա ազատ և անկախ որոշում կայացնել սեփական անվտանգության մասին և շարժվել դեպի բռնությունից ազատ կյանք: Արդյոք վերջ տալ բռնի հարաբերություններին, լքել բռնարարին, թե ոչ, դա միայն տուժողն է որոշում: Մասնագետների դերն է՝ տուժողին ազատ որոշելու հնարավորություն տալ: Դա նշանակում է, որ համակարգի հաստատությունների միջոցներն ու գործունեությունն ուղղվում են ոչ թե բռնի հարաբերությունները խզելուն, այլ տուժողին որոշում կայացնելու համար իրավազորելուն: Բռնարարին լքելու որոշումը բարդ գործընթաց է, որը կապված է մարդու՝ մասնավոր և ընտանեկան կյանքի հիմնական իրավունքից օգտվելու հետ: Սակայն, երբ տուժողը հնարավորույուն ունի որոշելու շարունակել բռնի հարաբերությունները և անարգել դա անում է, դա չի նշանակում, որ նման դեպքում նա դադարում է օգտվել մարդու մեկ այլ հիմնարար իրավունքից, այն է անվտանգության, այսինքն՝ առանց բռնության ապրելու իրավունքից: Տուժողի՝ միմյանց չբացառող անկապտելի իրավունքների լավ պատկերացումը հիմք է հանդիսանում պոտենցիալ երկրորդային վիկտիմիզացիայի չեզոքացման համար:

Մասնագետները հաճախ զարմանում կամ հիասթափվում են, որ ընտանեկան բռնության տուժողը որոշում է չխզել բռնի հարաբերությունները, հրաժարվում է մասնակցել քրեական վարույթին, հետ է վերցնում իր դիմումը կամ ցուցմունքները: Պաշտպանության և (կամ) աջակցության միջոցներ ձեռնարկելու տեսանկյունից, որը ներառում է մարդկային և նյութական ռեսուրսների ծախսումը, տուժողի՝ համակարգի հստատությունների հետ «համագործակցելուց» հրաժարվելը կարող է առաջացնել մասնագետների դիմադրությունը: Տուժողի վարքի մասին կարծրատիպերը կարող են հանգեցնել նրան մեղադրելուն, որի արդյունքում՝ երկրորդային վիկտիմիզացիայի:

Ընտանեկան բռնության տուժողներից շատերին մեղադրում են բռնության պատճառը լինելու, խնդիրներ ունենալու կամ բռնությանն արժանի լինելու մեջ, քանի որ նրանք վերադարձել են բռնարարի մոտ: Այդ ամենը մեծապես նպաստում է իրական խնդրից ուշադրությունը շեղելուն, որի հետևաքով կատարողի փոխարեն հաճախ մեղադրում են տուժողին: Պաշտպանություն և աջակցություն ապահովելու համար պատասխանատու մասնագետների, ինչպես նաև ընտանիքի և շրջապատի կողմից բռնության պատասխանատվությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն տուժողի վրա դնելը կրկնակի վնասի է հանգեցնում: Նախ, տուժողը հուսահատվում է օգնություն և աջակցություն փնտրելուց և ընդունում է, որ ինքն է մեղավոր իր հանդեպ գործադրված բռնության համար: Երկրորդ՝ բռնարարի կողմից բռնությունը արդարացվում է, պատասխանատվությունը նրանից անցնում է դեպի տուժողը, և բռնի վարքի մոդելը[293]:

Գրականությունում այս երևույթը կոչվում է **ՏՈՒԺՈՂԻՆ ՄԵՂԱԴՐԵԼ**: Տուժողին մեղադրելը «ժխտ-

293 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Ս., 2016թ.

ման գործողություն է, որը տեղի է ունենում, երբ հանցագործության կամ դեպքի համար պատասխանատվությունն իրավախախտի փոխարեն ամբողջությամբ կամ մասամբ դրվում է տուժողի(նե-րի) վրա: Այդպիսի մեղադրումը կարող է արտահայտվել իրավական, բժշկական և հոգեկան առողջության մասնագետների, ինչպես նաև ԶԼՄ-ների, ընտանիքի անմիջական անդամների և այլ ծանոթների կողմից տրված բացասական սոցիալական արձագանքի ձևով»[294]:

Ընտանեկան բռնության դեպքերում գործելը հեշտ չէ: Մասնագետները պետք է հասկանան, որ իրենց հետ բերում են բռնության և հոգեկան տրավմայի իրենց սեփական պատկերացումները: Հաճախ, տուժողի տրավմատիկ ապրումները կարող են այնքան սարսափելի լինել, որ մասնագետին՝ հոգեկան հավասարակշռություն պահպանելու համար անհրաժեշտ է հուզական հեռավորություն պահպանել տուժողից, նրա ապրումների մասին սթափ դատելու համար: Նման դեպքերում կարող է նկատվել տուժողին մեղադրելու կամ նրան չվստահելու միտում: Այդ իսկ պատճառով ընտանեկան բռնության դեպքերով զբաղվող մասնագետներն առանցքային դերակատարություն ունեն տուժողի հետագա տրավմատիզացիան կանխելու հարցում: Դրան հասնելու լավագույն միջոցը կենտրոնանալն է տուժողի կարիքների և իրավունքների վրա: Հավասարապես կարևոր է, որ մասնագետները բացահայտեն և կարգավորեն սեփական տեսակետներն ու նախապաշարմունքները, որպեսզի նրանք կարողանան ավելի նրբանկատ վերաբերմունք ցուցաբերեն ընտանեկան բռնության տուժողների նկատմամբ:

Տուժողին մեղադրելու պատճառների հետ կապված գրականությունում կա մի քանի տեսություն, մասնավորապես՝ արդար աշխարհի հանդեպ հավատը, վերագրման սխալի տեսությունը և անխոցելիության տեսությունը[295]:

Արդար աշխարհի հանդեպ հավատը

- Այն հիմնված է մարդու այն համոզմունքի վրա, որ աշխարհը ապահով և արդար վայր է, որտեղ լավ բաները պատահում են լավ մարդկանց, իսկ վատերը՝ վատ մարդկանց:
- Վիկտիմիզացիան առաջացել է տուժողի իսկ մեղքի պատճառով, և տուժողն արժանի է իր դժվարություններին, նա անհավատարիմ էր, անհնազանդ:
- Անձնական պատասխանատվության և արդյունքների վերահսկման վերաբերյալ համոզմունքներ:

Վերագրման սխալի տեսություն

- Մարդիկ կիրառում են երկու տեսակի վերագրում՝ ներքին (մարդկանց անձնական բնութագրիչներն են իրենց իրավիճակի պատճառը) և արտաքին (մարդիկ միջավայրն ու հանգամանքները ճանաչում են որպես մարդու վարքի պատճառ):
- Վերագրման սխալը տեղի է ունենում, երբ մարդու փորձը վերագրվում է նրա անձին և իրավիճակի ազդեցությունն անտեսվում է (օրինակ՝ կատարողի պատասխանատվությունը սեփական վարքի համար):
- Հետևաբար, իր հետ կատարվողի համար մասամբ մեղավոր է տուժողը:

Անխոցելիության տեսություն

- Մարդիկ մեղադրում են տուժողին այն բանի համար, որ նա իրեն ապահով է զգում և պաշտպանում է սեփական անձեռնմխելիության զգացումը: Օրիմակ՝ «Նրան բռնաբարել են, քանի որ գիշերը տուն էր գնում միայնակ: Եթե ես ինձ չպահեմ տուժողի պես, ինձ երբեք չեն բռնաբարի»:

Աղբյուրը՝ «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելում և դրա դեմ պայքար». Ուսումնական ռեսուրս իրավապահ և արդարադատության ծառայողների վերապատրաստման համար», 2016թ., Ռումինիայի ոստիկանության գլխավոր տեսչություն:

294 Հանցագործության տուժողների կանադական ռեսուրսային կենտրոն (2009թ.). «Տուժողի մեղադրում», հասանելի է հետևյալ հղումով՝ http://crcvc.ca/docs/victim_blaming.pdf

295 Ռումինիայի ոստիկանության գլխավոր տեսչություն, 2016թ.:

Գործողություն 8. Խոչընդոտները և խնդիրները

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք՝ ընտանեկան բռնությունից օգնություն, աջակցություն և պաշտպանություն ստանալ փորձելիս բախվում են բազմաթիվ խնդրների:

Տևողությունը. 30 րոպե

Նշումներ դասընթացավարների համար.

Դասընթացավարը հանձնարարում է մասնակիցներին գրավոր ներկայացնել հետևյալ հարցի երեք տարբեր պատասխաններ. «Ձեր կարծիքով, որո՞նք են այն հիմնական խոչընդոտները, որոնց բախվում է տուժողը, երբ հեռանում է բռնարարից և օգնություն և աջակցություն է խնդրում»:

Այդ առաջադրանքին տրվում է 5 րոպե, որից հետո դասընթացավարը խնդրում է յուրաքանչյուր մասնակցի կարդալ իր պատասխանները և գրատախտակի վրա խմբավորում է մասնակիցների կողմից նշված խոչընդոտները: Այնուհետև նա նախաձեռնում է խմբային քննարկում հետևյալ թեմայով.

«Ո՞րն է այդ խոչընդոտների պատճառը: Ինչո՞ւ է տուժողի համար դժվար հեռանալ բռնարարից»: Հաշվի են առնվում յուրաքանչյուր տուժողի անհատական հանգամանքները:

Դասընթացավարը մասնակիցների ուշադրությունը ուղղում է հետևյալ հարցերին.

Ի՞նչ վտանգ է սպառնում կնոջը[296]:

- կարող է կորցնել իր տունը:
- կարող է կորցնել կամ վտանգել երեխաներին:
- կարող է կորցնել իր հարաբերությունները:
- կարող է կորցնել իր կարգավիճակը, և եթե նաէ տնտեսապես կախված է իրավախախտից, ապա կարող է աղքատության վտանգի ենթարկել և՛ իրեն և՛ երեխաներին:
- կարող է կորցնել իր իրավական կարգավիճակը:

Աղբյուրը՝ Լոգար և այլք, 2015թ., էջ 39:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ինչո՞ւ է տուժողը մնում բռնարարի հետ կամ հեռանում

Պատճառները, թե ինչու է կինը մնում	Պատճառները, թե ինչու է կինը հեռանում

Գործողություն 9. Ինչպե՞ս է դա արտահայտվում

296 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.) «Բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմագործակալական համագործակցություն», վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ:

Նպատակը. Բարելավել մասնագետների ընկալումը՝ այն գործողությունների և հայտարարությունների, որոնք կարող են վնաս հասցնել տուժողին

Տևողությունը. Ընդհանուր 20 րոպե՝ անհատական աշխատանք՝ 5 րոպե, խմբային քննարկում՝ 15 րոպե:

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ «Ինչպե՞ս է դա արտահայտվում»

Անցկացման ձևը. Անհատական աշխատանք, խմբային քննարկում (որին մասնակցում է ամբողջ խումբը)

Ցուցումներ. Դասընթացավարը բոլոր մասնակիցներին խնդրում է լրացնել բաժանվող նյութը «Ինչպե՞ս է դա արտահայտվում»:

Խմբային քննարկում. Դասընթացավարը մի քանի մասնակիցների խնդրում է խմբին ներկայացնել այնպիսի արտահայտությունների և վարքագծերի օրինակներ, որոնք կարող են հանգեցնել երկրորդային վիկտիմիզացիայի: Քննարկումից հետո դասընթացավարը բացատրում է, որ տուժողին պետք է հարգանքով և արժանապատվությամբ դիմել, պարզ և հակիրճ տեղեկատվություն տրամադրել տուժողին, համոզվել, որ տուժողը այն հասկանում է, ոստիկանության աշխատակիցները պետք է կարեկցանք արտահայտեն և լինեն համբերատար՝ առաջնահերթությունը տալով տուժողի անձի գաղտնիությանը, ապահովեն տուժողի մասնակցությունը որոշումների կայացմանը՝ հարցնելով նրա կարծիքը, ապահովեն անվտանգ և վստահելի մթնոլորտ (տե՛ս Ներդիր 8. Տուժողների հետ հաղորդակցության նվազագույն պահանջները)

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ինչպե՞ս է դա արտահայտվում

Խնդրում ենք լրացնել բաժանված նյութը: Աղյուսակի յուրաքանչյուր սյունակում նշեք այն հայտարարություններն ու վարքագիծը (ժեստերը, շարժումները, ձայնի ինտոնացիան), որոնք արտացոլում են հետևյալը.

Երկրորդային վիկտիմիզացիա	Օրինակ բերել
1. Անհարգալից վերաբերմունք տուժողի նկատմամբ	
2. Մեղադրում	
3. Խղճահարություն	
4. Հովանավորություն	
5. Կրած բռնության համար մեղքը բարդել տուժողի վրա	
6. Իրավախախտի արդարացում	
7. Բռնության հանդուրժում	
8. Դիրքի չարաշահում	
9. Կոռուպցիա	
10. Սպառնալիքներ	

Աղբյուրը. Ադապտացված է Բրանկովիչ և Միրցևայից, 2016թ.:

Տուժողին երբեք չի կարելի մեղադրել կամ պատասխանատվության ենթարկել ընտանեկան բռնության համար: Բռնի պահվածքի համար պատասխանատվությունը կրում է միայն բռնություն գործադրողը:

Ներդիր 8. Տուժողների հետ հաղորդակցության նվազագույն պահանջները

- **Միջավայր՝** համոզվեք, որ գաղտնիությունը կարող է պահպանվել, տուժողը/բռնության ենթարկված անձը ապահով է և անվտանգ, որևէ կողմնակի միջամտություն չի լինի, ցանկալի է զրույցն անցկացնել տուժողի/բռնության ենթարկված անձի համար հարմար սենյակում կամ շենքում, որտեղ նա չի շփվի ենթադրյալ իրավախախտի հետ: Տուժողին/բռնության ենթարկված անձին պետք է վերաբերվել խնամքով և հարգանքով.
- **Աշխատակազմ՝** տուժողի/բռնության ենթարկված անձի հետ զրույցին մասնակցում է միայն մեկ ոստիկանության աշխատակից, բացառությամբ այն դեպքերի, երբ ոստիկանը հակառակ սեռի է, որի դեպքում կարող է պահանջվել կին աշխատակցի ուղեկցություն:
- **Չընդհատվող խոսք՝** թույլ տվեք տուժողի/բռնության ենթարկված անձի վերհիշել դեպքը՝ առանց նրան ընդհատելու:
- **Ակտիվ ունկնդրում՝** օգտագործեք պոզիտիվ ոչ վերբալ հաղորդակցության կամ ժեստերի և շարժումների լեզուն՝ տեսակցական կապ, կեցվածք, դեմքի արտահայտություն, օրինակ՝ ժպիտ, ըստ անհրաժեշտության կարեկցանքը ցույց տալու համար գլխով արած համաձայնության նշան:
- **Խուսափեք բացասական տպավորություն ստեղծող ժեստերից և շարժումներից, ինչպիսիք են՝** տեսակցական կապի բացակայությունը, ձեռքերը ծալելը, հայացքը զրուցակցից շեղելը, գլուխը տարուբերելը, դեմքի դժգոհ արտահայտությունները, օրինակ՝ խոժոռելը:
- **Լեզվային ոճ՝** պոզիտիվ արտահայտությունները արտահայտում են հնարավորությունները, ընտրանքները, ընտրությունը և այլընտրանքները, նեգատիվ արտահայտությունները ներկայացնում են այն, ինչին անհնար է հասնել: Ազատ շարադրումից հետո օգտագործեք պարզաբանում ենթադրող հարցեր՝ «ով», «ինչ», «երբ», «որտեղ» և «ինչպես»՝ խրախուսելով տուժողին լրացուցիչ տեղեկություն տրամադրել:
- **Հարմարեցրեք հաղորդակցության ոճը՝** ըստ տուժողի/բռնության ենթարկված անձի տարիքի և (կամ) մտավոր կարողությունների.
- Երեխաները, հատկապես փոքր տարիքի, չպետք է դիտվեն որպես «փոքր մեծահասակներ», ուստի խոսեք և վարվեք նրանց համար հասկանալի ձևով:
- **Իրականացրեք տուժողի/բռնության ենթարկված անձի և ընտանիքի որևէ խոցելի անդամի, օրինակ՝** երեխաների վրա կենտրոնացած ռիսկերի գնահատում և հաշվի առեք, թե ինչ պետք է ներառվի անվտանգության ծրագրում.
- **ՄԻ՝**
  - առաջարկեք որևէ միջամտություն, քանի որ դա ոստիկանության գործառույթը չէ: Ոստիկանության պարտականությունն է՝ մանրակրկիտ քննության միջոցով հավաքել հնարավոր տեղեկատվությունը և փաստերը ներկայացնել քննիչի/դատախազության դիտարկմանը.
  - ընդհատեք տուժողին/բռնության ենթարկված անձին.
  - գործադրեք ճնշում և անընդհատ կրկնեք հարցերը.
  - ստիպեք տուժողին/բռնության ենթարկված անձին բազմաթիվ անգամներ կրկնել իր տառապանքի պատմությունը տարբեր մարդկանց առջև.
  - բարկացեք և մի ստիպեք խոսել տուժողին/բռնության ենթարկված անձին.
  - սևեռեք հայացքը տուժողի/բռնության ենթարկված անձի վրա.
  - արտահայտեք թերահավատություն, հակակրանք, դժգոհություն, վրդովմունք կամ ցնցում.
  - մտածեք, որ նախապես գիտեք, թե ինչ է ուզում ասել տուժողը/բռնության ենթարկված անձը.
  - շտապեք արագ ավարտել զրույցը:
- **Առաջին իսկ հնարավորության դեպքում արձանագրեք և պահպանեք ցանկացած հնարավոր ապացույց:** Այստեղ կարևոր է նաև, թե ինչ ձևով են վերցվում ապացույցները, օրինակ՝ տուժողի/բռնության ենթարկված անձի ցուցմունքների արձանագրությունն այնպիսի եղանակով, որը թույլ կտա առանց վերջինիս ֆիզիկական ներկայության հետագայում հաջող վարույթի իրականացնել: Հնարավորության դեպքում կարելի է կատարել հարցաքննության տեսաձայնագրություն, թեև դա միշտ չէ, որ հնարավոր է:

Աղբյուրը՝ Ֆերնանդես, Մ., Թաունսլի 2021թ., 89-րդ և 271-րդ էջեր[297]*:*

297 «Բռնության ենթարկվող կանանց և աղջիկների նկատմամբ ոստիկանական ծառայությունների գենդերազգայուն արձագանքման ձեռնարկ. բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար»: ՄԱԿ-ի Կանայք, ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (ՄԱԹՀՊԳ) և Կին ոստիկանների միջազգային ասոցիացիա (IAWP):

5.ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՌԻՍԿ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆ-ԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Նպատակը.

Ոստիկանական ծառայողները արդյունավետ ձևով անվտանգություն են ապահովում ընտանեկան բռնությունից տուժած անձանց, ինչը նրանց հնարավորություն է տալիս տեղեկացված որոշումներ կայացնել:

Ուսուցման հիմնական կետերը.

- Պատկերացում կազմել ընտանեկան բռնության ռիսկի գործոնների և դրանց բացահայտման ձևերի մասին.
- Ռիսկերի գնահատումը, անվտանգության ծրագրումը և դիտարկումը ոստիկանության աշխատակիցների հետ առաջին իսկ շփումից ի վեր շարունակական գործընթաց է.
- Անվտանգության ծրագրերն ունեն կանխարգելիչ նպատակ և մշակվում են տուժողների հետ համատեղ, հաշվի առնելով համատեքստը.
- Տուժողներին պատշաճ պաշտպանության միջոցների տրամադրում՝ անկախ քրեական կամ քաղաքացիական վարույթի նախաձեռնման հանգամանքից.
- Հասկանալ ռիսկերի գնահատումը որպես գործընթաց, որը պետք է պարբերաբար վերանայվի և գնահատվի.
- Բռնություն գործադրելիս իրավախախտները ենթարկվում են պատասխանատվության և ենթարկվում են իրավական հետևանքների:

Բռնության բոլոր ձևերի դեպքում ցանկացած միջամտության հիմքում ընկած են տուժողի անվտանգության հետ կապված նկատառումները: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 51-րդ հոդվածը սահմանում է պարտավորություն՝ ապահովելու, որ բոլոր համապատասխան մարմինները, այդ թվում՝ ոստիկանությունը, ստանդարտացված ընթացակարգի համաձայն և միմյանց հետ համագործակցության և համակարգման միջոցով, ըստ առանձին դեպքերի, արդյունավետորեն գնահատեն և մշակեն նախագիծ՝ անվտանգության այն ռիսկերը կառավարելու նպատակով, որոնց տվյալ տուժողը կարող է առերեսվել: Կատարողներից շատերը տուժողներին վախեցնում են դաժան բռնություն գործադրել, այդ թվում՝ մահացու սպառնալիքներով, ընդ որում հաճախ եմ այն դեպքերը, երբ նրանք նախկինում նույնպես դաժան վերաբերմունք են դրսևորել տուժողի նկատմամբ: Ուստի կարևոր է, որ ռիսկերի ցանկացած գնահատման և ռիսկերի կառավարման շրջանակներում դիտարկվի բռնության, հատկապես՝ մահացու հետևանքների վտանգ պարունակող բռնության կրկնվելու հավանականությունը, ինչպես նաև իրատեսորեն գնահատվի իրավիճակի լրջությունը[298]:

ՄԻԵԴ-ը պետությունների համար սահմանել է մասնավոր կյանքում որևէ անհատի կողմից կատարվող մարդու իրավունքների խախտումներից քաղաքացիներին պաշտպանելու պոզիտիվ պարտականություն: Մասնավորապես, ՄԻԵԿ 2-րդ և 3-րդ հոդվածներով, որոնցով, համապատասխանաբար, պաշտպանվում են կյանքի իրավունքը և վատ վերաբերմունքի արգելքը, «պետության համար սահմանվում է իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկելու» պարտականություն և «կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու [պարտականություն]՝ ուղղված այն անհատին պաշտպանելուն,

298 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, պարբերություն 260.

որի կյանքը վտանգված է մեկ այլ անհատի քրեական բնույթի գործողությունների հետևանքով»[299]:

ՄԻԵԴ-ը մշակել է երկակի չափանիշ՝ գնահատելու համար, թե արդյոք պետությունները կատարե՞լ են 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված իրենց պոզիտիվ պարտականությունները.

ա) արդյոք իշխանությունները գիտեի՞ն կամ պետք է իմացած լինեին այն բռնության մասին, որին ենթարկվել է տուժողը, և «հետագա բռնության ռիսկի» մասին,[300]

բ) «եթե այո, ապա արդյոք ձեռնարկվե՞լ են բոլոր ողջամիտ միջոցները՝ նրան պաշտպանելու և ոտնձգողին պատժելու համար»[301]:

Այդ առնչությամբ, ռիսկերի գնահատումները գործնական գործիք են՝ «իրական և անմիջական վտանգի գոյությունը» որոշելու համար[302]:

Ընտանեկան բռնությունից տուժած անձի (հիմնականում կանանց և նրանց երեխաների) անվտանգության ապահովումը պետք է սկսվի տուժողի հետ առաջին իսկ շփումից և շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ տուժողի անվտանգությունը վտանգված է: Դա մի գործընթաց է, որը հաճախ նախատեսում է ավելի երկար ժամանակ և կապված չէ միայն սկզբնական միջամտությունից, օրինակ, գործի լսումից առաջ դատական վարույթի ընթացքում, ժամանակավոր միջոց կիրառելիս, երեխաներին տեսակցելիս, խնամակալության հետ կապված գործընթացներում, ամուսնալուծության դեպքում կամ ալիմենտների վճարման կապակցությամբ: Ընտանեկան բռնության դեպքերին առնչվելիս ոստիկանության աշխատակիցների առաջնային խնդիրը տուժողին պաշտպանելն է ու նրա անվտանգության ապահովելը[303]:

Այս գործընթացը ներառում է.

1. ռիսկերի բացահայտումը,
2. ռիսկերի արդյունավետ գնահատումը, և
3. անվտանգության ծրագրումն ու ռիսկերի կառավարումը, նպատակ ունենալով ապահովել տուժողի և նրա երեխաների անվտանգությունը:

5.1. ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ՝ ԻՆՉՊԵՍ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ռիսկերի բացահայտումը և գնահատումը յուրաքանչյուր ոստիկանության ծառայողի պարտականությունն ու խնդիրն է: Ոստիկանության ծառայողների այս խնդիրը ենթադրում է ռիսկի գործոնների և դրանց ծանրությունը որոշելու համար գիտելիքի և հմտությունների առկայություն, ինչպես նաև տուժողի կյանքին սպառնացող վտանգը նվազեցնելու համար միջոցներ ձեռնարկելու կարողություն:

---

299 Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի , Գանգատ թիվ 46598/06, 2009, պարբերությունs 49, 50, տե՛ս նաև Մուդրիչն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, Գանգատ թիվ 74839/10, 2013, պարբերություն 40:

300 Բ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, Գանգատ թիվ 61382/09, 2013, պարբերություն 51:

301 Նույն տեղում:

302 Ընտանեկան բռնությանը արձագանքելու լավագույն պրակտիկա. Համեմատական ուսումնասիրություն, Սարաևո 2019թ. https://www.16dana.ba/wp-content/uploads/2019/11/4.-Good-practices_ENG_final.pdf

303 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Ս. «Նախկին Հարավսլավական Հանրապետության Մակեդոնիայի ԸԲ-ի տուժողներին գենդերազգայուն աջակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ ոլորտում մասնագետների համար «վերապատրաստողների վերապատրաստում» մոդուլ», 2016թ:

Ներդիր 9. Ընտանեկան բռնության դեպքերի կառավարման հիմնական տարրերը

- Կնոջ և նրա երեխաների մարդու իրավունքների պաշտպանություն
- Նրանց անվտանգության ապահովում
- Հետագա բռնության կանխում
- Կանանց իրավազորում՝ռիսկերը բացահայտելու և հասկանալու համար

Աղբյուրը՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա (WAWE) (2012թ.) Պաշտպանություն II[304]

5.1.1. ՌԻՍԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ[305]

Ռիսկերը բացահայտելու համար պետք է հստակեցնենք, թե որն է ռիսկը, ռիսկի գործոնների շրջանակն և ձևերը, և այն, թե ռիսկի որ գործոններն են ազդում տղամարդկանց բռնի վարքագծի վրա: Ռիսկի ամենալայն սահմանումը վերաբերում է վնասակար հետևանքների առաջացման հավանականությանը կամ վնաս պատճառելու սպառնալիքի իրականացման ակնկալիքին:

Ներդիր 10: Ռիսկը պատկերացնելը[306]

Ռիսկը դա տուժողին անհապաղ և ծանր հոգեկան կամ ֆիզիկական տրավմա հասցնելու, բռնության թեժացման կամ կրկնման կամ տուժողի սպանության հավանականությունն է:

«Հոգեկան կամ ֆիզիկական տրավմա» նշանակում է տուժողի նկատմամբ հոգեբանական, ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն:

«Լուրջ վնաս» նշանակում է մի իրավիճակ, երբ տուժողի կյանքը կարող է վտանգված լինել և/կամ առկա է ծանր տրավմայի (հոգեբանական և/կամ ֆիզիկական) վտանգ:

Հետևաբար, ռիսկի գնահատումը վերաբերում է իրավախախտի կողմից տուժողի կյանքին և ֆիզիկական անձեռնմխելիության սպառնացող անմիջական և լուրջ վտանգին:

Ռիսկի առկայությունը բացարձակ չէ, այլ համատեքստային և դինամիկ գործընթաց է, որը կարող է բացահայտվել որոշակի հավանականությամբ: Հարկ է նշել, որ ռիսկի գործոնները հազվադեպ են մեկուսացված լինում, ավելի հաճախ դրանք փոխադարձ են և կարող են միմյանց սաստկացնել: Ավելին, կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքում ռիսկերի գնահատումը պետք է հիմնված լինի կանանց նկատմամբ բռնության գենդերային պատկերացման վրա: Մասնավորապես, բազմաթիվ ուսումնասիրություններ բացահայտել են ընտանեկան բռնության ռիսկի գործոնները և նպաստել դրանց ընդհանուր ճանաչմանը: Դա վկայում է այն մասին, որ չնայած որոշ ռիսկային գործոններ ինքնուրույն կարող են վտանգ կամ սպառնալիք չհանդիսանալ, սակայն, ընտանեկան բռնության մաս հանդիսանալով և ռիսկի այլ գործոնների հետ համատեղ, դրանք մատնանշում են լուրջ վնասի բարձր հավանականությունը: Օրինակ՝ գործազրկությունը, հոգեկան առողջության հետ կապված խնդիրները, բանտից ազատվելը, կամ ալկոհոլի չարաշահումը ինքնին ընտանեկան բռնության ռիսկի գործոն չեն, բայց բռնի վարքի հետ զուգակցվելով՝ դրանք դառնում են այդպիսին[307]: Ավելին, տուժողին հասցված վնասի կամ բռնության կրկնության ռիսկը

304 ԿԸԲԵՑ (2012). Պաշտպանություն II. Ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման կարողությունների զարգացում `բարձր ռիսկի տուժողներին պաշտպանելու համար, Վիեննա, հասանելի է հետևյալ հղումով՝ http://fileserver.wave-network.org/trainingmanuals/PROTECTII_Risk_Assessment_and_Safety_2012_English.pdf

305 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Ս. «Նախկին Հարավսլավական Հանրապետության Մակեդոնիայի ԸԲ-ի տուժողներին գենդերազգայուն աջակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ ոլորտում մասնագետների համար «վերապատրաստողների վերապատրաստում» մոդուլ», 2016թ:

306 Քեմշալ, Ք. (1996թ.): Ռիսկի վերանայում. Ռիսկի և վտանգավորության գնահատման և կառավարման վերաբերյալ հետազոտությունների դիտարկում. հետևանքները Պրոբացիայի ծառայություն քաղաքականության և պրակտիկայի համար (Հաշվետվություն հետազոտությունների և վիճակագրության տնօրինության համար): Ներքին գործերի նախարարություն:

307 ԿԸԲԵՑ (2012թ.): Պաշտպանություն II. Ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման կարողությունների

պետք է գնահատվի՝ հաշվի առնելով տուժողի անհատական իրավիճակը և հարակից հանգամանքները: Մասնավորապես, կարևոր է հասկանալ, որ որոշ իրավիճակներ կարող են մեծացնել ռիսկը, օրինակ՝ բաժանման պահը, ամուսնալուծության կամ քրեական վարույթի մեկնարկը, տուժողի կողմից բռնության մասին ոստիկանությանը հաղորդելը, երեխայի հետ շփումները և բանտից բռնարարի ազատ արձակումը:

5.1.2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Ընտանեկան բռնությունը ձեռք բերված դիտավորյալ վարքագիծ է, այլ ոչ թե սթրեսի, անհատական պաթոլոգիայի, թմրամիջոցների չարաշահման կամ «դիսֆունկցիոնալ» հարաբերությունների հետևանք: Ընտանեկան բռնություն գործադրողները հաճախ խուսափում են իրենց վարքագծի համար պատասխանատվություն կրելուց՝ բռնության համար մեղադրելով որևէ մեկին կամ որևէ այլ բանի, ընդհանրապես հերքելով այն կամ նվազեցնելով իրենց վարքագծի հետևանքները[308]: Այդուհանդերձ, կան գործոններ, որոնք կարող են մեծացնել ընտանեկան բռնություն գործադրելու վտանգը: Կարևոր է հաշվի առնել այն, որ ռիսկի գործոնը ոչ թե պատճառ է, այլ ավելի շուտ գործոն է, որը կամ նվազեցնում է բռնարարի ներքին արգելքները (օրինակ՝ թմրանյութեր/ալկոհոլ), կամ արդարացնում է նրա գործադրած բռնությունը (սթրես, գործազրկություն, ինքնատիրապետման կորուստ): Ստորև բերված են մի շարք գործոններ, որոնք **նախկինում դիտվել են որպես ընտանեկան բռնության դեպքերի անմիջական պատճառ, բայց ներկայումս ճանաչվել են որպես կատարման ռիսկի գործոններ.**

Ներդիր 11. Գործոնների բացատրություն, որոնք բռնի վարքի դեպքում կարող են դառնալ ընտանեկան բռնության ռիսկի գործոններ

Թմրամիջոցների և ալկոհոլի օգտագործումը/կախվածությունը կապում են ընտանեկան բռնության, իրավախախտումներ և վիկտիմիզացիայի վտանգի բարձրացման հետ: Թմրամիջոցներից/ալկոհոլից կախվածությունը ընտանեկան բռնության ՉԻ հանգեցնում և եթե ալկոհոլը և թմրամիջոցների օգտագործումը բռնություն առաջացնեին, ապա այն մարդիկ, ովքեր ալկոհոլ կամ թմրամիջոցներ են օգտագործում, բռնի վարք կդրսևորեին: Սակայն, ոչ բոլոր բռնարարերն են ալկոհոլ կամ թմրամիջոցների օգտագործում, և ալկոհոլ կամ թմրամիջոցներ օգտագործող մարդկանց մեծ մասը ընտանեկան բռնության (կամ այլ տեսակի բռնության) չի դիմում: Օրինակ, 200 իրավախախտների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նրանց զգալի մասը ալկոհոլ կամ թմրամիջոցներ չի չարաշահել: Նույնիսկ այն իրավախախտների շրջանում, ովքեր չարաշահում են ալկոհոլը կամ թմրամիջոցները, բռնությունը չի սահմանափակվում միայն այդ նյութերի ազդեցության տակ գտնվելու պահով: Նաև պարզվել է, որ «ալկոհոլի և թմրանյութերի օգտագործումը կարող է նվազեցնել արգելքները, բայց այն նաև [լավ] դատողությունների է հանգեցնում[309]: Բռնարարների կողմից ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործումը կարող է մեծացնել ընտանեկան բռնության հաճախականությունն ու ծանրությունը[310]: Ավելին, որոշ իրավախախտների համար ալկոհոլի ու թմրամիջոցների չարաշահումը և ընտանեկան բռնությունը առերևույթ կապված են գենդերային հիմքով աղավաղումներից և անապահովության զգացումից բխող իշխանության և վերահսկողության կարիքի հետ[311]:

զարգացում `բարձր ռիսկի տուժողներին պաշտպանելու համար, Վիեննա:

308 Գործնական ուղեցույց. Ընտանեկան բռնություն, Դատական ձեռնարկի հավելված: Ընտանեկան բռնության գործի գնահատման նկատառումները Բոսնիայում և Հերցեգովինայում, Սարաևո 2016թ., տե՛ս https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/Practice-Guide-Domestic-Violence_Eng-Final.pdf

309 Ջեկոբսոն, Ն. և Գոտման, Ջ. «Երբ տղամարդիկ հարվածում են կանանց», Նյու Յորք, Սայմոն և Շուստեր:

310 Ֆալս-Սթյուարտ, Վ. և Քենեդի, Կ. «Անդրադարձ սեռական զուգընկերոջ բռնության հարցին թմրամիջոցներից կախվածության բուժման գործընթացում», Թմրամիջոցներից կախվածության բուժման ամսագիր, համար 11 (2005թ.). 5-17 էջեր:

311 Գոնդոլֆ, Ի.Վ., «Ալկոհոլի չարաշահում, կնոջ բռնություն և իշխանության կարիքներ», Սոցիալական ծառայության ուսումնասիրություն, 69, թիվ 2 (1995), 275-283 էջեր:

Տնտեսական լարվածությունը և աղքատությունը կապում են ինչպես ընտանեկան բռնության գործադրման, այնպես էլ վիկտիմիզացիայի ռիսկի հետ, սակայն այն չի հանգեցնում ընտանեկան բռնության առաջացման: Թեև եկամտի մակարդակի և ընտանեկան բռնության միջև կապն առկա է, սակայն վերլուծությունը դրանով չի սահմանափակվում: Մի շարք ուսումնասիրություններ ընտանիքում հաց վաստակողի դերը ձախողած, ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակի տղամարդկանց վարքագիծը կապել են տան տղամարդու կարգավիակը հաստատելու համար կանանց նկատմամբ բռնության միջոցով գերիշխող դիրք գրավելու շարժառիթների հետ[312]: Ուսումնասիրություններն եզրահանգում են, որ սեռական կյանքում իշխումը և կանանց նկատմամբ սոցիալական և ֆիզիկական վերահսկողություն հաստատումը կարող են իշխանության աղբյուր և հաջողության չափանիշ հանդիսանալ այն տղամարդկանց համար, ովքեր իրենց անհաջողակ են համարում ավանդական չափորոշիչների, օրինակ՝ հարստության տեսանկյունից: Ավելին, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ տնտեսապես անհաջողակ տղամարդիկ միմյանց հետ հաճախ շփվում են տղամարդկանց աջակցության ցանցերում, որտեղ նրանք միաձայն արժեզրկում են կանանց և համարում են, որ օրինական իրավունք ունեն կանանց նկատմամբ բռնություն գործադրել և կանայք արժանի են ֆիզիկական և սեռական բռնության[313]: Միևնույն ժամանակ կան նաև լուրջ հետազոտություններ, որոնք նման վերաբերմունք և վարքագիծ են նշում ավելի արտոնյալ վիճակում գտնվող տղամարդկանց, այդ թվում՝ ուսանողների շրջանում [մարզական միավորումների, ուսանողական ակումբների և այլն][314]:

Հոգեկան հիվանդությունը կապում են ընտանեկան բռնության և, մասնավորապես, վիկտիմիզացիայի հետ: Ընտանեկան բռնություն կատարողների շրջանում վաղ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «նրանք հաճախ որևէ հոգեկան հիվանդություն չունեն»[315], թեև նրանց նկատմամբ վերահսկողությունն անհրաժեշտ է, և նրանց վարքում առկա է պաշտպանողականություն, զայրույթի բռնկումներ, մոր կամ երեխաների նկատմամբ կարեկցանքի բացակայություն և իրենց դաժան վերաբերմունքի հերքում[316]: Սակայն, պետք է նշել, որ ընտանեկան բռնության դեպքերն ուսումնասիրելիս հոգեբույժը բռնարարին բնութագրել է որպես կնոջ համեմատ ավելի ծանր բնույթի խանգարումներ ունեցող անձ: Երկու «ախտորոշումներն» էլ ըստ էության հիմնված են այդ հետազոտվող անձանց հետ զրույցների վրա, ընդ որում որևէ հատուկ թեստեր չեն անցկացվել: Նախկին պատերազմի մասնակից տղամարդկանց մոտ հետտրավմատիկ սթրեսային խանգարումների (ՀՏՍԽ) առկայության և ընտանեկան բռնության միջև կապը վերլուծող ուսումնասիրությունները բացահայտել են, որ ՀՏՍԽ-ի ավելի բարձր ախտանիշ ունեցող տղամարդկանց մոտ առկա է զայրույթի, թշնամանքի, ագրեսիվության, զայրույթին արձագանքման և ընտանեկան բռնության գործադրման ավելի բարձր մակարդակ[317]: Հատկանշական է, որ զայրույթը, ագրեսիան և բռնությունը միայն ընտանիքի ներսում չեն արտահայտվում, որից կարելի է ենթադրել, որ ՀՏՍԽ-ն ընտանեկան բռնություն չի առաջացնում, թեև ընդհանուր առմամբ կարող է նպաստել ագրեսիվ և բռնի վարքագծին՝ չսահմանափակվելով միայն ընտանիքով: Հավանաբար, ամենակարևոր եզրահանգումն այն է, որ հոգեկան հիվանդ մարդիկ *ավելի մեծ հավանականությամբ* են հանդես գալիս տուժողի քան կատարողի դերում,[318] և սովորական մարդկանց համեմատ ավելի մեծ հավանականությամբ են ենթարկվում սեռական զուգընկերոջ կողմից բռնության[319]:

---

312 Անդերսոն, Ի, «Փողոցի ճանաչում՝ ռասա, դաս և քաղաքային համայնքի փոփոխություն», Չիկագոյի համալսարանի մամուլ (1990թ.), Բենսոն Մ.Լև Ֆոքս Ջ.Լ. «Երբ բռնությունը հարվածում է ընտանիքին՝ էկոնոմիկայի և հարևանության դերը», Վաշինգտոն, ԿՇ, ԱՄՆ-ի արդարադատության դեպարտամենտ, Կրթության ազգային ինստիտուտ (2004թ.), Միլեր Ջ. «Խաղեր. աֆրոամերիկացի աղջիկներ, քաղաքային անհավասարություն և սեռական բռնություն»: Նյու Յորքի համալսարանի մամուլ (2008թ.), Ռագհավան, Կ. Մեներիք Ա., Սեքստոն Ի. և Ջեյմս Ս.Ե. «Համայնքային բռնությունը և դրա անմիջական, անուղղակի և Բռնությունը կանանց նկատմամբ, 12 (2006թ.), 1132-1149 էջեր: Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ տնտեսապես իրավազուրկ տղամարդիկ հաճախ շփվում են միմյանց հետ տղամարդկանց աջակցության ցանցերում, որտեղ միաձայն արժեզրկում են կանանց և համարում են, որ օրինական իրավունք ունեն կանանց նկատմամբ բռնություն գործադրել, քանի որ կանայք արժանի են ֆիզիկական և սեռական բռնության (Բուրժուա, Պ. «Հարգանքի որոնում. քրեքի վաճառք էլ Բարիոյում»: Նյու Յորք, Քեմբրիջի համալսարանի մամուլ (1999թ.), Դեկեսերեդի, Վ.Ս., Ալվի, Ս., Շվարց, Մ.Դ., և Տոմաժովսկի, Ի.Ա., «Պաշարված. աղքատությունն ու հանցագործությունը պետական կացարանների համայնքում», Լենհեմ, ՄԴ, Լեքսինգտոն Բուքս (2003թ.):

313 Բուրժուա, Պ. «Հարգանքի որոնում. քրեքի վաճառք էլ Բարիոյում»: Նյու Յորք, Քեմբրիջի համալսարանի մամուլ (1999թ.), Դեկեսերեդի, Վ.Ս., Ալվի, Ս., Շվարց, Մ.Դ., և Տոմաժովսկի, Ի.Ա., «Պաշարված. աղքատությունն ու հանցագործությունը պետական կացարանների համայնքում», Լենհեմ, ՄԴ, Լեքսինգտոն Բուքս (2003թ.):

314 Սենդեյ, Փ.Ռ., Եղբայրության միավորումների ավազակախմբի խմբակային բռնաբարությունները. սեքսը, եղբայրության ակումբները և արտոնությունները ուսանողական ավանում (2-րդ խմբ.), Նյու Յորք, Նյու Յորքի համալսարանի մամուլ (2007թ.):

315 Էվան Սթարկ, «Ընտանեկան բռնության ենթարկված կանանց նկատմամբ վերաբերմունքը և նրանց դերի փոփոխությունը: Քրեական արդարադատության արձագանքը 287, Իվ Բուզավա: «Գրառումներ ընդհատակից. Ընտանեկան բռնության վերաբերյալ հոգեբանական և իրավական հեռանկարների ինտեգրում տեսության և պրակտիկայի մեջ», Ջոան Ս. Մայեր, էջ 8:

316 Էվան Սթարկ, «Ընտանեկան բռնության ենթարկված կանանց նկատմամբ վերաբերմունքը և նրանց դերի փոփոխությունը: Քրեական արդարադատության արձագանքը, էջ 287, Իվ Բուզավա:

317 Կ. Բել և Օրքաթ, Հ. «ՀՏՍԽ և տղամարդու կողմից սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն», Ամերիկյան բժշկական ասոցիացիայի ամսագիր, 302, 5-րդ համար (2009թ.):

318 Լինդա Ա., տեպլին, Մաքլելանդ Ջ., Աբրամ Կ. և Վայներ Դ. «Հանցագործութուններից վիկտիմիզացիան ծանր հոգեկան խանգարում ունեցող մեծահասակների շրջանում», Arch Gen Psychiatry 62, 8-րդ համար (օգոստոս 2005թ.), 911–921 էջեր:

319 Կ. Տրևյոն, Օրամ Ս., Ֆեդեր Ջ., Հովարդ Լ.Մ. «Ընտանեկան բռնության և հոգեկան խանգարումների դեպքեր.

Ռիսկի գործոնների առկայությունը ցույց է տալիս, որ բռնության ենթարկված անձի անվտանգությունը խախտված է կամ որ առկա է այնպիսի իրադարձության հավանականություն, որը կրկին կվտանգի ընտանեկան բռնության ենթարկված անձին կամ վնաս կհասցնի նրան: Մյուս կողմից, ռիսկի որևէ գործոնի բացակայությունը չի նշանակում, որ բռնության ենթարկված կնոջը վտանգ չի սպառնում, այլ, որ նրան սպառնացող վտանգն ավելի փոքր է: Ոստիկանության աշխատակիցները պետք է բավարար տեղեկատվություն հավաքեն ռիսկերի առկայության մասին, հաշվի առնեն դրանց վտանգավորության աստիճանը, վերլուծեն, գնահատեն և արդյունավետ կառավարեն ռիսկերը՝ քայլեր ձեռնարկելով տուժողի հետ սերտ համագործակցությամբ:

Չափազանց կարևոր է հիշել, որ **ռիսկերի ճիշտ գնահատումը կարող է փրկել զուգընկերոջ կողմից բռնության վտանգի տակ գտնվող կնոջ կյանքը**: Վերլուծություններն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սեռական զուգընկերոջ բռնության հետևանքով զոհված կանանցից շատերը նախորոք հայտնել են բռնության դեպքերի մասին տարբեր հաստատություններին (ոստիկանություն, սոցիալական կենտրոններ կամ կանանց մասնագիտացված կազմակերպություններ):

Գործողություն 10. Ռիսկի ընկալումը

Նպատակը. Ռիսկի հասկացության վերաբերյալ տարբեր մոտեցումների և ռիսկի ընկալման տարբերությունների մասին իրազեկում:

Տևողությունը. 5-10 րոպե

Անցկացման ձևը. Ցուցադրում, խմբային քննարկում (որին մասնակցում է ամբողջ խումբը)

Օժանդակ նյութեր. 1 աթոռ

Ցուցում.

Դասընթացավարը վերցնում է աթոռը և կանգնում դրա վրա: Աթոռին կանգնած դասընթացավարը հարցնում է մասնակիցներին այն ռիսկերի տեսակների մասին, որոնք կարելի է նույնականացնել տարբեր տեսանկյուններից: Երկրորդ դասընթացավարը մասնակցում է քննարկմանը՝ տալով հետևյալ հարցերը.

«Եթե ես բժիշկ եմ, ես տեսնում եմ աթոռից վայր ընկնելու և վնասվածք ստանալու վտանգ»:

«Եթե ես տնային տնտեսուհի եմ, ես տեսնում են աթոռը կոտրվելու կամ հատակը քանդվելու, քերծվելու վտանգ»:

Դասընթացավարները խրախուսում են մասնակիցներին ռիսկը դիտարկել տարբեր տեսանկյուններից:

Ուղեցույց՝ խմբային քննարկում

Այս վարժությունը օգնում է բոլոր մասնակիցներին պատկերացնել ռիսկի տարբեր ընկալումները և ռիսկի նկատմամբ տարբեր մոտեցումները: Դասընթացավարները պետք է ընդգծեն, որ չնայած բոլոր մասնակիցները դիտում են նույն իրավիճակը, տարբեր անհատներ կարող են ավելի մեծ ուշադրություն դարձնել ռիսկի տարբեր ասպեկտներին: Հաջող համագործակցության և համատեղ աշխատանքի համար չափազանց կարևոր է, որ մասնակիցները ձևավորեն ռիսկի վերաբերյալ իրենց սեփական տեսակետը և գտնեն այն չեզոքացնելու ընդհանուր մոտեցում:

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ., 2015թ., էջ 48[320]:

Եվրոպայում ընտանեկան բռնության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ նախկին բռնությունը ռիսկի առկայության ամենաակնհայտ և ամենակարևոր նշանն է. **որքան բռնության դեպքերը նախկինում ավելի հաճախակի և ավելի դաժան են եղել, այնքան ավելի մեծ է բռնության կրկնման հավանականությունը:**[321]

Մեկ այլ կարևոր ռիսկի գործոն է **բռնարարից բաժանումը**՝ մահվան վտանգն ամենամեծն է այն պահերին, երբ տուժողը փախչում է բռնարարից: Ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ

համակարգված դիտարկում և մետաանալիզ» PLOS ONE 7, 12-րդ համար (2012թ.), e51740:

320 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.) «Բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմագործակալական համագործակցություն», վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ:

321 Բրանկովիչ, Բ., Միրցևա, Ս. «Նախկին Հարավսլավական Հանրապետության Մակեդոնիայի ԸԲ-ի տուժողներին գենդերազգայուն աջակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ ոլորտում մասնագետների համար «վերապատրաստողների վերապատրաստում» մոդուլ», 2016թ:

կանայք, ովքեր չեն համարձակվում ոստիկանությանը հայտնել բռնության մասին, դա անում են փախուստի դիմելիս և երբ սկսում են վախենալ իրենց կյանքի համար: Բռնարարից բաժանված լինելու դեպքում, **վերջինիս ավելի հաճախակի շփումները երեխաների հետ կարող են մեծացնել ռիսկը, քանի որ դա մեծացնում է բռնության շարունակման կամ նույնիսկ սրման հավանականությունը**:

Ռիսկը դինամիկ կատեգորիա է՝ այն անընդհատ փոփոխվում է, երբեմն նույնիսկ կարճ ժամանակահատվածում՝ կախված տուժողի անհատական իրավիճակից: Սակայն, կարող ենք առանձնացնել ծանրացուցիչ գործոնները, որոնք որոշ իրավիճակներում բարձրացնում են ռիսկի մակարդակը, օրինակ՝ բռնարարից փախչելը, դատական նիստերը, բռնարարի և երեխաների միջև շփումը, գործազրկությունը և այլն: Հետևաբար, ռիսկը միայն մեկ անգամ գնահատել չի կարելի, **է դա համակարգված և շարունակական գործընթաց է, որն իրականացվում է տուժողի հետ համագործակցությամբ[322]:**

Գործողություն 11. ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ[323]

Նպատակը. Այս վարժությունը նպատակն է բարձրացնել մասնակիցների իրազեկվածությունը ռիսկի գործոնների մասին

Տևողությունը. 45 րոպե

Անցկացման ձևը. Անհատական աշխատանք (10 րոպե), ամբողջ խմբով քննարկում (35 րոպե):

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ռիսկի գործոնները և կատեգորիաները», Մասնակիցներին բաժանվող նյութ՝ «Ռիսկի գործոնների ցուցակ», ֆլիպչարթ գրատախտակ, մարկերներ

Ցուցումներ.

Դասընթացավարը բաժանում է «Ռիսկի գործոնները և կատեգորիաները» նյութը մասնակիցներին և խնդրում է նրանց գրավոր նշել գրված կատեգորիաներին համապատասխանող ռիսկի գործոնները:

Խմբային քննարկման ցուցումներ.

«Ռիսկի գործոնները և կատեգորիաները» նյութի տողերը լրացնելուց հետո դասընթացավարը մասնակիցներին խնդրում է խմբին ներկայացնել իրենց գաղափարները և գրել դրանք գրատախտակի վրա: Դասընթացավարը մեկնաբանություններ է տալիս բոլոր կատեգորիաների վերաբերյալ: Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է ռիսկի գործոնների ցուցակը և նախաձեռնում է թվարկված բոլոր ռիսկի գործոնների քննարկումը: Մասնակիցներին ասվում է, որ ցուցակը չի ներառում ռիսկի բոլոր գործոնները, այլ հիմնված է փորձի և ուսումնասիրությունների վրա և, որ այն պետք է հաշվի առնել ռիսկի գործոնների բացահայտման և գնահատման ժամանակ (թեև ոչ որպես միակ բացառիկ աղբյուր):

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ., 2015թ., էջ 49:

322 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.):

323 Նույն տեղում:

Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ռիսկի գործոնները և կատեգորիաները»

Ռիսկի գործոնները	Ռիսկի կատեգորիաները
I բռնի վարքի պատմությունը	
II բռնության ձեվերն ու դրսեվորումները	
III բռնարարի վերամերմունքին կամ վարքին առնչվող ռիսկի գործոնները	
IV ռիսկը սրող գործոններ	
V ՏՈՒԺՈՂԻ ԿՈՂՄԻՑ ռիսկի ԸՆԿԱԼՈՒՄԸ	
Նշումներ	

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ., 2015թ., էջ 51:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ռիսկի գործոնների ցուցակ

ՌԻՍԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ	ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ (ուսումնասիրությունների արդյունքներով)
I բռնի վարքի պատմությունը 1. Նախկինում կանանց նկատմամբ բռնությունը	Ամբողջ աշխարհում կատարված բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ կանանց նկատմամբ նախկին բռնի վարքագիծը ամենատարածված ռիսկի գործոնն է (Կրոփ Ռ. և Հարթ, Ս., 2000թ., Գրանն և Վեդին, 2002թ., Մնայդեր և այլք, 2009թ., Քեմփբել և այլք 2009թ.):
2. Բռնություն երեխաների և ընտանիքի այլ անդամների նկատմամբ:	Զուգընկերոջ նկատմամբ և ընտանեկան բռնության գործադրողները հաճախ երեխաների հետ վարվում են նույնքան դաժան, որքան ընտանիքի մեծահասակ անդամների: Ահա թե ինչու մենք միշտ պետք է զգույշ լինենք, երբ խոսքը վերաբերում է երեխաներին սպառնացող վրանգի մասին: Ընտանեկան բռնությունը հիմնված է բարդ սխեմաների վրա: Օրինակ, ոտնձգողները հաճախ շահարկում են երեխաներին կամ նրանց օգտագործում են զուգընկերոջը վերահսկելու համար (համաձայն ԱՄՆ-ում Դուլոթի մոդելի, ինչպես նաև շատ ուրիշ ուսումնասիրությունների, այդ թվում՝ Փեյմար և Բերնս, 2004 թ.): Ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների ռիսկը բավական լուրջ չի ընկալվում (Մյուլենդեր և այլք, 2002թ.): Կնոջը սպառնացող ռիսկի գնահատման հետ մեկտեղ պետք է հաշվի առնել երեխայի իրավունքները և դիտարկել երեխաների պաշտպանության միջոցները:
3. Ընդհանուր բռնի վարքագիծ	Զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրողները նաև հաճախ հակասոցիալական վերաբերմունք և վարք են դրսևորում և բռնության են դիմում նաև ընտանեկան կանքից բացի այլ հանգամանքներում (Հեստեր, 2006թ., Դատտոն և Կնոփ, 2000թ.): Նման բռնի վարքագիծը հիմնականում վկայում է իրավախախտի կողմից բռնության դիմելու ընդհանուր միտումի մասին և կարող է մեծացնել տուժողի՝ զուգընկերոջ/կնոջ վտանգը, բայց նաև վտանգ է պարունակում այլ մարդկանց համար, այդ թվում՝ գործի լուծմանը ներգրավված մասնագետների:
4. Պաշտպանական որոշումների խախտում	Պաշտպանական որոշումների խախտումը (դատարանի կամ ոստիկանության կողմից արձակված և տվյալ երկրի իրավական համակարգից կախված) առնչվում է հետագա բռնության ռիսկի հետ: (Կրոփ Ռ. և Հարթ, Ս., 2000թ., Գրանն և Վեդին, 2002թ.):
II ԲՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 5. Բռնարարքների ծանրությունն ու հաճախականությունը	Բռնության սրացումը, ավելի հաճախակի և առավել խիստ արտահայտված բռնի վարքագիծը ամենալուրջ գործոններից մեկն է, որը կարող է վկայել լուրջ և նույնիսկ մահացու հետևանքների մասին (Մնայդեր և այլք,, 2009թ.)

6. Զենքի/գործիքների օգտագործում կամ զենքի/գործիքների օգտագործման սպառնալիքներ	Զենքի կիրառումը կամ կիրառման սպառնալիքները լուրջ և մահացու բռնության ռիսկի գործոն են: Ընտանեկան բռնության դեպքում պետք է հաշվի առնել բոլոր զենքերը, ներառյալ հրազենը, դանակները և վտանգավոր առարկաները, որոնք կարող են օգտագործվել որպես տուժողին վնասելու գործիք: (Մնայդեր և այլք,, 2009թ., Էչեբուռուա և այլք, 2009թ., Համֆրիս Այ., 2005թ., Քեմփբել և այլք, 2003թ., Բեյլի և այլք, 1997թ.)
7. Վերահսկող վարքագիծ և տուժողի մեկուսացում	Եթե իրավախախտը վերահսկում է զուգընկերոջը/կնոջը, դա կրկնվող բռնության և հնարավոր մահացու բռնության համար կարևոր ռիսկի գործոն է (Դեքեր, Մարտին և Մորակկո, 2004, Հեմֆրիզ և այլք, 2005, Էչեբուռուա և այլք, 2009թ.). Զուգընկերոջ/կնոջ մեկուսացումը վերահսկողության ընդհանուր ռազմավարություն է և կարող է ծայրահեղ ձևերով դրսևորվել, օրինակ՝ ազատությունից զրկում (օրինակ՝ կանանց կողպելը):
8. Հետամտում	Հետամտումը առնչվում է կանանց նկատմամբ բռնության լուրջ դրսևորումներին, այդ թվում՝ մահացու բռնության դեպքերին: Եթե այն զուգորդվում է ֆիզիկական բռնության հետ, ապա դա համարվում է որպես լուրջ գործոն, որը կապված է ներկա կամ նախկին զուգընկերոջ սպանության և սպանության փորձի հետ (Մաքֆարլեյն և այլք, 1999թ.):
9. Սեռական բռնություն	Սեռական բռնությունը հաճախ զուգընկերոջ նկատմամբ բռնության անբաժանելի մասն է (Հովարթ և այլք, 2009թ.): Սեռական բռնության ենթարկված կանայք ավելի մեծ հավանականությամբ ընտանեկան բռնության հանգամանքներում կենթարկվեն լուրջ ֆիզիկական և հոգեկան տրավմայի, նաև կրկնվող բռնության (Հեմֆրիզ և այլք, 2005թ.):
10. Սպանության սպառնալիք, վնաս հասցնելու սպառնալիք, հարկադրանք	Փորձը ցույց է տվել, որ բռնության լուրջ դրսևորումներին հաճախ նախորդում են սպառնալիքներ: Հարկադրանքը կարող է արտահայտվել տարբեր ծանր դրսևորումներով, որոնց թվում է նաև ամուսնանալուն հարկադրելը (Ռոբինսոն, 2010թ.:)
11. Շնչահեղձում և խեղդում	Շնչահեղձումը և խեղդումը բռնության ծայրահեղ վտանգավոր ձևեր են: Բռնությունից զոհվածների մոտավորապես կեսը մահից առաջ մեկ տարվա ընթացքում խեղդամահության փորձի է ենթարկվում (Գլաս, 2008թ., Բլոք և այլք, 2000թ., Մնայդեր և այլք, 2009թ.).
III. ԲՌՆԱՐԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՆ ԿԱՄ ՎԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 12. Ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործման հետ կապված հարցեր	Թեև թմրամիջոցների և ալկոհոլի օգտագործումը կանանց նկատմամբ ընտանեկան բռնության պատճառ կամ արդարացման հիմք չէ, սակայն բռնարարի կողմից ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործումը կապված է սպանությունների և բռնության առավել լուրջ դրսևորումների ռիսկի հետ (Դեքեր, Մարտին և Մորակկո, 2004թ, Բեյլի և այլք, 1997թ.):

13. Վերահսկելու ձգտում, ծայրահեղ խանդ և վնասակար վերաբերմունքի այլ ձևեր	Վերահսկելու ծայրահեղության հասցված ձգտումը և խանդը կարող են հանգեցնելբռնության ծանր/լուրջ դրսևորումների(Ռոբինսոն, 2006; Մնայդեր և այլք, 2009թ.): Նաև ռիսկը բարձրացնող գործոններ են իրավախախտների ակնհայտ հայրիշխանական վերաբերմունքը, տղամարդու և կնոջ պատվի մասին չափազանց կոշտ պատկերացումները և կնոջ նկատմամբ վերահսկողություն սահմանելու ձգտումը (Դատտոն և Կնոփ, 2000թ., Հիլտոն և Հարրիս, 2001թ.):
14. Վատ հոգեկան վիճակի հետ կապված խնդիրներ, ներառյալ ինքնասպանության սպառնալիքներ և փորձ	Կատարողի հոգեկան վիճակի հետ կապված խնդիրները, ներառյալ դեպրեսիան, կարող են հանգեցնել բռնության լուրջ դրսևորումների կամ դրա կրկնման: Ինքնասպանության սպառնալիքները և բռնարարի վատ հոգեկան վիճակը հանդիսանում են սպանության/ինքնասպանության դեպքերի ռիսկի գործոններ: Սպանությունների դեպքերի 32%-ում հանցավորը այնուհետև ինքնասպան է եղել (Ռենդալ և Հարթ, 2000թ., Ռեգան և այլք, 2007թ., Քեմփբել և այլք, 2003թ.):
15. Տնտեսական սթրես	Իրավախախտի ֆինանսական վիճակի և գործազրկության փոփոխությունները ընտանեկան բռնության հետ կապված սպանությունների դեպքերում վճռորոշ ռիսկի գործոններ են և կապված են առնականության և գենդերային դերերի պատկերացումների հետ (Քեմփբել և այլք 2009թ.):
IV ՌԻՍԿԸ ՍՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ 16. Բաժանում (տուժողը հեռանում է բռնարարից)	Գրականության մեջ (օրինակ՝ Համֆրիզ և Թիարա, 2003 թ.), բաժանումը դիտվում է որպես բռնության լուրջ դրսևորում կամ սպանության զգալի և տարածված ռիսկի գործոն:
17. Բռնարարի և երեխաների (ընդհանուր) միջև շփում	Բաժանումից հետո երեխայի հետ շփումը հաճախ կանանց և երեխաների համար կրկնակի բռնության վտանգ է ներկայացնում (Համֆրիզ և Թիարա, 2003թ.):
18. Ընտանիքում ապրող խորթ երեխա	Զուգընկերների կամ ամուսինների միջև ընտանեկան բռնության ռիսկի գործոնները ներառում են տանը բնակվող բռնարարի խորթ երեխաների առկայությունը (Քեմփբել և այլք, 2003թ.):
19. Հղիության ընթացքում բռնություն	Ընտանեկան բռնության դեպքերի մոտ 30%-ը սկսվում է հղիության շրջանում: Հղիության ընթացքում բռնությունը ծանր և մահացու ավարտով բռնության ռիսկի գործոն է: Հղի կանայք ավելի հաճախ են առնչվում փոքր և մեծ բռնության ռիսկի, քան ոչ հղիները: (Համֆրիզ և այլք, 2005թ., Մնայդեր, Վեբստեր, Օ՛Սալլիվան, Քեմփբել, 2009թ., Լյուիս, Դրայֆ և այլք, 2001թ., Մակվիլյամս և Մակկիռինան, 1993թ., Գելլես, 1988թ.):

V. Տուժողի ԿՈՂՄԻՑ ռիսկի ընկալումը Արդյո՞ք կարծում եք, որ տուժողի մոտ ռիսկի ընկալումը կարող է կարևոր դեր խաղալ ռիսկերի գնահատման գործընթացում: Ինչո՞ւ: 20. Տուժողը վախենում է իր և երեխաների/այլ անձանց անվտանգության համար:	Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տուժողի կողմից ռիսկի ինքնագնահատման և իրավախախտի փաստացի բռնի վարքի միջև կա անմիջական կապ: Սակայն, տուժողներից ոմանք կարող են նվազեցնել ռիսկը և թերագնահատել բռնության սրման հնարավորությունը: Կնասպանության (ֆեմիցիդի) ուսումնասիրության համաձայան (Քեմփբել և այլք 2003 թ.) տուժողների մոտ կեսը չի ակնընկալել, որ հանցավորը կարող է սպանել իրեն (Ռյոել և այլք, 2005թ., Վայց, Տոլման և Սաունդերս, 2000թ., Գեկոլֆ և Հեքերտ, 2003թ., Հեքերտ և Գոնդոլֆ, 2004թ., Քեմփբել և այլք, 2003թ.):
Նշումներ	

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ., 2015թ., էջ 53:

5.2. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ընտանեկան բռնության դեպքերում ռիսկերի գնահատումը նպատակ ունի կանխել տուժողի կյանքի և անձի անձեռնմխելիության հանդեպ առկա վտանգը և բռնության կրկնությունը՝ բացահայտելով բռնության ռիսկի գործոնները, գնահատելով սպառնալիքի ծանրությունը և կանխատեսելով հնարավոր հետևանքները: Ռիսկերի գնահատումը շարունակական գործընթաց է և իրականացվում է տուժողի հետ առաջին իսկ շփումից ի վեր, քանի դեռ առկա է բռնության կրկնության կամ տուժողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգ: Հավասարապես կարևոր է պաշտպանել ընտանեկան բռնությունից տուժած երեխաներին և միջոցներ ձեռնարկել հետագա դատական վարույթներում նրանց պաշտպանելու համար: Ռիսկերի գնահատումը և կառավարումը հաճախ շարունակվում է քրեական վարույթի կամ այլ դատական ընթացակարգի ավարտից հետո և երբեմն կարող է անհրաժեշտ լինել՝ բռնարարի բանտից ազատվելուց հետո[324]:

Ռիսկի գնահատումը ներառում է հետևյալ հարցերի պատասխանը [325].

- Ո՞րն է նման գործողության /իրադարձության առաջացման հավանականությունը:
- Ո՞րն է նման գործողության/իրադարձության հնարավոր հետևանքը:
- Ովքե՞ր կարող են կրել նման գործողության/իրադարձության ազդեցությունը:

Ռիսկի գնահատումը և կառավարումը շարունակական գործընթաց է, որն իրականացվում է հետևյալ քայլերի հերթականությամբ.

1. Ռիսկի գնահատում.
2. **Ռիսկի կառավարում և անվտանգության ծրագրում՝ յուրաքանչյուր տուժողի համար կազմելով անհատական անվտանգության ծրագիր.**
3. Ռիսկի կառավարման մեխանիզմի արդյունավետության վերլուծություն և ռիսկի վերագնահատում:

324 Բրանկովիչ և Միրցևա (2016թ.), նույն տեղում:

325 Նույն տեղում:

Երեխաների և մեծահասակ տուժողների անվտանգությունը ռիսկերի արդյունավետ գնահատման և անվտանգության ծրագրման արդյունքում մեծանում է: Հետևաբար, ռիսկերի գնահատումը և անվտանգության ծրագրումը կարևոր նշանակություն ունեն ընտանեկան բռնության իրավիճակներում և հանցագործությունների կանխարգելման այլ ոլորտներում կատարված գնահատականների հիման վրա կարող է փոփոխության ենթարկվել: Այդուհանդերձ, տուժողների և երեխաների անվտանգության ապահովման հարցում քրեական դատավարության նպատակային և գործնականում իրագործվող միջամտությունների հնարավորությունները սահմանափակ են:

Ներդիր 12. Ընտանեկան բռնության ռիսկի գնահատման առանձնահատկությունները

Ընտանեկան բռնության ռիսկի գնահատման սկզբունքները հետևյալն են.

1. Ռիսկի գաղափարի ընկալման ընդլայնում՝ ներառելով ինտիմ հարաբերություններում ռիսկերի բազմազանությունը.

Ընտանեկան բռնության տուժողի և կատարողի միջև բազմակողմանի և բարդ հարաբերությունները հանգեցնում են մի շարք ռիսկերի, որոնք սովորաբար բնորոշ չեն անծանոթ անձի կողմից կատարված բռնությանը: Բռնարարի համար տուժողի հասանելիությունը, նրան ճանաչելը և հարաբերությունների առկայությունը հնարավորություն է տալիս օգտագործել նրանց միջև մտերմության հանգամանքները (օրինակ՝ սեռական հարաբերությունները, երեխաները) տուժողին վերահսկելու և վնասելու համար: Հետևաբար, ռիսկի գնահատումը չպետք է սահմանափակվի միայն ագրեսիվ վարքագծի դիտարկմամբ՝ ներառելով ֆիզիկական, իրավական, տնտեսական, ընտանեկան, սոցիալական, մշակութային և հուզական ռիսկերի վերլուծություն, որոնցից պետք է պաշտպանել տուժողին:

2. Բացահայտել և հաշվի առնել այն ենթատեքստը, որի ներքո տեղի է ունեցել բռնարարքը՝ որոշումների կայացմանը նպաստելու համար[326]:

Տուժողներին և նրանց երեխաներին սպառնացող ռիսկը նվազեցնելու համար կիրառվող ռազմավարությունների վրա ազդում է ընդհանուր համատեքստը, որում տեղի է ունեցել ընտանեկան բռնության դեպքը: Ըստ այդմ, ռիսկի մակարդակը և միջամտության հնարավոր ռազմավարությունները որոշելու համար, քրեական արդարադատության համակարգը դեպքը քննելուց բացի պետք է անդրադառնա այն ընդհանուր համատեքստին, որում տեղի է ունեցել բռնարարքը: Ընտանեկան բռնարարքի համատեքստը որոշվում է հաշվի առնելով կատարողի մտադրությունը, տուժողի համար բռնարարքի հետևանքները, տուժողի վրա բռնության ազդեցությունը, ինչպես նաև այլ համապատասխան գործոնները (օրինակ՝ բռնության, հարկադրանքի կամ ահաբեկման ինչ աստիճան է պարունակել բռնարարքը):

3. Իրականացնել ռիսկերի և անվտանգության ծրագրման գնահատում՝ տուժողի հետ համագործակցելով.

Միևնույն ժամանակ, տուժողի և երեխաների անվտանգության ապահովման հարցում քրեական դատավարության նպատակային և գործնականում իրագործվող միջամտությունների շրջանակները սահմանափակ են: Իր և երեխաների անվտանգությունը հոգալու ամենօրյա հոգսը կրում է տուժողը: Հետևաբար, ռիսկերի արդյունավետ գնահատումը, ռիսկերի նվազեցումը և անվտանգության ծրագրումը համատեղ, շարունակական գործընթաց է, որի կենտրոնում տուժողն է:

4. Ռիսկի ամբողջականությունը վերլուծելիս առաջնահերթություն տալ տուժողի և երեխաների անցյալ, ներկա և ապագա ռիսկերի ընկալմանը.

Միջին հաշվով, նախքան իրավապահ մարմինների ներգրավումը, տուժողները որոշ ժամանակ զբաղվում են գոյատևման ռազմավարությամբ: Նրանք ապրում են ռիսկի պայմաններում և կարող են գնահատել, թե ինչպես է ներկայիս իրավիճակը համեմատվում իրենց նախորդ իրավիճակի հետ: Նրանք կարող են նաև համապատասխան տեղեկատվություն տրամադրել իրավախախտի հետ իրենց բարդ հարաբերությունների ավելի անբացահայտ ռիսկերի վերաբերյալ (օրինակ՝ տնտեսական, երեխաների հետ կապված ռիսկերի): Տուժողների և երեխաների անվտանգությունը, սակայն, պահանջում է, որ այդ տեսակետը դիտարկվի տուժողի անմիջական փորձի և բոլոր ռիսկերի համատեքստում: Ոստիկանության ծառայողների արհեստավարժ և օբյեկտիվ տեսակետը նույնպես կարևոր է, հատկապես հաշվի առնելով, որ տուժողը կարող է թերագնահատել ռիսկը:

5. Տուժողի հետ համատեղ դիտարկել անվտանգության ծրագրման հնարավոր ռազմավարությունները: Ակնկալվող օգուտներից բացի գնահատել անվտանգության ծրագրի շրջանակներում հնարավոր լուրջ ռիսկերը և հնարավոր վնասները:

Հարաբերությունների գործոնների բարդությունը և ընտանեկան բռնության հետ կապված դինամիկան պահանջում են, որ ռիսկերի նվազեցման յուրաքանչյուր ռազմավարություն և անվտանգության ծրագիր գնահատվի համապարփակ եղանակով, և որ գնահատումը ներառի տուժողի ընկալումը: Ռիսկերի նվազեցումը, որը մեկուսացված ձևով ուղղված է միայն մեկ գործոնի չեզոքացման, կարող է արդյունավետ չլինել:

Ռիսկերի գնահատման գործընթացում հաշվի են առնվում յուրաքանչյուր առանձին տուժողի **վիճակը բնութագրող առկա գործոնները և պատասխան տրվում հետևյալ հարցերին**[327].

326 Ֆրեդերիկ Լորետա և Թիլլի Ջուլի: «Ընտանեկան բռնության դեպքերի արդյունավետ միջամտություններ. համատեքստն ամենակարևորն է», 2001թ.:

327 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.) «Բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմագործակալական համագործակցություն», վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ:

- **Արդյո՞ք առկա է տուժողի վնասվելու/վտանգված լինելու, բռնության սրման կամ տուժողի մահվան լուրջ վտանգ:**
- **Արդյո՞ք բռնարարը վտանգավոր է տուժողի համար: Արդյոք նա կարո՞ղ է լրջորեն վտանգել, վիրավորել կամ սպանել տուժողին: Ինչպե՞ս ենք գնահատում, թե ինչի է ընդունակ բռնարարը:**
- **Ի՞նչ հետևանքներ կունենա ռիսկի գնահատումը տուժողի և նրա երեխաների համար: Որքա՞ն լուրջ է հանցագործության հավանականությունը:**
- **Ո՞ր պահին կարող է տեղի ունենալ հանցագործությունը. Արդյոք դա կարո՞ղ է մոտագա ժամանակում տեղի ունենալ: Արդյոք դա կարո՞ղ է տեղի ունենալ, բռնարարի համար ցանկացած հարմար պահի՝ երբ որ հանգամանքները դա թույլ տան, կամ ինստիտուցիոնալ և սոցիալական վերահսկողության համակարգի կողմից վտանգն անտեսելու (ձախողվելու) պարագայում:**

Աղբյուրը՝ Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ., (2015թ.):

Ներդիր 13. Համապատասխան հարցերի օրինակներ

Հետևյալ գործոնների առկայությունը կարող է վկայել լուրջ վնասվածքի կամ մահացու վտանգի մասին: Միևնույն ժամանակ, այդ գործոնների բացակայությունը նման վտանգի բացակայության մասին չի վկայում[328]:

1. Արդյո՞ք ենթադրյալ բռնարարին հասանելի է հրազեն, կամ արդյո՞ք տանը հրազեն կա:
2. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը երբևէ օգտագործել է կամ սպառնացել է զենք կիրառել տուժողի դեմ:
3. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը երբևէ փորձե՞լ է տուժողին շնչահեղձել կամ խեղդամահ անել:
4. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը երբևէ սպառնացել կամ փորձել է սպանել տուժողին:
5. Արդյո՞ք վերջին մեկ տարվա ընթացքում ֆիզիկական բռնության հաճախականությունը կամ սաստկությունը աճել է:
6. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը տուժողին պարտադրե՞լ է սեռական հարաբերություն ունենալ:
7. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը փորձում է մեծամասամբ կամ ամբողջությամբ վերահսկել տուժողի ամենօրյա գործունեությունը:
8. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը մշտապես կամ բռնության գործադրմամբ խանդում է տուժողին:
9. Արդյո՞ք ենթադրյալ հանցավորը երբևէ սպառնացել կամ փորձել է ինքնասպան լինել:
10. Արդյո՞ք տուժողը կարծում է, որ ենթադրյալ հանցավորը կրկին հարձակվելու է նրա վրա կամ փորձելու է սպանել նրան: Նշում. «Ոչ» պատասխանը չի նշանակում ռիսկի ցածր մակարդակ, մինչդեռ «Այո» պատասխանը նշանակում է, որ այն զգալի է:
11. Արդյո՞ք կան ենթադրյալ բռնարարի ներգրավմամբ սպասվող կամ նախնական պաշտպանական որոշումներ, քրեական կամ քաղաքացիական գործեր:

Ոստիկանական ծառայությունները կարող են ունենալ ռիսկերի գնահատման սեփական ակտեր, որոնք կարող են նախատեսել կամ չնախատեսել գնահատման հատուկ գործիքների օգտագործումը: Գնահատման գործիքներն օգնում են ոստիկանության աշխատակիցներին բացահայտել և կենտրոնանալ որոշակի գործի կարևոր տարրերի վրա և դրանք համեմատել հայտնի դեպքերի հետ, որոնք հանգեցրել են տուժողի առողջությանը լուրջ վնասի պատճառման կամ մահվան: Թեև այդ գործիքները թույլ չեն տալիս կանխատեսել անհատի վարքագիծը, դրանք օգտակար են համեմատական ռիսկերի գնահատման և տուժողներին և երեխաներին բացահայտված վտանգներից պաշտպանելու ծրագրերի ուղղորդման համար:

Ռիսկերի գնահատումը չպետք է սահմանափակվի միայն ռիսկի գործոնների ստուգաթերթ լրացնելով: Եթե ոստիկանության աշխատակցի կողմից ռիսկի նախնական գնահատումը մտահոգություն է առաջացնում, ապա ռիսկի ավելի ընդգրկուն գնահատումը նպատակահարմար է: Ռիսկերի համապարփակ գնահատումը ներառում է գնահատման բազմաթիվ եղանակներ և տվյալների

328 Մինեսոտայի գերագույն դատարան, Գենդերային արդարության իրականացման հանձնաժողով (հավասարության և արդարության հանձնաժողով), ընտանեկան բռնության ռիսկերի գնահատման ուղեցույց, (2009թ.):

հավաքագրման բազմաթիվ աղբյուրներ, ներառյալ.

- զրույց տուժողների, բռնարարների և հարևանների կամ ընտանիքի ընկերների հետ, ովքեր կարող են տեղեկություններ ունենալ բռնության վերաբերյալ,
- ֆիզիկական և հուզական բռնության գնահատումներ, թմրամիջոցների և ալկոհոլի օգտագործումը և այլն,
- արձանագրությունների ստուգում, օրինակ՝ ոստիկանության զեկույցների, տուժողների ցուցմունքների, նախկինում դատվածության մասին տեղեկությունների, հոգեբանական կամ հոգեբուժական ստուգումների արձանագրված արդյունքների,
- համապատասխան տեղեկատվություն սպառնալիքի կամ իրական բռնության վերաբերյալ[329]:

Ռիսկերի գնահատման ընթացքում շատ գործիքներ, ուղեցույցներ և ռիսկի գործոնների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքներ կարող են օգտագործվել իրավիճակը գնահատելու և վնասը կանխելու միջոցներ ձեռնարկելու համար: Սակայն կարևոր է հասկանալ, որ «ստուգաթերթերը չեն ապահովում ռիսկի ամբողջական գնահատում... ավելի շուտ դրանք կառուցակարգում և ուղղորդում են մասնագիտական գնահատումը, օգնում են գնահատողներին կենտրոնանալ «ճիշտ բաների» վրա»[330]: Ռիսկերի գնահատման բոլոր գործիքները պետք է առաջին հերթին դիտվեն որպես կարևոր օժանդակ միջոց՝ տուժողի հետ երկխոսությանն աջակցելու և այն դյուրացնելու, ինչպես նաև ռիսկն արդյունավետ գնահատելու և տուժողի անվտանգությունն ապահովելու համար: Ռիսկերի գնահատումն ավելի քիչ արդյունավետ է, երբ մասնագետներն ապավինում են բացառապես ռիսկերի գնահատման ստուգաթերթին և չեն օգտագործում իրենց մասնագիտական դատողություններն ու հմտությունները»[331]:

Կառուցակարգված մասնագիտական դատողությունը պահանջում է օգտագործել գիտելիքները և մասնագիտական փորձը՝ վստահելի չափանիշների և մեթոդների հիման վրա ռիսկի մասին օբյեկտիվ դատողություն կատարելու համար՝ դիտարկելով համապատասխան ռիսկի գործոնները: Կառուցակարգված մասնագիտական դատողության տարրերն են՝ 1. գիտելիքն առավել ճշգրիտ ռիսկի գործոնների մասին. 2. այն հիմնված է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ապացուցված մեթոդների վրա. 3. տեղեկատվությունը հավաքագրվում է բազմաթիվ աղբյուրներից. 4. այն հիմնված է վերապատրաստման և ծառայության ընթացքում ուսումնասիրված ուղեցույցների/ենթաօրենսդրական ակտերի վրա, որոնց հիմքում հետազոտահեն գիտելիքն է. 5. տուժողի տեսակետը և նրա վախերը միշտ հաշվի են առնվում. 6. այն պարզ է, իրատեսական և զերծ նախապաշարմունքներից. 7. այն հեշտությամբ հասանելի և օգտագործելի է տարբեր հաստատությունների մասնագետների համար, որոնք տուժողների աջակցության համակարգի մաս են կազմում[332]:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Երեխաների համար ռիսկի գնահատումն իրականացվում է՝ որոշելու համար, թե ինչ ռիսկի են ենթարկվում այդ երեխաները: Գնահատումն անցկացնելիս պետք է հաշվի առնել.

- խնամակալության և հանդիպումների մասին համաձայնությունները
- դաժան կամ անտեսող ծնողավարման ձևը
- սպառնալիքները, որոնք ուղղակիորեն հասցվում են երեխաներին՝ իրենց կամ իրենց մոր

329 Ընտանեկան բռնության ռիսկի գործիքների ուսումնասիրություն: Դոնալդ Գ. Դաթթոն, Ռենդալ Քրոփ, 2000թ.:

330 ԿԸԲԵՑ (2012թ.): Պաշտպանություն II. Ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման կարողությունների զարգացում `բարձր ռիսկի տուժողներին պաշտպանելու համար, Վիեննա:

331 Ռոբինսոն, Ա. (2011): «Ռիսկ և սեռական զուգընկերոջ բռնություն»՝ Քեմշալ, Հ. և Ուիլկինսոն, Բ. (խմբ.): Ռիսկերի գնահատման լավ փորձ: Լոնդոն. Ջեսիկա Քինգսլի Փաբլիշերս, (2011թ.): "

332 Բալդրի, Ա.Ց. (2016թ.): Վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ. Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ, էջ 40:

վերաբերյալ

- առևանգման սպառնալիքները
- բռնարարի կողմից երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական բռնության վտանգը
- հարաբերությունները բռնարարի հետ (կենսաբանական կամ ոչ կենսաբանական երեխա)
- չնախատեսված ֆիզիկական բռնության ենթարկվելու վտանգը երեխայի կողմից միջամտելու փորձի դեպքում
- սոցիալական աջակցության առկայությունը կամ բացակայությունը:

Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների և դեռահասների երկարաժամկետ անվտանգությունը, առողջությունը և բարեկեցությունը գնահատելիս կարևոր է հաշվի առնել այն ազդեցությունը, որը ներկայում կամ նախկինում առկա որևէ վտանգն ունեցել է երեխաների վրա: Երեխաներին սպառնացող ռիսկի գնահատումը անց է կացվում նաև նրանց առողջությանը և բարեկեցությանը սպառնացող ռիսկի տեսանկյունից, ներառյալ շարունակական ընտանեկան բռնության վտանգի տակ գտնվելու ազդեցությունը նրանց հոգեբանորեն և սոցիալական վիճակի և վարքագծի վրա:

5.2.1. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ[333]

Պատշաճ ձևով իրականացման դեպքում ռիսկերի գնահատումը

- նպաստում է տուժողին սպառնացող ռիսկերի վերաբերյալ ոստիկանության աշխատակիցների մասնագիտական մոտեցումների ձևավորմանը և թույլ է տալիս նրանց միջոցներ ձեռնարկել (հետագա) բռնությունը կանխելու համար:
- ապահովում է բռնության նկատմամբ ավելի լավ ինստիտուցիոնալ արձագանքի ձևավորում, օգնելով նվազեցնել բռնության սրացման հավանականությունը:
- թույլ է տալիս կազմել տուժողի հետ համատեղ մշակված անվտանգության ծրագիր՝ այն ավելի լավ համապատասխանեցնելու սպառնացող ռիսկի մակարդակին և բնույթին:
- ապահովում է բռնության բարդ դեպքերի լուծման գործում ներգրավված տարբեր հաստատությունների համակարգված արձագանքը:
- նպաստում է տուժողի և նրա երեխաների անվտանգության բարձրացմանը և պաշտպանվածության բարելավմանը:
- նպաստում է տուժողի իրազեկվածությանը իրեն և իր երեխաների սպառնացող վտանգների մասին, օգնելով նրան ավելի իրատեսորեն գնահատել դրանք: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ կանայք հաճախ կարող են ինքնուրույն գնահատել, որ գտնվում են բարձր ռիսկային իրավիճակում:

Ռիսկի գնահատումը թույլ է տալիս բացահայտել և բնութագրել ռիսկը և դրա առաջացման պատճառները, ինչպես նաև բռնության կրկնման հնարավոր հետևանքները:

333 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.):

Գործողություն 12. Ռիսկի բացահայտում և գնահատում

Նպատակը. Մասնագետների իրազեկվածության բարձրացում տուժողի համար վտանգ ներկայացնող ռիսկային գործոնների մասին, որոնք կարող են հանգեցնել տուժողի լուրջ հոգեկան և ֆիզիկական տրավմայի, բռնության սրացման կամ տուժողի մահվան:

Տևողությունը. 70 րոպե

Անցկացման ձևը. Խմբային աշխատանք (30 րոպե), ամբողջ խմբով քննարկում (40 րոպե)

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ՝ «Ռիսկի գործոնները և կատեգորիաները», Մասնակիցներին բաժանվող նյութ՝ «Գործերի նկարագրություններ» (2 գործի նկարագրություն յուրաքանչյուր խմբի համար), ֆլիպչարթ գրատախտակ, մարկերներ:

Ցուցումներ. Դասընթացավարը կազմում է 4-5 մասնակցից բաղկացած խմբեր և խնդրում նրանց ծանոթանալ գործի նյութերին: Խմբերն աշխատում են ինքնուրույն: Խմբերի անդամները լրացնում են «Ռիսկի գործոնները և կատեգորիաները» նյութը՝ թվարկելով բոլոր այն ռիսկային գործոնները, որոնք կարելի է բացահայտել գործի նկարագրության հիման վրա:

Ցուցումներ խմբային քննարկման համար. Դասընթացավարը խնդրում է յուրաքանչյուր խմբից մեկական մասնակցի թվարկել և քննարկել խմբի կողմից նշված ռիսկի գործոնները, այնուհետև գրել բացահայտված բոլոր գործոնները գրատախտակի վրա: Արդյո՞ք կարծում եք, որ տուժողի կողմից ռիսկի ընկալումը կարող է կարևոր լինել ռիսկերի գնահատման գործընթացում: Ինչո՞ւ: Դասընթացավարը նաև բացահայտված ռիսկի գործոնները կապում է տուժողի (Աննայի) ընկալումների հետ՝ ըստ գործի նկարագրությունում տրված հատուկ հանգամանքների: Նույնը վերաբերում է առաջարկվող միջոցին:

«Ռիսկի գործոնները և կատեգորիաները» նյութը լրացնելուց հետո մասնակիցներին առաջարկվում է լրացնել մեկ այլ բաժանված նյութ՝ «Ձեռնարկվելիք պաշտոնական միջոցների և գործողությունների ցանկը» և պատրաստել համապատասխան պաշտոնական փաստաթղթեր: Դասընթացավարը յուրաքանչյուր խմբից մեկական անդամի խնդրում է ներկայացնել, թե որ պաշտոնական նյութերը/ձևերն են լրացվել և ինչ քայլեր են ձեռնարկվել: Այնուհետև ամբողջ խումբը մասնակցում է քննարկմանը, թե ինչ միջոցներ և գործողություններ պետք է ձեռնարկեն ոստիկանության աշխատակիցները և ինչպես չպետք է նրանք գործեն:

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015թ.):

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ռիսկերի բացահայտում և գնահատում- 1

ԳՈՐԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Աննան և Սարգիսն ամուսնացած են 11 տարի: Նրանք ունեն երկու երեխա՝ 10 տարեկան Արմենը և 5,5 տարեկան Կարոն: Ամուսնանալուց հետո Սարգիսին պատկանող հողամասում նրանք ընտանեկան տուն են կառուցել: Արմենին է պատկանում է մի ընկերություն, որտեղ աշխատում է նաև Աննան:

Մեկ օր կեսօրին, երբ Սարգիսը սկսում է ծեծել Կարոյին և ցած է նետում նրան աստիճաններից, Աննան դիմում է ոստիկանություն՝ խնդրելով պաշտպանություն: Արմենը (մեծ երեխան) երկար տարիներ ծեծի է ենթարկվել հոր կողմից, ընդ որում հետապնդումները և ծեծը սկսվել են չորս տարեկանից: Այս անգամ հայրը նրան չի ծեծել: Կարոյի նկատմամբ ֆիզիկական բռնությունները սկսվեցին մոտավորապես նույն տարիքից, ինչ Արմենի:

Աննան ոստիկանությանը մինչ այդ չէր հայտնում Սարգիսի կողմից Արմենին ծեծելու մասին: Նա մտածում էր, որ ի վիճակի է պաշտպանել Արմենին Սարգիսից: Սակայն, երբ Սարգիսը Կարոյին ցած է նետում աստիճաններից, Աննան սարսափում է, որ Սարգիսը կսպանի երեխային և ոստիկանություն զանգում:

Երբ Աննան վերցրնում է հեռախոսը և զանգահարում ոստիկանություն, Սարգիսը տնից դուրս է գալիս բակ: 15 րոպե անց երկու ոստիկան Սարգիսի հետ միասին մտնում են տուն: Ոստիկաններից մեկը Արմենին հարցնում է, թե որ խաղալիքներով է նա խփել հորը: Երեխան վախից վազում է մոր մոտ և թաքնվում: Աննան արձագանքում է, որ Սարգիսն է Արմենին ծեծել, և ոչ թե հակառակը: Ոստիկանության աշխատակիցները ասում են, որ Սարգիսն իրենց հենց նոր հայտնել է, որ երեխաները հարվածել են նրան և խաղալիքներով խփել նրա գլխին: Աննան ցնցված է, նա ասում է ոստիկաններին, որ ինքն է զանգել իրենց, և նա խոսք չի գտնում: Սարգիսը շարունակում է պնդել ոստիկաններին, որ նրանք երեքով միավորվել են իր դեմ և օգնություն է խնդրում: Նա ասում է ««Տեսեք, թե ինչ տեսքի է Աննան՝ նեղ ջինսեր և շապիկ, որը նույնիսկ նրա մարմինը չի թաքցնում: Նա այդպես դուրս է գալիս փողոց, նաև քայլում է տղաների առջև: Հիմա էլ նա բողոքում է իմ դեմ, թեև ես կերակրում եմ նրանց, վճարում եմ հաշիվներն ու աշխատում ամբողջ օրը, իսկ նա երեխաներին տրամադրում է իմ դեմ, որպեսզի կարողանա գումարը ծախսել հագուստի և դիմահարդարման վրա և չամուսնացած աղջկա պես իրեն պահել: Ես նրան երբեկ մատով էլ չեմ դիպել»:

Աննան և երեխաները միասին կանգնել են հյուրասենյակի անկյունում: Ոստիկանը դիմում է Աննային. «Ձեր ամուսնու ասածը ճի՞շտ է: Ինչո՞ւ եք այս անհեթեթությունն անում: Ձեզ հանգիստ պահեք: Հաջորդ անգամ, եթե զանգահարեք մեզ և կրկին ուզենաք դիմում ներկայացնել, պետք է ժամանեք ոստիկանական բաժանմունք և ստորագրեք դիմումը»: Աննան մտածում է երեխաների հետ հեռանալ տնից և ամուսնալուծության դիմել: Նրա ծնողները ողջ չեն, և նա չգիտի, թե ում դիմի և ուր գնա:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ռիսկերի բացահայտում և գնահատում- 2

ԳՈՐԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Աննան և Սարգիսն ամուսնացած են 11 տարի: Նրանք ունեն երկու երեխա՝ 10 տարեկան Արմենը և 5,5 տարեկան Կարոն: Ամուսնանալուց հետո Սարգիսին պատկանող հողամասում նրանք ընտանեկան տուն են կառուցել: Արմենին է պատկանում է մի ընկերություն, որտեղ աշխատում է նաև Աննան:

Մեկ օր կեսօրին, երբ Սարգիսը սկսում է ծեծել Կարոյին և ցած է նետում նրան աստիճաններից, Աննան դիմում է ոստիկանություն՝ խնդրելով պաշտպանություն: Արմենը (մեծ երեխան) երկար տարիներ ծեծի է ենթարկվել հոր կողմից, ընդ որում հետապնդումները և ծեծը սկսվել են չորս տարեկանից: Այս անգամ հայրը նրան չի ծեծել: Կարոյի նկատմամբ ֆիզիկական բռնությունները սկսվեցին մոտավորապես նույն տարիքից, ինչ Արմենի:

Աննան ոստիկանությանը մինչ այդ չէր հայտնում Սարգիսի կողմից Արմենին ծեծելու մասին: Նա մտածում էր, որ ի վիճակի է պաշտպանել Արմենին Սարգիսից: Սակայն, երբ Սարգիսը Կարոյին ցած է նետում աստիճաններից, Աննան սարսափում է, որ Սարգիսը կսպանի երեխային և ոստիկանություն զանգում:

Երբ Աննան վերցրնում է հեռախոսը և զանգահարում ոստիկանություն, Սարգիսը տնից դուրս է գալիս բակ: 15 րոպե անց երկու ոստիկան Սարգիսի հետ միասին մտնում են տուն: Ոստիկաններից մեկը Արմենին հարցնում է, թե որ խաղալիքներով է նա խփել հորը: Երեխան վախից վազում է մոր մոտ և թաքնվում: Աննան արձագանքում է, որ Սարգիսն է Արմենին ծեծել, և ոչ թե հակառակը: Ոստիկանության աշխատակիցները ասում են, որ Սարգիսն իրենց հենց նոր հայտնել է, որ երեխաները հարվածել են նրան և խաղալիքներով խփել նրա գլխին: Աննան ցնցված է, նա ասում է ոստիկաններին, որ ինքնէ զանգել է իրենց, և նա խոսք չի գտնում: Սարգիսը շարունակում է պնդել ոստիկաններին, որ նրանք երեքով միավորվել են իր դեմ և օգնություն է խնդրում: Աննան ասում է, որ այն, ինչ անում է Սարգիսը, դա ոտնձգությունների շարունակությունն է, որոնցից նա տառապում է տարիներ շարունակ: Աննան դիմում է ոստիկաններին և ասում. «Այո, նա երբեք ֆիզիկապես չի հարձակվել ինձ վրա, բայց նա անընդհատ ինձ անվանում է ինքնահավան պոռնիկ, ասում է «ո՞վ է քո այժմյան ընկերը, դու կրկին դա անում ես ընկերոջդ համար, որքա՞ն գումար ծախսեցիր շրթներկի և հետույքդ չծածկող կիսաշրջազգեստների վրա»: Նրան երբեք դուր չի եկել իմ հագնվելու և դիմահարդարվելու ձևը, նա անընդհատ քննադատում է ինձ այդ ամենի վրա շատ գումար ծախսելու համար և վերջին տարիներին ամբողջ գումարը նրա դրամապանակում է, և յուրաքանչյուր գնումի համար ես պետք է թույլտվություն հարցնեմ նրանից, իսկ նա ինձ վճարում է նվազագույն աշխատավարձ, որը հացի ու կաթի համար բավարար չէ: Նա թերություններ է գտնում յուրաքանչյուր իմ ընկերոջ մեջ և պնդում է, որ ընկերներս ինձ փչացրել են, նաև նախատում է ինձ ընկերներիս հետ հեռախոսով խոսելու համար»:

Աննան և երեխաները միասին կանգնել են հյուրասենյակի անկյունում: Աննան մտածում է երեխաների հետ հեռանալ տնից և ամուսնալուծության դիմել: Նրա ծնողները ողջ չեն, և նա չգիտի, թե ում դիմի և ուր գնա:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ձեռնարկվելիք պաշտոնական միջոցների և գործողությունների ցանկը[334]

Բացահայտված ռիսկի գործոն	Ռիսկերի նվազեցման միջոցներ	Լրացվող պաշտոնական փաստաթղթերի տեսակը:

334 Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015թ.), էջ.56:

5.2.2 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համաձայն «Ընտանեկան բռնության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ոստիկանությունը մշակում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված՝ անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները:

2019 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի թիվ 18-Լ հրամանը հաստատել է ընտանիքում բռնության կրկնության կամ շարունակման անմիջական սպառնալիքի գնահատման չափորոշիչները, որոնք փոփոխվել են 2020 թվականի օգոստոսի 12-ի՝ ոստիկանության պետի թիվ 30-Լ հրամանով: Ոստիկանության իրավասու ծառայողն ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի առկայությունը գնահատում է հետևյալ չափորոշիչների հիման վրա.

1. Ենթադրաբար բռնության ենթարկված անձի բացատրությունը:
2. Ենթադրաբար բռնություն գործադրողի բացատրությունը (եթե վերջինս դեպքի վայրում է):
3. Դեպքի վայրում ներկա այլ անձանց բացատրությունները:
4. Ենթադրաբար բռնություն գործադրողի տիրապետության տակ զենքի առկայությունը:
5. Ենթադրաբար բռնություն գործադրողի կողմից սպառնալիքներ հնչեցնելը և վարքագիծը:
6. Ենթադրաբար բռնության ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձանց մարմնի և հագուստի վրա առերևույթ բռնության հետքերը:
7. Հասցված վնասվածքների նկարագրությունը (որքանով դա հնարավոր է անել առանց փորձաքննության), քանակը, տեղակայումը և գործիքները (միջոցները), որոնք օգտագործվել են վնասվածքները հասցնելու համար:
8. Ենթադրաբար բռնության ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձանց վարքագիծը (այդ թվում՝ վախը, շնչելու և կուլ տալու դժվարությունը, դողը, շարժումների անհավասարակշռությունը):
9. Ենթադրաբար բռնություն գործադրողի դեմ նախկինում ներկայացված բողոքները և հաղորդումները:
10. Ենթադրաբար բռնություն գործադրողի և ենթադրաբար բռնության ենթարկված անձի

միջև հարաբերությունների բնույթը, դատական վեճերի՝ այդ թվում՝ ամուսնալուծության, երեխաների խնամակալության հետ կապված գործընթացի առկայությունը:

11. Բռնության ենթարկված անձին պատկանող գույքին պատճառված վնասը:
12. Ենթադրաբար բռնության ենթարկված անձի՝ անչափահաս, հղի, տարեց լինելը կամ հաշմանդամություն ունենալը կամ այլ հատկանիշներ, որոնք նրան հատկապես խոցելի են դարձնում:
13. Ենթադրաբար բռնություն գործադրողի՝ հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատություններում հաշվառման վերցված լինելը:
14. Ենթադրաբար բռնություն գործադրողի՝ առերևույթ ալկոհոլի կամ թմրամիջոցների ազդեցության տակ գտնվելը:
15. Ենթադրաբար բռնություն գործադրողի մոտ բռնությամբ զուգորդված հանցանքի համար դատվածության առկայությունը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված լինելը և փորձաշրջանի մեջ գտնվելը:
16. Ենթադրաբար բռնություն գործադրողի նկատմամբ նախկինում նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կայացված լինելը, այդ թվում՝ հաշտեցման հիմքով կամ ենթադրաբար բռնության ենթարկված անձի կողմից պաշտպանական որոշման /նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական/ պահանջների կատարմանը խոչընդոտելու պատճառով օրենքով սահմանված դեպքում վերոհիշյալ որոշումների վերացված լինելը:

Համաձայն 2019 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի թիվ 18-Լ հրամանի Ընտանիքում ենթադրաբար բռնության ենթարկված անձին ուղղվում են հետևյալ հարցերը (անհրաժեշտության դեպքում թարգմանչի օգնությամբ)՝

Հարցը	Այո	Ոչ	Տեղյակ չեմ	Հրաժարվում եմ պատասխանել
1. Դուք վնասվածք ստացե՞լ եք ներկա դեպքի պատճառով				
2. Արդյո՞ք Դուք վախ ունեք, որ ենթադրաբար բռնություն գործադրած անձը կվնասի Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց				
3.Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է վնասել Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց				
4.Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է սպանել Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց				
5. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց՝ գործածելով զենք/դանակ կամ այլ առարկա/				

6.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ ֆիզիկական բռնություն գործադրե՞լ է Ձեր նկատմամբ /ի՞նչ աճախականությամբ/				
7.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեզ երբևէ պարտադրե՞լ է սեռական հարաբերություն ունենալ իր հետ				
8.Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը հետապնդել է Ձեզ, վերահսկողություն իրականացրե՞լ է Ձեր գործողությունների նկատմամբ				
9.Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը մեկուսացրե՞լ է Ձեզ կամ զրկե՞լ է ֆինանսական միջոցներից				
10.Ենթադրաբար բռնություն գործադրած անձի տիրապետության տակ արդյոք առկա՞ է զենք				
11.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ դաժանաբար վարվե՞լ է Ձեր ընտանի կենդանու նկատմամբ				
12.Ենթադրաբար բռնություն գործադրած անձից Դուք վերջերս (վերջին մեկ տարվա ընթացքում) փորձե՞լ եք ամուսնալուծվել կամ բաժանվել կամ Ձեր միջև արդյոք կա՞ երեխաների խնամակալության հետ կապված վեճ				
13.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը տառապո՞ւմ է ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, թունամոլությունից կամ խաղամոլությունից				
14.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեր հղիության ընթացքում (եթե նա տեղյակ էր հղիության մասին) գործադրե՞լ է բռնություն				

15.Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձի նկատմամբ երբևէ կայացվել է ընտանիքում բռնության համար նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ մեղադրական դատավճիռ				
16.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ խախտե՞լ է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները				
17.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ դատապարտվե՞լ է բռնությամբ զուգորդված հանցանք կատարելու համար				
18.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը հաշվառվա՞ծ է հոգեբուժական կամ նարկոլոգիական դիսպանսերում				
19. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը հնչեցրել է սպառնալիք Ձեր կողմից, ոստիկանություն կամ այլ իրավապահ մարմիններ դիմելու դեպքերում				
20. Բռնարարը սպառնո՞ւմ է կամ փորձո՞ւմ է ինքնասպան լինել				
21. Արդյո՞ք Դուք հղի եք կամ ծննդաբերել եք վերջին մեկ տարվա ընթացքում կամ ունե՞ք հաշմանդամություն				

Վերը թվարկված հարցերից 10-ին դրական պատասխանելը վկայում է ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անհետաձգելիորեն սպառնացող վտանգի առկայության մասին:

Համաձայն 2019 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի թիվ 18-Լ հրամանի ենթադրաբար բռնություն գործադրած անձին ուղղվում են հետևյալ հարցերը.

Արդյո՞ք նա գործադրել է բռնություն:

1. Եթե այո, ապա դրա պատճառը և հանգամանքները:
2. Եթե ոչ, ապա ինչպես է բացատրում ենթադրաբար ընտանիքում բռնության ենթարկված անձի մարմնի և հագուստի վրա և դեպքի վայրում առկա բռնության հետքերը:
3. Արդյոք նրա նկատմամբ երբևէ կայացվե՞լ է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, բռնությամբ զուգորդված հանցանքի համար մեղադրական դատավճիռ և արդյո՞ք նա հաշվառման է վերցվել ընտանիքում բռնություն կատարելու համար:
4. Ինչպիսի՞ հարաբերությունների մեջ է ընտանիքում ենթադրաբար բռնության ենթարկված անձի հետ, արդյո՞ք նրանց միջև առկա է որևէ դատական վեճ:
5. Արդյո՞ք նրա տիրապետության տակ առկա է զենք:

Եթե ենթադրաբար գործադրվել է փոխադարձ բռնություն, ոստիկանության իրավասու ծառայողը որոշում է.

1. Կողմերից ո՞ր մեկն է գործել պաշտպանության վիճակում:
2. Եթե կողմերից ոչ մեկն առերևույթ չի գործել պաշտպանության սահմաններում, ո՞ մ կողմից բռնությունը շարունակելու կամ կրկնելու հավանականությունն է ավելի բարձր՝ ելնելով յուրաքանչյուրի վնասվածքների բնույթից, քանակից, տեղակայումից, օգտագործված գործիքներից և միջոցներից և այլ հանգամանքներից:

5.2.3 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռիսկերի գնահատումը և անվտանգության ծրագրումը տուժող կանանց ընտանեկան բռնությունից պաշտպանելու գործում հիմնական գործողություններն են: Պրակտիկան պետք է հիմնված լինի քաղաքականության փաստաթղթերում և ռիսկերի գնահատման, անվտանգության ծրագրման և ռիսկերի կառավարման ուղեցույցներում ամրագրված որակի չափանիշների վրա: Ստանդարտացված պրակտիկան պետք է ներառի.

- հստակ սահմանված դերեր և պարտականություններ,
- տուժողի կարիքների վրա հիմնված ընթացակարգեր, և
- տուժողի և նրա երեխաների անվտանգությունը, ինչպես նաև հետագա բռնությունների կանխումը պետք է լինեն ցանկացած միջամտության առանցքում[335]

Ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացում ոստիկանության ծառայողները կարող են անտեսել նախազգուշական նշանները և թերագնահատել ռիսկի ծանրությունը: Ռիսկերի արդյունավետ գնահատման և կառավարման գործընթացի հիմնական խնդիրները կանանց նկատմամբ ընտանեկան բռնության գենդերային ընկալման բացակայությունն է՝ ընտանեկան բռնության վերաբերյալ անբավարար գիտելիքները և փորձը, ինչպես նաև գենդերային կարծրատիպերը և նախապաշարմունքները: Ստանդարտացված պրակտիկան պետք է բարձրացնի տուժողի անվտանգությունը և նվազագույնի հասցնի մահացու ելքի հավանականությունը: Այս առումով էական է հասկանալ կնասպանություն (ֆեմիցիդ) հասկացությունը:

5.2.4 ՖԵՄԻՑԻԴ/ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ [336]

«**Ֆեմիցիդ**» և «գենդերային հիմքով կանանց սպանություններ» եզրույթները հաճախ օգտագործվում են միաժամանակ ՄԱԿ-ի փաստաթղթերում՝ ընդգծելու այդ բռնության գենդերային բնույթը, ի տարբերություն հասարակության և լրատվամիջոցների այն կեղծ ընկալման, որ կանանց սպանությունները ընտանեկան բռնությունը համատեքստում հանդիսանում է այսպես կոչված «կրքի հանցագործություն»:

Ֆեմիցիդ եզրույթն առաջին անգամ 1976 թվականին կիրառեց Դայանա Ռասելը, սահմանելով այն հետևյալ կերպ. ֆեմիցիդը տղամարդկանց կողմից կանանց սպանելն է պարզապես այն պատճառով, որ նրանք կանայք են[337]:

---

335 Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015թ.):

336 Բրանկովիչ, 2017թ

337 Ռասել, Դ. (2013թ.): «Ֆեմիցիդ». Անվան ուժը՝ Ֆեմիցիդ. Գործողություններ պահանջող գլոբալ խնդիր: Վիեննա, Միավորված ազգերի կազմակերպության գիտական խորհուրդ (ACUNS):

Ֆեմիցիդի մասին Վիեննայի հռչակագիրը[338] ընդունում է, որ ֆեմիցիդը «կանանց և աղջիկների սպանությունն է նրանց սեռի պատճառով, որ, ի թիվս այլոց, կարող է կրել հետևյալ ձևը.

(1) կանանց սպանություն՝ զուգընկերոջ կողմից բռնության հետևանքով.

(2) կանանց խոշտանգում և կնատյածության հողի վրա սպանություն.

(3) կանանց և աղջիկների սպանությունը «հանուն պատվի».

(5) կանանց և աղջիկների թիրախային սպանություններ զինված հակամարտությունների ժամանակ.

(5) կանանց սպանություն՝ օժիտի հետ կապված.

(6) կանանց և աղջիկների սպանություն՝ նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով.

(7) բնիկ և տեղաբնիկ կանանց և աղջիկների սպանություն՝ նրանց սեռի պատճառով.

(8) աղջիկների մանկասպանություն և սեռի ընտրության համար պտղասպանություն.

(9) սեռական օրգանների խեղման հետևանքով մահեր.

(10) կախարդության մեջ մեղադրանքներ.

(11) ավազակախմբերի, կազմակերպված հանցավորության, թմրավաճառների, մարդկանց թրաֆիքինգի և հրաձգային զենքի տարածման հետևանքով կանանց այլ սպանություններ:

Կարևոր է ընդգծել, որ ֆեմիցիդի երևույթը մարդկային գլոբալ անվտանգության խնդիր է, ինչի վկայությունն են աշխարհում ֆեմիցիդի տարածվածության մասին ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության գրասենյակի կողմից հավաքված տագնապալի նոր տվյալները: Ֆեմիցիդի զոհերի ընդհանուր թվի համեմատությունը 2012 թվականին ահաբեկիչության զոհերի ընդհանուր թվի հետ բացահայտում է հետևյալը. «ըստ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԹՀՊԳ), 2012 թվականին աշխարհում ավելի քան 43 000 կին սպանվել է սեռական զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից, ինչը գրեթե չորս անգամ ավելի է այդ տարվա ընթացքում ահաբեկչության զոհ դարձած տղամարդկանց թվից: Այս ցնցող թվերն ընդգծում են ֆեմիցիդի և առհասարակ գենդերային բռնության, ինչպես նաև անվտանգության գլոբալ խնդիրների լուծման կարևորությունը»[339]:

Եվրոպական համատեքստում ֆեմիցիդ եզրույթը սովորաբար վերաբերում է սեռական զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից կանանց սպանությանը, ներառյալ այսպես կոչված «հանուն պատվի» կատարված հանցանքներին («հանուն պատվի» սպանություններին): Ֆեմիցիդ եզրույթը չի օգտագործվում Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիայում, սակայն այն օգտագործում է «ֆիզիկական բռնություն, որը հանգեցնում է տուժողի մահվան» արտահայտությունը[340]: Կոնվենցիայի բացատրական հուշագրում նշվում է՝ ««Ֆիզիկական բռնություն» եզրույթը վերաբերում է այն մարմնական վնասվածքին, որը հասցվել է անմիջական և անօրինական ֆիզիկական ուժ գործադրելու հետևանքով: Այն ներառում է նաև այն բռնությունը, որի հետևանքով տուժողը մահացել է»[341]:

338 ԷԿՕՍՕՍ, Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիր, (2013թ.), E/CN.15/2013/NGO/1.

339 Բեքերս, 2016թ.:

340 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, Article 35.

341 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, պարբերություն 188.

5.2.5 ՖԵՄԻՑԻԴԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ քրեական օրենսգրքում սպանության հանցակազմը տեղ է գտել 7 հոդվածներում, ներառելով ինչպես սպանության հիմնական հանցակազմը, այնպես էլ ծանրացնող և մեղմացնող հանգամանքներով տեսակները: 155-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է սպանությունը, ինչը ենթադրում է անձին ապօրինաբար, դիտավորությամբ կյանքից զրկելը: Նույն հոդվածի 2-րդ մասում ներկայացված են ծանրացուցիչ հանգամանքներում սպանության 16 տեսակները: Դրանց թվում առանձնանում են հղի կնոջ, անօգնական վիճակում գտնվողի, ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի, անչափահասի, ինչպես նաև մերձավոր ազգականի կողմից կատարված սպանության տեսակները, որոնք էլ առավել հաճախ հանդիպում են ընտանեկան բռնության դեպքերում:

Գործող քրեական օրենսգրքով սահմանված են նաև սպանության մեղմացնող հանգամանքներով տեսակները, ինչպես նաև անձին անզգուշությամբ կյանքից զրկելը: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության, ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանության, դրան հանցակցելու, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանության, հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանության, հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության, տուժողի խնդրանքով սպանության համար:

Ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը որոշակիորեն փոփոխության է ենթարկել հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության հանցակազմի նմարագրությունը՝ այն սահմանելով որպես անձի հակահիրավական արարքի կամ վարքագծի կետևանքով առաջացած հոգեկան խիստ հուզմունքի՝ աֆեկտի վիճակում այդ անձի սպանությունը: Նախկին կարգավորումները հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված էին դիտում նաև սպանության այն դրսևորումները, որոնք տեղ էին գտել տուժողի հակաբարոյական վարքագծի հետևանքով: **Արդյունքում, որոշ դեպքերում կնոջ սեռական կյանքի պատմությունը կամ դավաճանության մեղադրանքն ծառայում էին որպես արդարացում տղամարդկանց «հոգեկան խիստ հուզմունքի» վիճակում գտնվելուն:** «Հակաբարոյական» վարքագծի՝ կարծրատիպային և գենդերային գաղափարների վրա հիմնված լինելուց բացի՝ դրույթը պարունակում էր շատ անորոշ հասկացություններ, որոնք կասկածի տակ էին դնում դրա կիրառմանն առնչվող իրավական որոշակիությունը[342]: Դա հանգեցնում էր ոտնձգողների անպատժելիության, իսկ կանանց՝ զրկում արդարադատության մատչելիությունից:

Սեռական զուգընկերոջ կողմից ֆեմիցիդի վերաբերյալ տարբերակված վիճակագրության բացակայությունը և սպանությունների դասակարգման համար ոչ ճշգրիտ կատեգորիաների օգտագործումը հանգեցնում է ֆեմիցիդի դեպքերի թերընկալման և թերզեկուցումների: Դրա հետևանքով, Հայաստանում ամեն տարի սեռական զուգընկերների և ընտանիքի անդամների կողմից սպանված կանանց իրական թիվը մնում է անհայտ: 2010-2015 թվականներին[343] գրանցվել է ֆեմիցիդի 30 փաստագրված դեպք, իսկ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի անդամ կազմակերպությունները մինչ օրս (2017թ.) փաստագրել են առնվազն 14 լրացուցիչ դեպք Հայաստանում[344]:

---

342 Լորի Ման ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքում և ոստիկանության համապատասխան հրամանների վերլուծություն և առաջարկություններ»), 19 փետրվարի 2019թ., Եվրոպայի խորհուրդ:

343 Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա; Ֆեմիցիդը Հայաստանում՝ լուռ համաճարակ, 2016թ.:

344 Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, «Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը Հայաստանում և Վրաստանում. Փորձի փոխանակում և հետագա համագործակցության ռազմավարություն» տարածաշրջանային գիտաժողով: Գիտաժողովի ամփոփիչ փաստաթուղթ, 2017թ.:

5.3. ԱՐԳԵԼՈՂ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5.3.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 52-րդ հոդվածը նսխստեսում է. «Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ապահովելու համար, որ իրավասու մարմիններին, անմիջական վտանգի իրավիճակներում, լիազորություն վերապահվի ընտանեկան բռնություն գործադրողին կարգադրելու բավարար ժամկետով ազատել տուժողի կամ վտանգի մեջ գտնվող անձի բնակարանը և արգելելու բռնություն գործադրած անձին մտնել տուժողի կամ վտանգի մեջ գտնվող անձի բնակարան կամ շփվել նրա հետ: Սույն հոդվածին համապատասխան միջոցառումներ ձեռնարկելիս պետք է առաջնահերթություն տալ տուժողների և վտանգի մեջ գտնվող անձանց անվտանգությանը:»[345]

Ինչպես դիպուկորեն նկարագրել է Եվրոպայի խորհուրդը՝ արգելող անհետաձգելի միջամտության որոշման (ԱՄՈ) հասկացությամբ պահանջվում է «հարացույցի փոփոխություն»: Փոխարենը տուժողներին խնդրելու, որ բռնությունից անվտանգ վայր փնտրեն՝ այն այդ պարտականությունը դնում է բռնություն գործադրած անձի վրա, որին կարգադրվում է հեռանալ տուժողի կամ վտանգի մեջ գտնվող անձի բնակարանից և չշփվել նրա հետ[346]: Թեև 52-րդ հոդվածով պահանջվում է այդպիսի միջոցառումների ձեռնարկում, դրա իրականացման եղանակները թողնվում են պետության հայեցողությանը: ԱՄՈ-ները նախատեսված չեն որպես մի շարք այլ այնպիսի միջոցների փոխարինում, ինչպիսիք են ձերբակալությունը, կալանավորումը և քրեական հետապնդումը: Միևնույն ժամանակ, 52-րդ հոդվածը մեկնաբանվում է 50-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների հետ մեկտեղ, որոնցով պահանջվում է իրավապահ մարմինների կողմից անհապաղ արձագանք, ռիսկերի գնահատումներ և երկարաժամկետ պաշտպանության հասանելիություն:

Անհետաձգելի միջամտության որոշումները կարող են բնութագրվել իրենց անհապաղ կիրառմամբ և կարճաժամկետ տևողությամբ: Ինչպես սահմանված է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույցում (այսուհետ՝ Բացատրական զեկույց)՝ 52-րդ հոդվածում առկա «անմիջական վտանգ» եզրույթը վերաբերում է այն իրավիճակներին, որոնցում վնասն անխուսափելի է, նյութականացել է և հավանական է, որ կառաջանա:

ԱՄՈ-ները պետք է կայացվեն «բավարար ժամկետով», որը տարբեր պետություններում սովորաբար 10 օրվանից մինչև 4 շաբաթ է: Առնվազն տասը օրվա ընթացքում տուժողը կկարողանա հեռանալ բռնության արատավոր շրջանակից և որոշել, թե արդյոք կարիք ունի դատարանի որոշումների կայացման միջոցով հետագա դատական պաշտպանության: Անհրաժեշտ ժամանակաշրջանից հետո, որի ընթացքում համարվում է, որ տուժողը կկարողանա անհապաղ օգնություն և աջակցություն ստանալ առանց հոգեբանական ճնշման, տուժողը կարող է ինքնուրույն որոշում

345 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, CETS 210, 2011թ., հոդված 52:

346 Եվրոպայի խորհուրդ «Անհետաձգելի միջամտության որոշումները ընտանեկան բռնության իրավիճակներում», Հոդված 52, 2017թ., էջ 43:

կայացնել պաշտպանության հետագա կարիքի վերաբերյալ: Այս ընթացքում համակարգի այլ հաստատությունները պետք է ներգրավվեն և օգնություն և աջակցություն ցուցաբերեն տուժողին:

ԱՄՈ-ն պաշտպանության միջոց է և, հետևաբար, դրա կայացումը չպետք է պայմանավորված լինի իրավախախտման կատարմամբ, ոչ էլ կապված լինի քրեական պատասխանատվության ապացուցման հետ[347]: Ինչպես նշվում է Բացատրական զեկույցում, կոնվենցիայով պետությունները պարտավորեցվում են «ապահովել տուժողների՝ միջամտող կամ պաշտպանական որոշում ստանալու հնարավորությունը՝ անկախ նրանից, թե նրանք որոշում են ընթացք տալ իրավական այլ վարույթի, թե՝ ոչ»[348]: ԱՄՈ-ները կարող են կայացվել ոստիկանության, դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից: ԱՄՈ-ները կարող են նաև դասակարգվել՝ ըստ քաղաքացիական, քրեական կամ վարչական իրավունքի:

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով չի սահմանվում, թե որ կառույցը պետք է պատասխանատու լինի ԱՄՈ կայացնելու համար, թեև երկրներից մեծ մասում այն վերապահվում է ոստիկանությանը՝ հաշվի առնելով նրանց պաշտպանելու մանդատը և այն, որ նրանք գործում են շուրջօրյա (24/7) ռեժիմով: ԱՄՈ-ի կայացումը չպետք է պահանջի տուժողի կողմից դիմումի ներկայացում: ԱՄՈ-ն պետք է կայացվի՝ առանց տուժողի կողմից որևէ ծախս կրելու անհրաժեշտության:

Ոստիկանությունը արձագանքում է վտանգը կամ սպառնալիքի կրկնությունը կանխելու համար: Դա նշանակում է, որ բռնությունից տուժողի անմիջական պաշտպանության միջոցները ներառում են նոր բռնության հնարավորությունը կանխելու նպատակով անհետաձգելի միջամտության որոշումների արձակումը: Բռնարարի անմիջական վտանգից պաշտպանվելը՝ մոտենալու և շփվելու արգելքի տեսքով, նաև թույլ է տալիս տուժողին որոշումներ կայացնել իր կյանքի մասին՝ առանց հոգեբանական ճնշման նոր բռնության վտանգի հավանականության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ոստիկանության միջամտությունը, որը պետք է լինի արդյունավետ և ուժեղացնի տուժողին, կախված չէ նրա կամքից: Դա նշանակում է, որ ոստիկանությանը վերապահվում է ընտանեկան բռնություն կատարողին տուժողի բնակարանից հեռանալ կարգադրելու և վերադառնալ կամ տուժողի հետ շփվել արգելելու լիազորություն[349]:

Միևնույն ժամանակ, ոստիկանության արդյունավետ միջամտությունը հստակ ուղերձ է բռնարարին առ այն, որ պետությունը չի հանդուրժում իր բռնությունը և չի դիտում այն որպես մասնավոր վեճ կամ ընտանեկան խնդիր, որը կատարողն ու տուժողը ինքնուրույն կլուծեն, այլ մոտենում է մասնավոր կյանքում բռնի վարքագծին որպես հանցագործության լուրջ ձևի: Ըստ այդմ, պատասխանատվությունը կրում է բացառապես հանցավորը, որը և բախվում է դրա հետևանքների հետ:

Ոստիկանության միջամտությունը չպետք է խորհրդատվական և հաշտեցնող օգնության տեսք ունենա, այլ կենտրոնանա բռնարարի պատասխանատվության վրա: Միջամտությունը, որի արդյունքում բռնարարը հեռացվում է տնից, հստակ ուղերձ է պարունակում, որ համայնքն անհանդուրժող է ընտանեկան բռնության նկատմամբ, որ ունի տուժողին պաշտպանելու մեխանիզմներ և կամք: Միևնույն ժամանակ, բռնարարին հեռացնելու միջամտության անհարմարությունն ու ոստիկանության ճնշման ազդեցությունը կրում է ինքը բռնարարը: Տուժողին տնից հեռանալու և ժամանակավոր անվտանգ վայր տեղափոխվելու խորհուրդը որոշ դեպքերում անարդյունավետ է և հաճախ բռնության նոր ռիսկ է առաջացնում: Այն միայն հաստատում է բռնարարի գերիշխանությունը և պետության անզորությունն ու ընտանիքում տիրող բռնի միջավայրը վերացնելու դժկամությունը:

Ոստիկանության միջամտությունը, որը չի ազդում խնդրի էության վրա, իսկ ընտանեկան բռնության դեպքում՝ բռնությունը չի ձգտում կարգավորել, նպաստում է, որ այն առատավոր շրջանակը,

---

347 Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, CETS 210, 2011, պարբերություն 265:

348 Տե՛ս նույն տեղում, պարբերություն 273:

349 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, 11.V.2011, պարբերություն 264.

որտեղ հայտնվել է տուժողը, չընդատվի[350]: Ոստիկանության կողմից տուժողին չպաշտպանելու դեպքում ուղերձը, որը ստանում է բռնարարը, այն է, որ իշխանությունները և ոստիկանությունը հանդուրժում են բռնությունը, հետևաբար տուժողը կորցնում է վստահությունը ոստիկանության նկատմամբ և չի ահազանգում բռնության մասին: Ապաստարանում կամ այլ վայրում անորոշ ժամկետով հապճեպ անվտանգություն փնտրելու պարտականությունը տուժողի վրա դնելու փոխարեն, որը հաճախ խնամքի տակ ունի երեխաներ և որի անձնական կապերը, որպես կանոն, շատ քիչ են, կարևոր է տնից հեռացնել կատարողի, որպեսզի տուժողը մնա տանը[351]:

Ինչպես ԿՆԽՎԿ կոմիտեն վճռել է Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի գործով՝ «Կանանց կյանքի և ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ չեն կարող գերակայել այլ իրավունքներ, այդ թվում՝ սեփականության իրավունքը և անձնական անձեռնմխելիության իրավունքը»[352]: Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի գործով ԿՆԽՎԿ կոմիտեն նաև գտել է, որ բազմիցս տուժողին սպանել սպառնացող բռնություն գործադրած անձին չկալանավորելու մասին դատախազի որոշումն այն պատճառով, որ այդ պահին այն «չափազանց միջամտող» է թվացել, խախտել է պետության պատշաճ զգուշավորության իրավունքները: [353]

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 53-րդ հոդվածը[354] սահմանում է **սահմանափակող կամ պաշտպանական որոշումները:** Այս դրույթը սահմանում է պարտավորությունը երաշխավորելու, որ ներպետական օրենսդրությունը նախատեսում է բռնության բոլոր ձևերի տուժողների պաշտպանության համար սահմանափակող կամ պաշտպանական որոշումների կայացում: Այն նաև սահմանում է մի շարք չափորոշիչներ նման որոշումների համար՝ ապահովելու, որ դրանք ծառայեն բռնության հետագա գործողություններից պաշտպանության նպատակին: Սահմանափակող կամ կամ պաշտպանական որոշումը կարող է համարվել, որպես կարճաժամկետ անհետաձգելի միջամտության որոշմանը լրացնող: Դրա նպատակն է տրամադրել արագ իրավական պաշտպանության միջոց բռնության ցանկացած ձևի ռիսկի ենթակա անձանց պաշտպանելու համար՝ արգելելով, սահմանափակելով կատարողի վարքագիծը կամ վերջինիս համար որոշակի վարքագիծ սահմանելով[355]:

350 Միրցևան, Ս., Ցացևա, Վ. 2013թ.:

351 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, պարբերություն 264. https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800d383a

352 Հաղորդագրություն թիվ 2/2003, CEDAW/C/36/D/2/2003, 9.3 պարբերություն:

353 Հաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, 12.1.5 պարբերություն:

354 Նույն տեղում:

355 Տե՛ս նույն տեղում, պարբերություն 268, 269.

Ներդիր 14. Այլ երկրների պրակտիկայի օրինակներ

ԱՎՍՏՐԻԱ[356]

Ավստրիան Եվրոպայում առաջին երկիրն էր, որը 1997 թվականին ներդրեց ԱՄՈ-ն: Այն որդեգրեց գենդերային չեզոք մոտեցում՝ ապահովելու համար, որ ԱՄՈ հնարավոր լինի արձակել բռնության անմիջական վտանգի ենթարկված յուրաքանչյուր անձի՝ տղամարդկանց և կանանց համար: Միևնույն ժամանակ, ըստ բազմաթիվ տեղեկությունների, գենդերազգայուն մոտեցումը որդեգրված է օրենքի կիրառման մեջ, քանի որ տուժողներտ հիմնականում կանայք են: Օրենքը կարգավորում է նաև միասեռ հարաբերությունները: «Բռնությունից պաշտպանության մասին» Ավստրիայի օրենքով նախատեսվում է, որ անհետաձգելի միջամտության և սահմանափակման որոշումներ կարող են արձակել ֆիզիկական հարձակման, ֆիզիկական հարձակման սպառնալիքի կամ ցանկացած այլ վարքի դեպքում, որը «լրջորեն խաթարում է մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը»[357]: Անձի կյանքին, առողջությանը կամ ազատությանը վնաս սպառնալու դեպքում ոստիկանությունը պետք է իրականացնի բռնարարի վտարում և այդ առումով հայեցողությանը տեղ չի տրվում: Դա տարածվում է ներկա և նախկին ամուսինների և գործընկերների, ինչպես նաև ընտանիքի անդամների վրա՝ անկախ նրանց համատեղ կյանքի հանգամանքից:

Ոստիկանությունը Ավստրիայում ԱՄՈ-ները կիրառում է որպես վարչական միջոց: Դրանց գործողության ժամկետը 14-օր է[358]: Հատկանշական է, որ արգելող որոշման ժամկետը ֆիքսված է և կախված չէ ոստիկանության աշխատակցի հայեցողությունից: ԱՄՈ-ներն ի պաշտոնե արձակվում են անմիջական ռիսկի սուր փուլում: Այս քաղաքականությունը նպատակ ունի տուժողին ազատել որոշմանը համաձայնություն տալու բեռից: Որպես կանխարգելիչ միջոց, ԱՄՈ-ն արձակվում է այն դեպքում, երբ փաստերը վկայում են մարդու կյանքի, առողջության կամ ազատության համար անմիջական վտանգի մասին:

356 Ընտանեկան բռնությանը արձագանքելու լավագույն պրակտիկա. Համեմատական ուսումնասիրություն, Սարաևո 2019թ. https://www.16dana.ba/wp-content/uploads/2019/11/4.-Good-practices_ENG_final.pdf

357 Բռնության պաշտպանության մասին օրենքի հոդված I, 1-ին և 2-րդ պարբերություններ:

358 Ի սկզբանե ԱՄՈ-ն արձակվում էր յոթ օր ժամկետով, հետագայում օրենքը փոխվել է՝ երկարաձգելով ժամկետը մինչև 10 օր: Այնուհետև այդ ժամկետը կրկին վերանայվեց և կրկին սահմանվեց նախկին 14 օրյա ժամկետը:

Ավստրիայում ԱՄՈ-ի արձակումն ամբողջովին առանձնացված է քրեական քննության գործընթացից: Արդյունքում, ԱՄՈ-ն կարող է արձակվել նույնիսկ հանցագործության հիմնավոր ապացույցի բացակայության դեպքում: Սակայն, բռնարարքի տեղի ունենալու դեպքում ոստիկանությունը պարտավոր է այդ մասին պաշտոնական հաղորդում ներկայացնել, քանի որ Ավստրիայի քրեական օրենսգրքի համաձայն ֆիզիկական վնասվածքների հետ կապված բոլոր դեպքերը ենթակա են քրեական հետապնդման:

Ավստրիայում ԱՄՈ կարող է կիրառվել տուժողի բնակարանի կամ ապաստարանի և հարակից տարածքների նկատմամբ: Այն ներառում է նաև դպրոցները և երեխաների խնամքի հաստատությունները, եթե վտանգված են երեխաները: Այն չի նախատեսում ընդհանուր արգելքներ կամ տուժողի պաշտպանություն՝ իր աշխատավայրում:

Ոստիկանության ԱՄՈ-ի տևողությունը կարող է երկարացվել երկուից չորս շաբաթով, իսկ եթե տուժողը դիմի քաղաքացիական իրավունքի պաշտպանության որոշման համար, դա կարող է տևել մինչև 12 ամիս[359]: Քաղաքացիական դատարանները չորս շաբաթվա ընթացքում որոշում են կայացնում տուժողի դիմումի վերաբերյալ, որպեսզի պաշտպանության գործընթացն ընթանա առանց ընդհատումների: Ավելի երկարաժամկետ քաղաքացիական պաշտպանության մասին որոշումը հնարավորություն է տալիս շփումների ընդհանուր արգելք սահմանել, եթե դա չի հակասում իրավախախտի «հիմնարար շահերին»[360]: Ինչպես նշվեց, տուժողը կարող է միջնորդություն ներկայացնել՝ երկարացնելու քաղաքացիական իրավունքի պաշտպանության որոշումը ԱՄՈ-ներով նախատեսված երկշաբաթյա ժամկետից ավել, կամ նման որոշում կարող է կայացվել ԱՄՈ-ից անկախ: ԱՄՈ-ների և քաղաքացիական պաշտպանության որոշումների համար վճար չի գանձվում[361]: Քաղաքացիական պաշտպանության որոշումները կարող են երկարացվել մինչև դրանց հետ կապված ցանկացած վարույթի, ներառյալ ամուսնալուծության, ավարտը: Քաղաքացիական պաշտպանության ավելի երկարաժամկետ որոշումների երկարաձգումը տուժողի հայեցողության տակ է՝ նպաստելով նրա ազատության իրավասությանը: Եթե տուժողն անչափահաս է, դիմումը նրա անունից կարող է ներկայացնել բռնություն չգործադրող ծնողը կամ Երիտասարդության բարօրության գրասենյակը: Պրոֆեսիոնալ ծառայություններ մատուցողների կողմից ոստիկանությանը բռնության մասին հաղորդելը պարտադիր է, ներառյալ մեծահասակների դեպքում:

Հատկապես լուրջ կամ կրկնվող դեպքերի համար կարող են անցկացվել միջգերատեսչական համաժողովներ: Ոստիկանությունը տուժողներին տրամադրում է փաստաթուղթ, որտեղ բացատրվում է ԱՄՈ-ի թողարկումից հետո երկու շաբաթվա ընթացքում դատական պաշտպանության որոշման համար դիմելու իրենց իրավունքը: Նրանք նաև ծանուցվում են, թե որտեղից կարող են օգնություն հայցել: Ոստիկանությունը 24 ժամվա ընթացքում տեղեկացնում է շրջանային միջամտության կենտրոնին կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության և հետամտման հետ կապված բոլոր դեպքերի մասին: Ոստիկանությունը նաև ԱՄՈ-ի վերաբերյալ զեկույց է ներկայացնում ընտանեկան/քաղաքացիական դատարան և հանձնում բռնարարից բռնագրավված բնակարանի բոլոր բանալիները: Դատարանն, իր հերթին, տեղեկացնում է ոստիկանությանը քաղաքացիական պաշտպանության որոշման արձակման մասին, հաշվի առնելով ոստիկանության դերը որոշման հարկադիր կատարման հարցում: Ոստիկանությունից պահանջվում է նաև տեղեկացնել Երիտասարդության բարօրության գրասենյակին՝ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին:

ԱՄՈ-ն 48 ժամվա ընթացքում դիտարկվում է վարչական, իրավական ծառայության կողմից: Համատեղ բնակությունից զրկված իրավախախտներն իրավունք ունեն իրենց հետ վերցնել անձնական իրերը: Նրանց տրվում է տեղեկանք իրենց իրավունքների մասին: Այն ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- արգելող որոշման բովանդակությունը՝ արգելված տարածքի սահմանների նշմամբ.
- պատժամիջոցները որոշման խախտման համար.
- շտապ կացարանի տարբերակները, եթե իրավախախտը մնալու այլ տեղ չունի.
- կոնտակտային տվյալներ՝ օգնություն խնդրելու համար.
- իրավախախտի կողմից հասցե չտրամադրելը, որտեղ իրեն հնարավոր կլինի հանձնել դատարանի որոշումը, և դրա չկատարման հետևանքները (ծանուցելը, որ նման դեպքում դատական կարգադրությունն ուժի մեջ կմտնի առանց նրան ծանուցման):

---

359 Շրջանային միջամտության կենտրոնները օգնություն են ցուցաբերում տուժողներին՝ քաղաքացիական իրավունքի պաշտպանության որոշման համար դիմելու հարցում (շրջանային միջամտության կենտրոնները ավելի մանրամասն դիտարկվում են ստորև):

360 GREVIO, Եվրոպայի Խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 68-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Ավստրիայի կողմից ներկայացված հաշվետվություն (Ելակետային գնահատման զեկույց. Ավստրիա), 2016թ., պարբերություն 172, (ուշագրավ է, որ իրավախախտի «հիմնարար շահերը» չեն սահմանված):

361 Ավստրիայի օրենսդրությունը նախատեսում է նաև քրեական պաշտպանության որոշումներ, որոնք հազվադեպ են վկայակոչվում: Քրեական պաշտպանության հրամանները չեն կարող անմիջապես կիրարկվել, քանի որ չկան արագացված ռեժիմով գործող դատարաններ:

Իրավախախտներն իրավունք ունեն բողոքարկել որոշումը վարչական կարգով՝ ընդ որում բողոքարկումը չունի կասեցնող ուժի: Տուժողները որոշումը բողոքարկել չեն կարող և իրավախախտի բողոքի կողմ չեն հանդիսանում:

ԱՄՈ-ները ներառում են ընտանեկան տանն ապրող մինչև 14 տարեկան երեխաներին, որոնց իրավախախտը չի կարող այցելել, անկախ այն բանից, թե նրանք անմիջականորեն տուժել են բռնությունից թե ոչ: Ոստիկանությունը պարտավոր է ակտիվորեն վերահսկել ԱՄՈ-ի պահանջների կատարումը՝ մասնավորապես առաջին երեք օրվա ընթացքում, ստուգելով, որ իրավախախտը չի վերադարձել տուժողի բնակարան: ԱՄՈ-ի խախտումները հանգեցնում են մինչև 500 եվրո վարչական տուգանքի: Կրկնվող խախտումների դեպքում իրավախախտը կարող է ձերբակալվել:

Քաղաքացիներն իրավունք ունեն անկախ մարմնին կամ դատարան բողոք ներկայացնել ոստիկանական միջոցառումների վերաբերյալ: Ոստիկանությունն ունի ընտանեկան բռնության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ, ինչպես նաև ղեկավարության մակարդակով նման ստորաբաժանումներ՝ ոստիկանության անձնակազմի աշխատանքը վերահսկելու և գնահատելու համար[362]:

ԻՍՊԱՆԻԱ

Իսպանիան սահմանել է աշխարհում առավել առաջադեմ նորմատիվ դաշտերից մեկը՝ գենդերային հիմքով բռնության դեմ միջոցներ ձեռնարկելու համար: 2004 թվականին Իսպանիան սահմանեց համապարփակ, գենդերային խնդիրներով պայմանավորված իրավական դաշտ՝ զուգընկերոջ կողմից բռնությանն անդրադառնալու համար,[363], որը հանգեցրեց, ի թիվս այլոց, գենդերային հիմքով բռնության հարցում մասնագիտացված

դատարանների ստեղծմանը: Այդ մասնագիտացված դատարանները գտնվում են Իսպանիայի բոլոր շրջաններում, գործում են շուրջօրյա (24/7) ռեժիմով և դատավորին հնարավորություն են տալիս նշանակելու պաշտպանության միջոցների լայն շրջանակ՝ քրեաիրավական մասով, քաղաքացիաիրավական (այդ թվում՝ ընտանեկան իրավունքի) մասով և սոցիալական պաշտպանության մասով: Պաշտպանության միջոցներ տրամադրելու համար դիմումները ներկայացվում են ոստիկանության և դատախազության մարմինների կողմից՝ ի պաշտոնե: Դրանք ինքնաբերաբար տրամադրվում են գենդերային հիմքով քրեական իրավախախտում հանդիսացող բռնության համար դատապարտում ներառող գործերով: Որոշման կայացումը գտնվում է բացառապես հատուկ դատարանի դատավորի իրավասության շրջանակներում, որը կարող է նաև որոշում կայացնել sua sponte, այսինքն՝իր սեփական նախաձեռնությամբ՝ առանց պահանջ ներկայացվելու:

Տուժողները, տուժողների ընտանիքի անդամները, ոստիկանությունը, սոցիալական օժանդակություն տրամադրող կազմակերպությունները (հանրային և մասնավոր) և դատախազության մասնագիտացված դատախազները բոլորն էլ կարող են պահանջել պաշտպանական որոշում[364]: Սոցիալական ապահովության, առողջապահության և այլ ոլորտների մասնագետներն ունեն ոստիկանությանը կամ դատախազության մարմիններին բռնության դեպքերի մասին հաղորդելու պարտադիր պարտականություն:

---

362 Թեև Ավստրիայի ԱՄՈ-ների արձակման համակարգը Եվրոպայում համարվում է օրինակելի, այն բախվում է մի քանի խնդիրների հետ: Վայրերի, այլ ոչ թե տուժողների հետ կապված պաշտպանությունը խնդիրների բարձր հավանականություն է առաջացնում, որի պատճառով Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ գործողությունների փորձագետների խումբը (GREVIO) նշել է, որ նախընտրելի են տուժողի և բռնություն գործադրած անձի միջև շփումն արգելող որոշումները: Բացի այդ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումները հոգեբանական բռնության դեպքում որպես կանոն չեն արձակվում՝ ապացուցելու հետ կապված խնդիրների պատճառով (Ելակետային գնահատման զեկույց. Ավստրիա, 2017թ., պարբերություն 174): GREVIO-ն նաև նշել է, որ չնայած «պաշտպանական որոշումների բարձրակարգ համակարգը» ապահովում է կանանց անվտանգությունը, այն «քողարկում է ընտանեկան բռնության դեպքերին արդյունավետ քրեական արդարադատության արձագանքի բացակայությունը» (Ելակետային գնահատման զեկույց. Ավստրիա, 2017թ., պարբերություն 7): Քրեականացումը թույլ կտա ոստիկանությանը ավելի արագ միջամտել, չնայած դրան հաջորդող ձերբակալությունը և բանտարկությունը (և հնարավոր հասարակության պարսավանքը) կարող է խոչընդոտել տուժողի կողմից խախտման մասին հաղորդելը: Ոստիկանության, միջամտության կենտրոնների, ընտանեկան/քաղաքացիական դատարանների և Երիտասարդության բարօրության գրասենյակի միջև լավ համագործակցության հետ մեկտեղ կարելի է բարելավել նաև առողջապահության և քրեական արդարադատության ոլորտների հետ համագործակցությունը: Ծառայություններ մատուցողների կողմից պարտադիր հաշվետվությունը հակասում է միջազգային չափանիշներին: Ինչ վերաբերում է բռնության համար քաղաքացիական տույժերին, ապա տուգանքներ նշանակել խորհուրդ չի տրվում, քանի որ դրանք սովորաբար վճարվում են ընտանեկան բյուջեից, այդպիսով պատժելով նաև տուժողին և ընտանիքի մյուս անդամներին: Վարչական տուգանքները ուժեղ կանխարգելիչ ազդեցություն չունեն, մանավանդ, որ դրանք կիրառվում են խախտումը տեղի ունենալուց շատ ժամանակ անց (Ավստրիական ՀԿ-ի ստվերային հաշվետվություն GREVIO- ին, 2016, էջ 82):

363 «Գենդերային հիմքով բռնության դեմ ուղղված պաշտպանության համապարփակ միջոցների մասին» թիվ 1/2004 օրենք: 1-ին հոդվածում նշվում է, որ՝ «Սույն Օրենքի նպատակն է՝ գործել բռնության դեմ, որը, որպես խտրականության, անհավասարության իրավիճակի, կանանց նկատմամբ տղամարդկանց իշխանության հետ կապված հարաբերությունների դրսևորում, կատարվում է նրանց դեմ իրենց ամուսինների կամ նախկին ամուսինների կամ նրանց կողմից, ովքեր նրանց զուգընկերներն են կամ եղել են զուգընկերները՝ նմանատիպ զգայական հարաբերության միջոցով՝ նույնիսկ եթե նրանք միասին չեն ապրել»: Ընտանեկան բռնության բոլոր ձևերը 1989 թվականին քրեականացվել են Քրեական օրենսգրքով:

364 Գործնականում, գործերի ամենաբարձր տոկոսի՝ 72.9%-ի մասին հաղորդում են հենց տուժողները. 13.8%-ը հարուցվում է ոստիկանության կողմից: Բողոքների ամենացածր տոկոսը (2%) հարուցվում է առողջապահության ոլորտի մասնագետների

Պաշտպանական որոշումները [365] պետք է կայացվեն պահանջ ներկայացվելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում: Դատավորը 72 ժամվա ընթացքում կողմերին կանչում է դատախազի մասնակցությամբ լսման: Որպես տուժողներին դատարանում տրամադրվող պաշտպանության միջոց՝ լսումները բռնություն գործադրած անձի և տուժողի (տուժողների) հետ անցկացվում են առանձին: Տուժած երեխաներին նույնպես լսում են առանձին[366]:

Թեև բռնություն գործադրած անձը պետք է ներկա լինի պաշտպանական որոշման վերաբերյալ լսմանը, վարույթը կարող է իրականացվել նրա բացակայությամբ, եթե նրան չեն կարողանում գտնել[367]: Եթե բռնություն գործադրած անձը չի ներկայանում, դատավորը ծանուցագիրը կարող է վերածել ձերբակալության մասին որոշման: Տուժողին սպառնացող

անմիջական վտանգի հետ կապված իրավիճակներում ոստիկանությունը պարտավոր է ձերբակալել բռնություն գործադրած անձին և նրան պահել արգելանքի տակ՝ մինչև որոշման կայացումը (72-ժամյա ժամկետում):

Ի հակադրություն Ավստրիայի գենդերային հարցերով չեզոք դաշտի՝ որոշումները կայացվում են կանանց պաշտպանելու համար զուգընկերների, այսինքն՝ ամուսինների, նախկին ամուսինների կամ այն տղամարդկանց կողմից բռնությունից, որոնց հետ նրանք ունեցել են զգայական հարաբերություններ՝ անկախ համատեղ բնակվել-չբնակվելուց: Օրենքը չի ներառում միասեռ հարաբերություններում տեղի ունեցող սեռական զուգընկերոջ բռնությունը: Պաշտպանական որոշումներն արձակվում են՝ առանց տուժողի կամ բռնություն գործադրած անձի կողմից որևէ ծախս կրելու անհրաժեշտության: Օրենքով սահմանվում է պաշտպանական որոշումների երկու տեսակ՝ քրեական գործերով և քաղաքացիական գործերով:

Քրեական վարույթներին առնչվող պաշտպանական որոշումները կարող են ներառել՝

- բանտ.
- սահմանափակող կարգադրություններ.
- հաղորդակցվելու արգելք.
- դեպքի վայր կամ տուժողի բնակարան վերադառնալու արգելք.
- զենքի կամ այլ վտանգավոր իրերի առգրավում[368]:

Քաղաքացիական գործերով պաշտպանական որոշումներով նախատեսվում է՝

- բնակարանի օգտագործման և դրանից օգտվելու թույլտվության տրամադրում.
- երեխաների խնամակալության, տեսակցությունների և նրանց հետ հաղորդակցության մասով սահմանափակումներ.
- ապրուստը հոգալու միջոցների տրամադրում[369].
- երեխայի պաշտպանության միջոցներ՝ ուղղված վտանգից կամ վնասվածքից խուսափելուն[370].

Այդպիսով, պաշտպանական որոշումները կարող են, ի թիվս այլ որոշումների, ներառել շփման ընդհանուր արգելքը, բռնություն գործադրած անձի մուտքը տուժողի տուն արգելելը, բռնություն գործադրած անձին կանխարգելիչ նպատակներով արգելանքի տակ պահելը, տուժողին երեխաների նախնական խնամակալություն շնորհելը, ենթադրյալ բռնություն գործադրած անձի ծնողական իրավունքները, խնամակալության, հոգաբարձության և տեսակցության իրավունքները կասեցնելը և ապրուստի համար վճարներ կատարել կարգադրելը՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար: Ընդհանուր առմամբ, քրեական գործերով միջոցները կիրառվում են ավելի հաճախ, քան քաղաքացիական գործերով միջոցները:

կողմից:

365 Հուլիսի 31-ի թիվ 27/2003 օրենք:

366 Իսպանիայի քրեական դատավարության օրենսգիրք, 544 հոդվածի 4-րդ մաս: Քրեական դատավարության օրենսգրքով որպես դատարանում տրամադրվող պաշտպանության միջոց նախատեսվում է նաև խմբային տեսակոնֆերանս:

367 Անձի բացակայությամբ պաշտպանական որոշում արձակելու համար պետք է բավարարել երեք պայման՝ ա) հարցի հրատապությունն արդարացված է. բ) ենթադրյալ բռնություն գործադրած անձը կարող է որոշումը վիճարկել կամ բողոքարկել, հետագա լսմանը. և գ) հետագա լսումն անցկացվում է կարճ ժամանակ անց:

368 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 6-րդ մաս:

369 Այն դեպքերում, երբ պնդում են, որ գործադրվել է գենդերային հիմքով բռնություն, և արձակվել է երեխայի ապրուստը հոգալու մասին որոշում, սակայն վճարումներ չեն կատարվել, կառավարությունը նպաստների վճարումը երաշխավորում է սոցիալական նպաստների երաշխիքային ֆոնդից: Թիվ 1/2004 օրգանական օրենք, 19-րդ հոդված:

370 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 7-րդ մաս:

Որոշման աշխարհագրական շրջանակը մնում է դատավորի հայեցողությանը և, ի հակադրություն Ավստրիայի, կարող է ներառել տուժողի աշխատավայրը[371]: Առաջարկվում է առնվազն 500 մետր հեռավորություն պահելու արգելք՝ ոստիկանության արագ արձագանքին նպաստելու, ինչպես նաև կողմերի միջև տեսողական շփումից խուսափելու նպատակով: Էլեկտրոնային հսկողությունը բռնության մասին անհապաղ ծանուցելու հնարավորություն է տալիս և հաճախ է օգտագործվում բռնություն գործադրած այն անձանց դեպքում, որոնք որոշում են խախտել: Իսպանիայում պաշտպանական որոշումների խախտումները համարվում են քրեական իրավախախտում: Կարևոր է, որ Քրեական օրենսգրքով պատժվում է պաշտպանական որոշման խախտումն ոտնձգողի, այլ ոչ տուժողի կողմից[372]:

Միևնույն ժամանակ, դատավորը կարող է ձեռնարկել նոր միջոցներ, որոնցով ոտնձգողի նկատմամբ կիրառվում են ավելի շատ սահմանափակումներ: Պաշտպանական նախկին որոշումները հաշվի են առնվում բոլոր համապատասխան քրեական կամ քաղաքացիական

վարույթներում[373]: Պաշտպանության ժամանակավոր միջոցներն ուժի մեջ են մնում մինչև 30 օր, մինչև դատավորը կայացնում է որոշումը հաստատելու, փոփոխելու կամ վերացնելու մասին վերջնական որոշում[374]: Պաշտպանական որոշումները կարող են պահպանվել գործով վերջնական դատական ակտ կայացվելուց հետո և որևէ բողոք ներկայացնելու գործընթացի ընթացքում [375].

Քրեական գործերով պաշտպանության միջոցները կարող են տևել մինչև հինգ տարի՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, տասը տարի՝ ծանր հանցագործությունների դեպքում և վեց ամիս՝ ոչ մեծ ծանրության իրավախախտումների դեպքում:

Տեղական հաստատություններում և սոցիալական ծառայություններ տրամադրող գրասենյակներում, ոստիկանության բաժիններում, հատուկ դատարաններում և հասարակական կազմակերպություններում հասանելի է դիմումի պարզեցված օրինակելի ձև: Այն հասանելի է իսպաներենով և Իսպանիայի այլ պետական լեզուներով (բասկերենով, կատալոներենով և այլն), անգլերենով և ֆրանսերենով: Ինչպես նշվել է վերը, Իսպանիան թույլատրում է երրորդ կողմի ներկայացրած սահմանափակ դիմումներ (տուժողի ընտանիքի կողմից), որոնք, ոստիկանությունից կամ մասնագիտացված դատարանից բացի, կարող են ներկայացվել սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ կամ կառավարման մարմիններ՝ խթանելով ընթացակարգի մատչելիությունը: Ինչպես նշվել է վերը, օրենքով պահանջվում է, որ բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկություններ ունեցող՝ սոցիալական պաշտպանություն տրամադրող գերատեսչությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները դրանց մասին հաղորդեն ոստիկանությանը կամ մասնագիտացված դատարանին, որն այնուհետև պարտավորվում է ի պաշտոնե կայացնել պաշտպանական որոշում:

Տուժողն ունի դատարանի կողմից լսվելու իրավունք, որը կաշկանդված չէ նրա պահանջներով: Յուրաքանչյուր տարի մերժվում է տուժողների՝ պաշտպանական որոշում ստանալու դիմումների զգալի տոկոսը (մոտավորապես 30%): Բռնություն գործադրած անձինք ունեն որոշումը բողոքարկելու իրավունք և դատարանի կողմից հարցի վերաբերյալ լսվելու իրավունք: Բողոքարկումը չունի կասեցնող ուժ[376].

Տուժողին պաշտպանական որոշման արձակման և այն պայմանների մասին, որոնք դրանով սահմանվում են, ծանուցում է դատավորը, որը նաև ծանուցում է բռնություն գործադրած անձին և համապատասխան կատարող մարմնին:[377]. Ծանուցումը, որոշում արձակվելուց հետո 24 ժամվա ընթացքում, փոխանցվում է էլեկտրոնային եղանակով, ֆաքսով կամ էքսպրես նամակով: Անվտանգության մարմիններից բացի՝ ծանուցվում են նաև սոցիալական աջակցություն տրամադրող, իրավաբանական, առողջապահության և հոգեբանական օժանդակություն տրամադրող մարմինները՝ կախված կոնկրետ գործով տուժողների կարիքներից: Այդպիսով, ստեղծվել է վարչական համակարգման համապարփակ համակարգ՝ այդ հաղորդակցությունները խթանելու նպատակով: (միջգերատեսչական համակարգումն ավելի մանրամասն նկարագրված է ստորև):

---

371 Ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնությունից տուժած անձանց պաշտպանությանն ուղղված՝ անվտանգության ուժերի և դատական մարմինների գործողությունների և դրանց համակարգման արձանագրություն [Protocolo de Actuación de las Fuerzas y Cuerpos de Seguridad y de Coordinación con los Órganos Judiciales para la protección de las víctimas de violencia doméstica y de género]:

372 Իսպանիայի քրեական օրենսգրքի 468-րդ հոդվածով պաշտպանական որոշման խախտումը քրեականացվում և պատժվում է 6 ամսից մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ: Կոնկրետ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով օրենքով նախատեսվում է ազատազրկում՝ 3 ամսից մինչև մեկ տարի ժամկետով կամ ուղղիչ աշխատանքներ՝ 90-ից մինչև 180 օր ժամկետով: Խախտման համար պատժամիջոցը որոշելիս տուժողի համաձայնությունն էական չէ:

373 Թիվ 1/2004 օրգանական օրենք, 61-րդ հոդված:

374 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 7-րդ մաս: Տուժողի պահանջով պաշտպանության ժամանակավոր միջոցների ժամկետը կարող է երկարաձգվել:

375 «Գենդերային հիմքով բռնության դեմ ուղղված պաշտպանության համապարփակ միջոցների մասին» թիվ 1/2004 օրգանական օրենք, 69-րդ հոդված (այդպիսի երկարաձգված ժամկետով միջոցները պետք է վճռում հստակ սահմանվեն):

376 Գենդերային հիմքով բռնության դեմ ուղղված պաշտպանության համապարփակ միջոցների մասին» թիվ 1/2004 օրգանական օրենք, 44-րդ հոդված:

377 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 1-ին հոդվածի 8-րդ մաս:

Տուժողի՝ համապարփակ աջակցություն[378] (հոգեբանական-սոցիալական օժանդակություն, իրավաբանական աջակցություն ու ներկայացուցչություն և վկաներին տրամադրվող փորձագիտական օժանդակություն, ֆինանսական օգնություն[379], կրթական և մասնագիտական հմտությունների մասով վերապատրաստումներ և կացարան) ստանալը պայմանավորված է իր կողմից բռնության մասին իշխանություններին հաղորդում ներկայացնելուց[380]: Դատարանն է, որ համապատասխան ծառայություն տրամադրողներին տեղեկացնում է պաշտպանական որոշման և տուժողի՝ այդ ծառայություններին մատչելիության իրավունքի մասին: Զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված անձանց առաջարկվող ծառայությունները համապատասխանում են սեռական բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայություններին՝ Ստամբուլի կոնվենցիայով սահմանված չափանիշներին համապատասխան[381].

Պաշտպանական որոշումն արձանագրվում է Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության կենտրոնական գրանցամատյանում, որը կառավարում է Արդարադատության նախարարությունը: Այն հասանելի է ընտանիքի և քրեական դատարաններին, դատախազությանը, ոստիկանությանը, կառավարության պատվիրակություններին և ենթապատվիրակություններին ու ինքնավար համայնքներին՝ կապի ապահովման համար ստեղծված կենտրոնների միջոցով՝ պետության ամբողջ տարածքում և՛ ժամանակավոր, և՛ վերջնական որոշումների արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով[382]: Կենտրոնական գրանցամատյանն օգտագործվում է նաև մոնիթորինգի նպատակներով:

Ստեղծվել է Պաշտպանական որոշումները կարգավորող օրենքի կիրառման մոնիթորինգի Կոմիտե, [383] որը պատրաստել է բազմաթիվ արձանագրություններ՝ պաշտպանական որոշումների կատարումը, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության մեխանիզմներն ուղղորդելու և դիմումի ձևը սահմանելու համար:

Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության իրականացման վերաբերյալ արձանագրությամբ սահմանվում են դատական իշխանության, իրավապահ և կառավարման այլ մարմինների միջև համակարգման չափանիշներն՝ անվտանգության, իրավական, հոգեբանության, առողջապահության և սոցիալական ոլորտներում՝ կախված տուժողի պահանջից:

Անվտանգության ուժերի գործողությունների, այդ թվում՝ դատական մարմինների հետ համաձայնեցման արձանագրությամբ կարգավորվում են ոստիկանության և դատական մարմինների միջև հաղորդակցությունը և համակարգումը՝ տուժողների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար: Արձանագրությամբ ոստիկանությունից պահանջվում է միջամտել այնպիսի փաստերի մասին տեղեկանալու դեպքում, որոնք կարող են համարվել ընտանեկան բռնություն: Դրանով պահանջվում է, որ այն՝

տուժողին տեղեկացնի իրավաբանական օժանդակություն ստանալու իր իրավունքի մասին՝ Արձանագրության 1-ին հավելվածին համապատասխան.

անմիջապես և սպառիչ կերպով ցուցմունք վերցնի տուժողից, իսկ համապատասխան դեպքերում՝ վկաներից.

---

378 Դեկտեմբերի 28-ի թիվ 1/2004 օրգանական օրենք, 19-րդ հոդվածի 2-րդ մաս:

379 «Անվճար իրավաբանական օգնության մասին» թիվ 1/1996 օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով՝տուժողներն ազատվում են իրավաբանական վճարներ վճարելուց, եթե նրանք այլ կերպ ենթակա չեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու: Հրատապ հարցերով նրանց կարելի է ի սկզբանե անվճար աջակցել և եթե նրանք ենթակա չեն անվճար աջակցության, ապա նրանք պետք է հետագայում վճարեն փաստաբանի ծառայությունների համար վճարները: Ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության տուժողների պաշտպանությանն ուղղված՝ անվտանգության ուժերի և դատական մարմինների գործողությունների և դրանց համակարգման արձանագրությամբ փաստաբանների միավորումներից պահանջվում է սահմանել կանչով հերթափոխային ծառայություն՝ապահովելու համար, որ իրավաբանները հասանելի լինեն շուրջօրյա (24/7) ռեժիմով՝ ներկայացված լինելու հրատապ անհրաժեշտության դեպքում:

380 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 5-րդ մաս: Իսպանիայում աջակցության պայմանական մատչելիությունը բանավեճի առարկա է եղել, և որոշ շրջաններում օրենքները փոփոխվել են՝ այդ իրավունքների մատչելիությունն ապահովելու համար՝ առանց քրեական վարույթի հարուցում պահանջելու:

381 «Բռնությամբ կատարվող հանցագործությունների և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններից տուժած անձանց տրամադրվող օգնության և աջակցության մասին» դեկտեմբերի 11-ի թիվ 35/1995 օրենք:

382 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 1-ին հոդվածի 10-րդ մաս: Թիվ 513/2005 թագավորական հրամանագրով ապահովվում է մատչելիություն ինքնավար համայնքների, կառավարության պատվիրակությունների և ենթապատվիրակությունների համար: Դատական իշխանության ընդհանուր խորհուրդը վարում է համակարգման համար ստեղծված կենտրոնների թարմացված ցանկ և Արդարադատության նախարարությանը, Զբաղվածության և սոցիալական հարցերի նախարարությանն ու Ներքին գործերի նախարարությանը, ինչպես նաև Դատախազությանը և Արդարադատության բարձրագույն դատարանին, Կենտրոնական ռեգիստրին և համապատասխան ինքնավար համայնքի՝ քննություն իրականացնող դատարաններին է տրամադրում ամբողջական տեղեկություններ՝ դրանց փոփոխություններով կամ թարմացումներով:

383 Մոնիթորինգի կոմիտեն ներառում է Դատական իշխանության ընդհանուր խորհրդի, Արդարադատության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ներքին գործերի նախարարության, արդարադատության բնագավառում իրավասություն ունեցող ինքնավար համայնքների, Դատախազության, Իրավաբանների ընդհանուր խորհրդի, Իրավաբանների ազգային ասոցիացիայի և Մունիցիպալիտետների և նահանգների դաշնության ներկայացուցիչների մասնակցությունը:

քրեական իրավախախտման հատկանիշներ լինելու դեպքում հարևաններից, ընտանիքի անդամներից, գործընկերներից, դասընկերներից, սոցիալական ծառայություններից, տուժողների խնամքի գրասենյակներից և այլն, հրատապ կերպով տեղեկություններ հավաքի կասկածյալի կողմից նախկինում վատ վերաբերմունքի առկայության, ինչպես նաև նրա անձի և հնարավոր կախվածությունների մասին.

ստուգի ոստիկանության կողմից նախկին միջամտությունների և (կամ) տուժողի կամ կասկածյալների հետ կապված բողոքների, վերջինիս ավելի վաղ դեպքերի և տուժողի այն հնարավոր վնասվածքների առկայությունը, որոնց մասին հաղորդել են բժշկական ծառայություններ մատուցող հաստատությունները.

ստուգի ներգրավված անձանց առնչությամբ դատական մարմիններիողմից նախկինում կարգադրված պաշտպանության միջոցների առկայությունը: Այդ նպատակով և բոլոր դեպքերում պետք է դիմել Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության կենտրոնական ռեգիստր:

Փաստերը և ռիսկերը գնահատելուց հետո կայացվում է տուժողի (տուժողների) և նրանց ազգականների կյանքի, ֆիզիկական անձեռնմխելիության և իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված կոնկրետ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին որոշում: Ծայրահեղ հրատապության դեպքերում ոստիկանությունը կարող է այդ առնչությամբ ձեռնարկել հետևյալ միջոցները՝

անձնական պաշտպանություն, որը, կախված ռիսկի մակարդակից, կարող է ներառել ոստիկանության կողմից մշտական պաշտպանություն՝ օրը 24 ժամ.

տեղեկություններ/վերապատրաստում ինքնապաշտպանության միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ.

ապահովում, որ տուժողը հստակ և մատչելի կերպով տեղեկացվի պաշտպանական որոշման բովանդակության, կատարման և հետևանքների, ինչպես նաև այն սոցիալական ծառայությունների, տուժողների խնամքի գրասենյակների և համակարգման համար ստեղծված կենտրոնների մասին, որոնք նա կարող է ունենալ իր տրամադրության տակ:

Գործողությունների արձանագրությամբ այնուհետև նախատեսվում է տուժողի (տուժողների) և անվտանգության համապատասխան մարմինների միջև մատչելի և շարունակական հաղորդակցություն, ինչպես նաև նրանց համար անհրաժեշտ բոլոր տվ յալների անմիջական հասանելիությունը՝ ռիսկը ցանկացած պահը գնահատելու համար: Այդ նպատակով և հնարավորության դեպքում՝

պաշտպանական որոշումների կատարումը կհանձնարարվի ընտանեկան բռնությունից տուժած անձանց աջակցության և պաշտպանության վերաբերյալ հատուկ վերապատրաստում անցած անձնակազմին.

տուժողի համար հասանելի կլինի ուղիղ և մշտական հեռախոսահամար՝ հանձնարարություն ստացած անձնակազմի հետ կապ հաստատելու նպատակով՝ անհատականացված ուշադրություն ստանալու համար.

տուժողը կօգտվի տեխնիկական այնպիսի մեխանիզմներից, որոնք հնարավոր են դարձնում անվտանգության համապատասխան ուժերի և մարմինների հետ արագ, սահուն և մշտական հաղորդակցությունը, երբ գործի և տուժողի հետ կապված հանգամանքներն այդպես են պահանջում:

Դրանով նաև կարգավորվում է այն, թե ինչպես են մոնիթորինգ իրականացնում պաշտպանական որոշումների նկատմամբ: Ոստիկանությունը և դատական մարմիններն ակտիվ մոնիթորինգ են իրականացնում պաշտպանական որոշումների նկատմամբ: Գործնականում, Ազգային ոստիկանությունում, Քաղաքացիական պահպանության ծառայությունում և Կատալոնիայի, Բասկերի երկրի և Նավառայի ինքնավար մարզերի ոստիկանությունում[384] գործող ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներն իրականացնում են պաշտպանական որոշումների արդյունավետության նկատմամբ մոնիթորինգ: Այնուամենայնիվ, այդ մասնագիտացված ստորաբաժանումները հասանելի են միայն մեծ քաղաքներում: Համակարգի բաղադրիչներից որևէ մեկի վրա ազդող ցանկացած դեպք, ինչպիսիք են ագրեսորի մուտքն արգելված գոտի կամ տուժողին և արգելվող գոտուն նրա մոտենալը՝ ազդանշանի կորստի ուղեկցությամբ, համարվում են լուրջ դեպքեր: Ոստիկանության պաշտպանության մեխանիզմն ակտիվանում է թևնոցը կոտրվելու, հանվելու կամ դրա Գլոբալ տեղորոշման համակարգից առանձնացվելու, ինչպես նաև մարտկոցը լիցքաթափվելու դեպքում: Տուժողին տեղեկացնում են ցանկացած դեպքի մասին, որը կարող է առաջանալ պաշտպանական որոշման վավերականության ընթացքում: Նա միշտ կարող է սեղմել «խուճապ» կոճակը, եթե կարծում է, որ ագրեսորն անօրինական է գործում: Այդ դեպքերում Հսկողության կենտրոնն անհապաղ կապ է հաստատում տուժողի հետ՝ իրավիճակը գնահատելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:[385]

384 Ինքնավար համայնքները ոստիկանությունը համակարգում են բոլոր մակարդակներում, այդ թվում՝ տեղական ոստիկանությունը փոքր քաղաքներում և գյուղերում:

385 Հսկողության կենտրոնները գործում են օրը 24 ժամ, տարին՝ 365 օր:

«Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության նպատակով քաղաքացիական և քրեական իրավազորության մարմինների միջև համակարգման մասին» արձանագրությամբ սահմանվում են երկու իրավազորությունների միջև արդյունավետ համակարգումը, որի նպատակն է՝

տուժողին տրամադրել պաշտպանության ամբողջական շրջանակ՝ կանխելով հակասող որոշումների առկայությունը.

ընտանեկան գործերով դատարաններին ապահովել ընտանեկան բռնությանն առնչվող հարցերով մինչդատական քննություն իրականացնող դատարանների կողմից ձեռնարկված գործողությունների մասին պատշաճ գիտելիքներով.

ընտանեկան գործերով դատարանին տալ պաշտպանական որոշման մեջ համաձայնեցված քաղաքացիական միջոցների վավերացման, փոփոխման կամ չեղարկման մասին օրինական ժամկետներում որոշում կայացնելու հնարավորություն[386]

5.3.2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի (Ընտանեկան բռնության մասին օրենք) 5-րդ հոդվածով նախատեսված է ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության երեք միջոց. i) նախազգուշացում, ii) անհետաձգելի միջմտության որոշում, և iii) պաշտպանական որոշում: Դրանով նախատեսվում է, որ այդ երեք միջոցներից մեկի կիրառումը չի խոչընդոտում քրեական գործ հարուցելը և քրեական հետապնդում իրականացնելը:

Համաձայն 6-րդ հոդվածի՝ նախազգուշացումները տրվում են ոստիկանության կողմից, եթե բռնության դեպքը 1-ին անգամ է հայտնաբերվել ոստիկանության կողմից, հանցակազմի առերևույթ հատկանիշներ և անհետաձգելի միջամտության կիրառման հիմքերն առկա չեն: Ինչպես արդեն նշվել է, այս ձևակերպումը հակասում է Ստամբուլի կոնվենցիայի պահանջին՝ այն է՝ պաշտպանական որոշում կիրառել՝ առանց հղում կատարելու արարքում հանցակազմի առկայությանը: Ի հակադրություն դրա՝ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման համար կատարվածում հանցակազմի առկայությունը պարզելու պահանջ առկա չէ[387]:

Ավելին, Ընտանեկան բռնության մասին օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ նախազգուշացում տալու որոշումը կարող է բողոքարկվել նախազգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Հաշվի առնելով, որ ոստիկանության որոշումները վար-

386 Չնայած չափազանց առաջադեմ նորմատիվային շրջանակին, գործնականում իսպանական համակարգը շարունակում է բախվել լուրջ խնդիրների: Իսպանիայում սոցիալական ծառայությունների և առողջապահական մասնագիտությունների վերաբերյալ պարտադիր հաշվետվության պահանջը հակասում է ՄԱԿ-ի հիմնական ծառայությունների փաթեթի ուղեցույցներին, որն արգելում է համակարգող գործակալությունների միջև առանձին դեպքերի պարտադիր հաշվետվությունը, բացառությամբ անմիջական վտանգի, տուժած երեխաների կամ ծայրահեղ աստիճան խոցելի տուժողների դեպքերի: (ՄԱԿ -ի հիմնական ծառայությունների փաթեթը բռնության ենթարկվող կանանց և աղջիկների համար, 5 -րդ մոդուլ, Համակարգման համակարգումը և կառավարումը, Գլուխ 3, Հիմնական գործողություն 1.2.): Ավելին, ծառայությունների հասանելիության պայմանավորումը և քրեական արդարադատության գործընթացին օգնություն տրամադրելը հակասում է միջազգային չափանիշներին: Մասնագիտացված դատարանների որոշ դատավորներ ըստ համապատասխան տեղեկությունների չունեն անհրաժեշտ գենդերային զգայունություն և մասնագիտացված ուսուցում: Դատարանները խիստ ձևականացված են, և բնորոշվում են տուժողների և դատական դերակատարների միջև հեռավորությամբ: Տուժողներին միշտ չէ, որ կարեկցանքով են վերաբերվում: Ի տարբերություն Ավստրիայի գործընթացի, նրանց այնքան մեծ հնարավորություններ չեն տրվում: Կանայք, ովքեր պաշտպանական որոշում են պահանջում, պարտավոր են հաստատել բռնության փաստը, և տրամադրված ապացույցները միշտ չէ, որ բավարար են համարվում, ներառյալ բժշկական վկայականների ներկայացումը: Այսպիսով, ապացույցների խնդիրների և սահմանափակ քննությունների պատճառով շարունակական բռնությունը ուղղակիորեն ճանաչվում է դեպքերի 5%-ից պակասում, գրեթե 60%-ի դեպքում գործը դիտվում է որպես բռնության առանձին մեկ դեպք: Գործերի մոտ 30%-ում բռնություն գործադրան անձինք արդարացվում են, առավել հաճախ՝ տուժողների կողմից ապացույցներ տրամադրելուց հրաժարվելու պատճառով (Քրեական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածը իրավունք է տալիս ընտանիքի անդամի դեմ ցուցմունքներ չտալ): Տուժողի մասնակցությունից հրաժարվելը սովորական երևույթ է բռնության ցիկլում և պետք է դիտարկվի նաև պարտադիր, ի պաշտոնե հետապնդման քաղաքականության լույսի ներքո:

387 Եվրոպայի խորհուրդ և ՀՀ արդարադատության ակադեմիա, «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ձեռնարկ» 2018թ, Լ. Ման և Լ. Սարգսյան:

չական ակտեր են, բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որը նախատեսում է, որ բողոքը կասեցնում է ակտի կատարումը[388]: Նախազգուշացում կիրառելու որոշումը բողոքարկելու կասեցնող ազդեցությունը կարող է վտանգներ պարունակել, քանի որ այդ ընթացքում բռնություն գործադրած անձը կարող է խախտել նախազգուշացումը, որը, սակայն, օրենքի տեսանկյունից որպես խախտում չի դիտարկվի՝ այդպիսով նվազեցնելով տուժողին տրամադրված պաշտպանության մակարդակը:[389] Ընտանեկան բռնության մասին օրենքի 6-րդ հոդվածով այնուհետև պահանջվում է, որ կատարողին ծանուցեն և տրամադրեն բողոքարկման իրավունք: Օրենքը չի պահանջում կիրառված նախազգուշացման մասին տուժողին պաշտոնական ծանուցում, ինչպես նաև չի պարզաբանում այդ միջոցի՝ տուժողի բողոքարկման իրավունքը, որը կարող է ներկայացվել վարչական վարույթի կամ վարչական դատավարության ընդհանուր կանոնների համաձայն: Այդ առնչությամբ, գործող դրույթը բավականաչափ զոհակենտրոն չէ: [390].

Համաձայն 7-րդ հոդվածի՝ անհետաձգելի միջամտության որոշման շրջանակով նախատեսվում են հետևյալ սահմանափակումները՝

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.

2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկելու պահին ընտանիքում բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության իրավասու ծառայողին.

5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

Եթե ենթադրյալ բռնարարի նկատմամբ կիրառվել է բռնության ենթարկվածի բնակության տարածքից հեռացնելու վերաբերյալ սահմանափակումը, ապա անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության իրավասու ծառայողը չի հեռանում մինչև ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից իր իրերը հավաքելը և ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրը լքելը: Ընտանիքում բռնություն գործադրած անձը կարող է որոշումն ուժի մեջ մտնե-

388 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածով նախատեսվում է, որ «Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման և, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով»:

389 Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդում, 2020թ., Բաժին 14. https://www.ombuds.am/images/files/c2ab53b11485412b39407e62ce598379.pdf

390 Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի, Հաղորդագրություն թիվ 2/2003, CEDAW/C/36/D/2/2003

լուց հետո իր անձնական իրերն այդ վայրից վերցնել միայն մեկ անգամ՝ ոստիկանության իրավասու ծառայողի ուղեկցությամբ:

Անհետաձգելի միջամտության որոշմամբ, անձի նկատմամբ կարող են կիրառվել այդ սահմանափակումներից մեկը կամ մի քանիսը՝ յուրաքանչյուրը տարբեր ժամկետներով: Օրենքում որևէ կարգավորում նախատեսված չէ խնամակալության և տեսակցության իրավունքների մասով ժամանակավոր միջոցների անհրաժեշտության մասին, թեև շփումն արգելելու մասին կարգադրությունը տարածվում է տուժողի խնամքին գտնվող անձանց վրա: Տվյալ պարագայում բռնություն գործադրած անձը ծանուցվում է անհետաձգելի միջամտության որոշման մասին անձամբ կամ պատվիրված նամակի, էլեկտրոնային փոստի կամ հեռախոսի միջոցով: Տուժողին ծանուցում են նամակով (ոչ պատվիրված)՝ նրա բնակարանում կամ ժամանակավոր ապաստարանում: Օրենքով տուժողի համար չի նախատեսվում ստանալ պաշտոնական ծանուցում անձամբ՝ որոշումը կայացնելու պահին, կամ պատվիրված նամակով, կրկին արտացոլելով վերջինիս՝ հօգուտ բռնարարի միտվածությունը: Բռնություն գործադրած անձը բողոքարկման համար ունի 5 օր: Բողոքարկումը չունի կասեցնող ուժ:

Ըստ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի, անհապաղ վտանգի իրավիճակի առկայության դեպքում անհետաձգելի միջամտության որոշումներն արձակվում են և անմիջապես ուժի մեջ են մտնում: Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետը թույլ չի տալիս, որպեսզի անհետաձգելի միջամտության հրամանները անմիջապես ուժի մեջ մտնեն, քանի որ դրանք ուժի մեջ են մտնում բռնություն գործադրած անձին հեռախոսով ծանուցելուց, նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց և հանձնման մասին վերջինիս ստորագրություն ստանալուց հետո: Ավելին, գրանցման հասցեն կարող է լինել այն տունը, որտեղ գտնվելը բռնություն գործադրող անձին պետք է արգելվի: Արդյունքում, բռնություն գործադրած անձի՝ այնտեղ պահանջվող ներկայությունը (ծանուցում ստանալու համար) կարող է վտանգել տուժողի անվտանգությունը: Այլ կերպ՝ Հայաստանում այս որոշման ուժի մեջ մտնելու ժամկետն անորոշ է, այլ ոչ թե անմիջապես[391]:

Վերոնշյալ ընթացակարգը կարող է ժամանակատար լինել, և դրանով, ինչն ավելի խնդրահարույց է, բռնություն գործադրած անձի դատավարական իրավունքները գերադասվում են տուժողի կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ՝ խախտելով միջազգային չափանիշները: Տուժողի հետ կապ հաստատելու շարունակական քայլերը չեն համարվի անհետաձգելի միջամտության որոշումների խախտում, քանի որ այն ուժի մեջ մտած չի լինի՝ ընթացակարգային ձգձգումների պատճառով: Վերջապես, անհետաձգելի միջամտության որոշումների կատարման ուշացումները կարող են հիմք հանդիսանալ այդ որոշումների խախտումների համար[392]:

Համաձայն 8-րդ հոդվածի՝ **պաշտպանական որոշումը** կարող է կայացվել դատարանի կողմից՝ բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնի դիմումի համաձայն: Պաշտպանական որոշումը կարող է կայացվել մինչև 6 ամիս ժամկետով՝ երկու անգամ 3 ամիս ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Դեռևս առկա են հարցեր այն տուժողների նկատմամբ կիրառվելիք պաշտպանության վերաբերյալ, որոնց համար բռնության սպառնալիքը մեկ տարուց ավելի է ձգվում:

Համաձայն 8-րդ հոդվածի 5-րդ մասի՝ պաշտպանական որոշման շրջանակում կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները՝

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը:

391 Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդում, 2020թ., Բաժին 14. https://www.ombuds.am/images/files/c2ab53b11485412b39407e62ce598379.pdf

392 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 59:

2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը բռնություն գործադրած անձի տիրապետման տակ եղած զենքն ի պահ հանձնել ոստիկանություն.

5) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված ալիմենտային պարտավորությունների համար վճարման ենթակա գումարի չափով: Դատարանը կարող է ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով.

6) անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները.

7) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ.

8) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեաբիլիտացիոն ծրագիր:

Ինչպես անհետաձգելի միջամտության որոշումների դեպքում՝ կարող է կիրառվել այդպաշտպանության միջոցների ցանկացած համադրություն՝ տարբեր ժամկետներով:

Բռնություն գործադրած անձն իրավասու է պաշտպանական որոշման գործողության ընթացքում՝ երկու ամիսը մեկ, ոստիկանության ուղեկցությամբ իր անձնական իրերը հեռացնել համատեղ բնակարանից:

Թեև անհետաձգելի միջամտության և թե պաշտպանական որոշմամբ բռնություն գործադրած անձից թույլատրվում է բռնագրավել հրազենը, այն նրան է վերադարձվում որոշման գործողության ժամկետի ավարտից հետո՝ այդպիսով վերստեղծելով տուժողի համար մահացու բռնության վտանգի սպառնալիքը: Ենթադրյալ բռնարարի մոտ հրազեն կամ դրա մատչելիություն ունենալը տուժողի համար մահացու վտանգ է դիտարկվում[393].

Որոշակի խնդիրներ ծագում են նաև պաշտպանական որոշմամբ նախատեսված այնպիսի սահմանափակում կիրառելիս, ինչպիսին է ընտանիքում բռնություն գործադրած անձին ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից անհապաղ հեռանալ հարկադրելը : Օրենսդիրը նախատեսում է, որ այս սահմանափակման ժամկետը սահմանելիս դատարանը հաշվի է առնում ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ եղող անձանց ապաստարան տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը, ընտանիքում բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի մատչելիությունը: Թեև ցանկացած գործով կոնկ-

393 Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, հոդված 51: https://rm.coe.int/168008482e

րետ փաստերը գնահատելու համար դատավորը լավագույն դիրքում է, սակայն տուժողին տանից հեռացնելը կանխատեսելով՝ այս կարգավորումը «հարացույցի փոփոխություն» չի ապահովում, ինչպես պահանջվում է Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով: Ինչպես վերը նշվել է՝ փոխարենը տուժողներին խնդրելու, որ բռնությունից անվտանգ վայր փնտրեն, այն այդ պարտականությունը դնում է բռնություն գործադրած անձի վրա, որին կարգադրվում է հեռանալ տուժողի կամ ռիսկի տակ գտնվող անձի բնակարանից և չշփվել նրա հետ[394]:

Համաձայն «Ընտանեկան բռնության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասի և 8-րդ հոդվածի 9-րդ մասի՝ **ոստիկանությունը հսկողություն է իրականացնում բռնություն գործադրած անձի կողմից անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների կատարման նկատմամբ:** Համաձայն Ընտանեկան բռնության մասին օրենքի 11-րդ հոդվածի՝ բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվում է նախազգուշացում, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանեկան բռնության հետ կապված դատվածություն ունեցող չափահաս անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման: Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սոցիալական աշխատողը կանխարգելիչ հաշվառման շրջանակներում իրականացնում է մոնիթորինգ՝ չափահաս անձանց կողմից ընտանիքում բռնարարքները կանխարգելելու համար՝ համաձայն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Անչափահասների դեպքում մոնիթորինգն իրականացվում է ոստիկանության կողմից՝ Լիազոր մարմնի կամ Ներքին գործերի նախարարի սահմանած կարգով:

Ավելին, 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ոստիկանության ծառայողը և տարածքային մարմնի սոցիալական աշխատողը կանխարգելիչ հաշվառման շրջանակում ամսական առնվազն մեկ հանդիպում են ունենում հաշվառման վերցված և ընտանիքում բռնության ենթարկված տուժողի հետ՝ իրազեկության մակարդակը բարձրացնելու համար: Դրանով չի սահմանվում, թե արդյոք այդ ամենամսյա հանդիպումներն անցկացվում են տուժողի և բռնություն գործադրած անձի հետ միասին, թե՝ առանձին[395]: Ամեն դեպքում, այդ դրույթը, կարծես թե, կախված չէ կողմերի համաձայնությունից և, այդպիսով, կարծես թե գործում է որպես փաստացի պարտադիր ջանք՝ ուղղված հաշտեցմանը: Տարածքային մարմնի սոցիալական աշխատողը մոնիթորինգի ընթացքում բռնության կրկնման վտանգ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է ոստիկանությանը: Բռնություն գործադրած անձինք հաշվառվում են մեկ տարով, եթե այդ ընթացքում չի կայացվում անհետաձգելի միջամտության, պաշտպանական նոր որոշում կամ նոր մեղադրական դատավճիռ չի կայացվում: Եթե տարվա ընթացքում լրացուցիչ պաշտպանական որոշում կամ մեղադրական դատավճիռ չի կայացվում, ապա բռնություն գործադրած անձը հաշվառումից հանվում է:

Ամփոփելով, ի հակադրություն Ստամբուլի կոնվենցիայով պահանջվող «հարացույցի փոփոխության», որն անհրաժեշտ է համարում տուժողի պաշտպանության ապահովումը, այստեղ նկարագրված Ընտանեկան բռնության մասին օրենքը կարող է բնութագրվել դրա գրեթե բացառիկ ուշադրությամբ՝ բռնություն գործադրած անձի նկատմամբ՝ տուժողի իրավունքների և կարիքների հաշվառման փոխարեն: Իրականում, Հայաստանի կողմից Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման նկատմամբ ցուցաբերվող գենդերային հարցերով չեզոք մոտեցումն արտացոլում է բռնություն գործադրած անձանց վրա արտոնյալ կենտրոնացվածությունը, որոնք մեծ մասամբ տղամարդիկ են[396]:

7-րդ հոդվածով նախատեսվում է, որ պաշտպանության անհետաձգելի որոշումը կարող է չե-

---

394 Ռոզա Լոգար, Յոհաննա Նիեմի, «Անհետաձգելի միջամտության որոշումները ընտանեկան բռնության իրավիճակներում. Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 52-րդ հոդվածը», Եվրոպայի խորհուրդ, 2017թ., էջ 43:

395 Այս բացը առկա է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 15-Լ հրամանում (փոփոխվել է՝ 2020 թվականի մարտի 3-ին): Այս հարցը բարձրացվել է մասնագետների կողմից անձնական զրույցների ժամանակ (Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժանմունքում):

396 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 62:

ղարկվել, եթե այն խախտվում է, սակայն չեն տրամադրվում ցուցումներ այն ավելի խիստ կարգադրությամբ փոխարինելու, ոչ էլ կատարողին ձերբակալելու և կալանավորելու վերաբերյալ[397]: Նույն կերպ՝ 8-րդ հոդվածով նախատեսվում է խախտման համար «պատասխանատվություն»՝ հղում չկատարելով քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվությանը: Այնուամենայնիվ, Քրեական օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի փոփոխություններով այդ բացը լրացվում է՝ պաշտպանական որոշումները խախտելու համար նախատեսելով ազատազրկում և տուգանքներ: Այնուամենայնիվ, այդ փոփոխությունները չեն կիրառվում 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված պաշտպանության բոլոր ձևերի նկատմամբ՝ ինչպես նշված է ստորև: Քրեական օրենսգրքի փոփոխությամբ (հոդված 508) անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների՝ բռնություն գործադրած անձին տուժողի բնակության վայրից հեռանալու պահանջ, տուժողին այցելելու կամ որոշակի հեռավորությունից տուժողին մոտենալ արգելք սահմանող, ինչպես նաև հրազենի հանձնում ենթադրող սահմանափակումների խախտման համար սահմանվում են հետևյալ պատիժները՝՝

- տուգանք՝ առավելագույնս տասնապատիկի ի չափով[398],
- ազատության սահմանափակում՝ առավելագույնը 1 տարի ժամկետով,
- կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը 1 ամիս ժամկետով,
- ազատազրկում՝ մինչև 1 տարի ժամկետով[399]:

Այդ առնչությամբ, 2020 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Սահմանադրական դատարանը կայացրեց ՍԴՈ-1522 որոշումը՝ մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածի և դրա հետ փոխկապակցված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանի վերջնական որոշումը հետևյալն էր. ««7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով նախատեսված սահմանափակումներն ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվել նրա բնակության համար անհրաժեշտ այլ վայրի մատչելիությունը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը»[400]:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը նույնպես փոփոխվել է 2017 թվականին՝ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների խախտման համար նախատեսելով վարչաիրավական պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, շփումն արգելելու մասին որոշումները, երեխայի հետ տեսակցության արգելքը խախտելու և վերականգնողական ծրագրերի չհաճախելու համար դրանով նախատեսվում են տուգանքներ՝ նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով [401].

Ինչպես նշվել է վերը, տուգանքները չեն համարվում արդյունավետ պատժող կամ կանխող միջոց, և դրանք հիմնականում վերցվում են ընտանեկան բյուջեից: Չնայած դրան՝ տուգանքները պաշտ-

397 Տե՛ս նույն տեղում, էջ 66:

398 Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի մեկ նվազագույն աշխատավարձը կազմում է 1000 ՀՀ դրամ:

399 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, 353.1-ին հոդված:

400 http://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1522pdf?fbclid=IwAR2wKjeJoJzy1huRrCrMVC14S5qfXou52o3Q3rnLX2cwOj7xcAc2UfinZ5w

401 Այդ սահմանափակումները նախատեսվում են և՛ անհետաձգելի միջամտությունների, և՛ պաշտպանական որոշումների համար՝ համաձայն, համապատասխանաբար, Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերի և 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերի:

պանական միջոցների խախտումների ժամանակ կիրառվող հիմնական միջոցն են:

Որոշիչ է այն, որ ալիմենտ տրամադրելու և երեխայի ապրուստը հոգալու մասին որոշումները խախտելու համար պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն՝ ապահովելու համար, որ բռնություն գործադրած անձը հոգա ապրուստի ծախսերի իր բաժինը՝ ինչպես սահմանված է 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով: Այդպիսով, այդ բացը բռնություն գործադրած անձանց իրավունք է տալիս գործադրելու տնտեսական բռնություն և խախտելու այդպիսի բռնությունը կանխելու համար կայացված պաշտպանական որոշումը՝ լիակատար անպատժելիությամբ: Ե՛վ անհետաձգելի միջամտության, և՛ պաշտպանական որոշումը կարող են կասեցվել, եթե բռնություն գործադրած անձը կալանավորվում է կամ տեղափոխվում բժշկական հաստատություն, կամ՝ եթե տուժողը փոխել է բնակության վայրը, կամ ենթարկվում է ինքնության փոփոխության [402]:

Ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 17-Լ հրամանով հաստատվել են ընտանեկան բռնություն գործադրողի համար նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշման ձևերը:

Համաձայն «Ընտանեկան բռնության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ոստիկանությունը կայացնում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումներ, ինչպես նաև հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ՝ ոստիկանության պետի սահմանած կարգին համապատասխան:

Ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 14-Լ հրամանով հաստատվում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը: Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ իրավասու ստորաբաժանում) կողմից:

Ստորաբաժանման կողմից հսկողությունն իրականացվում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց տներ այցելություններ կատարելու միջոցով և խախտումների վերաբերյալ տեղեկություններն արձանագրելու եղանակով:

Ընտանիքում բռնության ենթարկված անձի նկատմամբ կիրառված անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների խախտման վերաբերյալ ցանկացած աղբյուրից տեղեկություններ ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային բաժնի իրավասու ստորաբաժանման ծառայողը (ծառայողները) մեկնում է բռնության ենթարկված անձի փաստացի գտնվելու վայր:

Անհետաձգելի միջամտության ու պաշտպանության որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է որոշման կայացման օրվանից հինգ օրվա ընթացքում՝ երկու անգամ իրավասու ստորաբաժանման հսկողություն իրականացնող ծառայողի կողմից բռնության ենթարկված անձի փաստացի գտնվելու վայր այցելությունների միջոցով և կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրվում է բռնության ենթարկված անձի կողմից: Վերջինիս ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ կատարվում է նշում: Իրավասու ստորաբաժանման ծառայողների կողմից կազմվում է անհետաձգելի միջամտության ու պաշտպանության որոշումների պահանջների խախտման վերաբերյալ արձանագրություն: Ընդ որում, ՀՀ Ընտանեկան բռնության մասին օրենքը թույլ է տալիս անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշմամբ նախատեսված՝ բռնարարի շարժման կամ շփման շրջանակը կանո-

402 «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը», 2018թ., Լորի Ման և Լուսինե Սարգսյան, էջ 67:

նակարգող սահմանափակումների նկատմամբ վերահսկողությունն իրականացնել նաև էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ: Էլեկտրոնային հսկողություն կիրառելիս պետք է նվազագույնի հասցվի անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը: Էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում: Ակդ դեպքում տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը:

Եթե ոստիկանությունն արձանագրում է կիրառված սահմանափակումների խախտում, ապա խախտման մասին արձանագրություն կազմելուց հետո իրավասու ստորաբաժանման ծառայողը, կատարվածում հանցակազմի հատկանիշների առկայության պարագայում, այն ուղարկում է քննիչին, ով էլ ունի քրեական վարույթ նախաձեռնելու իրավասություն: ծ: Կազմված փաստաթղթերը զեկուցագրով հանձնվում են որոշման նկատմամբ հսկողություն իրականացնող իրավաու ստորաբաժանման ծառայողին:

Հսկողություն իրականացնող ստորաբաժանման ծառայողն արձանագրության պատճենը գրությամբ անհապաղ ուղարկում է աջակցության կենտրոն: Անհետաձգելի միջամտության և պաշտպանության որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրավասու ստորաբաժանման ծառայողի կողմից չի իրականացվում, եթե ընտանիքում բռնության ենթարկված անձն անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ժամկետի ընթացքում գտնվում է ապաստարանում:

Բռնության կրկնության կամ շարունակման անմիջական սպառնալիքի գնահատումը տրվում է անհետաձգելի միջամտության որոշման մեջ, որը է ներառում է հետևյալը.

1. Դեպքի վայրի հասցեն, հաղորդման մասին տեղեկությունները, ենթադրաբար բռնություն գործադրողի և ենթադրաբար բռնության ենթարկված անձի, ինչպես նաև դեպքի վայրում ներկա գտնված և բացատրություններ տվող անձանց անունները, ազգանունները, հայրանունները, բնակության վայրի հասցեն և գրանցման վայրը, արձանագրությունը կազմող իրավասու ոստիկանության ծառայողի անունը, ազգանունը, հայրանունը, կոչումը և պաշտոնը:
2. Ենթադրաբար բռնության ենթարկված անձի կողմից ընտանիքում բռնության կրկնության կամ շարունակման անմիջական սպառնալիքի ամփոփ գնահատումը՝սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված հարցաթերթիկի համաձայն, որը լրացվում է 16 տարեկանը լրացած անձի կողմից:
3. Ենթադրաբար բռնության ենթարկված անձին (անձանց) պատճառված վնասի նկարագրությունը, նրա վարքագիծը և խոցելիությունը բնութագրող հատկանիշները՝ սույն հավելվածի 5-7-րդ և 11-րդ կետերով նախատեսված չափորոշիչներին համապատասխան:
4. Ենթադրաբար բռնություն գործադրողի վարքագծի նկարագրությունը և նրա անձը բնութագրող հատկանիշների արձանագրումը՝սույն հավելվածի 3-4, 11 և 13-18 կետերով նախատեսված չափորոշիներին համապատասխան:
5. Ենթադրաբար բռնություն գործադրողի և ենթադրաբար բռնության ենթարկված անձի միջև հարաբերությունների նկարագրությունը՝ սույն հավելվածի 6-րդ կետով նախատեսված չափորոշչին համապատասխան:
6. Դեպքի վայրում բռնության հետքերի և գույքին պատճառված վնասի նկարագրությունը:
7. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված՝ անհետաձգելի միջամտության որոշման նկատ-

մամբ սահմանափակումները և գործողության ժամկետը:

8. Որոշման բողոքարկման պայմանները և բողոքարկման մարմինը, ներառյալ դատարանը, որին կարող է բողոքարկվել որոշումը, ինչպես նաև օրենքով նախատեսված պատժամիջոցները՝ որոշման խախտման համար:

9. Ստորագրությունները և որոշման կազմման ամսաթիվը:

Որոշումը ստորագրում է արձանագրությունը կազմած իրավասու ոստիկանության ծառայողը: Որոշումը ստորագրում են նաև տեղեկատվություն տրամադրող անձինք (բռնության ենթարկված անձը, բռնություն գործադրողը, վկաները), իսկ անչափահասների և օրենքով անգործունակ ճանաչված անձանց դեպքում այն ստորագրվում է ծնողների կամ օրինական ներկայացուցիչների կողմից, որոշումն՝ արձակելիս ներկա լինելու դեպքում: Եթե բռնություն գործադրողը որոշումը կազմելիս ներկա չի գտնվում, այդ մասին գրառում է կատարվում: Եթե որևէ այլ անձ հրաժարվում է ստորագրել որոշումը, այդ մասին կատարվում է համապատասխան նշում: Այն անձին, որը հրաժարվել է ստորագրել որոշումը, թույլ է տրվում բացատրել մերժման պատճառները կամ պատճառների բացատրությունը մերժելը, որի մասին նույնպես պետք է նշում կատարվի:

Եթե իրավասու ծառայողը, սույն հավելվածով նախատեսված չափանիշների գնահատման արդյունքում, եզրակացնում է, որ ընտանիքում բռնության կրկնության կամ շարունակման անմիջական սպառնալիք չկա, նա միևնույն է կազմում է տեղի ունեցած դեպքի վերաբերյալ արձանագրություն:

Գործողություն 13. Ոստիկանության պարտականությունները ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության հարցում

Նպատակը. Այս վարժությունը նպատակ ունի մասնակիցներին թույլ տալ ընտանեկան բռնության և ոստիկանության լիազորությունների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները կիրառել գործնական աշխատանքում:

Տևողությունը. 45 րոպե

Անցկացման ձևը. Փոքր խմբային վարժություն (10 րոպե), ամբողջ խմբի քննարկում (25 րոպե), ամփոփում և դասընթացավարի դիտարկումներ (10 րոպե):

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ X, ֆլիպչարթ գրատախտակ, մարկերներ.

Գործի ուսումնասիրություն: Բ-ի ամուսինը ոստիկան է Երևանում, որտեղ նրանք միասին ապրում են: Բ-ի ամուսինը անընդհատ բռնություն է գործադրում նրա և իրենց դստեր նկատմամբ: Վերջին անգամ Բ-ին ծեծելիս նա կոտրել է նրա քիթը և ծնոտը: Նա նաև մի քանի անգամ կապել է Բ-ին, որպեսզի թույլ չտա փախչել տնից: Մի օր վերջապես Բ-ին հաջողվում է փախչել երեխաների հետ և ապաստանել:

Այնուամենայնիվ, նրանք անհանգիստ են, քանի որ կարծում են, որ ամուսինը կգտնի նրանց: Նրանք մտածում են այլ տուն տեղափոխվել: Ապաստարանի կառավարիչը նաև կարծում է, որ նրանք պետք է հեռանան ապաստարանից, քանի որ նրանց այնտեղ գտնվելը կարող է վտանգավոր լինել ապաստարանի այլ անդամների համար:

Ցուցումներ.

Քայլ 1. Դասընթացավարը խնդրում է մասնակիցներին կազմել չորսից հինգ մասնակիցներից բաղկացած փոքր խմբեր և ծանոթանալ գործի մանրամասներին: Խմբի մասնակիցները լրացնում են բաժանվող նյութը՝ գրելով հարցերի պատասխանները:

Քայլ 2. Դասընթացավարը խնդրում է յուրաքանչյուր խմբից մեկ ներկայացուցչի ներկայացնել իրենց առաջարկվող միջոցներն ու գործողությունները, , և մասնավորապես, թե ինչպիսի քայլերի նրանք կդիմեն բռնություն գործադրողի նկատմամբ, որը նույնպես ոստիկանության ծառայող է: Դասընթացավարն այնուհետև գրի է առնում առաջարկվող միջոցներն ու գործողությունները գրատախտակի վրա:

Քայլ 3. Դասընթացավարն ամփոփում է պարապմունքը, անդրադառնալով մասնակիցների կողմից առաջարկվող ընդհանուր միջոցներին և գործողություններին՝ կենտրոնանալով հետևյալի վրա.

- Եթե ձեզ հաղորդեին նման իրավիճակի մասին, ի՞նչ կձեռնարկեիք:
- Ի՞նչ է ակնկալվում ոստիկանության աշխատակիցներից նման իրավիճակներում:
- Ո՞րն է տուժողների համար հնարավոր վնասն ու վտանգը նման իրավիճակում:
- Ինստիտուցիոնալ ինչպիսի՞ արձագանքը կարող է տուժողին լրացուցիչ վնաս հասցնել:
- Ո՞րոնք կլինեն ձեր քայլերը ոստիկանության այն գործընկերոջ նկատմամբ, ով ըստ հաղորդումների ընտանիքում միշտ բռնություն է գործադրում:

Վերջում դասընթացավարը պատասխանում է հարցերին, ամփոփում օրինակները և ներկայացնում իր մեկնաբանությունները:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Ոստիկանության պարտականությունները ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության հարցում

Գործի ուսումնասիրություն: Բ-ի ամուսինը ոստիկան է Երևանում, որտեղ նրանք միասին ապրում են: Բ-ի ամուսինը անընդհատ բռնություն է գործադրում նրա և իրենց դստեր նկատմամբ: Վերջին անգամ Բ-ին ծեծելիս նա կոտրել է նրա քիթը և ծնոտը: Նա նաև մի քանի անգամ կապել է Բ-ին, որպեսզի թույլ չտա փախչել տնից: Մի օր վերջապես Բ-ին հաջողվում է փախչել երեխաների հետ և ապաստանել:

Այնուամենայնիվ, նրանք անհանգիստ են, քանի որ կարծում են, որ ամուսինը կգտնի նրանց: Նրանք մտածում են այլ տուն տեղափոխվել: Ապաստարանի կառավարիչը նաև կարծում է, որ նրանք պետք է հեռանան ապաստարանից, քանի որ նրանց այնտեղ գտնվելը կարող է վտանգավոր լինել ապաստարանի այլ անդամների համար:

1. Ի՞նչ կանեիք որպես ոստիկան, գործին ծանոթանալուց հետո:

2. Նշեք, թե ինչ գործողություններ և միջոցներ կձեռնարկեք:

3. Ի՞նչ հանցագործություններ է կատարել ամուսինը:

4. Ի՞նչ եք զգում՝ իմանալով, որ հանցավորը ոստիկան գործընկերն է:

5.4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Ռիսկերի գնահատումը, կառավարումը և անվտանգության ծրագրումը անբաժանելիորեն կապված են, քանի որ դրանց նպատակը տուժողի անվտանգությունն ապահովելն է՝ ռիսկերը չեզոքացնելով կամ նվազագույնի հասցնելով: Անվտանգության ծրագիրը կազմվում է ռիսկի մակարդակի և հետագա վնասների հավանականության գնահատման հիման վրա և շարունակական վերանայման կարիք ունի: Ուստի, սկզբնական քայլը անվտանգության ապահովումն է, որպեսզի տուժող կանայք ազատվեն վախի զգացումից:

Անվտանգության ծրագրումը միշտ պետք է իրականացվի տուժողի հետ համագործակցությամբ: Տուժողին չի կարելի դուրս թողնել և մեկուսացնել գործընթացից: Չպետք է մոռանալ, որ տուժողն ամենից լավ է ճանաչում բռնարարին, և մինչ նա օգնություն է խնդրում հաստատություններից, հավանաբար արդեն «փորձել» է տարբեր ռազմավարություններ՝ իր և երեխաների համար ռիսկը և վտանգը նվազեցնելու համար: Շատ կարևոր է հասկանալ, թե որ ռազմավարություններն են էական և շահավետ եղել տուժողի համար, որոնք միայն զարգացման և կատարելագործման կարիք ունեն [403]:

Տուժողներից ոմանք որոշում են շարունակել հարաբերությունները/ամուսնությունը բռնարարի հետ կամ ստիպված են դա անել, քանի որ այլընտրանք չունեն: Կարևոր է, որ անվտանգության ծրագիրը հարմարեցվի տուժողի ներկա իրավիճակին: Անվտանգության ծրագիրը պետք է տարբեր լինի՝ կախված նրանից, թե տուժողը մնում է բռնարարի հետ, նախատեսում է նրան լքել բաժանվելուց անմիջապես հետո, կամ այնպիսի իրավիճակում է, երբ նրանք բաժանված են, և բռնարարը շփվում է երեխայի/երեխաների հետ: Գործուն և արդյունավետ անվտանգության ծրագիր կազմելու համար պետք է նկատի ունենալ, որ մինչ բռնարարին մշտապես լքելը և ապահով լինելը

403 Լոգառ, Ռ., և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.):

տուժող կանանց մեծ մասը բազմիցս ժամանակավորապես լքել է բռնարարին և հետ վերադարձել: Պետք է նաև նկատի ունենալ, որ բռնարարի ձերբակալությունը կամ պաշտպանական հրամանները ոչ բոլոր տուժողներին են ձեռնտու [404]:

Համաձայն Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 51-րդ հոդվածի՝[405], երկրի իշխանությունները, այդ թվում՝ իրավապահ մարմինները, պատասխանատու են բռնության ռիսկի գնահատման և կառավարման համար՝ համապատասխան բոլոր մարմինների հետ համագործակցությամբ: Անվտանգության ապահովումը պետական կառույցների, այլ ոչ տուժողի պարտականությունն է: Հնարավորության դեպքում, պետք է մշակվի անվտանգության մանրամասն ծրագիր՝ տուժողներին օգնություն ցուցաբերող կանանց մասնագիտացված հասարակական կազմակերպությունների հետ համատեղ[406]:

Անհրաժեշտ է մշտապես վերահսկել և գնահատել առանձին հաստատությունների միջամտությունների արդյունավետությունը, ինչպես նաև հաստատությունների միջև համագործակցության գործընթացները: Անվտանգության միջոցները կարևոր են նաև, երբ բռնության ենթարկված անձը օգնության համար դիմում է այլ հաստատությունների: Բռնության ենթարկված անձի և նրա երեխաների անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել բոլոր առկա միջոցները, որոնք բխում են իրավական և ինստիտուցիոնալ ընթացակարգերից: Բռնության ենթարկված անձինք պետք է վստահ լինեն, որ նրանք ապահով կլինեն հաստատություն ժամանելիս, հաստատությունում գտնվելիս և հաստատությունից դուրս գալուց հետո: Հատկապես կրիտիկական են այն իրավիճակները, երբ տուժողը կարող է հանդիպել բռնարարին հաստատության տարածքում: Հնարավորության դեպքում տուժողը պետք է խուսափի գրասենյակում բռնարարին հանդիպելուց, հետևաբար մասնագետները պետք է տուժողի հետ հանդիպում նշանակեն այլ ժամի՝ ժամանելիս կամ մեկնելիս տուժողի և բռնարարի հանդիպումից խուսափելու համար:

404 Տե՛ս նույն տեղում:

405 Եվրոպայի խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, հոդված 51: https://rm.coe.int/168008482e

406 ԿԸԲԵՑ (2012թ.): Պաշտպանություն II. Ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման կարողությունների զարգացում `բարձր ռիսկի տուժողներին պաշտպանելու համար, Վիեննա:

Ներդիր 15. Անվտանգության ծրագրման տարրերը

Զոհակենտրոն՝ բռնության ենթարկված կանանց կարիքները, վախերն ու սպասումները լսվում և քննարկվում են նրա հետ: Անվտանգության ծրագրով նախատեսված միջոցառումները պետք է քննարկվեն և բացատրվեն կանանց: Լսելու լավ հմտություններից բացի, ներգրավված մասնագետները պետք է իրենց աշխատանքում հասկանան, որ բռնության ենթարկված կանայք կարող են տեղյակ չլինել անվտանգության առկա միջոցների մասին, և նրանց անհրաժեշտ է մանրամասն բացատրություն՝ հասկանալի լեզվով և եղանակով: Բացի այդ, բռնության ենթարկված որոշ կանայք կարող են դիմել ռիսկերի նվազեցման ռազմավարության, հետևաբար, մասնագետները պետք է օգնեն նրանց ամբողջությամբ հասկանալ իրենց անվտանգությանը սպառնացող ռիսկերը և դրանց լրջությունը:

Անհատականացված՝ անվտանգության ծրագրի բոլոր միջոցները պետք է համապատասխանեցվեն կոնկրետ կնոջ կարիքներին և իրավիճակի: Ավելին, տուժողն ակտիվորեն մասնակցում է ռիսկերի նույնականացմանը և գնահատմանը: Բոլոր միջոցները պետք է լինեն ապահով, և բռնության ենթարկված կանայք դրանք անվտանգ համարեն:

Համապարփակ՝ համակարգված և մեթոդական մոտեցում անվտանգության պլանավորման ամբողջ գործընթացում:

Բաց, մատչելի և զգայուն՝ ներգրավված մասնագետները լիովին հասկանում են կնոջ դիրքն ու խոչընդոտները, որոնց նա հաճախ հանդիպում է անծանոթ մարդկանց հետ ինտիմ հարցերի շուրջ խոսելիս: Հիմնական ուղերձը, որ մասնագետները պետք է հղեն տուժողին, այն է, որ նա պատասխանատվություն չի կրում իր կրած բռնության համար:

Գաղտնիությունը բռնության ենթարկված կանանց աջակցություն ցուցաբերելու հիմնական սկզբունքն է: Բոլոր տեղեկությունները պետք է մշակվեն տվյալների պաշտպանության ներպետական օրենսդրության և անվտանգության կանոնների համաձայն:

Արձագանքում բազմազանությանը նշանակում է հասկանալ, որ հատվող խոցելիությունները, ինչպիսիք են տարիքը, տնտեսական վիճակը, հոգեկան առողջությունը, հաշմանդամությունը, էթնիկ փոքրամասնության կարգավիճակը և այլ գործոնները ազդում են բռնության և ռիսկերի վրա, ինչպես նաև ազդում են այն բանի վրա, թե ինչպես են բռնության ենթարկված կանայք օգնություն և աջակցություն փնտրում:

Առաջնորդում ընտանեկան բռնության աջակցության մասնագիտացված ծառայությունների կողմից նշանակում է, որ կանանց ՀԿ-ն մասնագիտացած է բռնության ենթարկված կանանց աջակցության ծառայություններ մատուցելու հարցում: Թեև անվտանգության ծրագրման մասին պետք է իրազեկված լինեն աջակցության և պաշտպանության համակարգի բոլոր մասնագետները, անվտանգության ծրագրման գործընթացին պետք է ներգրավել կանանց մասնագիտացված հասարակական կազմակերպությունները:

Աղբյուր՝ ԿԸԲԵՑ, 2012թ.[407]*:*

Գործողություն 14. Անվտանգության ծրագրում և ռիսկի կառավարում

Նպատակը. Խրախուսել մասնակիցներին կիրառել ռիսկի գործոնների և ռիսկերի գնահատման վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները իրենց ամենօրյա աշխատանքում:

Տևողությունը. 45-60 րոպե (կախված խմբի մեծությունից)

Անցկացման ձևը. Փոքր խմբային աշխատանք (20-30 րոպե), ամբողջ խմբի քննարկում (25 րոպե), ամփոփում և դասընթացավարի դիտարկումներ (15 րոպե):

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ. նախորդ վարժությունի 1-ին և 2-րդ գործերի նկարագրություններ, նախորդ վարժության ընթացքում կազմված նյութեր (Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ռիսկի գործոններ և կատեգորիաներ» և նախորդ վարժության ընթացքում կազմված պաշտոնական միջոցների և գործողությունների ցանկ, Մասնակիցներին բաժանվող նյութ. «Կառուցակարգված անվտանգության ծրագրի կազմում» և Մասնակիցներին բաժանվող նյութ. «Անվտանգության ծրագրի կազմման քայլերը»):

Ցուցումներ.

Մասնակիցները մնում են նույն խմբերում: Մասնակիցները օգտագործում են նախորդ սեմինարի դեպքերի նկարագրությունները, ինչպես նաև նախորդ սեմինարում կազմված նյութերը: Այնուհետև դասընթացավարը խնդրում է մասնակիցներին լրացնել և դիտարկել իրենց կողմից հայտնաբերված ռիսկի գործոնները: Մասնակիցներին նաև խնդրում են լրացնել բաժանված նյութը՝ Կառուցակարգված անվտանգության ծրագրի կազմում:

407 ԿԸԲԵՑ (2012թ.): Պաշտպանություն II. Ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման կարողությունների զարգացում `բարձր ռիսկի տուժողներին պաշտպանելու համար, Վիեննա:

Այս վարժության ընթացքում գործընթացն ինքնին նույնքան կարևոր է, որքան նրա արդյունքը/կազմված նյութերը

Ուղեցույց խմբային քննարկման/արդյունքի համար

Դասընթացավարը կազմակերպում է բացահայտված ռիսկերի և դրանց գնահատման վերաբերյալ քննարկումը, մասնավորապես՝ նույնականացման գործընթացի և այն ամենի վերաբերյալ, ինչը վճռորոշ է ռիսկի մակարդակը գնահատելու համար: Քննարկման ընթացքում ներկայացվում են յուրաքանչյուր խմբի կողմից առաջարկվող անվտանգության միջոցները, ինչպես նաև կազմվում է անվտանգության ծրագիրը: Մասնակիցներին առաջարկվում է կազմել անվտանգության ծրագրի իրականացման քայլերը: Տե՛ս անվտանգության ծրագրի մշակման քայլերի ձեռնարկը:

Հարցեր

- Որո՞նք են իրավախախտի հետ կապված ռիսկի գործոնները:
- Որո՞նք են ռիսկի գործոնների մասին տեղեկատվության աղբյուրները:
- Ի՞նչ կարևորություն ունի տուժողի՝ իրավախախտին տնից հեռացնելու կամքը:
- Որո՞նք են ռիսկերի գնահատման և կառավարման մարտահրավերները:

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015թ.), էջ. 50

Մասնակիցներին բաժանվող նյութ. Կառուցակարգված անվտանգության ծրագրի կազմում [408]

Բացահայտված ռիսկի գործոններ	Ռիսկի նվազեցման միջոցներ	Ո՞վ է պատասխանատու ռիսկի նվազեցման միջոցի/միջոցների իրականացման համար: [409]	Միջոցների իրականացման վերջնաժամկետը (որքան ժամանակ պետք է կիրառվի միջոցը)	Մեկնաբանություններ և դիտողություններ

408 Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015թ.), էջ56:

409 Այս վարժության համար լրացվում են միայն առաջին երկու սյունակները:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Անվտանգության ծրագրի մշակման քայլերը

1. Տուժողի կարիքների և վախերի բացահայտում

- Նպատակահարմար է զրույցը սկսել այն բանից, թե ինչ է զգում տուժողը և ինչ է նա ակնկալում ձեզանից (որպես հաստատության ներկայացուցիչ):
- Տուժողի հետ զրույցը սկսեք նրա ամենամեծ վախերից/ անհանգստություններից: Դրանք կարող են վերաբերել մի շարք խնդիրների, սակայն փորձեք բացահայտել մշտական բնույթ կրողները (օրինակ՝ բռնարարից տնտեսական կախվածությունը, երեխաներին դաստիրակության և խնամքի հետ կապված խնդիրները և այլն):
- Ի՞նչ է արել տուժողը նախկինում այդ վախերն ու անհանգստությունները հաղթահարելու համար: Արդյոք այդ գործողություններն արդյունք են տվել: Եթե ոչ, ապա ի՞նչ այլ տարբերակներ կան:
- Որո՞նք են տուժողի անվտանգության գծով առաջարկվող նոր ռազմավարությունների հնարավոր արդյունքները (դրական և բացասական):
- Տուժողի կարծիքով զուգընկերն ինչպես կարձագանքի իր ձեռնարկած քայլերին[410]:

2. Ներկայիս (փաստացի) ռիսկի գործոնների բացահայտում

- Պոտենցիալ ռիսկի գործոնների ցանկը պետք է կիրառվի համակարգված, օրինակ՝ ռիսկերի գնահատման համար «ստուգաթերթի» միջոցով:
- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այսպես կոչված ռիսկը սրող գործոններին (տե՛ս Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ռիսկի գործոնների ցանկ»)
- Եթե բռնությունը հիմնականում հոգեբանական բնույթ է կրում, փորձեք պարզել, թե ինչից է ամենից շատ վախենում տուժողը (ինչ սպառնալիքներ է օգտագործում բռնարարը, հոգեբանական բռնության ո՞ր ձևերին է նա դիմում) և ո՞րն է են բռնարարի հիմնական մարտավարությունը (մեկուսացում, ազատության սահմանափակում, տնտեսական բռնություն, սպառնալիքներ)

3. Տուժողի կողմից նախկինում կիրառված մարտավարությունը և անվտանգության միջոցառումները

- Ի՞նչ քայլերի է դիմել նախկինում տուժողը նախկինում բռնությունից խուսափելու համար, և ինչ տարբերակներ կային նախորդ շրջանում (օրինակ. արդյո՞ք նա կարողացել է օգտվել հեռախոսից՝ բռնության գործադրման դեպքի ընթացքում կամ դրանից հետո ոստիկանություն զանգահարելու համար, արդյո՞ք նա հեռացել է բռնարարից, արդյո՞ք նա գնալու տեղ ուներ, արդյո՞ք նա կարող էր երեխաների հետ որևէ տեղ գնալ):
- Ինչպե՞ս էր բռնարարն արձագանքում տուժողի կողմից նախկինում կատարվող քայլերին:
- Այդ քայլերից որո՞նք էին արդյունավետ, իսկ որոնք կարող էին տուժողի և նրա երեխաների համար ավելի մեծ վտանգառաջացնել:

4. Հնարավոր տարբերակները տուժողի համար

- Ի՞նչ տարբերակներ և միջոցներ կան այժմ տուժողի համար:
- Ի՞նչ միջոցներ կձեռնարկի ձեր հաստատությունը, և ինչպիսի՞ միջոցներ կարող են կիրառվել:
- Հնարավոր տարբերակները վերլուծելիս կարևոր է տուժողին հարցնել, թե արդյոք այդ տարբերակները իրատեսական են (տուժողի տեսանկյունից) և արդյոք նա կարծում է, որ դրանք կարող են մեծացնել իր անվտանգության հնարավորությունները: Ցանկալի է տուժողի հետ քննարկել հետևյալ հարցերից մի քանիսը.
- Արդյո՞ք առաջարկվող տարբերակները հասանելի են նրան:
- Որո՞նք կլինեն գործընթացի քայլերը:
- Ի՞նչ անել այն ընթացքում մինչև որ այդ տարբերակներից որևէ մեկն իրագործելի դառնա:
- Ի՞նչ է պետք տուժողին այդ տարբերակներից օգտվելու համար (ֆինանսական օգնություն, տրանսպորտ, հեռախոս):
- Ի՞նչ խոչընդոտներ կան:
- Ի՞նչ կարող է նա անել այդ խոչընդոտները հաղթահարելու համար:

5. Վերջնական անվտանգության ծրագրի կազմումը

Անվտանգության վերջնական ծրագիրը պետք է ներառի կոնկրետ քայլեր, միջոցներ և միջամտություններ, որոնք ձեռնարկվելու են կոնկրետ հաստատությունների և կազմակերպությունների կողմից, ինչպես նաև քայլեր, որոնց կդիմի տուժողը վտանգի դեպքում:

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015), p.58

410 Օհայոյի ընտանեկան բռնության ցանց, 2007:

Ներդիր 16. Անհատական անվտանգության ծրագրի կազմում

Անհատական անվտանգության ծրագիր կազմելիս անվտանգության աջակցության գործոնները հետևյալն են.

- Տուժողին/բռնության ենթակված անձին հասանելի անհատական օգնության մակարդակը
- Նրանց մասնավոր կյանքի իրավիճակը
- Վախի մակարդակը
- Անվտանգության խոչընդոտները, որոնք առաջացել են անձնական վերաբերմունքի և համոզմունքի, ինչպես նաև ընտանիքի, համայնքի վերաբերմունքի և համոզմունքների կամ մշակույթի պատճառով.
- Բռնության հետևանքները առողջության վրա.
- Աշխատանք ունենալը և ֆինանսական խնդիրները.
- Երեխաների հետ կապված մտահոգությունները.
- Ալկոհոլի և/կամ թմրամիջոցների օգտագործման/չարաշահման (ինչպես օրինական, այնպես էլ անօրինական) հետ կապված խնդիրները.
- Տեղական ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը և դրանց կողմից տուժողի/բռնության ենթակված անձի կարիքներին արձագանքումը.
- Անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը և մատչելիությունը.
- Աջակցության ծառայությունների համակարգումը:

Աղբյուրը՝ Կանանց նկատմամբ բռնության նկատմամբ ոստիկանության արդյունավետ արձագանքի ձեռնարկ (ՄԱԹՀՊԳ, 2010թ.):

5.5 ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի 15-Լ հրամանում փոփոխություններ են կատարվել 2020 թվականի մարտի 9-ին: Այն հաստատում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը:

Ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ մասնագիտացված ստորաբաժանման կողմից իրականացվող կանխարգելիչ աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը և մեթոդական օգնության ցուցաբերումն իրականացնում են ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչությունը (այսուհետ՝ վարչություն), տարածքային բաժնի պետը և նրա օպերատիվ գծով տեղակալը:

Սույն կարգով սահմանված աշխատանքները կազմակերպում, ղեկավարում և համակարգում է ոստիկանության տարածքային մարմնի պետի օպերատիվ գծով տեղակալը:

կանխարգելիչ հաշվառման չեն վերցվում քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով իր գործողությունների վտանգավորությունը չգիտակցող անձը (չափահաս և անչափահաս), ով հաշվառված է բժշկական հաստատությունում: Բժշկական հաստատությունում հաշվառված անձանց կողմից ընտանիքում բռնություն գործադրելու դեպքում իրավասու ծառայողը այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում ոստիկանության տարածքային մարմնի պետին հասցեագրված զեկուցագրի միջոցով տեղեկացնում է համայնքային ոստիկանության բաժան-

մունքին /խմբին/[411]:

Կանխարգելիչ հաշվառումն իրականացվում է հաշվառվող անձի փաստացի բնակության վայրի ոստիկանության բաժնի կողմից: Եթե բռնություն գործադրած անձը չունի հիմնական բնակության վայր հաշվառման է վերցվում տարածքային կարգով: Հաշվառման վերցնելու համար ոստիկանության իրավասու ծառայողը, անձի հաշվառված լինելու հանգամանքը ստուգելու նպատակով, բռնության փաստի հայտնաբերումից, ինչպես նաև անձի դատվածության փաստը հավաստող տեղեկատվություն ստանալուց հետո, 1 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հարցում է կատարում վարչությանը: Ընտանիքում բռնություն գործադրած անձի հաշվառված չլինելու դեպքում, կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու վերաբերյալ զեկուցագիրը, հաշվառման վերցնելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերի, այդ թվում՝ ԱՄՈ-ի հետ միասին ներկայացնում է բաժնի պետին: Թույլատրելու դեպքում ոստիկանության իրավասու ծառայողը, ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտը գրանցում է ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշվառման մատյանում (այսուհետ՝ մատյանում)՝ դրան տալով հերթական համար: Հաշվառման քարտերի հերթական համարները յուրաքանչյուր տարի սկսվում է 01 թվից, այնուհետև դրվում է գծիկ և նշվում հաշվառման տարեթվի վերջին երկու նիշերը:

Հաշվառման քարտի համարը պետք է համընկնի մատյանում ընթացիկ տարվա հերթական համարի հետ:

Կանխարգելիչ հաշվառման ենթակա են թե՛ մեծահասակները, թե՛ անչափահասները, ովքեր կատարել են ընտանեկան բռնություն[412]: Բռնություն գործադրած չափահաս անձի հաշվառման նպատակն է նախականխել վերջինիս կողմից նոր իրավախախտումների կատարումը, ինչպես նաև կանխել ընտանիքում հետագա բռնությունները: Ընտանեկան բռնությունը հաճախ շարունակվում է տարիներ և տասնամյակներ շարունակ: Ոստիկանությունը պետք է կարողանա տեսնել բռնության ողջ պատմությունը:

Կանխարգելիչ հաշվառումը վարվում է ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտի (հավելված 6) միջոցով: Կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու հիմքերն են՝

---

411 ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ «կանխարգելիչ հաշվառման չեն վերցվում քրոնիկ հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով իր գործողությունների վտանգավորությունը չգիտակցող անձը (չափահաս և անչափահաս), ով հաշվառված է բժշկական հաստատությունում: Բացի այդ, ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 45-րդ կետը սահմանում է, որ հաշվառման մեջ գտնվող անչափահասի վերաբերյալ կազմված քարտի վարումը դադարում է, ի թիվս այլնի, եթե անչափահասը հաշվառման մեջ գտնվելու ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել համապատասխան բժշկական հաստատությունում: Հրամանի 5-րդ կետը հակասում է Օրենքի 12-րդ հոդվածին, քանի որ դրա բովանդակությունը հակասում է «անգործունակ» եզրույթին: Ավելին, Հրամանի ձևակերպումը հիմնված է Քրեական օրենսգրքով սահմանված անմեղության հասկացության վրա: Տեխնիկական քննարկումների ընթացքում ոստիկանության ներկայացուցիչներն ասացին, որ նման անձանց վերաբերյալ կանխարգելիչ հաշվառումը արդյունավետ չէ ընտանեկան բռնության դեմ պայքարում, և որ համաձայն 2014թ. նոյեմբերի 6-ի ՀՀ կառավարության թիվ 1254-Ն որոշման՝ պաշտպանական նպատակներով նրանք պահպանում են այն անձանց քարտերը, որոնք հաշվառման մեջ են գտնվում առողջապահական հաստատություններում՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հոգեկան խանգարում հիվանդություն պատճառով, մինչև այն պահը, երբ նրանց հաշվառումը առողջապահական մարմիններում դադարեցվի: Սակայն այս փաստարկն անընդունելի է, և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաշվառում վարելը չի կարող համարվել նման դեպքերը կանխելու միջոց: Ընտանեկան բռնություն կատարողների հաշվառումը կանխարգելիչ նպատակ է հետապնդում, և ընտանիքի չափահաս անդամների կողմից ընտանեկան բռնության կատարումը կանխելու համար նրանց նկատմամբ պետք է հսկողություն սահմանվի: Հաշվառման վերցնելու գործառույթը չափազանց կարևոր նշանակություն ունի անձի վարքագծի դրսևորումների մշտադիտարկման տեսանկյունից, ինչն ինքնին կանխարգելիչ դրությամբ: Սակայն խնդիրն այն է, որ գործնականում կանխարգելիչ նպատակ հետապնդող հաշվառումը և բռնություն գործադրած անձանց մշտադիտարկումը պատշաճ չեն իրականացվում: Այս պարագայում ՀՀ ոստիկանության պետի վերոնշյալ հրամանն ուղղակի խոչընդոտ է հաշվառման իրականացման համար, որն ունի ընտանիքում բռնության դեպքերի կանխարգելման նպատակ: Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդում, 2020թ., բաժին 14: https://www.ombuds.am/images/files/c2ab53b11485412b39407e62ce598379.pdf

412 ՀՀ ոստիկանության պետի 2020թ. մարտի 9-ի թիվ 15-Լ հրաման "Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին»:

1) ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ ոստիկանության իրավասու ծառայողի կողմից նախազգուշացում կիրառելու մասին որոշումը,

2) ոստիկանության իրավասու ծառայողի կողմից կիրառված անհետաձգելի միջամտության որոշումը,

3) ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումը,

4) ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունենալու փաստը:

Իրավասու ծառայողի կողմից կանխարգելիչ հաշվառման քարտ կազմվում է վերը նշված որոշումներից որևէ մեկը կայացնելուց, անձի դատվածության փաստը հավաստող տեղեկատվությունը և վարչությունից անձի հաշվառված չլինելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվառման մեջ գտնվող անձի կողմից բռնության կրկնման կամ կիրառված պաշտպանության միջոցի խախտման դեպքում, իրավասու ծառայողը համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ոստիկանության տարածքային մարմնի պետին, ով անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությանը: Վարչությունն ուսումնասիրում է բռնություն գործադրած անձի վերաբերյալ կազմված կանխարգելիչ հաշվառման քարտը և խախտումներ հայտնաբերելու դեպքում զեկուցագիր է ներկայացնում ՀՀ ոստիկանության պետին կամ իրավասու տեղակալին և վերջիններիս ցուցումի հիման վրա կատարում է ծառայողական քննություն:

Կանխարգելիչ հաշվառման շրջանակներում չափահաս անձի կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկում իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սոցիալական աշխատողի (այսուհետ՝ սոցիալական աշխատող) կողմից:

Նախքան բռնություն գործադրած անձին հաշվառելը, վերջինս հրավիրվում է ոստիկանության տարածքային մարմին կամ հեռախոսակապի, պաշտոնական էլեկտրոնային կամ պատվիրված փոստի միջոցով իրազեկվում է իրեն հաշվառման վերցնելու մասին, ներկայացվում են հաշվառման վերցնելու հիմքերը, կազմվում է նրան իրազեկելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք, որը ստորագրվում է հաշվառվողի կողմից, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում կատարվում է համապատասխան նշում՝ հրաժարվելու պատճառների մասին, և տեղեկանքը կցվում է հաշվառման քարտին: Ընտանիքում բռնություն գործադրած անձին ոստիկանության կողմից հաշվառման վերցնելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում ոստիկանության ծառայողը գրավոր տեղեկացնում է հաշվառվողի բնակության վայրի վարչական տարածքը սպասարկող ոստիկանության ստորաբաժանման համայնքային ոստիկանության տեսուչին և սոցիալական աշխատողին:

Ոստիկանության իրավասու ծառայողը սոցիալական աշխատողի հետ փոխհամագործակցության շրջանակներում, ամսական առնվազն մեկ հանդիպում է ունենում հաշվառման վերցված և ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ, իրականացնում բացատրական աշխատանքներ, ինչպես նաև ծանոթանում ընտանիքում տիրող իրավիճակին և ընտանիքի անդամների փոխհարաբերություններին և կազմում համապատասխան տեղեկանք[413]: հանդիպմանը Տուժողին և բռնարարին նույն հանդիպմանը հրավիրելը, հատկապես, եթե առկա է վավեր ԱՄՈ կամ պաշտպանական որոշում, հսկայական ռիսկ է ներկայացնում տուժողի և նրա երեխաների համար և կարող է դրդել բռնարարին խախտել որոշմամբ հաստատված արգելքը: Ուստի մենք միանշանակ կառաջարկեինք հանդիպումները կազմակերպել առանձին և առանձին ժամերին՝ խուսափելով բռնարարի և տուժողի միջև հնարավոր շփումներից:

413 Հրամանում չի հստակեցվում, թե արդյոք այդ ամենամսյա հանդիպումները պետք է անցկացվեն տուժողի և բռնարարի համատեղ մասնակցությամբ, թե առանձին:

Ոստիկանության իրավասու ծառայողը սոցիալական աշխատողի հետ փոխհամագործակցության շրջանակներում, ամսական մեկ անգամ հանդիպում է ունենում, որի ընթացքում քննարկվում և վեր են լուծվում հաշվառման մեջ գտնվող անձի վարքագիծը, առկա խնդիրները և որոշում իրականացվող հետագա աշխատանքները և այդ մասին կազմում համապատասխան տեղեկանք, որը կցվում է հաշվառման քարտին:

Իրավասու ծառայողի կողմից հաշվառման մեջ գտնվող անձի նոր բնակության վայրը պարզելու ուղղությամբ ձեռնարկվում են որոնողական միջոցառումներ: Անձի բնակության վայրը չպարզելու դեպքում իրավասու ծառայողն այդ մասին նշում է կատարում կանխարգելիչ հաշվառման քարտում և 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնում վարչությանը և կանխարգելիչ հաշվառումը կասեցվում է: Կանխարգելիչ հաշվառման քարտը կասեցվում է նաև ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու դեպքում՝ 5 օրյա ժամկետում: Սույն կարգով սահմանված ժամկետը (մինչև 1 տարի) լրանալուց հետո հաշվառման մեջ գտնվող անձը հանվում է հաշվառումից: Անձը կանխարգելիչ հաշվառումից հանվում է ոստիկանության իրավասու ծառայողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, օրինակ՝ եթե նրա գտնվելու վայրը հայտնի չէ, բաժնի պետի թույլտվությամբ, որի մասին համապատասխան նշում է կատարվում մատյանում: Հաշվառումից հանված անձանց քարտերը պահվում են մեկ տարի ժամկետով՝ մասնագիտացված ստորաբաժանման ղեկավարի մոտ, որից հետո հանձնվում են ոստիկանության տարածքային բաժնի քարտուղարություն և ոչնչացվում սահմանված կարգով:.

Մասնագիտացված ստորաբաժանումներում **ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձի** նկատմամբ իրականացվող կանխարգելիչ հաշվառման նպատակն է հայտնաբերել անչափահասի քրեական վարքագիծը, կանխել անչափահասի կողմից հետագա իրավախախտումների ու հանցագործությունների կատարումը, ինչպես նաև ընտանիքի անդամների նկատմամբ հետագա բռնությունները: Կանխարգելիչ հաշվառումը վարվում է ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտի միջոցով: Հաշվառման քարտ կազմվում է ընտանիքի անդամների կամ անդամներից որևէ մեկի նկատմամբ բռնի արարքներ կատարած, 11 տարին լրացած անչափահասի նկատմամբ ոստիկանության իրավասու ծառայողի՝ նախազգուշացման մասին որոշում կայացնելուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախքան անչափահասին հաշվառելը, անչափահասը ծնողի կան օրինական ներկայացուցչի հետ հրավիրվում է ոստիկանության տարածքային մարմին կամ հեռախոսակապի, պաշտոնական էլեկտրոնային կամ պատվիրված փոստի միջոցով իրազեկվում են անչափահասին հաշվառման վերցնելու մասին, ներկայացվում են հաշվառման վերցնելու հիմքերը, կազմվում է նրանց իրազեկելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք, որը ստորագրվում է ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից, իսկ ստորագրելուց հրաժարվելու վերաբերյալ կատարվում է համապատասխան նշում՝ հրաժարվելու պատճառների մասին, որը կցվում է հաշվառման քարտին:

Կանխարգելիչ հաշվառման շրջանակներում անչափահասի կողմից ընտանիքում հետագա բռնությունների գործադրումը, ինչպես նաև նրա կողմից այլ իրավախախտումների կատարումը կանխելու նպատակով վերջինիս վարքագծի նկատմամբ մշտադիտարկումն իրականացվում է ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման կողմից:

Ոստիկանության իրավասու ծառայողը ընտանիքում բռնություն գործադրած անչափահասին հաշվառման վերցնելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է հաշվառվողի բնակության վայրի վարչական տարածքը սպասարկող ոստիկանության ստորաբաժանման համայնքային ոստիկանության տեսուչին, ինչպես նաև անչափահասի դպրոցը սպասարկող մասնագիտացված ստորաբաժանման տեսուչին, իսկ ավագ դպրոցի դեպքում՝ դպրոցական (ավագ) տեսուչին: Անչափահասին հաշվառման վերցնելու մասին ոստիկանության իրավասու ծառայողը 1 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագիր է ներկայացնում ոստիկանության տարածքային մարմնի պետի օպերատիվ գծով տեղակալին: Վերջինս հանձնարարում է մասնագիտացված ստորաբաժանման օպերատիվ աշխատողին, հաշվառման մեջ գտնվելու ընթացքում, հաշվառվողի վարքի վերաբերյալ հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ

ստանալու դեպքում զեկուցագրով տեղեկացնել իրավասու ծառայողին, ում վարույթում գտնվում է հաշվառման քարտը: Վերջինս հանձնարարում է մասնագիտացված ստորաբաժանման օպերատիվ աշխատողին, հաշվառվողի վարքի վերաբերյալ հետաքրքրություն ներկայացնող որևէ նոր տեղեկություններ ստանալու դեպքում (անչափահասին առնչվող նոր որոշումներ, իրավախախտումներ և այլն) զեկուցագրով տեղեկացնել իրավասու ծառայողին, ում վարույթում գտնվում է հաշվառման քարտը: Անչափահասների հետ կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են բնակության, ուսման վայրերում, իսկ անհրաժեշտության դեպքում հաշվառվողը հրավիրվում է ոստիկանության ստորաբաժանում:

Ընտանիքում բռնություն գործադրած անչափահասին հաշվառման վերցնելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավասու ծառայողը գրավոր տեղեկացնում է հաշվառվողի ուսման, աշխատանքի և բնակության վայրերի աշխատակազմերին, տեղական ինքնակառավարման մարմնին, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնին, համագործակցում համայնքային և պետական վերականգնողական կենտրոնների պատասխանատուների հետ: Եթե անչափահասը արական սեռի 16 տարին լրացած անձ է, ապա այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է անչափահասի հաշվառման վայրի տարածքային զինվորական կոմիսարիատ:

Ոստիկանության իրավասու ծառայողը ամսական առնվազն մեկ անգամ հաշվառման մեջ գտնվող անչափահասի հետ անց է կացնում անհատական կանխարգելիչ զրույցներ՝ ընդգրկելով նաև վերջինիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև հաշվառվողին դասավանդող ուսուցիչներին:

Իրավասու ծառայողը պարբերաբար հանդիպումներ, զրույցներ է անցկացնում հաշվառվող անչափահասի ծնողների, անչափահասի կողմից ընտանիքում բռնության ենթարկված անդամի հետ, ինչի վերաբերյալ կազմում է տեղեկանք, որը ստորագրվում է անչափահասի ծնողի և բռնության ենթարկվածի կողմից:

Ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձը, եթե նրա արարքում բացակայում է հանցակազմի հատկանիշները՝ ոստիկանության կողմից ուղղորդվում է վերականգնողական ծրագրերի համապատասխան համայնքային և պետական կենտրոններ: Անչափահասին համայնքային և պետական կենտրոններ ներկայացնելու գրության պատճեն կցվում է կանխարգելիչ հաշվառման քարտին:

Ընտանիքում բռնություն գործադրած և կանխարգելիչ հաշվառման մեջ գտնվող անչափահասին հատուկ մասնագիտացված (ռազմամարտական) և հատուկ հանրակրթական (հակասոցիալական վարք դրսևորած երեխաների համար) ուսումնական հաստատություններ տեղափոխելու դեպքում կանխարգելիչ հաշվառման քարտը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հիշյալ ուսումնական հաստատությունների գտնվելու վայրի ոստիկանության տարածքային մարմին՝ հաշվառվողի վարքագծի նկատմամբ հետագա հսկողություն սահմանելու համար:

Հաշվառման մեջ գտնվող անչափահասի վերաբերյալ կազմված քարտի վարումը դադարեցվում է՝

1) եթե անչափահասը հաշվառման մեջ գտնվելու ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել համապատասխան բժշկական հաստատությունում,

2) անչափահասը մեկ տարուց ավելի բնակվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս,

3) լրացել է կանխարգելիչ քարտի վարման ժամկետը.

4) մահվան դեպքում,

5) օրենքով սահմանված այլ դեպքերում:

Անչափահասին հաշվառումից հանելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկաց-

վում է անչափահասը, նրա ծնողները կամ օրինական ներկայացուցիչները, ուսման, աշխատանքի և բնակության վայրերի աշխատակազմերը, հաշվառվողի բնակության վայրի վարչական տարածքը սպասարկող ոստիկանության ստորաբաժանման համայնքային ոստիկանության տեսուչը, տեղական ինքնակառավարման մարմինը, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը, համայնքային և պետական վերականգնողական կենտրոնները: Եթե անչափահասը արական սեռի 16 տարին լրացած անձ է, ապա այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է անչափահասի հաշվառման վայրի տարածքային զինվորական կոմիսարիատ:

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 15-Լ հրամանի (փոփոխվել է՝ 2020 թվականի մարտի 3-ին)՝ իրավասու ծառայողն իրավունք ունի՝

1) այցելել ընտանիքում բռնություն գործադրած և հաշվառման մեջ գտնվող անձանց բնակության, ուսման վայրեր, զրույցներ անցկացնել հաշվառվողի, (անչափահասի դեպքում նաև նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների և այլ անձանց) հետ,

2) կազմակերպություններից և ուսումնական հաստատություններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ,

3) հաշվառման մեջ գտնվող անչափահասին ուղղորդել համայնքային և պետական վերականգնողական կենտրոններ,

4) համագործակցել և անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնից, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններից, սոցիալական աջակցություն տրամադրող ծառայություններից, հասարակական կազմակերպություններից:

Իրավասու ծառայողը պարտավոր է՝

1) հաշվառման մեջ գտնվող անձանց հետ աշխատանքներ իրականացնելիս հարգել անձի իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը,

2) ընտանիքում բռնություն կիրառված լինելու մասին հաղորդմամբ ոստիկանություն դիմած անձանց պարզաբանել նրանց իրավունքները և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունը,

3) պահպանել մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը,

4) առաջնորդվել սույն կարգով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

6. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ. ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակը

Տուժողների վստահությունը աստիկանության նկատմամբ ձևավորվում է շնորհիվ ոստիկանության արդյունավետ միջամտության ռազմավարությունների, որոնք հիմնված են ԿՆԲ-ի գենդերային ընկալման և տուժողների անվտանգության և բռնություն գործադրողների հաշվետվողականության հանձնառության վրա: Ոստիկանությունը ամրապնդում է վստահությունը՝ արդյունավետ կերպով լուծելով ընտանեկան բռնության դեպքերը՝ տուժողի առաջին կանչից մինչև քրեական հետապնդման համար հավաքված բավարար ապացույցներ ապահովումը:

Ուսուցման հիմնական կետերը.

- Տուժողից առաջին զանգը ստանալուն պես հասկանալ հետագա քայլերը
- Ոստիկանության պարտականությունների արդյունավետ կատարումը գենդերազգայուն ձևով և ոստիկանության ակտերին համապատասխան
- Պրոֆեսիոնալ ձևով իրականացնել գենդերազգայուն քննություն և ապացույցների հավաքում
- Տուժողների և վկաների հետ առաջնային զրույցների մարտավարության հիմքում տուժողների իրավազորման մոտեցումն է
- Միջամտության նպատակն է բռնությունը դադարեցնելը, բռնարարին պատասխանատվության ենթարկելու գործընթացին աջակցելը

6.1. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Երբ բռնությունը սրվում է և (կամ) սկսում շարունակական բնույթ կրել, տուժողները հաճախ դիմում են իշխանություններին՝ նրանց տվյալ պարագայում պաշտպանության վերջին միջոց դիտարկելով: Պաշտպանության արդյունավետությունը որոշվում է նրանով, թե ինչպե՞ս է ոստիկանությունը արձագանքում, և ինչպիսի՞ն է ոստիկանության արձագանքը ԳՀԲ-ին, ներառյալ ընտանեկան բռնությանը: Ավելին, ոստիկանության արձագանքի բնույթը կարող է կանխորոշել խնդրին արդարադատության համակարգի հետագա ընդհանուր մոտեցումը և դրա արդյունավետությունը:

Ոստիկանությունն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում պարտավոր է հնարավորինս արագ արձագանքել և օգնություն ու պաշտպանություն տրամադրել բռնությունից տուժածներին: Ոստիկանության մանդատը կամ առաքելությունը հնարավոր հանցավոր վարքագծի պատճառները վերացնելը չէ: Ոստիկանությունը նման լիազորություն չունի, ոչ ոք չի ակնկալում, որ ոստիկանությունը կվերացնի այն պատճառները, որոնք հանգեցրել են որոշակի հանցավոր վարքագծի: Այնուամենայնիվ, առանց ընտանեկան բռնության արարքի հիմնական պատճառը ճանաչելու, ոստիկանության արդյունավետ միջամտությունը հնարավոր չէ: Եթե չկա ըմբռնում այն հարցի շուրջ, որ ոստիկանության միջամտությունն ուղղված է դրա պատճառը հանդիսացող

վարքագծի վերացման համար պայմանների ստեղծմանը, ապա ոստիկանության միջամտությունը նպաստում է բռնի վարքի հետագա աճին:

Բռնության մասին հաղորդող տուժողները, հատկապես ընտանեկան բռնության ենթարկված կանայք, ոստիկանությունից ձգտում են պաշտպանություն ստանալ՝ կանխելու իրավախախտի կողմից հետագա հնարավոր բռնությունը: Հաշվի առնելով ոստիկանության իրավասությունները՝ բռնության մասին հաղորդում ստանալիս միջամտել և տեղում պաշտպանել տուժողին և գույքը բռնարարից, ոստիկանությունը էական դերակատարություն ունի անվտանգության ապահովման հարցում: Մյուս կողմից, բռնության մասին հաղորդում տալու պահին, ինչպես նաև հետագայում արդարադատության համակարգի կողմից տուժողի նկատմամբ վերաբերմունքը ազդում է ոչ միայն տուժողի՝ բռնության հետևանքներին դիմակայելու կարողության վրա, այլև կանխորոշում է հետագա քրեական կամ քաղաքացիական վարույթներին մասնակցելու նրա պատրաստակամությունը: Ոստիկանությունը որպես իր առաջնահերթ խնդիր պետք է դիտարկի բռնության ենթարկված անձանց հանդեպ արդար վերաբերմունքը՝ նրանց իրավունքների հարգումն ու իրացումն ապահովելու համար: Հետևաբար, ընտանեկան բռնության դեպքերին առնչվելիս պետք է հասկանալ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության առանձնահատկությունները:

Ոստիկանության արդյունավետ միջամտության համար էական է ընկալումն առ այն, որ ընտանեկան բռնությունը առանձին բռնարարք չէ: Ուստի, ոստիկանական միջամտության նպատակը պետք է լինի հենց բռնի վերաբերմունքը կասեցնելը, այ ոչ թե և ոչ միայն բռնության առանձին դրսևորումը կասեցնելը: Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը պետք է դիտվեն որպես կրկնվող և որոշակի ժամանակ տևող ահաբեկման, բռնության և վերահսկողության դրսևորում և արժանանան համապատասխան արձագանքի: Այդ իսկ պատճառով, ոստիկանական միջամտությունը չի սահմանափակվում միջամտության անմիջական արդյունքով, այլ պետք է դիտարկվի որպես առավել ընդգրկուն սոցիալական միջամտության մաս, որը տուժողի համար ապահովում է լավագույն պաշտպանությունը: Այսպիսով, ընտանեկան բռնության դեպքում ոստիկանության առաջին արձագանքը հատուկ նշանակություն ունի տուժողի պաշտպանության և աջակցության ընդհանուր համակարգի արդյունավետության տեսանկյունից[414]:

Տեսաբանները և ոստիկանության մասնագետները ընտանեկան բռնության դեպքերում տարբերում են ոստիկանության միջամտության հետևյալ հինգ կանոնները.

1. Ոստիկանության միջամտությունը հիմքում պետք է լինի այն մոտեցումը, որ ընտանեկան բռնությունը հանրային խնդիր է.
2. Ընտանեկան բռնությունը ոչ միայն առանձին բռնարարք է, այլ կատարողի և տուժողի միջև իշխանության և վերահսկողության հարաբերությունների հետևանք.
3. Ոստիկանության միջամտությունը պետք է արտացոլի մասնավոր կյանքում բռնության նկատմամբ սոցիալական անհանդուրժողականությունը.
4. Պատասխանատվությունը պետք է հստակ դրվի կատարողի վրա. և
5. Առանց ընտանեկան բռնության նկատմամբ հասարակության համապարփակ և բազմակողմանի արձագանքի ոստիկանության արդյունավետ միջամտությունը հնարավոր չէ[415]:

Օրենսդիրը հատուկ լիազորություններ է նախատեսում, որպեսզի հնարավորություն տա ոստիկանության աշխատակիցներին կատարել իրենց պարտականությունները: Ոստիկանության լիազո-

414 Միրցևա, Ս., Ցացևա Վ.,(2013թ.), "Itni merki za zastita na zrtvite na domasno nasilstvo:Istanbulska konvencija", [Եվրոպայի խորհրդի կոնվենցիա. Անհետաձգելի միջամտության որոշումը ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության համար] Makedonska revija za kazneno pravo I kriminologija, god.20, br.1, 31-51 էջեր: Zdruzenie za krivicno pravo i kriminologija na Makedonija. Skopje.

415 Դիրինգ, A. (2002). "Austriski zakon o zastiti od nasilja u porodici", ՏԵՄԻԴԱ. Վիկտիմիզացիայի, գենդերային և մարդու իրավունքների մասին ամսագիր, թողարկում 2, 2002թ. սեպտեմբեր, 12-22 էջեր: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.vds.rs/File/Tem0210ID.pdf

րությունները գործի դնելու համար պետք է տեղի ունենա իրավական նորմի խախտում կամ առկա լինի դրա վտանգը: Ոստիկանական լիազորություններ կոչվող այդ հատուկ լիազորություններ, ոստիկանության ծառայողի պարտականություններն են, քանի որ շատ դեպքերում ոստիկանության ծառայողները ոչ թե որոշում են գործադրել ոստիկանական լիազորությունները, այլ այն, թե նպատակին հասնելու համար որ լիազորության գործադրումն է համաչափ: Ոստիկանական լիազորությունների գործադրումը միշտ պետք է համապատասխանի օրենքով սահմանված պայմաններին և կարգին:

6.2. ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

«Ընտանեկան բռնության մասին» օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, իսկ առանձին դեպքերում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում են ոստիկանության լիազորությունների շրջանակը, որը կարգավորում է բռնության դեպքերի կանխարգելման, հայտնաբերման, տուժողների պաշտպանության և հաղորդում ներկայացնելու ընթացում ոստիկանության կողմից ձեռնարկվող քայլերը: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ոստիկանության գործառույթների և կազմակերպման, ոստիկանության ծառայողների լիազորությունների և պարտականությունների հետագա մշակումը:

Ընտանեկան բռնության դեպքերում ոստիկանության միջամտության վայրը սովորաբար բռնարարի և տուժողի բնակարանն է: Ոստիկանության միջամտության առաջին սկզբունքը պետք է լինի հրատապությունը: Դեպքին ծանոթանալուց հետո ոստիկանությունը պետք է հնարավորինս արագ արձագանքի՝ կարևորելով այն վայրի, որտեղ ամենից հաճախ տեղի է ունենում բռնությունը՝ տան անձեռնմխելիությունը: Դրանով հանդերձ, առաջնահերթ է բռնության դադարեցումը և բռնության ենթարկված կանանց պաշտպանությունը, ներառյալ երեխաների պաշտպանությունը, որոնք կարող են անմիջականորեն վտանգված չլինել:

Իրավախախտումներին, պատահարներին արագ արձագանքելու ոստիկանության գործառույթը ամրագրում է ստացել նաև ոստիկանության առանձին ստորաբաժանումների գործառույթները սահմանելիս: Մասնավորապես, Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի 2020 թ.-ի սեպտեմբերի 23-ի թիվ 36-Լ հրամանի 3-րդ կետով սահմանվում է, որ պարեկային ծառայությունը՝

1. ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, հասարակական անվտանգությունը և ճանապարհային երթևեկության անվտանգությունը,
2. իր իրավասության սահմաններում՝ հասարակական վայրերում հայտնաբերում, կանխում, խափանում, բացահայտում է հանցագործությունները,
3. ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կատարվող դատավարական գործողությունների և դրանց մասնակցող անձանց անվտանգությունը, այդ թվում հանցագործության դեպքի վայրի պահպանությունը,
4. իր իրավասության սահմաններում հասարակական վայրերում կանխում, հայտնաբերում, խափանում է ոստիկանության քննությանը ենթակա վարչական իրավախախտումները (այսուհետ՝ վարչական իրավախախտում) և կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Բռնության մասին հաղորդմանը անհապաղ արձագանքելը չափազանց կարևոր է, և ոստիկանության առաջնային նպատակը տուժողի անվտանգությունն ապահովելն է: Եթե ոստիկանությունը չի կանխում, չի պաշտպանում և պատշաճ կերպով չի արձագանքում կանանց նկատմամբ բռնությանը, այն դեպքերում, երբ ոստիկանությունը գիտեր կամ պետք է տեղյակ լիներ բռնարարի գործողությունների մասին, ապա ոստիկանությունը չի պահպանում պատշաճ զգուշավորության չափանիշը և չի կատարում իր պարտականությունները:

6.2.1. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՋԱՆԳԸ

Համաձայն ՄԱԿ-ի՝ Բռնության ենթարկվող կանանց և աղջիկների ընդհանուր ծառայությունների փաթեթի ուղեցույցերի՝ «Առաջնային քայլերը ներառում են ոստիկանություն հաղորդումը, հաղորդման փաստաթղթավորումը, հանցանքի վերաբերյալ հաղորդման գրանցումը, փաստաբանների կողմից մատուցվող խորհրդատվական ծառայությունները, գրանցված քաղաքացիական գործերը կամ պետական փոխհատուցման ծրագրերը ներկայացվող վարչական դիմումները, և բաժանման, խնամակալության և (կամ) քրեական, քաղաքացիական, ընտանեկան դատարանների կամ վարչական մարմինների/մեխանիզմների միջոցով անհետաձգելի/արտակարգ պաշտպանական որոշումների արձակման մասին դիմումները»[416]:

Տուժողի հետ ի սկզբանե դրական հարաբերություններ ապահովելու համար կարևոր է հասկանալ ընտանեկան բռնության դինամիկան, ինչպես նաև տուժողի վիճակը: Մասնավորապես, պետք է լավ պատկերացնել, թե ինչու է տուժողը դժկամությամբ հայտնում բռնության մասին: Ըստ ԵԱՀԿ-ի ուսումնասիրության տվյալների՝ հիմնական խոչընդոտներն են[417].

- Ամոթը, այդ թվում՝ բռնության որոշակի տեսակների և ամուսնալուծության հետ կապված.
- Ֆինանսական պատճառները, ներառյալ մտահոգությունը, որ կինը չի կարող ֆինանսապես ապահովել իրեն և իր երեխաներին և չի ստանա աջակցություն իր ընտանիքից.
- Վստահության բացակայությունը հաստատությունների նկատմամբ. կանայք ոստիկանությունից չեն ակնկալում արդյունավետ արձագանք կամ վախենում են, որ իրենց չեն հավատա.
- Մասնագիտացված ծառայությունների մասին տեղեկացված չլինելը. կանայք չգիտեն, թե ուր կարող են դիմել օգնություն ստանալու համար.
- Ենթադրյալ իրավախախտի կողմից վրեժի վախը. կանայք վախենում են, որ բռնությունը կարող է սրանալ:

Անկախ նրանից, թե նախնական շփման որքան լայն շրջանակ եք սահմանում, ցանկալի է հաշվի առնել հետևյալ կարևոր տարրերը:

Ստուգաթերթ. նախնական շփման կարևոր տարրերը (ցանկը ամբողջական չէ)

- Լինել հասանելի բռնության մասին հաղորդող բոլոր կանանց համար
- Կիրառել՝ «օգնիր, ոչ թե դատիր» սկզբունքը (հատկապես խուսափել գենդերային կողմնակալությունից)
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպել բժշկի այցելություն

416 Միավորված ազգերի կազմակերպության Համընդհանուր գլոբալ ծրագիր բռնության ենթարկվող կանանց և աղջիկների համար, (2015): «Մոդուլ 3. Արդարություն և ոստիկանություն, հիմնական ծառայությունների փաթեթ կանանց և աղջիկների համար, որոնք ենթարկվում են բռնության. հիմնական տարրեր և որակի ուղեցույցներ»:

417 Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ԵԱՀԿ-ի հովանավորությամբ կատարված հարցում (2019թ.): «Հիմնական զեկույց»: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն: Վիեննա:

- Դեպքի վայր հասնելուն պես տուժողին մեկուսացնել ենթադրյալ իրավախախտից
- Պարզել տանը զենքի առկայությունը և ի պահ վերցնել այն
- Ցույց տալ տուժողին, որ համակարգը հանձնառու է ապահովել նրա անվտանգությունը
- Պարզել, թե ինչ է տեղի ունեցել
- Նույնացնել բոլոր ներկաներին (եթե ԸԲ-ի վայրում եք)
- Կապվել բռնության ենթարկված անձանց ծառայությունների հետ
- Լուրջ վերաբերվել տուժողի բողոքին
- Ապահովել, որ տուժողը կարողանա ազատորեն խոսել գաղտնիության պայմաններում
- Լսել, հավատալ նրա պատմությանը և գաղտնի պահել տեղեկատվությունը
- Խոսել դրական ոճով
- Անցկացնել ռիսկի գնահատում
- Դեպքի վայր ուղարկել վերապատրաստված կին ոստիկանների (հնարավորության դեպքում)
- Ուսումնասիրել դեպքի վայրի հարակից տարածքը (այն, ինչ տեսնում եք դեպքի վայրում, կարող է չարտացոլել այն, ինչ իրականում տեղի է ունեցել կամ այն ինչ ակնկալում էիք)
- Գիտակցել տուժողի առջև ծառացած խնդիրները (ապրումների/տրավմայի պատճառով տուժողները կարող են չվարվել այնպես, ինչպես կարելի էր ակնկալել)
- Տուժողին վերաբերվել կարեկցանքով և զգայունությամբ
- Համբերատար լինել տուժողի նկատմամբ
- Խուսափել կեղծ խոստումներ տալուց
- Պահպանել դեպքի վայրը Քաղաքացիներից պահանջել և ստանալ անհրաժեշտ բացատրություններ Հետևել ոստիկանական ակտերի պահանջներին

Ներդիր 17. Տրավմայի նշաններ տուժողի/բռնության ենթարկված անձի մոտ [418]

- Գերզգայունություն
- Թերահավատություն
- Կենտրոնանալու ունակության նվազում
- Քրոնիկ ցավ/գլխացավեր
- Թմրանյութերի և ալկոհոլի չարաշահում
- Ուտելու խանգարումներ
- Ոչ նորմալ ինքնազգացում կամ մարմնի անզգայնություն
- Ինքնակործանող պահվածք
- «Սեփական ես»-ի զգացողության կորուստ
- Ապագայի զգացողության կորուստ՝ անհույսություն
- Ընդհանուր անհանգստություն/խուճապի նոպաներ
- Անզգայացում
- Հետաքրքրության կորուստ
- Դիսոցիացիա
- Դեպրեսիա
- Հիշողությունների մասնակի կամ ամբողջական բացակայություն
- Զգացմունքային ընկճվածություն
- Մղձավանջներ և հետադարձ կրկնվող հիշողություններ
- Ամոթ և անարժեքության զգացմունք

Իրավապահ մարմինների և արդարադատության համակարգի հետ գործ ունենալիս տուժողի համար վճռորոշ նշանակություն ունի ոստիկանության աշխատակիցների հետ առաջին շփումը: Ոստիկանության աշխատակիցների բացասական կամ խրատողական վերաբերմունքի դեպքում տուժողը հետագայում կարող է խուսափել ոստիկանություն կամ արդարադատության համակարգ

418 Գենդերային հիմքով բռնության վերաբերյալ վերապատրաստման ձեռնարկ Ուգանդայի դատական ծառայողների համար (ՄԱԿ-ի Կանայք, չհրապարակված 2019 թ.), Մեջբերված Ֆերնանդես, Մ., Թաունսլի, Ջ. աշխատությունում (2021թ.): «Բռնության ենթարկվող կանանց և աղջիկների նկատմամբ ոստիկանական ծառայությունների գենդերազգայուն արձագանքման ձեռնարկ. բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար»: ՄԱԿ-ի Կանայք, ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (ՄԱԹՀՊԳ) և Կին ոստիկանների միջազգային ասոցիացիա (IAWP):

դիմելուց[419]: Կարևորն այն է, որ ոստիկանությունը հանձնառու լինի տուժողի անվտանգության և պաշտպանության ապահովմանը և լուրջ վերաբերի նրա բողոքին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտանեկան բռնության դեպքերը պետք է դիտվեն որպես լուրջ, կյանքին սպառնացող հանցագործություններ և դրանց տրվի բարձր առաջնահերթություն:

Ոստիկանության դերը առաջին իսկ ահազանգից կենսական նշանակություն ունի ընտանեկան բռնությունը դադարեցնելու համար: Հերթափոխի ծառայության աշխատակիցները պետք է լիարժեք պատկերացում ունենան կատարվածի մասին՝ տուժողին և դեպքի վայր մեկնած ոստիկանության ծառայողներին պաշտպանելու համար:

Ոստիկանության հերթափոխի ծառայության աշխատակիցը պետք է ուշադրություն դարձնի կողմնակի աղմուկին, տա մասնագիտական և հստակ հարցեր՝ վտանգի անհապաղ գնահատման համար:

Հայաստանի ոստիկանության արագ արձագանքման հեռախոսահամարը 1-02 է: 2020 թվականի օգոստոսի 8-ից անչափահասների խնդիրներին և ընտանեկան բռնությանը վերաբերող հարցերին օգնելու համար հասանելի է ոստիկանության աջակցության գիծ: Միևնույն ժամանակ, ամեն աշխատանքային օր՝ ժամը 11-ից մինչև երեկոյան 12-ը, ծնողները կարող են Skype-ով դիմել ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն՝ իրենց երեխաների հետ կապված իրավական օգնության վերաբերյալ խորհրդատվության համար: Օգնության տրամադրումը ղեկավարում է ՀՀ ոստիկանության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության պետը[420]:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշմամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը, համաձայն որի հաղորդումները, անկախ իրավախախտումների կատարման կամ պատահարների առաջացման վայրից և ժամանակից, ինչպես նաև դրանցում պարունակվող տեղեկությունների ամբողջականությունից, պարտադիր ենթակա են ընդունման ոստիկանության տարածքային մարմիններում և գրանցման ոստիկանության՝ հերթապահ մաս ունեցող տարածքային մարմիններում:

Ոստիկանության տարածքային մարմինների հերթապահ մասերը ապահովում են հաղորդումների շուրջօրյա ընդունումն ու գրանցումը: Հաղորդումների ընդունում և գրանցում կարող են իրականացնել նաև ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը, ՆԳՆ Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունը, Ճանապարհային ոստիկանությունը, Պարեկային ծառայությունը:

Էլեկտրոնային եղանակով ստացված հաղորդումները գրանցվում են, եթե դրանք ուղարկվել են ոստիկանության dimum@police.am կամ press@police.am էլեկտրոնային հասցեներին:

Հեռախոսային կապի միջոցով ոստիկանության իրավասու ստորաբաժանումներ, Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն և ոստիկանության տարածքային մարմինների հերթապահ մասեր և հերթապահ ծառայություններ ուղղված բոլոր զանգերը, ինչպես նաև ելքային զանգերը ձայնագրվում են, եթե համապատասխան ստորաբաժանումը, հերթապահ մասը կամ հերթապահ ծառայությունն ապահովված են հեռախոսային խոսակցությունները ձայնագրող տեխնիկական միջոցներով: Ձայնագրությունները պահպանվում են երեք ամիս և ենթակա են ոչնչացման ինքնաշխատ կարգով:

---

419 S. Կ. Լոգան և այլք, «Կանայք և վիկտիմիզացիան. նպաստող գործոններ, միջամտություններ և հետևանքներ» (Վաշինգտոն ԿՆ, Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի մամուլ, 2006թ.):

420 ՀՀ ոստիկանության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչությունը ստեղծվել է 2018 թվականին:

Ստուգում իրականացնող ոստիկանության ծառայողը պարտավոր է պարզել հաղորդում ներկայացնող անձի վերաբերյալ տվյալների լրիվությունն ու իսկությունը: Տվյալների ոչ լրիվության դեպքում ոստիկանության ծառայողը ոստիկանության իրավասության սահմաններում պետք է միջոցներ ձեռնարկի դրանք ճշտելու ուղղությամբ:

Ոստիկանության տարածքային մարմնում հաղորդումը գրանցելուց հետո, այն տեղում ստուգելու անհրաժեշտության դեպքում, հերթափոխի ավագն օպերատիվ խումբ է ուղարկում իրավախախտման կամ պատահարի վայր, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում իրավախախտումները կանխելու կամ խափանելու, պետական այլ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ փրկարար ծառայություն և բժշկական կազմակերպությունների փոխօգնությանը դիմելու ուղղությամբ և դրա մասին զեկուցում է ոստիկանության տարածքային մարմնի պետին կամ պատասխանատուին, որոնք էլ, անհրաժեշտության դեպքում, կազմակերպում են օպերատիվ խմբի մեկնումը դեպքի վայր:

Ստուգման և ձեռնարկված այլ միջոցառումների արդյունքները զեկուցվում են իրավասու ստորաբաժանման ղեկավարին՝ սույն կարգով սահմանված որոշումները կայացնելու համար:

ՀՀ ոստիկանության պետի 2014 թվականի հունիսի 20-ի թիվ 2121-Ա հրամանով հաստատվում է ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ ստորաբաժանումների գործունեության կազմակերպման կարգը, որը կարգավորում է հերթափոխի ծառայության պարտականությունները տարբեր իրավիճակներում: Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության պետի թիվ 2121-Ա հրամանի համաձայն՝ հերթափոխի ծառայությունը, անկախ տարածքային իրավասությունից, իրավախախտումների և հանցագործությունների մասին հաղորդումներ ստանալուց հետո պարտավոր է անհապաղ՝ **ոչ ուշ, քան 10 րոպեի ընթացքում** կազմակերպել օպերատիվ-հետախուզական, առաջին արձագանքման խմբերի, համապատասխան տարածքը սպասարկող ոստիկանության ծառայողների, պարեկային ծառայության և ճանապարհային պարեկապահակային ծառայության ջոկատների ժամանումը դեպքի վայր՝ թարմ հետքերով իրավախախտումը կանխելու, խափանելու և բացահայտելու, իրավախախտին ն ձերբակալելու, տուժողների կարիքներին արձագանքելու, անհապաղ գործողություններ ձեռնարկելու և այլնի համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ՀԵՐԹԱՊԱՀ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՍՊԵՏՉԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընտանեկան բռնության ահազանգ ստանալիս ոստիկանության դիսպետչերը պետք է ձեռնարկի հետևյալ **նվազագույն քայլերը**.

Քայլ 1. Տրվում է առաջնահերթություն, անկախ մարդկանց կյանքին վտանգ սպառնալու մասին հստակ ապացույցների առկայության, դեպքին միջամտում է մեքենայի/մոտոցիկլետի ուղեկցությամբ ոստիկանության առնվազն երկու ծառայող:

Քայլ 2. Տեղեկատվության հավաքում. ոստիկանության դիսպետչերը տուժողին չպետք է հեռախոսով հարցնի, թե ինչ է նա մտադիր անել, որոշի մեղավորին և անմեղին, այլ հնարավորինս արագ համապատասխան տեղեկատվություն հավաքի՝ պարզ և հստակ հարցեր տալով հետևյալ մասին.

- դեպքի վայրը, հասցեն, բնակարանի համարը, գտնվելու վայրը գտնելու այլ տեղեկություններ, կոնտակտային հեռախոսահամարը,
- զանգահարողի ինքնությունը, անունը, տարիքը,
- ի՞նչ է տեղի ունեցել,
- վիրավորների առկայությունը: Եթե վիրավորներ կան, անմիջապես զանգահարել շտապօգնություն. եթե դա դեռ չի արվել,
- արդյո՞ք դեպքի վայրում ներկա են գտնվում երեխաներ,
- հրազենի կամ սառը զենքի կամ որևէ առարկայի օգտագործումը կամ օգտագործման սպառնալիքները,
- արդյո՞ք իրավախախտը թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ է,
- արդյո՞ք ենթադրյալ իրավախախտը դեռ դեպքի վայրում է: Եթե ոչ, հարցրեք, թե որտեղ կարող է նա լինել,
- արդյո՞ք նախկինում տուժողը դիմել է ոստիկանություն,
- դատարանի կողմից սահմանափակող/պաշտպանական որոշման առկայությունը:

Քայլ 3: Գտնել լրացուցիչ տեղեկություններ. Ոստիկանության դիսպետչերը պետք է կարողանա տեղեկություն որոնել ոստիկանության ֆայլերում (սովորաբար էլեկտրոնային ձևաչափով պահվող) և դեպքին միջամտող ոստիկանության ծառայողներին տրամադրի տեղեկատվություն՝ այդ նույն հասցեում բնակվող տուժողի/կատարողի վերաբերյալ ցանկացած նախկին հեռախոսազանգերի և միջամտությունների և դրանց ժամանակի մասին, և ներկայացնի կատարվածի ամփոփ պատկերը (անկախ տուժողի հեռախոսով հաղորդածից), ինպես նաև հրազենի առկայության մասին տուժողի հաղորդումը:

Տուժողի հետ շփվելիս դիսպետչերը պետք է հաշվի առնի, որ վերջինս գտնվում է հուսահատ, վախեցած, հուզականորեն շփոթված, սպառնալիքների և/կամ ֆիզիկական վնասվածքների ազդեցության տակ գտնվող վիճակում, նաև, ենթադրյալ բռնարարից ոչ հեռու գտնվելու պատճառով, կարող է հակված լինել նվազեցնելու դեպքի լրջությունը: Հնարավոր է, որ տուժողը չի կարողանում անկաշկանդ խոսել, կամ բռնարարի մոտ ձևացնում է, որ զանգահարում է ընկերոջը կամ ընտանիքի անդամին, այլ ոչ թե ոստիկանություն:

Հեռախոսազանգին պատասխանող դիսպետչերը պետք է փորձի հանգստացնել տուժողին, ինչպես նաև տեղեկացնի նրան, որ ոստիկանությունը շուտով կժամանի իր հասցեով: Դիսպետչերը պետք է խորհուրդ տա տուժողին հնարավորության դեպքում սպասել հարևան տանը կամ չանջատել հեռախոսակապը մինչև ոստիկանության ժամանումը[421]:

Հեռախոսազրույցի ընթացքում դիսպետչերը պետք է ուշադիր լինի և ձայնագրի ցանկացած լսվող կողմնակի աղմուկը, օրինակ՝ բղավոցները, ճչոցները, լացը, կոտրվող առարկաների աղմուկը: Դա կարևոր է դեպքի վայր ժամանող ոստիկանության աշխատակիցների համար՝ վտանգի մակարդակն արագ գնահատելու համար: Նման ձայնագրությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև գործի հետագա քննության ընթացքում:

Ընտանեկան բռնության վայրում ոստիկանության արձագանքը վարչական կամ քրեական վարույթի համար հիմք է հանդիսանում և չափազանց կարևոր է տուժողի անվտանգության համար: Զոհակենտրոն մոտեցումը մեծացնում է տուժողի անվտանգությունը, և հստակ ուղերձ հղում իրավախախտին, որ նրա վարքագիծն անընդունելի է: Եվրախորհրդի կոնվենցիայով նման դեպքերում

421 «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում իրավապահ մարմինների և արդարադատության ծառայողների արդյունավետության բարձրացում»: Աննա Կոստանզա Բալդրի և Էլիզաբեթ Դուբան, 2016թ.:

պահանջվում է անհապաղ միջամտություն [422].

Ոստիկանության պետի թիվ 16-Լ հրամանի համաձայն, հանցագործությունների և ընտանեկան բռնության տարրեր պարունակող միջադեպերի մասին տեղեկատվություն պարունակող հաղորդում ստանալիս դեպքի վայր ժամանած օպերատիվ խմբում ընդգրկվում է անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելմամբ ոստիկանության ստորաբաժանման (խմբի) ոստիկանության ծառայողը (ծառայողները): Այս հրամանը երաշխավորում է, որ ընտանեկան բռնության դեպքերով զբաղվեն իրավասու ոստիկանները, և ոստիկանության ստորաբաժանում հրավիրված ընտանեկան բռնության տուժողները տեղափոխվեն ոստիկանական բաժանմունքի առանձին, հանգիստ սենյակ:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ տուժողների իրավունքները և շահերը նախաքննական և դատական վարույթի բոլոր փուլերում պաշտպանելու նպատակով, ներառյալ՝ ա. տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին և վկաներին՝ պաշտպանելով ճնշումներից, վրեժխնդրությունից և կրկնակի վիկտիմիզացիայից

- հնարավորություն տալով տուժողներին, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով, արտահայտելու իրենց տեսակետը և ներկայացնելու ապացույցներ և ապահովելով նրանց տեսակետները, կարիքները և մտահոգություններն անձամբ կամ միջնորդ անձի միջոցով քննարկման առարկա դարձնելու հնարավորությունը.
- ապահովելով, հնարավորության դեպքում, նախաքննության մարմնի գտնվելու վայրում կամ դատարանում տուժողների և կատարողների միջև շփումների բացառումը.
- ապահովելով անկախ և ձեռնահաս թարգմանիչներ՝ թե այն դեպքերում, երբ տուժողը հանդիսանում է դատավարության կողմ, և թե այն դեպքերում, երբ նա տալիս է ցուցմունքներ.
- տուժողների տալով, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ենթադրյալ կատարողի բացակայության պայմաններում, ցուցմունք տալու հնարավորություն, մասնավորապես՝ հնարավորության դեպքում, հաղորդակցման համապատասխան տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին, համապատասխան դեպքերում, պետք է տրամադրվեն պաշտպանության հատուկ միջոցներ, որոնք հաշվի կառնեն երեխայի լավագույն շահերը: [423]

6.2.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՅՐՈՒՄ

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան հատուկ ուշադրություն է դարձնում ոստիկանության դերին և պատասխանատվությանը ներգրավվածության բոլոր փուլերում: Համաձայն 50-րդ հոդվածի՝ ոստիկանությունը պարտավոր է «արձագանքել անհապաղ և պատշաճ կերպով՝ տուժողների համար ապահովելով համարժեք և անհետաձգելի պաշտպանություն», նաև անհապաղ և պատշաճ կերպով ապահովել «կանխարգելիչ գործուն միջոցների կիրառումը և ապացույցների հավաքումը»: Ոստիկանության համար դրա գործնական և օգտակար օրինակներն են.

- Իրավունք ունենալ մուտք գործել այն վայրը, որտեղ գտնվում է վտանգված անձը.

422 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, հոդված 52:

423 CETS 210 - Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, հոդված 56:

- Տուժողներին համապատասխան վերաբերմունք ցուցաբերել և խորհուրդներ տալ.
- Տուժողներին անհապաղ լսել հատուկ վերապատրաստված և անհրաժեշտության դեպքում կին աշխատակիցների կողմից այն տարածքներում, որոնք նախատեսված են տուժողի և իրավապահ մարմինների միջև վստահության հարաբերություններ հաստատելու համար:

Որպեսզի ոստիկանները գործեն տեղում, նրանց անհրաժեշտ է մուտք ունենալ ընտանեկան բռնության վայր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդված 32), քրեական օրենսգիրքը (հոդված 207) և քրեական դատավարության օրենսգիրքը (հոդված 26) երաշխավորում են բնակարանի անձեռնմխելիությունը: Սակայն, գաղտնիության և ընտանեկան կյանքի իրավունքը, ինչպես նաև տան անձեռնմխելիությունը բացարձակ իրավունքներ չեն. ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է բնակարանի անձեռնմխելիության սահմանները. «Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Հայաստանի Սահմանադրությունը և օրենքը պահանջում են բնակարան մուտք գործելու համար դատարանի որոշման կամ ձերբակալման որոշման առկայություն: **Սակայն, եթե տան սեփականատերը, որտեղ տեղի է ունենում ընտանեկան բռնություն, դեմ չէ ոստիկանության աշխատակիցների մուտքին կամ համաձայն է, որ ոստիկանության աշխատակիցները տուն մտնեն, ոստիկանական միջամտության համար խոչընդոտներ չկան:** Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի՝ բացառությամբ դեպքի վայրի զննության, անձի բնակարանում ապացուցողական և վարութային այլ գործողություններ կարող են կատարվել դատարանի որոշմամբ կամ տվյալ անձի համաձայնությամբ: Ոստիկանության մասին օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է **ոստիկանության իրավունքը հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հետապնդելիս հանցագործություն կատարվելու կամ կատարված լինելու, ինչպես նաև դժբախտ պատահարի մասին բավարար տվյալների առկայության դեպքում վթարների, համաճարակների, զանգվածային անկարգությունների ժամանակ քաղաքացիների և հասարակական անվտանգության ապահովման անհրաժեշտության, ինչպես նաև հետաձգում չհանդուրժող այլ դեպքերում մուտք գործելու բնակարաններ, շինություններ, տարածքներ, հողամասեր, այդ թվում՝ արգելքները վերացնելու միջոցով:**

Տան սեփականատիրոջը անմիջապես տրվում է որոշում, որտեղ նշվում է տուն մուտք գործելու պատճառը: Արձանագրվում են նաև տան սեփականատիրոջ կողմից արված ցանկացած դիտողություն: Եթե ոստիկանության գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ, ապա ոստիկանությունն այդ մասին 24 ժամվա ընթացքում ծանուցում է դատախազին.

Քանի որ ընտանեկան բռնության դեպքերը հաճախ տեղի են ունենում տան պայմաններում, բողոքողը կարող է լինել միակ վկան: Ապացույցներ ներկայացնելը նրանց համար կարող է չափազանց դժվար լինել կամ լրացուցիչ խնդիրների պատճառ դառնալ, օրինակ՝ հաշվեհարդարից կամ իրենց երեխաների անվտանգությունից վախենալու, ընտանեկան ճնշումների կամ լուրջ ֆինանսական հետևանքների, «բացահայտվելու» վախի, արդարադատության համակարգի կամ մասնագիտացված օժանդակ կազմակերպությունների կողմից աջակցության բացակայության վախի կամ կամ մեղադրյալի նկատմամբ հուզական կապվածության կամ հավատարմության պատճառով, ինչը հանգեցնում է անորոշության այն գործողությունների վերաբերյալ, որոնք նրանք պետք է ձեռնարկեն: Ոստիկանության աշխատակիցների կողմից ընտանեկան բռնության բնույթի և տուժողի և կատարողի միջև փոխհարաբերությունների ճիշտ ընկալումը առանցքային նշանակություն ունի լավագույն արձագանքն ապահովելու համար[424]:

---

424 Ընտանեկան բռնության վերաբերյալ ուղեցույցներ դատախազների համար. https://www.cps.gov.uk/legal-guidance/domestic-abuse-guidelines-prosecutors

Տուժողներն ի սկզբանե կանգնած են ոստիկանությանը բռնություն հաղորդելու կամ չհաղորդելու դժվար երկընտրանքի առջև և այդ առումով կարևոր է, որ ցանկացած վարույթի ընթացքում նրանց նկատմամբ ցուցաբերեն պատշաճ ուշադրություն և աջակցություն:

Ընդհանուր առմամբ, ոստիկանության աշխատակիցները ընտանեկան բռնության մասին հաղորդումների նկատմամբ պետք է հավասարակշռված մոտեցում ցուցաբերեն, միևնույն ժամանակ հաշվի առնելով բռնարարքի ծանրության և մարդկանց վրա դրա ազդեցության աստիճանը: Պետք է խուսափել անտեղի, վախեցնող և հեգնական հարցերից, քանի որ դրանք կարող են հանգեցնել տուժողի հիասթափության, թերահավատության կամ նրա մոտ վախի զգացմունքի առաջացման, որի հետևանքով տուժողը կխուսափի ոստիկանության հետ համագործակցելուց[425]:

6.2.3 ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

2022 թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը սահմանափակ գործառույթներ ունի քրեական վարույթի շրջանակներում ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու առումով: Հիմնականում, ոստիկանությունը ներգրավվում է նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող հետաքննության ընթացքում, գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն `ոստիկանությունը հետաքննության մարմիններից է: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննիչը՝

1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքին համապատասխան՝ իրականացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.
2. կատարում է գաղտնի քննչական գործողություններ.
3. օժանդակում է ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանը.
4. օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքներն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է քննիչին.
5. հետաքննության կատարման ընթացքում ենթադրյալ այլ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում է քննիչին.
6. հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կատարում է ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին.
7. մինչև հետաքննության մարմնի վարչական շենք բերելը անհապաղ ազատ է արձակում է իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով հետաքննության մարմնի պետին.
8. միջոցներ է ձեռնարկում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները և փաստաթղթերը, ինչպես նաև դեպքի վայրը պահպանելու ուղղությամբ.
9. իրականացնում է քրեական դատավարության օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

425 Բալդրի. Ա. Ց.: Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ, 2016թ.:

Ընդ որում, գաղտնի քննչական գործողությունների կատարումը կամ ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանը օժանդակելը ոստիկանն կարող է իրականացնել բացառապես քննիչի հանձնարարությամբ:

Ինչ վերաբերում է հետաքննության մարմնի պետին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմնի պետը՝

1) իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է հետաքննիչի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունների իրականացումը.

2) անձամբ իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները.

3) քննիչի հանձնարարության հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին.

4) վերադաս դատախազին եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում հսկող դատախազի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

5) հսկող դատախազին եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում քննիչի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

6) դատախազի գրավոր պահանջով նրա ստուգմանն է ներկայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը.

7) անհապաղ ազատ է արձակում հետաքննիչի նախաձեռնությամբ ձերբակալված և հետաքննության մարմնի վարչական շենքում գտնվող անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին.

8) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Դեպքի վայրի պահպանություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը դեպքի վայրի զննության իրավասություն չունի: Սակայն, ոստիկանությանը հաղորդվող ընտանեկան բռնության դեպքերից շատերը իրենց մեջ ոչ թե հանցակազմ են պարունակում, այլ վարչական իրավախախտման դրսևորումներ են: Ավելին՝ ընտանեկան բռնության դեպքի մասին հաղորդմանն արձագանքելիս՝ սկզբնապես ոչ միշտ է հստակ լինում, արդյոք արարքը հանցակազմ է պարունակում, թե ոչ, հետևաբար ոստիկանությունն իր իրավասության շրջանակներում իրականացնում է անհրաժեշտ գործառույթները՝ ժամանում դեպքի վայր, լսում տուժողին և հնարավոր իրավախախտին, կազմում նախնական զրույցի համապատասխան արձանագրություն՝ իրավախախտման էական հանգամանքները ամրագրելով, ապահովում տուժողի անվտանգությունը, իրականացնում դեպքի վայրի պահպանություն:

Դեպքի վայրի զննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական գործողության տեսակ է: Ի տարբերություն 1998 թ.-ին ընդունված և մինչ 2022 թ.-ի հուլիս 1-ը գործող քրեական օրենսգրքի, որը թույլ էր տալիս հետաքննության մարմնին, այդ թվում՝ ոստիկանությանը, ինքնուրույն իրականացնել առանձին քննչական գործողություններ, ՀՀ գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ այդ գործողությունները պետք է իրականացվեն քննիչի կողմից, իսկ հետաքննության մարմնի ներգրավումը պետք է լինի նախնական քննությանը աջակցելու նպատակով

«Դեպքի վայրը» ներառում է շենք, շինություն, ցանկացած այլ հաստատություն կամ այն տարածքի մի մասը, որտեղ տեղի է ունեցել տվյալ դեպքը, կամ մեկ այլ վայր, որը նախապես ընդունված է որպես ոտնձգության կատարման վայր: Դեպքի վայրի զննությունը կատարվում է ոտնձգության հետքերի կամ այլ իրեղեն ապացույցների հայտնաբերման, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տվյալների փաստաթղթավորման նպատակով: Դեպքի վայրի զննությունը բացառիկ նշանակություն ունի իրավախախտումների, այդ թվում՝ հանցագործությունների բացահայտման և լուծման համար. հետևաբար, դրա պահպանությունը պետք է իրականացվի անհապաղ և բարձր որակով՝ ընթացակարգային բոլոր կանոններին համապատասխան:

Այս համատեքստում հիշատակման է արժանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասը, որը կիրառելի է վարչական իրավախախտումների նկատմամբ: Այսպես, հիշյալ հոդվածը սահմանում է, որ վարչական մարմինը, անհրաժեշտություն դեպքում, կարող է նշանակել նաև ֆիզիկական անձի, **տեղանքի**, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում: Վարչական մարմնի որոշմամբ զննմանը կարող են ներկա գտնվել վարույթի մասնակիցները: Վկայակոչված նորմից հետևում է, որ Ոստիկանությունը լիազորված է անհրաժեշտության դեպքում վարչական վարույթի շրջանակներում իրականացնելու դեպքի վայրի զննում: Այս առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ իրավախախտման՝ հանցակազմի տարրեր պարունակելու դեպքում վարչական վարույթի շրջանակներում ոստիկանության աշխատակցի կազմած արձանագրությունը որպես արտավարութային փաստաթուղթ կարող է քրեական վարույթում ճանաչվել որպես ապացույց և ունենալ ապացուցողական էական նշանակություն: Շարադրվածից հետևում է, որ պատշաճ ապացուցման համատեքստում զննման արձանագրության՝ օրենքով սահմանված կարգով կազմված լինելը կարևոր հանգամանք է:

Դեպքի վայրի զննության հիմնական նպատակներն են.

- դեպքի իրավիճակի և հանգամանքների, առանձին առարկաների պայմանների և բնութագրերի, բռնարարի կատարած փոփոխությունների ուսումնասիրություն և գրանցում.
- հետքերի և այլ առարկաների հայտնաբերում և գրանցում.
- ապացուցողական նշանակության տեղեկատվության այլ աղբյուրների բացահայտում.
- գրանցված հետքերով փաստերի միջև պատճառահետևանքային կապի հաստատում և այլն:

Դեպքի վայրի պահպանության մարտավարությունը կարելի է բաժանել երեք **հիմնական հաջորդական փուլերի.**

1. Նախապատրաստական
2. Ընթացակարգային
3. Եզրափակիչ

1. Նախապատրաստական փուլը ներառում է գործողություններ, որոնք ձեռնարկվում են դեպքի վայր ժամանելուց առաջ և դեպքի վայր ժամանելիս:

Դեպքի վայր ժամանելուց առաջ և դեպքի վայր ժամանելիս իրականացնում են հետևյալ նախապատրաստական գործողությունները.

- նախնական տեղեկություններ են հավաքում տեղի ունեցած դեպքի, ինչպես նաև իրավախախտի/իրավախախտների և տուժողների վերաբերյալ.
- միջոցներ են ձեռնարկում դեպքի վայրում անվտանգություն ապահովելու համար.
- ստուգում տեխնիկական սարքավորումների անխափան աշխատանքը.

- միջոցներ են ձեռնարկում դեպքի վայրում անհրաժեշտ օպերատիվ միջոցառումներ իրականացնելու համար.
- միջոցներ են ձեռնարկում դեպքի վայր չարտոնված անձանց մուտքը բացառելու և նրանց հեռացնելու համար.
- ապահովում են փորձագետի, դեպքի վայրի զննության մասնակիցների և վկաների ներկայությունը.
- միջոցներ են ձեռնարկում դեպքի վայրում որոնման հնարավորությունները բարելավելու համար: Եթե դեպքի վայրի զննման ընթացքում մթնում է կամ զննումն իրականացվում է եղանակային անբարենպաստ պայմաններում, և որոշում է կայացվում դեպքի վայրի զննումը հետաձգելու մասին, ապա իրականացվում են դեպքի վայրի վերահսկման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ քայլերը.
- տեղեկատվություն է հավաքվում վկաներից, տուժողներից՝ պարզելու, թե արդյոք դեպքի վայրում նկատելի են որևէ փոփոխություններ.
- Միջոցներ են ձեռնարկում դեպքի վայրում հետքերի, այդ թվում՝ դրանց տեսքի, դիրքի, բնութագրերի և այլի ոչնչացումը կամ վնասումը կանխելու ուղղությամբ:

2. Ընթացակարգային փուլը ներառում է գործողությունները դեպքի վայրում:

Քննության ընթացքում իրականացվում է դեպքի վայրի զննություն հայտնաբերվում է հետքերի առկայությունը և, հավաքված տեղեկատվության հիման վրա, որոշվում են դեպքի վայրի սահմանները, ինչպես նաև, քննություն սկսելու ելակետը և անհրաժեշտ դեպքի վայրում տեսաձայնագրություններ կամ լուսանկարներ կատարելու անհրաժեշտությունը:

Ոտնձգության քննության ընթացքում հայտնաբերված հետքերը, գործիքները և առարկաները, որոնք կարող են առնչվել դեպքին, ուսումնասիրվում են, լուսանկարվում, առգրավվում, փաթեթավորվում, համարակալվում, կնքվում և փաստաթղթավորվում դեպքի վայրի զննության հաշվետվությունում՝ վկայություն տված անձանց ներկայությամբ և փորձագետի մասնակցությամբ::

3. Դեպքի վայրի զննության եզրափակիչ փուլը /արդյունքների արձանագրում/

Դեպքի վայրի զննության արդյունքները արձանագրվում են սահմանված ձևով կազմված հաշվետվությունում, որին կցվում է դեպքի վայրի նախանկարն ու լուսանկարները: Դեպքի վայրի զննության հաշվետվությունը դիտարկվում է որպես ապացույց: Հաշվետվություն կազմելիս անհրաժեշտ է հետևել ստորև նշված հիմնական կանոններին.

- մատչելի շարադրում՝ պարզ և հասկանալի տերմինաբանության օգտագործմամբ,
- յուրաքանչյուր առարկայի նկարագրություն՝ նկարագրելով առարկայի ընդհանուր տեսքը և կարևոր մանրամասները,
- առարկաների միջև հեռավորությունը նշվում է ճշգրիտ չափումների հիման վրա,
- յուրաքանչյուր հաջորդ առարկայի նկարագրությունը տրվում է միայն նախորդ առարկայի նկարագրությունը ամբողջությամբ ավարտելուց հետո,
- նույն կատեգորիայի առարկաներին տրվում է նույն անվանում՝ ավելացնելով նույնականացման հատկանիշները,
- անձը կատարում է դեպքի վայրում առկա բոլոր առարկաների զննումը, եթե դա չի խախտում ներկա գտնվող անձանց իրավունքները:

Դեպքի վայր ժամանելիս բացատրություններ վերցնելը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը, վարույթի մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնու-

թյամբ, որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց ցուցմունքները, որոնց կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող տեղեկություններ: Իր ցանկությամբ վկան կարող է ցուցմունքներ տալ գրավոր՝ առանց վարչական մարմին ներկայանալու: Գրավոր ցուցմունքի յուրաքանչյուր էջի վրա վկան ստորագրում է, որը հաստատվում է վարչական մարմնի կնիքով՝ ստորագրման տարվա, ամսվա և ամսաթվի նշմամբ: Վկային հարցեր տալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում նա վարչական մարմնի կողմից հրավիրվում է այդ մարմին:

Նույն օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Ցուցմունքի բովանդակությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 51-րդ կետի համաձայն՝ «**ցուցմունք**» նշանակում է **ցուցմունք՝** ձերբակալված անձի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի կողմից հարցաքննության, առերեսման կամ տեղում ցուցմունքների ստուգման, փորձագետի հարցաքննության ընթացքում գրավոր կամ բանավոր հաղորդված և պատշաճ արձանագրված տվյալներ:

Թեև Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի հստակեցնում ցուցմունք վերցնելու ընթացակարգը, սակայն վարչական վարույթի մասակիցների, վկաների իրավունքների առավելագույն երաշխավորման, միջազգային իրավական կանոնակարգումներին համահունչ վարքագիծ դրսևորելու նպատակով, այստեղ ևս կիրառելի են քրեական դատավարության օրենսգրքի՝ ցուցմունք վերցնելուն վերաբերող պահանջները: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը, այդ թվում՝ հարցաքննությանը, ներգրավվում է Կառավարության սահմանած կարգով որակավորված հոգեբան: Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանն, այդ թվում՝ հարցաքննությանը, իրավունք ունի մասնակցելու նրա օրինական ներկայացուցիչը:

Ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությանը մասնակցող հոգեբանին և օրինական ներկայացուցչին բացատրվում է հարցեր տալու, դիտողություններ անելու նրանց իրավունքը, իսկ հոգեբանին՝նաև կատարվող քննչական գործողության վերաբերյալ մասնագիտական առաջարկներ ներկայացնելու իրավունքը: Ոստիկանության աշխատակիցն իրավունք ունի հանելու տրված հարցերը կամ չընդունելու ներկայացված առաջարկները, սակայն ամեն դեպքում դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

Հոգեբանի առաջարկությամբ և անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ցուցմունքները վերցվում են այնպիսի պայմաններում (վայրը, տևողությունը, մասնակիցների շրջանակը և այլն), որոնք թույլ կտան առավելագույնս երաշխավորել նրա լավագույն շահերը:

Հոգեբանի առաջարկությամբ և անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությունն սկսելուց առաջ ոստիկանը անչափահասին տրվելիք հարցերը ձևակերպում և համաձայնեցնում է հոգեբանի հետ:

Հոգեբանի առաջարկությամբ և անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ձերբակալվածի, մեղադրյալի կամ նրա պաշտպանի հարցերն անչափահասին տրվում են հոգեբանի հետ համաձայնեցնելուց հետո՝ առանց անչափահասի հետ անմիջական հաղորդակցության:

Ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությանը մասնակցող և տասնվեց տարին չլրացած անչափահասին բացատրվում է ճշմարտացի ցուցմունք տալու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունք տալուց հրաժարվելու և սուտ ցուցմունք տալու համար

սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Խլություն կամ համրություն ունեցող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությանը ներգրավվում է նրա հետ հաղորդակցվելու ունակ թարգմանիչ: Հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողությունը կատարվում է միայն ձեռնհաս բժշկի գրավոր թույլտվությամբ: Այդ թույլտվությամբ կարող է սահմանվել նաև տվյալ քննչական գործողությունը բժշկի ներկայությամբ կատարելու պայման, որը պարտադիր է ոստիկանի համար:

Ցուցմունք վերցնելիս անհրաժեշտ է հաստատել հետևյալը.

- դեպքի հանգամանքները (ժամանակը, վայրը, կատարման եղանակը և այլն).
- անձի առնչությունը դեպքին.
- իրավախախտման մեջ քրեական կամ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով նախատեսված արարքի հատկանիշների առկայությունը.
- անձի մեղավորությունը օրենքով արգելված արարքի կատարման մեջ.
- օրենսդրությամբ նախատեսված մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքները.
- իրավախախտման կատարմանը նպաստող հանգամանքները.
    - ապացույցների հայտնաբերմանը նպաստող հանգամանքները.
    - ապացույցների ստուգման և գնահատման համար անհրաժեշտ հանգամանքները.
    - ապացուցողական նշանակություն չունեցող հանգամանքները, որոնք, սակայն, կարող են մարտավարական նշանակություն ունենալ.
    - իրավախախտման պատճառ կամ պայման հանդիսացած գործոնները

Ցուցմունք վերցնելը նախատեսում է հետևյալ չորս պարտադիր փուլերը.

- Ցուցմունք վերցնելու սկզբնական փուլը ներառում է ցուցմունք տվող անձի մոտ առկա անհանգստության, գիտակցության խաթարումների և լարվածություն նվազեցում և վստահության ձևավորում: Կատարված արարքի և գործում ներգրավված անձանց նկատմամբ ցուցմունք տվող անձի վերաբերմունքի հիման վրա որոշվում է ցուցմունք վերցնելու հետագա մարտավարությունը: Ցուցմունք վերցնելու ամբողջ ընթացքում տուժողը և իրավախախտը պետք է լինեն առանձնացված, անաղմուկ վայրում, բացառելով միմյանց ձայնի լսելը.
- Պատմելու փուլ՝ որոշակի պատասխան չենթադրող հարցերի օգնությամբ, որոնք ուղված են ապացուցողական նշանակության նոր տվյալներ ստանալուն, այն ամենի վերականգնմանը, ինչը ցուցմունք տվողի հիշողության մեջ չի պահպանվել և այլն.
- Հարց ու պատասխանի փուլ՝ ցուցմունք տվող անձից օբյեկտիվ և ամբողջական տեղեկատվություն ստանալուն, ստացված տեղեկատվությունը հստակեցնելուն, նյութերում առկա հակասությունները շտկելուն ուղղված բոլոր մեթոդների կիրառմամբ՝ ուղիղ հարցաքննության, առկա ապացույցների ներկայացման, օպերատիվ հետախուզության տվյալների օգտագործման և այլ եղանակների միջոցով.
- Ցուցմունքներ վերցնելու վերջին փուլ, որի ընթացքում ցուցմունքը վերլուծվում և ամփոփվում է, գնահատվում են ներկայացված հանգամանքները և դրանց համապատասխանությունը իրականությանը, այնուհետև ցուցմունքն ամփոփվում է և դրա տակ դրվում են ցուցմունք տվողի և ստացողի ստորագրությունները:

Հաղորդումների և ստացված տեղեկատվության հիման վրա որոշում կայացնելը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ բացառապես քննիչն

է լիազորված քրեական վարույթ նախաձեռնել: Նա իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է՝

1) ֆիզիկական անձից.

2) իրավաբանական անձից.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ.

4) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ:

Հետևաբար՝ ոստիկանությունը, ստանալով ընտանեկան բռնության դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը և արձագանքելով դրան, եթե պարզում է, որ կատարվածում առկա են հանցակազմի հատկանիշներ, ապա այդ մասին հաղորդում է քննիչին, որն էլ նախաձեռնում է քրեական վարույթը:

Ոստիկանությունը որևէ իրավասություն չունի քրեական վարույթ նախաձեռնելու առումով, սակայն իր կողմից հավաքված տեղեկատվությունը, ապացույցները, կարևոր նշանակություն ունեն վարույթի հետագա ընթացքն ապահովելու առումով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար: Վարչական մարմինն իրավունք չունի պահանջել ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր կամ դրանց նոտարական կամ այլ կարգով վավերացված պատճեններ, որոնց ներկայացնելը կամ համապատասխան վավերացմամբ ներկայացնելը նախատեսված չէ օրենքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ևս սահմանում է նաև **ապացույց** հասկացությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցը փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալ է, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Ապացույցներ հավաքելիս պետք է նկատի ունենալ, որ տուժողը կարող է հետ վերցնել բողոքը և հրաժարվել մասնակցել կամ օգնել քննությանը: Դա կարող է տեղի ունենալ սպառնալիքների, հարկադրանքի, իրավապահ մարմինների կողմից կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկվելու նկատմամբ վախի, ընտանիքի անդամների աջակցության բացակայության, տնտեսական կախվածության կամ հաշտվելու պատճառով: Անկախ պատճառից՝ իրավապահ մարմինների աշխատակիցները կանգնած են առանց տուժողների ցուցմունքների վրա հիմնվելու գործ հարուցելու մարտահրավերի առջև: Մեծամասամբ ընտանեկան բռնությանրավախախտումներըի կատարվում են մեկուսացված վայրերում՝ առանց անմիջական ականատեսների: Սակայն ոստիկանությունը կարող է հավաքել և օգտագործել տարբեր տեսակի ապացույցներ, օրինակ՝ վկաների ցուցմունքներ (ընկերների, հարևանների, հարազատների, երեխաների և այլն), կոտրված կահույք/բջջային հեռախոսներև այլն:

Գործը քննելիս ոստիկանության աշխատակիցները պետք է փաստաթղթավորեն յուրաքանչյուր վերաբերելի մեկնաբանություն կամ արձագանք, որը կարող է կարևորություն ունենալ կատարվածի համար: Օրինակ, եթե բռնություն գործադրած անձը, իր իրավունքների մասին տեղեկանալուց հետո ասում է հետևյալ խոսքը. «Նա արժանի է եղել, որ իրեն ծեծեն: Դուք պետք է տեսնեիք, թե ինչպես էր նա ինձ սադրում», այս նշումները կարող են հետագայում օգտագործվել դատական քն-

նության ժամանակ ներկայացված այլ ապացույցների հետ, այդ թվում՝ եթե տուժողը հրաժարվում է ցուցմունք տալ: Այդպիսի ինքնաբուխ հայտարարությունները կարող են նույնպես օգտագործվել որպես հաստատող լրացուցիչ ապացույցներ, եթե տուժողի վստահելիությունը հարցականի տակ է: Մյուս վկաների կողմից արված ինքնաբուխ մեկնաբանությունները նույնպես պետք է գրանցվեն.[426]

Ոստիկանության կողմից նախնական տեղեկատվությունն հավաքելուց հետո կազմված փաստաթղթերը փոխանցվում են նախաքննական մարմնին:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը

Բացի անհետաձգելի միջամտության որոշումներից և պաշտպանական որոշումներից (տե՛ս գլուխ 5), բռնության ենթարկված անձանց համար հասանելի է Քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխի հիման վրա վարույթին ներգրավված անձանց համար նախատեսված հատուկ պաշտպանության միջոցները: Համաձայն 73-րդ հոդվածի՝ 1. Քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի (սույն գլխում այսուհետ՝ պաշտպանվող անձ) նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ:

> 2. Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմինը համապատասխան անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կայացնում է հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշում, որի կատարումն անհապաղ հանձնարարում է իրավասու պետական մարմնին:
>
> 3. Զինծառայողների, ինչպես նաև անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու գրավոր խնդրանքով վարույթն իրականացնող մարմին կարող է դիմել համապատասխան հիմնարկի վարչակազմի ղեկավարը՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա:
>
> 3.1. Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու գրավոր խնդրանքով վարույթն իրականացնող մարմին կարող է դիմել Մարդու իրավունքների պաշտպանը՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա:
>
> 4. Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին անձի դիմումը վարույթն իրականացնող մարմինը քննարկում է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան այն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:
>
> 5. Հատուկ պաշտպանության միջոցի կիրառումը մերժելու դեպքում դիմում ներկայացրած անձն իրավունք ունի համապատասխան որոշումը բողոքարկելու սույն օրենսգրքով սահմանված կարգով:
>
> 6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշման կայացումն արգելք չէ նույն անձի կողմից այդպիսի միջոց կիրառելու մասին նոր դիմում ներկայացնելու համար, եթե ի հայտ են եկել հատուկ պաշտպանության միջոցի կիրառման անհրաժեշտությունը հաստատող նոր հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածը նախատեսում է հատուկ պաշտպա-

---

426 Տե՛ս՝ Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի [Nachova and Others v. Bulgaria], գանգատ թիվ 43577/98 և 43579/98, 2005 թվական, որը վերաբերում է ցերեկը Ռումինիայի հարևանությամբ ռումինացի երկու՝ առանց զենքի զորակոչիկներին ավտոմատ զենքերով մահվան ելքով կրակելու փաստին: Սպանությունից անմիջապես հետո զինվորական ոստիկանության աշխատակիցը քաղաքի բնակիչներից մեկին, ենթադրաբար գոռալով, ասել է՝ «Դուք, անիծված գնչուներ»՝ միևնույն ժամանակ հրացանը պահելով նրա վրա: Դատարանը գտել է, որ զինվորական ոստիկանության կողմից արված ինքնաբուխ ապացույցներով ցույց են տրվում խտրական դրդապատճառները՝ ի խախտումն 14-րդ հոդվածի:

նության հետևյալ միջոցները.

1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.

3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.

5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.

6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.

7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.

8) դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը.

9) դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Կիրառվող հատուկ պաշտպանության միջոցը պետք է համաչափ լինի պաշտպանվող անձին սպառնացող վտանգի բնույթին և հնարավոր հետևանքներին: Անհրաժեշտության դեպքում նույն անձի նկատմամբ կարող են կիրառվել հատուկ պաշտպանության մեկից ավելի միջոցներ:

Հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի հատուկ պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22 N 560-Ն որոշմամբ սահմանվել են «Քրեական վարույթին ներգրավված և քրեական դատավարության մասնակից չհանդիսացող և այլ օրենքներով պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները »:

6.2.4 ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ, ՎԿԱՆԵՐԻՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԼՍԵԼԸ

Տուժողի արձագանքը քննությանը և արդարադատության համակարգին

Հայաստանում կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը հիմնականում ծածուկ հանցագործություններ են, որոնք հաճախ տեղի են ունենում ընտանեկան համատեքստում կամ հարաբերությունների մեջ գտնվող մարդկանց միջև, և միջադեպերի մեծ մասը երբևէ չի հաղորդվում իշխանություններին: Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (ՀԻԱ) անցկացրած հարցման շրջանակում (որը ներառում էր 42 000 կանանց հարցազրույցներ) զուգընկերների և այդպիսին չհանդիսացող անձանց կողմից ֆիզիկական և սեռական բռնություն ենթարկված կանանց հարց էր տրվել, թե ինչու բռնության ամենալուրջ միջադեպից հետո չեն դիմել ոստիկանության, և ամենատարածված պատասխաններից մի քանիսը հետևյալն են. «ես ինքնուրուն եմ կարգավորել խնդիրը», «ես չէի կարծում, որ դա այդքան լուրջ էր/մտքովս չէր անցնում», «ամոթ է/անհարմար եմ զգացել», «չէի ուզում, որ որևէ մեկն իմանա/գաղտնի էի պահում», բռնա-

ռարից վախենալը[427]:

Ընտանեկան բռնության հետևանքով տուժողները կարող են ցնցում վերապրել կամ գտնվել տևական սթրեսի տակ: Ոմանք ծանր հոգեկան տրավմա են տանում: Զուգընկերոջ կողմից բռնության (ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական) ենթարկված անձանց մոտ բռնությունը թողնում է լուրջ հոգեբանական հետքեր, այդ թվում՝ դեպրեսիայի բարձր մակարդակ, անհանգստություն, խոցելիության զգացում, վստահության կորուստ և խուճապի նոպաներ[428]: Նրանց մոտ կարող են առաջանալ անքնության և ցրվածության հետ կապված խնդիրներ: Այդ բոլոր հուզական և հոգեբանական հետևանքները կարող են ազդել է տուժողի՝ ոստիկանության և արդարադատության համակարգի հետ համագործակցելու և իր գործով որոշումներ կայացնելու ունակության վրա: Յուրաքանչյուր տուժողի բնութագիրը տարբեր է նա կարիք ունի հատուկ մոտեցման: Տուժողներից ոմանք շատ զգացմունքային են (նրանք կարող են լաց լինել հարցազրույցների ժամանակ), մինչդեռ մյուսները երկմտում են կամ անտարբեր: Տուժողներից ոմանք կարող են խուսափել համագործակցելուց, իսկ մյուսները ակտիվորեն ներգրավվեն քննության և դատական գործընթացներին: Տուժողի վարքագծից ելնելով որևէ ենթադրություն անել չի կարելի: Տուժողի թվացյալ անտարբերությունից ելնելով չպետք է համարել, որ միջադեպը տեղի չի ունեցել կամ այն լուրջ չէ: Նաև տուժողի չափազանց մեծ հետաքրքրությունը դատական գործընթացի նկատմամբ չի նշանակում, որ նա «անհամբեր» է և փորձում է ինչ-որ բան կորզել[429]:

Պետք է նկատի ունենալ, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանցից շատերի մոտ առկա է նախկինում իրավապահ մարմինների և արդարադատության համակարգերի հետ գործ ունենալու բացասական փորձ: Օրինակ, հաճախ են դեպքերը, երբ նախկինում տուժողը հայտնել է միջադեպի մասին, սակայն ոստիկանությունը միջոցներ չի ձեռնարկել կամ իրավախախտը արձակված պաշտպանական որոշումը խախտելու համար պատասխանատվության չի ենթարկվել[430]:

Երբ տուժողները փորձում են դադարեցնել բռնարարի հետ հարաբերությունները, նրանք կանգնում են բռնության կրկնման բարձր ռիսկի առաջ, որը այլ կարևոր գործոնների հետ մեկտեղ (օրինակ՝ բռնարարից ֆինանսական կամ այլ կախվածությունը, ընտանիքի և համայնքի կողմից ճնշումը, պարսավանքը, ամոթի զգացումը և այլն), ուժեղ դրդապատճառ են, որպեսզի կինը չդադարեցնի բռնի հարաբերությունները և լռության մատնի բռնության դեպքերը: Իրականում, տուժողները հիմնականում բռնության մասին հայտնում են միայն ծայրահեղ դեպքերում, երբ վտանգն արդեն անչափ մեծ է թվում: Տուժողները, նաև առավել հակված են համագործակցել ոստիկանության հետ, երբ իրենց ապահով են զգում[431]:

427 ՀԻԱ՝ Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն: 2014թ. «Կանանց նկատմամբ բռնություն. ԵՄ-ում հարցումներ», հիմնական արդյունքներ, էջ. 64:

428 ՀԻԱ՝ Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն: 2014թ. «Կանանց նկատմամբ բռնություն. ԵՄ-ում հարցումներ», հիմնական արդյունքներ, էջ. 57:

429 Դատավորների և դատախազների վերապատրաստման ձեռնարկ՝ կանանց համար արդարադատության հասանելիության ապահովման վերաբերյալ, Եվրոպայի խորհուրդ, էջ 48:

430 Տե՛ս նույն տեղում, էջ 49:

431 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը բողոք է ստացել ընտանեկան բռնության ենթարկված 21-ամյա կնոջ մորաքրոջ կողմից՝ ոստիկանության արձագանքի հետ կապված: Տուժողը, որին ամուսինը ծեծի էր ենթարկել, օգնության էր դիմել Կենտրոն վարչական շրջան ոստիկանության բաժանմունք և ուղղորդվել հոգեբուժարան: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անհապաղ միջամտությունից և հոգեբուժարան այցելությունից հետո տուժողը դուրս էր գրվել հոգեբուժարանից և ստացել համապատասխան օգնություն:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուժողի՝ համագործակցության պատրաստակամությունը կախված է իրեն լսելու ընթացքում ոստիկանության աշխատակիցների վարքագծից: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վախեցած կամ ոստիկանության օգնությունից հրաժարվող բռնության ենթարկված անձանց վրա:
- Տուժողի հարցաքննությունը պահանջում է անցկացման հատուկ եղանակ, որը պետք է հաշվի առնի տուժողի անվտանգությունը, և տեղեկատվություն հավաքողը ձգտի վաստակել տուժողի վստահությունը: Խուսափեք հուշող կամ քննադատական հարցերի միջոցով տուժողի երկրորդային վիկտիմիզացիայից: Ոչ մի հեգնանք, երկիմաստ կամ անուղղակի հարցեր:
- Բռնության դեպքի վայրում գտնվելիս առանձնացրեք կողմերին: Լսեք տուժողին տան առանձնացված կամ ապահով վայրում, որտեղ նրան ոստիկաններից բացի որևէ մեկը չի կարող լսել կամ տեսնել: Տուժողին մի հարցաքննեք խոհանոցում: Եթե չկա կյանքի սպառնալիք կամ հիվանդանոց մեկնելու անհապաղ անհրաժեշտություն, որոշ ժամանակ մի միջամտեք տուժողին:
- Երեխաներից ցուցմունք կամ բացատրություն վերցնելիսհամոզվեք, որ նրանց և նրանց հարազատներին վտանգ չի սպառնում: Հարցնողին չբարկացնելու համար երեխաները հակված են դրական պատասխանել հուշող հարցերին: Համոզվեք, որ երեխաները գիտեն, թե ինչ է տեղի ունեցել և հասկանում են, որ հետագա զարգացումների ընթացքը իրենցից կախված չէ:

ԿՆԲ/ԸԲ-ի տուժողները գտնվում են շատ խոցելի և անկայուն հոգեբանական վիճակում, հետևաբար ոստիկանության աշխատակիցները նրանց նկատմամբ առավել զգայուն պետք է լինեն: Նման իրավիճակում ցանկացած սխալ արտահայտություն, իրավիճակին անհամապատասխան վերաբերմունք կարող է հանգեցնել տուժողի ինքնամփոփման, ներքին հոգեբանական հակասությունների խորացման: Դեպքերը, երբ ոստիկանության աշխատակցի ոչ արհեստավարժ պահվածքը հանգեցնում է երկրորդային վիկտիմիզացիայի, առավել մտահոգիչ են (տե՛ս բաժին 4):

ԸԲ-ի տուժող կարող են լինել կանայք և տղամարդիկ, երեխաներ, տարեցներ և հաշմանդամություն ունեցող անձինք: Հատկապես խոցելի դիրքում են կանայք, երեխաները և հաշմանդամություն ունեցող անձինք: Հետևաբար, հատկապես կարևոր է տուժողի կամ վկաների հետ աշխատանքում կիրառվող մոտեցումների մանրակրկիտ և հիմնավորված ընտրությունը, ինչպես նաև նրանց հնարավոր ազդեցությունը տուժողի կամ վկայի հոգեվիճակի վրա: Իրավիճակի մանրակրկիտ վերլուծություն չանելը, ոչ ճիշտ ընտրված մարտավարությունը կարող են հանգեցնել նրան, որ տուժողի կխուսափի տեղեկություն տրամադրել դեպքի մասին: Ավելին, երբեմն տրված ցուցմունքներից հետ կանգնելը, կամ տուժողի այցը ոստիկանության բաժանմունք, կարող են նրա մոտ ծանր սթրեսային իրավիճակ առաջացնել: Հետևաբար, տուժողին քննիչի գրասենյակ ուղղորդելիս զեկուցող ոստիկանության ծառայողը պետք է կարեկցանք և աջակցություն ցուցաբերի նրա նկատմամբ:

Տուժողի հարցաքննության համար վայրն ընտրելիս պետք է հաշվիառնել հետևյալը.

1. արդյո՞ք բռնություն գործադրած անձը ուղեկցում է տուժողին.
2. արդյո՞ք տուժողին ուղեկցողը բռնություն գործադրած անձն է.
3. տուժողի ցանկությունը՝ հարցաքննության ժամանակ լինել մենակ թե, առկայության դեպքում, ուղեկցողի հետ.
4. արդյոք հարցաքննության սենյակը տուժողի կարծիքով անվտանգ է.
5. տուժողի հարցաքննությունը վարել հարցաքննության համար առանձնացված սենյակում՝ ուշադրությունը շեղող գործոնների բացակայությամբ:

«Ոստիկանության մասին» օրենքը 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ՀՕ-310-Ն օրենքով լրացվել է 5.1 հոդվածով, համաձայն որի մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերի մուտքերն ու ելքերը կահավորվում են տեսագրող, իսկ ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերում հարցաքննության համար օգտագործվող տարածքները (աշխատասենյակները)՝ տե-

սաձայնագրող համակարգերով: Տեսաձայնագրող սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի տեսագրել ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքեր անձանց մուտք գործելու և ելքի ժամանակը, տեսաձայնագրել ոստիկանության ծառայողների կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող հարցաքննությունները:

Տեսագրություններն ու տեսաձայնագրությունները տրամադրվում են՝

1. քրեական վարույթն իրականացնող մարմնին.
2. Մարդու իրավունքների պաշտպանին՝ իր իրավասությունների սահմաններում սկսված քննարկման շրջանակում.
3. ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի անդամներին:

Նախնական քննության տվյալներ պարունակող տեսաձայնագրությունները (տեսագրությունները) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ միայն վարույթն իրականացնող մարմնի գրավոր թույլտվությամբ: Վարույթն իրականացնող մարմնի գրավոր թույլտվությունն ստանալու պարտականությունը կրում է ոստիկանությունը:

«Ոստիկանության մասին» օրենքի 5.1-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի մարտի 31-ի թիվ 17-Լ հրամանով սահմանվել են ոստիկանության ստորաբաժանումներում տեղադրված տեսաձայնագրման և տեսագրման համակարգերի տեխնիկական սարքավորումները՝ կանխելու և հայտնաբերել մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերը: Սահմանվել են տեսագրությունների և տեսաձայնագրությունների բնութագրերը, ինչպես նաև տեսաձայնագրություններին հասանելիություն ունեցող ոստիկանության ծառայողների շրջանակը: 2020 թվականի ապրիլի 1-ից ոստիկանության՝ ոտնձգության քննության գործառույթներ իրականացնող ծառայողների կողմից տուժողի, վկայի և կասկածյալի հարցաքննություններն իրականացվում են տեսաձայնագրման ներքո՝ ոստիկանության հետևյալ ստորաբաժանուներում.

- Երևան քաղաքի վարչություն.
- Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժին.
- Երևան քաղաքի վարչության Էրեբունի բաժին.
- Երևան քաղաքի վարչության Շենգավիթ բաժին.
- Երևան քաղաքի վարչության Արաբկիր բաժին.
- Շիրակի մարզային վարչության Կումայրի բաժին.
- Շիրակի մարզային վարչության Մուշի բաժին.
- Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժին.
- Լոռու մարզային վարչության Բազումիշի բաժին.
- Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժին:

Բռնարարից կամ տուժողից կամ վկայից տեղեկատվություն հավաքելու մեթոդաբանությունն ընտրելիս իրավասու ոստիկանը.

1. տուժողին հարցնում է զրույցը նույն սեռի անձի միջոցով անցկացնելու նպատակահարմարության մասին.
2. տեղեկացնում է հոգեբանի ներգրավման անհրաժեշտության մասին.

3. տեղեկացնում է տուժողին թարգմանչական ծառայություններ մատուցելու հնարավորության մասին, եթե նա օտարերկրացի է.

4. ցուցաբերում է նրբազգացություն և կարեկցանք.

5. կիրառում է զոհակենտրոն մոտեցում.

6. եթե տուժողն անչափահաս է, ցուցաբերում երեխայակենտրոն մոտեցում[432].

7. տեղեկացնում է տուժողին իր իրավունքների և պարտականությունների մասին;

8. հիմնավորում է նեղ անձնական հարցեր տալու անհրաժեշտությունը.

9. բացառում է տուժողի մոտ ինքնամեղադրանքի առաջացումը.

10. խուսափում է տուժողի ասածի նկատմամբ գնահատող վերաբերմունք արտահայտելուց.

11. չի օգտագործում մասնագիտական տերմինաբանություն.

12. տուժողին հատկացնում է անհրաժեշտ ժամանակ և համբերատար լսում նրա ասածը.

13. տալիս է ավելի երկար պատասխաններ նախատեսող մանրամասն հարցեր.

14. ձգտում է առավելագույն տեղեկություն ստանալ անձի, գործի մանրամասների մասին.

15. տուժողին հնարավորություն է ընձեռում ներկայացնել իր պատմությունը և նկարագրել իր վրա բռնության ազդեցությունը.

16. ճշգրիտ արձանագրում է հարցաքննության ժամանակ տուժողի պատմածը.

17. ցուցաբերում է քաղաքավարի և դրական վերաբերմունք.

18. անհրաժեշտության դեպքում ներգրավում է թարգմանչի.

19. տուժողին լսում է է առանց բռնություն գործադրած անձի ներկայության[433]:

---

432 «Երեխայակենտրոն մոտեցում» եզրույթը որոշակի պարզաբանում է պահանջում, քանի որ դրա ենթատեքստը գրականության մեջ և քաղաքականության տարբեր համատեքստերում տարբեր է: Մանկավարժությունում և վաղ զարգացման հետ կապված ոլորտներում այն օգտագործվում է նկարագրելու ուսուցման և հոգածության գործընթացները, որոնցում երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին տրվում է ամենաբարձր առաջնահերթություն: Այն երեխային ճանաչում է որպես յուրահատուկ անհատ, ում նկատմամբ ուշադրությամբ և հարգանքով են վերաբերվում՝ հաշվի առնելով տարիքը, սեռը, մշակույթը, խառնվածքը և այլնը (Մորրիսոն, 2009թ.): Երեխայակենտրոն մոտեցման հայեցակարգը կիրառվում է նաև երեխաների պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ երեխաների պաշտպանության գործելակերպում: Այն ընկալվում է որպես համակարգ, որտեղ բոլորը երեխաներին և երիտասարդներին ճանաչում են որպես իրավունքներ ունեցող անհատներ, այդ թվում՝ իրենց մասին որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու իրավունք՝ իրենց տարիքին և զարգացման փուլին համապատասխան (Մանրո, 2011թ.): Այսպիսով, այն ավելի հստակ բխում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով ձևավորված երեխայի իրավունքներից, որոնց հիմքում երեխաների գործողություններն են և նրանց դերն ընտանիքում և համայնքներում, ներառյալ իրավունքներն ու պարտականությունները: Մասնավորապես՝ երեխայակենտրոն պաշտպանության շրջանակը պետք է «ուսումնասիրի, թե ինչպես են սոցիալական աշխատողները հասկանում երեխայի անցած ուղին՝ օգնության կարիքից մինչև օգնություն ստանալը, ինչպես են երեխաների և երիտասարդների իրավունքների, ցանկությունների, զգացմունքների և փորձառությունների մասին տեղեկությունները նպաստում և ձևավորում ծառայությունների մատուցումը, ինչպես նաև դիտարկվի երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին մատուցվող օգնության արդյունավետությունը»: Բրյուքաուֆ, Զ. և Քուկ, Ս. (2017թ.) «Երեխայակենտրոն մոտեցում բարձր եկամուտ ունեցող երկրներում կայուն զարգացման նպատակների համար»: Հայեցակարգային խնդիրներ և մոնիտորինգի մոտեցումներ, Ինոսենթի աշխատանքային փաստաթուղթ 2017-06, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետազոտությունների գրասենյակ, Ինոսենթ, Ֆլորենցիա:

433 Յ.-ն ընդդեմ Խորվաթիայի [Y. v. Croatia] գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ Ստամբուլի կոնվենցիայով պետություններից պահանջվում է ընդունել օրենսդրական միջոցներ՝ տուժողի իրավունքները պաշտպանելու համար: Դատարանը նշել է, որ այդ միջոցառումների թվին են դասվում, ի թիվս այլնի, ահաբեկումից և կրկնակի վիկտիմիզացիայից պաշտպանությունը, տուժողներին լսելի դարձնելու, նրանց կարծիքները, կարիքներն ու մտահոգությունները ներկայացնելու և պատշաճ ձևով դիտարկելու, գործող ներպետական օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում ենթադրյալ բռնություն գործադրած անձի բացակայությամբ ցուցմունք տալու հնարավորության ընձեռումը: Բացի այդ, ԵՄ-ի՝ հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, աջակցության և պաշտպանության նվազագույն չափանիշները սահմանող հրահանգով նախատեսվում է, inter alia, որ տուժողների հետ հարց ու պատասխանն անցկացվի առանց անհիմն ձգձգումների, իսկ բժշկական զննությունները հասցվեն նվազագույնի:

Ներդիր 18. Օգտակար խորհուրդներ ոստիկանի համար

- Զրույցի մեթոդաբանությունը ընտրելիս ոստիկանը կարող է օգտագործել հետևյալ արտահայտությունները՝ կնոջը հանգստացնելու համար.
- «Ես այստեղ եմ օգնելու, այլ ոչ թե դատելու կամ մեղադրելու համար»:
- «Եթե ես սխալ եմ հասկանում ձեր ասածը, խնդրում եմ ասեք ինձ այդ մասին: Ես ուզում եմ իմանալ թե ինչ է տեղի ունեցել և ուզում եմ դա ճիշտ հասկանալ»:
- «Եթե դուք չեք հասկանում ինչ-որ բան, որ ասում եմ, ասեք ինձ, և ես կփորձեմ բացատրել»:
- «Եթե որևէ պահի անհարմարություն զգաք, խնդրում եմ ասեք ինձ կամ ցույց տվեք «կանգնելու նշանը» (մի ձեռքը բարձրացված է, ափը՝ դեպի զրուցակիցը):
- «Նույնիսկ եթե կարծում եք, որ ես արդեն այդ մասին գիտեմ, ասեք ինձ»:
- «Եթե վստահ չեք ձեր պատասխանի մեջ, խնդրում եմ մի գուշակեք, այլ ասեք ինձ, որ վստահ չեք»:
- «երբ դուք ինձ մի բան եք նկարագրում, խնդրում եմ հիշեք, որը ես այնտեղ չեմ եղել, երբ դա տեղի է ունեցել: Որքան ավելի շատ պատմեք ինձ կատարվածի մասին, այնքան ավելի կհասկանամ, թե ինչ է տեղի ունեցել»:
- «Խնդրում եմ հիշեք, որ ես ձեզանից չեմ հիասթափվի և չեմ բարկանա»:
- «Խոսեք միայն այն բաների մասին, որոնք իրականում տեղի են ունեցել»:[434]

Թույլատրելի հարցերի շրջանակն օգտագործվում է մասնավորապես պարզելու համար.

1. այն դեպքերը, որոնք հանգեցրեցին այդ իրավիճակին և իրադարձություններին,
2. երեխաների միջադեպին ներկա լինելը,
3. զենքի առկայությունը,
4. ֆիզիկական և հոգեբանական բռնությանը նախորդող դեպքերի/իրադարձությունների նկարագրությունը, վարքի վերահսկումը.
5. բռնարարի և տուժողի միջև հարաբերությունների նկարագրությունը.
6. բռնության ազդեցությունը տուժողի վրա, ներառյալ ֆիզիկական վնասվածքները, հոգեբանական տրավմաները, ֆինանսական հետևանքները, հաղթահարման ռազմավարությունները և դրանց ազդեցությունը:

Տուժողի կողմից իր մտավախությունները կամ իրադարձություններն ամբողջությամբ չներկայացնելու դեպքում ոստիկանը պետք է փորձի պարզել պատճառները: Տուժողին պետք է տրվի բավականաչափ ժամանակ՝ հարցերին պատասխանելու և դադար վերցնելու համար:

Արհեստավարժ ոստիկանը պետք է կարողանա արդյունավետ գնահատել տուժողի անվտանգության ռիսկերը, յուրաքանչյուր դեպքում յուրահատուկ ռազմավարություն կիրառել՝ այլ մարմինների հետ համագործակցությամբ: Ընտանեկան բռնություն գործադրողները կարող են մանևրելու մարտավարություն ընտրել ոստիկանության և տուժողի նկատմամբ: Նրանք բռնության դիմում են տուժողի նկատմամբ իշխանություն և վերահսկողություն հաստատելու համար և, երբ գործը մտնում է իրավական համակարգ, բռնության սաստկությունը հաճախ աճում է՝ այդ վերահսկողությունը վերականգնելու նպատակով: Երբեմն, վկա հանդիսացող հարևանները հայտնում են, որ բռնարարը «հաճելի» պահվածք է ընդունել կամ հանդարտվել է: Ռիսկերը գնահատելու համար իրավաբանական մասնագետները պետք է ապավինեն ընդունված չափանիշներին, ինչպիսիք են՝ նախկինում բռնի վարքագծի ապացույցները, բռնության ծանրության, թմրամիջոցների կամ ալկոհոլի չարաշահման մասին վկայությունը և այլն (տե՛ս բաժին 5):

434 Կանանց նկատմամբ բռնությանը ոստիկանության արդյունավետ արձագանքման ձեռնարկ, ՄԱԹՀՊԳ, 2010թ.: https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Handbook_on_Effective_police_responses_to_violence_against_women_English.pdf

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՕՐԻՆԱԿ

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում որոշ քաղաքներ ստեղծել են «գրավային հանրակացարաններ», որտեղ ընտանեկան բռնության ենթադրյալ կատարողները բնակվում են մինչ դատավարության սկիզբը: Դա նրանց թույլ է տալիս շարունակել աշխատանքը և օգնել իրենց ընտանիքներին, այլ ոչ թե հայտնվել բանտում: Նաև այդ դեպքում տուժողը և նրա երեխաները կարող են մնալ տանը և պաշտպանված լինել հետագա բռնություններից:

Ձեռնարկվել են նաև միջոցներ, որոնք թույլ են տալիս ոստիկաններին ընդունել ընտանեկան բռնության մասին երրորդ կողմի հաղորդումներն այն դեպքերում, երբ տուժողը վախենում է կամ չի ուզում հաղորդել այդ մասին: Կիրառվում է նաև այսպես կոչված «կոկոնի հսկողության» ծրագիր, որը հարևաններին խրախուսում է ոստիկանությանը հաղորդել ընտանեկան բռնության կասկածելի դեպքերի մասին[435]:

ԵՐԵԽԱՅԻՆ ԼՍԵԼԸ

Այս ձեռնարկը հիմնականում նվիրված է կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետ կապված հարցերին: Երեխաների նկատմամբ բռնությունը և դաժան վերաբերմունքը պահանջում են առանձին մասնագիտացված ուսուցում, որը ձեռնարկում ներառված չէ: Սակայն, ձեռնարկում ներառված են ընտանեկան բռնության երեխա վկաներին վերաբերող որոշ հիմնական դրույթներ:

Համաձայն Երեխաներ տուժողների և հանցագործության վկաների հետ կապված արդարադատության հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի ուղեցույցների,[436] ««Երեխաներ տուժողներ և վկաներ» նշանակում է մինչև 18 տարեկան երեխաներ և դեռահասներ, ովքեր հանցագործության տուժող են կամ հանցագործության ականատես՝ անկախ նրանց դերից կատարված հանցանքի կամ ենթադրյալ հանցագործության կամ հանցախմբի քրեական հետապնդման հարցում: «Երեխայի նկատմամբ զգայուն» նշանակում է մոտեցում, որը հավասարակշռում է երեխայի պաշտպանության իրավունքը և հաշվի է առնում երեխայի անհատական կարիքներն ու տեսակետները»[437]:

Ինչպես նշված է միջազգային փաստաթղթերում, մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, և արտացոլված է Երեխաների իրավունքների կոմիտեի աշխատանքներում, և տուժող երեխաների և վկաների համար մասնագետները և երեխաների բարեկեցության համար պատասխանատու այլ անձինք պետք է պահպանեն հետևյալ հատվող սկզբունքները.

- Արժանապատվություն. յուրաքանչյուր երեխա յուրահատուկ և արժեքավոր մարդ է, և որպես այդպիսին, նրա անհատական արժանապատվությունը, հատուկ կարիքները, շահերը և գաղտնիությունը պետք է հարգվեն և պաշտպանվեն.
- Խտրականության բացակայություն. Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի արժանանալու արդար և հավասար վերաբերմունքի՝ անկախ իր կամ իր ծնողի կամ օրինական խնամակալի ռասայից, էթնիկ պատկանելությունից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, սեփականությունից, հաշմանդամությունից կամ այլ հանգամանքներից.
- Երեխայի լավագույն շահերը: Թեև մեղադրյալի և դատապարտված հանցավորների իրա-

435 Կանանց նկատմամբ բռնությանը ոստիկանության արդյունավետ արձագանքման ձեռնարկ, ՄԱԹՀՊԳ, 2010թ.: https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Handbook_on_Effective_police_responses_to_violence_against_women_English.pdf

436 ԷԿՕՍՕՍ-ի բանաձև 2005/20. https://www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf

437 Տե՛ս նույն տեղում, պարբերություն 9:

վունքները պետք է պաշտպանված լինեն, յուրաքանչյուր երեխա՝ իր լավագույն շահերը առաջնահերթ հաշվի առնելու իրավունք ունի: Դա ներառում է պաշտպանության իրավունքը և ներդաշնակ զարգացման հնարավորությունը.

i. Պաշտպանություն. յուրաքանչյուր երեխա ունի կյանքի և գոյատևման իրավունք և ցանկացած տեսակի դժվարությունից, չարաշահումից կամ անտեսումից, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, մտավոր և հուզական չարաշահումներից և անտեսումից պաշտպանված լինելու իրավունք.

ii. Ներդաշնակ զարգացում. Յուրաքանչյուր երեխա ունի ներդաշնակ զարգացման և ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական աճի համար համապատասխան կենսամակարդակի իրավունք: Հոգեկան տրավմայի ենթարկված երեխայի դեպքում պետք է անել ամենը, որպեսզի երեխան կարողանա վայելել առողջ զարգացումը.

- Մասնակցության իրավունք. Յուրաքանչյուր երեխա, ներպետական դատավարության իրավունքի համաձայն, իրավունք ունի ազատորեն արտահայտել իր տեսակետները, կարծիքներն ու համոզմունքները՝ իր իսկ խոսքով, և իր ներդրումն ունենալ հատկապես իր կյանքի վրա ազդող, այդ թվում՝ ցանկացած դատական գործընթացներում կայացված որոշումներում, և որ այդ տեսակետները հաշվի առնվեն՝ ըստ նրա կարողությունների, տարիքի, մտավոր հասունության և զարգացման առանձնահատկությունների:

Յուրաքանչյուր երեխային պետք է վերաբերվել որպես անհատի՝ իր անձնական կարիքներով, ցանկություններով և զգացումներով: Երեխայի համար հետագա դժվարություններից խուսափելու համար հարցազրույցները, ուսումնասիրությունները և քննության այլ ձևերը իրականացվում են վերապատրաստված մասնագետների կողմից, ովքեր գործում են զգայուն, հարգալից և ուշադիր կերպով[438]:

Երեխաների հետ հարցազրույց անցկացնելիս ոստիկանությունը պետք է հատուկ ուշադրությամբ գործի: Անհրաժեշտ է նաև լավ համակարգում երեխաների պաշտպանության համար պատասխանատու ծառայությունների հետ[439]: Երեխաներն իրենք կարող են ցանկանալ խոսել և ակտիվորեն ներգրավվել և իրենց օգտակար զգալ: Նրանք կարող են նաև ձգտել պաշտպանել իրենց մորը կամ տան այլ մարդկանց կամ նույնիսկ կենդանուն: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ընդունում է, որ բոլոր մասնագետները (ներառյալ ոստիկանությունը) ընտանիքում բռնության պայմաններում ապրող երեխաների առնչվելիս պետք է հատուկ խնամք և զգուշություն ցուցաբերեն: Անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել երեխաների լավագույն շահերը:

Երեխաներից տեղեկատվություն հավաքելիս՝ ոստիկանը պետք է նկատի ունենա հետևյալը[440].

- Երեխայի հետ զրույցն անցկացրեք ապահով և հանգիստ սենյակում.
- Երեխայի հետ խոսեք նրա աչքերի մակարդակով՝ կռանալով կամ նստելով միմյանց կողքին:
- Բացատրեք երեխային, թե ինչու է նա այնտեղ՝ խուսափելով հոր և կատարվածի մասին դատողություններ անելուց, բայց չնվազեցնելով կամ չասելով, որ նա պարզապես այցելության է եկել:

---

438 Հանցագործության տուժող հանդիսացող երեխաներին առնչվող արդարադատության հարցերով ՄԱԿ -ի ուղեցույցները. https://archive.crin.org/en/library/legal-database/un-guidelines-justice-matters-involving-child-victims-and-witnesses-crime.html

439 Երեխաների ընտանեկան բռնության փորձը. Ոստիկանության և երեխաների պաշտպանության ծառայությունների միասնական արձագանքի մշակում, Ն. Ստենլի, Պ. Միլեր, Հ. Ռիչարդսոն-Ֆոսթեր, Գ. Թոմսոն, 2011թ.:

440 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածը սահմանում է անչափահասի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողության առանձնահատկությունները, իսկ 329-րդ հոդվածը՝ անչափահաս վկայի հարցաքննության դրույթները:

- Լինել ընկերական, բայց ընդգծել, թե ինչի համար է երեխան այնտեղ: Երեխաներին, ամենայն հավանականությամբ, կհանգստացնի այն, որ ոստիկանությունը եկել է նրանց և նրանց մորը պաշտպանելու, ընդ որում երեխաները, որպես կանոն, հստակ գիտեն, թե ինչ է կատարվել: Նախկինում երեխաները կարող են ականատես եղած լինել բազմաթիվ այլ նման միջադեպերի:
- Հարցեր տալ ոչ հուշող եղանակով՝ փորձելով տեղեկություններ հավաքել կատարվածի և այն մասին, թե արդյոք նման դեպքեր տեղի են ունեցել նաև անցյալում[441]:

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՂԻ ՀԵՏ

Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի վրա ազդում է նաև ընտանիքի անդամների հետ նրա մտերմության համատեքստը: Երեխաները հուզական կապ և կախվածություն ունեն ներգրավված մեծահասակներից մեկի կամ երկուսի հետ: Բռնություն չգործադրող ծնողի հետ ունեցած հարաբերությունների պատճառով երեխաները բռնարարի կողմից հաճախ օգտագործվում են այդ ծնողին վերահսկելու համար (օրինակ՝ բռնարարը մասնակից է դարձնում երեխաներին տուժողի նկատմամբ գործադրվող բռնությանը, պատանդ է վերցնում նրանց, սպառնում են իր հետ տանել կամ վնասել երեխաներին): Հաճախ, նախքան ոստիկանության միջամտությունը, բռնությունը տեղի է ունենում երկար ժամանակ: Երեխաներին նման դեպքերում սպառնում կամ ստիպում են ընտանիքում կատարվող բռնությունը գաղտնի պահել: Թեև երեխաները ուզում են, որ բռնությունը դադարի, նրանք հաճախ երկակի և շփոթեցնող զգացմունքներ են ունենում մեկ կամ երկու ծնողների նկատմամբ: Երեխայի վերաբերմունքի և զգացմունքների վրա ազդում են մի շարք գործոններ, մասնավորապես.

- երեխայի կարծիքն այն մասին, թե ով է պատասխանատու բռնության համար (օրինակ՝ երեխան մեղադրում է իրեն կամ տուժողին).
- մի շարք հնարավոր ելքերի նկատմամբ երեխայի վերաբերմունքը անվտանգության տեսանկյուից (օրինակ՝ ինչպե՞ս ենք գումար վաստակելու, եթե տանեն հայրիկիս. ո՞վ կխաղա ինձ հետ, եթե ինձ վերցնեն ծնողներից. ո՞վ կհոգա իմ ընտանի կենդանու մասին, եթե մենք գնանք ապաստան և այլն):
- երեխայի հարաբերությունները բռնություն գործադրած և տուժող ծնողի հետ.
- ընկերների, ընտանիքի և աջակից այլ անձանց կողմից բռնությունը գաղտնի պահելու նպատակով երեխայի վրա գործադրվող ճնշումը:

Երեխաները կարող են նաև երկակի զգացմունք ունենալ ոստիկանական մարմինների նկատմամբ. հսկայական թեթևացում, որ ոստիկանները վերջ տվեցին բռնությանը, և միևնույն ժամանակ դժգոհություն, որ ոստիկանները տարան բռնություն գործադրած ծնողին կամ, որ ոստիկանների գալուց հետո իրենց հեռացրեցին իրենց տնից: Այս զգացումը կարող է սրվել, եթե երեխան ականատես է ձերբակալությանը: Կարևոր է զրուցել երեխայի հետ՝ վերապրած միջադեպի ազդեցությունը մեղմելու համար:

Ի՞ՆՉԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ, ԵՐԲ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԵՆ

- **Տեղեկացեք երեխաների մասին.** հարցրեք տուժող ծնողին, թե որտեղ են գտնվում երեխաները, որտեղ էին նրանք, երբ տեղի էր ունեցել բռնությունը, և արդյոք նրանց ոչինչ չի սպառնում:
- **Փնտրեք երեխաներին.** չնայած ծնողների բողոքներին, ոստիկանության աշխատակիցը պարտավոր է ապահովել երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը:
- **Հանգստացրեք երեխաներին.** երեխայի հետ զրուցելու դեպքում երեխան հասկանում է, որ

441 Բալդրի. Ա. Ց.: Բուլղարիայի ոստիկանության մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ, 2016թ., էջ 35:

ընտանիքից բացի ինչ-որ մեկը գիտի և հոգ է տանում հոգսերը (օրինակ՝ «Դա, հավանաբար, սարսափելի էր քո համար: Իսկ հիմա քեզ լա՞վ ես զգում:» Եթե երեխան ականատես է եղել իր ծնողի ձերբակալությանը, հանգստացրեք նրան ասելով, որ բռնություն գործադրած ծնողը ապահով վայրում է:

- **Պարզեք, թե արդյոք երեխաները վնասված կամ հոգեպես ընկճված չեն.** Խնդրեք տեսնել երեխաներին: Տուժողներից շատերը թերագնահատում են երեխայի բռնության ականատես լինելու աստիճանը և դրա հնարավոր ազդեցությունը երեխայի վրա: Ոստիկանության աշխատակիցների համար կարևոր է պարզել՝ արդյոք երեխաները ֆիզիկական վնասվածքներ չունեն կամ ծայրահեղ սթրեսային վիճակում չեն գտնվում: Հաճախ ծնողները տեղյակ չեն, որ երեխաները կարող են թաքնվել տան մեկ այլ սենյակում: Նրանք կարող են քնած լինել կամ ձևացնել, թե քնած են: Երեխաները միգուցե կարծում են, որ այն, ինչին նրանք ականատես են եղել, գաղտնիք է, որը չպետք է քննարկվի ուրիշների հետ: Հնարավոր է՝ նրանց այդ առիթով կամ անցյալում ստիպել են լուռ մնալ: Շատ երեխաներ սովորում են, որ լռելը և ոչինչին չխառնվելը անվտանգ մնալու լավ դեղամիջոց է:
- **Հիշեք՝ միայն բռնարարքը չէ, որ երեխաների վրա բացասաբար է անդրադառնում:** Ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը տեղի է ունենում շարունակական հոգեբանական և ֆիզիկական բռնության շրջանակում: Դաժան վերաբերմունքը հաճախ ենթադրում է երեխաների օգտագործում՝ տուժողին վերահսկելու համար: Մինչ ոստիկանությունը ժամանում է, երեխաները հաճախ երկարի ժանմանակ ենթարկվում են բռնության և հետագայում վերապրում շարունակական բռնության կուտակված հետևանքները[442]:

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԶՐՈՒՑԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Հաճախ ասում են «երեխաները պետք է լինեն տեսանելի, բայց նրանց ձայնը չլսվի», սակայն երբ ոստիկանության աշխատակիցները քննում են ընտանեկան բռնության դեպքերը, ասացվածքը պետք է լինի «երեխաներին պետք է և՝ տեսնել և՝ լսել»: Կան բազմաթիվ պատճառներ, թե ինչու ոստիկանության աշխատակիցները պետք է ժամանակ հատկացնեն միջադեպին ականատես եղած երեխաների հետ զրուցելու համար.

- Երեխայի հետ փոխըմբռնում հաստատելու համար պետք է անել այնպես, որ նա իրեն ապահով զգա և վստահեցնել նրան, որ երկու ծնողները նույնպես ապահով են, նույնիսկ երբ նրանցից մեկը ձերբակալված է:
- Օգնել երեխաներին, որպեսզի նրանք իրենց անմասն չզգան առաջացած խնդիրների լուծման հարցում, չէ որ նրանք ուզում են, որ իրենց մայրիկին և հայրիկին օգնեն: Ոստիկանության աշխատակիցները նման իրավիճակում պետք է ընկալվեն որպես դաշնակիցներ, այլ ոչ թե հակառակորդներ:
- Գնահատել ռիսկի մակարդակը, որին երեխան ենթարկվել է միջադեպի ընթացքում:
- Կազմել երեխայի անվտանգության ծրագիրը:
- Առաջարկել խորհրդատվություն և երեխաներին ուղեգրել մասնագիտացված աջակցման կենտրոններ:
- Օգնել ոստիկանության աշխատակիցներին տեղեկատվություն ձեռք բերել (օրինակ՝ ռիսկերի գնահատման, անվտանգության ծրագրման, ձերբակալությունների, մեղադրանքների մասին)՝ ավելի հիմնավորված որոշումներ կայացնելու համար:

442 Ընտանեկան բռնությանը արձագանքող ոստիկանության ձեռնարկ. «Անվտանգ համայնքների խթանում՝ ուսումնասիրությունների և պրակտիկայի ինտեգրման միջոցով», 2004թ.:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԶՐՈՒՅՑԵԼԻՍ[443]

- Զրուցեք երեխայի հետ՝ գտնվելով նրա աչքերի մակարդակից ոչ բարձր դիրքում:
- Նախքան երեխայի հետ հետ վիճելի հարցերի շուրջ զրուցելը փորձեք փոխընբռնում հաստատել նրա հետ: Երեխային վստահեցրեք, որ նա ոստիկանության աշխատակցի հետ խոսելիս նեղության մեջ չի հայտնվի:
- Երեխային վստահեցրեք, որ ոստիկանության աշխատակիցները շատ երեխաների հետ խոսում են նման բաների մասին և նա այդ հարցում միակը չէ:
- Խոսեք պարզ, անմիջական, երեխայի տարիքին համապատասխան լեզվով:
- Եթե երեխան չի հասկանում ոստիկանության աշխատակցի դերը, բացատրեք այն հեշտ հասկանալի բառերով:
- Զրուցեք գաղտնիության և դրա սահմանների մասին:
- Հարգեք երեխայի հավատարմությունը բռնություն գործադրող ծնողի նկատմամբ: Մի քննադատեք կամ նվաստացրեռ բռնություն գործադրած ծնողին:
- Ընդունեք երեխայի լռության իրավունքը: Մի ստիպեք երեխային խոսել, եթե նա խուսափում է դրանից:
- Երեխային հնարավորություն տվեք ասել այն ամենը, ինչի մասին նրան չեք հարցրել:
- Մի տվեք խոստումներ, որոնք չեք կարող կատարել:
- Երեխային հայտնեք ձեր մտահոգությունը նրա անվտանգության վերաբերյալ:
- Վստահեցրեք երեխային, որ ձերբակալված ծնողը ապահով է և լավ է զգում իրեն:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼԸ

Հարցազրույցը կարող է երեխայի մոտ սթրեսային իրավիճակ և վախի զգացում առաջացնել: Երեխաները, ովքեր ականատես են եղել կամ ենթարկվել են բռնության, սովորաբար վախեցած, վրդովված և անհանգիստ են: Երբ երեխան հանգիստ և անկաշկանդ է, նա ավելի վստահ և պատրաստակամ է զրուցում ոստիկանության աշխատակիցների հետ: Տարբեր տարիքի երեխաների հետ զրուցելու հմտություններ զարգացնելով՝ ոստիկանության աշխատակիցները կարող են ավելի ընդունելի մթնոլորտ ստեղծել երեխայի համար և ձեռք բերել կարևոր ապացույցներ[444]:

Որոշ դեպքերում նպատակահարմար է երեխայի հետ հարցազրույցի տեսանկարահանում[445]: Հարցազրույցների տեսանկարահանումը նպաստում է քրեական վարույթ նախաձեռնելու համար ապացույցների ծանրության աստիճանը որոշելուն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, բռնություն գործադրողին համոզելու, որ նա պետք է անցնի բուժում հանուն իր երեխաների: Երեխային կարող է մտահոգել տեսանկարահանման գործընթացը: Կարևոր է երեխային վստահեցնել, որ տեսանկարահանման հիմնական նպատակը երեխայի անվտանգությունն ապահովելն է:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Երեխայի հետ հանդիպումից առաջ, հնարավորության դեպքում, տեղեկություններ հավաքեք երեխայի ընտանեկան վիճակի, կարողությունների, զբաղմունքների և հատուկ կարիքների մասին:

---

443 Մշակվել է «Բռնության ականատես երեխաները» նախագծի շրջանակներում, Բոստոնի բժշկական կենտրոնի կողմից, MA 02118-2393:

444 Ընտանեկան բռնությանը ոստիկանության արձագանքման ձեռնարկ. Անվտանգ համայնքների խթանում՝ հետազոտությունների և պրակտիկայի ինտեգրման միջոցով, 2004 թ .:

445 ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Երևան քաղաքի կենտրոնական բաժնում գործում է անչափահասների հետ հարցազրույցների հատուկ կահավորված սենյակ:

- Երեխայի հետ հարցազրույց անցկացնելու համար ընտրեք անվտանգ վայր (օրինակ՝ հանգստի սենյակ): Հնարավորության դեպքում կրեք փափուկ հագուստ (հնարավոր է ամենօրյա բիզնես ոճի՝ կոստյումի և փողկապի կամ համազգեստի փոխարեն):
- Հնարավորության դեպքում հարցազրույցին ներկա են գտնվում երկու ոստիկանության աշխատակիցներ՝ գենդերային հավասարակշռության համար:
- Ներկայացեք և նկարագրեք ձեր դերը պարզ բառերով:
- Խրախուսեք երեխային խոսել նաև այլ հարցերի շուրջ: Օգտագործեք դա որպես հնարավորություն, որպեսզի երեխան ընտելանա և խոսի անկաշկանդ, ազատ պատմողական ոճով: Ուշադրություն դարձրեք երեխայի լեզվական և ճանաչողական ունակություններին: Փորձեք վերացնել երեխայի վախերի, սպառնալիքների և նմանատիպ այլ խնդիրների բացահայտման խոչընդոտները:
- Բացատրեք զրույցի նպատակը:
- Նստեք երեխայի հետ նույն մակարդակին:
- Երեխային դիմեք նրա անունով:
- Բացատրեք, որ դուք ներկա չեք եղել դեպքին և օգնության կարիք ունեք՝ հասկանալու, թե ինչ է տեղի ունեցել:
- Երբ երեխան չգիտի պատասխանը կամ չի հասկանում որևէ բառ կամ հարց, թույլ տվեք նրան ասել այդ մասին:
- Երեխայի գիտելիքների բազայի կամ կարողությունների վերաբերյալ ենթադրություններ մի արեք:
- Օգտագործեք պարզ բառեր և կարճ նախադասություններ:
- Միաժամանակ երկու հարց մի տվեք:
- Խուսափեք կրկնակի ժխտումից:
- Համոզվեք, որ երեխան հասկանում է ձեր հարցը (օրինակ՝ «Ես պետք է համոզվեմ, որ դու հասկանում ես իմ հարցը: Ի՞նչ եմ քեզ հարցնում»): Երեխային խնդրեք, որ անհրաժեշտության դեպքում նա ասի. «Ես չեմ հասկանում այդ բառը (բառերը)»:
- Լսեք, թե ինչ է ասում երեխան և մի ենթադրեք, որ հասկանում եք երեխայի լեզուն: Շարունակաբար համոզվեք, որ հասկանում եք երեխայի պատասխանները (օրինակ՝ «Ի՞նչ նկատի ունեիր, երբ ասացիր .... Կբացատրե՞ս ... Կարո՞ղ ես ավելին ասել»):
- Երեխային մի շտապեցրեք: Սպասեք, որ նա լսի ձեր հարցը, մտածի և նոր պատասխանի:
- Տվե՛ք պարզաբանում ենթադրող հարցեր (օրինակ՝ «Պատմիր ինձ ..., Ի՞նչ պատահեց, երբ ..., Ի՞նչպիսի զգացմունքներ ունեցար, երբ...»):
- Խուսափեք «ինչու» բառով հարցեր տալուց: «Ինչու» բառով հարցերը կարող են մեղադրանք ենթադրել:
- Հետևեք երեխայի ոչ խոսքային հաղորդակցմանը:
- Սահմանափակեք այնպիսի հարցերի օգտագործումը, որոնք պահանջում են որոշակի (այո կամ ոչ) պատասխան:
- Հարցազրույցի վերջում հարցրեք, թե ինչպես է իրեն զգում երեխան և գործեք ըստ նրա պատասխանի:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒՄԸ

Վկայի հարցաքննման նպատակը ենթադրյալ իրադարձության (դեպքերի) վերաբերյալ վկայի ցուցմունքները և ցանկացած այլ տեղեկատվության պարզումն է, որը կօգնի քննությանը:

Վկաների բնութագրերը տարբեր են և յուրաքանչյուրի հետ կապված տարբեր խնդիրներ կարող են առաջանալ: Նրանց բոլորի կարիքներն ու մտահոգությունները, ինչպես նաև դեպքի քննության մեջ ներգրավվածության մակարդակ տարբեր են (օրինակ՝ հանցագործության տուժող հանդիսացող կամ վկա, որը որևէ կապ չունի տուժողի հետ, բայց ով տեսել է կատարվածը և այլն): Վկաների հետ շփվելիս բոլորի համար միատեսակ մոտեցում չի կարող լինել և միշտ պետք է հաշվի առնվեն անհատական հանգամանքները:

Վկաներից տեղեկատվության հավաքման կզբունքները [446]

- Տեղեկատվության հավաքելը քննության կենտրոնում է:
- Տեղեկատվություն հավաքելու նպատակն է բացահայտել ճշմարտությունը:
- Տեղեկատվությունը պետք է լինի ամբողջական, ճշգրիտ և հուսալի:
- Պահպանեք անկողմնակալությունը:
- Վարվեք ազնիվ:
- Վկաներից տեղեկատվություն հավաքելը կարող է ինտենսիվ բնույթ կրել:
- Որոշ վկաներ հատուկ ուշադրություն են պահանջում:
- Բռնարարներից տեղեկատվություն հավաքելը պետք է իրականացվօի օրենքով սահմանված կարգով:
- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գործում կարևոր դերակատարություն ունեցող անձանցբացահայտմանը:
- Եղեք ուշադիր մշակութային առանձնահատկությունների և կրոնական համոզմունքների նկատմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ վկան ցուցմունք տալու նպատակով կողմի կամ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կանչված այն անձն է, որին կարող է հայտնի լինել վարույթով պարզաբանման ենթակա որևէ հանգամանք: Անձը որպես վկա կարող է հարցաքննվել սույն օրենսգրքի 58-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին գրավոր տեղեկացվելուց հետո: Կրկին, պետք է նշենք, որ քրեական դատավարության շրջանակներում ոստիկանությունը հարցաքննություններ իրականացնելու իրավասություն չունի, այլ կարող է տեղեկատվություն հավաքել կամ աջակցել քննիչի կողմից իրականացվող գործողություններին: Վարչական վարույթի շրջանակներում ոստիկանությունն իրավասու է ցուցմունք վերցնել:[447]

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝

1. Վկան կարող է հարցաքննվել վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանքի, այդ թվում՝ բռնարարի, տուժողի, այլ վկաների անձի վերաբերյալ:Վկան հարցաքննվում է այլ հարցաքննվողներից անջատ: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի նույն վարույթի շրջանակներում հարցաքննության ենթակա անձինք մինչև հարցաքննության ավարտը հաղորդակցություն չունենան միմյանց հետ:
2. Հարցաքննությունից առաջ անհրաժեշտ է հավաստիանալէ վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ վարույթի կապակցությամբ է նա հրավիրվել, և պարզաբանել, որ նա պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Վկան նախազգուշացվում է հարցերին ճշմարտացի պատասխանելու պարտականության, ցուցմունք

446 Վկաների քննչական հարցաքննման ուղեցույց. https://fyi.org.nz/request/244/response/2484/attach/6/Investigative%20interviewing%20witness%20guide.pdf

447 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդված:

տալուց հրաժարվելու և սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Վկային հայտնվում է նաև, որ իր տված ցուցմունքը կարող է վարույթի ընթացքում օգտագործվել որպես ապացույց:

3. Եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի մասնակցելու հարցաքննությանը և քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալու վկային նրա կարգավիճակին վերաբերող հարցերով: Փաստաբանը վկային հարցեր է տալիս միայն քննիչի թույլտվությամբ և իրավունք չունի մեկնաբանելու նրա պատասխանները: Սույն օրենսգրքով նախատեսված՝ վկայի իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու վերաբերյալ փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:
4. Եթե փաստաբանի հետ հարցաքննությանը ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան հարցաքննությանը ներկայացել է առանց փաստաբանի, ապա քննիչը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել հարցաքննությունը, բացառությամբ այն դեպքի, երբ վկան գտնում է, որ փաստացի կասկածվում է հանցագործության մեջ:
5. Եթե փաստաբանի հետ հարցաքննությանը ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան հարցաքննությանը ներկայացել է առանց փաստաբանի, ապա քննիչը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել հարցաքննությունանոնոներով»[448]:

Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև առանձին հոդվածներ անչափահաս վկային հարցաքննելու համար (հոդված 329) և խլություն, համրություն կամ ծանր հիվանդություն ունեցող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների առանձնահատկությունների համար (հոդված 213):

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Ընտանեկան բռնություն գործադրած անձինք կարող են ունենալ տարբեր սոցիալ-տնտեսական ծագում: Նրանք կարող են լինել են դատավորներ, բժիշկներ, ինժեներներ, իրավաբաններ, ուսուցիչներ, հոգևորականներ, իրավապահ մարմինների աշխատակիցներ, նրանց մեջ կարող են լինել հարուստներ, աղքատներ, միջին խավին ներկայացուցիչներ, կրթված և չկրթված անձինք: Որոշ դեպքերում, բռնության հաղորդմանը արձագանքող ոստիկանության ծառայողներից կարող է պահանջվել հանդարտացնող մարտավարություն, քանի որ բռնարարը կարող է զայրանալ, որ անծանոթ անձինք ներխուժել են իր ընտանիք: Որոշ դեպքերում էլ բռնարարը կարող է ընդհանրապես չդիմադրել ոստիկանության աշխատակիցներին և համագործակցել նրանց հետ: Նա կարող է ժխտել, որ միջադեպ է տեղի ունեցել, կամ նվազեցնել բռնության աստիճանը: Բռնարարը կարող է նաև մեղադրել զուգընկերոջը, և պնդել, որ բռնություն գործադրելուց բացի այլ տարբերակ չուներ: Ոստիկանության աշխատակիցները բռնարարից տեղեկատվություն հավաքելիս պետք է զգոն լինեն նրա մանիպուլատիվ շահարկումների կամ վարքագծի նկատմամբ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ.

- Բռնություն գործադրած անձից տեղեկատվություն հավաքելիս չպետք է մեղադրական հայտարարություններ անեն: Նրանք պետք է թույլ տան վերջինիս պատմել միջադեպի իր վարկածը՝ նախքան սեփական պնդումներն անելը:
- Չպետք է ընդունեն որպես ճշմարտություն և չաջակցեն բռնության պատճառների վերաբերյալ կասկածյալի պնդումներին:
- Պետք է արձանագրեն բռնարարի կողմից ինքնաբերական ցանկացած հայտարարությունները, նույնիսկ եթե դրանց շարժարիթներն ակնհայտ են և դրանք անկեղծ չեն հնչում:

448 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդված:

Գործողություն 15. Իրավախախտից տեղեկատվություն հավաքելը[449]

Նպատակը. Այս վարժության նպատակն է ցույց տալ, որ իրավախախտի գործողություններում բացակայում է անկանխատեսելիությունը և նա գործում է դիտավորությամբ: Նպատակն է վիճարկել իրավախախտի ինքնաարդարացման ռազմավարությունը:

Տևողությունը. 40 րոպե

Անցկացման ձևը. դերախաղ (20 րոպե), ամբողջ խմբով քննարկում (20 րոպե):

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ. Իրավախախտի հարցաքննումը:

Նշումներ դասընթացավարների համար.

Դասընթացավարը մասնակիցներին է բաժանում «Իրավախախտից տեղեկատվության ստացումը» նյութը: Մասնակիցները կազմում են 3 հոգանոց խմբեր: 3 հոգանոց խմբերում մեկը ստանձնում է այն անձի դերը, ով փորձում է արդարացումներ գտնել իր վարքագծի համար: Երկրորդը ստանձնում է ոստիկանության աշխատակցի դերի, իսկ երրորդ մասնակիցը հանդես է գալիս դիտորդի դերում: Վերջում, դիտորդը ներկայացնում է իր դիտարկումները և ամբողջ խումբը քննարկում է դեպքը:

Խմբային քննարկման վերաբերյալ ցուցումներ.

Դասընթացավարը նախաձեռնում է քննարկումը՝ նշելով, որ իրավախախտը գիտակցաբար է որոշում բռնության դիմել: Մասնակիցների համար կարևոր է գիտակցել, որ բռնության բացահայտ մերժման դեպքում հնարավոր է ավելի արդյունավետ աշխատել իրավախախտի հետ: Դասընթացավարը մասնակիցներին հիշեցնում է իրավախախտին հարցաքննելու նպատակները. դադարեցնել բռնությունը և ստիպել իրավախախտին ընդունել իր գործողությունների համար պատասխանատվությունը:

Օգտակար խորհուրդներ զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրած անձի հարցաքննությունն անցկացնելու համար[450]:

- Մի օգտագործեք այնպիսի սահմանումներ, որոնք նվազեցնում են բռնության լրջությունը (օրինակ՝ «վեճ» կամ «հակասություն»), այլ ընդգծեք կատարվածի լրջությունը.
- Հակադարձեք ինքնարդարացման բոլոր փորձերին. իրավախախտը կձգտի շեղել ուշադրությունը բուն գործողություններից և մատնանշել ենթադրյալ խնդիրներ (օրինակ՝ խանդը, տուժողի փնթի լինելը).
- Իրավախախտին ներկայացրեք գործողությունների իրավական հետևանքները և բացատրեք, թե ինչ վնաս է հասցնում բռնությունը տուժողի և երեխաների հոգեբանական և ֆիզիկական առողջությանը.
- Անդրադարձ կատարեք բռնության միջադեպին. փորձեք իրավախախտի հետ միասին վերականգնել բռնության միջադեպի իրական պատկերը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով բռնության տեսակին և ծանրության աստիճանին (սովորաբար, նույնիսկ եթե իրավախախտը մեկնաբանում է իր բռնարարքը, ապա ամենաանորոշ ձևով. «Հետո դա տեղի ունեցավ ...» կամ «Մենք վիճեցինք...»):
- Բռնության վերաբերյալ հարցերն ուղղեք ուղղակիորեն «Քանի՞ անգամ եք հարվածել ձեր կնոջը/զուգընկերոջը/երեխային, և ինչպե՞ս եք հարվածել նրան»: «Ի՞նչ էիք զգում»: «Ինչպե՞ս արձագանքեց բռնությանը ձեր կինը/զուգընկերը/երեխան»: «Դուք ֆիզիկական վնաս հասցրե՞լ եք նրան»:

Իրավախախտներն իրենց վարքագիծը արդարացնելու և ճշմարտությունը թաքցնելու համար հաճախ դիմում են տարբեր խորամանկ քայլերի, իրենց վարքագիծը արդարացնելու պատճառներ են փնտրում, հեռքում են որևէ լուրջ խնդրի գոյությունը կամ նվազեցնում բռնության լաստիճանը, հրաժարվում են պատասխանատվությունից, ժխտում են բռնության կրկնվելու հնարավորությունը:

449 Ադապտացվել է ԿԸԲԵՑ-ի՝ մասնագետների պատրաստման և իրազեկման բարձրացման վերաբերյալ ձեռնարկից, Վիեննա 2000թ., Աղբյուրը՝ Egger / Lercher / Logar / Spannring / Informationsstelle gegen Gewalt, Gegen Gewalt an Frauen – Wege zur Veränderung. Trainingsmappe zur Durchführung von Schulungen für verschiedene Berufsgruppen, Վարժություն 06, MA 57-ի անունից, Վիեննա, 1994թ.:

450 Աղբյուրը՝ Դաշնային կանցլերա և Կանանց գործերի դաշնային նախարարություն, Gegen Gewalt an Frauen handeln,[տեղեկատվական պանակ], Բաժին 16, Վիեննա 1994թ.:

Մասնակիցների բաժանվող նյութ. Իրավախախտից տեղեկատվություն հավաքելը[451]

Ոստիկան. Կարո՞ղ եք ասել, երբ եք վերջին անգամ հարվածել ձեր կնոջը:

Իրավախախտ. Հստակ չեմ կարող հիշել: Մենք քննարկում էինք ինչ-որ այլ բան, և ես ինձ այլևս չէի տիրապետում

Ոստիկան. Որքա՞ն հաճախ եք խփել նրան:

Իրավախախտ. Չեմ հիշում: Ես չէի գիտակցում ինչ եմ անում: Ես կորցրեցի վերահսկողությունը:

Ոստիկան. Ինչո՞ւ չեք դանակահարել նրան:

Իրավախախտ. (ցնցված տեսք ունի). Ես երբեք նրան չեմ դանակահարի: Նա իմ կինն է:

Ոստիկան. Բայց չէ՞ որ ասացիք, որ կորցրել էիք վերահսկողությունը: Այդ դեպքում, ամեն ինչ կարող էր պատահել, այդպե՞ս չէ:

Իրավախախտ. Դե՛ ես կարճ ժամանակով կորցրեցի վերահսկողությունը, բայց ոչ ամբողջությամբ:

Ոստիկան. Փորձենք պարզել, թե վերահսկողությունը որքանով էիք կորցրել: Ցույց տվեք, թե ինչպես եք հարվածել ձեր կնոջը (վեր է կենում). Ենթադրենք, ես ձեր կինն եմ:

Իրավախախտ. (վարանելով) Չգիտեմ: Ես պարզապես հարվածեցի նրան: Մանրամասները չեմ հիշում:

Ոստիկան. Ցույց տվեք ինձ, թե ինչպես եք հարվածել: Դուք բռունցքո՞վ հարվածեցիք, թե ափով:

Իրավախախտ. (սարսափած). Ես ապտակեցի նրան: Ես երբեք չեմ հարվածի նրան այնպես, ինչպես տղամարդու:

Ոստիկան. Լավ: Այսինքն, դուք որոշեցիք ապտակել նրան՝ բռունցքով հարվածելու փոխարեն: Դուք ինչ-որ բան նետեցի՞ք նրա վրա:

Իրավախախտ. Ոչ:

Ոստիկան. Լավ, ուրեմն դուք ապտակեցիք նրան և ոչինչ չնետեցիք նրա վրա: Մարմնի ո՞ր մասին եք հարվածել:

Իրավախախտ. Ես չգիտեմ: Ես չէի մտածում, թե որտեղ հարվածեմ:

Ոստիկան. Լավ, եկեք կրկին վերադառնանք: Նախ, դուք հարվածեցել եք նրան, այլ ոչ թե դանակահարել կամ ինչ-որ բան նետել նրա վրա: Այդ պահին դուք դեռ վերահսկում էիք ձեզ: Դուք նրան ապտակել եք, այլ ոչ թե բռունցքով հարվածել: Դուք չէիք ուզում նրա հետ վարվել այնպես, ինչպես կվարվեիք տղամարդու հետ: Հետո որոշեցիք, թե որտեղ հարվածել նրան: Թվում է, որ ավելի լավ էիք ձեզ վերահսկում, քան կարծում եք:

451 Ադապտացվել է ԿԸԲԵՑ-ի՝ մասնագետների պատրաստման և իրազեկման բարձրացման վերաբերյալ ձեռնարկից, Վիեննա, էջ 113, 2000թ., Աղբյուրը՝ Էմերջ քոնսալթինգի ձեռնարկ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ, մեջբերված է՝ Egger / Lercher / Logar / Spannring / Informationsstelle gegen Gewalt, Gegen Gewalt an Frauen – Wege zur Veränderung. Trainingsmappe zur Durchführung von Schulungen für verschiedene Berufsgruppen, Բաժանվող նյութ 05, MA 57-ի անունից, Վիեննա 1994թ.:

7. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Նպատակը.

Ոստիկանության ծառայողները գիտեն, թե ինչպես պետք է համակարգել աշխատանքը այլ համապատասխան մարմինների, հաստատությունների և ՀԿ-ների հետ, նրանք գիտելիքներ ունեն տուժողների իրավազորմանը և ու պաշտպանությանը ուղղված միջգերատեսչական աջակցության մասին: Նրանք բարելավում են ծառայություններ մատուցողների հետ համագործակցությունը և լավ են պատկերացնում տուժողների անվտանգությունը ապահովող քաղաքականության իրականացման և նորմատիվային ակտերի մշակման անհրաժեշտությունը:

Ուսուցման հիմնական կետերը.

- Լավ պատկերացնել, թե ինչպես համակարգել աշխատանքը պետական մարմինների և տարբեր հաստատությունների հետ
- Գիտակցել, թե ինչպես կարելի է ստեղծել գործընկերության միջավայր ազգային մակարդակում, ներառյալ ՀԿ-ները
- Լավ պատկերացում կազմել միջգերատեսչական համագործակցության, այդ թվում՝ համագործակցության շրջանակում պատասխանատվության և հաշվետվողականության մասին
- Լավ պատկերացնել, թե ինչպես կարելի է ձևավորել արդյունավետ աշխատանքային միջավայր միջգերատեսչական թիմերում
- Համատեղ գնահատել, արդյոք մշակված միջոցներն արդյունավետ են բռնությունը դադարեցնելու համար

7.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Միջգերատեսչական արձագանքը այն միջամտության ռազմավարությունն է, որը ներառում է ընտանեկան բռնության մեջ ներգրավված բոլոր շահակից կողմերի համագործակցությունը, հաղորդակցությունը և համագործակցությունը՝ միասնական, հետևողական և ամբողջական մոտեցում ապահովելու համար: Շահակիցների թվում են առողջապահության ոլորտի մասնագետները, ոստիկանությունը, դատական և իրավական ծառայությունները, դատախազները, սոցիալական աշխատողները, ապաստարանները, հասարակական կազմակերպությունները և համապատասխան այլ համայնքային խմբերը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

- Չափազանց կարևոր է, որ պաշտպանություն և աջակցություն տրամադրող հաստատություններն ու գործակալությունները հարգեն բռնության ենթարկված անձանց ինքնորոշման իրավունքը և վերահսկողություն կամ իշխանություն չհաստատեն նրանց նկատմամբ:
- Այս սկզբունքներից բացառություններն արվում են միայն այն դեպքում, եթե ուղղակիորեն վտանգված է անձի կյանքը, առողջությունը կամ ազատությունը: Նման դեպքերում ոստիկանությունը կամ այլ գերատեսչությունները պետք է գործեն առանց տուժողի հետ քայլերը համաձայնեցման:
- Իրավազորող աջակցությունը հիմնվում է տուժողների հնարավորությունների և կարողությունների, այլ ոչ թե թույլ կողմերի վրա:
- Տուժողներին չի կարելի քննադատել կամ մեղադրել իրենց վարքի համար:
- Իրավազորող աջակցությունը ենթադրում է, որ բռնության ենթարկված անձին.
    - հասկանում և հավատում են,
    - տեղեկացնում են իր իրավունքների մասին, որպեսզի նա կարողանա հիմնավորված որոշումներ կայացնել,
    - հարգում են նրա որոշումները և գնահատում նրա փորձառությունը,
    - ակտիվորեն աջակցում են նրա իրավունքների և կարիքների բացահայտմանը և իրականացմանը:

Համապարփակ և համակարգված աջակցություն: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան պահանջում է, որ կողմերը «ձեռնարկեն բոլոր միջոցները կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարելու համար» (հոդված 7, պարբերություն 1): Համապարփակ աջակցությունը նշանակում է, որ տուժողի բոլոր կենսական կարիքները բավարարվում են: Դա անհրաժեշտ է բռնությունից զերծ ապրելու համար: Նման աջակցությունը ներառում է սոցիալական և տնտեսական իրավունքները, մշտական և մատչելի բնակարանի իրավունքը, անվճար առողջապահական խնամքի, կրթության իրավունքը, արդարադատության մատչելիության, աշխատաշուկայի մատչելիության, ամուսնուց կամ զուգընկերոջից անկախ կացության իրավունքը, ինչպես նաև քաղաքական, մշակութային և այլ իրավունքները:

Միջգերատեսչական համակարգման օրինակներից մեկը կոչվում է Համայնքի համակարգված արձագանք (ՀՀԱ): Այն այդպիսի արձագանքի առաջին մոդելներից մեկն է, որը մշակվել է 1980-ականներին Մինեսոտա նահանգի Դուլութ քաղաքում և կոչվում է «Դուլութի ընտանեկան բռնության միջամտության ծրագիր» (ԴԸԲՄԾ): Համայնքային միջամտության ծրագրերը (ՀՄԾ) կենտրոնանում են համայնքում ընտանեկան բռնության նկատմամբ ինստիտուցիոնալ արձագանքների բարեփոխման, կատարելագործման և համակարգման վրա:

ԴԸԲՄԾ-ն սահմանում է ՀՄԾ-ների ութ հիմնական բաղադրիչներ.

1. փիլիսոփայական մոտեցում, որի կենտրոնում տուժողների անվտանգությունն է.
2. տուժողների անվտանգությունը բարձրացնող քաղաքականությունների և ակտերի մշակում.
3. ծառայություններ մատուցողների միջև համագործակցության ընդլայնում.
4. համակարգի հաշվետվողականությունը բարելավող մոնիթորինգի և հսկողության համակարգերի կառուցում.
5. քրեական արդարադատության համակարգում և ավելի լայն համայնքում բռնության ենթարկված կանանց պաշտպանություն՝աջակցող ենթակառուցվածք ստեղծելու համար.
6. իրավախախտների համար պատժամիջոցների սահմանում և վերականգնման հնարավորությունների ընձեռում.
7. այն հետևանքների չեզոքացում, որոնք կանանց նկատմամբ բռնությունն առաջացնում է երեխաների մոտ.

8. ՀՀԱ-ի գնահատում՝ տուժողների անվտանգության ապահովման և իրավախախտներին պատասխանատվության կանչելու համար[452]:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է մեկ կամ մեկից ավելի մարմինների լիազորեն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար մշակված քաղաքականությունների և միջոցների համակարգումը, իրականացումը, դիտարկումն ու գնահատումը կատարելու համար[453]: Միևնույն ժամանակ, 10-րդ հոդվածը պետք է համատեղ կարդալ 9-րդ հոդվածի (քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության հաստատման պահանջ) և 11-րդ հոդվածի հետ (կանոնավոր պարբերականությամբ դասակարգված վիճակագրական տվյալների հավաքագրման և հետազոտությանն աջակցելու պահանջ): Ներպետական արդյունավետ համակարգումը գործում է ոչ միայն համապատասխան նախարարությունների, մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ազգային մակարդակով այլ շահագրգիռ կողմերի միջև:

Կախված առկա կառավարման ներպետական կառույցներից, միջգերատեսչական համագործակցությունն անհրաժեշտ է նաև տեղական ծառայություններ մատուցողների միջև և միջանկյալ (մարզային, տարածքային կամ միավորների) մակարդակով: Հատկանշական է, որ գերատեսչությունների միջև պետք է լինի նաև համագործակցություն և համակարգում: Այսինքն՝ անհրաժեշտ է և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց համագործակցություն: Ենթապետական մակարդակով արդյունավետ ներգրավվածությունը պահանջում է՝ 1) ենթապետական մակարդակով համակարգման հստակ մանդատ և 2) պետական և ենթապետական մակարդակները փոխկապակցող համատեղ ղեկավար կոմիտեների ստեղծում:

Միջգերատեսչական համակարգման արդյունավետ մեխանիզմի ստեղծումը պահանջում է ժամանակ, տեխնիկական փորձաքննություն, բոլոր առանցքային դերակատարների ի սկզբանե ներգրավում և քաղաքական կամք: Մասնագիտացված կառույցը պահանջում է անձնակազմ և համապատասխան բյուջե:

Միջգերատեսչական արդյունավետ համագործակցությունը պահանջում է սերտ համագործակցություն և հաղորդակցություն տարբեր ոլորտների միջև՝ նախատեսելով ակտերի, համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի կիրառումը: Համատեղ ակտերը բարձրացնում են ընթացակարգերի և հաղորդակցության չափանիշների թափանցիկությունը: Գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակումը կարող է նաև նվազեցնել այն դեպքերը, երբ տուժողին պարտադրում են վերապատմել իր պատմությունը՝ սահմանափակելով կրկնակի տրավմատիզացիայի հավանականությունը: Համօգտագործվող տվյալների համակարգերը նպաստում են դեպքերի կառավարմանը՝ ապահովելով պատշաճ արձագանքը առանձին դեպքերում, և ծառայում են որպես տեղեկատվության աղբյուր արդյունքների մոնիթորինգի և ծրագրերի գնահատման համար:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ներառում է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման պարտավորությունը: Ի լրումն տուժողներին ուղղակի ծառայություններ մատուցման իրենց աշխատանքների, և դրանց հիման վրա, ՀԿ-ները կարող են կարևոր տվյալներ և փորձառություն տրամադրել պետական մարմիններին այդ հարցերի վերաբերյալ: Նրանց մասնակցությունը համակարգման մեխանիզմներին քաղաքականություն մշակողներին հնարավորություն է տալիս խորը պատկերացում կազմել տուժողների կարիքների վերաբերյալ:

---

452 Շեպարդ, Մելանի Ֆ., Փենս, Էլեն Լ. (Խմբ.) (1999թ.): Համայնքի արձագանքը ընտանեկան բռնության նկատմամբ. Դասեր Դուլութից և դրանից դուրս: Լոնդոն/Նյու Դելի: Թաուզնդ Օուքս

453 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, հոդված 10:

Միևնույն ժամանակ, այն ՀԿ-ներին հնարավորություն է ընձեռում համագործակցել քաղաքականություն մշակողներին հետ՝ հանդիսանալով այդ խոցելի խմբի կարիքների և իրավունքների ներկայացուցիչը:[454] Ուստի, նրանք պետք է ներգրավված լինեն ինչպես ազգային համակարգման մեխանիզմներում, այնպես էլ քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման գործում[455]: Հասարակական կազմակերպությունները սովորաբար բողոքում են, որ իրենց մասնակցությունը ձևական բնույթ է կրում , քանի որ նրանք չեն տեսնում իրենց ջանքերի արտացոլումը պետական քաղաքականության մեջ, ինչը կարող է պայմանավորված լինել թափանցիկության բացակայությամբ: Այդ առնչությամբ, Եվրոպայի խորհուրդը հրապարակել է որոշումների կայացման գործընթացում ՀԿ-ների մասնակցության լավագույն փորձի վերաբերյալ կանոնագիրք, որը սահմանում է մասնակցության չորս մակարդակ՝ տեղեկատվության փոխանակում, խորհրդակցություն, երկխոսություններ և գործընկերություններ: Այն ընդգծում է վստահության, հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքները[456]:

Հաստատությունների համակարգված աշխատանքը, ինչպես նաև հաստատությունների և կանանց մասնագիտացված կազմակերպությունների համագործակցությունը տուժողների պաշտպանության բազմաոլորտ մոտեցման հիմքն են: Դա Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի հիմնական պահանջներից մեկն է:

Պետությունը պարտավոր է ապահովել բռնության արդյունավետ կանխարգելման և տուժողներին աջակցության համար հետևյալ երեք «անկյունաքարը».

- Մասնագիտացված խորհրդատվության և աջակցության ծառայություններ բոլոր տուժողների և նրանց երեխաների համար, որոնք տրամադրվում են կանանց մասնագիտացված կազմակերպությունների կողմից
- Ընդհանուր աջակցության ծառայություններ պետական հաստատությունների, օրինակ՝ սոցիալական աշխատանքի կենտրոնների կողմից: Այդ ծառայությունների նպատակը տուժողին երկարաժամկետ օգնության տրամադրումն է և նրա վերականգնումը:
- Արդյունավետ միջգերատեսչական համագործակցություն՝ տուժողներին պաշտպանելու և հետագա բռնությունները (բռնության կրկնությունը) կամ կրկնակի տրավմատիզացիան կանխելու նպատակով:

Աղբյուրը՝ Բրանկովիչ, Բ., Միրցևա, Ս., 2016թ.

.

454 Բացատրական զեկույցում ընդգծվում է, որ «շատ անդամ պետություններում ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված ծառայությունների, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության բազմաթիվ այլ ձևերի զոհերի համար նախատեսված ծառայությունների գերակշիռ մեծամասնությունը մատուցվում է հասարակական կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Նրանք ունեն կացարանների, իրավաբանական խորհրդատվության, բժշկական և հոգեբանական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև թեժ գծերի սպասարկման և այլ կարևոր ծառայությունների մատուցման հին ավանդույթ»: Բացատրական զեկույց, պարբերություն 68:

455 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջների կատարում՝ ազգային համակարգոր մարմնի կազմավորում, էջ. 8. Բացատրական զեկույցում նշվում է՝ «Թեև 9-րդ հոդվածը վերաբերում է միայն կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի գործում ակտիվություն ցուցաբերող ՀԿ-ներին և քաղաքացիական
հասարակությանը, սա չպետք է Կողմերի համար արգելք հանդիսանա ավելի խորացնելու աջակցությունը և սատարելու ավելի լայն համատեքստում ընտանեկան բռնության հարցերով զբաղվող ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող աշխատանքին»: Բացատրական զեկույց, պարբերություն 69:

456 Եվրոպայի խորհուրդ, Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության լավագույն փորձի կանոնագիրք. https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServicesDisplayDCTMContent?documentId=09000016802eede1

Աղյուսակ 3. Տուժողների աջակցության և պաշտպանության գործում ներգրավված ծառայություններ և դերակատարներ



Բռնության կանխարգելման և տուժողների պաշտպանությամբ զբաղվող գործակալությունները կատարում են կարևոր առաջադրանքներ, հետևաբար, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր գործակալություն սահմանի հստակ ուղեցույցներ այն մասին, թե ինչպես է այն առնչվում կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը և ինչպես պատրաստել և ապահովել պրոֆեսիոնալ անձնակազմ: Այլ գերատեսչությունների հետ երկկողմ համագործակցությունը և միջգերատեսչական թիմերում համագործակցությունը պետք է կազմեն ներքին ուղեցույցների մաս, քանի որ միայն հստակ հանձնառությունները կարող են հանգեցնել արդյունավետ համագործակցության[457]:

7.2 ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Հիմնական սկզբունքները, որոնց վրա հիմնվում է տուժողներին աջակցությունը հետևյալն են[458].

457 ԿԸԲԵՑ (2012թ.): Պաշտպանություն II. Ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման կարողությունների զարգացում `բարձր ռիսկի տուժողներին պաշտպանելու համար, Ուսուցման ռեսուրս: EU DAPHNE նախագիծ ՊԱՇՏՊԱՆՈԹՅՈՆ II. Վիեննա, Մոդուլ 2.1:

458 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.) «Բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմագործակալական համագործակցություն», վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ, 59-60 էջեր:

- **Տուժողի վստահության ձևավորումը ինստիտուցիոնալ համակարգի նկատմամբ**. այն չպետք ընկալվի որպես տուժողների կողմից «ինքնըստինքյան» վստահություն հաստատությունների նկատմամբ, փոխարենը պետք է ընկալել, որ տուժողի վստահությունը հեշտությամբ կարելի է կորցնել.
- **Ապահովել, որ համակարգը իրականում արձագանքի տուժողի կարիքներին՝** նրան լսեն, հասկանան, տեղեկացնեն, տրամադրվող աջակցությունը միտված լինի տուժողի իրավունքների ընդլայնմանը.
- **«Դուռը բաց թողնել». կարևոր է տեղեկացնել տուժողին,** որ նա ըստ ցանկության կարող է դիմել մասնագետների, և նրա որոշումները կհարգվեն, նույնիսկ եթե նա չի ներկայացել հանդիպմանը կամ չի պատասխանել մասնագետների զանգերին.
- **Զգուշությամբ վերաբերել լիազորությունների կիրառմանը.** տուժողը կարող է խուսափել որոշ հաստատություններ դիմելուց, գիտակցելով թե, որքան մեծ են նրանց լիազորությունները, և կարող է չկիսվել իր մտահոգություններով, վախենալով օրինակ, որ սոցիալական ծառայություններն իրավասու են երեխաներին հեռացնել ընտանիքից: Շատ կարևոր է զգուշավորություն դրսևորել կառույցների լիազորությունների հարցում և պարբերաբար անդրադառնալ դրանց.
- **Գենդերային մոտեցում միջգերատեսչական աշխատանքում.** տուժողների աջակցության բոլոր ձևերը պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա. կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ընկալում գենդերային տեսանկյունից, կենտրոնում դնելով տուժողի մարդու իրավունքները և անվտանգությունը: Միասնական մոտեցում, որը հաշվի է առնում տուժողի, իրավախախտի, երեխաների և նրանց ավելի լայն սոցիալական միջավայրի հարաբերությունները, ուղղված է երկրորդային վիկտիմիզացիայից խուսափելուն, բռնության ենթարկված կանանց տնտեսական անկախության ամրապնդմանը, հնարավորություն ընձեռելով, անհրաժեշտության դեպքում, նույն տարածքում մատուցել տարբեր ծառայություններ՝ տուժողին պաշտպանելու և աջակցելու համար, խոցելի անձանց, այդ թվում՝ բռնության ենթարկված երեխաների հատուկ կարիքներին համապատասխան և հասանելի լինելով նրանց համար:
- **Տուժողի վիճակը թեթևացնելու և նրան խնամք տրամադրելու կարևորությունը.** տուժողները կրում են բռնության բազմաթիվ հետևանքներ, նրանք վախենում են և անորոշ իրավիճակում են, և երբեմն ամաչում են: Նրանք չափազանց մտահոգված են իրենց երեխաների համար: Նաև խնամքի և աջակցության կարիք ունեն:

Միջգերատեսչական աշխատանքը առավել արդյունավետ է, եթե այն հիմնված է հստակ նպատակների և կարգավորումների վրա և իրականացվում է ինչպես պետական, այնպես էլ անհատական մակարդակով:

Կարելի է առանձնացնել միջգերատեսչական աշխատանքի հետևյալ երեք ուղղությունները.

1. **Օրենքների և կարգերի կիրառում.** Միջգերատեսչական թիմերի աշխատանքի հիմքում ներպետական կամ տարածքային օրենքներն ու կարգերն են: Այդ թիմերի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ են հստակ ուղեցույցներ՝ օրենքների և կարգերի իրականացման վերաբերյալ: Օրենքների և կարգերի այն տարրերը, որոնք խոչընդոտում են զոզոհակենտրոն և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմանը, պետք է բացահայտվեն, ուսումնասիրվեն և վերանայվեն:
2. **Տուժողներին համակարգված օգնության տրամադրում** (անհատական շահերի պաշտպանություն). առանձին դեպքեր քննարկելու համար միջգերատեսչական թիմերում կազմակերպվող աշխատաժողովները պետք է սահմանափակվեն բարձր ռիսկային իրավիճակներում տուժողների պաշտպանության հատուկ դեպքերով: Նման աշխատաժողովներ անցկացնելը ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար:

3. **Միջոցների համակարգում և կատարելագործում** (ինստիտուցիոնալ շահերի պաշտպանություն). միջգերատեսչական աշխատանքի կարևոր նպատակն է ավելի լավ համակարգել և բարելավել բռնությունները կանխելու և տուժողներին պաշտպանելու միջոցները, օրինակ՝ նպաստելով մասնագետների աջակցության ծառայությունների ստեղծմանը: Այս ոլորտում միջգերատեսչական աշխատանքը իրականացվում է համակարգված, պարբերաբար մասնակցելով տարածքային գործողությունների ծրագրի գնահատմանը և իրականացմանը: Նման ծրագիրը հիմնվում է առկա իրավիճակի գնահատման վրա և ներառում կոնկրետ նպատակներ և թիրախներ: Ինստիտուցիոնալ շահերի պաշտպանության աշխատանքի էական գործառույթը նաև տարածքային և ազգային մակարդակի միջգերատեսչական աշխատանքի մասին տեղեկատվության և փորձի տրամադրումն է:

Միջգերատեսչական համակարգումը պետք է լավ կառավարվի, որպեսզի նպաստի արդյունավետ միջամտություններին, որոնք թույլ կտան պաշտպանել տուժողի իրավունքները և կբարձրացնեն նրա անվտանգությունը: Դրան կարելի է հասնել հետևյալ քայլերի միջոցով.

- ընդհանուր տեսակետներ և նպատակներ՝ առաջնահերթություն տալով տուժողի անվտանգությանը.
- բոլոր ներգրավված կողմերի հանձնառություն, հստակ ընթացակարգեր և համագործակցության կանոններ.
- հանդիպումների պլանավորման և անցկացման համակարգող կառույց (առանձին դեպքերի կամ պետական մակարդակով միջգերատեսչական համակարգման պատասխանատու մարմնի)՝ արձանագրություններ կազմելու և դրանք տարածելու, ինչպես նաև աշխատանքային ընթացակարգերի և նպատակների պահպանման համար.
- աշխատանքային հանդիպումների և առանձին դեպքերի քննարկման համար աշխատաժողովների արդյունավետ կառավարում.
- անհրաժեշտ է նախագահել ինստիտուցիոնալ և անհատական շահերի պաշտպանության հանդիպումներին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Գերատեսչությունների միջև համագործակցության և բռնության կանխարգելման աշխատանքները պետք է իրականացվեն ամենօրյա ռեժիմով, հատկապես՝ ծայրահեղ վտանգի ընտանեկան բռնության դեպքերում: Միջգերատեսչական աշխատաժողովները[459] լրացուցիչ գործիք են՝ տուժողներին որոշակի իրավիճակներում, օրինակ՝ բարձր ռիսկի պարագայում, առավել ինտենսիվ աջակցություն տրամադրելու համար:

459 Միջգերատեսչական հանդիպումների օրինակ է Մեծ Բրիտանիայի Ռիսկերի գնահատման աշխատաժողովը (անգլերեն հապավումը՝ MARAC): Դա պարբերաբար անցկացվող հանդիպում է, որտեղ շահագրգիռ կողմերը քննարկում են ընտանեկան բռնության բարձր ռիսկի դեպքերը և միասին մշակում տուժողի և նրա երեխաների անվտանգության ծրագիրը: Մասնակիցների թվում են, ի թիվս այլոց, ոստիկանությունը, ընտանեկան բռնության հարցերով անկախ խորհրդատուները, երեխաների պաշտպանության սոցիալական ծառայությունները, այցելող թերապևտները և բժիշկները:

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մեծ Բրիտանիայի Ռիսկերի գնահատման աշխատաժողով (MARAC)

MARAC մոդելը օգնել է Մեծ Բրիտանիայի ոստիկանությանը՝ ընտանեկան բռնության դեմ համապարփակ արձագանք մշակելու համար: MARAC-ը տեղական մարմինների, այդ թվում՝ ոստիկանության, առողջապահության և բնակարանաշինության ոլորտի մասնագետների, ապաստարանների աշխատողների և կառավարական և ոչ կառավարական այլ մասնագետների, ներառյալ ընտանեկան բռնության անկախ խորհրդատուների (ԸԲԱԽ) ամենամսյա հանդիպումն է, որը ծառայություններ է մատուցում առավել վտանգված ընտանեկան բռնությունից տուժած անձանց: MARAC-ն առաջին անգամ կազմակերպվել է 2003 թվականին Քարդիֆում, ներկայումս Մեծ Բրիտանիայում գործում է ավելի քան 200 նման աշխատաժողով:

MARAC-ները հիմնված են աշխատանքային այն գաղափարի վրա, որ ոչ մի առանձին գործակալություն կամ անհատ չի կարող տեսնել տուժողի կյանքի ամբողջական պատկերը, սակայն նրանք բոլորը միասին հավաքական ուժով կապահովեն այն խորաթափանցությունը, որը վճռորոշ նշանակություն կունենա տուժողի անվտանգության ապահովման համար: MARAC-ը գործակալություն չէ և համապատասխան գործողություններ կատարելու պատասխանատվությունը մնում է առանձին գործակալությունների վրա և չի փոխանցվում MARAC-ին: Համաժողովը գործում է տեղական մակարդակով՝ ոստիկանության ղեկավարությամբ կազմակերպվող հանդիպումների ձևաչափով: Յուրաքանչյուր հանդիպում անդրադառնում է 20-30 բարձր ռիսկային դեպքերի: Դեպքերը հաջորդաբար քննարկման են ներկայացվում MARAC-ին: ԸԲԱԽ-ները վերապատրաստված մասնագետներ են, որոնք պատասխանատու են MARAC-ին ներկայացված բոլոր դեպքերի կառավարման համար: Նրանք պատասխանատու են աշխատաժողովի մասնակիցներին տուժողի տեսակետները ներկայացնելու և տուժող կնոջ կամ աղջկա և գործընկեր գործակալությունների միջև կապ հաստատելու համար՝ երաշխավորելով առաջարկվող գործողությունների անվտանգությունն ու նպատակահարմարությունը: ԸԲԱԽ-ները մեկ պատուհանի սկզբունքով ապահովում են տուժողների համար գործընթացի հասանելիությունը, կանխելով իրենց պատմությունը բազմիցս պատմելու ստիպված լինելու պատճառով տուժողի երկրորդային վիկտիվիզացիան:

MARAC-ների նպատակներն են տեղեկատվության փոխանակումը, տուժողների անվտանգության, առողջության և բարեկեցության բարելավումը, նաև անհատի կամ ընդհանուր համայնքի համար իրավախախտի կողմից բխող վտանգի աստիճանը որոշելը: MARAC-ները ապահովում են ռիսկերի կառավարման ծրագրի մշակման և իրականացման համար համատեղ աշխատանքային հարթակ, որը մասնագիտական աջակցություն է տրամադրում բոլոր նրանց, ովքեր գտնվում են ռիսկի գոտում և նվազեցնում վնասների և կրկնակի վիկտիմիզացիայի վտանգը: MARAC-ի մեկ այլ նպատակներից է կազմակերպության հաշվետվողականության բարձրացումը և ընտանեկան բռնության բարձր ռիսկի գործերում ներգրավված անձնակազմին աջակցությունը:

MARAC-ի համակարգման մեխանիզմը առավել արդյունավետ պայմանները որոշելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն, թեև մի շարք երկրներ, այդ թվում՝ Ավստրիան արդեն իսկ տեղայնացրել են այդ մոդելը: Մինչ այժմ առկա պրակտիկան հաստատում է MARAC մոդելի ուժեղ կողմերը, բայց նաև ցույց է տալիս մի շարք թերություններ: Օրինակ, MARAC-ի արդյունավետ գործելու համար կարևոր է նրա բոլոր անդամների հետևողական մասնակցությունը կառույցի աշխատանքներում, յուրաքանչյուր գործակալությունում ցանկալի է ունենալ համակարգող կամ հատուկ ներկայացուցիչներ, բացի այդ, նույնիսկ եթե այդ ամենն իրականացվի, բոլոր մասնակիցների համար միևնույն է անհրաժեշտ է ընտանեկան բռնության գծով մասնագիտական ուսուցում: Գործընթացի գնահատման ընթացքում նաև մատնանշեց, որ զոհակենտրոն մոտեցումը պահանջում է կանանց իրավունքների պաշտպանների մասնակցություն գործընթացին և պրակտիկայի հետևողական մոնիթորինգ: Քննադատության հիմնական կետերը վերաբերում են այն տուժողների կողմից տեղեկացված համաձայնության բացակայությունը, որոնց գործերը հանձնվում են MARAC-ներին, ինչպես նաև ծայրահեղ ծանր քրեական գործերի վրա շեշտը դնելը և այլ պակաս լուրջ թվացող գործերին ուշադրություն չհատկացնելը[460]:

460 http://www.standingtogether.org.uk/ ՄԱԿ-ի կանանց անվտանգության ոլորտի մոդուլ (2011թ.): Դեպքի ուսումնասիրություն. Լոնդոնի ոստիկանության, տեղական իշխանությունների և ծառայություններ մատուցողների միջև ռիսկերի գնահատման միջգերատեսչական համաժողով (Մեծ Բրիտանիա): Նյութը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.endvawnow.org/uploads/browser/files/security_marac_case_study.pdf

Հյուսիսային Իռլանդիայում սեռական բռնության միջամտությունների տեղական համակարգումը

Հյուսիսային Իռլանդիայի սեռական բռնության ենթարկված անձանց աջակցության առաջին կենտրոնը (անգլերեն հապավումը՝ SARC) ստեղծվել է 2013 թվականին՝ տուժողների համար ստեղծելով անվտանգ, ապահով և գաղտնի միջավայր մեկ պատուհանի սկզբունքով: Ծառայությունը համատեղ ֆինանսավորվում է Առողջապահության, սոցիալական ծառայությունների և հանրային անվտանգության դեպարտամենտի և Հյուսիսային Իռլանդիայի ոստիկանության ծառայության կողմից: «Ռոուան» կոչվող կենտրոնը գտնվում է Անտրիմ տարածքի հիվանդանոցում, որի նպատակն է մեկ տանիքի տակ համակողմանի աջակցություն ցուցաբերել բռնաբարության և սեռական բռնության ենթարկված անձանց: Այն մատուցում է շուրջօրյա ծառայություն՝ կլոր տարի, ոստիկանության ուղեգրով կամ ինքնաուղղորդմամբ:

Ռոուանը բռնության ենթարկված անձանց տրամադրում է մի շարք ծառայություններ, այդ թվում՝ կարիքների համապարփակ գնահատում, հուզական և հոգեբանական աջակցություն, դատաբժշկական փորձաքննություն, տեղում հատկացվող հակաբեղմնավորիչ միջոցներ, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների սկրինինգ և բուժում, ոստիկանությանը հաղորդում ներկայացնելու հարցում աջակցություն, խորհրդատվության և/կամ այլ օժանդակ ծառայությունների ուղղորդում, հետմիջադեպային աջակցություն, 24-ժամյա խորհրդատվության և տեղեկատվական օգնության գիծ: Հատուկ ուշադրության են արժանանում բռնության ենթարկված երեխաների, հաշմանդամների և միգրանտների կարիքները:

Ռոուանը կառուցվել է SARC մոդելի հիման վրա, որը համեմատաբար լայնորեն տարածված է Անգլիայում և Ուելսում: 2012 թվականին Անգլիայում և Ուելսում գործում էր 12 SARC: SARC ծառայությունները մատուցվում են մի շարք հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից՝ ոստիկանության կամ առողջապահության ազգային մարմիններին պատկանող տարածքներում: SARC-երի ղեկավարումն ապահովում են տեղական ղեկավար խմբերը, որոնք միավորվում են ազգային ղեկավար խմբում: SARC-եր կարելի է մուտք գործել ինքնաուղղորդման միջոցով, նաև ոստիկանության կամ առողջապահական կամ սոցիալական ծառայությունների կողմից ուղղորդման միջոցով: SARC-երը, շնորհիվ գործերը ղեկավարող ճգնաժամային աշխատողների, ապահովում սեռական բռնության ենթարկված անձերի նկատմամբ համակարգված և հոգատար վերաբերմունք, առանց ավելորդ սպասման ժամանակի կամ ցուցմունքներ վերցնելու կրկնվող գործընթացի և ուսումնասիրությունների: Ճգնաժամային աշխատողները հանդես են գալիս որպես տուժողների շահերի պաշտպանող, այդպիսով ապահովելով պատշաճ համակարգում միջամտող տարբեր գործակալությունների միջև: Տուժողի՝ SARC-ից հեռանալուց հետո գործը ստանձնում է սեռական բռնության գործերով անկախ խորհրդատուն և համակարգում է հետագա տուժողի նկատմամբ խնամքն ու աջակցությունը: Թեև ծառայություններ մատուցողները յուրաքանչյուր դեպքի քննարկման համար չեն հանդիպում SARC-ի հետ, սակայն Վնասի նվազեցման ֆորումները, որոնք կազմակերպվում են պարբերաբար, ներգրավելով բոլոր շահագրգիռ ծառայությունների մատուցողներին, հնարավորություն են տալիս քննարկել ծառայությունների մատուցման հետ կապված հարցերը և մշակել համապատասխան ռազմավարություն[461]:

Համայնքի համակարգումն Ալբանիայում

2011–2015 թվականների Ալբանիայի գենդերային հավասարության և գենդերային բռնության և ընտանեկան բռնության նվազեցման ազգային ռազմավարության նպատակն է կանանց նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարի համար համազգային արդյունավետ, համապարփակ և համակարգված քաղաքականությունների և միջոցառումների մշակումը: Նախատեսվում է պետական և ոչ պետական դերակատարների միջև համագործակցություն, և այդ նպատակով ստեղծվում են միջգերատեսչական համակարգող մեխանիզմներ ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակով: Տեղական մակարդակով համայնքների համակարգված արձագանքը (ՀՀԱ) իրականացվում է 24 համայնքներում, ընդ որում մինչև 2020 թվականը նախատեսվում է այն տարածել 250 համայնքներում:

ՀՀԱ-ները փորձարկվում են 2007 թվականից ի վեր և նրանց կազմում ընդգրկված են համայնքների, ոստիկանության, դատարանների ներկայացուցիչները, այդ թվում՝ դատախազներ և դատական կարգադրիչներ, առողջապահական գրասենյակների, զբաղվածության գրասենյակների, կրթական բաժինների և գենդերային բռնության ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Գործընթացում ընդգրկվելու համար տուժողը պետք է դիմի ՀՀԱ-ի ներկայացուցիչներից որևէ մեկին: Այն ներկայացուցիչը, ում հետ կապվել են, սկսում է գործընթացը՝ տեղեկացնելով այդ մասին առողջապահական ծառայություններին, ոստիկանությանը և համայնքի ներկայացուցիչներին:

461 http://www.nidirect.gov.uk/the-rowan-sexual-assault-referral-centre-sarc

Մատուցվող ծառայությունները նախատեսում են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ լուծումներ, այդ թվում՝ առողջապահական աջակցություն, ապաստարանի տրամադրում, պաշտպանություն, ներառյալ՝ անհետաձգելի պաշտպանական որոշումների ընթացակարգեր: Երկարաժամկետ միջամտությունը ներառում է հոգեթերապիա, երեխաներին օգնության, ամուսնալուծության և վերամիավորման դեպքերում օգնության ընթացակարգեր:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման նպատակով իրականացվան Ալբանիայի ծախսերի ուսումնասիրությունում նշվում են ՀՀԱ-ների կենսունակության հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց սահմանափակ ծածկույթը, (դրանք գործում են միայն 24 համայնքներում)[462]:

Իշխանությունների, այդ թվում՝ սոցիալական աշխատողների, համայնքային ոստիկանության աշխատակիցների և ընտանեկան բռնության խնդիրներին առնչվող այլ շահակցիների արձագանքի համակարգումը զգալիորեն բարձրացնում է տուժողների պաշտպանվածությունն ու բռնություն գործադրողի պատասխանատվությունը: Համակարգման գերակա նպատակը տուժողի անվտանգության բարձրացումն է: Արձագանքման այնպիսի համակարգումը, որի հիմքում տուժողների անվտանգությունը չե, կարող է վնասակար լինել տուժողների համար:

Տուժողի անվտանգության բարձրացմանը ուղղված համակարգումը նպատակահարմար է չորս տարբեր առումով.

- արձագանքման արդյունավետությունը շատ դեպքերում կախված է արձագանքող մյուս կողմերի արձագանքի արդյունավետությունից:
- տարբեր դերակատարներ կարող են առնչվել տուժողներին տարբեր կետերում և միջավայրերում: Նրանցից յուրաքանչյուրն ունի եզակի հնարավորություն՝ օգնելու տուժողներին գտնել անհրաժեշտ ռեսուրսները:
- համայնքի տարբեր անդամներին դիմելը՝ համակարգված արձագանքին իրենց մասնակցությունը ապահովելու համար, կարող է բարձրացնել արձագանքի արդյունավետությունը: Իրավական համակարգը ցանկացած արձագանքի կարևոր մասն է: Այդուհանդերձ, այլ համայնքային հաստատությունները (կրոնական, տնտեսական, բժշկական, լրատվամիջոցներ, կրթություն) կարող են ավելի մեծ ազդեցություն ունենալ «սոցիալական նորմեր ստեղծելու» հարցում, քան իրավական համակարգը[463]:
- համայնքի համապարփակ արձագանքը կարող է լուծել հարակից սոցիալական խնդիրները, որոնք թույլ չեն տալիս կանանց պաշտպանություն ստանալ: Արտակարգ կացարանն և բռնարարի քրեական հետապնդումը միակ կարիքները չեն, որ կարող են հուզել բռնության ենթարկված կանանց: Համակարգված արձագանքման ծրագրերն ավելի ու ավելի են կենտրոնանում այն սոցիալական խնդիրների վրա, որոնք կանանց համար դժվարացնում են բռնությունից պաշտպանություն փնտրելը, ինչպիսիք են աղքատությունն ու գործազրկությունը կամ մատչելի բնակարանի բացակայությունը:

462 Համապարփակ և համակարգված մոտեցման իրականացում, Ա. Կրիժան և Ե. Պապ, Եվրոպայի խորհուրդ, ապրիլ 2016թ.:

463 Մելանի Ֆ. Շեփարդ և Էլեն Լ. Փենս, 1999թ. «Ընտանեկան բռնության նկատմամբ համայնքների արձագանքները համակարգելու փիլիսոփայության վերաբերյալ որոշ մտքեր՝ դասառություն Դուլութի մոդելից» 25, 33 էջեր :

7.3 ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ընտանեկան բռնության մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են՝

1) սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)[464].

2) ոստիկանությունը.

3) կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը[465].

4) առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը[466].

5) խնամակալության և հոգաբարձության մարմինները.

6) ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները՝

ա. աջակցության կենտրոնները,

բ. ապաստարանները:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանիքում բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են Լիազոր մարմնի հետ: Նշված մարմինները նաև մասնակցում են նշված բնագավառում հանրության իրազեկմանը, ընտանիքում բռնության ենթարկվածներին սոցիալական և նյութական աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Ընտանեկան բռնության կանխարգելման խորհուրդը (ստեղծվել է ՀՀ կառավարության 10.07.2018թ. N-786-Ն որոշմամբ) բաղկացած է ոչ ավելի, քան 25 տարբեր պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, աջակցության կենտրոններից և ապաստարաններից: Խորհուրդը քննարկում և ներկայացնում է առաջարկներ ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում պետական միասնական քաղաքականության վերաբերյալ: Այն նաև քննարկում է ընտանեկան բռնության կանխարգելմանն առնչվող առանձին հարցերը, հրատապ խնդիրները և ներկայացնում դրանց լուծմանն ուղղված համապատասխան առաջարկություններ: Խորհուրդը ներկայացնում է ընտանիքում բռնության վերաբերյալ հանրությանն իրազեկելու միջոցառումներ իրականացնելու առաջարկություններ: Այն քննարկում է տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա ներկայացնում է առաջարկություններ: Խորհուրդը ներկայացնում է ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ: Խորհուրդը նաև ուսումնասիրում և քննարկում է հանրապետական գործադիր մարմինների կողմից ընտանիքում բռնության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին ուղղված ծրագրերի մասին հրապարակված հաշվետվությունները: Այն առաջարկություններ է ներկայացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ընտանիքում բռնության ենթարկվածների՝ ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման և ժամանակավոր ֆինանսական աջակցության տրամադրման վերաբերյալ:

Անհատական դեպքերի մակարդակով ոստիկանությունը համագործակցում է նաև պետական

464 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

465 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

466 ՀՀ առողջապահության նախարարություն:

այլ մարմինների հետ, օրինակ՝ առողջապահության նախարարությունից ընտանեկան բռնության դեպքերի մասին տեղեկատվություն ստանալիս, աջակցության կենտրոնը, որը դիմում է ոստիկանություն՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հետ ստուգելու նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշման արձակելու հիմքերի առկայությունը, համագործակցում է ապաստարանների հետ՝ ապաստարանում անձին տեղավորելու որոշում կայացնելու վերաբերյալ, եթե կա նրա կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգ, համագործակցում է դատախազների, քննիչների և այլ անձանց հետ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է երկու նոր պետական ապաստարան, որտեղ ընտանեկան բռնության ենթարկված կանանց և, անհրաժեշտության դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին մատուցում են օրենքով սահմանված բոլոր ծառայությունները:

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ոստիկանությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրում է ընտանիքում բռնության այն դեպքերի վերաբերյալ տվյալները, որոնց կապակցությամբ կիրառել է պաշտպանության միջոցներ, կամ որոնց վերաբերյալ հաղորդում է ստացել[467]:

«Ընտանեկան բռնության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հանդիսանալով Լիազորված մարմին, իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում:

Սակայն, 2017 թվականին օրենքի ընդունումից ի վեր, միասնական վիճակագրություն չի կազմվել, քանի որ կառավարության համապատասխան որոշումը չի ընդունվել: 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունվեց ՀՀ կառավարության 1381-Ն որոշումը, որով հաստատվում է ընտանեկան բռնության գործերով կենտրոնացված հաշվառման կարգը: Որոշման համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հանդիսանալով Լիազորված մարմին, յուրաքանչյուր կիսամյակ տեղեկությունները ստանալուց և ամփոփելուց հետո՝ իր պաշտոնական կայքում հրապարակում է համապատասխան ժամանակահատվածի վիճակագրական հաշվետվությունը (տեղեկատվությունը հրապարակվում է առնվազն վեց ամիսը մեկ անգամ): Նախարարության տվյալների համաձայն՝ համապարփակ վիճակագրության առաջին փաթեթը կհրապարակվի 2021 թվականի վերջին:

Ընտանեկան բռնությունը համարվում է բռնության ոչ բացահայտ ձև, ուստի տեղեկատվությունն ու վիճակագրությունն ամբողջությամբ չեն արտացոլում իրական պատկերը: Վիճակագրական տվյալների ճշգրտության վրա ազդում են նաև այլ գործոններ, օրինակ՝ հասարակության ընկալումը, որ այդ դեպքերը մասնավոր կյանքի խնդիր են և դրանց մասին բարձրաձայնելը ամոթալի է կամ կարող է սպառնալ տուժողի կյանքին: Արդյունքում, շատերը խուսափում են հաղորդել իրենց հայտնի բռնության դեպքերի մասին: Սակայն, վիճակագրությունը հաստատում է խնդրի գոյությունը: Իրավասու մարմինների տրամադրած տվյալները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը անհամաչափ ազդում է կանանց վրա[468]:

«Ընտանեկան բռնության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանությունը լիազոր մարմնին տրամադրում է ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ իր վարած վիճակագրությունը[469]: Ոստիկանության պետի 2019 թվականի

467 ՀՀ կառավարության 10.10.2019թ. N-1381-Ն որոշում:

468 Նույն տեղում:

469 https://www.refworld.org/pdfid/5a6b2e274.pdf

սեպտեմբերի 24-ի 22-Լ հրամանը հաստատում է ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ոստիկանության ստորաբաժանումների հաշվետվության ձևը: Համաձայն 22-Լ հրամանի Երևան քաղաքի վարչությունը և մարզային վարչությունները հաշվետվությունները կազմում են 3 ամիսը մեկ: Մասնագիտացված վարչությունն ապահովում է ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրության ամփոփումը, վերլուծությունը, վիճակագրության վարումը՝ անհրաժեշտության դեպքում տարածքային ստորաբաժանումներին գործնական-մեթոդական օգնության տրամադրումը:

7.4 ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՌՄԱՌԼՈՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Կանանց հասարակական կազմակերպությունները ամբողջ Եվրոպայում ունեն լավ կազմակերպված աջակցության մասնագիտացված ծառայություններ ընտանեկան բռնությունից տուժած կանանց և երեխաների համար: Կանանց հասարակական կազմակերպությունները անկախ են պետական հաստատություններից: Նրանք մասնագիտացված են և գործում են գենդերազգայուն և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ: Գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանք ունեն տուժողների իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցներ և ծառայություններ (օգնության գծեր, ապահով կացարաններ, խորհրդատվություն և ճգնաժամային կենտրոններ), որտեղ աշխատում է պատրաստված և մասնագիտացված անձնակազմ: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան սատարում է այն գաղափարին, որ մի շարք գործակալություններ համաձայնեցված և համակարգված ջանքերի շնորհիվ լավագույն ձևով աջակցում են ԿՆԲ-ի տուժողներին:

Իրավապահ մարմինները, որոնք հանցագործության վայր ժամանելու կանչ ստանալիս սովորաբար առաջինն են տուժողի հետ կապ հաստատում, պետք է կարողանան տուժողին ուղղորդել մասնագիտական օժանդակության ծառայություններ, օրինակ՝ ապաստարան կամ սեքսուալ բնույթի ոտնձգությունների հարցերով ճգնաժամային կենտրոն, որոնց գործունությունը սովորաբար իրականացվում է ՀԿ-ների կմիջոցով[470]: Կոնվենցիան նաև ճանաչում է, որ մասնագիտական օժանդակության ծառայությունները մասնագիտացել են այնպիսի օժանդակության և աջակցության ծառայությունների տրամադրման հարցում, որոնք հարմարեցված են, հաճախ՝ չմիջնորդավորված կերպով, կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության առանձին ձևերի տուժողների կարիքներին և բաց չեն լայն հանրության համար: Թեև այս ծառայությունները կարող են իրականացվել կամ ֆինանսավորվել պետական մարմինների կողմից, մասնագիտական ծառայությունների մեծ մասը տրամադրում են ՀԿ-ները[471]: Կանանց նկատմամբ բռնության տուժողների հատուկ կարիքներին համապատասխան օպտիմալ աջակցության միջոցով տուժողների իրավազորման բարդ խնդրի լուծումը «լավագույնս ապահովվում է կանանց կազմակերպությունների կողմից և տրամադրվող օժանդակության ներոք տարբեր ծառայությունների միջոցով, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնության վերաբերյալ խորը գիտելիքներով օժտված, մասնավորապես խորհրդատվական կենտրոնների, ապաստարանների, բռնաբարության ենթարկված կանանց համար ճգնաժամային կենտրոնների և սեռական բռնության տուժողների աջակցության կենտրոնների»[472]:

Կանանց հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող աջակցության հա-

470 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, պարբերություն 114:

471 Տե՛ս նույն տեղում, պարբերություն 125:

472 Տե՛ս նույն տեղում, պարբերություն 132:

տուկ ծառայությունները կարևոր են երաշխավորելու համար, որ տուժողների իրավունքները միշտ գտնվում են նրանց գործունեության կենտրոնում, և որ կանայք ստանում են իրավազորեցնող աջակցություն: Վերջիններիս անկախությունը չի նշանակում, որ պետությունը պարտավոր չէ ֆինանսավորել նրանց աշխատանքը: Կայուն և երկարատև ֆինանսավորումը չափազանց կարևոր է կանանց հասարակական կազմակերպությունների կողմից մատուցվող աջակցության ծառայությունները պահպանելու համար: Պետությունը պետք է երաշխավորի երկարաժամկետ ֆինանսավորում իրավական կարգավորումների միջոցով:

Ըստ Եվրոպայի խորհրդի կանանց և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիայի **ընդհանուր աջակցության ծառայությունները**, ինչպիսիք են առողջապահական ծառայությունները կամ սոցիալական աշխատանքի կենտրոնի ծառայությունները, այն ծառայություններն են, որոնք մատչելի են լայն բնակչության համար, մինչդեռ **մասնագիտացված աջակցության ծառայությունները** մատչելի են և նախատեսված են կանանց և նրանց երեխաների համար, ովքեր տուժել են կանանց նկատմամբ բռնությունից: Տուժողներին աջակցությունը առավել օպտիմալ է համարվում այն դեպքում, երբ բազմոլորտ թիմերը տուժողներին ուղղորդում են մասնագիտացված աջակցության ծառայություններ, եթե դրանք գոյություն ունեն տեղական մակարդակում:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կոչ է անում[473].

- ճանաչել, խրախուսել և աջակցել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում ՀԿ-ների աշխատանքին.
- արդյունավետ համագործակցություն իրականացնել ՀԿ-ների հետ:

Բազմաոլորտային թիմերի համար շատ կարևոր և ցանկալի է ստեղծել մասնագիտացված ծառայությունների հետ ուղղորդման և սերտ համագործակցության համակարգ:

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՕՐԻՆԱԿ՝ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Որոշ երկրներում գործում են այսպես կոչված ընտանեկան բռնության ենթարկված կանանց իրավունքների պաշտպաններ կամ խորհրդատուներ: Նրանք դասական իմաստով իրավաբաններ չեն, այլ հիմնականում կանայք, որոնք աշխատում են տուժողների աջակցության մասնագիտացված ծառայություններում, և նրանց գործառույթը տուժողների իրավունքները, շահերը և կարիքները ներկայացնելն է:

«Իրավունքների պաշտպանների/աջակիցների» աշխատանքում կարևորագույն նշանակություն ունեն հետևյալ սկզբունքներն ու չափանիշները.

- Բռնության ենթարկված բոլոր կանայք ունեն աջակցության իրավունք՝ մասնագիտացված աջակցության ծառայության «իրավունքների պաշտպանի» կողմից:
- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանները կամ խորհրդատուները տրամադրում են խորհրդատվություն, որը կօգնի տուժողին անդրադառնալ իր իրավիճակին, ծանոթանալ իր իրավունքներին, մշակել և իրականացնել անվտանգության ծրագրեր: Նրանք նաև գործնական աջակցություն են տրամադրում՝ ուղղորդելով տուժողին ոստիկանություն կամ դատարան և տուժողի անունից՝ նրա իրավունքները պաշտպանելուն ուղղված գործունեություն են իրականացնում:
- Իրավունքների պաշտպանը հանդես է գալիս տուժողի անունից դեպքերի դիտարկման միջգերատեսչական աշխատաժողովներում:
- Եթե իրավունքների պաշտպանը հերթափոխի մեջ չի գտնվում, մասնագիտացված աջակցության ծառայությունները պետք է առաջնահերթ աջակցություն ցուցաբերեն արտակարգ իրավիճակում հայտնված տուժողին. հետևաբար, ցանկալի է, որ նման ծառայությունները հասանելի լինեն շուրջօրյա ռեժիմով կամ օրական առնվազն 12 ժամ (առավոտյան 8.00-ից երեկոյան 20.00-ը):

473 CETS 210 – Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն, 11.V.2011, հոդված 9:

Աղբյուրը՝ Լոգառ Ռ. և Մարգանովա-Վարգովա Բ. (2015թ.), էջ 62:[474]

Գործողություն 16. Միջգերատեսչական խմբի աշխատանքը[475]

Նպատակը. Մասնագետների իրազեկվածության բարձրացում՝ միջգերատեսչական թիմի հրատապ գործողությունների, տուժողին լուրջ սպառնալիքի, ծանր հոգեկան և/կամ ֆիզիկական տրավմայի, բռնության սրման կամ սպանության ռիսկի դեպքերում միջգերատեսչական թիմի արձագանքման եղանակների վերաբերյալ:

Թիրախային խումբ. Վերապատրաստման բոլոր մասնակիցները: Սովորաբար, միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ վերապատրաստումը ներառում է միջգերատեսչական թիմի բոլոր անդամներին, իսկ դրա անհնարինության դեպքում, այդ կառույցների, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների, դատական համակարգի, ՀԿ-ների, տուժողների աջակցության մասնագիտացված ծառայությունների, առողջապահության և կրթության ծառայությունների դերը կարող են ստանձնել վերապատրաստման այլ մասնակիցները:

Տևողությունը. Տևողությունը 70 րոպե

Օժանդակ նյութեր. Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ռիսկի գործոնների ցանկ» (կազմվել է անվտանգության ծրագրման գործողության ընթացքում), Մասնակիցներին բաժանվող նյութ. «Ռիսկերի բացահայտում և գնահատում. դեպքերի նկարագրություն՝ 1 և 2», Մասնակիցներին բաժանվող նյութ. «Կառուցակարգված անվտանգության ծրագրի կազմում» (կազմվել է անվտանգության ծրագրի կազմման գործողության ընթացքում), ֆլիպչարթ գրատախտակ, մարկերներ:

Անցկացման ձևը. Դերախաղ (30 րոպե), ամբողջ խմբով քննարկում (40 րոպե):

Ցուցումներ. Դասընթացավարը մասնակիցներին խնդրում է կազմել երեք խումբ:

Առաջին խումբը միջգերատեսչական թիմն է, որտեղ մասնակիցները որոշում են, թե որ հաստատությունները/կազմակերպությունները պետք է մասնակցեն տվյալ թիմային աշխատանքին: Ըստ այդմ, թիմը կարող է բաղկացած լինել ոստիկանության, սոցիալական ծառայությունների, առողջապահության և կրթության ծառայությունների մասնագետներից, տուժողների մասնագիտացված ծառայություններից և տուժողից: Յուրաքանչյուր մասնակից ստանձնում է թիմի որևէ անդամի, նաև տուժողի դերը: Մասնակիցների նպատակն է անցկացնել միջգերատեսչական թիմի հանդիպում և մշակել անվտանգության ծրագիրը:

Մյուս մասնակիցները կազմում են երկու այլ խումբ: Առաջին խումբը վերահսկում է միջգերատեսչական թիմի աշխատանքը և վերլուծում է առաջարկվող գործողությունները տուժողի տեսանկյունից՝ պատասխանելով հետևյալ հարցին. որքանո՞վ են են առաջարկվող միջոցները նպաստում տուժողի անվտանգությանը: Երկրորդ խումբը վերահսկում է միջգերատեսչական թիմի աշխատանքը և վերլուծում է առաջարկվող գործողությունները տուժողի տեսանկյունից՝ պատասխանելով հետևյալ հարցին. ինչպե՞ս առաջարկվող միջոցները թույլ կտան տուժողին ազատվել անհանգստության և վախի զգացումից, կամ արդյո՞ք դրանք կունենան հակառակ ազդեցություն (ավելի լուրջ խնդիրներ կառաջացնեն նրա համար):

Գործողություն. Անվտանգության ծրագրի մշակում և գնահատում: Մասնակիցներին բաժանվող նյութ. «Կառուցակարգված անվտանգության ծրագրում կազմում» (կազմվել է անվտանգության ծրագրի կազմման գործողության ընթացքում) և առաջարկվող գործողությունների գնահատում տուժողի տեսանկյունից (Մասնակիցներին բաժանվող նյութ. «Առաջարկվող գործողությունների գնահատում տուժողի տեսանկյունից»):

Գործողությունների և խմբային քննարկման ուղեցույց. Մասնակիցը պատրաստում է իր դերը և կատարում դերախաղը: Վերահսկողների թիմը գրառումներ է կատարում «Առաջարկվող գործողությունների գնահատում տուժողի տեսանկյունից» մասնակիցներին բաժանվող նյութում: Դասընթացավարը հրավիրում է յուրաքանչյուր խմբից մեկ զեկուցողի ներկայացնել խմբի առաջարկած անվտանգության միջոցառումները, ինչպես նաև մշակված անվտանգության ծրագիրը: Դասընթացավարն այնուհետև հրավիրում է յուրաքանչյուր թիմի վերահսկողներին՝ ներկայացնել առաջարկվող միջոցառումների վերաբերյալ դիտարկումներ՝ տուժողի տեսանկյունից: Վերջում, դասընթացավարն ամփոփում է դիտարկումները այն մասին, թե որքանով առաջարկվող միջոցները կնպաստեն տուժողի անվտանգությանը և աջակցությանը:

Մասնակիցներին բաժանվող նյութ. Առաջարկվող գործողությունների գնահատում տուժողի տեսանկյունից –1

Առաջին խումբը վերահսկում է միջգերատեսչական թիմի աշխատանքը և վերլուծում է առաջարկվող գործողությունները տուժողի տեսանկյունից՝ պատասխանելով հետևյալ հարցին. **Որքանո՞վ են առաջարկվող միջոցները նպաստում տուժողի և նրա երեխաների անվտանգությանը:**

474 Լոգար, Ռ. և Մարգանովա-Վարգովա, Բ. (2015թ.) «Բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ բազմագործակալական համագործակցություն», վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ, էջ 62:

475 Ադապտացված Բրանկովիչ, Բ. և Միրցևա, Ս.-ից, 2016թ.:

Միջոց	Որքանո՞վ է այն նպաստում տուժողի և նրա երեխաների անվտանգությանը

Մասնակիցներին բաժանվող նյութ. Առաջարկվող գործողությունների գնահատում տուժողի տեսանկյունից – 2

Երկրորդ խումբը վերահսկում է միջգերատեսչական թիմի աշխատանքը և վերլուծում է առաջարկվող գործողությունները տուժողի տեսանկյունից՝ պատասխանելով հետևյալ հարցին. Որքանո՞վ առաջարկվող միջոցները թույլ կտան տուժողին ազատվել անհանգստության և վախի զգացումից, կամ արդյո՞ք դրանք կունենան հակառակ ազդեցությունը (ավելի լուրջ խնդիրներ կառաջացնեն նրա համար):

Միջոց	Որքանո՞վ առաջարկվող միջոցները թույլ կտան տուժողին ազատվել վախի զգացումից
Միջոց	Այս միջոցը նույնիսկ ավելի մեծ խնդիրներ է առաջացնում տուժողի համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի
24.09.2019
թիվ 22-Լ հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանիքում բռնության դեպքերով կատարված աշխատանքի վերաբերյալ

_____ 20

/նշել 1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9 ամիսներ, տարի/

_____

/ ոստիկանության ստորաբաժանման անվանումը /

<table>
<tr><td>1.</td><td>Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է ընտանիքում բռնության դեպք, որից՝</td><td>ֆիզիկական</td><td>հոգեբանական</td><td>սեռական</td><td>տնտեսական</td><td colspan="4">անտեսում</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td colspan="4"></td></tr>
<tr><td colspan="8">Ըստ ընտանեկան կապերի</td></tr>
<tr><td></td><td>Կենակցի կողմից</td><td>ամուսնու կողմից կնոջ նկատմամբ</td><td>կնոջ կողմից ամուսնու նկատմամբ</td><td>ծնողի կողմից զավակի նկատմամբ</td><td>զավակի կողմից ծնողի նկատմամբ</td><td colspan="3">ընտանիքի այլ անդամներ</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td colspan="3"></td></tr>
<tr><td rowspan="2">2.</td><td rowspan="2">Ընտանիքում բռնություն գործադրած անձ, որից.</td><td rowspan="2">արական սեռի</td><td rowspan="2">իգական սեռի</td><td colspan="2">Տեղեկատվություն աշխատանքային գործունեության մասին</td><td colspan="2">Կրթություն</td><td colspan="2">Տեղեկատվություն դատապարտված լինելու մասին</td></tr>
<tr><td>աշխատում է</td><td>չի աշխատում</td><td>բարձր ագույն</td><td>միջն ակարգ</td><td>Դատապարտվել է</td><td>Չի դատապարտվել</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="2">3.</td><td rowspan="2">Ընտանիքում բռնության ենթարկված անձ, որից</td><td rowspan="2">արական սեռի</td><td rowspan="2">իգական սեռի</td><td colspan="2">Տեղեկատվություն աշխատանքային գործունեության մասին</td><td colspan="2">Կրթություն</td><td colspan="2">Տեղեկատվություն դատապարտված լինելու մասին</td></tr>
<tr><td>աշխատում է</td><td>չի աշխատում</td><td>բարձր ագույն</td><td>միջն ակարգ</td><td>Դատապարտվել է</td><td>Չի դատապարտվել</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>

4.	Ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս, որից	արական սեռի	իգական սեռի	անչափահաս մինչև 14 տարեկան	անչափահաս 14-15 տարեկան	անչափահաս 16-17 տարեկան
5.	Ընտանիքում բռնության ենթարկված անչափահաս, որից	արական սեռի	իգական սեռի	անչափահաս մինչև 14 տարեկան	անչափահաս 14-15 տարեկան	անչափահաս 16-17 տարեկան
6.	Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցները, որից. :	նախազգուշացում	անհետաձգելի միջամտության որոշում	Պաշտպանության որոշում/**հսկողության հանձնված/**		
7.	Անհետաձգելի միջամտության որոշմամբ կիրառված սահմանափակումներ, որից՝	Հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի տարածքից և արգելել այնտեղ վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը:	Արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակվող բնակելի տարածքում բնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր:	Արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորություն ից ավել մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին, որն ընտանիքում բռնության ենթարկվա անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կառաջացնի իր անձնական անվտանգությա նը սպառնացող վտանգի մասին:	Մինչև որոշմամբ սահմանվա ծ ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետմ ան տակ գտնվող զենքը	Արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնություն ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

8.	Տեղեկատվություն բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշումների խախտմանման վերաբերյալ, ընդամենը, որից՝	նախազգուշացում	Անհետաձգելի միջամտության որոշում	Պաշտպանական որոշում	Տեղեկատվություն պաշտպանական միջոցների փոփոխման վերաբերյալ			
					նախազգուշացումը փոփոխվել է անհետաձգելի միջամտության որոշման		անհետաձգելի միջամտության որոշումը փոփոխվել է պաշտպանական որոշման	
9.	Հաշվառվել է բռնություն գործադրած անձ, որից.	արական սեռի	իգական սեռի	անչափահաս				
				արական սեռի	իգական սեռի	տարիքը		
						անչափահաս մինչև 14	անչափահաս 14-15 տարեկան	անչափահաս 16-17 տարեկան

						տարեկան		
10.	Ընտանիքում բռնություն գործադրած անձը բռնություն գործադրելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում ալկոհոլի, թմրանյութի, թունանյութի ազդեցության տակ, ընդամենը, որից՝	անմեղսունակության վիճակ	ալկոհոլի, ազդեցության տակ	թմրանյութիազդեցության տակ	թունանյութի ազդեցության տակ			
11.	Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ընտանեկան բռնության դեպք, որից՝	Հաշվետու ժամանակահատվածում հաշվառման է վերցվել	Հաշվետու ժամանակահատվածում հաշվառումից հանվել է	Որոնցից				
				ուղարկվել են բնակության վայրի ոստ. մարմին	Ուղղորդվել են			
					աջակցության կենտրոն	ապաստարան		
12.	Հաշվետու ժամանակահատվածում հաշվառումից հանվել է ընդամենը, որից՝	Հետևյալ հիմքերով						
		եթե անձը հաշվառման ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել համապատասխան բժշկական հաստատությունում,	եթե անձը մեկ տարուց ավելի բնակվում է ՀՀ սահմաններից դուրս	եթե լրացել է կանխարգելիչ քարտի վարման ժամկետը	պարտադիր զինվորական ծառայության	մահվան դեպքում,	օրենքով սահմանված այլ դեպքերում	
13.	Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է ընտանիքում բռնության դեպք, որից՝	Նախապատրաստվել են նյութեր	Հարուցվել է քրեական գործ	Նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է				

_____ոստ. մարմնի պետ
/ոստ. մարմնի անունը/
_____
/ստորագրություն, ազգանուն, անվան, հայրանվան սկզբնական տառեր / սկզբնական տառեր /

Հաշվետվությունը կազմեց_____
/ԱԳ ը ԸԲԿ բ-ի աշխատակցի ստորագրությունը/
_____
/պաշտոնը, ազգանունը, կոչումը, անվան և հայրանվան

" "_____20

** Անչափահասների գործերի և ընտանեկան բռնության կանխարգելման վարչություն*

Հավելված 2
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի
2019 թ. հուլիսի 17-ի
թիվ 15-Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՔԱՐՏ N _____

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1._____

/ ոստ. ստորաբաժանումում հաշվառման մեջ գտնվող անձի անունը, ազգանունը /

2._____

/ ծննդյան վայրը և տարեթիվը /

3._____

/ բնակության հասցեն և հեռախոսի համար /

4._____

/ աշխատանքի կամ ուսման վայրը, պաշտոնը հեռախոսի համարը /

5. Հաշվառման վերցնելու հիմքերը _____

_____

_____

_____

_____

6. Անձը բնութագրող տվյալներ _____

_____

_____

7._____

/ ընտանիքում բռնության տեսակը, որը կատարել է բռնություն գործադրող անձը /

_____

_____

Քարտը կազմեց _____

/ պաշտոն, կոչում, անուն, ազգանուն /

« »_____20__թ.

_____

(տարածքային մարմնի անվանումը)

Հավելված 3
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի
2019 թ. հուլիսի 17-ի
թիվ 15-Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____ No _____ «____» _____ 201 թ.

/նշել քարտի գրանցման համարը/ /հաշվառման վերցնելու օրը,

ամիսը, տարին/

_____

/ հաշվառման վերցնելու հիմքերը /

1. _____

/ հաշվառվողի ազգանունը, անունը, հայրանունը /

2. . Ծննդյան օրը, ամիսը, տարին « _____» 201 թ.

3. _____

/ հաշվառվողի բնակության վայրը /

Ծանոթություն՝

1. Սույն տեղեկանքը լրացվում և Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն է ուղարկվում անձին հաշվառման վերցնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:.

2. Անձին հաշվառումից հանելու և այլ փոփոխություններ լինելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահվում Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն:

_____ պետ

/ ոստ. տարածքային մարմնի անվանումը /

ոստիկանության._____

/ կոչումը /

_____

(անունը, ազգանունը, հայրանունը)

«_____» _____201 թ.

_____

տարածքային մարմնի անվանումը)

Հավելված 4
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի
2019 թ. հուլիսի 17-ի
թիվ 15-Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ
ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1._____

/ հաշվառվողի ազգանունը, անունը, հայրանունը /

2. Ծննդյան օրը, ամիսը, տարին «_____» _____ 201 թ.

3. “_____” _____ 201 թ.

/ հաշվառումից հանելու օրը, ամիսը, տարին /

_____

/ հաշվառումից հանելու հիմքերը /

_____

Ծանոթություն՝

1. Հաշվառվողին հաշվառումից հանելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահվում Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն:

_____պետ

/ ոստ. տարածքային մարմնի անվանումը /

ոստիկանության._____

/ կոչումը /

_____

(անունը, ազգանունը, հայրանունը)

«_____» _____201 թ.

Հավելված 5
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի
2019 թ. հուլիսի 17-ի
թիվ 15-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

_____

(ոստիկանության տարածքային մարմնի անվանումը)

ՄԱՏՅԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ

թիվ _____

Սկսվել է «___»_____ 20 թ.

Ավարտվել է «___»_____ 20 թ.

N/N	Անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի և վայր	Բնակության վայրի հասցեն, հեռախոսի համար	Աշխատանքի վայրը, պաշտոնը, ուսման վայրը, հեռ. համարը	Հաշվառման վերացնելու և կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու հիմքերը	Կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու օրը, ամիսը, տարին	Կանխարգելիչ հաշվառման քարտ վարողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, անունը, հայրանունը	Երբ, ում նկատմամբ և ընտանիքում բռնության ինչ արարք է կատարվել	Կանխարգելիչ հաշվառումից հանելու օրը, ամիսը, տարեթիվը	Կանխարգելիչ հաշվառումից հանելու հիմքերը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Հավելված 6 [476]
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի
2019 թ. հուլիսի 17-ի
թիվ 15-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

_____

(ոստիկանության տարածքային մարմնի անվանումը)

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ ԹԻՎ _____ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

(հաշվառվողի ազգանունը, անունը, հայրանունը)

Ծնվ. «____» _____ թ.

_____

(բնակության հասցեն)

_____

(նշել կանխարգելիչ հաշվառման վերցնելու հիմքերը)

_____

Սկսվել է «____»_____ 201 թ.

Ավարտված է «____»_____ 201 թ.

Հաշվառվողի լուսանկարը« » _____ 201 թ.

(լուսանկարի փակցման ամսաթիվը)

Նշումներ՝

Ցուցակի համաձայն
կանխարգելիչ հաշվառման քարտում
կարված և համարակալված է ընդամենը

«____»_____ թերթ

«____»_____ 201 թ.

476 Հավելվածը ավելացվել է՝ համաձայն ոստիկանության պետի 03/09/2020 թիվ15-Լ հրամանի:

_____

_____

(ԱԳԸԲԿ բաժանմունքի (խմբի) աշխատակցի

_____

(ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը)

(լրացվում է անձին կանխարգելիչ
հաշվառումից հանելու դեպքերում)

« » _____ 202 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ▷ Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա)
- ▷ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիա, (ԿԽՎԿ)
- ▷ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)
- ▷ Կանանց նկատմամբ բռնության վերացման հռչակագիր, (ԿՆԲՎՀ)
- ▷ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար, Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի խորացված ուսումնասիրություն, ՄԱԿ-ի Փաստաթուղթ Ա / 61/122 / Հավելված 1 (2006 թ. հուլիսի 6)
- ▷ ԿԽՎԿ, Ընդհանուր հանձնարարական թիվ 19
- ▷ ԿԽՎԿ, Ընդհանուր հանձնարարական թիվ 28
- ▷ ԿԽՎԿ, Ընդհանուր հանձնարարական թիվ 35
- ▷ Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ. E/CN.4/1995/42 (նոյեմբերի 22, 1994թ.)
- ▷ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք՝ թիվ 210
- ▷ Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա
- ▷ Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման միջամերիկյան կոնվենցիա
- ▷ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի՝ Աֆրիկայում կանանց իրավունքների մասին արձանագրություն
- ▷ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր
- ▷ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր
- ▷ ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա
- ▷ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ
- ▷ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 12 արձանագրություն
- ▷ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա
- ▷ Մարդու թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
- ▷ Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Լանզարոտեի կոնվենցիա)
- ▷ Պեկինի գործողությունների հարթա (1995 թ.)
- ▷ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec (85)4 հանձնարարական ընտանիքում բռնության վերաբերյալ

- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec (96)5 հանձնարարական աշխատանքային և ընտանեկան կյանքի համատեղման վերաբերյալ
- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2002)5 հանձնարարական բռնությունից կանանց պաշտպանության վերաբերյալ
- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2007)17 հանձնարարական գենդերային հավասարության չափանիշների և մեխանիզմների վերաբերյալ
- Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2020թ. հունվարի 20-31-ի 35-րդ նստաշրջանի զեկույց «Հայաստանյան ամփոփագիր»
- ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ, նպատակ 5
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ (2013թ.): Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցող Ռաշիդա Մանջոն կանանց նկատմամբ բռնության վերացման պետական պատասխանատվության մասին (A/HRC/23/49), ԺՆև
- Եվրոպայի խորհուրդ, 2018-2023 թթ.. գենդերային հավասարության ռազմավարություն
- ԷԿՕՍՕՍ-ի բանաձև 2005/20.
- ՄԻԵԴ-ի դատական պրակտիկա
- Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 33401/02 2009թ.
- Բևակուան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 71127/01, 12 հունիսի 2008թ.
- Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի, Գանգատ թիվ 46598/06, 2009թ.
- Բասլանն ընդդեմ Ռումինիայի, Գանգատ թիվ 49645/09, 2017թ.
- Այդինն ընդդեմ Թուրքիայի, Գանգատ թիվ 23178/94, 1997թ.
- Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի, Գանգատ թիվ 7510/04, 2005թ.
- Լուկան ընդդեմ Մոլդովայի հանրապետության, Գանգատ թիվ 55351/17, 2023
- Յ-ն և այլոք ընդդեմ Բուլղարիայի, Գանգատ թիվ 9077/18, 2022
- Տեղեկագիր՝ Բռնություն կանանց նկատմամբ. https://www.echr.coe.int/Documents/FS_Violence_Woman_ENG.pdf
- Տեղեկագիր՝ Ընտանեկան բռնություն. https://www.echr.coe.int/Documents/FS_Domestic_violence_ENG.pdf
- ԿԽՎԿ-ի դատական պրակտիկա
- Յըլդըրըմն ընդդեմ Ավստրիայի, Հաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005:
- X և Y-ն ընդդեմ Վրաստանի, Հաղորդագրություն թիվ 24/2009, CEDAW/C/61/D/24/2009 (2015թ.):
- Գյոքչեն ընդդեմ Ավստրիայի, Հաղորդագրություն թիվ 5/ 2005, CEDAW/C/39/D/5/2005:
- Անխելա Գոնզալես Կառենյոն ընդդեմ Իսպանիայի, Հաղորդագրություն թիվ 47/2012, CEDAW/C/58/D/47/2012 (2014թ.):

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք
- ՀՀ քրեական օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիր
- ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» ՀՀ օրենք
- «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք
- ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1522 որոշում «ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածի և դրա հետ փոխկապակցված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի
- Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականներին գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարություն և գործողությունների ծրագիր
- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր
- Մարդու իրավունքների պաշտպանի 2020թ.տարեկան հաղորդում
- Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց Հայաստանում երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և դրա կամընտիր արձանագրությունների համաձայն ստանձնած պարտավորությունների կարգավիճակի մասին, 2019 թ.
- ՀՀ կառավարության 10.07.2018թ. N-786-Ն որոշում «Ընտանեկան բռնության կանխարգելման խորհուրդ ստեղծելու և խորհրդի ձևավորման կարգը և գործառույթների հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.03.2019թ. N-333-Ն որոշում՝ «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր ֆինանսական աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 10.10.2019թ. N-1381-Ն որոշում «Ընտանեկան բռնության

դեպքերի կենտրոնացված գրանցման կարգը սահմանելու մասին»

- ▷ ՀՀ կառավարութայն 14.08.2014թ. N-860-Ն որոշում «Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած ընդհանուր աշխատունակության կայուն կորստի տոկոսները հաստատելու մասին»:
- ▷ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.11.2018թ. N-119-Ն որոշում "Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին»
- ▷ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.11.2018թ. N-120-Ն հրաման «Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը»
- ▷ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշում «Արևիկ և Ծովինար Սահակյանների գործը»
- ▷ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 1474-Ն որոշում «Պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը սահմանելու մասին»
- ▷ Ոստիկանության պետի 18-Լ հրաման ««Ընտանիքում բռնության կրկնության կամ բռնության շարունակման անմիջական սպառնալիքի գնահատման չափորոշիչները հաստատելու մասին»
- ▷ Ոստիկանության պետի 2020թ. մարտի 9-ի թիվ 15-Լ հրաման "Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին»:
- ▷ Ոստիկանության պետի թիվ 14-Լ հրաման «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացնելու կարգը սահմանելու մասին»
- ▷ Ոստիկանության պետի թիվ 14-Լ հրաման «Ընտանիքում բռնության դեպքերին արձագանքման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը հաստատելու մասին»
- ▷ Գլխավոր դատախազի կողմից ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի իրականացման ուղեցույց»
- ▷ Ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 17-Լ «Ընտանեկան բռնություն գործադրողի համար նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշման ձևերը հաստատելու մասին»
- ▷ Ոստիկանության պետի թիվ 22-Լ հրաման «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանիքում բռնության դեպքերով կատարված աշխատանքը հաստատելու մասին»
- ▷ Ոստիկանության պետի 2014 թվականի հունիսի 20-ի թիվ 2121-Ա հրաման «Ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ ստորաբաժանումների հերթափոխի ծառայության պարտականությունները տարբեր իրավիճակներում կարգավորող գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին»
- ▷ Ոստիկանության պետի առաջին տեղակալի 2019թ. մարտի 15-ի թիվ 5-Ց հրահանգ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- USAID/Armenia Gender Analysis Report 2019.
- UNFPA, Men and Gender Equality in Armenia, 2016.
- Factsheet on Guaranteeing Equal Access of Women to Justice (January 2015).
- Council of Europe, Barriers, Remedies and Good Practices for Women's Access to Justice in Five Eastern Partnership Countries, 2016.
- Council of Europe, Preventing and Combating Violence against Women: A learning resource for training law enforcement and justice officers, 2016.
- Council of Europe, Training Manual for Judges and Prosecutors on Ensuring Women's Access to Justice, 2017.
- Lori Mann "Gap analysis and recommendations on the Armenian Law on Prevention of Violence within the Family, protections of victims of violence within the family and restoration of peace within the family and related police orders", 19 February 2019, Council of Europe.
- Gender matters. A manual on addressing gender-based violence affecting young people, 2013.
- Inter-Agency Standing Committee (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing risk, promoting resilience, and aiding recovery.
- World Health Organisation, London School of Hygiene and Tropical Medicine, South African Medical Research Council, 2013. Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence.
- Mirceva, S. & Gogov, B., (2015), "Licnosta na zrtvata na nasilstvo vrz zeni pri odmeruvanjeto na kaznata: Sekundarna viktimizacija ili Pravda? [Personality of the victim of violence against women in sentencing: Secondary victimizarion or Justice?] Makedonska revija za kazneno pravo I kriminologija.
- Mirceva, S, Rajkovchevski R (2019). "Responding to Gender-Based Violence Along Migration Routes to Europe: Case of Macedonia," Security Dialogues, Vol. 10, No. 2, 2019, University Ss. Cyril and Methodius, Faculty of Philosophy – Institute of Security, Defence and Peace, Skopje, Macedonia.
- Read-Hamilton, S. (2014). Gender-based violence: a confused and contested term.
- Russo, F., and Pirlott, A. (2006). "Gender-Based Violence: Concept, Methods and Findings". Annals. New York Academy of Sciences.
- Guntzberger, M., Kostelny, K, and K. Ondoro. Caring for Equality Baseline Report, World Vision Armenia, March 2017.
- Preventing and responding to Domestic Violence. UNODC. Hanoi 2011.
- Ignjatovic, T., Bogdanovic, M. (2004). O rodnoj ravnopravnosti u obrazovanju, I

modul,[About Gender equality in the education, Module I] Priručnik za edukatore/ke, u okviru projekta: Škola za ravnopravnost: prvi korak ka uključivanju tematike rodne ravnopravnosti u redovne programe za učenike/ce i nastavnike/ce u Srbiji. Beograd: Centar za ženske studije, Fakultet političkih nauka (unpublished material)

- Walklate, S. (2004). "Gender, Crime and Criminal Justice (2nd ed)", Devon. Willan Publishing.
- UNFPA and WAVE (2014). Strengthening Health System Responses to Gender-based Violence in Eastern Europe and Central Asia: A Resource Package.
- Inter-Agency Standing Committee (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing risk, promoting resilience, and aiding recovery.
- Walker, L (1979). Women's Hall of Fame. Ed D. Colorado.
- Food and Agriculture Organization of the United Nations (FAO). Gender, Agriculture and Rural Development in Armenia. Budapest, 2017.
- Mircheva, Chacheva, Kenig. (2014).
- Enhancing the professional capacity of the Bulgarian Police to deal with cases of Domestic violence and violence against women. A.C. Baldry, 2016.
- Heise L, Garcia Moreno C. Violence by intimate partners (2002). World report on violence and health. Geneva, World Health Organization.
- Garcia-Moreno C et al. (2005) WHO multi-country study on women's health and domestic violence against women: initial results on prevalence, health outcomes and women's responses. Geneva: World Health Organization.
- C. Overline. Children Exposed to Domestic Violence: Conclusions from the Literature and Challenges Ahead, Journal of Social Work 10.
- Sanday, P.R., Fraternity gang rape: Sex, brotherhood, and privilege on campus (2nd ed.). New York: New York University Press (2007).
- Evan Stark, Framing and Reframing Battered Women, in Domestic Violence: The Criminal Justice Response 287, eds., Eve Buzawa.
- K. Bell and Orcutt, H., "PTSD and արական սեռի perpetrated IPV," Journal of American Medical Association, 302, no. 5, (2009).
- Linda A. Teplin, McClelland, G., Abram, K., and Weiner, D., "Crime Victimization in Adults with Severe Mental Illness."
- K. Trevillion, Oram, S., Feder, G., Howard, L.M., "Experiences of Domestic Violence and Mental Disorders: A Systematic Review and Meta-Analysis."
- Brankovic, B., Mirceva, S. "Training of Trainers Module for professionals in providing gender-sensitive support services to DV survivors in FYR Macedonia".
- Logar, R., and Marganova-Vargova, B. (2015). Effective Multi-agency Co-operation for Preventing and Combating Violence: Training of Trainers Manual.
- Kemshall, H. (1996). Reviewing Risk: A review of research on the assessment and management of risk and dangerousness: Implications for policy and practice in the Probation Service (A Report for the Home Office Research and Statistics Directorate).
- WAVE, (2012). Protect II: Capacity Building in Risk Assessment and Safety Management

to Protect High-Risk Victims. Vienna.

- Robinson, A. (2011). “Risk and Intimate Partner Violence”, in Kemshall, H., and Wilkinson, B. (eds). Good Practice in Assessing Risk. London. Jessica Kingsley Publishers.
- Rosa Logar, Johanna Niemi, “EMERGENCY BARRING ORDERS IN SITUATIONS OF DOMESTIC VIOLENCE: ARTICLE 52 OF THE ISTANBUL CONVENTION”, Council of Europe, 2017.
- “Preventing and combating Violence against Women and Domestic Violence in Armenia” 2018, L. Mann and L. Sargsyan.
- “Improving the Effectiveness of Law Enforcement and Justice officers in Combating Violence against Women and Domestic Violence”. Anna Costanza Baldry and Elisabeth Duban, 2016.
- Combating violence against women: minimum standards for support services. Prof. Liz Kelly, Roddick Chair on Violence Against Women, London Metropolitan University and Lorna Dubois, Council of Europe 2008.
- Handbook on Effective Police Response to Violence against Women, UNODC, 2010.
- UN Guidelines on Justice in Matters involving Child Victims of a Crime.
- Children’s Experience of Domestic Violence: Developing an Integrated Response from Police and Child Protection Services, N. Stanley, P. Miller, H. Richardson-Foster, G. Thomson, 2011.
- A Handbook for Police Responding to Domestic Violence: Promoting Safer Communities by Integrating Research & Practice, 2004.
- Developed by the Child Witness to Violence Project, Boston Medical Centre, One Boston Medical Centre Place, Mat. 5, Boston.
- Ofstehage, a. et al. (2011). “Empowering victims of domestic violence”, Social Issue Report: Sept 2001, pp.3. Boston: Root Cause.
- Maslow, A. H. (2014). A Theory of Human Motivation, the article from 1943, pre-printed, Floyd/USA.
- Ellen L. Pence, Some Thoughts on Philosophy, in Coordinating Community Responses to Domestic Violence: Lessons from the Duluth Model 25, 33 (Melanie F. Shepard & Ellen L. Pence eds., 1999).
- Coalition to Stop Violence Against Women, “Femicide in Armenia: A Silent Epidemic”, 2016.
- Coalition to Stop Violence Against Women, Regional Conference “Combating Violence against Women in Armenia and Georgia: Sharing experience and strategizing on further cooperation.” Conference outcome paper, 2017.
- Ad Hoc Committee on Preventing and Combating Violence against Women & Domestic Violence (CAHVIO). (2009). Case law of the European Court of Human Rights on violence against women, prepared by Christine Chinkin, CAHVIO (2009) 10, 4 May 2009. Strasbourg: Council of Europe.
- Baldry, A.C. (2016). Training of Trainers Manual: Enhancing the Professional Capacity of the Bulgarian Police to Deal with Cases of Domestic Violence and Violence Against Women. Strasbourg: Council of Europe.
- Brankovic, B. (2017). “I have a dream”: Femicide Prevention Watch. In: H. Hemblade, A.

Filip, A. Hunt, M. Jasser, F. Kainz, M. Gerz, K. Platzer and M. Platzer (Eds.), Femicide, Volume VII: Establishing a Femicide Watch in Every Country. Vienna: Academic Council of United Nations (ACUNS) Vienna Liaison Office.

- Brankovic, B. (2012). Mapiranje kapaciteta specijalizovanih organizacija za podrsku zrtvama rodno-zasnovanog nasilja: Prvi korak ka uspostavljanju jedinstevene nacionalne SOS linije. Beograd: Projekat Borba protiv seksualnog i rodno-zasnovanog nasilja u saradnji sa UNDP
- Brankovic, B. (2013). Vesti iz buducnosti: Istanbulska konvencija i odgovornost države za borbu protiv nasilja nad ženama. Funkcionisanje opštih servisa- operacionalizacija dužne prilježnosti. Beograd: UNDP
- Council of Europe (2016). Preventing and Combating Domestic Violence against Women: A learning resource for training law enforcement and justice officers, General Inspectorate of the Romanian Police. Strasbourg: Council of Europe
- Dobash, R. P., & Dobash, R. E. (2001). Risk Danger and Safety. 4 Domestic Abuse Quarterly.
- Dobash, R. P., & Dobash, R. E. (2004). Women's violence to men in intimate relationships. 44 British Journal of Criminology.
- Ertürk, Y. (2006). Integration of the human rights of women and the gender perspective: Violence against women, The due diligence standard as a tool for the elimination of violence against women, Report of the UN Special Rapporteur on violence against women, its causes and consequences, E/CN.4/2006/61, 20 January 2006
- European Women's Lobby (2012) Responsibility of states in Europe regarding Violence against women EWL Report to the UN Special Rapporteur on Violence against Women, 30 October 2012. Brussels: EWL
- Logar, R., and Marganova-Vargova, B. (2015). Effective Multi-agency Co-operation for Preventing and Combating Violence: Training of Trainers Manual. Strasbourg: Council of Europe
- Manjoo, R., UN Human Rights Council (2012) Report of the Special Rapporteur on violence against women, its causes and consequences, Rashida Manjoo, Addendum: Summary report on the expert group meeting on gender-motivated killings of women, 16 May 2012, A/HRC/20/16/Add.4
- Kropp, R. and Hart, S. (2000). "The Spousal Assault Risk Assessment (SARA) Guide: Reliability and validity in adult female offenders". Law and Human Behavior, Vol.24, No.1, pp. 101-118.
- Grann, M. and Wedin, I. (2002). "Risk Factors for Recidivism among Spousal Assault and Spousal Homicide Offenders". Psychology, Crime & Law, Vol. 8 No. 1, pp. 5-23.
- Snider, C. et al. (2009). "Intimate Partner Violence: Development of a Brief Risk Assessment for the Emergency Department". Society for Academic Emergency Medicine, Vol. 16, No. 11, pp. 1208 – 216.
- Campbell, J. C. et al. (2009). "The Danger Assessment, Validation of a Lethality Risk Assessment Instrument for Intimate Partner Femicide". Journal of Interpersonal Violence, Vol. 24, No. 4, Sage Publications, pp. 653-674.
- Paymar, M. and Barnes, G. (2004). "Countering Confusion about the Duluth Model".
- Mullender, A. et al. (2002). Children's Perspectives on Domestic Violence. London:

Sage.

- Hester, M. (2006). “Asking about domestic violence – implications for practice”, in Humphreys, C. and Stanley, N. (Eds), Domestic Violence and Child Protection – directions for good practice. London: Jessica Kingsley Publishers.
- Dutton, D.G. & Knopp, R. P. (2000). “A review of Domestic Violence risk instruments in Trauma”. Violence and Abuse. Vol 1 No 2. pp. 171-181.
- Bekkers, P. (2016). Statement at the Gender Symposium: Combating Femicide, Vienna, Austria, 25 November 2016, http://www.osce.org/secretariat/284606 (Accessed on 28 January 2017)
- Russell, D. (2013). “Femicide” – the Power of a Name, in Femicide: A Global Issue that Demands Action. Vienna: Academic Council of the United Nations System (ACUNS).
- United Nations Office on Drugs and Crime. (2010). Gender in the Criminal Justice System Assessment Tool: Criminal Justice Assessment Toolkit. New York: United Nations.
- WAVE, (2000). Training Programme on Combating Violence against Women.
- Mirceva, S., Caceva V.,(2013), ”Itni merki za zastita na zrtvite na domasno nasilstvo:Istanbulska konvencija”, [Emergency barring order for protection of victims of domestic violence:Istanbul Convention] Makedonska revija za kazneno pravo I kriminologija, god.20, br.1, pp.31-51. Zdruzenie za krivicno pravo i kriminologija na Makedonija. Skopje
- Mirceva, Caceva, Kenig (2014).” Voice for Justice: Research Report- Assessment of court proceedings in Domestic Violence cases, with a specific focus on assessing the case management from a gender perspective”, Institute of Sociological, Political and Juridical Research-Skopje.

ԲԱՌԱՐԱՆ

ԿՈՆՎԵՆՑԻԱ

- **Կոնվենցիան**, որը հայտնի է նաև որպես միջազգային պայմանագիր կամ դաշնագիր, հանդիսանում է պետությունների միջև ստորագրվող պաշտոնական և պարտադիր իրավաբանական ու ունեցող պայմանագիր, որը նախանշում է այն պարտավորությունները, որոնք նրանք որոշել են ընդունել:
- Երբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունում է որևէ կոնվենցիա, դրա պարտավորությունները ձեռք են բերում միջազգային իրավունքի ուժ այն ստորագրող պետությունների համար:
- Կոնվենցիան օգտագործվում է որպես միջազգային պայմանագրի և դաշնագրի հոմանիշ: Միջազգային իրավական փաստաթղթերում դրանք կրում են նույն իրավաբանական իմաստը:

(ԵՐԿՐԻ) ՀԱՏՈՒԿ ԶԵԿՈՒՑՈՂ

- ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կարող է որոշակի թեմատիկ հարցերի կամ որևէ երկրի մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ հատուկ զեկուցող նշանակել:
- **(Երկրի) հատուկ զեկուցողը** ուսումնասիրում և մշտադիտարկում է մարդու իրավունքների խնդիրները կոնկրետ երկրներում (սովորաբար պատերազմյան, անցումային արդարադատության կամ հետպատերազմյան իրավիճակում գտնվող) և ներկայացնում է առաջարկություններ:

ԴԱՇՆԱԳԻՐ

- **Դաշնագիրը**, ինչպես պայմանագիրը կամ կոնվենցիան, պաշտոնական և պարտավորեցնող համաձայնություն է պետությունների միջև, որը նախանշում է այն պարտավորությունները, որոնք նրանք որոշել են ստանձնել:
- Մարդու իրավունքների հետ կապված երկու հիմնական դաշնանգրերն են՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը:
- Դաշնագիրն օգտագործվում է որպես միջազգային պայմանագրի և կոնվենցիայի հոմանիշ: Միջազգային իրավական փաստաթղթերում դրանք կրում են նույն իրավաբանական իմաստը:

ՀՌՉԱԿԱԳԻՐ

- Հռչակագիրը պարտադիր իրավաբանական ուժ չունեցող միջազգային պայմանագիր է՝ որևէ թեմատիկ խնդրի հետ կապված հարցերի վերաբերյալ:
- Չունենալով պարտադիր իրավաբանական ուժ, հռչակագրերը հաճախ ճանաչվում են որպես համապատասխանող դիտարկվող հարցի նորմատիվ շրջանակին, ներառյալ նրա հարակից սկզբունքներն և չափանիշներին:

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Ուղղակի խտրականությունը** բացահայտ և դիտավորյալ վնաս է հասցնում կանանց (կամ անձանց այլ խմբի):
- **Անուղղակի խտրականությունը** գոյանում է գենդերային չեզոք բնույթ կրող օրենքներից և քաղաքականություններից, որոնք, թվացյալ հավասար հնարավորություններ են տալիս ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, սակայն իրականում կանայք՝ իրենց ներկա իրավիճակին բնորոշ խտրականության պատճառով հայտնվում են անբարենպաստ վիճակում, որը պայմանավորված է հայրիշխանական համակարգով:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

- **Ընտանեկան բռնությունը** ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության դրսևորումները ընտանիքի կամ ընտանեկան միավորի անդամների միջև:
- Կարևոր չէ այն, թե արդյոք իրավախախտը տուժողի հետ ապրում է նույն բնակարանում, արդյոք նրանք ազգակցական կապ ունեն թե զուգընկերներ են, ներկայում կամ նախկինում ամուսնացած, բաժանված կամ ամուսնալուծված են:
- Երեխաները կարող են ընտանեկան բռնության տուժող հանդիսանալ, այդ թվում՝ որպես ընտանիքում ուրիշի նկատմամբ բռնության ականատես:

ՊԱՏՇԱՃ ԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- **Պատշաճ զգուշավորությունը** պահանջում է, որ պետություններն իրենց պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերեն զգուշավորության կամ գործողության այնպիսի մակարդակ, որը կապահովի մարդու իրավունքների պաշտպանությունը, և կգործեն բարեխղճորեն: Օրինակ, ԿԽՎԿ-ի մասնակից պետությունները պետք է գործեն պատշաճ զգուշավորությամբ, ինչը նշանակում է, որ պետությունները պատասխանատվություն են կրում կանանց նկատմամբ խտրականության դեմ պայքարելու համար՝ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտներում, ներառյալ դրա կանխարգելումը, արգելումը, բացահայտումը, փոխհատուցման տրամադրումը, խտրականության համար պատժամիջոցների կիրառումը, ինչպես նաև կանանց իրավունքների խթանումը և փաստացի հավասարության առաջ մղումը:

ԿԱՆԱՆՑ ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԽԵՂՈՒՄ/ԿՏՐՈՒՄ

- **Կանանց սեռական օրգանների խեղումը/կտրումը (ԿՍՕԽ/Կ)** ոչ բժշկական պատճառներով կանանց կամ աղջիկների սեռական օրգանների մի մասը կամ ամբողջը հեռացնելու կամ կտրելու ցանկացած գործընթաց է:
- Ստամբուլի կոնվենցիայի 38-րդ հոդվածում ԿՍՕԽ/Կ-ն սահմանում է որպես «սեռական մեծ և փոքր շուրթերը և կլիտորը լրիվ կամ մասնակի անդամահատելը, կապելը կամ խեղման այլ գործողությունների ենթարկելը»: Այն քրեականացնում է կնոջը կամ այդ այդ գործողությունների ենթարկվելու ստիպելը, դրդելը կամ դրանց ենթարկվելու համար կին կամ աղջիկ տրամադրելը:

ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՍԵՌԸ

- **Գենդերը** դա այն տարբեր բնութագրերը, վարքագծերը և գործողություններն են, որոնք կանայք և տղամարդիկ յուրացնում են և, ակնկալվում է, որ պետք է հետևեն՝ լինելով հասա-

ռակության անդամ:

- Գենդերը կապված է դերերի և արժեքների, կանանց և տղամարդկանց հարաբերությունների և սեռերի միջև տարբերությունների պատճառով առաջացած անհավասարությունների հետ:
- Գենդերը հաճախ սխալմամբ համարվում է **կենսաբանական սեռի** հոմանիշ, որը կանանց և տղամարդկանց կենսաբանական տարբերություններն է:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

- Գենդերային հիմքով բռնությունը (ԳՀԲ) անձի կամ անձանց խմբի դեմ՝ նրանց սեռի կամ սոցիալական դերերի կամ հասարակության կամ մշակույթի կողմից նրանց վերաբերյալ ակնկալիքների պատճառով կատարված վնասակար գործողությունների հավաքական հասկացություն է:
- ԳՀԲ-ն մարդու իրավունքների և գենդերային անհավասարության հետ կապված լուրջ խնդիր է, որը չափազանց մեծ ազդեցություն է ունենում կանանց և աղջիկների վրա, այդ իսկ պատճառով այն երբեմն օգտագործվում է «կանանց նկատմամբ բռնություն» եզրույթի հետ փոխարինաբար: Սակայն, ԳՀԲ-ն կարող է ներառել նաև բռնությունը լեսբուհիների, բիսեքսուալների, տրանսգենդերների և «քվիր» համարվող անձանց նկատմամբ:
- Այդ վնասակար գործողություններին են պատկանում ֆիզիկական, մտավոր, սեռական, տնտեսական կամ սոցիալական բռնությունը (ներառյալ հարկադրանքը, մանիպուլյացիան, խաբեությունը, մշակութային ակնկալիքները կամ տնտեսական զրկումը):
- ԳՀԲ-ի ձևերից են սեռական բռնությունը, այսպես կոչված «ուղղիչ» բռնաբարությունը, սեռական հետապնդումը կամ գենդերային խտրականությունը աշխատավայրում, դաժան վերաբերմունքը կամ շահագործումը, մարմնավաճառության հարկադրումը, հարկադրված կամ վաղ ամուսնությունը, վնասակար ավանդական գործելակերպերը, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների խեղումը/կտրումը, հանուն պատվի սպանությունները, և այրիներին ֆինանսական աջակցությունից զրկումը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

- Ստամբուլի կոնվենցիայի 3-րդ հոդված. «Գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնություն»՝ նշանակում է այն բռնությունը, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն»:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ/ԿԱՆԱՆՑ և ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ

- Գենդերային հավասարությունը նշանակում է երկու սեռերի հավասար տեսանելիություն, իրավազորում և մասնակցություն հասարակական և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում: Գենդերային հավասարությունը գենդերային անհավասարության, այլ ոչ թե գենդերային տարբերության, հակառակն է, և նպատակ ունի նպաստել կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցությանը հասարակությանը: Այն նշանակում է կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների և հասարակության մեջ նրանց ունեցած տարբեր դերերի հավասարապես ընդունումը և գնահատումը: Գենդերային հավասարությունը ներառում է տարբերվելու իրավունքը: Դա նշանակում է հաշվի առնել կանանց և տղամարդկանց միջև առկա տարբերությունները, որոնք կապված են դասի, քաղաքական կարծիքի, կրոնի, էթնիկ պատկանելության, ռասայի կամ սեռական կողմնորոշման հետ: Գենդերային հավասարությունը նշանակում է քննարկել, թե ինչպես կարելի է ավելի հեռուն գնալ, փոխել հասարակության կառուցվածքները, որոնք նպաստում են կանանց և տղամարդկանց

միջև անհավասար իշխանության հարաբերությունների պահպանմանը, ինչպես նաև հասնել ավելի լավ հավասարակշռության կանանց և տղամարդկանց տարբեր արժեքների և առաջնահերթությունների մեջ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳ

- **Գենդերային մեյնսթրիմինգը** գենդերային հավասարության հասնելու ռազմավարություն է:
- Այն նպատակ ունի վերացնել կանանց նկատմամբ խտրականությունը և ստեղծել ավելի արդար աշխարհ:
- Այն կոչ է հղում բոլոր պետություններին, միջկառավարական կազմակերպություններին և ներքին հաստատություններին բոլոր գործողություններն իրականացնելիս օգտվել «գենդերային տեսապակուց»՝ քաղաքականության և ծրագրերի բոլոր մակարդակները նախապատրաստելիս, մշակելիս, իրականացնելիս, վերահսկելիս և գնահատելիս, ներառյալ աշխատանքի ընդունման և աշխատանքային առաջխաղացման ժամանակ:
- Այն լայնորեն առաջ է քաշվել որպես ՄԱԿ-ի և նրա գործակալությունների գերակա նպատակ՝ համարվելով գենդերային անհավասարությունների դեմ ուղղված գործողությունների ապահովման միջոց, սակայն, չնայած բազմաթիվ քաղաքական հանձնառություններին, դեռ շատ անելիքներ կան:

ԳԵՆԴԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀԵՌՈՔ

- Գենդերային հարաբերությունների կամ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վրա որևէ դրական կամ բացասական ազդեցություն չկրող:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

- Գենդերային տեսանկյունից վերլուծությունը օգնում է պարզել, թե արդյոք կանանց և տղամարդկանց կարիքները հավասարապես հաշվի են առնվում և սպասարկվում: Այն թույլ է տալիս քաղաքականություն իրականացնողներին մշակել քաղաքականություններ՝ կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական իրականության ընկալմամբ և հաշվի առնել (գենդերային) տարբերությունները:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՃՇԳՐՏՈՒՄ

- Ցանկացած քաղաքականության առաջարկի վերստուգում՝ համոզվելու, որ այդ քաղաքականությունից բխող գենդերային խտրական հնարավոր հետևանքները կանխվել են և գենդերային հավասարությունը խրախուսվում է:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ

- Անդրադառնալ և հաշվի առնել գենդերային գործոնը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

- Գենդերային կարծրատիպերը լուրջ խոչընդոտ են իրական գենդերային հավասարության հասնելու ճանապարհին և հիմք են հանդիսանում գենդերային խտրականության

համար: Գենդերային կարծրատիպերը կանխակալ գաղափարներ են, որոնց համաձայն տղամարդկանց և կանանց կամայականորեն վերագրվում են իրենց սեռով պայմանավորված սահմանափակվող հատկություններ և դերեր: Սեռական կարծրատիպերը սահմանափակում են տղաների և աղջիկների, կանանց և տղամարդկանց բնական տաղանդների և կարողությունների զարգացումը, նրանց կրթական և մասնագիտական փորձառությունը, ինչպես նաև կայնքի բոլոր հնարավորությունները: Կանանց մասին կարծրատիպերը և՛ պայմանավորված են, և՛ հանդիսանում են կանանց նկատմամբ խորապես արմատավորված վերաբերմունքի, արժեքների, նորմերի և նախապաշարմունքների պատճառ: Դրանք օգտագործվում են արդարացնելու և պահպանելու կանանց նկատմամբ տղամարդկանց իշխանության պատմական հարաբերությունները, ինչպես նաև սեքսիստական վերաբերմունքը, որը արգելափակում է կանանց առաջընթացը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ/ՉՈՒՆԵՑՈՂ

- **Իրավաբանական պարտադիր ուժ ունեցող** փաստաթուղթը, օրինակ՝ կոնվենցիան, ենթադրում է պաշտոնական իրավաբանական պարտավորություններ, ինչը նշանակում է, որ այն ստորագրող պետությունները համաձայն են կատարել օրենքով սահմանված պարտավորությունները: Առանձին հարց է, թե արդյոք այդ պարտավորությունները կատարվում են և ինչպես:
- **Իրավաբանական պարտադիր ուժ չունեցող** փաստաթուղթը, օրինակ՝ հռչակագիրը, ինքնին չի առաջացնում իրավաբանական պարտավորություններ այն ստորագրող մասնակիցների համար, սակայն մատնանշում է մարդու իրավունքների միջազգային իրավունքի այն կանոնը, համաձայն որի նա կարող է ունենալ զգալի բարոյական կամ քաղաքական կշիռ, որպեսզի «մեղմ օրենքը» հնարավոր լինի օգտագործել որպես ցանկալի նպատակ կամ հետագայում դառնալ պարտադիր ուժ ունեցող օրենքների հիմքը:

ՌԻՍԿ

- **Ռիսկը** տուժողների ֆիզիկական կամ հոգեբանական վնասի ցանկացած գործոնն է՝ կանանց և նրանց երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության համատեքստում:

ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- **Ռիսկի գնահատումը** որոշակի իրավիճակում մի շարք ռիսկային գործոնների ուսումնասիրության միջոցով համակարգված մոտեցմամբ ռիսկի մակարդակի որոշման և գնահատման գործընթաց է, որին կարող է օժանդակել ռիսկերի գնահատման գործիքի օգտագործումը: Ռիսկերի գնահատումը պետք է պարբերաբար վերանայվի համապատասխան մասնագիտական ուսուցում ստացած պրակտիկ մասնագետների կողմից՝ «սեփական փորձի արդյունքում փորձագետ դարձած» բռնության ենթարկված անձանց հետ համատեղ:

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Ռիսկի կառավարումը գործընթաց է, որի միջոցով համապատասխան մարմինները կառավարում են ռիսկերի գնահատման արդյունքում հայտնաբերված՝ անվտանգությանը սպառնացող ռիսկերը: Այդ գործողությունները կարող են ուղղված լինել տուժողին (օրինակ՝ անվտանգության ծրագրում), իրավախախտին (օրինակ՝ ոստիկանական լիազորությունների օգտագործում՝ անթույլատրելի վարքագիծ դրսևորող անձին հետապնդելու, հայտնաբերելու և այն խափանելու համար) կամ տուժողին և իրավախախտին միասին: Ձեռնարկվող գործողությունների ծավալը և տեսակը որոշվում է ռիսկերի գնահատման միջոցով, դրանք իրականացվում են միջգերատեսչական շրջանակներում և վերահսկվում՝ արդյու-

նավետության ապահովության համար: Այդ գործողությունների նպատակն է փորձել նվազեցնել իրավախախտի կողմից առաջացող վտանգը և պաշտպանել տուժողին հետագա բռնություններից և ոտնձգություններից:

ՍԵՔՍԻԶՄ

- Ցանկացած գործողություն, ժեստ, ցուցադրում, բանավոր կամ գրավոր խոսք, գործելակերպ կամ վարքագիծ՝ հիմնված այն գաղափարի վրա, որ անձը կամ անձանց խումբը ստորադաս է իր սեռի պատճառով, որը տեղի է ունենում հանրային կամ մասնավոր ոլորտում՝ լինի դա առցանց, թե անցանց, հետևյալ նպատակի կամ ազդեցության համար.

  i. անձի կամ մի խումբ անձանց անկապտելի արժանապատվության կամ իրավունքների ոտնահարում կամ

  ii. ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական վնասի կամ տառապանքի պատճառում անձի կամ անձանց խմբի. կամ ահաբեկող, թշնամական, ստորացնող, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտի ստեղծում կամ

  iii. անձի կամ անձանց խմբի կողմից մարդու իրավունքների ազատ և լիարժեք իրացման խոչընդոտում կամ

  iv. գենդերային կարծրատիպերի պահպանում և ամրապնդում:

ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ

- **Սեռական շահագործումն ու չարաշահումը** տեղի է ունենում, երբ որևէ անձ սեռական պատճառներով չարաշահում է իր իշխանությունը, տուժողի վստահությունը կամ խոցելիությունը, կամ ստիպում կամ հարկադրում է նրան սեռական գործողությունների, որոնք տուժողը ստորացնող կամ նվաստացնող է համարում:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Կառուցվածքային խտրականությունն** առաջանում է, երբ որոշ սոցիալական կառույցների, ներառյալ ընտանիքի, պետական մարմինների, աշխատաշուկայի, կրթական համակարգի և այլն, նորմերը, քաղաքականություններն ու վարքագիծը շարունակաբար վնասում են մարդկանց որոշակի խմբերի:

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

- Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, պահում կամ ընդունում սպառնալիքի կամ ուժի գործադրմամբ կամ հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառմամբ, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, պաշտոնական դիրքի կամ խոցելի վիճակի չարաշահմամբ անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով, գումարների կամ այլ շահի տրամադրմամբ կամ ձեռքբերմամբ: Շահագործում հասկացությունն առնվազն ներառում է մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքներին կամ ծառայություններին, ստրկությանը կամ ստրկությանը համարժեք գործելակերպը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը.

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

- Ստամբուլի կոնվենցիայի 3-րդ հոդվածի «ա» կետ. «Կանանց նկատմամբ բռնություն՝ հասկացվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր դրսևորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման արարքներ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում»:

ԿԱՆԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (2007)17 հանձնարարականը գենդերային հավասարության չափանիշների և մեխանիզմների վերաբերյալ, սահմանում է գենդերային հավասարությունը որպես «մարդու իրավունքների սկզբունք» և կանանց մարդու իրավունքները՝ որպես «մարդու համընդհանուր իրավունքների անքակտելի, անլուծանելի և անբաժանելի մաս»:

ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Այս փաստաթղթում առաջարկվող բառերի քանակ չկա: Նախ, ծանոթացեք գործի հանգամանքներին: Ընթերցելիս ուշադրություն դարձրեք ստուգաթերթում նշված հետևյալ հիմնական հարցերի վրա.

- Ովքե՞ր են դեպքի գլխավոր դերակատարները և որո՞նք են նրանց նպատակները:
- Որո՞նք են այս դեպքի խնդրահարույց հանգամանքները: Ինչպե՞ս են դրանք անդրադառնում որոշման վրա:
- Ի՞նչ կոնկրետ որոշում պետք է կայացնեն (կամ կայացրել են) ոստիկանության ծառայողները:
- Որո՞նք են ոստիկանության ծառայողների նպատակները:
- Որո՞նք են ոստիկանության ծառայողների հնարավոր գործողությունները:
- Որո՞նք են արարքներից յուրաքանչյուրի ընթացքի հավանական հետևանքները:
- Ինչպե՞ս կարող եմ օգտագործել դեպքի մասին տեղեկությունները առաջարկություն ներկայացնելու համար:

Վերջում, փորձեք գտնել օրենսդրական ապացույցներ, որոնք հաստատում են կամ կարող են խոչընդոտել ձեր առաջարկվող արարքների ընթացքը:

Դեպքի նկարագրությունը

Ա. Գ.-ն ամուսնացած է մոտ 25 տարի և ունի երկու անչափահաս երեխա: Ամուսնու կողմից նա երկար տարիներ ենթարկվել է ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական և սեռական բռնության: Կինը պատմում է, որ իր ամբողջ ամուսնական կյանքի ընթացքում նա չի ունեցել տնից դուրս գալու, շփվելու, գնումներ կատարելու և երեխաների կրթությանը և դաստիարակությանը մասնակցելու որևէ հնարավորություն: Երբ երեխաները մեծացան ու կրթություն ստացան, Ա.-ն որոշում է փախչել տնից: Նա չի դիմում իր բնակության վայրի ոստիկանության բաժին, քանի որ ամուսինը հաճախ ասել է, որ մեծ կապեր ունի և չի վախենում ոստիկանությունից:

Չունենալով գումար և հեռախոս, Ա.-ն վաղ առավոտյան դուրս է գալիս տնից, և ճանապարհ հարցնելով ոտքով հասնում Երևան: Տեսնելով կնոջ հուսահատ և հուզված վիճակը՝ մի տաքսու վարորդ հասցնում է նրան ոստիկանություն:

Ոստիկանությունը նախազգուշացում է կիրառում բռնարարի նկատմամբ, թեև կինը հաղորդել էր, որ տարիներ շարունակ բռնության է ենթարկվել և ոստիկանություն դիմելու հնարավորություն չի ունեցել: Միաժամանակ ոստիկանության աշխատակիցը զանգահարում է Կանանց աջակցության կենտրոն և հայտնում է, որ կինը չի կարող տուն վերադառնալ, քանի որ նրան վտանգ է սպառնում: Հարցին, թե ինչո՞ւ են այդ դպքում նախազգուշացում կիրառել, ոստիկանության աշխատակիցը պատասխանում է, որ կինն առաջին անգամ է դիմել իրենց:

Ինչո՞ւ է ընտանեկան բռնության տուժողը խուսափում դիմել ոստիկանությանը:

- Նա խուսափում է դիմել ոստիկանության նկատմամբ վստահություն չունենալու պատճառով:
- Կնոջն ուղղվել էին մեղադրական հարցեր:
- «Ընտանեկան բռնության մասին» օրենքով նախատեսված միջոցների անօրինական օգ-

տագործում:

- «Ընտանեկան բռնության մասին» օրենքի մասին անբավարար իրազեկում:
- Կինը չի ծանուցվել «Ընտանեկան բռնության մասին» օրենքով նախատեսված ռիսկերի գնահատման հարցերի մասին:
- Կնոջը չի տրամադրվել «Ընտանեկան բռնության մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների պատճենը:

Ներկայացրեք խնդիրները	Նկարագրեք ոստիկանության ծառայողների նպատակները	Ներկայացրեք ոստիկանության ծառայողների յուրաքանչյուր արարքի հետևանքները	Օգտագործեք դեպքի տեղեկատվությունը՝ առաջարկություն ներկայացնելու համար	Գտեք օրենսդրական ապացույցներ հօգուտ կամ ընդդեմ ձեր կողմից առաջարկվող արարքների

Առաջարկություն

Պատկերացրեք, որ դուք ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի խորհրդականն եք: Առաջարկեք, թե ինչպես կարգավորել խնդիրները: Գնահատեք ձեր առաջարկության ուժեղ և թույլ կողմերը: Կարող եք նաև ձեր հիմնավորման մեջ նշել այն պատճառները, թե ինչու եք ձեր առաջարկությունը համարում լավագույն տարբերակը (75-150 բառ):

Նշումների համար

Նշումների համար

Այս ձեռնարկի նպատակն է ոստիկանության աշխատակիցներին հիմնարար գիտելիքներ տրամադրելկանանց նկատմամբ գենդե ռային հիմքով բռնության դեմ պայքարի վերաբերյալ ոստիկանության ամենօրյա աշխատանքի ընթացքում: Մասնավորապես, մասնակիցները ավելի խորը պատկերացում կկազմեն կանանց նկատմամբ բռնությունից և ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանելուն ուղղված միջազգային և ներպետական օրենքների, ոստիկանության դերի և գործառույթների մասին, ինրպես նաև կճանաչեն գենդերային վնասակար կարծրատիպերը և թե ինչպես են դրանք կապված գենդերային հիմքով բռնության, տղամարդկանց և կանանց միջև անհավասար իշխանական հարաբերությունների հետ: Մանսակիցները գիտելիքներ ձեռք կբերեն գենդերային հիմքով բռնության բնույթի և դրա բաղկացուցիչ տարրերի մասին, ավելի խորը պատկերացում կկազմեն տուժողների պաշտպանության և անվտանգության ապահովման ընթացակարգերի և պարտավորությունների, ինչպես նաև ռիսկերի գնահատման և կառավարման մասին ընտանեկան բռնության գենդերային ընկալման տեսան կյունից, կծանոթանան ընտանեկան բռնությունից տուժած կանանց և երեխաների իրավունքների և ազատությունների, ինչպես նաև անձի անձեռնմխելիության և գաղտնիության պահպանման հիմնական սկզբունքներին՝ կիրառելով զոհակենտրոն մոտեցում:

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումը անդամ պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE